208.21
Z-85

1902 - 42

2004

1768
208.21
Հ-85

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԱՄԿԵՐԵՐԱՆԻ

ՅԱՒԵՏԱԲԱՆԱԳԻՐՆ

ՄԱՏԹԷՈՍ

3454
Լուսն.
31066

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

225

ՑԱՑԾՆՈՒԹԻՒՆ ԳԼԽՈՑ ՅԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍ ԿԱՓԱՌՆԱՅԻՄ ԳՐՈՑՍ

ՅԱՌ Ա. Գովութիւն հարիւրապետին մեծ հաւատոյն, և վասն հրեայն՝ որք գողանային զպարգևսն Քրիստոսի։ Յորդորակն՝ յոյս ապաշխարողացս. օրինակ Դաւիթի։

Բ. Վասն Պետրոսի քաջ հաւատոյն 'ի Քրիստոս։ Յորդորառս որ արբեալ են ընդիւք, և ոչ զինովի։

Գ. Յուզելոյ զհաւատս առաքելոցն 'ի ծփեալ ծովուն։ Յորդորառ պակչոսն և արծաթասէրն։

Դ. Աղամսալուծին ողջութիւնն և թագաւորութիւն մեզացն։ Յորդորառ հեղութիւն ուղղել զմեղուցեալսն։

Ե. Ի Մատթէոս մաքսաւորն և աւետարանիչ Քրիստոսի։ Յորդորառ խրատ առ կանայս ոգեշահս։

Զ. Վասն տեառատես կնոջն՝ որ դողանայր զբժշկութիւնն 'ի Քրիստոսէ։ Յորդորառ մխիթարութեան ոգաւորաց, և ցկոծել զննջեցեալն։

Է. Կուրացն երկուց, և տալոյ իշխանութիւն առաքելոցն։ Յորդորառ արժանաւորիլ ողջունին՝ զոր տայ քահանայն, և թէ գործք 'ի վերայ է քան զնշանս։

Ը. Առաքումն 'ի սնէ սրբոց առաքելոցն քարոզուն։ Յորդորառ վասն համբերութեան. օրինակ Յոբ։

Թ. Համբէրն սրբոց առաքելոցն քարոզութիւն։ Յորդորառ արհամարհել զմամն որ վասն Քրիստոսի։

Ժ. Վարդապետաւորի Քրիստոս, խրատ շահաւորս։ Յորդորառ մի արհամարհել զաղքատս և զանանկ։

ԺԱ. Հաստատութիւն 'ի Քրիստոս աշակերտացն Յովհաննու մկրտչի։ Յորդորառ որ պատճառեն մեզ աւորք։

ԺԲ. Առ որ հրեայք չընդունէին զՔրիստոս, և ոչ զկարապետն։ Յորդորառ խորշել 'ի թաւերաց։

ԺԳ. Գոհուն Քրիստոսի վասն տղայոց, որ են առաքելքն սուրբ։ Յորդորառ 'ի յոյսն Քրիստոսի թեթեւ է աշխատութիւնն։

ԺԴ. Ի յանդիմանութիւն հրեայն, և լուծման շաբաթուցն։ Յորդորառ որ 'ի ժողովելն փոյթ է, և ոչ յողորմել անանկաց։

ԺԵ. Գօսացելոյն զոր բժշկեաց Քրիստոս 'ի շաբաթու։ Յորդորառ զգուշանալ 'ի չար նախանձուէ։

ԺԶ. Որ զերեսանն դիւաց 'ի Քրիստոսէ հրեայքն։ Յորդորառ 'ի սուտ մեռանել հանապազ վասն մեղաց։

ԺԷ. Զբժշկուէն 'ի Քրիստոսէ ընդունէին, և զինքն ոչ ընդունէին։ Յորդորառ զգուշանալ 'ի նախանձուէ և 'ի չար բանից։

ԺԸ. Վասն նախանձու փարիսեցւոցն որ 'ի հնարս մտանէին վասն Քրիստոսի. և յարութեան Ճառ։ Յորդ. զի մի այլոց մեղաց մխիթարութիւն դնել անձին։

ԺԹ. Ցանկիմանութիւն մօրն և եղբարցն Քրիստոսի, որ վասն փառաց կոչէին զՔրիստոս։ Յորդ. որ առնէ զկամս նոյ, նա է մայր և եղբայր Քրիստոսի։ Եւ զի արար զհրամանսն մօրն և եղբարցն, և ել առ նոսա և նստաւ առ ծովեզերն, և խօսեցաւ զառակ սերմանահանին։ Յորդ. որ զկէսն առնէն և կիսոյն անփոյթ լինին։[1]

Ի. Սեծութիւն առաքելոցն և նուազութիւն հրէիցն։ Յորդ. խրատ և հնարք վասն ողորմութիւն աղքատաց։

ԻԱ. Առակ որոմանն և հնձոյ ագարակին։ Յորդ. գործ զառաջին սրբոցն ուսանել։

ԻԲ. Հարցումն առաքելոցն վասն որոմանն ագարակին, որոյ ինքն ետ համարձակութիւն հարցանելոցնա։ Յորդ. վասն հեզութիւն և խոնարհութիւն գեղեցիկ, որով ՀԾ պատրի՝ ազգոյ բանք քան զնմա դրոց։

ԻԳ. Սկիզբն Ճառին՝ զի 'ի Աղաղաբեթ նշանս ոչ արար. 'ի նոյն յարի և զլխատմանն Յովհաննու մկրտչի։ Յորդ. մի ոանհար լինել մեղաց օտարաց։ Յաբէ 'ի նոյն և առ այնոսիկ որք անտես առնեն զաղքատս։

ԻԴ. Հաստատութիւն մարդեղութեանն Քրիստոսի։ Յաբէ 'ի նոյն զնշան հացին որ յաւելաւ 'ի կերողացն հինգ հազարիցն։ Յորդ. վասն ողորմութիւն աղքատաց։

ԻԵ. Վասն անզբաղ աղօթից. և նաւարկութիւն, փոքձութիւն առաքելոցն։ Յորդ. սրբիլ, և ապա 'ի սուրբ խորհուրդն մերձենալ։

ԻԶ. Վասն դպրացն և փարիսեցւոցն անհաւանուն։ Յորդ. սանձել զլեզու և համ դնել բանից բերանոյ։

ԻԷ. Քանանացւոյն՝ որ զբժշկուին հայցէր զդստերն, և վասն բազում բժշկութենն՝ զոր արար Քրիստոս։ Յորդ. եթէ և աղքատն կարող է ողորմել տընանկին։

ԻԸ. Յեւթենկանական՝ որ յաւդաւ 'ի չորս հազարսն. երկրորդն սքանչելեացն 'ի վերայ հացին։ Յորդ. վասն մխիթարութիւն աղքատաց։

1 'Ի լուս. նշանակի թէ Երէս Ճառս Դ Գ Էն։

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՈՍԿԵՐԻՐԱՆԻ

ՅԱՒԵՏԱՐԱՆԱԳԻՐՆ

ՄԱՏԹԷՈՍ[1]

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՃԱՌ ԱՌԱՋԻՆ

« Իբրև եմուտ նա 'ի Կափառնաում, մատեաւ առ նա հարիւրապետն. աղաչէր և ասէր, տէր, մանուկ իմ անկեալ դնի 'ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ »։

ԲՈՐՈՏՆ, յորժամ էջ 'ի լեռնէ անտի Յի, յայնժամ մատեաւ. իսկ հարիւրապետն՝ յորժամ եմուտ 'ի Կափառնաում։ Եւ վասն էր արդեւք ոչ սա և ոչ նա ելին 'ի լեառնն։ Ո՛չ թէ առ ծուլութեան ինչ, քանզի երկոցունց ջերմ էին հաւատք, այլ զի մի խափան ինչ լինիցին վարդապետութեանն։

« Մատուցեալ ասէր, մանուկ իմ անկեալ դնի 'ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ »։ Մանք աւսէն, թէ աղերսիւ և զպատճառսն ասաց իսկ՝ վասն որոյ ոչ էած զնա առ նա. զի չէր ինչ մարթ զանդամալոյծն և զտանջեալն՝ որ մազկուինչ մերձ 'ի մահն էր, բառնալ և բերել։ Եւ զի մերձ էր զոգիսն հա-

1 Յօրինակին մակագիր թ Նի Գինուրի 'ի Կափառնաում և 'ի դրոցս էր Յովհաննու Ոսկեբերաց հարիւրապետն։

նել, Ղուկաս իսկ յայտ առնէ՝ թէ մերձ ի վախճան էր։ Բայց ես, զի մեծ հաւատս ունէր, այնմ նշանակ ասեմ. և ևս առաւել քան զայնոսիկ՝ որք ի ձեռս ուսանէին կախէին զանդամալոյծն։ Օ՛ի գիտէր ըստոյգ, եթէ հրամանաւ միայն բաւական է յարուցանել զանկեալն, աւելորդ համարէր զածելն զնա առ նա։

Եւ արդ զի՞նդ Յ՞ զոր ոչ երբէք արար նախ, աստ առնէր. զի՞ մի՞ ուրեք կամաց աղաչելեացն ուշ ունէր, իսկ աստ ընդ առաջ ևս երթայ. ոչ միայն ողջացուցանել խոստանայ, այլ և ի տունն երթայ։ Եւ զայն յայն սակս առնէ, զի ուսցուք զառաքինութեի հարիւրապետին։ Եթէ այսպէս չէր խոստացեալ, այլ ասացեալ էր, թէ երթ բժշկեսցի մանուկն քո, ոչինչ յորոց խնայաքն՝ խմանայաք։ Փիւնիկ ասողացոյն՝ հակառակ իմն սմին արար. իսկ աստ անկոչ ինքնակամ յօժարէր երթալ ի տունն. զի ուսանիցիս զհարիւրապետին հաւատս, և զբազումս խոնարհութեի փիւնիկ ասողացոյն։ և չառնոյր իսկ յանձն տանել. թէպէտ և ժողովրդեանցն։ Վանզի հնազրագետ և խմաստուն բժիշկ հակառակորդովքն զնացին հակառակն կազմել գիտէ. աստ վասն ինքնակամ երթին, և անդ վասն իւրոյ յանձախութեան յապաղելոյն և հրաժարելոյն յայտնէ զհաւատս կնոջն։ Այոյնպէս և առ Աբրահամաւ ասէր, «Մի՞թէ թաքո՞ւստ ինչ իցէ ի ծառայէ իմմէ Աբրահամէ»։ զի ուսանիցիս զնորա զութն և զխնամն առ սոդոմացիսն. և առ Ղովտաւ՝ չանսացին մնանել առ նա որք առաքեցանն, զի ուսանիցիս զարդարոյն զօտարսիրութեն առաւելութեի։

Եւ արդ զի՞նչ ասիցէ հարիւրապետն։ «Օեմ, ասէ, բաւական՝ թէ ընդ իմով յարկաւ մտանիցես»։ Լուիցուք և որ այժմ զՔ՞ զ ընդունելոց եմք. քանզի մարթի և արդ զնա ընդունել. լուիցուք և նախանձաւորք լեցուք և այնպիսի փութով ընդունել. քանզի յորժամ զաղքատ ոք ընդունիցիս՝ զքաղցեալ և զմերկ, զնա ընդունիս և կերակրես։

«Այա, ասէ, բանիւ, և բժշկեսցի մանուկն իմ»։ Տես և զսա ըստ բորոտին բանից, որ զպատշաճ կար-

ծիսն ունէր զնմանէ։ Վասն զի և ոչ սա ասաց, թէ աղաչեա կամ յաղօթս կաց կամ պաղատեաց, այլ միայն թէ հրամայեա։

Կասկածէր իսկ՝ թէ գուցէ փոքրունս ինչ իմանայցէ զնմանէ. վասն այնորիկ ասէր, թէ ակնարկեա միայն։ «Վասն զի և ես այր մի եմ ընդ իշխանութիւն, ունիմ ընդ ինեւ զինուորս, և ասեմ սմա՝ երթ, և երթայ. և այլում՝ թէ եկ, և գայ. և ծառայի իմում՝ թէ արա զայս, և առնէ»։ Այս այն զինչ իցէ, ասէն, և թէ հարիւրապետն այնպէս կարծեաց զնմանէ։ Օ՛ի խնդիր այն է՝ թէ ՎՀՏ այնպիսի ինչ վՀԻՈ էտ, և հաստատեաց զբանն։ Խարւոք իսկ և կարի իմաստ նագոյնս խօսիս. և արդ տեսցուք զնոյն. քանզի զբանսեմք որպէս առ բորոտին, նոյնպէս և աստ վՀԱՐԵԱԼ։ Օ՛ որ օրինակ և բորոտն ասէր, թէ կամիս. և ոչ ԵԼՁԷ՝ի բորոտէն պարտիցիմք վՀՁԵԼ վասն իշխանութեանն, այլ ՎՀՏի բարբառոյն հաստատեալ։ Օ՛ի ոչ միայն չքակեաց զկարծիսն, այլ և քաջ հաստատեաց. և որ ինչ աւելորդն թուէր՝ զայն ասաց, թէ «Կամիմ, սրբեաց». զի հաստատիցէ զնորա կրօնսն։ Նոյնպէս և աստ պարտ է միտ դնել, եթէ եղև ինչ նոյնպիսի. քանզի գտանեմք զնոյն և աստ դիպեալ։ Օ՛ի զասել հարիւրապետին՝ թէ այսչափ իշխանութիւն ունիմ, ոչ միայն չխոտեաց, այլ և երթալ ևս յանձին կալաւ. առաւել ևս քան զանձին ունել՝ և արար։ Օ՛ի ոչ ասաց աւետարանիչն, եթէ զովեաց միայն զնա, այլ և զյաճախութիւն զովութենն յայտ արարեալ՝ ասէ, թէ և զարմացաւ. և ոչ վայրապար զարմացաւ, այլ մինչդեռ նմա Ժողովուրդն մեծ կային. և այլոց ևս էտ օրինակ, զի նմանօրք լինիցին։

Յեսանես, որպիսի իւրաքանչիւր որ որ՝ի վկայիցն նորա՝ զարմանային ընդ իշխանութեն նորա։ «Օ՛ արմանային, ասէ, Ժողովուրդն ընդ վարդապետութիւն նորա. զի իբրև իշխանութիւն ուսուցանէր». և ոչ միայն չեղև մեղադիր, այլ առաւել ևս զնոսա զիջուցանէր անդր։ Այս և սրբելոյն իսկ զբորոտն՝ հաստատեր զմիտս նոցա։ Այս որպէս յորժամ բորոտն ասէր, «Եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել», ոչ միայն

չասաստեաց նմա, այլ և սրբեաց և, որպէս և խրն դրեաց 'ի նմանէ. բոտ նմին օրինակի և հարիւրապետն ասէր, թէ «Լ՚սա բանիւ և բժշկեսցի մանուկն իմ». զարմացեալ ասէր, թէ և ոչ Յարայելի այնչափ հաւատս գտի։

Լ՚այլ զի և 'ի հակառակորդէն ևս ուսանիցիս ըզ-ասոյն. քանզի Արթա այսպիսի ինչ չասաց, այլ զոր-ինն հակառակն, եթէ «Ընչափ ինչ խնդրիցես յայ՝ տացէ քեզ». ոչ միայն չգովեցաւ, թէպէտ և ծանօթ և բարեկամ և կարի յոյժ միշտ փոյթ ցուցանէր առ նա, այլ և սաստեցաւ ևս, և ուղղեցաւ 'ի նմա նէ, եթէ ոչ բարւոք ասաց զոր ինչ ասացն։ «Ո՞չ, ասէ, ասացի քեզ, թէ հաւատասցես՝ տեսցես ըզ-փառսն այ». Յրև եթէ չէր երբէք հաւատացեալ, այնպէս ինն մեղադիր լինէր։ Յու դարձեալ յայնպէս սի ևս կարծեաց՝ զոր ասացն, եթէ «Օ՚՝ որ ինչ խրն-դրեսցես յայ՝ տացէ քեզ», մերժէ, և՝ ուսուցանէ՝ եթէ ոչ յայլ ումեքէ կարօտ է առնուլ, այլ ինքն է աղբեւրբարուութեց։ «Յս եմ, ասէ, յարութիւն և կեանք». այսինքն՝ թէ չմնամ։ յումեքէ ընդունել ազդումն ինչ, այլ անձամբ յանձնէ գործեմ զինչ և գործեմ։

Յակ ընդ հարիւրապետն և զարմանայ ևս, և ա-ռաջի ամ ժողովրդեանն մեծարէ, և արքայութեան խոստմամբք պատուէ. և զայլս ևս 'ի նոյն նախանձ յորդորէ։ Յու զի գիտացես՝ թէ վասն այնորիկ զայն այնպէս ասաց, զի զայլս խրատիցէ հաւատալ նոյնպէս, լուր աւետարանչին՝ զիարդ զհաւատիսն իսկ ակնարկէ։

«Պարձաւ, ասէ, Յա՝, և ասէ ցայնոսիկ՝ որ զհետ նորա երթային, թէ և ոչ Յարայելի այնչափ հաւատ գտի»։ Ո՞չ ապաքէն զմեծամեծս խմանալ զնմանէ՝ հաւատոցն և արքայութենն և այլ ևս բազում բա-րութեցն եղև առիթ. զի ոչ միայն բանիւք գովեաց զնա, այլ և զհիւանդութենն յառողջութիւն դարձոյց. և փոխանակ հաւատոցն մեծապայծառ պսակ բոլ-որ եաց. և բազում պարգևս խոստացեալ՝ ասէր, եթէ

1 Յօրինակին պակասէր լիամ. և տեղին դատարկ կայր։

« Խաղումք յարևելից և յարևմտից եկեսցեն, և բազմեսցին ընդ Աբրահամու և ընդ Իսահակայ և ընդ Յակովբայ յարքայութիւն երկնից. և որդիք արքայութիւն ելցեն 'ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց »։

Այլ քանզի բազում աքանչելիս եցոյց, ապա բազում համարձակութիւն բարբառի։ Այլ զի մի կարծիցէ ոք, եթէ պաշտօն ինչ առնելոյ վասն էին բանք հարիւրապետին, և ոչ սերտ և 'ի հաստատուն սիրոյ, զի ամենեքեան իսկ իմանայցեն զմիտս հարիւրապետին, թէ « Ասպէս հաւատացերդ, եղիցի քեզ »։ Այլ վաղվաղակի բանքն արդիւնք լինէին, և վկայք առնն հաւատոց։ « Այլ բժշկեցաւ մանուէն անդէն 'ի ժամուն »· որպէս փիւնիկ ասորոյ դուստրն. քանզի նմա ասաց, « Ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կամիս. և բժշկեցաւ դուստրն նորա անդէն 'ի նմին ժամու »։

Այլ Ղուկաս յորժամ զնոյն նշան պատմէ, բազում և այլ ինչ յօդէ, որ իբրև երկբայութիւն ինն թուի. և զայն ևս կարևոր համարիմ լուծանել։ « Դ.աւթեաց, ասէ, զծերս 'ի հրէից, և աղաչէր զի երթիցէ 'ի տուն նորա »։ Այլ Մատթէոս ասէ, թէ ինքնին մատուցեալ աղաչէր, թէ չեմ արժանի։ Դ.յլք ասեն՝ թէ չէ սա նա, թէպէտ նման իցեն իրքն իրացն. զի զնմանէ ասեն որք առաքեցանն, եթէ « Օ ժողովրդեանն տուն նա շինեաց, և սիրէ զազգս մեր »· և զսմանէ ասէ ինքն Յս, թէ « Այլ ոչ յԻսրայելի այսչափ հաւատս գտի »։ Այլ առ նովաւ չասաց, թէ « Խաղումք յարևելից և յարևմտից եկեսցեն »· ուստի և հրեայ իսկ 'ի դէպ էր իմանալ զնա։

Այլ արդ առ այս զինչ ասիցեմք։ Լուծումն այսոցիկ դիւրին է. բայց խնդիր այն է՝ եթէ իցէ՞ ճշմարիտ։ այլ ինձ թուի՝ թէ սա այն է։ Այլ զիարդ, աւ սիցեն, սա նա իցէ. զի Մատթէոս ասէ՝ թէ ինքն իսկ ասաց, « Չեմ արժանի թէ ընդ յարկաւ իմովմոցեա »· և Ղուկաս՝ թէ յղեաց, զի երթիցէ։ Թուի ինձ թէ 'ի հրէից պաշտօնն առաւել ակնարկիցէ Ղուկաս. քանզի 'ի վերջս ախտին միտք մարդ-

կան և զայլ ևս խմնման։ Ի դէպ է, թէ կամեցաւ երթալ հարիւրապետն, և արգելին հրեայքն բարեմարդիկք. մեք երթամք ասեն, և ածեմք։ Եւ դու տես, զի և յաղաչելն պաշտօն առնելով ինն յօժարեցուցանէին. «Միրեկ զազգս մեր, և զժողովրդականոցս նա շինեաց մեզ». և չդիտէին զիարդ գովիցեն զայրն։ Պարտ էր ասել, թէ ինքն կամեցաւ գալ և աղաչել. և մեք իբրև տեսաք զվիշտն՝ արգելաք, և զտանն շշուկ և զաղմուկ. և այնպէս մարթ էր ցուցանել զնորա հաւատոցն առաւելութիւն։ Բ. յապիսի ինչ չասէին, քանզի կամէին իսկ ոչ առ նախանձու, զի մի յայտնիցէ Յն զՀաւատս առնն. այլ առաւել հանձէին թաքուցանել զՀաւատս այնորիկ՝ վասն որոյ աղաչէինն, զի մի ոք մեծ համարիցի զնա՝ որ աղաչէցին, կամ թէ զՀաւատսն նորա յարգէին, առ 'ի վնասել ինչ՝ վասն որոյ եկեալն էին. զի բաւական իսկ էր հեռ կուրացուցանել զմիտս։ Բ. յլ նա որ զծածուկսն գիտէր, և ակամայ ոչ ըստ նոցա կամացն զնա յայտ արար։

Եւ զի գիտասցես թէ Հնմարիտ է այս, լուր Ղ ուկայ՝ զիարդ ինքնին իսկ մեկնէ։ «Մինչդեռ չէր կարի հեռի, ասէ, առաքեաց առ նա և ասէ, եր մի ինչ աշխատ լինիր, քանզի չեմ արժանի՝ թէ ընդ յարկաւ իմով մտանիցես»։ Յորժամ զերծաւ 'ի թախանձելոյ նոցա, ապա առաքեաց, ասէ. մի այդպէս կարծիցես, ասէ, եր, թէ առ դանդաղել ինչ չեկի, այլ զանձն անարժան համարեցայ՝ ածել զքեզ 'ի տուն։

Եւ թէ Մատթէոս ասէ, ոչ պատգամաւորք, այլ անձամբ իսկ ասաց. զի այս չէն իսկ ինչ բանք. այլ ինդիր այն է, զի զյօժարութիւն մտաց առնն ցուցին իւրաքանչիւր ոք աւետարանագիր, և զդիպող և զպատշաճ կարծիս՝ զոր կարծեաց զՄոն։ Բ. յլ թէ բևս և ինքն իսկ՝ յետ զբարեկամն յուելոյ՝ չոգաւ, և զնոսն բանս ասաց։ Եւ եթէ չասաց զայս Ղ ուկաս, և ոչ զմիւսն Մատթէոս, ոչ եթէ հակառակ ինչ միմեանց, այլ զոր ինչ մինն եթող՝ միւսն ելից։

Եւ դու տես իսկ և 'ի միւսմէ կողմանէ զՀաւատս առնն. զի Ղ ուկաս յայտնի իսկ ասէ, թէ մերձ 'ի

մահ էր մանուկն. բայց սակայն ոչինչ զանգիտեաց, և ոչ անյոյս զիրսն համարեցաւ, այլ վստահ եղև երթալ և աղաչել։ Բայց ասելովն Մատթէի, թէ Ինձ ասաց զնմանէ՝ թէ «Յոչ ոչ Իսրայէլի գտի այսչափ հաւատս», յայտ է թէ չէր խորայելացի. և Ղուկաս ասէ, թէ «Օ ժողովրդականացս նա շինեաց», սակայն և այսպէս չգտանին միմեանց հակառակ. քանզի թէ չէր հրեայ՝ մարթ էր զժողովրդանացն և զազգն սիրել։

Յոչ դու մի վայրապար զբանն այսր անդր ձգիցես. այլ և զնշխանութիւն և զիր առ նմին, և ապա տեսանիցես զառնն քաջութի։ Օ՛ի որք յիշխանութեանն՝ աւելի ինն՝ ի հպարտութեանն են. և ոչ յորժամ՝ ի վիշտս իցեն՝ խոնարհին։ Օ՛ի զոր Յովհաննն է գրեալ, թէ ստիպէր զնա տանել՝ ի տուն. ՀՀ, ասէ, վաղվաղակի, զի մերձ՝ ի մահ է մանուկն. ոչ այնպիսի ոք և սա. այլ և քան զայնոսիկ և՝ որք՝ ի ձեղուանէն կախեցին զմահիւնն, յոյժ ազնուագոյն է։ Ոչ մարմնական ինչ գալուստ խնդրէ, և ոչ մօտ առ բժիշկն բերէ զախտացեալն. որ ոչ սակաւ ինչ փառաւորութեանն նշանակ էր, այլ՝ այ պատշաճական կարծիս ունէր զնմանէ՝ ի մոի. թէ «Լսա միայն բանիւ». և զախտէն միայն պատմէ. քանզի և ոչ իսկ ակն ունէր առ բաղում խոնարհութեանն՝ թէ այնպէս վաղվաղակի անասայցէ նմա Ինձ, և խնդրիցէ[1] զտունն։ Ա՛ն այնքրիկ յորժամ լուաւ՝ ի նմանէ, թէ ես եկիցս և բժշկեցից, ապա ասէ, ասա բանիւ։

Յոչ այն զարմանք են, զի ոչ ախտն քայքայեաց ըզմիտս նորա, այլ և՝ ի վիշտն և Ճարտարաբաներ։ Ա՛յ այնչափ՝ ի բժշկութի մանկանն հայեր, որչափ զի մի կարծիցի անազատս ինչ առնել։ Ամենայնի և ոչ ինքն ստիպէր, այլ՝ Ինձ խոստացաւ, սակայն և այնպէս կասկածէր՝ թէ գուցէ կարծիցի ընդ իւր չափն եղանել, և ծանրատաղտուկ զիրսն առնիցէ։

Ցեսեր զնորա իմաստութիւնն. հայեաց և ընդ հրեիցն անմտութենն։ «Արժանի է, ասէին, այրն, որում զշնորհս զայդ առնես»։ Ուստի պարտ էր

1 Ի լուս. ԼԻՅԷ։

զԱՍի մարդասիրութիւն վերացուցանել, նոքա զնա-
ռա պատիւն յառաջ բերին, և ոչ ուստի պարտ էր
յարգել՝ զիտէին։ Ոչ այնպիսի ինչ և նա. այլ կարի
զանձն առ անարժանս ունէր, ոչ միայն բարերարու-
թեանն, այլ և 'ի տուն ևս տանել զՀՈ։ Վասնզի
ասէ իսկ, թէ «Մանուկ իմ անկեալ դնի». և ոչ
յաւել՝ թէ ասա բանիւ. զի կասկածէր՝ թէ գուցէ
չլինիցի արժանի պարգևացն, այլ զվիշտն ևեթ
պատմէր։ Այլ թէպէտ ետես զԱՍՈ առատացեալ,
սակայն և ոչ յայտնաժամ ինչ յանդգնէր. այլ ևս հան-
դարտեր ունել 'ի չափու զիւրոյ պայմանին զպատիւն։
Պա թէ ասիցէ ոք, թէ ընդէր ոչ ընդ պատուե-
լոյն պատուեաց զնա ՏՐՈ. ասիցեմք, թէ կարի իսկ
քաջ պատուեաց. նախ՝ զի զմիտսն եցոյց, զի յօժա-
րեաց երթալ 'ի տունն։ Այրկրորդ անդամ, զի յաղ-
թայութիւն խոստացաւ տանել զնա, և նախամեծար
քան զազգն հրէից առնել։ Այլ զի 'ի տունն տանել
զԱՍՈ չամաբեցաւ զանձն արժանի, արքայութեանն
արժանի արար, և այնպիսի բարութեանց՝ յորս և
Աբրահամն վայելիցէ։

Այլ ընդէր, ասէն, բորոտն՝ որ ևս մեծամեծս քան
զնա եցոյց, չգովեցաւ. քանզի ոչ ասաց՝ թէ ասա
բանիւ. այլ ևս որ առաւելագոյնն է, թէ կամեաց
միայն. որ հզօրն է[1], ասէ մարգարէն, թէ «Օ՜ա-
մենայն զոր կամեցաւ և արար»։ Գովեցաւ և սա
իսկ կարի քաջ։ Յորժամ ասիցէ, թէ «Մատա
պատարագ, որպէս հրամայեաց Մովսէս 'ի վկայու-
թեան նոցա». ոչ այլ ինչ ասաց, թէ ոչ զի և
դու իսկ յանդիմանեացես զնոսա հաւատովքդ։ Բայց
ոչ նոյն կշիռ էր հրէին հաւատալ, և սորա՝ որ չէր
յազգէն։ Այլ զի չէր հարիւրապետն հրեայ, և զի
հարիւրապետն էր՝ անտի յայտ իսկ էր, և յասելոյն՝
թէ «Ոչ յԻսրայէլի այսչափ հաւատս գտի»։ Այլ
կարի իսկ մեծ էր առն միում՝ որ չէր 'ի հրէից ազ-
գէն, այնպիսի միտս ունել։ Թուի ինձ, թէ և զերկ-
նից զօրացն իմն էած զմտաւ. և թէ ախտ և մահ և
այլ ամենայն ինչ այնպէս հնազանդ լինին նմա, որպէս իւր

1 'Ի լուս. զոր ՀՀՕՐԷՆ ասէ. յոյնն զոր ՀՀՕՐԷՆ ասէ։

զինուորքն կան 'ի հնազանդութեան։ Բանզի և ասէր իսկ, թէ «Այր մի եմ ես ընդ իշխանութեան». այլ դու ոչ ընդ իշխանութեան իցես. զի թէ ես որ մարդ և ընդ իշխանութեան եմ, այսչափ ձեռնհաս եմ, որ չափ ես առաւել դու՝ որ հրդ ես և հաճ, և չես ընդ իշխանութեամբ։

Պէտ առաւելութեան կամի հաւանեցուցանել զնա։ Ոչ եթէ ըստ համեմատութեան ինչ բերեալ 'ի մէջ այս պիսի օրինակս, այլ զկարի [1] յոյժ առաւելութեան. զի թէ ես՝ որ հանգիտապատիւս եմ հրամանառուացն, և ընդ իշխանութեան եմ, սակայն վասն սակաւ իշխանութեան առաւելութեան ձեռնհաս եմ, զի կամիմ, զի առնեմ, և չիք որ որ ընդդէմ դառնայցէ, այլ զոր հրամայեմն՝ այն լինի, թէպէտ այլ և այլ իցեն հրամանքն. քանզի ասեմ սմա՝ երթ, և երթայ. և այլումն՝ թէ եկ, և գայ. և ծառայի իմ՝ թէ արա զայս, և առնէ. որչափ դու կարօղ և ձեռնհաս իցես։

Բայց այլք այսպիսի իմն ընթեռնուն զբանն, «Օ՛ի թէ ես այր մի եմ». և ստիւքսն 'ի միջի դնեն, և զ՚ա պա զայն 'ի խոնարհ առնուն՝ թէ «Ընդ իշխանութեան ունիմ ընդ ինձ զինուորս»։ Այլ դու այնմ միտ դիր, զիարդ եցոյց՝ եթէ մահու իշխէ իբրև ծառայի, և հրաման տայ իբրև զտէր։ Յորժամ ասիցէ՝ թէ որպէս ես ասեմ երթ, և երթայ, և թէ եկ, և գայ, և ծառայի իմումն՝ թէ արա զայս, և առնէ, զայս ասէ, թէ չհրամայիցես գալ վախճանին, չիշխէ գալ։ Տեսանես, թէ որչափ ինչ էին հաւատք առնն. զի որ ինչ յետոյ յայտնի ամենեցուն լինելոց է, զայն անդէն առժամայն յայտնէ, թէ իշխանութեն ունիս մահու և կենաց, և իջուցանել 'ի դրունս դժոխոց՝ և հանել։ Այլ ոչ զզինուորաց միայն Ճառէ, այլ և զծառայից, որ մեծի հնազանդութեան նշանակ է։ Սակայն այնչափ հաւատս ունէր, և տակաւին զանձն առ անարժանս ունէր։

Իսկ Զի՞ զի ցուցանիցէ թէ արժանի է, և 'ի տունն յոժարեաց երթալ. և զի ես առաւելագոյն

[1] 'Ի լուս. զէ ։

արար, զի զարմանայր ընդ հաւատսն, և յայտնի առնեցուն քարոզէր, և մեծ ևս քան զոր խնդրեացն՝ արար։ Եկն մարմնաւոր առողջութիւն խնդրել մանկանն, և էառ զերկնից արքայութիւնն և չոգաւ։ Տեսանես, զի վաղվաղակի կատարէր բանն, եթէ «Գուք խնդրեցէք զարքայութի՝ այ, և այս ամենայն տացի և յաւելցի ձեզ»։ Եւ քանզի բազում խոնարհութիւնս և հաւատս եցոյց, և զերկինս ետ, և զմանուկն ևս յառողջութի՝ յաւել։ Եւ ոչ այսու միայն պատուեաց, այլ և ցուցանելով թէ այլք ելանելոց են, և նա մնանելոց։ Եւ այսու անդէն իսկ ամենեցուն յայտ առնէր, թէ 'ի հաւատոց է փրկութի՝, և ոչ 'ի գործոց օրէնաց. զի ոչ հրեից միայն, այլ և հեթանոսաց եկեալ հասեալ են պարգևք. և ուռաւել նոցա, և ոչ հրեից։ Եւ զայդ մի կարծեցէք, ասէ, թէ նմա միայն եղև այդ, այլ՝՝մ իսկ տիեզերաց լինելոյ։ Բ.դէն իսկ վասն հեթանոսաց մարգարէանայ, և զերանելեացն յոյս առաջն դնէ. քանզի և 'ի Գաւլիլէէ բազումք 'ի հեթանոսաց երթային զհետ նորա. զի մի հեթանոսք անյոյս ինչ լինիցին, և հրեիցն հպարտութիւն զիջանիցի։

Բայց զի մի պատճառս ինչ լսողացն տացէ, ոչ նախընծայ առ հեթանոսս ճառէ զբանն, այլ պատճառս ևեթ տայ հարիւրապետաւն։ Բանզի և ոչ մերկ իսկ դնէ զանուն հեթանոսաց, եթէ բազում հեթանոսք եկեսցեն, այլ թէ «Բազումք յարևելից և յարևմտից»։ որ գուշակել գուշակ զհեթանոսաց. բայց յայտ ինչ այնպէս չարար զբանն լսողացն։ Եւ ոչ այնու միայն յարդարել զնորաձև վարդապետութիւն, այլ և զգողն Բ.բրահամու փոխանակ արքայութիւն ասել. նա այն իսկ անուն ծանօթ էր նոցա, և առաւել ևս կսկծեցուցանէր զնոսա՝ զԲ.բրահամ բերեալ 'ի մէջ։ Որպէս Յովհաննէս ոչ զգեհենէ ճառեաց, այլ որ ինչ զնոսա տրտմեցուցանէր, թէ մի պանծայցէք ասել՝ թէ որդիք եմք Բ.բրահամու։ Եւ հանդերձ այսու այլ ինն յարդարէ, զի մի հակառակ ինչ կարծիցի հնոց նախահարցն. զի որ զնահապետն պատուէ, և հանգիստ բարուէց զնոր զոգն անուանէ, մեծաւ առաւելութեամբ բառնայ 'ի միջոց և զայն կարդ։

Եւ արդ մի՛ ոք սակաւ ինչ համարիցի զսպառնալիսն. քանզի կրկին են նոցա պատիժք, և սոցա ուրախութիւն։ Նոցա, ո՛չ միայն զի անկան, այլ զի յիւրեանց սեպհականաց անկան. և սոցա, ո՛չ միայն զի հասին, այլ զի և որոց չունէին ակն՝ հասին։ Երկրորդ անգամ, զի և զնոցայն սոքա առին. որդիք արքայութեան, ասէ, որոց արքայութիւնն պատրաստեալ է. և այնու ևս առաւել մորմոքեցուցանէ զնոսա։ Եւ արդ յայտ առնէ, թէ որոց խոստացեալ էր յառաջագոյն գոգն, հանէ զնոսա անտի։ Եւ զի վՃիռ է բանն, հաւատացուցանէր 'ի նշանացն՝ զոր առնէր. զոր օրինակ 'ի կանխատաց իսկ իրացն՝ որ յետոյ լինելոց իսկ էին, յայտնի են։

Եւ արդ եթէ ո՛չ հաւատասցէ բժշկութեանն՝ որ եղև յայնժամ, մարգարէութեան որ այժմ կատարեցաւ՝ հաւատասցէ։ Վասնզի մարգարէութի 'ի կատարելոյ նշանին լիներ յայտնի ամենեցուն։ Ամենայն այնոքիկ զայս բան նախ ճառեաց, և ապա կանգնեաց զանդամալոյծն. զի զհանդերձեալսն 'ի մօտաւորացն հաւատարմացուցանէ, և զփոքրն 'ի մեծէն։ Զի առաքեցեալ 'ի բաբիմն վայելել, և չարաց 'ի տրամակամն ծնգել՝ չէ՞ ինչ անմիտ, այլ 'ի դէպ և ըստ պատշաճական օրինաց։ Զի զանդամալոյծ հաստատել, և զմեռեալս յարուցանել, մեծ և 'ի վերոյ քան զբնութիւն էր. այլ 'ի մեծն և 'ի զարմանալին ո՛չ սակաւ ինչ նպաստ եղև հարիւրապետն. զոր և Տէր իսկ յայտ արարեալ ասէր՝ թէ «Երթ, որպէս հաւատացեր՝ եղիցի քեզ»։ Ցեսանես, զիարդ յայտնի աղաղակէ մանկանն[1] առողջութեան և զՏէրն զօրութիւն և զհարիւրապետին հաւատս. և զհանդերձեալսն և զաստիս հաւատալի արար։ Մանաւանդ ամենեքին իսկ զՏէրն զզօրութիւն քարոզէին. զի ո՛չ միայն զմարմին մանկանն ողջացոյց, այլ զոգին իսկ բիւրապատիկ նշանօք ձգեաց 'ի հաւատս։

Բայց դու մի՛ ընդ այն եւեթ նայիր, թէ նա հաւատաց և մանուկն բժշկեցաւ, այլ ընդ արագութիւնն զարմացիր։ Վասնզի զայն իսկ յայտ արարեալ աւե-

[1] Յօրինակին մարդոյն։

տարանիչն ասէր՝ թէ « Ողջացաւ մանուկն 'ի ժամուն ». զոր օրինակ զբորտեն ասէ՝ թէ վաղվաղակի սրբեցաւ։ Ո՛չ միայն բժշկելն են զարմանք, այլ նոքանչան և յանկարծակի ցուցանել զզօրութիւն։ Այլ ոչ այնու միայն օգուտ գործէր, այլ և ստէպ հանդիսիւք նշանացն զարքայութեան Ճառիցն բանայր ըզդրունս, և զամենեսեան ձգել անդր փութայր։ Այլ զորս հանելն սպառնացաւ՝ ոչ զի արտաքս հանիցէ, այլ զի ահիւ բանիցն անդէն 'ի նոյն ամփոփիցէ. զի թէ անտի ևս ինչ չշահեին, նոցա էր ինաս, և ամենեցուն՝ որք զնոյն ախտ ախտանայցեն. ոչ միայն ընդ հրեայսն անցեալ այն անցս, այլ և ընդ բազում հաւատացեալս։ Արանզի և Յուդաս արքայութեանն որդի էր, և լուաւ ընդ այլ աշակերտսն՝ թէ « Ալոտիքք յերկոտասան աթոռսն ». այլ և եղև որդի գեհենին։ Իսկ եթէ ովքացին խուժադուժ մի էր՝ այր բարբարոս, և ընդ այսոսիկ՝ որ բազմիցին ընդ Աբրահամու և ընդ Սահակայ և ընդ Յակովբայ, առնուցու զպսակին և վայելիցէ։

Ինչպիսի ինչ և առ մեզ լինելոց է. ըստ այնմ, և թէ « Բազումք եղիցին առաջինք յետինք, և յետինք առաջինք »։ Օ այս ասէ, զի մի նոքա ծուլանայցեն, իբրու թէ չկարասցեն միւսանգամ 'ի նոյն հաստատել. և մի սոքա յանձն ապաստան վստահ ինչ լինիցին, որպէս թէ կայցեն հաստատուն, և չիցէ ինչ հնար անկանելոյ։ Օ սոյն Յովհաննէս անդուստ 'ի վերուստ աղաղակէր, թէ « Կարօղ է ՚ուծ 'ի քարանցս յարուցանել որդիս Աբրահամու »։ Օ՛ի մի յորժամ իբրն գործիցին, իբրև օտարոտի ինչ համարիցին՝ և խոովիցին։ Այլ նա զայն ինն յայտ առնէ թէպէտ և տայցէ ինչ այնպիսի լինել, քանզի յառաջագոյն իսկ երևեցաւ, Ո՞ւ իբրև զլինելոց ինչ իմաքէ օրինակ յարդեանցն ցուցանէ։

Եւ մեք այսուհետեւ մի յանձն ասպատան լիցուք, եթէ հաստատուն կայցեմք. այլ ասասցուք յանձինս, թէ «Որ համարին թէ կայցէ՝ զդոյշ լինիցի զի մի անկանիցի»։ Եւ եթէ անկանիցիմք՝ մի յուսահատ լինիցիմք, այլ քաջալերեսցուք յանձինս, թէ որ անկանիցին՝ ոչ արգելք յառնիցին։ Օր բազումք իսկ յերկնից բարձունս ամբարձեալ, և այսպիսի ձգունս յանձինս ցուցեալ, և ընդ անասպատս հարեալ, որ յերազի անգամ զկնայս չտեսանէին, յետ սակաւ մի ժամանակի ամենեքին իսկ 'ի խորխորատս չարեաց կործանեցան։ Եւ այլք 'ի գուսանաց և 'ի կաքաւոց ընդ երկինս թռեան, և զշրեշտակաց վարս յանձինս ցուցին, և զգեաս հալածականս արարին, և բազում նշանս գործեցին։

Եւ այսպիսի օրինակաւ լի են գիրք և աշխարհս կեանք։ Օր և պոռնիկք և իգացեալք խնուն զբերանս զակակաց[1], որք զչարիս անշարժ համբաւեն, և սատանայի հարկատուք են։ Եւ որք առաքինանալն կամիցին՝ հարկանեն զնոցա զՔրիստոս, և ամենեքին իսկ զկեանս մարդկան կործանեն. զի որ զայս այսպէս առնեն[2], ոչ միայն յայն աշխարհն մնասեն, այլ և աստէն իսկ զամ վերս 'ի վերոյ հարեալ եղծանեն յիւրեանց կողմանէ։ Եւ արդ երբ որ յայնցանէ որ 'ի չարիս կեցեն, յառաքինութիւն կրթիցին, յորժամ անհնարին միւսանգամ զգալն 'ի նոյն համարիցին՝ և զգառնալն 'ի լաւութիւն։ Եթէ մինչդեռ օրէնք 'ի վերայ կան, և տանջանացն սպառնալիք, և փառացն ցանկութիւնք, և զեհենին ակնունելն, և արքայութեանն սպասել, և չարաց պարսաւանք, և լաւաց գովութիւնք, հազիւ որ յանձն առնու ձգունս և քրտունս վասն առաքինութեան, եթէ զայս ամ որ 'ի միջոյ բառնայցէ, ապա ո՞չ ինչ է որ արգելուցու 'ի կորստենէ և յեղծանելոյ։

1 Գրեալ էր զ ...ոյ. թէ նիւեցոց։
բեւ զնդիոց, զի յոյնն ունի մա...

2 Յօրինակին առնէ։

Լմացեալ այսուհետև միանգամայն զխարդախութիւն բանսարկուին, զի և արտաքնոց օրինացն, և ՅՍ հրամանացն, և քնուէս խորհրդոց, և հասարակաց՝ իսկ ՅՄ մարդկան կարծեաց, և հմտութիւն բարբարոսաց և սկիւթացւոց և թրակացւոց և ամենեցուն իսկ առ հասարակ հակառակ են սոքա, և որք զբախտին և զհրամանաց կրօնս օրէնսդրել ժարդին, արթուն լիցուք, սիրելիք, և յամենեցունց 'ի նոցանէ հրաժարեալ գնասցուք ընդ անձուկ Ճանապարհն համարձակ և կասկածանօք։ Կասկածանօք՝ վասն երկուց կողմանց քարավիժութեան. և համարձակ՝ վասն նախապնաց առաջնորդին ՅՅոյ։ Գնասցուք արթունք և զուարթունք և միամիտք։ Լ՝թէ սակաւիկ մի որ նիրհեսցէ, իսկ և իսկ վրիպէ։ Օ՝ի չէ որ զգուշացոյն քան զԼաւիթ, որ սակաւ մի ծուլացեալ՝ յատակս իսկ մեղացն դարահոս լինէր. բայց սակայն վաղվաղակի կանգնեցաւ։

Մ՝ի այսուհետև 'ի մեղանչելն միայն հայեսցուք, այլ և 'ի զմեղսն 'ի բաց թօթափելն։ Մասն այնորիկ գրեցաւ պատմութիւնն, զի ոչ ընդ գլորելն միայն նայեսցիս, այլ և ընդ պատսպարելն զարմանայցես. զի ուսանիցիս, զի յորժամ գլորիցիս թէ որպէս պարտ իցէ յառնել։ Որպէս և բժիշկք զանհնարին ցաւոց հանգամանս ընտրեալ՝ 'ի գիրս գրեն. և այնպիսի հնարիւք զպահանջեալս ուսուցանեն, զի մեծամեծօքն կրթեալ՝ մանուանցն գիւրաւ հասու լինիցին։ Այնպէս և ՅՅ՝ զմեծամեծ մեղացն 'ի մէջ ածեալ կացոյց, զի որք 'ի փոքունս սխալիցեն, նոքօք գիւրին զսոցա հնարս գտանիցեն. զի թէ այնց եղեն պատճառք բժշկութեան, օրչափ ևս առաւել մանուանցն։

Տեսցուք այսուհետև, զիարդ ողջացաւ, օրպէս յարեաւ վաղվաղակի երանելին, և զինչ օրինակ ապաքինութեան իցէ։ Շնացաւ և եսպան։ Չհամարիմ ինչ պատկառանս, այլ մեծամայն բարբառով քարոզեմ։ Օ՝ի թէ հոգին սուրբ չհամարեցաւ ամենի զայնպիսի պատմութեան կարգել մի ըստ միոջէ, օրչափ ևս առաւել և ոչ մեզ պարտ իցէ զեղչել[2]։ Մ՝ի որոյ

1 Յօրինակին հասոյց։ 2 'Ի լուս. ՀԱՅՈՒ։

ոչ միայն զայն երկրորդեմ, այլ և այլ ևս 'ի նոյն յա-
ւելումս։ Վասնզի և որք զայն թաքուցանեն, նոքա ա-
ռաւել զառաքինութիւն նորա զեղջեն. զոր օրինակ
որք զպատերազմ որ ընդ Պոռիրադու լուեն, ոչ 'ի սա-
կաւ պակաց զլրկեն զնա. նոյնպէս և որք զայսպիսի
պատմութիւնքն զանց առնեն։ Թէ՛ այսպէս իցէ, ան-
սայլէք փոքր մի, և ապա 'ի վերայ հասանիցէք՝ զի
իրաւացիկ մտօք ասացաք զայս։ Զսան այնորիկ
ստուարացուցանեմ զմեղսն, և նորանշան ածեմ ըզ-
քանն, զի բազում յաձախութեամբ ցուցից։ Լու-
արդ զինչ իցէ զոր 'ի նոյն յաւելուցում։ Զառա-
քինութիւն առնն, որ զամբաստանութիւն սաստիկ գոր-
ծէ. քանզի չէ ընդ մի համար զնմա ընդ ոմի համե-
մատել։ «Զ օրաւորք, ասէ, զօրագոյնս 'ի պարտու-
թիւն մատնեսցին». և «Որ գիտիցէ զկամս տեառն իւ-
րոյ, և ոչ պատրաստեսցի, սրբցէ դան բազում»։
Զպա ուրեմն բազում գիտութիւն բազում տանջանաց
են պատճառք։

Զմին իրի քահանայն՝ որ զնոյն մեղս ժողովրդեանն
յանցանիցէ, ոչ զնոյն պատիժս կրիցէ, այլ առաւել
դաժանագոյնս։ Թէ՛ երևս հայեցեալ ընդ ստուարու-
թիւն ամբաստանութեան՝ զահի հարեալ դողայցէք,
և զարմացեալ սիրանայցէք ընդ իս իբրև ընդ վրէժ
ինչ խնդրելոյ։ Զայդ ես իրաւունս վստահ եմ տա-
լոյ. որչափ և առաւել զամբաստանութիւն ստուա-
րացուցանեմ, ևս առաւել զգովութիւն Պաւթի կա-
րօղ լինիմ յայտ առնել։

Լու զինչ քան զայդ աւելի իցէ, ասէն, ասել։ Զ-
ինչ աւելի ասել. որպէս առ Կայենիս ոչ միայն սպա-
նութիւն էր գործն, այլ և դժնդակ քան զբազում
սպանութիւս. զի ոչ զօտար՝ այլ զեղբայրն, և ոչ զվնա-
սակար՝ այլ զանմեղն եսպան. և ոչ յետ բազում
սպանողաց, այլ նախ եգիտ զօձիրսն։ Զոյնպէս և
աստ՝ ոչ միայն սպանութի էր, այլ և յանդգնութի.
զի ոչ դոյզն ոք էր՝ որ զանօրէն գործն գործէր, այլ
մարգարէ. և ոչ զվնասակար՝ այլ զանմեղն սպանա-
նէր. քանզի զրկեալ լինէր ըստ ժամանակացն յափշ-
տակութիւք կնոջն 'ի նմանէ. և սակայն ընդ այնմ ըզ-
միսն ևս յաւել։

31066
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
Գոս. Պետ. Գրադարան
ՀԱՅԱՍ ՍՍՌ
ԱՄ. Մասնաճյուղ
Ս. Մատենադարան

Մի՞թ դիր, զիարդ զընդայլ արդարն [1]· ոչ ակնածութեաբ պատմեմ զյանցանսն. բայց սակայն այնչափ վստահի պատասխանատուութեան գնեմ, զի յետ այսչափ զամբաստանութիւն ստուարացուցանելոյ՝ կամիմ մնա առ մանկնեցիսն գտանել [2], որ զայս 'ի յերդ արկեալ հենգնեն, որք զմարկիոնացւոց ախտն ախտաւնան. զի առաւել յաձախութեաբ կարկիի զբերանս նոցա։ Օ՛ի նոքա ասեն, եսպան և հնացաւ. և ես ոչ զայն միայն, այլ և կրկին եւս գնեմ զսպանութիւնն, յանմեղութենէ զրկելոյն և 'ի մեծարանաց երեսաց յանցաւորին։ Վանգի չէ ընդ մի համար՝ հոգւոյն արժանաւոր եղելոյ, և յայնպիսի բարութիւն վայելելոյ, և յայնչափ համարձակութիւն հասելոյ, և յայնգունակ տիս՝ յայնպիսի ինչ գործս յանդգնեալ, յոր և որք առանց այնր ամի իցեն՝ այնպիսի ինչ գործ գործել։

Այլ սակայն և այն զարմանալի է առաքինութի, զի յայնպիսի յատակս չարեաց հասեալ, և ոչ զանգիտեաց, և ոչ անյոյս եղև, և ոչ 'ի կոր կործանեցաւ զայնպիսի ազգոյ վերս առեալ 'ի սատանայէ. այլ վաղվաղակի՝ մանաւանդ թէ անդէն իսկ և իսկ, և բազում արագութեաբ ևս աղգոյ վերս եդ քան զոր էառն։ Այլ այնպիսի ինչ գործս գործեր, որպէս 'ի Ճակատու ուրեք և 'ի պատերազմի՝ յախոյեանէ սուր արդեանց 'ի սիրտ առնուցու, և կամ թէ 'ի լեարդն նետիւ խոցիցի, և 'ի վերայ առաջնոյն միւս ևս այլ ազգոյ վերս առնուցու, և յարեան և յապաժոյժ աւ մնեալն իրացն կայցէ. և պատսպարիցի վաղվաղակի, նիզակ առեալ, և զայն որ նետիւ խոցեաց՝ սպանանիցէ, և մեռեալ 'ի դաշտի ուրեք ընկենուցու։ Այլոյն պէս և այլն. որչափ և սաստիկ զվերսն ասիցեն, նոյնչափ զարմանալի զոգիս վիրաւորին ցուցանեն. զի խրախուսեաց յետ սաստիկ մեղայն յառնել՝ և կալ ընդդէմ Ճակատուն, պատսպարել, և ընկենուլ զախոյեանն՝ յորմէ խոցեցաւ։

Այլ եթէ որպիսի ինչ այն իցէ, այնպիսիք առաւել հմուտ են՝ որ 'ի մեղս անկեալ են։ Օ՛ի ոչ այնպիսի

1 Յոյն ընդ՝ յուրում։ 2 'Ի լաս. գտանիլ։

առաքինի և յառաջադէմ մնցէ՝ ուղիղ գնալ և ամենևին անսխալ ընթանալ. քանզի այնպիսի ուղեկից ունի զոյսն բարութիւն՝ որ կրթէն և յորդորէ և զՋիլսն սնդէ, և յօժարագոյնս գործէ, որպէս որ յետ այնչափ բազում պսակացն՝ և նշան կանգնելոյ, անհնարին վնասս կրել, և դարձեալ միւսանգամ կաւ բօղ լինել՝ի նոյն ասպարէզն ելանել։

Լոյս զի յայտնագոյն զանս արարից, և միւս ևս ոչ նուազագոյնս քան զառաջինն օրինակ փութացայց յառաջ բերել։ Օ մտաւ ած այր նաւապետ՝ որ հաւատանիցէ անցանիցէ զբազում վայրս համատարած ծովու. յետ այնչափ ընդ ծով նաւարկելոյ, և յետ բազում մրրկաց և խեթոց, և յահագին ալեաց ըզբեռնն զերծուցանելոյ, եկեալ հասեալ՝ի նաւահանգիստ նաւուն, թերևս բնաւ մերկանգամ իսկ հասաւ նիցէ հազիւ ճողոպրել։ Լոյս որ զայնպիսի նաւակոծութիւն կրիցէ, զիարդ մնաբերիցէ միւսանգամ՝ի ծով նաւարկել, և զայնպիսի ճգունս յանձն առնուլ. բայց եթէ կարի առաքինի սրտիւ իցէ. այլ ոչ բնաւ զծովվեզերքն, և ոչ զնաւահանգիստն թուի ինձ թէ տեսանել կամիցի, այլ խուսափեալ՝ի բաց մերժի. զայն օր՝ի միտն նկարեալ, ամենևին՝ի վհատութիւն մատնեալ, լաւ համարիցի մուրանալ՝ և ոչ միւսանգամ զայնպիսի աշխատութիւն յանձին կրել։

Ո՛չ այսպիսի որ և այն երանելի. այլ զայնչափ նաւակոծութիւս կրեալ, յետ բազում աշխատութեաց և քրտանց՝ չդանդաղեցաւ, չխուսափեցաւ. այլ զնաւն՝ի ներքս խառնեաց, և զկայմն կանգնեաց, և զթեւակս ուղղիչ նաւին՝ի ձեռն առեալ, միւսանգամ՝ի նոյն աշխատութիւն մխեալ, յաճախեաց կրկնակի զմեծութիւն։ Օ՛ի թէ կալն այնպէս զարմանալի իցէ, և ամենևին չկալն գլորման, այլ յառնելն և այնպիսի գործս գործել՝ ոչչափ պսակաց իցէ արժանի։ Մինչ պէտ բազում ինչ էր՝ որ՝ի վհատութիւն ածէր զնա։ Լայս մեղացն յաճախութիւն։ Երկրորդ անգամ՝ զի ոչ՝ի սկզբան կենացն, յորժամ բազում յոյզք՝ առաջի կային, այլ մօտ՝ի վախճան զայն կիրս կրեալ։

1 Յոյն յոյժ։

Այս և ոչ նաւավար՝ յորժամ 'ի նաւահանդիստ նաւաբեկութեան կրիցէ՝ այնչափ տրտմութեան տրտմի, որչափ որոյ չիցէ ընդ բազում մրրիկս մարտուցեալ և նաւաբեկեցեալ։ Այրորդ անգամ՝ յետ բազմապատիկ զմեծութեան համարելոյ՝ այսպիսի անցք անցանել։

Այնպէս և ոչ սակաւ ինչ մթերեալ էին նմա 'ի ժառանգակին բեռինք ղերծից. որ յառաջինն տիոց՝ յորժամ զնաշինն արածէր. առ Պողիպոս՝ յորժամ զնշանն յաղթութեան կանգնեաց. զգաստութեան զոր առ Շաւուղին եցոյց, զաւետարանական երկայնմտութիւնն յայտ արարեալ, բազում անգամ 'ի բուռն անկեալ թշնամւոյն միշտ զընդայր. մանաւանդ զի յաչխարհէ իսկ կամէր ելանել, և յաղատութեէ ելանել և 'ի կենաց ևս, և ոչ զզուր նենգագործն սպանանել։ Այս և 'ի թագաւորութենն իսկ ոչ սակաւ ուղղութիւս եցոյց։ Հանդերձ ասացելովքս՝ զի և բազմաց իսկ մեծարոյ էր։ Այլ յայսպիսի վայելչութեան փառաց վրիպեալ՝ ոչ սակաւ ինչ խռովութի գործեր նմա. զի ոչ այնչափ փառաւոր առնէին զնա ծիրանիքն, որչափ մեղացն աղտ ամաչեցուցանէր։

Գիտէք իսկ՝ որպիսի ինչ են մեղք ձաղեալ, և մեծաց հոգւոց պէտք են այմմ տանելոյ. մանաւանդ զի և ընդ բազմացն յանդիմանութեան այնչափ վկայս յանցանաց իւրոց ունել, մինչ ամենևին դուլ և դադար չգտանել։ Այլոց սակայն զայն այնչափ նեռս 'ի բաց թօթափեաց, և այնպէս պայծառացաւ, և լուաց զաղտն և սրբեցաւ, մինչև զծննդոց իւրոց և յետ մահու զմեղանսն քաւել։ Այլ որ ինչ զԱբրահամն ասացաւ, զսոյն և զսմանէ երևի ասացեալ այ. մանաւանդ ևս առաւել զսմանէ։ Օ՛ի զնմանէ ասէ, թէ « Հիշեաց զուխտն որ ընդ Աբրահամու ». և աստ չասէ զուխտէն. այլ զիարդ. « Ամն Պաւթի ծառայի իմոյ վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ ». և Պողոմնի՝ յաղագս նորա սիրոյն, առ այնչափ մեղանչէն՝ և չանկանել 'ի թագաւորութէն։ Այլ այնպիսի փառաւորութի էր առնն, մինչև Պետրոսի յետ այնչափ հրապարակաւոր լինելոյ ընդ հրեայսն՝ ասել, թէ « Պարտ է համարձակութիւն ասել ձեզ վասն նահապետին Դաւթի, զի և վախճանեցաւ և թաղե-

ցաւ »։ Եւ Զ՝ն մինչդեռ ընդ հրեայս վիճէր՝ յայտ առնէ զնմանէ, թէ յետ մեղացն՝ հոգւոյն արժանի եղև, և այնչափ՝ մինչ վասն նորա ՅԾՈՒԹԻՆ արժանի լինելոյ մարգարէանալ։ Զանզի և այնու իսկ դարձեալ ըմբերանէ զնոսա, և ասէ, թէ « Օ խարդ Դաւիթ 'ի հոգին սուրբ զնա ՅՐ կոչէ, թէ ասաց ՅՐ ցՅՐ իմ, նիստ ընդ աջմէ իմմէ »։

Եւ որ ինչ առ Սովսիսիւն եղև, նոյն և առ Դաւթա։ Օ որ օրինակ զԱՐԻՄ՝ յակամայ Սովսէ՝ պատժեաց ՅԾ վասն եղբօրն թշնամանացն, քանզի կարի սիրէր զսուրբն, սոյնպէս և սմա՝ որ 'ի յորդւոյն թշնամանեցաւ, լինէր արագ վրէժխնդիր. և այն զի չէին սորա կամք։ Դաւաւական իսկ է և այս, մանաւանդ թէ նախ իսկ քան զայլսն՝ ցուցանել զառաքինութիւն առնն. քանզի յորժամ ՅԾ վՃիռ տայցէ, չէ ինչ պարտ 'ի խոյզս և 'ի խնդիր արկանել։ Այլա եթէ կամիք կարգաւ իսկ մի ըստ միոջէ զնորա զգաստասիրութիւն ուսանել, կարի իսկ քաջ մարթի, յորժամ ընդ ՅՄ պատմութիւն յետ մեղացն անցանիցէք։ Տեսանես զնորա համարձակութիւն առ ՅԾ, զգութիւն և զխնամն, զառաքինութիւն ՅՃՈՒՄՆ, մինչև չև յետին շունչն զՀաւատսին։

Որովհետև այսպիսի օրինակ ունիմք, արթուն լիցուք և փութացուք՝ մի 'ի վհատութիւս կործանել. և եթէ գլորիցիմք երբէք, մի 'ի նմին կալ։ Մի՛չ վասն ծուլացուցանելոյ զՅԵՂ պատմեմք զմեղն Դաւթի, այլ զի բազում երկիւղ գործեցից ՅԵՂ։ Օ՛ի թէ այնպիսի արդար որ սակաւ մի ծուլացաւ՝ այնչափ վերս էառ, մեք զի գործեսցուք՝ թէ հեղգայցեմք։ Մի՛ ընդ գլորելն հայեսցիս՝ և ծուլասցիս, այլ զմտաւ ած թէ որչափ ինչ յետոյ գործեաց. քանի՞ ողբովք ողբացաւ, որպիսի ապաշխարութիւն զցայգ և զցերեկ ապաշխարէր, և զմահիՃն լուանայր արտասուօք, և խորգ զգենոյր։ Եւ՛ նա այնչափ դարձի կարօտացաւ, մեք երբ կարիցեմք ապրել, որք յետ այսչափ մեղաց՝ անխեթ և անկասկած եմք։ Օ՛ի որ բազում ուղղութիւնս ունիցի, այնու վաղվաղակի զմեղն խաղաղէ. իսկ մերկանդամ յորժամ խոցիցի նետիւ, զաղգոյ վերս առնուցու։

Օ՛ի մի այսուհետև այնպիսի ինչ լինիցի, վառեսցուք զանձինս գործովք բարութեան. և եթէ յանցանս ինչ հասանիցէ անկանել, վաղվաղակի թողթափեսցուք 'ի բաց. զի արժանի լիցուք 'ի փառս այլ կեալ առ ոչն յաշխարհի, և վայելել 'ի հանդերձեալ կեանսն։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ նոն մերոյ Յեսի Քրիստի. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն փառք և պատիւ յաւիտեանս. ամէն։

ՃԱՌ ԵՐԿՐՈՐԴ

«Իբրև եկն Յն 'ի տուն Պետրոսի, ետես զզրքանչն Պետրոսի՝ զի անկեալ դներ ջերմացեալ. բուռն էհար զձեռանէ նորա, և եթող զնա ջերմն. յարեաւ և պաշտեր զնա»։

Մարկոս և զվաղվաղակին յաւել. կամի և զժամանակն ևս յայտնել. իսկ սա զնշանսն միայն եդ, և զժամանակն ոչինչ նշանակէ։ Այլ այլք ասեն, թէ աղաչեաց զնա ախտացեալն. այլ սա և զայն ևս լռեաց։ Այլ այս ոչ եթէ երկբայութիւն ինչ իցէ, այլ մին համառօտ, և միւսն ևս Հնգրիտ պատմութիւն։ Այլ զի՞ եմուտ արդեաք 'ի տունն Պետրոսի։ Զուի ինձ՝ թէ վասն կերակրոյ ինչ Հաշակելոյ. քանզի և զայն իմն յայտ արարեալ՝ ասէ, թէ «Յարեաւ, և պաշտեր զնա»։ Այլ աշակերտսն մտաներ, որպէս առ Մատթէի իսկ՝ յորժամ կոչեցաւ՝ 'ի պատուել զնա ևս յօժարագոյնս նոցին առնել։

Այլ դու և ասա միտ դիր Պետրոսի, զիարդ ակնածեր 'ի նմանէ։ Հիւանդ այնպիսի ջերմացեալ 'ի տան ուներ, և ոչ իշխեր ստիպել տանել զնա 'ի տուն. այլ կայր մնայր մինչև զվարդապետութիւնն կատարեսցէ, և զայլսն զամենեսեան բժշկիցէ. և ապա յորժամ եմուտ նա անդ՝ յայնժամ աղաչեաց։ Զ՝ սկզբանէ իսկ այնպիսի խրատեալ էր, զի մի զանձն մեծարգի քան զայլսն առնիցէ. ապա ուրեմն ոչ սա էած զնա 'ի տուն, այլ ինքն իւրովի եկն. յետ ասելոյն հարիւրապետին, «Ես եմ արժանի՝ թէ ընդ յարկաւ իմով մտցես». ցուցանէ թէ ուրչափ ինչ շնորհէ աշակերտին։ Իսկ արդ աղէ՝ դու միտ դիր որպիսի ինչ յարկք էին որսորդացն. բայց սակայն չդարձեր երթալ 'ի խուղն մտանել, զի զքեզ խրատեսցէ կոխել զմարդկեղէնն հպարտութիւն։

Այլ երբեմն բանիւ միայն բժշկեր, և երբեմն ձեռն դներ, և երբեմն զերկոսին իսկ առներ՝ ընդ առաջ

տարեալ զբժշկութիւն. և ոչ հանապազ ըստ առաւելութեան կամաց էր ցուցանել նշանս. քանզի պարտ էր երբեք և 'ի չքմեղս լինել, մանաւանդ առաջի աշակերտացն. քանզի առ բազում ցանկութիւն զամենայն յայտ արարեալ քարոզէին։ Եւ այս յայտնի է. զի մինչդեռ իջանէին 'ի լեռնէ անտի, պատուէր տայր նոցա մի ինչ ումեք 'ի վերայ հանել։

Զոգ մերձեալ 'ի մարմնոյն՝ ոչ միայն զչերմն ցաւուցանէր, այլ կատարեալ առողջութիւն շնորհէր. և քանզի խոսն դոյզն ինչ էր, նորանշան բժշկութեան օրինակաւ զզօրութիւնն ցուցանէր, զոր չէր մարթ բժշկական արուեստի։ Պետէ իսկ, զի և յետ թողլոյ չերմանն՝ բազում ժամանակք ծախին ախտացեալոյն, մինչև անդէն յառաջին առողջութիւն կազդուրեսցի։ Եւ յայլ անդ ամ միանգամայն լինէր. և ոչ անդ միայն, այլ և 'ի ծովուն. քանզի և անդ ոչ միայն ըզհողմն և զմրրիկն ցածոյց, այլ և զշարժումն իսկ ցածոյց. որ և այն իսկ նորանշան էր. զի Թէպէտ և խռովութիւն դադարիցէ, այլ ջուրքն մեծ ժամն սահին յերթևեկի։ Ոչ առ Յոհն այնպէս, այլ ամ միանգամայն վճարէր. որպէս և կնոջն իսկ եղև։ Ոչ այնորիկ և յայտ արարեալ զնոյն աւետարանչին՝ ասէ, թէ «Յարեաւ, և պաշտէր զնա»։ Եւ Տրոի զօրութեն իսկ էր նշանակ, և զԹոյ կնոջն զոր ունէր ընդ Յոհ։

Եւ այլ իմն ընդ սմին՝ թէ կամիցի ոք՝ տեսանէ աստ. և այլոց հաւատոյք՝ այլոց շնորհէ բժշկութիւն Տրոյ։ Տանզի և աստ աշակերտքն աղաչէին զնա. որպէս և երանելի աւետարանիչն ասէ վասն մանկանն հարիւրապետին։ Այլ յայնժամ շնորհէ, յորժամ ոչ թերահաւատիցի՝ որ բժշկելոցն իցէ։ Այլ թէ վասն սաստիկ ցաւոցն չկարիցէ գալ, կամ վասն տգիտութեան, կամ վասն տխեղծ հասակի՝ չկարիցէ ինչ արժանիս իմանալ զնմանէ, ընդ այսր չէն ինչ բանք։

«Երբև եղև երեկոյ, մատուցին առ նա դիւահարս բազումս. և էհան զոյսն բանիւ, և զամ հիւանդս նոցա բժշկեաց. զի կատարեսցի բանն՝ որ ասացաւ 'ի մարգարէէն, թէ նա զհիւանդութիւնս մեր էառ, և

զցաւս մեր եբարձ»։ Ցեսանէս, զի բազումք այնուհետեւ առձիգն 'ի հաւատս. և զի ոչ յանժամ ժամու անսային Թափել 'ի նմանէ, և ոչ անդէպ ժամանակի համարէին՝ անազանի ածել առ նա զհիւանդս իւրեանց։ Այլ զու միտ դիր, որչափ բազմութիւն բժշկեալ լոյն զանց առնէին աւետարանիչքն. զի ոչ մի ըստ միոջէ պատմեն, այլ միով բանիւ զբազում աքանչելեօքն վազեն։ Այլ զի մի բազմութիւն աքանչելեացն 'ի թերահաւատութիւն զոք ածիցէ, թէ այնչափ բազում հիւանդս 'ի միում ժամու յանկարծ բժշկեաց, ածէ 'ի վկայութիւն իրացն զԳոսայի մարգարէն. որպէս և Յովհաննէս թէ նա զդոյն ասաց։ «Այս, ասէ, զբազհիւանդութիւնս մեր էառ, և զցաւս մեր եբարձ»։ Զոր վասն մեղաց Թուի ինձ ասացեալ մարգարէն. որում և Յովհաննէս միաբանս բարբառի, թէ «Զհաւասիկ գառն ՝այ՝ որ բառնայ զմեղս աշխարհի»։ Այլ թէ արդ աւետարանիչն զայս ասա վասն ցաւոց ձառիցէ, կամ ըստ իրացն զվկայութիւնն ընթեռնու, կամ յայտ առնէ՝ թէ բազում ցաւք 'ի մեղաց ոգւոց լինի։ Զի զվնասաւոր ցաւոց՝ մահն՝ 'ի մեղաց էառ ըստ կիզբն և պատճառս. որչափ և առաւել և բազում ինչ ախտք ցաւոցն. քանզի և չարչարելիք իսկ անտի եղեալք։

«Որբև ետես ժողովուրդ բազում շուրջ զիւրև, հրամայեաց երթալ յայնկոյս ծովուն»։ Ցեսս զանմեծարգութիւն. քանզի և այլքն ասէին, թէ և գիւաց սաստէր, զի մի ասիցեն՝ թէ նա է Քրիստոս։ Այլ սա ասէ, թէ զժողովուրդն մերժեաց։ Զայս այսպէս առնելով՝ միանգամայն և խրատէ զմեզ խոնարհել, և ցածուցանել՝ զի մի 'ի ցոյցս ինչ գործեսմք, և զզհրեիցն զնախանձն սփոփէ։ Ոչ զմարմնոս միայն բժշկէր, այլ և զոգիսն ածէր յուղղութիւն. զի երկոքումբք ցուցանիցէ զանձն, թէ և զցաւս բժշկէ, և 'ի ցոյցս ինչ գործ ոչ գործէ։ Քանզի էին բազումք բևեռեալ ընդ սէր նորա, և զարմացեալ, զի տեսանել կարօտէին, և լսել ցանկային։ Քանզի ո՞ կարէր հեռանալ՝ յորժամ զայնպիսի աքանչելիս տեսանէր. և ո՞ ոք ոչ կարօտէր զոնէ զերեսն տեսանել. և զի բերան նորա զայնպիսի քաղցր բանս բարբառէր. զի

ոչ միայն նշանաւոր էր սքանչելի, այլ այլ ազգ իմն էր շնորհաւոր։ Օ այս և մարգարէն յայտ արարեալ ասէր, թէ «Վայելուչ է դեղովք քան զնամ որդիս մարդկան»։ Թէպէտ և Լասայի ասէ՝ թէ «Ոչ գոյր նորա տեսիլ և ոչ գեղ». ըստ ճաշակութեան անձառ և անպատում փառացն ասէ. կամ 'ի չարչարանսն հայեցեալ՝ պատմէ զանարգութիւնն զոր կրեաց 'ի խաչելութեան ժամանակի. կամ վասն աղքատութեանն կենաց՝ զոր եցոյց աւելի քան զամենեսեան։

Լաւ ոչ նախ հրամայեաց երթալ յայնկոյս ծովուն, թէ ոչ նախ բժշկեաց. նա և առնուլին իսկ ոչ յանձն այնպէս. զոր օրինակ 'ի լերին ոչ միայն յորժամ հրաստարակաւն խօսէր՝ կային առ նմա, այլ մինչ լուռ կայր՝ անսային։ 'Ոյնպէս և աստ, ոչ միայն մինչ զքանչելիսն գործէր՝ յամէին առ նմա, այլ յորժամ և դադարէր. և 'ի տեսլենէ երեսացն աւելի իմն շաչէին։ Օ 'ի թէ Մովսէսի փառաւորեցան երեսքն, և Մատթանոսին 'ի հրեշտակի դէմն փոխեցան, ապա 'ի միտ առ զհասարակաց ՅՈՒ, որպիսի դիմաք պատշաճ էր երևել։ Լաւ թերևս այժմ բազումք ցանկան զնոյն պատկեր տեսանել. այլ թէ կամիմք՝ եւս լաւ քան զնոյն տեսանեմք. թէ համարձակութիւն վճարիցեմք զկեանս աշխարհիս, ամենայնք թռուցեալ ելանիցեմք ընդ առաջ նորա անմահ և անեղծ մարմնով։

Լաւ դու տես, զիարդ ոչ ստէպ խուճապէ զնոսա, զի մի զայրացուցանիցէ զնոսա։ Բանզի ոչ ասաց՝ թէ երթայք 'ի բաց գնացէք. այլ հրամայեաց յայնկոյս անցանել, ետ պատճառս անդ ակն ունել նմա։ Լաւ ժողովուրդն այնչափ սիրով երթային զհետ նորա։ Բայց ոմն ընչասէր՝ կարի յանդգնագոյնս մատուցեալ ասէր. «Ովդապետ՝ եկիցս զինի քո ուր և երթայցես»։ Ցեսանես, որպիսի ինչ է հպարտութիւն. զի զարշէր ընդ ժողովուրդն 'ի համար մնանել, այլ աւելի իմն զանձն քան զբազումս ցուցանել։ Օ 'ի այնպիսի իսկ են հրէական բարոյքն, անժամ համարձակութիւն յանդգնել։ Այնպէս և այլ ոմն՝ յետ ամենեցուն լռելոյ՝ մատուցեալ յառաջ, ասէր՝ թէ «Ո՞ր պատուիրան առաջին է»։ Բայց սակայն ջնաս տեաց ՅՈՒՆ յանդգնել համարձակութեանն. զի զմեզ

խրատիցէ՝ և այնպիսեացն և սանել։ Ա ամն այնո-
բիկ ոչ յայտնի ինչ յանդիմանել զչարիմացն, այլ
ըստ կարծեացն նոցա տայր նոցա պատասխանիս. զի
նոցա և Եթ տայցէ իմանալ զյանդիմանութիւնն, և
կրկին շահ առնիցէ նոցա։ Ա՝ ցուցանելովն իսկ,
թէ գիտէր որ ինչ՝ի միտս նոցա կայր. և դարձեալ՝
զի յետ յանդիմանութեան շնորհէ և նոցա լուելովն,
և տալով միւս անգամ ժամանակ՝ Եթէ կամիցին վեր-
ստին զանձինս գտանել. զոր և սմա իսկ արար։

Զանազի ետես բազում նշանս, և բազում ժողո-
վուրդս առ նա, կարծեաց՝ թէ ինչս ժողովիցէ վասն
այնպիսի նշանաց։ Զոր ուստի՞ յայտ իցէ։ Ի պա-
տասխանւոյն զոր արար նմա Զա. ոչ ըստ բանիցն
հարցելոց, այլ ըստ մտաց բարոյիցն պատահէր։
Օ իմաստ. ընդէ՞ զաղագաւ ժողովելոյ դայցես զկնի
իմ. չտեսանես, զի ոչ յարկ անգամ գտանի իմ, որ-
պէս Թռչնոց դադարք։

Զի «Զուեսուց որջք են, ասէ, և Թռչնոց երկնից
դարդարք, և որդւոյ մարդոյ չիք տեղի՝ ուր զգլուխս
իւր դիցէ»։ Զու այսու ոչ Եթէ անդրէն յետս դար-
ձուցաներ, այլ զչար բարսն յանդիմաներ. և Եթէ
կամեցեալ էր այնպէս երթալ զհետ նորա, ոչինչ ար-
գելոյր։ Զու զի ուսանիցիս զչարիսն, իբրև լուաւ
զայս և յանդիմանեցաւ, ոչ ասաց թէ այդպէս ինչ
իցէ, պատրաստ եմ գալ զկնի քո։

Բազում անգամ և այլուր ոչ յայտնի յանդիմա-
ներ զոք Զա, այլ՝ի պատասխանւոյն յայտ առնէր
զմիտս մատուցելոցն։ Զանազի և այնմ որ ասէր ցնա,
թէ «Ա արդապետ բարի», և կարծէր՝ թէ մեղմա-
խօսք կարիցէ ածել զնա զիւրև, ըստ մտաց նոցա
արար զպատասխանիսն. «Օ՞ կոչես, ասէ, զիս բարի,
զի չիք բարի՝ բայց միայն Ած»։ Զու յորժամ ասա-
ցինն, եթէ «Զհաւասիկ մայր քո և եղբարք քո»։
քանզի նոքա մարդկեղէնն իմն իմանային, զի ոչ կա-
մէին զկարևորսն լսել, այլ ցուցանել թէ նորա էն՝
իբրև մեծարգութիւն ինչ, լուր զինչ ասէր. «Ո՞վ է
իմ մայր, կամ ո՞վ են իմ եղբարք»։ Զու եղբարքն
յորժամ ասէին՝ թէ ցոյց զանձն քո աշխարհի, և
կամէին նոքաւ մեծարգի իմն լինել, ասէ. «Զեր

ժամանակ յամենայն ժամ է. բայց իմ ժամանակն չեւ եւս է հասեալ»։ Եւ 'ի հակառակացն ինն առնէ իսկ զայն յայտնի. որպէս զԱթանայելէն ասէ, թէ «Արդարեւ իսրայելացի՝ յորում նենգութիւն ոչ գոյ». և դարձեալ թէ «Երթայք պատմեցէք Յովհաննու՝ զոր ինչ լուայք և տեսէք»։ Օ՛ի և անդ ոչ ըստ բանիցն, այլ ըստ մտաց յղելեացն առնէր պատասխանի։ Եւ ընդ ժողովրդեանն ըստ նոցա մտացն վիճեալ ասէր, թէ «Օ՛ի ելէք տեսանել յաւնապատն»։ Զանգնոցա 'ի դէպ էր 'ի ժամանակէն՝ թէթև ինն և ցոփ համարել զՅովհաննես, զի զայնպիսի կարծիսն 'ի միջոյ բառնայցէ, «Օ՛ի ելէք, ասէ, յանապատն տեսանել. եղէգն 'ի հողմոյ շարժուն, թէ այր հանդերձս փափուկս զգեցեալ»։ Օ՛ի երկոքումբք ցուցցէ, թէ ոչ անձամբ ինչ ցոփ ոք կամ թէթև, այլ զի զայլս ածիցէ յուղղութիւն. և երևի այնպէս, և ոչ հանդերձս կակուղս զգենայր։ Այլ պէս և աստ ըստ հարցուածոցն առնէ զպատասխանիսն։

Եւ դու տես, զիարդ և այսու գայթ աղքատութիւն յայտ առնէ։ Զանգի ոչ ասաց, թէ ունել ունիմ ինչս՝ բայց չառնեմ փոյթ, այլ թէ բնաւ չունիմ իսկ։ Տեսանես, որչափ ըստ զիջանելոյ են հաւաստիքն. զի ուտելն իսկ և ըմպելն նորա՝ հակառակ են Յովհաննու պահոցն. և զայն վասն հրեիցն փրկուել առնէր. մանաւանդ վասն փրկութեանն աշխարհի իսկ միանգամայն. զի և զՀերձուածողացն կարկիցէ զբանս, և զբաղումն ածիցէ զիւրև։

«Իսկ մի ոմն յաշակերտացն ասէր. Տո՛ր տուր ինձ հրաման երթալ նախ թաղել զհայր իմ»։ Տեսանես զայլ և այլ գունակ մատուցելոցն։ Օ՛ի մինն յանդգնեալ ասէր, «Եկից զկնի քո ուր և երթայցես». և սա թէպէտ և պարկեշտ ինչ իրս հայցէր, «Հրաման տուր». ասէ։ Եւ չետ հրամանն, այլ ասէ, «Եկ զկնի իմ, և թող զմեռեալսն՝ թաղել զմեռեալսն իւրեանց»։ Եւ այսպէս նամ ուրեք ընդ միտսն ևեթ հայի Քրիստ, և զպատասխանիսն ըստ մտացն առնէ։

Եւ ընդէր, ասէն, ոչ հրամայեաց։ Օ՛ի և նոքա վըճարեալ էին, և անթաղ չմնային։ և սմա 'ի կարևո-

բայն չէր պարտ հեռանալ. և վասն այնորիկ կոչեաց մեռեալս զնոսա, զի ցուցցէ՝ թէ սա չէր նմա մեռեալ. և թուի ինձ թէ յանհաւատից իսկ էր վախճանեալն։ Այս եթէ զարմանայցես ինչ ընդ պատանւոյն, թէ զիարդ վասն այսպիսի կարեաց հարցանէր ցՅՅ, և ոչ անհարց և անհրաժեշտ զնայր, այլ ընդ այն առաւել զարմացիր, թէ զիարդ յորժամ արգելուն՝ անսաց։

Այս չէր, ասեն, անհնարին անպիտանութի՝ չերթալն և թաղել զհայրն։ Օ՛յ թէ առ ծուլութէ ինչ չէր երթեալ, կարի իսկ անպիտանութի էր. իսկ եթէ զի մի խափանեսցէ զկարևոր գործն՝ երթալո

կամ որդի կամ այլ ոք յիւրոցն վախճանեալ, չտան իմանալ՝ և ոչ 'ի գերեզմանն երթալ յղարկաւոր։ Եւ չհամարին նոցա զայն անագորոյն միտս և տմարդութիւն. և կարի իսկ յիրաւի. նորին իսկ հակառակն էր անագորոյն մտաց, եթէ զայնպիսիս որք 'ի յախտի ծնեալ էին 'ի սուգ ստիպէին հանել։ Այսպէս թէ զչերմոցն սուգ առնուլ, և թախծել մտօք աննման իցէ հիւանդացն, որչափ և առաւել 'ի հոգևոր պատգամացն հեռանալ։ Այսմն իրի իսկ և այլ ուր ասէ, «Զարկանէ ոք ձեռն զմահով և հայեսցի յետս, և աջողեսցի արքայութեան»։ Զի առաւելութիւն է զարքայութիւն քարոզել և զայլս 'ի մահուանէ զերծուցանել, քան զմեռեալ մի որ ոչինչ օգտիցի, թաղել. մանաւանդ յորժամ բազումք իցեն՝ որ զայն վճարիցեն։ Որ ոչ այլ ինչ աստի ուսանիմք, եթէ ոչ զի զդոյզն ժամանակս չէ պարտ վայրապար ծախել։

ԳՈՐԴՈՐԱԿ

Զոյգն և բազում ինչ իրք կարևորք 'ի վերայ կայցեն, այլ քան զայսմ և յոյժ կարևորսն զհոգևորսն լաւ համարել, և ճանաչել՝ թէ զինչ կեանք են, և կամ զինչ մահ իցէ։ Զանգի բազումք թուին անձանց իւրեանց՝ թէ կենդանիք իցեն, և չեն ինչ ընդհատ 'ի մեռելոց՝ յորժամ 'ի չարիսն իցեն. մանաւանդ զի առաւել վատթարագոյն քան զմեռեալսն են. «Զի որ մեռանին, ասէ, արդարացեալ է 'ի մեղաց». բայց որ կենդանի է մեղք, նա ծառայ է մեղաց։

Եւ զայն ինչ մի ասիցես ցիս, թէ յորդանցն չծախիցի, և ոչ 'ի տապանի կայ, և ոչ զաչսն եխից, և ոչ պատանոք պատեցաւ։ Զի և այս չար քան զվախճանեալն է 'ի տապնատի. ոչ յորդանցն ծախեալ, այլ 'ի սաստիկ գազանաց ոգւոցն կարեաց գեղ գեղ պատառեալ և թարախով լցեալ։ Զի ելպետ և 'ի բաց իցեն աչքն, և այս չար կարկեալ են քան զայնոցիկ՝ որոց կարկեալ և կափուցեալ իցեն։ Մեռելոյն չտե-

սանէն ինչ զարև, և սորա բազում ցաւս կուտեալ անձինն այօր բացօր։ Ի՝ հեռեալն 'ի տապանի կայ անշարժ ամենեին, և սա մեղօք 'ի գերեզմանի ալէսպէս ցաւօք թաղեալ։ Ի՝ յլ նորա մարմինն հարեալ իցէ. և զսորայս չտեսանես զի յառաջ քան զմարմինն ուղիղն հարեալ են և կորուսեալ, և բազում տխրութիւն կրէ 'ի սրտին։

Ի՝ հեռեալն զտասն օր միայն հոտեցաւ, և սա մեղօք զնա՞մ աւուրս կենաց բուրէ ժանտահոտութիւն. բերան այսպիսի ունի՝ որ զվտակս պիղծս աղբանոցաց բղխիցէ։ Ի՝ բրպէս զի և այնչափ ընդհատ է սա 'ի նմանէ, զի նա ըստ բնութենն միայն ապականութիւն կրէ, և սա հանդերձ այնու և զգեղխութիւն և սրտմտութիւն 'ի նոյն յարէ. և օր ըստ օրէ ազգի ազգի հնարս ապականութեամ իմանայ։ Ի՝ յլ 'ի ձի՞ հեծեալ յօրանայցէ. և այն զինչ աւելի իցէ. քանզի և նա մահճօք բարձեալ յուզարկի։ Ի՝ այս և նմա անհնարին աղէտք են. զի զնա 'ի հարկանելն ո՛չ ոք տեսանէ, քանզի 'ի տապանի իբրև ընդ վարագուրաւ ծածկեալ կայ. և սա նեխեալ, և յածեալ գայ ըզվայրօք. իբրև զմարմին բարձեալ կրէ զոգին մեռեալ։ Ի՝ եթէ հնար ինչ էր տեսանել զոգի առն որ 'ի փափկութեամ և 'ի չարիս կայցէ, տեսանէիր իսկ՝ զի կարի լաւ էր 'ի գերեզմանի կապեալ կալ, և ո՛չ պաբաւանդաք մեղայ ծածկեալ։ Ի՝ վեմ կափարիչ 'ի վերայ յարկել, և ո՛չ անզգայութիւն արբեցութեանն ծանրացեալ։

Ի՝ ամն որոյ առաւել քան ջերմայ այնպիսի մեռելոյ՝ այնպիսի անզգայացելոյ յախտին՝ պարտ է մերձենալ վասն նորա՝ առ Տ՝ Յա, որպէս յայնժամ Ի՝ արիամ արար վասն Ղ ազարու։ Ի՝ էպէտ հոտեալ իցէ կամ չորեքօրեայ՝ մի՝ զանգիտիցես, այլ մատիր և զվէմն 'ի բաց վերացո, և ապա տեսանիցես՝ զի իբրև զմեռեալ պատեալ վարկեալ կայ 'ի գերեզմանի։ Ի՝ եթէ կամիք, 'ի մեծամեծաց և յալեւորաց իսկ զոք 'ի մէջ ածցուք։ Ի՝ յլ մի՞ ինչ խռովեսջիք, զի չասեմ զումեքէ յանուանէ զօրինակս. մանաւանդ

1 Յօրինակին Նոյա. եղաք ըստ լուս։

թէ յանուանէ իսկ ասէի, ոչ այնպէս պարտ էր երկրնչել. քանզի ո՞ ոք 'ի մեռելոց երկնչիցի. զի որչափ ինչ գործս գործիցէ, մեռեալ է. և մեռեալն՝ կենդանւոյ ոչ մեծաւ և ոչ փոքու վնաս կարէ առնել։

Տեսցուք այսուհետև կապեալ և կաշկանդեալ ըզգլուխ նորա. քանզի յորժամ ցանդ արբենայցէ, իբրև բաղում պատանօք և կտաւօք պատրուակին և խնուն և կապին ամ զգայութիւնք նորա։ Այնթէ կամիս և զձեռն տեսանել, հայեաց զի և այն իսկ կապեալ և կծկեալ կան 'ի վերայ լանջացն՝ երբև տանելեացս, ոչ պատանօք, այլ և ս անհնարին կապանօք ապահուութեամբ. զորս պարտ էր ցանդ յողորմածութիւն կարկառել. և ոչ այլ ինչ երբէք 'ի սակաւ մասն ուղղութիւն ձգէ, այլ քան զմեռելոյն և անպիտանութիւն գործէ. կամիս և զոտն ծնգեալս ընդ միմեանս տեսանել. տես և զայն և պարաւանդեալս հոգովք. վա՞ որոյ ոչ երբէք կարող լինին ընթանալ 'ի տուն ամ։ Տեսեր զմեռեալ, տես և զպատօղն։ Ա՞վ իցէ պատօղ այնպիսեացն։ Պատանայ՝ որ սատիկս վարկէ զնոսա, և չտայ այսուհետև երևել՝ թէ մարդ իցէ, այլ փայտ գօս. որ ոչ ակն ունիցի[1], ոչ ձեռք և ոչ ոտք և ոչ այլ ինչ 'ի սոյնպիսեաց. և զիարդ երևի այնպիսին մարդ։ Այնպէս և զոգի այնպիսւոյն 'ի խանձարուրս պատեալ է տեսանել. և մանաւանդ իբրև զկուռս համարեալ՝ և ոչ ոգիս։ Այլ քանզի յանզգայս անկեալ դնի, և 'ի մեռելոց համարի է, և ոչ 'ի կենդանեաց, արդ մատիցուք վասն նորա առ Յն, աղաչեսցուք յարուցանել զմեռեալ ոգին. 'ի բաց առցուք զվէմն կափարիչ, լուծցուք զկապանսն վարակեալս։ Այնթէ 'ի բաց առնուցուս զվէմն կափարիչ, այսինքն է զանզգայութիւն չարեայն, վաղվաղակի և զերծուցանել կարես զնա[2] 'ի գերեզմանէ։ Այլ յորժամ հանիցես, դիւրագոյն և 'ի կապանացն զերծուցանիցես։ Յայնժամ ճանաչիցէ զքեզ Յն, յորժամ յառնիցես, յորժամ լուծանիցիս. ապա յինքթիրան իսկ իւր կոչէ զքեզ։

Այսուհետև և որք Յն սիրելք իցէք, և նորին

1 Յօրինակին ԽԻԽԻՒ։ 2 Յօրինակին ՆՈՒՆ։

աշակերտք, որք միանգամ զչուեան[1] սիրէք, մատեր-
ուք առ Յն, և աղաչեացուք. թէպէտ և բազում
չարահոտութիւն լի իցէ[2], սակայն իւրոց ջերմոցն և ոչ
այնպէս պարտ է զնա 'ի ձեռաց թողուլ. այլ ևս ջեր-
մագոյն մատչել քան զքերցն ՝Ի ազարու, որ այնպէս
ջերմաջերմ խաղապատէին. և ոչ 'ի բաց մեկնել յաղ-
թիւ և 'ի պատանաց և 'ի խնդրուածոց, եթէ ոչ զնա
կենդանի 'ի մէջ առնուցումք։ Այլ եթէ այսպէս զանձ
ամոց իրս և զընկերաց զմտաւ ածիցեմք, և հանդերձ
ձելոց կենացն վաղվաղակի հատանիցեմք շնորհօք և
մարդասիրութիւն ՝ն մերոյ Յսի Քսի. ընդ որում
հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն։

1 Յօրինակին զչ-ուեան։ 2 Յօրինակին իշէ։

ՃԱՌ ԵՐՐՈՐԴ

«Լոյս իբրև եմուտ նա 'ի նաւն, զկնի նորա չոգան աշակերտքն. և ահաւասիկ շարժումն մեծ եղև 'ի ծովուն, զի և նաւն ևս ծածկեր յալեացն, բայց ինքն ննջեր»։

ՅԻԿԱՆ ազատեաց զանձն առ պահանջելոյ ըզկարգ ժամանակաց։ Վասնզի այսպէս ասաց, թէ «Լցեալ 'ի միում աւուրց՝ և ինքն էլ 'ի նաւ». և Մարկոս նոյնպէս։ Իսկ սա թէպէտ և ոչ նոյնպէս, այլ կարգ իմն վարէ յայսմ վայրի։ Վասնզի ոչ ամենեքեան զամ ինչ գրեցին. զի և յառաջինսն իսկ ասացի, թէ չէ պարտ զթողլոմն ինչ ուրեք՝ երկրանութեան համարել։ Օ՛ի զժողովուրդն յղարկեաց, և զաշակերտսն ընդ իւր էառ, զայս և նոքա ասացին։ Լոյս ոչ վայրապար ինչ էառ ընդ իւր զաշակերտսն, այլ զի առնիցէ տեսօղ աքանչելեացն՝ զոր առնելոյ էր։ Որպէս մարգիչ զք Ճարտար՝ յերկուս իրս կըրթէր զնոսա. զի ազգականս իրացն յարդարեսցէ զնոսա Ճգամբքն. զի յորժամ 'ի պատիւ ինչ եկանիցեն՝ խոնարհութեան ունիցին յանձինս, և մի մեծամտիցեն ինչ. զայլսն յուղարկեաց և զնոսա առ իւր կալաւ. թայլ ետ ծովուն ամբոխել, զի այնու կրթեսցէ զնոսա տանել առաքինութիւն պատերազմաց։ Թէպէտ և մեծամեծ նշանք եին այլքն, այլ յայս ևս կրթութիւն ոչ սակաւ կայր, և ազգակից հնոց նշանացն. վասն այնորիկ զաշակերտսն միայն առնուցու ընդ իւր։ Ընդ եր հանդէսք աքանչելեաց, և զժողովուրդն 'ի տես կոչելոյ պատճառք. անդ արհաւիրքն և փոքանութիւնք 'ի վերայ յարուցեալք՝ առ 'ի կրթել զնահատակսն ամ տիեզերաց. վասն այնորիկ զնոսա միայն առնուցու ընդ իւր։

Մատթէոս ասէ՝ թէ ննջեր։ Իսկ Մարկոս և զայն ևս՝ թէ զիարդ ննջեր. բարձ մի, ասէ, դոյզն զղըլխոնն կայր. զի ցուցցէ զնախատեսութիւնն, և մեզ

ուսուցանիցէ այնու բազում խոնարհութիւն։ Իսկ յորժամ մերկին յուզէր և ծոփն կոծեալ ծփէր, զաբ-թուցանէին զնա և ասէին, «Պարեցո զմեզ՝ զի կորընչիմք աւասիկ»։ Այլ նա նախ 'ի նոսա սաստէր քան 'ի ծոփն։ Յր որպէս ասացի իսկ, թէ վասն կրթութեան նոցա թոյլ էտ ծովուն յուզել, և յօրինակ հանդերձելոց փորձուէցն՝ որ հասանելոց էին նոցա։ Վասնզի յետ այնորիկ բազում դժնդակ իրս թոյլ էտ նոցա փորձել, և երկայնամիտ լինել առ ժամանակ մի։ Այսն որոյ և Պաւղոս իսկ ասէր, թէ «Այ կամիմ եղբարք՝ եթէ ազէտք իցէք, զի առաւել քան զկար մեր ծանրացաւ 'ի վերայ մեր, որպէս թէ վրիպել մեզ 'ի կենաց մերոց»։ Յր յետ այսորիկ դարձեալ՝ թէ «Որ յայնչափ 'ի մահուց փրկեաց զմեզ»։ և այսու յայտ առնէ՝ թէ քաջալերել պարտ է, թէպէտ և կարի ինչ ալիք փորձուիցէ 'ի վերայ գայցեն։

Յր զի՞մ ինչ յօգուտ մատակարարէ, նախ 'ի նոսա սաստէր. քանզի և խռովէին իսկ ծովուն նոցա յօգուտ լինել, զի ևս առաւել նշանն երևեսցի, և հանապազ ունիցին զյիշատակ իրացն 'ի մտի։ Օ 'ի յորժամ իրք ինչ նորք գործիցին, բազում ինչ յիշեցուցիչ իրացն յառաջագոյն կազմէ՝ ՝ած, զի մի՛ յորժամ սքանչելիքն անցանիցեն, մոռանայցեն։ Որպէս Մովսէս զի նախ երկեաւ յօձէն. և ոչ սակաւ ինչ երկեաւ. և ապա ետես զնորա նշանագործութիւնն, բազում տարակուսութեամբ։ Այնպէս և սոքա նախ կորստեան ակն ունէին, և ապա ապրեցան, զի յորժամ առնուցուն զչափ նեղութիւն, ուսանիցին զնշանն առաւելութիւն։ Այսն այնորիկ և 'ի քուն իսկ եմուտ. զի թէ մինչ արթնանն էր՝ յուզեալ էր ծոփն, ոչինչ երկնչէին. և թերևս բնաւ աղաչէին իսկ ոչ. և ոչ կարծէին՝ թէ այնպիսի զօրութիւն կարիցէ առնել։ Այսն այնորիկ 'ի քուն մտանէր, զի երկնչելոց ժամանակ տայցէ, և յայտնագոյն զիրսն առնիցէ. զի ոչ այնպէս ոք նմանագոյնս՝ որպէս յայլոց մարմին և յիւր մարմինն զդայցէ կարեացն։ Օ ամենեսեան տեսանէին առաւել երևելիս 'ի նմանէ, և զանձինս ոչ այնպիսի ինչ նարօտք. զի ոչ կազք էին և ոչ կոյրք,

և ոչ այլ ինչ ցաւս յանձինս ունէին, պարտ էր նո-
ցա իւրեանց իսկ զպայմանքն վայելել 'ի բարերա-
րութիւնն։ Թոյլ ետ յուզել մրրկին, զի յորժամ
զերծանիցին 'ի վշտացն՝ յայտնագոյն առնուցուն
զսոյզ բարերարութիւն։ Այսն այնորիկ ոչ մինչ մաս
էին ժողովուրդն՝ առնէր զայն, զի մի ըստգտանիցի
Թերահաւատութիւն նոցա. այլ զնոսա միայն առեալ
ընդ իւր՝ յարդարէ, զի յառաջ քան զԼրոցն յոյզն
զմնաց նոցա զայոյզն ցածուցանիցէ։

«Այստէ և ասէ, զի այդչափ վատասիրտք էք և
Թերահաւատք»։ Այս իսրատէ մնանգամայն, Թէ զերբ
կիւզ ոչ փորձուէց ինչ գալուստն առնէ, այլ մնացն
տկարութիւն։ Այպա Թէ ասիցէ ոք, Թէ ոչ առ երբ
կիւզն ինչ կամ Թերահաւատութիւն մատեան և յա-
րուցանէին զնա, ասեմ իսկ Թէ այդ իսկ մեծ նշան
է, զի ոչ պատշաճ ինչ կարծիս կարծէին զնմանէ. զի
'ի յառնէն և սատէն կարի լաւ գիտէին. բայց Թէ
մինչ ենչէր՝ կարող իցէ սատել, զայն ոչ գիտէին։
Այս արդ զի՞ զարմանաս. ուր և յետ բազում իսկ
աքանչելեացն տակաւին անկատարք էին։ Վանգի
սատէր իսկ բազում անգամ. որպէս յորժամ ասիցէ, Թէ «Տակաւին և դուք անմիտք էք»։ Այս ընդ
այն մի ինչ զարմանար, Թէ յորժամ աշակերտքն
անկատարք էին, ժողովուրդն ոչինչ մեծամեծս իմա-
նային զնմանէ։

«Օ արմանային, ասէ, և ասէին՝ Թէ որպիսի՞ ոք
է սա, զի և ծով և հողմք հնազանդին սմա»։ Բայց
Վրն ոչինչ զչարեցաւ՝ զի մարդ կոչէին զնա. այլ ան-
սաց, զի նշանօքն ուսուցանէ՝ Թէ վրիպական կարծիք
են նոցայն։ Այս ուստի կարծէին զնա մարդ։ Յերե-
սացն, 'ի քնոյն, 'ի նաւ մտանելոյն. վասն այնորիկ
յանհնարին տարակուսանսն մտեալ՝ ասէին, Թէ ո՞ ոք
է սա։ Օ՛ի քունն և տեսիլն՝ որ երևէր, մարդ ցու-
ցանէին. բայց ծովն և յանկարծակի խաղաղել ա-
լեացն՝ ՝ած երևեցուցանէին։ Այս քանզի Ա՝ուլսես այն-
պիսի ինչ արար [1], ցուցանէ աստ առաւելութիւն, Թէ
նա իբրև զծառայ, և սա իբրև զտէր նշանագործէ։

[1] Յովհաննէս Գ. ՝ը. ՝բրբ։

Օ՛ի ոչ գաւազան կարկառ, և ոչ ձեռս ընդ երկինս տարածեաց, և ոչ աղօթից կարօտացաւ, այլ որպէս ՝ռն վայելէ՝ աղախնոյն սաստել, և արարչի՝ իւրում արարածոց, այնպէս նշանքեր զնա, և սանձեր բանիւ և հրամանաւ միայն, և ՝ամ մրրիկն յանկարծակի դադարեր, և ոչ հեղք հողմոյ ուրեք ամենևին ՝ի ծովուն գտանէին։ Այլ քանզի զսոյն իսկ աւետարանիչն յայտ արարեալ՝ ասէ, թէ «Այդպէս խաղաղութիւն մեծ»։ Այլ զոր զՀօրէ մեծ իմն ասէր մարդարէն, թէ «Ասաց և դադարեաց հողմն և մրրիկն». սոյնպէս և սա ասաց արդեամբք զնոյն եցոյց. զի և ասաց և արար խաղաղութիւն մեծ, վասն որոյ և մարդիկն զարմանային։

Այլ իբրև եկանէր ՝ի ծովէն, այլ նշանք ահագինք զՀետ այնր նշանաց պատահէին։ Դիւահարքն իբրև զծառայս չարս փախստականս, տեսեալ զ՝ոն՝ բողոք հարկանէին, թէ «Օ՛ի կայ մեր և քո Յի՞ որդի՝ ՝ոյ, եկիր այսր տարաժամ տանջել զմեզ»։

Դանզի և ժողովուրդն մարդ համարէին զնա, եկին դևքն և ՝ած քարոզէին. և որք զծոփն տեսին յուզեալ՝ և դարձեալ դադարեալ, և ոչ առնոյին ՝ի միտ, լուան զբողոք դիւացն և հիացան։ Օ՛ի նա խաղաղութեամբն զնա ՝ած քարոզէր, և սոքա առատի։ Այլ զի մի պաշտօն ինչ առնելոց իբքն կարծիցին, ՝ի փոքանոյն՝ իսկ պարտ էր իմանալ. զի բողոք բարձեալ աղաղակէին, թէ «Եկիր տարաժամ տանջել զմեզ»։ Վասն այնորիկ իսկ նախ յայտ լինէր թշնամութիւն, զի մի կարծիք ինչ աղաչանքն համարիցին։ Օ՛ի և տանջէին իսկ ՝ի ծածուկ՝ և քան զծոփն ևս չար խուռվէին դևքն, խոցեալք, ծակոտեալք ՝ի ծածուկ, և անհնարին ցաւս առեալ միայն ՝ի գալըստենէն Դ՝ոյ։ Այլ զի ոչ ոք իշխեր զնոսա մօտ տանել, ինքնին Դ՝ո երթայր առ նոսա։ Այլ Մ՝ատթէոս ասէ, թէ նոքա ասացին՝ թէ եկիր այսր տանջել ըզմեզ։ Իսկ այլքն և զայն ևս յաւելին, թէ «Դաչէին զնա, և երդուին տային, զի մի յանդուգնդս արկանիցէ զնոսա»։ Օ՛ի կարծէին՝ թէ անդէն իսկ առ

՝ Ի լաւ. Ի էրմէսոյ։

ժամայն եկեալ հասեալ են տանջանքն, և երկնչէին՝ թէ ահաւասիկ 'ի պատիժս մտանելոյ են։

Ղուկաս մի գիւտաւոր ասէ, և սա երկուս. և ոչ այն երկրորդութիւն ինչ ցուցանէ։ Օ՛ի թէ ասացեալ էր՝ մի միայն էր և այլ չէր, թուէր թէ ընդդէմ ինչ էր Պատթէի։ Իսկ եթէ զի նորա միայն, և սա զերկուցն, ոչ կարոյ ինչ են բանք, այլ այլազուանակ պատմութեան։ Այլ թուի ինձ, թէ Ղուկաս զմինն չկարի դժոգակ ընտրեաց, քանզի անհնարին ինն պատմէ։ Օ՛ կապանս, ասէ, և զչքթայն խղէր, և ընդ անապատս մոլորեալ շրջէր։ Իսկ Պարկոս՝ թէ քաւրամբք ևս կոծէր զանձն։ Այլ բանք նոցա կարի ինն դժոգակութիւն և յանդգնութիւն ցուցանեն։

«Այլիր, ասէ, այսր յառաջ քան զժամանակն տանջել զմեզ»։ Վանդի չկարէին ասել՝ թէ չմեղաք ինչ, վասն այնորիկ աղաչէին՝ մի յառաջ քան զժամանակն մտանել 'ի տանջանսն։ Յամանեաց կալաւ զնոսա յանօրէն գործսն, զի զստեղծուածս նորա պէսպէս կոտանօք կոտրէին։ Պատն առաւելութեան անօրէնութեն համարէին՝ թէ չմայրկ ինչ ժամանակի դատաստանին. վասն այնորիկ աղաչէին և պատասխան մատուցանէին։ և որք զկապանսն երկաթիս չգրէին ինչ, կապեալք կծկեալք գնային։ և որք 'ի լերինսն եղանէին, 'ի դաշտս առ վտանգի դիմէին։ և որք զայլս արդելուին՝ և չտային անցանել ընդ ճանապարհս, ինքեանք պաշարեալք՝ իբրև տեսին զնոր՝ անկանէին 'ի բուռն։

Այլ ընդէր արդեաք 'ի գերեզմանս բնակել սիրէին։ Օ՛ի ապականիչ կրօնս կամին արկանել 'ի միտս մարդկան։ Պղիք, ասէ, վախճանելոցս դեռ լինին։ Օ՛ որ մի լեցի և մի զմտաւ անդամ ածել։ Այլ զինչ խօսիս, ասեն. բազումք իսկ 'ի կախարդաց մանկանաւնս փողոտեն, զի ոգիքն յետ այնորիկ ընդ նոսա շրջեցին, և նոցին գործակից լինիցին։ Այլ ուստի յայտ իցէ այն։ Օ՛ի սպանանէին զմանկունսն, բազումք ասեն. բայց թէ ոգիք սպանելոցն ընդ նոսա իցէ, զայդ ուստի իմացար։ Այսեն. դեռքն պատմեն՝ թէ ես այս անուն եմ։ Պարարական են խաբէութիւն մոլորութիւն, և սատանայական է այն։ Օ՛ի ոչ եթէ ոգի վախճանելոցն

աղաղակէ, այլ դէպն կեղծաւորեալ յայնպիսի կերպարանս, առ 'ի մոլորեցուցանել զայնոսիկ որք ունին դնիցեն։ Օր թէ յայլոց շունչ մարթ է մոռանել ընդոյ, ապա ևս առաւել յիւր մարմնին։ Եւ այլ ազգ ևս. չէ իսկ ինչ 'ի դէպ, թէ շունչն որ միասեցաւ՝ իւրում միասակարին գործակից լինի։ կամ թէ մարդ կարիցէ զանմարմնական զօրութիւն յայլ ինչ բնութիւն փոխել. զի թէ առ մարմին այսպիսի ինչ անհնարին է, և որ զմարդոյ մարմին՝ շունչ ոչ կարէ առնել, որչափ ևս առաւել առ աներևոյթ ոգին ևս անհնարին է, և ոչ որ կարէ զնա 'ի դիւի բնութիւն շրջել։ Այսպէս զի յայտ լիցի՝ թէ արբեալոց բանք իցեն, և մանկաւոյ տղայոց խուճապելոց։

Վանդի չէ պարտ ընդոյ՝ որ 'ի մարմնոյ քակիցի, ասատէն տակաւին շրջել։ Օր «Արդարոյն ոգիք, ասէ զիր, 'ի ձեռին ՝ այ են»։ Իսկ եթէ արդարոցն, յայտ է թէ մանկանց տղայոց. քանզի և ոչ նոցա ոգիքն գիտեն զփոքրձ չարին. և մեղաւորացն սոյնպէս ստոյ անդ վարատեալք. և յայտ 'ի Գ ազարաց և 'ի մեծատանն ոգւոցն է. և այլ ուր ասէ Տէր, թէ «Արյսոր զոգիդ պահանջեն 'ի քէն»։ Եւ չէ մարթ ոգւոյ՝ որ 'ի մարմնոյ ելանիցէ, ասատէն թափառել. և մանաւանդ նման իսկ է. զի մինչ ասատէն յընդելական երկրիս մարմնով շրջիմք, յոբժամ զօտար երկրի Ճանապարհ հասանիցէ կոխել, չմարթեմք գնալ՝ թէ որ ոչ առաջնորդեսցէ. զիարդ ոգին՝ որ 'ի մարմնոյն բաժանեսցի, հեռացեալ ամենևին 'ի սովորութենէն ', կարիցէ առանց առաջնորդի շրջել։

Բազում և այլ ուստեք՝ թէ կամիցի որ միտ դնել, է խմանալ թէ չէ հնար ընդոյ՝ որ ելանիցէ՝ ասատէն ուրեք դադարել։ Վանդի և Յաւետիանոս ասէր, «Ինկալ զոգի իմ». և Պաւղոս, «Ընդէն դառնալ և ընդ Տէր լինել լաւ համարիմ». և յայտնի գնահատեսն ասեն զիրք, թէ «Յաւելաւ առ հարս իւր, մնեալ և հաստատեալ 'ի ծերութիւն բարւոք»։ Օր և ոչ մեղաւորաց ևս ոգիք ասատէն կարեն դադարել, լուր մեծատանն. որ այնչափ աղաչէր, զի

1 'Ի լուս. ՈՐՈՆԵՔՆ Դ ՄՈՐԵՐԻՆ։

թերևս հնար ինչ լինիցի նմա երթալ և պատմել զնոմ ինչ որ անդ գործիցի։ Լուսոյ յայտ իսկ է, թէ յետ սատի մեկնելոյն 'ի տեղի ուրեք երթեալ դադարեն ոգիքն, և չեն իշխան միասնագամ այսրէն դառնալոյ. այլ ահագին աւուրն կան և սպասեն։

Այսպա թէ ասիցէ ոք, վասն էր, յորժամ աղաչեցին զեւքն, հրամայեաց Աստուն մնանել յերամակ խոզիցն. ասեմք, եթէ ոչ զի զնոցա ինչ կամն կատարիցէ, այլ զի և անտի բազում ինչ մատակարարեսցէ։ Զի զերծեալքն 'ի չար բռնաւորացն ուսանիցին, թէ որպիսի ինչ չարիս խորհեալ էին զնոցանէ. և միւս ևս՝ զի իմանայցեն ամենեքեան, թէ և ոչ խոզից անգամ իշխեն, եթէ ոչ նա թողուցու 'ի ձեռաց. երրորդ անգամ, թէ և չար անցս քան ընդ խոզսն ընդ նոսա անցուցանէին, թէ ոչ և յայնպիսի տանջանսն ևս բազումս վայելէին յոյ խնամոցն։ Այս զի զմեզ ևս չար քան զանասունսն ատեն, ամ ումեք յայտ է։ Թէ 'ի խոզսն չինայեցին, այլ 'ի միում վայրկենի արարին զամենեսեան քարավէժս, որչափ ևս առաւել զարսն՝ որ միշտ ընդ անապատսն տանէին յածէին, թէ և ոչ 'ի բռնութեանէ էր բազում այ տեսչութիւն, որ սանձէր և կարձէր զնոսա յայլ ևս անհնարին յանդգնութեցն։ Լուսոյ յայտ իսկ է, թէ չէր ոք՝ որ ոչ վայելեսցէ յոյ դարմանոցս. և եթէ ոչ ամենեքին զնոսն օրինակ, և այն մեծի այ տեսչութեն է նշանակ. զի ըստ իւրաքանչիւր օգտի՝ նոցն պէս և դարմանքն բաշխին։

Հանդերձ ասացելովքս և այլ իմն ուսանիմք ասատի. զի ոչ միայն հասարակաց տեսուչ լինի, այլ և իւրաքանչիւր ումեք առանձինն. զոր և առ աշակերտս յայտ արարեալ ասէլովն, թէ «Ձեր և հեր գլխոյ թուեալ է»։ Այս 'ի դիւահարաց անտի՝ եթէ միտ ոք դնիցէ, ևս աւելի իմանայ. որք 'ի վաղուց հետէ ընկղմեալք էին, եթէ ոչ 'ի բազում այ տեսչութենն էին վայելեալ։ Զատն այնորիկ հրամայեաց մնանել յերամակ խոզիցն՝ զի որք յաշխարհին բնակեալ իցեն՝ ուսանիցին զզօրութիւն նորա։ Այս ուր յայտնի էր անուն նորա, ոչինչ կարի ցուցանէր նշանս. իսկ որք ոչն գիտէին զնա, տակաւին յանմտութեան

կային, և անդ առաւել լուսաւորեր նշանս, զի յիւր ծածանութեան ձգիցէ զնոսա։ Այլ զի կարի անմիտք էին բնակիչք քաղաքին, ՝ի վախճանի իրացն իսկ յայտ է։ Օ՛ի պարտ էր նոցա երկիր պագանել և զարմանալ ընդ զօրութիւն նորա. նոքա արտաքս մղէին, և աղաչէին զնալ ՝ի սահմանացն իւրեանց։

Այլ եթէ ընդէ՞ր կոտորեցին զխոզն դեւքն։ Զմեռնայն ուրեք արտմանի փութան ածել ՝ի վերայ մարդկան։ Որպէս և սատանայ արար ընդ Յովբ, թէ. պէտ և անդ ՝ած հրամայեաց. ոչ զկամն ինչ չարին կատարելով, այլ զիւր ծառայն լուսաւորագոյն ցուցանելով, և զդիւրին ամենեին հատանիցէ զպատճառս յանդգնութեանն, և անդրէն ՝ի նորին գլուխ դարձուցանիցէ զչարիսն՝ զոր ած հասոյց ՝ի վերայ արդարոյն։ Որպէս զի՝ ասա հակառակ նմին զոր ինչ կամէին դեւքն՝ լիներ։ Օ՛ի և Զ՝նի զօրութիւնն լուսաւորեալ քարոզեր, և դիւացն չարութիւնն յամեթ լիներ։ Օ՛ի զլեկեալն ՝ի նոցանէ ապրեցոյց, և յայտ արար՝՝թէ խոզին եւս անգամ չիշխեն տիրել՝ չասեմ թէ մարդկան, եթէ ոչ ամենեցուն ած հրամայեսցէ։

Այլ եթէ այլ ոք ինչ երեսս կամիցի առնուլ, նմա չէ ինչ արգել. բայց նկարագիրս զայս յայտ առնէ։ Զարտ է գիտել ստոյգ, թէ մարդք խոզայեալք դիւրաւ ըմբռնին ընդ դիւաց իշխանութեամբ։ Այլ մարդիկ էն որ զայն չարչարանս կրեն, որք կարէին բազում անգամ հալածել և յաղթել. և քանզի ամենեին խոզանան, և ոչ միայն դիւահարին, այլ և քարավէժս և դարահոս լինին։ Այլ ազգ եւս [2], զի մի՞ ոք խաբէութեամբ զիրսն համարիցի, այլ հաւատասցէ ստոյգ՝ թէ երկիր դեւքն, ՝ի խոզացս մահուանէն յայտնի լիներ։

Այլ դու միտ դիր, զիարդ հեզութեամբ խառնել ընդ զօրութեան։ Զ՝անզի այնպիսի բարիս գտին ՝ի նմանէ՝ և հալածէին զնա. և նա ոչինչ ընդդէմ դարձաւ, այլ թոյլ ետ և գնաց։ Այլ որք բաւական և արժանի էին ցուցանել զվարդապետութեան նորա՝ եթող զնոսա անդ նոցա վարդապետս. զի անտի տե-

1 ՝Ի լուս. Ն ԷՒ։ 2 Յօրինակին Ն ԷՒ Ն ԷՒ Ն։

ղեկանայցեն՝ եմ իրացն՝ որ գործեցան։ Ինքն գնաց, և զահն եթող սատակացեալ, և զվնասիցն յաձախութիւն՝ ոչք և կսկծեցուցանէին զմիտս նոցա՝ և և աւելի քան զբարբառս քարոզէին նորագործ նշանքն 'ի բժշկելոցն, 'ի խոզիցն ընկղմեցելոցն, 'ի տերանցն խոզիցն և 'ի խոզարածացն. և եմ ուրեք և քան զևս յորդէին աքանչելիքն։

ՑՈՐԴՈՐԱԿ

ԵՎ և այժմ իսկ ոք տեսանիցէ զնոցն գործ գործեալ, և բազում դիւահարս 'ի գերեզմանս. զորոց զմոլորութիւն ոչ երկաթք կարեն ունել և ոչ շղթայք պնդել, ոչ մարդկան բազմութիւք, ոչ խրատ, ոչ ողբքանք, ոչ ահ, ոչ սպառնալիք, ոչ այլ ինչ 'ի սոյն սլիսեաց։ Յորժամ պակշոտեալ ոք՝ յեմ մարմնոյ հարկանիցի մեղաք, չէ ինչ ընդհատ 'ի դիւահարէ։ Այլ նա մերկ շրջիցի, և սա հանդերձ զգեցեալ՝ զրկեալ է 'ի ձշմարիտ վերսրկուէն, և յիւրոց պատշաձական փառացն մերկացեալ։ Իսկ քարամբք չկոծիցէ զանձն, այլ մեղաքն քան զբազում քարամբք ևս չարաչար կոշկոձի։ Ո՞ ոք կարիցէ զայնպիսին կապել. ո՞ ոք գնչաւանն ցածուցանել՝ զշռայլեալն, որ ոչ երբեք ուրեք 'ի միտս լինիցի, այլ միշտ ընդ գերեզմանս ելանիցէ։ Այանցի այնպիսիք են բոզիցն խառնախուց խշտիկքն՝ բազում շարաւոլ լի և որդնալից և բազում թարախալից վերքք։

Իսկ արծաթասէրն չիցէ՞ այնպէս։ Ո՞ ոք կարիցէ երբեք զնա կապել։ Ո՞չ հանապազորդեան ահ և երկիւղ և սպառնալիք յաձախեն, և խրատք և թելադրութիւք։ Այլ խզէ զնա՞մ կապանս, և ելանէ։ Այս եթէ երթայցէ ոք զնա անտի զերծուցանել, 'ի ցասումն գրգռէ զնա. և ոչ համարի 'ի տանջանացն փրծանել. այլ կալ 'ի տանջանսն լաւ համարի՝ քան թէ անտի զերծանիցի։ Այս զինչ չար քան զայն դժնդակութիւն կայցէ։ Զանն՝ թէպէտ և զմարդիկ արհամարհիցէ, այլ Աստի հրամանին հնազանդ եղև,

և վաղվաղակի սրացաւ 'ի մարմնոյն։ Այլ սա ոչ երբեք անսայ հրամանացն. քանզի ցանգ լսէ 'ի նմանէ, թէ «Ոչ կարէք ոչ ծառայել և մամոնայի». և զգեհենին սպառնալիս, և զանհանգիստ տանջանացն ասէ. և ոչ գայ երբեք 'ի հաւան և յուղղութիւն։ Ոչ զի զօրագոյն քան զԱստուծոյ էր, այլ զի ոչ ակամայ կամի զմեզ Աստուծոյ զգաստացուցանել։ Ասն այնորիկ այնպիսիքն յանապատս բնակին, թէպէտ 'ի քաղաքս կայցեն։ Այլ ո՞ւր՝ որ մնայ տեր էցէ, ախորժեսցէ խառն ընդ այնպիսի մարդկան կալ։ Այս և ես խակ կամիմ ընդ բազում դիւահարս կալ, և ոչ ընդ միում ումեք՝ որ զայնպիսի ախտ ախտանայցէ։ Այլ զի ոչինչ սխալեմ զայս ասելով, յերկոցունց կողմանց գործոցն է յայտ։

Օ՛ի տեսա չքնաստակաը զթշնամին համարին, և 'ի ծառայուն զազատն արկանին, և ազգի ազգի լկանս ածին 'ի վերայ։ Խակ այլ դիւահարքն ոչինչ այսպիսի գործս գործեն, այլ յանձինս և ետ ունին զցաւսն։ Ահա բազում անգամ յետս դարձուցանին, և զանուն ոչ հայհոյել կամին, և ապականութիւն քաղաքի և ամ տիեզերաց են։ Խակ որ 'ի դիւացն լկիցին, ողորմելոյ և արժանի են և արտասուաց։ Ահա առանց զգայութեան բազում ինչ գործեն. և նոքա մնոք՝ բազում բանդագուշեալք 'ի մէջ քաղաքաց կատաղեալք, յամ ժամ նոր մոլորութիւս մոլին։

Այլ ամ դիւահարք այնպիսի ոչ գործեն՝ որպէս Յուդայն յանդգնեցաւ զանհնարին անօրէնութիւն. և ամենեքեան՝ որ նմա նմանողք լինիցին, իբրև 'ի գաղանաց ինչ 'ի գառագղաց զերծեցեալոց, ոլոր զբաղաբս խռովեցուցանեն, և չիցէ ոք որ ունիցի փախչել։ Հ զթայք և կապանք ընդ անձն են և նոցա. յամենայն կողմանց երկիւղ դատաւորաց, և օրինաց սպառնալիք, 'ի բազմաց ըստգիւտ լինել, և այլ և ս բազում քան զսոյն. բայց սակայն և զայն և ս խզեալ՝ զամ վեր 'ի վայր օցտիցեն։ Այլ եթէ զայն ամենեքին ոք 'ի նոցանէ բառնայր, յայնժամ ստոյգ 'ի վերայ հասանիցիր, եթէ և ս գաղանագոյն այն դև է՝ որ 'ի նոցանէ ելանէ, քան որ յայնժամ 'ի դիւահարացն էլ։ Բայց զի զայն չէ հնար մերկանալ, առ այժմ

համարեսցուք և եթէ այնպէս բանիւք, և զնամ շղթայս 'ի բաց կողոպտեսցուք 'ի նմանէ, և ապա ստուգիւ իմանայցեմք զանհնարին մոլորութիւն։ Այլ մի ոք 'ի գաղանէն երկնչիցի, յորժամ յայտ ածիցեմք[1]։ Վասնզի բանիւք են վրիպակք, և ոչ արդեամբք ճշմարտութիւն։

Զորեսջիր, եթէ իցէ ոք մարդ որոյ հուր յաչացն արձակիցի, թուխ, չարատես. և փոխանակ երկուց ձեռացն՝ երկու վիշապք յուսոցն արձակեալ կախիցին. և 'ի բերանն փոխանակ ատամանց սուսերք կանգնիցին. և փոխանակ լեզուին, թունից և սպանող դեղոց աղբերս բղխիցէ. և որովայն՝ քան զնամ հնոց, որ ինչ 'ի ներքս արկանիցի՝ արագագոյն ծախիցէ. և ոտքն թեւաւորք, և քան զնամ բոց բորբոքեալ սաստկագոյն. և դէմք՝ շան և գայլոյ. և մարդկաբար ինչ բարբառ ընդ բերանն չհանիցէ, այլ ահագինս ինչ և չարաձայն և չախորժելի. և 'ի ձեռաց անտի հուր և բոց հատանիցէ։ Զոնե՞ ելս ահագին ինչ ձեզ բանքս թուիցի. այլ ոչ ևս արժանի կերպարանեցաք. 'ի սոյնս և այլ ինչ պարտ է յաւելուլ. զի զամենեցունց իսկ զկիսոց զմարմնս ուտիցէ, և զկէսս գէշ գէշ պատառեալ ցրուիցէ։ Այլ քան զայնպիսին չար դժնդակագոյն է արծաթասէրն. զամենեքումբք յածեալ շրջի. իբրև զդժոխս՝ զբոլորս կլանէ. հաստարակաց թշնամի է. սահեալ յողոյ զնամ ազգաւ մարդկաւ։ Զկամի թէ մարդ ուրեք գտանիցի. քանզի զնամ ախորժէ ունել։ Այս և յայտնի ևս չկայ. այլ յորժամ զնամ եղծանէ ցանկութիւնն, ապա և զերկրիս ևս զբնութիւս ապականել տենչայ։ Վասնզի ոսկի փափաքէ տեսանել զսա. և ոչ միայն զերկիրս, այլ և զլերինս և զխոխոմն և զաղբերս և առ հասարակ զամենայն իսկ երևելիսս։ Այս զի ուսանիցիք՝ թէ չև ևս զմոլորութիւն այնպիսւոյն յանդիման կացուցաք. բայց մի ոք մեղադիր լինիցի, և մի տարակուսել՝ զանձնէ և եթէ կարծիցէ. 'ի բաց առ առ ժամանակ մի զահ օրինաց, և տեսանիցես զայն-

[1] Յորինակին Բ-ոյ 'ի Գ-ոյ գաղանէ երկնչիցի, յայտ ածիցեմ. և. գաղ ըստ լուս։

պիսին սուբ առեալ, և ընդ ամենեսեան ընդխառնեալ, և ոչ ուտիք խնայեալ. ոչ բարեկամի և ոչ աղգականի, ոչ եղբօր և ոչ հօրն իսկ որ ծնաւ զնա։ Այնուանդ զի և ոչ առակի պէսք են ասա. այլ ցնա իսկ հարցցուք, թէ ո՞չ ցանգ այնպիսի հոգք գայցեն զմնաւ գործել. շուրջ զամենեքուն մեք կոտորել մնաք, և զաղգականս և զբարեկամս, և զծնօղս իսկ զլեռովին։ Լ,ու ոչ առակաց ինչ պէսք իցեն. քանզի ամենեքեան իսկ դիտեն, որ յայնպիսի ցաւս ծնգիցին. և ընդ հօր ծերութիւն տապտիան. և որ ամենեցուն ցանկալի և քաղցր է՝ և ընդ որդւոցն եւս թափիծին, և բեռն համարին զնոսա. և քանզի բազումք չծնանելոց դեղս զնեն և զբնութիւն կուրացուցանեն. ոչ եթէ ծնանին և սպանեն զորդիսն, այլ և ոչ բուսանիլ թոյլ տան 'ի սկզբանն։

Այ'ի այսու հետև զարմանայցեք ինչ ընդ այն, եթէ զարծաթասէրն այնպէս կերպարանեցի. զի եւս չար քան զոր ասացաքս է։ Լ,յլ դէտ ակն կալցուք, թէ զիարդ 'ի դիւէ տպրեցուցանել կարասցուք զնա։ Լ,ու զնա՞ի կարիցեմք տպրեցուցանել։ Լ,թէ ուսանիցես ստոյգ զարծաթսիրութիւնն. ինչս շահելոյ առաւել հակառակ է մեզ. զի որ սակաւն ինչ կամին շահել՝ մեծամեծ վնասս գործէ [1]. ուստի և առակքն իսկ ամին դիպօղ ելանեն։ Լ,ազուքք բազում անդամ վասն մեծամեծ տոկոսեաց փոխ տալ կամեցան՝ վասն առ յուսոյ շահից, և չքննեցին զառնլիսն, և հանդերձ տոկոսեօքն և 'ի գլխոյ իսկ ամենեին անկան։ Լ,արձեալ այլք 'ի վիշտս հասեալ չկամեցան սակաւ ինչ ծախել, և զանձինս եւս հանդերձ ընչիւքն կորուսին։ Լ,արձեալ կամ զպատիւս ինչ շահաւորս, կամ այլ ինչ 'ի նոյնպիսեաց գնել ձգձմիցին [2], և զնո՞մ կորուսին։ Լ,անզի չիմանան յառաջագոյն, այլ միշտ հնձել ևեթ խոկան, և ստեպ վրիպեն յամառայնոյն. զի ոչ որ հանապազ կարէ հնձել, զոր օրէնսակ և ոչ միշտ շահել։

Լ,ու արդ քանզի չկամին ծախել, և ոչ շահել զի

1 'Ի լուս. կրէն։

2 Հնօրինակին ձգմամբ. ուղղեցաք ըստ այլ ամենայն, յորս անուանն գրի ձգձիմ, և բայն ձգձիմ. և յայնն զնոյն բառ ունի։

տէն։ Բ.յլ թէ և կին իցէ առնել, դարձեալ և զնոյն յանձին կրէն. կամ եթէ խաբիցին՝ անշահէ փոխանակ շահաւետին առնուլ. կամ թէ մեծատուն ածիցէն, լի բազում արատովք. և եւս յաճախագոյն յոլոց կրէն վնասս։ Բ.անզի ոչ թէ ընչիցս յաճախութիւն, այլ ազնուութի՛ն գանձէ զմեծութի՛ն։ Օ՛ինչ օգուտ 'ի մեծութենէն իցէ, թէ օգտող և խառնաւնաց իցէ, և քան զնա՛մ հողմն դառնաչունչ։ Բ.թէ աղտեղի իցէ, և բազում հոմանիս կուտիցէ. և եթէ արբեցող եւս դիպեսցի, ո՛չ ապաքէն քան զամենեսին վաղվաղակի աղքատացոյն զայրն առնիցէ։ Օ՛ի ոչ միայն ամուսնանան, այլ և գնոյ եւս զանձինս տան խոտանաւ առ բազում ցանկութիս. ոչ 'ի լաւութի՛ն գերդաստանաց, այլ 'ի թեթեւագնացութի՛ն հայիս։

Բ.ւ արդ զայս ա՛մ մի ըստ միոջէ զմտաւ ածեալ, զգեհենէ և զարքայութի՛ն Ճառից չեւ եւս կարող էք ասել. զմտաւ ածեալ զվնասակարն՝ զոր կրեցէք բազում անգամ յընչասիրութենէն և 'ի փոխիցն և 'ի վաՃառաց, և յանկարգ ամուսնութեց, և յայլ եւս սոյնպիսի իրաց, մերժեցէք զանձինս յընչիցն տենչանաց։ Օ՛ի այնպէս կարող լինիցիմք զգուշութի՛ն և աստէն յաշխարհի կեալ, և յառաջադէմք լինել, և զզգաստութեան պատգամն լսել. և հայեցեալք ընդ արեգակնն արդարութի՛ն՝ և խոստացելոց բարութեցն հասանել հնարհօքն և մարդասիրութեամբ ա՛ռն մերոյ Յիսի Քրիստի, ընդ որում հօր և սուրբ հոգւոյն փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ԶՈՐՐՈՐԴ

«Իբրև եմուտ 'ի նաւն՝ և էանց յայնկոյս, եկն յիւր քաղաք, և ահաւասիկ բերին անդամալոյծ մի բարձեալ մահճաւք։ Իբրև ետես Յիսուս զհաւատս նոցա, ասէ՝ քաջալերեաց որդեակ, զի թողեալ են քեզ մեղք քո»։

ԻՒՐ քաղաք զԼափառնաումն կոչէ. զի ծնաւ զնա Ռեթզահէմ, և մնայց 'Ի Նազարէթ, և բնակութիւն միշտ քաղաքն Լափառնաում էր։ Իսկ անդամալոյծս այս այլ է, թէպզ զայն որ Յովհաննէս պատմէ. զի նա առ աւազանաւն անկեալ դնէր յԲրուսաղէմ, և սա 'Ի Լափառնաում էր. և նորա երեսուն և ութամ էր հիւանդութեան, և զսմանէ ոչինչ այնպէս ասէ. և նա անոր ուրեք յանօգնականաց էր, և սորա գոյն խնամակալք, քանզի և բարձեալ մահճաւք բերին։ Այս սմա ասէր. «Արդեակ՝ թողեալ լիցին քեզ մեղք քո». և նմա՝ «Կամիս զի ողջասցիս»։ Այս զնա 'Ի շաբաթու բժշկեաց, և զսա ոչ 'Ի շաբաթու. ապա թէ ոչ՝ բամբասէին և զայս հրեայքն, որպէս վասն նորայն. առ սովաւ լուեցին, և առ նովաւ 'Ի հենգնի կային հալածել։ Այս զայս ոչ վայրապար ասեմ, այլ զի մի երկպառակութիւն ինչ ոք կարծիցէ, և մի մի և նոյն կարծիցէ զերկոսին զանդամալոյծսն։

Այս դու միտ դիր անհպարտութեան և հեզութեան նոն։ Օ՛ի և յառաջ քան զայս մերժեալ զժողովուրդն, և 'Ի գերգեսացւոցն հալածեցաւ, և ոչ դարձաւ ընդդէմ, այլ թոյլ ետ և գնաց՝ և ոչ 'Ի բաց ուրեք։ Դարձեալ 'Ի նաւ եմուտ և էանց, թէպէտ և կարօղ էր հետիոտից անցանել ընդ ծովն։ Ոչ միշտ կամէր նշանս ցուցանել, զի մի բնաւ զտեսչութեան իրս ապաքանեսցէ։

Մատթէոս ասէ, թէ բերին մատուցին առ նա. իսկ այլքն եթէ զձեղունն ևս բացին, և իջուցին եղին առաջի Յսի զխստացեալն. բայց խօսեցան

ոչինչ ընդ նմա, զի զնամ ինչ 'ի նա ապաստան առնելիս։ Օ առաջինն ինքն իսկ շրջէր, և ինքն ինդրէր զմատուցելոցն զհաւատս. բայց ասա ինքեանք իսկ զային. պահանջեալ յառաջագոյն՝ բերելին զհիւանդս։ «Յե տեսեալ զհաւատս նոցա», որք մատուցին զանդամալոյծն. զի ոչ ամենայն ուրեք յախտացելոցն ևԷթ ինդրէ զհաւատս. որպիսի ինչ, յորժամ շամբշեալ ոք իցէ, կամ այլովք ցաւովք 'ի մոռաց անկեալ։ Բայց առն՝ ախտացելոյն էին հաւատքն. քանզի ոչ յանձն առնոյր կախիլ՝ թէ չէր հաւատացեալ։ Յե քանզի այնպիսի հաւատս եղոյց, ցուցանէ և նա զիւր զօրութիւն, զի իշխանութիւն և զմեղսն թողոյր, և զանդամսն հաստատէր. յայտ արարեալ ամենեսին՝ թէ հանդիսապատիւ է ծնողին։

Յե միտ դիր, զիարդ անդստին 'ի սկզբանն ցուցանէ զվարդապետութիւն. զի իշխանութիւն ուսուցանէր, և ոչ խորշելով։ Խորոտին ասէր, «Կամիմ, սրբեաց». և ընդ հարիւրապետին՝ որ ասէր, «Չսա բանիւ, և բժշկեսցի մանուկ իմ», զարմանայր առաւել, և քան զամենեսեան յայտ յանդիման յարդէր. և զծոցին բանիւ միայն սանձէր. և զգևսն՝ որ զնա դատաւոր խոստովանէին, մեծաւ իշխանութիւն հալածէր։ Յե ասա այլով մեծաւ օրինակաւ զեշնամին ստիպէր՝ յայտ առնել զհանդիսապատիւ զուգակցութիւն ընդ հօր. և ընդ իւրեանց բերանն խոստովանել ակամայ զնշմարիսն. բայց ինքն ոչինչ յարդէ զանձն։ Յե քանզի բազում իսկ տեսողք շուրջ կային՝ զել և զմուտն փակեալ, վասն այնորիկ 'ի վերուստ 'ի վայր կախեցին։ Մէջ վաղվաղակի ընդդէմ չոգաւ ողջացուցանել զերևելի մարմինն, այլ 'ի նմանէ նախ առնոյր պատճառս։ Յե նախ զանցայտ ոգիսն բժշկէ՝ զմեղսն թողլով, և զնա կեցուցանէր, և զսրբա փառսն ինչ չյայտնէր[2]։ Բայց նոքա քանզի չարեօք զդաժեալ էին, ոչ կամէին զիրսն 'ի վեր հանել. և թէպէտ ոչ կամէին, տակայն ակամայ զնոյն կաղմէին. և քանզի ամենահնար ամենագէտ է, զնախանձ նոցա 'ի յայտնութիւն նշանին 'ի կիր արկանէր։

1 'Ի լուս. Բայց ոմք և տեսողքն։ 2 'Ի լուս. յայտնէր։

Յետ քանզի աղմկեալ և խռովեալ՝ ասէին թէ հայհոյէ. «Ո՞ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն մի ոՀ». տեսցուք՝ զինչ ասիցէ. բառնայցէ զկարծիսն 'ի միջոց, թէ չբառնայցէ։ Ամենեկտ 'ի դէպ էր ասել, թէ զի չիք զինև [1] զանպատշաճ կարծիսդ. չեմ ինչ մատ յայդպիսի [2] զրուցեալ։ Բայց արդ տեսանեմք, ոչինչ այնպիսի ասաց, այլ ամենևին զնորին հակառակն հաստատեաց և ստուգեաց և բանիւք և նշանովք և արդեամբք։ Յետ քանզի այնպիսի իմն կարծէր լսողացն, թէ ինքն ինչ զանձն յարգիցէ, վասն այնորիկ այլովքն զիւրն հաստատէր. և այս էին զարմանք, զի ոչ բարեկամաց, այլ թշնամեաց. և այն իսկ էր նորա իմաստուէն առաւելուն։ Բարեկամաքն, յորժամ ասիցէ, «Լամիմ սրբեաց». և կամ յորժամ ասիցէ, թէ՝ «Յետ ոչ Յիսրայէլի այսչափ հաւատս գտի»։ Իսկ թշնամեաքն, քանզի ասէին՝ թէ ոչ ոք կարէ թողուլ զմեղս, բայց միայն մի ոՀ։ Յետ նա 'ի նոյն յաւրէ. «Օ՛ զիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս». և ապա ասէր ցանկ դամալոյծն. «Արի՛ առ զմահիճս քո, և երթ 'ի տունս քո»։

Յետ ոչ ասաց միայն, այլ և 'ի միւսում վայրի դարձեալ առ յասելն նոցա ցնա՝ թէ «Ա՞ռ բարեաց գործոց մեք զքեզ քարկոծ ոչ առնեմք, այլ վասն հայհոյութեան, և զի դու մարդ ես՝ և զանձն քո ՃՈՀ առնես», չքակեաց ինչ զկարծիսն, այլ և հաստատեաց ասելովն. «Յետ ոչ գործեմ զգործս հօր իմոյ, մի հաւատայք ինձ. ապա եթէ գործեմ, թէ և ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք»։ Այլ ասաց և միւս և ս նշանակ ոչ փոքր ինչ զիւրոյ ՃՈՀութեան ցուցանել, և քանզի հանգիտապատիւ է ընդ հօր։ Յետ քանզի նոքա ասէին՝ թէ զմեղս թողուլ այ միայն է, և նա ոչ միայն զմեղս, այլ նաև և այլ իմն ցուցանէ՝ որ այ միայն է, զսրտից ծածուկս 'ի վեր հանել։ Վասն զի չհանէին 'ի վերս՝ զոր 'ի սրտին խորհէին։

«Հաւասիկ, ասէ, ոմանք 'ի դպրացն խորհէին

1 'Ի լուս. զինեն։ 2 'Ի լուս. յայսոդիսի։

ընդ միտս, թէ հայհոյէ սա։ Պիտաց Յի՞ն, ասէ, ըզ-
խորհուրդս նոցա. ասէ, զի՞ խորհիք զչարութիւն 'ի
սիրտս ձեր»։ Որ՞ միայն է՝ զծածուկս Աստուծէ.
որպէս և մարգարէն ասէ, եթէ «Դու միայն իմանաս
զսիրտս». և դարձեալ թէ՝ «Որ քննէն զսիրտս և
զերիկամունս՝ Աստ»։ և Յրեմիա ասէ. «Չանոր է
սիրտ քան զամ, և մարդ ևս ծանիցէ զնա»։ և այլ
ուր, եթէ «Մարդ հայի յերեսս, և Աստ 'ի սիրտս»։
Այլ բազում և այլ իրօք է իմանալ՝ եթէ՞ միայն է
Աստուածէ զսիրտս։ Այլ արդ իբրև եցոյց՝ թէ Աստ է
և զուգական ծնողին, այնու զի ծանեաւ որ ինչ նո-
քա ընդ միտս խորհէին, և 'ի վեր չիշխէին հանել 'ի
ժողովրդենէն, և անդ ևս ոչ թշնամութիւ բարբա-
ռի, այլ մեղմով, թէ «Օ՞ի խորհիք չարութիւն 'ի
սիրտս ձեր»։ Թէպէտ և ցանուել ինչ պարտ էր,
անդամալուծին 'ի դէպ էր ցանուել, եթէ ես վասն
այլոց իրաց եկի 'ի բժշկութի, և նա զայլս բժշկէ. և
ուստի յայտ իցէ թէ թողուցուն մեղք իմ։ Իսկ եթէ
նա ոչ քարբառէր այսպիսիս, այլ ամենևին զանձն նո-
քա իշխանութեանն տայր՝ որ բժշկեացն, նոքա վա-
տահնդիրք ընդէր զայլոց բարերարութիւնն առ նա-
խանձու նենգէին։ Ապա որդ և նա մեղմով կամի
հաճել զնոսա. թէ առաջնոյն չհաւատայցէք, ասէ, և
պարծանս ինչ համարիցիք զբանն, ահաւադիկ միւս
ևս յաւելում, զի և զձեր ծածուկս սրտիցդ յայտ-
նեմ. և ընդ այսմ այլ միւս ևս, զի զմարմին անդա-
մալուծիդ պնդեմ։

Այլ յասել անդամալուծին, ոչինչ յայտնի արար
զիւր իշխանութիւնն. զի ոչ ասաց՝ թէ թողում քեզ
զմեղսդ, այլ թէ թողան քեզ մեղքդ։ Այլ յայց իբրև
նոքա ստիպեցին, յայտնի իսկ արար զիշխանութիւն
ասելով. «Օ՞ի գիտասջիք թէ իշխանութի ունի որ-
դի մարդոյ 'ի վերայ երկրի թողուլ զմեղս»։

Տեսանես, զիարդ չկամէր կարծել հաւասար հօր։
Այա և ասաց իսկ ոչ, եթէ կարօտ իմիք է որդի մար-
դոյ. և կամ թէ տուաւ նմա իշխանութիւն։ Այլ զայս
ոչ, ասէ, առ պարծել ինչ ասեմ, այլ զի զձեզ հաւա-
նեցուցանեմ, թէ ոչ հայհոյեմ առնելով զանձնս
հաւասար ամ։ Ամենայն ուրեք օրինակս յայտնիս և

առանց հակառակութեան կամի ցուցանել՝։ Որպէս յորժամ ասիցէ՝ թէ «Լ՚երթ ցոյց զանձն քո քահանային». և Պետրոսի զոքանչին, զի անդէն առ ժամայն արար կալ իւր ի սպասու. և զնոցն ետ ի ձեռս դիւացն առնել դարահոս։ Այնպէս և աստ մեղայն Թողութեան նշանակ զհաստատութիւն անդամալուծին առնէր. և պնդելոյն զմարմինն՝ զմահիձն բառնայն էր. զի մի կարծիցի թէ առ աչօք ինչ իցէ իրքն։ Այլ ոչ նախ զայն առնէր, այլ յառաջ հարցանէ. «Օ՚ինչ, ասէ, դիւրին իցէ, ասել՝ թողեալ են քեզ մեղքդ, թէ ասել արի՛ և գնա»։

Այլ զոր ասէն՝ այսպիսի ինչ է. ձեզ, ասէ, զմարմին լուծեալ պնդել՝ դիւրին է իմանալ, և ոչ զոգւոյ մեղս թողուլ։ Բ.յլ որպէս ոգի քան զմարմին լաւագոյն է, նոյնպէս և մեղայն թողութիւն մեծ է քան զմարմնոյն պնդելն. այլ քանզի միոնն աներևոյթ է, և միւսն յայտնի, յաւելում զփոքրն և զայայտնին, զի նոքաւ մեծն և աներևոյթն առնուցու զիւրոյ արդեանցն զհանդէս։ Յառաջագոյն յայտնէ զայն որ ի Յովհաննայն ասացաւ, թէ «Սա է՝ որ բառնայ զըմեղս աշխարհի»։

Այլ իբրև յարոյց զնա, և յղեաց ի տուն, դարձեալ զամենեարգուին յայտ առնէ, և թէ ոչ ցնորք ինչ էին իրքն՝ որ գործեցան։ Զանզի զնոսա իսկ առնէ վկայս առողջութեան։ Այս, ասէ, քո ախտիւդ զնոսա՝ որ կարծին թէ առողջք իցեն և մտոք հիւանդ են, բժշկել կամիմ. բայց քանզի ոչ կամին նոքա բժշկիլ, արդ երթ դու ի տուն քո, և անդ ածջիր զնոսա յուղղութեան։ Ցեսանես, որպէս ցուցանէ զինքն արարիչ հոգւոց և մարմնոց, այնու զի զերկոսինն բժշկեաց, և զաներևոյթն երևելեաւքն յայտ արար. բայց նոքա տակաւին անմտութեանն իւրեանց ընդ երկիր քարշեին։

«Ցեսեալ, ասէ, ժողովրդոյն՝ զարմանային, և փառաւոր առնէին զՀՕ՚ած, որ ետ այնպիսի իշխանութիւն մարդկան»։ Զանզի մարմին նոքա առաջի կայր նոցա, և այնպիսի ինչ կարծիս տայր նոցա. բայց ինքն

1 Յօրինակին ցուցանէմ։

ոչինչ սաստեր ումեք, այլ յառաջ մատուցեալ զարթուցաներ արդեամբք՝ և հաներ 'ի բարձրագոյն ըզմիտս նոցա։ Այս և այն ինչ առ ժամանակն չէր ինչ փոքր՝ քան զամ մարդիկ զնա նախամեծար կարծել, և յայր եկեալ։ Օ՛ի թէ յայն բարւոք էին հաստատեալ, ապա և ոմն ոմն յառաջ գային՝ թէ որդի ՝այ է։ Բայց քանզի զայն չունէին հաստատուն, նմին իրի և ոչ այլ ևս յառաջ կարացին մատչել։ Քանզի ասէին՝ թէ այրս այս չէ յայր։ և դարձեալ՝ զիարդ իցէ յայր, զի զշաբաթս ոչ գիտէ պահել։ և ստէպ զնոյն յաւելուին, իբրև պատրուակ ինն ընդ երեսաց ձգեալ չարեացն իւրեանց։

ՑՈՐԴՈՐԱԿ

ԲԱՑՑ բազումք և այժմ զնոյն առնեն, և համարին ՝այ վերէժինդիրք լինել։ և իւրեանց չարիս կատարեն։ Պարտ է ընդ ամենայն հեզութիւն անցանել։ քանզի ամենեցուն կարօղ է ՝ած փայլատակումս բարկութիւն առաքել, բայց նա զարեգակն ծագէ, և անձրևս ածէ, և զայրն ՝ամ առատութեամբ պարգևէ։ Որոյ պարտ է մեզ նմանօղ լինել։ աղաչել, խրատել, ողբալ հեզութիւն և ոչ բարկանալ և ոչ գրգռել։ Քանզի ոչ եթէ միտս ինչ յած 'ի հայհոյութենէն հասանիցէ, եթէ ցանուցու։ այլ որ հայհոյեացն՝նա յանձնեն էառ զվէրն։ Լոեալ այնպէս իցէ, յոգւոյ հան, աշխարեա, արտասուաց արժանի զցաւսն համարեա։ Այս և զվիրաւորեալն ոչինչ այնպէս՝ որպէս զհեզութիւնն՝ կարօղ է բժշկել։ Քան զ՝ամ բռնութիւն բռնաւոր է հեզութի։

Այս տես իսկ, զիարդ խօսի ընդ մեզ ՝ած՝ յորժամ թշնամանիցի, և 'ի հնուսն և 'ի նորումն։ ասդ ասէ, «Յողովուրդ իմ զի՞ արարի քեզ»։ և աստ, թէ «Սա՛ւուղ Սաւուղ զի՞ հալածես զիս»։ և Պաւղոս հեզութիւն հրամայէ խրատել զհակառակորդսն։ Այս մինչ առ Քրիստոս էին աշակերտքն, աղաչէին հուր իջուցանել յերկնից, և նա սաստիւ պատուհասեր, թէ «Ո՛չ գիտէք որոյ հոգւոյ էք դուք»։ Այս աստ չա-

սաց, թէ ժամանք և ջատուկք իբրև զնախանձաբեկս, և ամենայն մարդկան փրկութեան թշնամիք. այլ ասէ, «Օ՛ի խորհիք չարութեան 'ի սիրտս ձեր»։

Պարտ և պատշաճ է այսուհետև հեղութիւն ցաւուցանել զախտն։ Որ առ մարդկան ահի գայցէ 'ի լաւութիւն, վաղվաղակի անդէն 'ի նոյն չար ձանապարհն դառնայ։ Այսն այնորիկ զորոմին հրամայեաց Թողուլ, զի ապաշխարութեան կէտ դիցէ։ Զանազի զի բաղուածք յետոյ ապաշխարեցին, և եղեն պիտանիք, որք յառաջագոյն անպիտանք էին. որպէս Պաւղոս և աւազակն և մաքսաւորն. քանզի որոմն էին, և ապա եղեն ցորեան հաստուն։ Որ 'ի սերմանս անհնարին է, և կամաց կարի դիւրագոյն և փոքրագի. և ոչ բնութեան սահմանաքն կապեալ է, այլ ազատութեամբ անձնիշխանութեան պատուեալ։

Լու արդ յորժամ տեսանիցես զՀնշմարտութեան[1] թշնամին, բժշկեա, դարմանս տար նմա ածել յառաքինութեան, յարդարեա, նուաճեա, վարս ուղղս ցուցանիցես, բանս հաճոյս խօսեացիս, անսպարսաւ վերակացութիւս, անրստգիւտ խնամակալութիւս ցուցանիցես, եամ հնարիւք հնարիցիս կարգել յուղղութիւն. առաքինի բժշկացն նմանեալ, որք ոչ միոյ օրինակաւ բժշկեն. այլ յորժամ տեսանիցեն՝ թէ ոչ հնազանդեցաւ առաջին դեղոցն, այլ յաւելուն, և յետ այնորիկ դարձեալ այլ. երբեմն կտրեն, երբեմն պատեն։ Լու դու որ ոգւոց բժիշկ ընտրեցար, զնամ օրինակս բժշկուէ յուղեա ըստ Աստի օրինացն։ Օ՛ի անձին փրկութեան է, և ընդ այլոց օգտի առնուցուս վարձս, 'ի փառս ՅՍ առնել զայն. և այն զի և դու իսկ փառաւորեացիս։ Զանազի ասէ, թէ «Օ՛ փառաւորիչս իմ փառաւորեցից, և արհամարհիչք իմ արհամարհիցին»։ Օ՛ ամենայն ինչ այսուհետև 'ի նոր փառս արասցուք, զի երանելիք լիցուք։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել հնարհօքն և մարդասիրութեամբ նոր մերոյ ՅՍի Աստի. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Յօրինակին Մարդիրոսն. եղաք ըստ լուս։

ՃԱՌ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«Մինչ դեռ անցանէր Յն ընդ այն, ետես այր մի՝ զի նստէր 'ի մաքսաւորութեանն Մատթէոս անուն. և ասէ ցնա, Եկ զկնի իմ»։

ԻՐԵՐԵՒ արար գնչանան, ոչ էառ անդրէն զտեղի, զի մի ևս քան զևս գնախանձն բորբոքիցէ, յորժամ անդէն զարձեալ զնա տեսանիցեն. այլ հնորհէր նոցա խոյսն տալով, զի փոքր մի մխիթար ցաւոցն լինիցի։ Այսպէս և մեք արասցուք. մի ընդ հակառակս ինչ ելանել այնոցիկ որ զմեզ նենգելն կամիցին, այլ տալ մխիթար վշտաց նոցա, թուլացուցանելով և մեղկելով զոյժ նոցա։

Այս ընդէր ոչ արդեաք ընդ Պետրոսի և ընդ Յովհաննու և ընդ այլսն կոչեաց զնա։ Որպէս անդ յայնժամ չդդաւ, յորժամ գիտէր՝ թէ հաւանելոց են նմա արքն, նոյնպէս և զՄատթէոս յայնժամ իմացաւ թէ անսալոց է նմա. վասն այնորիկ և զՊաւղոս յետ յարութենն որսացաւ։ Օ՛ի որ զմիտսն ճանաչէ և զծածուկսն քննէ զիւրաքանչիւր ըստ մտացն, գիտէ թէ երբ իւրաքանչիւրք ո՛ւ նոցանէ հնազանդելոց էին նմա։ Վասն այնորիկ ոչ 'ի սկզբանն կոչեաց զնա, մինչդեռ տակաւին բրտագոյն էր, այլ յետ բազում աքանչելեացն. յորժամ յաճախագոյն իսկ տարածեցաւ համբաւ նորա, յորժամ գիտէր՝ թէ պիտանագոյն է 'ի հնազանդութեան, և արժանի աւետարանիչ լինելոյ, և 'ի մեծարել զցածութիւնն։ Այս զնաւրդ ոչ թաքուցանէ զիւր զառաջինն զվարսն, այլ և զանունն ևս դնէ՝ զոր այլքն թաքուցին յորջորջանաց անուամբ։

Այս ընդէր ասէ, թէ «'Ի մաքսաւորութեանն նստէր»։ Այլ զի յայտ առնիցէ զզօրութեան այնորիկ՝ որ կոչեացն զնա. զի ոչ եթէ ցածուցեալ ինչ կամ մերժեալ էր յայնպիսի յոռութենէ, այլ անդստին իսկ 'ի միջոց ջրեեացն կորզեաց։ Որպէս զերանելին ըզ-

Պաւղոս, զմոլեղինն, զկատաղին, որ զհուրն ընէր, ցածոյց։ Եր և ինքն իսկ զօրինակ զօրութեան կոչէ լեացն՝ յայտ արարեալ՝ գրէ գաղատացուցոյն, թէ «Լուեալ է ձեր զիմ գնացսն՝ որ երբեմն 'ի հրեայսն անդ էի, զի առաւել հալածէի զեկեղեցին այ»։ Այս զձիներսն անդստին իսկ 'ի գործոյն կոչեաց. և անդ արուեստն էր ոչինչ համբաւեալ, զի արք շինականք էին, ոչինչ խառնագնացք, այլ առաւել զգուշացեալք. բայց նորա արուեստն բաղում վնասակարութիւն լի էր, յանդգնութիւն և լայրշութիւն, շահիւք և յափշտակութեամբ. և չէին ինչ պատճառք լաւութեան։ Այլ ոչինչ ակնածեաց յայնցանէ՝ որ կոչեացն զնա։

Այս զինչ ասեմ թէ զմաքսաւորն չակնածէր կոչել, այլ և համբուրել և զոտն արժանի առնէր պոռնկին, և արտասուօքն թանալ։ Արանդի և յաղագս այնորիկ եկն, ոչ զի զմարմինն միայն ողջացուցանիցէ, այլ զի և զոգւոցն ախտ բժշկիցէ։ Օ՞ որ և անդամալուծին իսկ արար, և եցոյց յայտնի՝ թէ կարող է թողուլ զմեղս։ Այս ապա անտի յայս եկն, զի մի խռովեսցին ինչ՝ յորժամ տեսանիցեն զմաքսաւորն 'ի գունդս աշակերտացն մտեալ։ Օ՞ի որ ոչն է թողուլ զյանցանս ամենայն, ընդ այն զի զարմանայցես, թէ և զմաքսաւորն առաքեալ կարիցէ կատարել։

Այլ զոր օրինակ տեսեր զկոչելեացն զօրուն, նոյնպէս ուսանիցիս զկոչեցելոյն հնազանդութիւն։ Ոչինչ յամառեաց և յերկմիտս եղև՝ ասել, թէ զինչ իցէ կոչումն այս. զիս այր մի այսպիսի կոչէ. և անժամ և անդիպող դարձեալ այսպիսի խոնարհութիւն։ Այլ վաղվաղակի հնազանդի. նա և 'ի տուն ոչ եղև արժանի երթալ, և ոչ ընտանեացն ազդ առնել։ Որպէս ձկնորսքն այլովք կերպարանօք՝ զուռկանն և զնաւն և զհայրն թողին, նոյնպէս և սա զմաքսաւորութիւնն և զշահն թողոյր, և երթայր զհետ, ցուցանել զպատրաստութիւն կամացն. և յանկարծակի քակեր զանձն ամենևին յերկրաւորացս և վկայ լի-

1 Ասա, և զինի երկիցս, յոյնն ունի Ուստի կամ Ուստի։

նել դիպող ժամանակի կուրեղեացն՝ կատարեալ հլուա-
կանութեամբն։

Այլ ընդէր արդեաք չասիցէ զայլոցն, թէ զիսրդ և
որով օրինակաւ կուրեցան, այլ զՊետրոսն և զՅա-
կովբայ և զՅովհաննէ և զՓիլիպպոսն միայն։ Քանզի
զի սոքա կարի ի մեն անդէպ և 'ի դոյզ և 'ի տառա-
պեալ արուեստին էին. զի զինչ այլ ինչ չար կայր
քան զմաքսաւորութիւն. և ոչ տառապանաց արուեստ
քան զձկնորսութիւն. և Փիլիպպոս չէր ինչ 'ի նշանա-
ւորաց, 'ի գաւառէն իսկ յայտ է։ Զատն այնորիկ
զնոցանէ առաւել՝ եւս քարոզէն մեզ յայտ յանդիման
հանդերձ արուեստին. զի և 'ի պայծառագոյն պատ-
մութեանց նոցա պարտ իցէ հաւատալ։ Քանզի որք
զկարծեալսն նախատանաց չկամէին թողուլ, այլ նախ
քան զայլսն մեծաձայն հաւատեաւ քարոզէն, և ըզ-
վարդապետին և զաշակերտացն, զիսրդ իցէ՝ զի պարտ
կէշտն այլ ազգ կարծիցի. և մանաւանդ յորժամ
բազում ինչ 'ի սքանչելեացն թողուցուն, որ ինչ
թուէին՝ թէ նախատանաց իցին, զնաչին և զաբչա-
բանացն՝ յանձամբ աղաղակէն. և զաշակերտացն զաղ-
քատ արուեստն, և զվարդապետին զթշնամանսն և
զնախնեաց զլամբասելոյ զմեղսն՝ մեծաբարբառ աղա-
ղակէն։ Ուստի յայտ իսկ է, թէ կարի ի մեն հնարին
ցուցանել զճշմարտութիւն. զի ոչ պաշտօն ինչ առնե-
լով, և ոչ 'ի ցոյցս ինչ գրեցին՝ զոր ինչ գրեցին։

Իբրև կուրեաց զնա, ապա մեծաւ եւս պատուով
պատուեաց զի սեղանակից իսկ և իսկ եղև 'ի տան
նորա. և այսու 'ի հանդերձելոյն յոյս վստահ առնէ
զնա, և 'ի բազում հոմարձակութեան ածէ զնա։ Ոչ
յերկար ինչ ժամանակաւ, այլ անդէն իսկ վաղվա-
ղակի բժշկէ զախտն։ Այլ ոչ ընդ նմա միայն բազ-
մէր, այլ և ընդ բազումն նոյնպիսիս. թէպէտ և այն
եւս մեղադրութեան կարծեր, թէ ընդէր ոչ խորշիցի 'ի
մեղաւորաց։ Այլ և զայն իսկ չթաքուցանէն, թէ
այնպիսի իրօք միշտ խոտեին զգործս նորա։

Հողոմ՝ էին մաքսաւորքն առ արուեստակիցն, որ
ցածուցեալ զդաստացաւ՝ Քրիստոս 'ի տունն մտանելովն.

1 Յօրինակին ----ուրէ։

քանզի նա կոչեաց զամենեսեան, և Ասէ զնոսա օրի-
նակս բժշկութեան անդ յուզէր. և ոչ վիճէր ինչ, այլ
բժշկէր. և ոչ յանդիմանէր զթշնամին, այլ ի Ճաշն
ածէր ի կարդ զախտացեալսն։ Այս այսու ամենայն ու-
սուցանէ զմեզ, թէ ամ ժամանակ, և ամ գործ կա-
րօղ է յաճախել տալոյ մեզ շահս։ Թէպէտ և զոր
առաջի դնէին զխորտիկսն յայնժամ, յապահութեան
և յանիրաւութենէ էին, այլ ոչինչ հրաժարեր Ասէ
Ճաշակել անտի. քանզի մեծամեծ շահք լինէին
անտի. վասն որոյ յարկակից և սեղանակից լինէր
այնպիսի յանցաւորաց։ Օ՛ի այնպիսի իսկ է բժշկաց
Ճարտարութիւն. թէ ոչ ընդ թարախ վիրացն գայցէն,
չկարէն զերծուցանել զնոսա յախտէն։ Թէպէտ և
չարաչար կարծիք կարծէին զնմանէ վասն ընդ մաքս-
աւորսն ուտելոյ և ըմպելոյ, և ի տունս նոցա մտա-
նելոյ։ Ասանդի ասէին իսկ, թէ «Ահա այր կերօղ և
արբեցօղ՝ բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց»։
Լուիցէն զայս՝ որք պահօք զանձինս յարդել ջա-
նայցեն. և ի միտ առցեն, թէ որն մեր կերօղ և արբ-
եցօղ կոչեցաւ, և ոչինչ գրէր. այլ այնմ ևեթ ուշ
ունէր, զի որ ինչ առաջի կայր՝ վՃարիցէ. զոր և ա-
րար իսկ, և շրջեաց զմաքսաւորն ի լաւութի։ Օ՛ի
ուսանիցիս, թէ զայնպիսի մեծ իրս՝ Ճաշոյն հաղոր-
դութիւն վՃարեաց. որպէս և Օ՛աբէ մաքսաւոր յոր-
ժամ լուաւ ի նմանէ՝ թէ «Այսօր ի տան քում պատա-
է ինձ ապանել», զուարթացաւ, զուարթացաւ։
«Օ՛կէս ընչից իմոց, ասէ, տաց աղքատաց. և եթէ
զոկեցի ինչ զուրուք, չորեքպատիկ հատուցից». և
առ այն ասէ Յն. «Այսօր եղև փրկութիւն տանս
այսմիկ». և այսպէս ամ իւիք խրատէ։
Օ՛խրդ Պաւղոս հրամայէ. «Լցթէ ոք, ասէ, եղ-
բայր անուանեալ իցէ, կամ ագահ իցէ, կամ այլ
ինչ յանցաւոր, ընդ այնպիսումն և հաց մի ուտել»։
Պանաւանդ թէ չև ևս յայտ իցէ, թէ վարդապե-
տաց տայցէ զայս խրատ, բայց եթէ միայն եղբարց.
այլ նոքա չև ևս՝ ի վարդապետաց կատարելոց կարդ
հասեալ էին, և ոչ յեղբարց։ Իսկ Պաւղոս յայնցա-
նէ որ յեղբարց կարդ հասեալ իցեն, հրամայէ խոր-
հել, յորժամ յանցանիցեն՝ և անդէն ի յանցանն

էին։ Բայց նոքա այնուհետև ցածուցեալք էին 'ի չարեացն և դարձեալք։ Բայց զփարիսեցիսն ոչինչ յայսցանէ պատկառեցուցանէր, այլ առ աշակերտսն քրթմնջէին, թէ «Ընդէր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ և ըմպէ վարդապետն ձեր»։ Լուաւ մերթ զնոսա ինն փնտռակարս համարեալ՝ առ վարդապետին ամբաստան լինէին, թէ «Լուսիկ աշակերտքն քո գործեն՝ զոր ինչ չէ պարտ գործել 'ի շաբաթու». և այնպէս մեղմեխանօք և նենգաւ կամէին քակել զդունդս աշակերտացն 'ի վարդապետէն։

Լուաւ արդ զինչ ասիցէ անեղբական իմաստութիւնն։ «Ոչ ինչ, ասէ, պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց»։ Ցէս, զիարդ ընդդէմ նոցին դարձուցանէ զբանն։ Բոքա իբրև խոտան ինն համարէին զիսանակէնն. և նա զնորին հակառակն, թէ չէ ինչ արժանի նոքա մարդասիրութեանն չմերձենալոյն։ Լուաւ չէ միայն ոչ փնտռակար, այլ և ուղղութիւն, և պէտք կարևորք, և բաղում գովութեանց արժանի։

Օ՛ի մի յամօթ ինչ առնիցէ զկոչնականսն հիւանդացն անուամբ, տես զիարդ մխիթարէ, ասելովն. «Լրթայք, ասէ, ուսարուք, զինչ է՝ զողորմութիւն կամիմ և ոչ զպատարագ»։ Օ այս ասելով նախատէ զնոսա, թէ չէն ինչ տեղեակ գրոց. վասն որոյ և ահագինս ինն բարբառի, և ոչ առ ցասումն ինչ, քաւլեցի, այլ զի նոքա տակաւին մի ինչ 'ի վարանս մտանիցեն։ Ամենայն 'ի դէպ էր ասել, յառնուք 'ի միտ՝ որպէս Ջնջեցի զմեղս անդամալուծին, և հաստատեցի զանդամսն։ Բայց չասէ ինչ այսպիսի, այլ նախ 'ի հաստարակաց մտացն տայ զպատասխանին, և ապա 'ի գրոց։ «Ոչ ինչ, ասէ, պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց»։ Մեղմով ընդ աղօտ յայտնէ զանձն բժիշկ. և ապա ասէ. «Լրթայք ուսարուք, զինչ է՝ զողորմութիւն կամիմ և ոչ զպատարագ»։ Հրամանս և Պաւղոս առնէ. նախ 'ի հաստարակաց մտաց յարդարէ զբանն. «Ամ իցէ, ասէ, որ արածէ խաչն, և 'ի կաթանէ խաշինն ոչ ուտիցէ». ապա յարէ 'ի նոյն 'ի գրոց, թէ «Յօրինեան գրեալ է Մովսէսի, մի կապեսցես զցուկ եզին կալատոյ. նոյնպէս և ես, ասէ,

հրաման ետ, որ զաւետարանն աւետարանեն՝ յաւետարանէ անտի կեալ։։

Բայց առ աշակերտսն ոչ այսպիսի ինչ. այլ ըզնշանսն յիշեցուցանէ. «Եթէ յիշէք, ասէ, զինդ նկատանէն 'ի հինգ հազարսն, և ութսուն սակաւի բարձէք»։ Իսկ առ նոսա ոչ այսպիսի ինչ. այլ զհասարակաց հիւանդութիւն յուշ արարեալ՝ ցուցանէ, թէ և նոքա 'ի հիւանդացն էին. որք զրոց ոչինչ տեղեակք էին, և առ այլս ամ ծոյլք յառաքինութիւն. և զամ շահս 'ի պատուոյ ագոն և էթ կարծէին։ Ա ամն այնորիկ զմարգարէին բանն 'ի մէջ բերէ, թէ «Երթայք ուսարուք, զինչ է՝ զողորմութիւն կամիմ և ոչ զպատարագ»։ Այսու յայտ առնէ, թէ ոչ ինքն արտաքոյ օրինացն գործէ, այլ նոքա։ Որպէս ասացի. թէ ինձ մեղ զբնէք՝ զի մեզաւորս յուղղութիւն ածեմ, ապա և հօր մեղադիր լինիք։ Որպէս և 'ի միւսում վայրի ասէ, թէ «Հայր իմ մինչ ցայսօր գործ գործէ, և ես գործեմ»։ Ոչ ասա՝ էթէ «Երթայք ուսարուք, զինչ է՝ զողորմութի կամիմ և ոչ զպատարագս». զի զոր ինչ նայն կամի, զնոյն և ես։ Տեսանեն, զի նոցայն աւելիք էին, և սորայս կարևորք։

Ոչ ոչ ասաց, թէ զողորմութի կամիմ և զպատարագս. այլ զողորմութի, և ոչ զպատարագս։ Զ մինն ընտրեաց, և զմիւսն խոտեաց. և յայտ արար, թէ ոչ միայն չէ արգելեալ որում մեղադիրն լինէին, այլ յօրէնսն կայ, և առաւել քան զպատարագս է, և հինն զնոյն ուսուցանէ։ Իբրև կսկծեցոյց զնոսա հասարակաց օրինօք, և զրոց պատգամաք, ապա յաւրէ և զայն, թէ «Ո՛չ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն»։ Զ այս առակաւ իմն առ նոսա՝ հենդնելով ասէ. որպէս յորժամ ասիցէ, թէ «Ի՞հաւասիկ Ի՞դամ եղև իբրև զմի 'ի մէնջ». և դարձեալ՝ «ԶոՀ քաղցեայց՝ ոչինչ ասացից քեզ»։ Ոչ զի ոչ գոյր արդար յերկրի, Պաւղոս յայտ արարեալ ասէ, թէ «Ի՞մենեքեան մեղան, և նուազեցան 'ի փառաց անտի ՝ոյ»։ Ի՞սու և զկոչնականսն եւ միսիթարէ, թէ այնչափ չգարշի 'ի մեղաւորաց, զի վասն նոցա միայն եկն։ Ոչ զի մի ծուլացուսցէ ինչ զնոսա ասելովն, թէ վասն մեղաւորաց եկի, զածելն յա-

պաշխարութիւն յաւելու. ոչ զի նոցնպէս մեղաւորք կայցեն, այլ զի 'ի լուութիս դառնայցեն։ Եւ ամենեին ըմբերանեալ զնոսա, և 'ի գրոց և յօրինաց կարկէ զնոսա. և չգտանէին ինչ տալ պատասխանի, լեալ պատժապարտք մեղադրութեաց. զի որովք բամբասեցին, ինքեանք բամբասեցան. և դիմադարձք նոցին օրինացն և հնոցն գտանէին։ Թողեալ այնուհետև զնա, զաշակերտսն բամբասէին։

Լուկաս ասէ՝ թէ փարիսեցիքն, և տա՝ թէ Յովհաննու աշակերտքն էին։ Բանզի էր իսկ երկոցունց կողմանցն բամբասել. և նուազեալ 'ի պատասխանուոյ, առնուին զնոսա ընդ իւրեանս. որպէս յետոյ զհերովդիանոսն։ Բանզի և նախանձընդդէմ էին նմա աշակերտքն Յովհաննու. և յայնժամ ևեթ ցաձեան 'ի վիճելոյ, յորժամ զՅովհաննէս արկին 'ի բանտ, եկեալ պատմեցին Յոի. և յետոյ անդրէն յառաջին նախանձն դարձան։

Եւ զինչ ասիցեն։ "Ինդէր, ասէ, մեք և փարիսեցիքն պահեմք, և քո աշակերտքդ ոչ պահեն"։ Օ այս ախտ՝ յար և 'ի բնէ իսկ կամեցաւ կարձել Յոյ։ "Յորժամ պահիցես, ասէ, օծ զգլուխ քո, լուա զերեսս"։ Բանզի գիտէր յառաջագոյն՝ որպիսի ինչ չարիքն ծնանելոց էին աստի։ Բայց և ոչ նոցա ինչ սատակէ, և ոչ առ անձնդովութի[1]. այլ մեղմով առնէ պատասխանի։ "Զէ մարթ, ասէ, փեսաւերացն պահել, մինչ ընդ նոսա իցէ փեսայն"։ Եւ զի վՀ մաքսաւորաց էին բանքն, զի զնոցա վերաւորեալ ոգիսն բժշկիցէ, վասն այնորիկ սաստիւ ինն բարբառի առ նախատիչսն. իսկ յորժամ զնա և զաշակերտսն աղարտէին, մեղմով տայր զպատասխանին։ Եւ զոր ասէն՝ այսպիսի ինչ է։ Դրեսջիր, դու իբրև զբժիշկ առնես զայդ. իսկ աշակերտացդ ընդէր թողեալ զպահսն՝ և առ սեղանս ջերանիցին։ Եւ զի և սա յաձախիցեն զամբաստանութիւն, նախ զանձինս դնեն, և ապա զփարիսեցիսն. զի համեմատութիւն զբամբասանսն կամին աձեցուցանել։ "Մեք, ասէ, և փարիսեցիքն պահեմք յաձախ"։ Եւ արդարև պահէին նոքա 'ի Յովհան

1 'Ի լուս. — ՈՒՅԻՓՈՒՆ ՈՒՆԷ։

նէ ուսեալք, և փարիսեցիքն յօրինացն. որպէս միւսն փարիսեցին ասէր, թէ «Պահեմ երկիցս 'ի շաբաթու»։

«Ոչ մարթ, ասէ, փեսաւերաց պահել, մինչ ընդ նոսա իցէ փեսայն»։ Այսպէս բժիշկ կոչէ զանձն, և ապա փեսայ, զի զանձառ զիսորհուրդն այսպիսի անուամբք յայտնեսցէ։ Վասիւ ասասիւ պարտ էր առնել պատասխանիս. եթէ դուք տեսանիք ինչ կամ օրինագիրքն նոցա իցէք. զինչ օգուտ իցէ 'ի պահոցն՝ յորժամ սիրան չարեօք լի իցէ. յորժամ զայլ ոք բամբասիցէ, և լիւրուում ակամն զգերանն ոչ տեսանէ, և զնա՞մ 'ի ցոյցս առնիցէն. և զի պարտ էր քան զնամ՝ զանձնդոլութիւն ցածուցանել, և զայլ ուղղութիւն յանձինս ցուցանել, զսէր, զհեզութիւն, զեղբայրսիրութիւն։ Իսկ նա չասէ այսպիսիս, այլ մեղմով, թէ «Ոչ մարթ փեսաւերացն 'ի պահս մնանել, մինչ ընդ նոսա իցէ փեսայն». յուշ առնելով զբանն Յովհաննու, թէ «Որ ունիցի հարսն՝ նա է փեսայ. իսկ բարեկամ փեսային՝ որ կայ և լսէ նմա, ուրախութիւն ուրախ լինի՝ յորժամ լսէ զձայն փեսային»։

Այս զոր ասէն՝ այսպիսի ինչ է, թէ ուրախութիւն ժամանակ է, մի՛ ինչ 'ի տրտմականացն յառաջ բերէք։ Վանդի տրտմական իսկ էն պահք, ո՛չ յիւրեանց ինչ ախտարաց՝, այլ այնոցիկ՝ որ տակաւին հիւանդամիտք իցեն։ Իսկ որոց զգաստանալն կամիցին՝ կարի քաղցր են երբն. որպէս առողջ մարմնոյ՝ ուրախութիւն յոյժ ախորժելի է, նոյնպէս զուարճացեալ մտաց՝ պահքն հեշտականք։ Այս զայս ըստ նոցա կարծեաց այսպիսի ինն ասէ. որպէս և Այսպէս ոգւոցն խոնարհութիւն հատարի զպահն. և Ա՛ոլսէս սմին նմանագոյն։ Այս ո՛չ այսու միայն ըմբերանէ ըզնոսա, այլ և միւսովն։

«Այցեսցեն, ասէ, աւուրքս, յորժամ բարձցի 'ի նոցանէ փեսայն, յայնժամ պահեսցեն»։ Այս ո՛չ որկր բրստութիւն վասն էին երբն, այլ սքանչելի ինն տեսչութեան. զի և զարբարանացն ճառիցէ, մինչդեռ ընդ այլսն վիճեսցի, և կրթիցէ զաշակերտսն՝ զնոցս

1 'Ի լուս. ախտ-ութ։

զմտաւ ածել, որ նոցայն յայնժամ տրտմութեամբ էր։ Վասնզի առ սոսա զայն ասել իսկ և իսկ ծանր և տաղտուկ թուէր. ուր զի և յետոյ ասացեալ՝ խռովեր զնոսա. բայց առ այլսն ձառեալ՝ առաւել անտաղտկալի լինէր նոցա։ Այս քանզի չարչարանօքն Յովհաննու մեծամտեցին, ցածուցանել զկպարտութիւն նոցա՝ ձառելով զիւրոյ չարչարանացն. այլ զյարութիւնն ոչինչ ձառէր, զի չէ և էր ժամանակ։ Օ՛ի մեռանելն ըստ բնութիւն է, քանզի և մարդ իսկ կարծէր. և յարութիւն՝ 'ի վերոյ քան զբնութիւն։ Օ՛որ վերագոյնն արար՝ զնոյն և աստ առնէ։ Օ՛որ օրէնակ ջանալն ցուցանելն զնա պարտապան բամբասանաց ընդ մեղաւորս ուտելոյն, հաձեաց հակառակաւն թէ ոչ միայն պարսաւանք չէն, այլ և գովութիւն է գործն. նոյնպէս և աստ կամէին ցուցանել՝ թէ չգիտիցէ վարել զաշակերտսն. եցոյց՝ թէ նոքա են, որ ոչ իմանան զպատշաձն, և զուր բամբասեն։

« Այ՛ զոր արկանէ զնոր և զանթափ կապերտ 'ի վերայ հին հանդերձից »։ Դարձեալ 'ի հասարակաց օրինակաց յօրինէ զբանն. և զոր ասէն այսպիսի ինչ է։ Զի և ես, ասէ, են զօրացեալ աշակերտքս, այլ տակաւին ըստ սոցա զիջանել պահանջին պէտք. չև ես են նորոգեալ հոգւովն, և այսպիսեացս չէ պարտ ծանրատաղտուկ ինչ հրամանս դնել։ Այ՛ միանգամայն կրօնս և կանոնս դնէ աշակերտացն, զի յորժամ ելանիցեն աշակերտել զամ տիեզերս՝ մի ինչ խրատուցանեն, այլ մեղմագոյնս ողբելով ածիցեն զնոսա 'ի խրատ։

« Այ՛ ոչ ոք արկանէ զինի նոր 'ի տիկս հինս »։ Տեսանես օրինակս նմանագոյնս հնոց կտակարանացն, հանդերձն և տիկն։ Օ՛ի Երեմիա՝ առիգածի նմա նեցուցանէ զժողովուրդն. և աստ տիկս ասէ, և գինի. քանզի վասն որկորստութեանց և սեղանոց էին բանքն, անդէն անտուստ առնու զօրինակն։ Իսկ Ղուկաս ես աւելի իմն ասէ, թէ և նորն պատաւի, թէ արկանիցես զնա հնոյն։ Տեսանե՞ս, զի ոչ միայն օգուտ չլինի, այլ և վնաս ես մեծ։ Այսէ և զմոտաւորն, և կանխաւ ես գուշակէ զհանդերձեալսն, թէ առ յապա և նոքա ես լինելոց են։ Այ՝ինչև այն լինի-

ցի, չէ պարտ սատիկ ինչ և ծանր հրամանս 'ի վերայ դնել։ Որ յառաջ քան զժամանակն զարձրագոյն և զպատշաճ կրօնս ինչ պահանջիցէ, ոչ ժամանակին պիտանացու գտանի. քանզի միանգամայն իսկ անպէտ տանս արար։ Այս այն ոչ եթէ գինւոյն դիպեսցի, և ոչ ընդունելեացն, այլ արկանելեացն, զի ոչ 'ի դէպ ժամանակի արկանիցեն։

Այս այսու զպատճառս խոնարհագոյն քանիցն ուսուցանէ մեզ, զոր ստէպ խօսէր ընդ նոսա, եթէ բաւ զուտ ինչ վասն նոցա տկարութեան, նուազագոյն՝ որ չէին ինչ արժանի նորա պատուոյն՝ ասէ զանձնէ։ Որպէս Յովհաննու յայտ արարեալ զնմանէ՝ ասէ, թէ «Բաղում ինչ ունիմ խօսել ընդ ձեզ, այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ»։ Օ՛ի մի կարծիցեն՝ թէ զայն միայն պատշաճ էր ճառել, զոր ճառեաց, այլ եւս մեծամեծս կարծել զնմանէ. վասն այնորիկ զտկարութիւն նոցա 'ի միջի դնէ, և խոստանայ՝ թէ յորժամ լինիցին զօրագոյնք, և զայլսն եւս ասել։ Որպէս և ասա իսկ ասէ, թէ «Դիպեսցեն աւուրքդ՝ յորժամ բարձցի 'ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն»։

ՅՈՐԴՈՐԱԿ

Մ՚ այսուհետև և մեք զնամ յամենեցունց իսկ և իսկ պահանջեսցուք, այլ որչափ ինչ մարթիցի. և վաղվաղակի և եւս անդր քան զվաղվաղակին յառաջեսցուք։ Իսկ եթէ ձեպեսցիս և փութասցես, վասն այնորիկ մի ձեպիս՝ զի փութաս։ Բայց եթէ պատրանք ինչ քեզ բանքն թուեսցին, անդստին իսկ յիբայն բնութեան ուսիր զիրսն, և ապա տեսանիցես ամենազգօրութեան նորա. և ոչ որ զքեզ 'ի վայրապար բամբասողաց շարժեսցէ։ Զանգի և անդ փարիսեցիքն էին՝ որ բամբասէին, և աշակերտքն՝ որ զնախատինս կրէին. սակայն յայնցանէ ոչինչ հաւանեցոյց զՆա՝ փոխել զկարծիսն. և չասաց, թէ ամենայնք է նոցա պահելն, և սոցա ոչ պահել։ Այլ եթէ զառաքելի նահատակ, որ ոչ ընդ խառնիճաղանձն հայիցի, այլ

իւրում արուեստին միտ դնիցէ, նոյնպէս և Աստ առ-
նէր յայժամ. քանզի ամենայն ոչ եթէ սոցա չպահէին
էր, այլ նոցա վասն պահելոյն զաղագս վերան առնուլ
և քակտելն և պառակտելն։

Օ որ և մեք այժմ խնայեալ՝ զնոսն առ ՅԱՄ ընտա-
նիս մեր արասցուք։ Այնթէ կին զարդասէր ունիցիս,
'ի մանկոյր և 'ի ծարիր պակշտեալ, և 'ի բազում ցանկ-
կութիւն զգաստեալ, և լեզուային և անմիտ. թէպէտ
չէ մարթ ՅԱՄի այսմիկ 'ի միում կնոջ գտանիլ, բայց
ստեղծցուք մտաց այսպիսի կին։ Այս ընդէր, ասեն, կին
միայն, և ոչ՝ զայր որ այնպիսի ստեղծանիցես։ Վասն
և արք վատթարագոյնք քան զայնոսիկ կին. այլ քան-
զի արանց վերակացութիւն յանձն է, վասն այնորիկ
առ անգամ մի՝ կին լոկ ստեղծցուք։ Ա՛յ որպէս թէ
յանձնագոյն անդ իցեն չարիք. քանզի բազում ինչ
զոյ յարս գտանել, որ բնաւ չիք 'ի կանայս. որպէս
սպանութիւն, և դերեզմանակրկիտ լինել, և մենամար-
տիկ ոգորել առ վիսութիւն, և ընդ դազանս կռուել,
և բազում և այլ ինչ նոյնպիսի։ Ա՛ի այսուհետև հա-
մարիցիք՝ թէ վասն զազգն խոտելոյ ասիցեմք ինչ
զայս։ Ոչ, այլ և չէ իսկ. այլ վասն օգտի ինչ իրաց
առ այժմ նկարեմ զայս օրինակ։

Այգեսցէ կացցէ առաջի այնպիսի ոք կին. և ջա-
նասցի ՅԱՄ օրինակօք իւր այրն ածել զնա յուղղու-
թիւն։ Այս զնարդ կարիցէ ածել զնա յուղղութի։
Ա՛յն զՅԱՄ միանգամայն հրամայել, այլ նախ զթե-
թևագոյնն, և որոյ՝ չիցէ պարտանդեալ. ասա թէ
զՅԱՄ միանգամայն ՀԵսպիցես անդէն 'ի սկզբանն ուղ-
ղել, զբոլորն բնաւ կորուսանես։ Ա՛յն հանիցես ըզ-
զարդն ոսկի, այլ թոյլ տացես ունել, քանզի այն
նուազագոյն թուին քան զնգոյրն 'ի յայտնն ծեփել-
լոյ, զյօնսն հանելոյ, և զծարիրն 'ի յաչսն ամանալոյ։
Ա՛խ այն 'ի բաց մերժեսցի. նա և այն խոկ մի երկիւ-
զիւ, և առանց յօժարութեան 'ի հաւան ածելոյ. և
այլոց ամբաստանութիւն, և քով վՀիռ տալով և թե-
լադիր լինելով։ Օ ի ստէպ ասիցես ցնա, թէ չէն
ինչ ցանկալի այնպիսի իրք զարդու[2] երեսք, այլ կարի

1 'Ի լուս. այլ ուր։ 2 'Ի լուս. այնոցիկ զարդս։

տգեղութիւն. և հաւանեցան, թէ զքեզ առաւել այնմ տրամեցուցանել։

Այլ յետ քո վՀիռ տալոյ, և զայլոց ևս կարծիս 'ի նմին խառնեա, թէ այդպիսի իրք զգեղեցիկս սովոր են տգեղազոյն երևեցուցանել. և զբիծն 'ի միջոց բառնայցես։ Այլ մի ևս ինչ վասն զեՀենի և արքայութեանն ճառիցես, քանզի 'ի զուր ասես զայն. այլ հաւանեցան, թէ քեզ այն հանոյ թուեսցի', զի լոկ զերեսն ցուցանիցէ, և ոչ ասպականեսցէ զգործն ՝այ, ձգելովն և պրկելովն, և հող'ի յայտնն ծեփելով. թէ և ոչ այլոց բազմաց թուի այդպէս երեսք գեղեցիկ և վայելուչ, թող թէ ինձ։ Այս հասարակաց մտաց և ամենեցուն վՀիռ տալով պարուրեա զանոն 'ի բաց. և յորժամ այնպիսի մտաց կակղացուցանես, ապա և զայլսն ևս յաւելուցուս։

Մի ասիցես, և ոչ հաւանի միոմն, դարձեալ կրկնեսցիր և երեքինեսցիր. և բազում անգամ նովին բանիւք ընթանայցես և հրամայեսցես։ Այն ձանձրանար և մի խստիւ ջանար, այլ կակղութեամբ. մերթ սարսռուցուս և մերթ ողբեսցես, և հպատակեսցես։ Զիցէ՞ տեսեալ զնկարիչն, զիարդ մերթ ջնջեն՝ և մերթ նկարեն, յորժամ դէմն ինչ գեղեցիկս նկարիցեն։ Այն ընդ ինչս 'ի վայր քան զնոսա. զի եթէ նոքա որ զմարմնոյ պատկեր գրեն, այնչափ փոյթ 'ի կիր արկանեն, որչափ ևս առաւել մեզ պարտ իցէ՝ որ զգիտն վերստին ստեղծանեմք, զամ հնարս յուզել, զի բարւոք ստեղծանիցեմք զպատկեր հոգւոյն։ Զհայեցիս 'ի մարմնանշանակ կերպարանն, զի ոչ զբիծանն արիւնոտ տեսանես, և ոչ զբերանն նման արջու. և ոչ մրեալ զարտեւանունսն իբրև զմրձՀոտ պուտան. և ոչ զայտն մոխրացանս իբրև զորմ գերեզմնեաց բուելոց։ Մինայն այն ածուխ և մոխիր և գաղաղ է, և անՀնարին ժանտահոտութեամբ ծանօթ։

Բայց գիտեմ զիարդ վայրապար ընդ խաբս եկիր յայսպիսի բանքս. զայլս խրատելի հեղուք ուսուցանել, և ես ինձէն 'ի ցաստմն զառածայ։ Մի այնպէս իցէ, դարձցուք անդրէն 'ի մեր խրատն, և հոգ տարցուք զամ թերուն կենաց[2] մերոց, զի ուղղեսցուք զոր կամիցիմք։

1 Յորինակին Բ-ուէրի։ 2 Յոյնն Խնամ։

Ղտեսանեն, զիսրդ ներեմք մանկուոյն յորժամ լայցեն, յորժամ կամիցիմք 'ի մարցն ստեանցն քեցել. և ամենևին համբերեմք՝ զմինն միայն վնաբել, զի զնոսա հաւանեցուսցուք արհամարհել զառաջին սեղանն։ Նոյնպես և ասա արասցուք. Ամի այլ իմիք հոգ տարցուք, զի զոր խնդրեմքն՝ ուղղեսցուք։ Եւ յորժամ զայն ուղղեսցես, ապա 'ի Ճանապարհ անկեալ՝ յոսկի զարդն ևս գայցես. և նովին օրինակաւ՝ նոյնպես և զայնմանէ խօսեացիս. և այնպես առ սակաւ սակաւ յարդարեսցես զկինն. և լինիցիս նկարիչ Ճարտար, և ոչ ծառայ հաւատարիմ, և մշակ առաքինի։

Եւ հանդերձ այսոքիւք յուշ առնիցես նմա զառաջին սուրբ կանանցն, զԱռայէ և զԷլիսեկայ և զայլոց այնպիսի գեղեցկացն. և ամենևին զգեղեցկացն Ճառիցես։ Բանզի և Լ իա նահապետ կինն էր գեղեցիկ, և ոչինչ այնպիսի մոաբերեաց. այլ թէպէտ և տգեղ էր, և ոչինչ կարի սիրելի առնն, չպա Ճուռնեաց ինչ այնպիսի, և ոչ զերեսն ապականեաց, այլ ամբողջ և անարատ իսկ պահէր զնկարագիրն. և այն զի 'ի հեթանոսաց միջն մնեալ էր։ Իսկ դու հաւատացեալ՝ որ զԲՇ ունիս գլուխ, զստատանայական մնքենայն բերես 'ի մէջ։ Եւ չլիշես, թէ որպիսի հրով լուացար. և չածես զմտաւ զսեղանն՝ որ զարդարէ զքեզ, և ոչ զարեանն կարմրութիւնն՝ յորմէ ներկեցաւ լեզուդ։ Լմէ զայն զմտաւ ածիցես, թէպէտ և կարի զարդասէր իցես, չիշխես զարդարիլ, և ոչ յանձն առնուլ՝ զմոխիրն և զդաղաղն ծեփիլ զերեսոքդ։

Ասիր, զի ԲՇի կաս 'ի խօսմանն, և մերժեսցիս յայնպիսի ծանակութէ։ Ղհաձի ԲՇ ընդ այնպիսի գոյնս. այլ գեղեցկութիւն խնդրէ՝ որում կարի իսկ ցանկացեալ է. զոգւոյդ գեղոյ ասեմ, որով և մարդարէն պատուիրէ քեզ զարդարիլ. «Յանկասցի, ասէ, թագաւորն գեղոյ քո»։ Ամի, ասէ, այսուհետև աւելորդ ծանակութէ ծանակիցիս. քանզի չէք ինչ թերակատարութի 'ի գործս այ, և ոչ քեզ զարդարելոյ պէտք են։ Բանզի յարքունի պատկեր՝ որ կանգնիցի, չիշխէ ինչ ոք յաւելուլ. և որ յաւելու՝ ան

հնարին տանջանս կրիցէ։ Եթէ զոր մարդ գործէ, չիշխէս ինչ անդ յաւելուլ, զոր ՝ուծն կանգնեաց՝ զայն ուղղել ջանաս։ Ցածիցեաս զմտաւ զհուր գեհենին, և զոգւոյդ զկորուստ. վասն այնորիկ չէն՝ այնպիսի ձեպք, քանզի ամ փոյթ զմարմնոյ ևեթ է։ Եւ զինչ ասիցեմք, եթէ զոգւոյդ կորուստ. նա և մարմնոյն իսկ ամենևին՝ յոր ձեպիմք, նոցին հակառակ պատահէ։ Եւ եթէ կամիս, միտ դիր։

Դու ցանկաս գեղեցիկ երևել, և այն զքեզ տգեղ ցուցանէ. և կամիս առնն հաճոյ լինել, և նոյն իսկ հանէ զքեզ առնն յաչաց. այլ և զարտաքինսն կաղամես լինել զքէն ամբաստան։ Կամիս երևել մանուկ, և նոյն իսկ վաղվաղակի ցուցանէ զքեզ պառաւ։ Կամիս զարդարել[2], և նոյն իսկ ածէ քեզ ամօթ։ Եւ այնպիսի կէն ոչ միայն յիւրոյ զուգականէն, այլ և անդէն իսկ յաղախնանց իւրոց՝ որ գիտեն զնա, և 'ի ծառայից՝ որ ճանաչեն, յամօթ լինի. և նախ քան յամենեցուն՝ յանձնէ։ Եւ զինչ պարտ իցէ զայն ասել, որ քան զամ դժնդակագոյն է, որ այ դիմադարձ լինիս, և զցածութիւնն իբրև գող ական հատանես, և զնախանձու բոյն բորբոքես. զի տգեղից կանանց պոռնկացելոց նմանօղ լինիս։

Օ այս ամ իմացեալ՝ արհամարհեցուք զամ սատանայական պարս, և զդիւական արուեստս։ 'Ի բաց ընկեսցուք զայնպիսի զարդս, մանաւանդ թէ զանզարդութիւնն իսկ. և այնու զարդու և գեղով զարդաբեսցուք զանձինս՝ որ հրեշտակաց սիրելի լինի, և այ ցանկալի, և ամենայն հաճոյական։ Օ՛ և այսմ և հանդերձելոց փառացն հասանիցեմք շնորհօքն և մարդասիրութեամբ տն մերոյ Յի Յն. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Յօրինակին էն։ 2 'Ի լուս. զարդարել։

ՃԱՌ ՎԵՑԵՐՈՐԴ

«Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, եկեալ աւա-
սիկ այր մի իշխան՝ երկիր պագանէր նմա, և ասէր.
դուստր իմ արդ եւ վախճանեցաւ, այլ եկեալ դիր
ձեռն 'ի վերայ, և կեցցէ»։

ՅԱՄԱՆԵՑԻՆ արդիւնքն՝ բանիցն, զի առաւել
ըմբերանեսցին փարիսեցիքն։ Զանգի և որ եկեալ
աղաչէր՝ գլուխ էր Ժողովրդեանն. և սուգն անհնա-
բին, զի միամօր էր մանուկն, և երկոտասանամեայ,
դեռ 'ի ծաղկի փթթեալ, և 'ի մատաղ հասակի.
վասն որոյ և վաղվաղակի խակ յարուցանէր։ Բայց
թէ Ղուկաս ասէ՝ թէ եկին ոմանք և ասեն, մի աշ-
խատ առներ զվարդապետդ, քանզի մեռաւ մա-
նուկն, ասեմք, եթէ 'ի ժամանակին և յերկայն Հա-
նապարհին կարծէին՝ թէ արդ մեռեալ իցէ. կամ
թէ զվիշտն խակ առնեցուսցեն։ Յս սովորութիւն խակ
է վշտացելոց՝ մեծացուցանել զկարիսն, և աւելի քան
որչափ իցեն՝ պատմել. զի այնպէս յոլովադոյնս հա-
ւանեցուցանեն զայնսպիսի՝ որ աղաչեսցին։

Յս դու միտ դիր թանձրամտութիւն առնն, զի եր-
կուս իրս պահանջէր 'ի Քրիստոս. երթալ 'ի տունն աղա-
չէր, և ձեռն եւս դնել 'ի վերայ. որ նշանակ խակ էր,
թէ տակաւին ողջով եթող զմանուկն։ Որպէս Յեհ-
ման ասորի 'ի մարգարէին պահանջէր՝ ելանել, և
դնել նմա ձեռն. քանզի և ձեռին և տեսլեան երե-
սաց, և երևելի իրաց իմն կարօտանան թանձրամիտք։

Մարկոս ասէ, թէ երիս աշակերտս միայն տարաւ
ընդ իւր. և Ղուկաս նոյնպէս. խակ սա՝ թէ զաշա-
կերտսն 'ի խուռն 'ի խուռն։ Յս ընդէր ոչ արդեւք զՄատթէոս էառ ընդ իւր, քանզի նոր եկեալ էր, և
յառաւել եւս ցանկութիւն յորդորէր զնա այն։ Ա՛ սոն
զի դեռ տխմար էր և թերակատար. վասն այնորիկ
զնոսա պատուէ, զի սոքա նմանօրէք նոցա լինիցին։
Զ՚ Ժամանակն զայն բաւական համարէր՝ զտեառ-

տեսն տեսանել, և սեղանակից և հացակից լինելովն պատուիլ։

Յարուցեալ բազումք երթային տեսանել զմեծ աքանչելիսն։ Որ՝ վասն առնն մեծարանաց՝ որ եկն աղաչել. և դարձեալ՝ զի բազումք 'ի նոցանէ դեռ ևս թանձրամիտք էին. և ոչ այնպէս զոգւոյն դարմանս, որպէս զմարմնոյ բժշկութիւն խնդրէին։ Այլ դեռ՝ տային՝ կէսքն վասն իւրեանց ցաւոց ստիպեալք. և այլք այլոց բժշկութեանց լինել տեսօղք փութային։ Այլ զբանն և զվարդապետութիւնն սակաւք էին՝ որ մեծարին համարէին, որ 'ի նայն յանկէին։ Այլ ոչ ետ թոյլ 'ի տունն ումեք մտանել՝ բայց աշակերտացն միայն, և ոչ նոցա իսկ ամենեցունն։ Զի՞ մի ուրեք խրատեն զմեզ՝ հրաժարել 'ի բաղմոց գովութենէ։

«Այլ աւասիկ, ասէ, կին մի տեռատես երկոտասանամեայ ծիւրեալ, մատեաւ բուռն էհար զդրօշակն հանդերձի նորա։ Զանգի ասէր 'ի միտս, եթէ մերձենայցեմ 'ի հանդերձս նորա, ապրիմ»։ Այլ ընդէր ոչ յայտնի իսկ համարձակութիւ արդեւք մերձեցաւ նա։ Զմաչէր վասն ախտին, քանզի համարէր պիղծ զանձին։ Զթէ որ զամօրեայ աղտեղութիւնն կրէր 'ի յանձին՝ պիղծ համարէր, որչափ ևս առաւել նա՝ որ այնչափ ժամանակս ջերանէր, այնպիսի ինչ կարծէր. քանզի բազում ինչ այնպիսի պղծութիւն կարծէր յօրինացն։ Զի ամն այնորիկ գաղտ լուելեայն մերձենայր, զի չև ևս՝ և նա պատշաճ ինչ կարծիս ունէր զնմանէ. ապա թէ ոչ՝ չկարծէր իսկ, եթէ թաքուցանել կարիցէ։

Այլ նախ յայտնի իսկ մատչէր կինն, քանզի լուեալ էր, թէ և զկանայս բժշկէ, թէ և զդուստր ժողովրդապետին զվախճանեալն երթայր 'ի տունն յարուցանել։ Զի տունն չիշխեաց կոչել, թէպէտ և մեծատուն իսկ էր, այլ լռելեայն հաւատովք մերձեցաւ 'ի հանդերձն։ Զի՞ ոչինչ երկմտեաց 'ի միտս, թէ զերծանիցիմ 'ի ցաւոցս՝ թէ ոչ. այլ խիզախեալ յառողջութիւն՝ և այնպէս ինն մերձենայր։ «Զսէր ընդ միտս. եթէ միայն մերձենայցեմ 'ի հանդերձս նորա, փրկիմ առ ժամայն»։ Այլ զի ետես իսկ՝ թէ

յորպիսի տանէ մաքաւորաց էլ, և որպիսի մաքաւորք և մեղաւորք երթան զհետ նորա. և այն ամենայն աւելի և աւելի քաջալերեր, և խրախոյս տային նմա։ Այլ Ինձ ոչ ետ նմա Թոյլ Թաքչել. այլ 'ի մէջ աձեր, և առներ յայտնի վասն բազմաց։ Զի Աստուած ոմանք յանհանձարից ասեն՝ Թէ վասն փառասիրութեան էած զկինն 'ի մէջ։ Ընդէր, ասեն, ոչ ետ Թոյլ երթալ Թաքուցանել զանձն։ Զինչ խօսիս ով աղաջուրդ և ամենեւին աղաջուրդ։ Որ հրաման տայր լռել և զբաղում զսքանչելիսն Թաքուցանել, և զնորդ իցէ՝ զի նա փառաց ինչ ցանկայ։

Այլ ընդէր ածիցէ 'ի մէջ։ 'Այսր՝ զի զերկիւղ կնոջն փարատիցէ, զի մի 'ի խղձէ մտացն ելասիցի, իբրև գողացեալ զպարգևսն միւսն 'ի կասկածի կայցէ։ Զարձեալ՝ և յուղղութիւն իսկ ածէ զկինն, զի մի կարծիցէ՝ Թէ Թաքուցանել ինչ կարիցէ։ Այրբորդ անգամ, զի ամենեցուն յայտնեսցէ զՀաւատս նորա, և զայլս 'ի նոսն նախանձ յորդորիցէ։ Զանգի և կացուցանել զբղխումն արեանն՝ և ոչ սակաւ նշանակս տացի ցուցանելոյ, Թէ ամենագէտ իսկ է։ Զանգի 'ի ժողովրդապետին տունն երթալոց էր, հաւատովք կնոջն և զայլսն ևս կամէր ածել յուղղութիւն։ Այս քանզի եկին ոմանք և ասեն, մի ինչ աշխատ առներ զվարդապետդ, զի մեռաւ մանուկն. և յորժամ 'ի տունն չոգաւ, որ 'ի տունն էին՝ ծաղր առնէին, մանաւանդ զի ասաց Թէ ննջէ. 'ի դէպ էր և հօրն այնպիսի ինչ ախտանալ։ Զ ասն այնորիկ առյուղղելոյ զայնպիսի տկարութիւն յառաջագոյն ածէ զկինն 'ի մէջ. և քանզի աւելի Թանձրամիտ քան զայլսն էր. այլ լուր զինչ ասէ. « Զու մի երկնչիր, ասէ, բայց հաւատա միայն, և կեցցէ մանուկն քո »։

Զ և մանուկն իսկ 'ի դէպ համարեցաւ նախ զալ, և ապա ինքն չոգաւ, զի յայտնի լիցի յարութեանն հանդէս։ Զ ասն այնորիկ իսկ մեղմ երթայր, և խօսէր յանձնագոյն ընդ կնոջն, զի Թոյլ տացէ մեռանել մանկանն, և ապա երթայցէ։ Այս նոցա պատմէն՝ Թէ մի ինչ աշխատ առներ զվարդապետդ, զնոյն յայտ առնէ։ Զկնարիկ և Զ ուկաս, Թէ խօսելով եկին. և որք 'ի տանէն եկեալ էին՝ ասէին, « Զի

ռաւ դուստրն քո, մի ինչ աշխատ առներ զվարդապետդ». զի ստուգեսցի մահն, և մի կարծեաք ինչ թուիցի յարութիւն։ Օ սոյն և ՅՍ ուրեք առներ. որպէս առ Ղազարու մի և երկուս և երիս աւուրս դադարեաց։ Ղ ասն այսր ՅՍի ած զկինն 'ի մէջ, և ասէր՝ թէ քաջալերեաց դուստր։ Որպէս ցանդամաքլոյծն, թէ «Քաջալերեաց որդեակ»։ Լու քանզի զարհուրեալ էր կինն, վասն այնորիկ քաջալերեաց, ասէ. և դուստր ասէ, զի դուստր ևս արարին զնա հաւատքն. յարգէ ևս և դոլէ, թէ «Հաւատք քո կեցուցին զքեզ»։

Լսէ Ղուկաս և այլ ևս բազում ինչ աւելի պատմէ զկնոջէն։ Քանզի մերձեցաւ, ասէ, և էառ զառողջութիւնն. և ոչ վաղվաղակի կոչեաց զնա 'ի մէջ Քն. այլ նախ ասէ, թէ ո՞ մերձեցաւ յիս։ Լու յորժամ Պետրոս և որ ընդ նմա էին՝ ասէին, թէ վարդապետ ժողովուրդս խռնեալ են և նեղեն զքեզ, և դու ասես՝ թէ ո՞ մերձեցաւ յիս։ Որ մեծ իսկ նշանակ էր՝ թէ արդարև մարմին զգեցաւ. զի ոչ թէ 'ի բաց 'ի բաց ինչ երթայրն, այլ մնտ իսկ խռնեալ նեղէին յամենայնից։ Լու նա ևս ստիպէր, թէ ո՞ մերձեցաւ յիս, և ես իմացայ՝ թէ զօրութիւն ել յինէն։ Ասա կարծեաց թանձրամտացն և զպատասխանին արար։ Լու զայս ասելով, զի կնոջն ինքնին իսկ խոստովան տացէ լինել։ Ղ ասն այնորիկ ոչ վաղվաղակի յանդիմանեաց զնա. զի ցուցցէ՝ թէ զամ ինչ Ճարտար զիտէ. նմա իսկ իւրովի ետ զամենեսին հաւանեցուցանել, և զանձն յայտնել, զիրսն յորդորել, և մի ինչ կարծիս համարել։

Տեսանե՞ս, որչափ լաւ քան զժողովրդապետն էր կինն։ Օ ի ոչ բուռն էհար և ոչ կալաւ, այլ զմատուռնն ևեթ հասոյց 'ի հանդերձն. յեռոյ եէր, և նախ [1] բժշկեցաւ և զնաց։ Այս զբժիշկն իսկ զլեռովին տանէր 'ի տուն, և սմա մերձենալն ևեթ բաւական լինէր. թէպէտ և ախտիւն կապեալ էր, այլ հաւատո

Օ՛ի թէ օրինակի վասն զնա 'ի մէջ չէր ածեալ, ապա և ասէր իսկ ոչ, թէ հաւատք քո կեցուցին զքեզ։ Պիտանապատայն զի և զժողովրդապետին զմիտն հաստատեսցէ և 'ի հաւան ածիցէ՝ ասէ զայն։ Այս և ոչ սակաւ քան զմարմնոյն առողջութիւն շնորհէր բաշնիւքն դիւրութիւն և օգուտ կնոջն։ Օ՛ի զնա փառաւորել կամէր, և զայլսն ածել յուղղութիւն։ Այլ ոչ կամէր զանձն ինչ փառաւոր երևեցուցանել, յայտ է, զի առանց այնր իսկ միշտ փառաւոր է. և զի և ես մեծամեծս քան զայն արարեալ էր, և առնելոց էր։ Իսկ կնոջն թէ դաղտ զնայեալ էր, զրկեալ դատաներ յայնպիսի շնորհաց. ած զնա 'ի մէջ՝ զի լուսաւոր ամենեցուն երևեցուսցէ զնա, և զերկիւղն 'ի նմանէ 'ի բաց մերժիցէ. զի մերձեցաւ, ասէ, ահիւ և դողուբ. և ետ նմա խրախոյս դատանել. և ընդ մարմնոյ բժշկութեանն՝ այլ և սպաշար ետ նմա, և արձակեաց։ «Այ՛րթ, ասէ, խաղաղութեամբ»։

«Իբրև եկն 'ի տուն ժողովրդապետին, և ետես զամբոխն և զկոծողն, 'ի բաց կացէք, ասէ, զի չէ մեռեալ մանուկդ, այլ ննջէ»։ Այս դարձեալ նշանակ ժողովրդապետին այն էր, զի կոծողք և փողարք մտեալ էին 'ի տունն. այլ Պ՚ա զայնն զամենեսեան 'ի բաց ետ հանել 'ի նմանէ, և զհայրն և զմայրն անդէն թողուլ, զի մի ասիցեն՝ թէ այլ ազգ ինչ յարոյց զմանուկն, և ոչ հրամանաւ։ Այս և յառաջ քան զկանգնելն իսկ յարոյց բանիւն՝ զոր ասաց, թէ «Մ՚էջ է մեռեալ աղջիկդ, այլ ննջէ»։ Այս որպէս 'ի ծոլուն նախ աշակերտացն սաստեաց, նոյնպէս և աստ նախ զամբոխն 'ի բաց ետհան։ Այս քուն կոչէ զմահն, որպէս զի՝ ազարուն՝ թէ «Ի՝ ազար բարեկամ մեր ննջեաց»։ Այս ուսուցանէ չերկնչել 'ի մահուանէ, զի ոչ եթէ մահ, այլ քուն է այսուհետև մահ։ Այս քանզի ինքն ևս մեռանելոց էր, այլոց մարմնով յարդարէ զմիտս աշակերտացն՝ վստահ լինել, զի մի վհատիցին ինչ ընդ նորա մահն. քանզի 'ի նորա գալստեանն քուն է այսուհետև մահ։ Թէպէտ և ծաղր առնէին, սակայն ոչինչ զայրանայր. քանզի գիտէր՝ թէ յետ սակաւ մի ժամու աքանչացուցանելոց էր զնոսա։ Այս չլիներ դժկամակ ընդ

ծաղրն. զի նոցա փողքն և ծնծղայքն և այլն ամ-
ստուգեսցեն զմահն։

Եւ քանզի յամախ լեալ նշանաց ինչ գործելոց՝
թերահաւատ լինին մարդիկ, յառաջագոյն գրաւէ
զմիտս նոցա իւրովք ընտանի պատասխանեօքն. որ-
պէս առ Մովսէսիւն և զ Ահարոնն իսկ. զՄովսէս
ասէ. «Օ ինչ ունիս 'ի ձեռինդ». զի յորժամ
տեսանիցէ յօձ դարձեալ, մի մոռանայցէ՝ թէ գա-
ւազան էր. այլ զիւր բարբառն յիշեսցէ, և զարմա-
նայցէ ընդ գործն։ Եւ զ Ահարոն, ասէր, «ուր եղիք.
յորժամ ասացին, եկ և տես», և դարձեալ թէ արդ
հոտեալ է, քանզի ջրբէօրեայ է, մի թերահաւա-
տասցեն՝ թէ չյարոյց զմեռեալն։

Եհան զամբոխն արտաքս, և առաջի հօրն և մօրն
առնէր զնշանն։ Ոչ այլ ինչ շունչ արկանէր 'ի նմա,
այլ զնոյն անդրէն դարձուցանէր. և իբրև 'ի քնոյ
զարթուցեալ՝ ունի զձեռանէն, և տայ ցհայրն. զի
հաստատուն ցուցանիցէ զիրսն տեսողացն, և յառա-
ջագոյն Ճանապարհ աւացն տեսլեամբ հրդեհեցէ։
Հայրն ասէ, ձեռն դիր. և նա զևս մեծն, զի զձեռա-
նէն ունէր՝ և յարուցանէր. յայտ արարեալ՝ թէ
ամ ինչ պատրաստ կայ առաջի նորա։ Եւ ոչ միայն
յարուցանէր, այլ և կերակուր ևս հրամայէր տալ,
զի մի համարիցին՝ թէ ցնորք ինչ և առ աչօք իցեն
իրքն։ Եւ ոչ ինքն տայր, այլ նոցա հրամայէր. որ-
պէս զ Ահարայ ասէր, թէ լուծէք և թողէք երթալ.
և՝ յետոյ սեղանակից իւր արար։ Եւ միշտ
այնպիսի սովոր է՝ զերկոսինն յարդարել. և զմահն
ստոյգ ցուցանել, և զյարութիւնն հաւաստեաւ։

Եւ դու մի միայն 'ի յարութիւնն հայեսցիս, այլ և
ընդ պատուէրն, զի չհրամայեաց ումեք 'ի վեր հա-
նել. զի առաւել ամենեւին ուսանիցիս զանհպարտու-
թիւնն և զանպարծութիւնն։ Ընդ այսմ և զայն ևս
ուսիր, զի զկոծողսն 'ի նմանել ելհան, և անարժանս
այնպիսի տեսլեան եցոյց զնոսա։ Եւ դու մի ելանի-
ցես ընդ փողարսն արտաքս, այլ մնաս 'ի ներքս ընդ
Պետրոսի և ընդ Յակոբեայ և ընդ Յովհաննու։
Եթէ յայնժամ ելհան զնոսա արտաքս, որչափ ևս
առաւել այժմ. զի յայնժամ չև ևս էր յայտ, եթէ

մահ՝ քուն լինելոց է. բայց այժմ և քան զարեգակն
ևս յայտնագոյն է։ Ազատոյց այժմ զքո դուստր,
այլ յարուցանելոց է մեծապայծառ ևս փառաւք։ Կա-
թեպէտ և յարեաւ, դարձեալ մեռաւ. իսկ քոյն
յորժամ յառնիցէ, կայ մնայ այնուհետև անմահ։

ՑՈՐԴՈՐԱԿ

Ար՝ որ այսուհետև կոծեսցի, և մի ողբս առեալ
աշխարհիցէ. և մի զուղղութիւնն՝ զոր գործեաց Քրիստոս,
աղարտեցէ։ Քանզի յաղթեաց իսկ մահու. ընդէր
աւելի աշխարհիցես. զի քուն եղեն իրքն. զի՞ լայցես
և զոփայցես։ Այնք հեթանոսք առնիցեն զայն, ծաղր
պարտ էր առնել. յորժամ հաւատացեալն նովիմբք
քարուկակ կայցէ, զինչ պատասխանատուութիւն, որ
ներեալ թողութիւն կայցէ։ Այնք այնպիսի գործք
ընդ վայր գործեցան. և այն զի յետ այսչափ ժամա-
նակաց, և յայտնի յարութենն ընծայութիւն լինելոց
դու գոգ զամբաստանութենն առնեցուցանել փութաս.
և ձայնարկու կանայս յաշխարել մուծանես. բորբո-
քես զՏնոցն, և ստուարացուցանես զսուգն։ Զլսես
Պաւղոսի՝ որ ասէ, թէ «Օ՞ինչ միաբանութիւն է
Քրիստի ընդ բելիարայ, կամ՞ որ բաժին հաւատացելոյն
ընդ անհաւատին»։

Այս հեթանոսաց որք ոչինչ գիտեն զյարութիւնն, սա-
կայն գտանեն ինչ բանս մխիթարութեան, ասել՝ թէ
համբերք ժուժկալութիւն, քանզի դարձուցանել զե-
ղեալ իրս չէ հնար, և ոչ հնար ինչ այլ ողբովքն
գտանել։ Իսկ դու որ ևս ճարտարագոյնս քան զայն
լսես, չամաչիցես աւելի քան զնոսա քարուկակ կալով։
Օ՞ի չասեմք, թէ տար ժուժկալութիւն, քանզի զե-
ղեալ իրս չէ հնար դարձուցանել. այլ թէ տար ա-
ռաքինութեամբ, ստոյգ յառնելոց է, և ՚ի քուն է
մանուկն. չմեռաւ, այլ դադարեալ է. չկորեաւ,
քանզի յարութիւն յառաջեալ ունի զնա, և կեանք
յաւէժ կենդանականք և անմահութիւն և հեշտա-
կան հանգիստն։ Զլսես սաղմոսին[1], որ ասէ, «Դարձ

[1] Յովհաննէս Սարգաւտ. եդաք ըստ լուս։

հոգի իմ 'ի հանդիստ քո, զի Տէր բարի արար քեզ»։ Ի՞նչ բարերարութիւն կոչի զիրսն, և քո աշխատ եղեալ կոծիս։ Այլ զինչ աւելի արդեւք զործելիք քան զայդ, եթէ թշնամի և հակառակորդ վախճանելոցն էիր։

Զոհ սուգ ինչ պարտ իցէ առնուլ, զատանայլ պարտ իցէ առնուլ։ Այս է կոծելն, նոյն և աշխարհելն. և ոչ մեք՝ որ 'ի մեծամեծ բարութիւնս երթամք։ Այրս չարութեցն արժանի են այնպիսի ծանակութիւնք, և ոչ քեզ՝ որ 'ի պակսն և 'ի հանդիստս երթալոց էս։ Արանզի և նուաստհանգիստ իսկ խաղաղութիւն է մահ։ Ցէս իսկ որչափ չարեաք լի են ասասէն կեանքս. զմտաւ ած, զի դու իսկ բազում անգամ անիծանես զկեանս աշխարհիս։ Այս քան զեւ՝ որչափ յառաջ մատչիս, 'ի յառութեան իրս հասանել միով։ Արանզի և 'ի սկզբանէ իսկ ոչ սակաւ պատիժք վիճակեցան։ «Տրտմութեամբ, ասէ, ծնցիս որդիս, և 'ի քիրսն երեսաց քոց կերիցես զհաց քո». և 'ի նորումն ասէ, թէ «Յաշխարհիս նեղութիւն ունիցիք»։ Իսկ զանտի կենացն չէ ինչ այսպիսի ասացեալ, այլ ամենևին զնորին հակառակն, եթէ «Հալածեալ են վիշտք, արտմութիւնք և հեծութիւք». եթէ «Յարևելից և յարևմտից եկեսցեն և բազմեսցեն ընդ Աբրահամու և ընդ Սահակայ և ընդ Յակովբայ». և եթէ՝ առագաստ հոգևոր է անդ, և լապտերքը լուսաւորութիւն, և յերկնից բնակութիւն փոխել։

Այս արդ ընդէր յամոթ առնիցես զգնացեալն. զմի կամիցես և այլոց ևս զանդիտել և դողալ 'ի մտհուանէ։ Ընդէր զրգռես զբազումս՝ բամբասել զնա, որպէս թէ մեծամեծ չարիս գործիցէ։ Անաւանդ թէ ընդէր իսկ յետոյ զաղքատս կոչիցես, և զքահանայս ապաշիցես աղօթս առնել։ Օ 'ի 'ի հանդիստ, ասէ, երթիցէ վախճանեալն. զի 'ի հաշտութիւն զդատաւորն ածիցեմք։ Այս յայն սակս ողբայցես և աշխարհիցես։ Այթէ այդպէս իցէ, ընդ անձին կռուիցես, և անդէն ընդ քեզ մարտնչես։ Օ 'ի նա 'ի նաւահանգիստն երթեալ մտեալ իցէ, և դու հոգի դառնաղուշնչս յարուցանես։

Այս զի գործեմ, ասէ. զի չունիմ ժոյժ, զի այսպէս է բնութիւն։ Ո՛չ եթէ բնութեանդ ինչ մեղա-

գրութիւն է, և ոչ իրացն կարգի, այլ մեզ՝ որ զնմա վերոյ 'ի վերոյ հարեալ՝ փղձկիմք, որ մեղկիմք, և անձանց աղնուականութեան մնան և տուր լինիմք. և քան զանհաւատսն ևս չար անհաւատուիս գործեմք։ Այս զիարդ ընդ այլում վասն յարութիւն խօսիցիմք. որպէս զհեթանոսսն հաւանեցուցանել կարեմք։ Յորժամ չար քան զնոսա 'ի մահուանէ երկնչիմք։ Բազումք 'ի հեթանոսաց թէպէտ և անմահութիւն չէն ինչ տեղեակք, պսակս 'ի գլուխս առին յետ որդւոցն վախճանելոյ, և սպիտակ զգեցան, և զաստի փառս շահեցան։ Զոր և ոչ վասն հանդերձելոյ փառացն դադարես. իդացեալդ՝ որ նստիս իբրև զկանայս, ձայնս արկանես։ Այլ թերևս պայազատս և ժառանգս չունիս։ Այս զոր առաւել կամիս. քո՞ ընչիցն լինել ժառանգաւոր՝ թէ երկնից. ընդ որ հաճիս. զի կորստականացն պայազատ լինիցի՝ և յետոյ թողուցու, թէ մնացականացն և անշարժիցն։ Ընկալար զնա քեզ ժառանգ. այլ փոխանակ քո ոչ ոք զնա ժառանգ. չեղև՞ եղբարց իւրոց ժառանգակից. այլ Քրիստոսի եղև ժառանգակից։

Զի՞նչ ասցեմք, ասէ, զհանդերձս. ո՞ւմ զտունս և զգերդաստանս և զգեօղս։ Արդ մարթի թողուլ նմա, և առաւել յամրի և 'ի զգուշութեան պահել՝ քան թէ աստէն 'ի կենդանութեան եր. և չէր ինչ արկել։ Զի թէ բարբարոսք թաղէն զինչս ընդ վախճանեալսն, որչափ ևս առաւել քեզ պարտ է ընդ նմին առաքել։ Զոյց յայտ արա զնորայն, ոչ զի մեխիր լինիցի որպէս և արդ, զի ևս առաւել քան զստ՝ անդ զգենուցու փառս։ Այս եթէ մեղաւոր է՝ որ չոգաւն, զի զմեղն փարատիցէ։ Իսկ եթէ արդար, զի յաւելուած վարձուց և հատուցմանց լինիցի։ Այլ տեսանել ցանկանայցես զնա։ Թո՛ւ այնպէս իցէ, զնա բին վարսն վարիցես, և վաղվաղակի հասանիցես յայն պիսի գեղեցիկ տեսիլս։

Հանդերձ սոքիմբք և զայն զմտաւ ածցես. թէ՝ պէտ և մեզ այժմ չանսայցես, սակայն ժամանակին հաւանեսցիս. և վարձք ինչ քեզ այնուհետև ոչ լինիցի. քանզի ժամանակացն բաղմութ լինի մխիթարուն։ Իսկ եթէ այժմ կամիցիս ցածնուլ, երկուս շահս մե-

ծամեծս շահիցիս. և զանձն 'ի վշտաց փոքրոգի առնիցես, և յայ պսակ վայելչութեան 'ի գլուխս առնուցուս։ Օ ի քան զողորմածութիւն, և քան զբազում և այլ ինչ՝ մեծ է հեզութեամբ տանել վշտացն։

Օ մնաւ ածի, զի և որդին այ մեռաւ։ Լա վասն քո՞, և դու վասն անձինդ։ Լու ասէր, թէ «Հնար ինչ իցէ, անցցէ յինէն բաժակս». և տրտմեցաւ և տաղնապեցաւ. սակայն չխուսափեաց 'ի մնհուանէ. այլ և բազում ևս ճաղանօք կրեաց. զի ոչ լոկ մահ մեռաւ, այլ զմեղաւորաց։ Լու նախ քան զմահն՝ տանջանս կրեաց. և յառաջ քան զտանջանսն՝ նախատինս և դաղրվանս և բամբասանս, առ զքեզ խրատելոյ՝ տանել ամի ժուժկալութիւն։ Լ.յլ սակայն մեռաւ, մերկացաւ զմարմինն, և դարձեալ միւսանգամ էառ զնա փառօք. և այնու ևս զյոյսն [1] բարութեան եդաւ առաջի քո։ Ոչ չիցեն այն ամ առասպելք, ապա մի աշխարեր։ Լ.թէ հաւատարիմ համարիցես զայն, ապա մի արտասուեր. և եթէ արտասուես, զիարդ կարիցես հաւանեցուցանել զՀեթանոսն՝ եթէ հաւատաս։

Լ.յլ թերևս անհանդուրժելի իրքն թուիցին. թէ այնպէս իցէ, նմին իրի չէ պարտ աշխարել. քանզի 'ի բազում յայնպիսի վշտաց զերծաւ։ Այ այսուհետև նախանձ առնիցես ընդ նա, և չարակնիցես, զի բուժեցաւ 'ի տարաժամ մահուն. արդ զայն աշխարիցես, թէ ընդէ՞ր ոչ եկաց և բազում վիշտս կրեաց. այլ նախանձու և խանտալոյ։ Լու արդ մի զայն զմտաւ ածիցես, թէ չդառնայ այսուհետև 'ի տուն. այլ զայն զի դու յետ սակաւ միոյ առ նա երթալոց ես։ Լու մի զայն խորհեսցիս, թէ ոչ ևս գայ միւսանգամ այս երկն, այլ զայն՝ թէ որ երևինս, չկայ ցանդ այսպէս, այլ կերպարանափոխ լինի։ Օ ի և երկինք և երկիր և ծով և ամ ինչ զկերպարանս փոփոխելոց է. և յայնժամ առնուցուս այդրէն 'ի քեզ փառօք զորդին քո։

Լու եթէ մեղաւոր չոգաւ, յայլոց ևս չարեացն դադարեաց. քանզի գիտէ՞ ած, եթէ դառնալոց ինչ էր,

1 Յորինակին Ն.յն. եդաք ըստ լուս։

ոչ յառաջագոյն քան զսպաշխարութիւնն յափշտակէր։ Եւ եթէ արդար իցէ, յամրի տարաւ հանգոյց զբարութիւնն՝ զոր շահեցաւ։ Աստի յայտ իսկ է, թէ ոչ առ գութ ինչ են արտասուք, այլ առ անհանձար սգոյ։ Վանզի թէ զգնացեալն սիրէիր, ուրախ լինել և բերկրել պարտ էր, զի յաստի ալեաց ապրեցաւ։ Օ՞ինչ ինչ աւելի է՝ ասա ինձ. զի՞նչ ինչ չքնաղ լինիցի և նոր։ Ա՞յ ապաքէն հանապազ տեսանէաք զնոյն տիւ և զգիշեր շուրջ եկեալ, փարեալ զմիմեանսիք գիշեր և տիւ, ձմեռն և ամառն, գարուն և աշուն. և այլ ինչ ոչ աւելի։ Եւ նոքա նոյնք կան, և յարիւ՝ նորք և օտարք։ Բ.ոդ կամիր, զի հանապազ զայն ևեթ պեղեր. զի ասա կայր, և 'ի ցաւս մաշէր, և 'ի սուգ ծիւրաներ, և 'ի կասկած և 'ի դողութեան կայր. և զկեսս 'ի վշտաց կրեր, և զկիսոցն կասկածն ուներ 'ի մտի։ Եւ զայն չկարես ասել, թէ չանկաներ 'ի վիշտս։ Մարթի և 'ի ծովէ ալեաց պակասել, և ոչ մարդկան 'ի վշտաց և 'ի հոգոց պակասել։

Ընդ այսմ և զայն ած զմտաւ, զի ոչ անմահ ծնար զնա։ Եւ եթէ այժմ չէր մեռեալ, յետ սակաւ միոյ զնոյն կրեր։ Բ.ոլ չլցար արդեւք նոսա. այլ անդ վայելեսցես նոսա։ Իսկ ասա՛ն ցանկանայցես տեսանել. և զի՞նչ արգել իցէ. մարթի և ասա՛ն տեսանել՝ եթէ սթափիցիս։ Օ՞ի յոյս հանդերձելոյն քան զայս ևս յայտնագոյն է։ Եւ եթէ յարքունիս էր, ոչ երբէք կամիր տեսանել զնա. մանաւանդ թէ լսեիր՝ ևս, զի յառաջադէմ է. և արդ զի յառաւել բարութիւն տեսանիցես երթեալ դադարեալ, վասն սակաւ ժամանակիս փոքրոգի դառնիցիս։ Եւ այն զի ընդ որդւոյն այր ևս գլուխ ունիցիս. իսկ չունի՞ս այր. ունիս մխիթարիչ զՀայրն որբոց, զդաւառոն այրեաց։ Ա՞ուր Պաւղոսի՝ որ այնպիսի այրւոյն տայ երանի. «Շնմարիտ, ասէ, այրին միայնացեալ և յուսացեալ 'ի Տէր»։ Վանզի և ընտիր գտանի այնպիսին, և բազում համբերութեամբ լի։

Եւ արդ մի՞ աշխարիցես զայն վասն որոյ պակաս-

1 'Ի լուս. զի տեսէր։

լոցն իցես, ընդ որոյ վարձս պահանջիցես։ Քանզի դարձուցեր անդրէն զաւանդն՝ զոր առեր 'ի ձոնէ. յանդիման կացուցեր. և մի և այսուհետև կասկածիցես. յանդղական տեղւոջն եդիր զստացուածն, 'ի գանձն արքունի համբարեցեր։ Այս եթէ 'ի վերայ հասանիցես, եթէ զինչ այս աշխարհ իցէ, և զինչ հանդերձեալքն. և զի այս սարդիոստայն է և ըստուեր, և անդ ամ անմահ է և անշարժ, չկարօտանայցես այսուհետև այլոց և ս բանից։ Այժմ աւաղ սիկ յամ փոփոխմանց ազատացաւ մանուկն։ Թէ աստ էր, թերևս պիտանի չլինէր, ուչ նոյնպիսի կայր ցբուն։ Թէ չտեսանիցես, քանի են՝ որ զիւրեանց որդիսն տարագիրս առնեն. և որչափ այնոքիկ՝ որ զևս վատթարսն որքան զտարագրեալսն նեղեն 'ի տան ուներ առ կարօտութեն։

Օ այս ամ իմացեալ՝ ցածցուք զգաստասցուք. զի այնպէս և զվախճանեսն ուրախ առնեմք, և 'ի մարդկանէ բազում գովութիս առնուցումք, և յայ մեծ վարձս ընդ համբերութեն. և յաւիտենից բարուեցն հասանիցեմք շնորհօքն և մարդասիրութեամբ տն մերոյ Յսի Քրսի. ընդ որում հօր և Սոր հոգւոյն վայելէ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ԵԻԹՆԵՐՈՐԴ

«Եւ մինչդեռ անցանէր, ասէ, Յն ընդ այն, զՀետ երթային նոցա կոյրք երկու, աղաղակէին և ասէին, ողորմեաց մեզ որդի Դաւթի։ Եւ իբրև եմուտ 'ի տունն, մատեան առ նա կոյրքն. և ասէ ցնոսա Յն, հաւատայք եթէ կարօղ եմ առնել ձեզ զայդ։ Ասեն ցնա, այո՛ Տեր։ Եւ մերձեցաւ յաչս նոցա, և ասէ. ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ. և վաղվաղակի բացան աչք նոցա»։

Եւ ընդէր այնպէս արդեւք ձգեալ տանէր զնոսա յապաղելով, և ստէպ տայր աղաղակել։ Դարձեալ և այս ևս ուսուցանէ զմեզ 'ի բաց առնել յանձանց զառ 'ի բաղմաց փառաւորութիւն։ Վասնզի մեծ 'ի տուն էին, տանի զնոսա 'ի ներքս, և առանձին բժշկէ։ Եւ այս 'ի պատուիրելոյն յայտ է. «Մի՛ ումեք, ասէ, 'ի վերս հանիցէք»։ Եւ ոչ սակաւ ամբաստանուն էր զՀրէշէյն. զի սոքա աչօք խափուցելովք՝ 'ի լսելոյ ևեթ հաւատային, և նոքա աչօք բացօք՝ և ոչ զործոյն վկայէին. նա և զքանչելիսն տեսանէին, և զամենայն ինչ ընդ հակառակս զործէին։ Եւ արդ տես զյոժարութիւն նոցա՝ և յաղաղակելոյն և 'ի մատչելոյն. զի ոչ վայրապար ինչ մերձեցան, այլ մեծաձայն աղաղակէին. ոչ այլ ինչ, այլ զողորմութիւն եդեալ առաջի աղերսիւ։ Որդի Դաւթի կոչէին, զի պատուական իսկ համարեալ էր նոցա անունն. զի բազում ուրեք և մարգարէքն իսկ յորժամ զթագաւորս պատուել կամէին, և մեծս երևեցուցանել, նոյնպէս յայն անուն կոչէին զնոսա։

Եւ իբրև հրամայեաց ածել զառաջեաւ, կրկին զնոյն հարցանէ։ Ամենայն ուրեք աղաչանաց մնայ, և ասա բժշկէ. զի մի կարծիցի՝ թէ առ պարծանս ինչ ընդ առաջ երթիցէ աբանչելեօքն։ Եւ ոչ վասն այնորիկ միայն, այլ զի և ցուցցէ՝ թէ արժանի են բժշկութեան. զի մի ոք ասիցէ, թէ առ ողորմել կեցու-

ցանէ, զամենեսեան իսկ պարտ էր կեցուցանել։ Բ.ԱԼ և մարդասիրութեան են ինչ պարծանք, այն իսկ է փրկելոյն հաւատք։ Բ.Ն ոչ վասն այնորիկ միայն պա-հանջէ զհաւատսն, այլ զի և Դաւթի որդի կոչէին, հանէ զնոսա 'ի բարձրագոյնսն, և ուսուցանէ՝ թէ զինչ ինչ պարտ էր իմանալ զնմանէ։

«Հաւատայք, ասէ, թէ կարող եմ առնել ձեզ զայդ»։ Բ.Ն ոչ ասաց՝ թէ հաւատայք, զի կարող եմ բարեիսօս լինել առ հայր իմ կամ աղաչել, այլ թէ ես իսկ կարող եմ առնել։ Բ.Ն նոքա առ այն զինչ ասէն։ «Բ.յո՛ն ՝ներ»։ Բ.Ն ոչ և ես որդի Դաւթի կոչէին զնա, այլ 'ի բարձրագոյնսն վերացեալք՝ զան-ուանէին իսկ խոստովանէին։ Բ.Ն այնուհետև նա դնէ ձեռն, և ասէ. «Ի՞ստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ»։ Ո՞այս այսպէս առնելով զհաւատս նոցա հաստատէ. ցուցանէր բաժանորդ լինել զնոսա բժշկութեան. և ցուցանէ՝ թէ ոչ պաշտօն ինչ առնելոյ վասն էին բանքն. քանզի ոչ ասաց թէ բացցին աչք ձեր, այլ թէ «Ի՞ստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ». զոր բաղ-մաց իսկ 'ի մատուցելոյն ասէր։ Բ.այս քան զմարմնոյ բժշկութեան՝ ոգւոյն յառաջագոյն փութայր քարո-զել զհաւատս. զի զնոսա հաճոյս առնիցէ, և զայլսն 'ի փոյթ յորդորիցէ։ Որպէս անդամալուծին, զի նախ քան զանդամարմնոյն՝ զանկեալ ոգին կանգնէր. քաջալերեաց, ասէ, որդեակ, թողան քեզ մեղքդ. զաղջիկն յորժամ յարոյց, զձեռանէն ունէր, և սե-զանովն ցուցանէր զերախտաւորութիւնն. և հարիւ-րապետին զնոյն արարեալ՝ 'ի հաւատոց կողմանէ զնէ զնա՝. և զաշակերտսն յորժամ 'ի խռովութէ ծո-վուն ապրեցուցանել կամէր, նախ 'ի թերահաւատու-թենէն զերծուցանէր։ Բ.ոյնպէս և ասա. յառաջ քան զլաբբառեալն նոցա գիտէր զծածուկս մտայն նոցա. զի զայլս 'ի նոցա նախանձ անդ յորդորիցէ, և բաղմաց բժշկութեամբն զծածուկ հաւատս նոցա յայտնիցէ։

Բ.պա յետ բժշկութեն հրաման տայ՝ մի ումեք 'ի վեր հանել. և ոչ վայրապար ինչ պատուիրէ, այլ բազում սաստկութիւ։ «Ասատեաց 'ի նոսա ՝ն», և ասէ. տեսէք՝ մի ոք գիտասցէ»։ Բ.այց նոքա ոչինչ

անսային, այլ քարողք և աւետարանիչք լինէին. և արդեւսն ծածկել զգործն, և չանսացին։ Զի թէ և այլուր էր ասացեալ՝ երթ պատմեա զիտառն ՝ի, չէ ինչ այսմ՝ հակառակ, այլ կարի իսկ յոյժ միաբան։ Խրատէ այսուիկ, զի մեք անձամբ զանձինս մի յարգիցեմք. և եթէ այլք ևս կամիցին յարգել, մի առնուցումք յանձն։ Այսպա թէ յոյ փառս ինչ լցեն իրք, ոչ միայն չպարտիմք արդելուլ, այլ և ստիպել ևս զնոյն առնել։

«Զի իբրև ելին նոքա անտի, ահաւասիկ մատուցին առ նա այր մի խուլ և համր և դիւահար»։ Զի ոչ թէ 'ի բնէ ինչ էր ախտն, այլ 'ի դիւին վնասակարութենէ։ Զան որոյ և այլք իսկ մատուցանէին. զի չէր կարող անձամբ աղաչել, քանզի համր էր. և ոչ զայլս աղաչել կարէր, զի դիւին կապեալ էր զլեզուն, և զմիտն ընդ լեզուին։ Զան այնորիկ ոչ պահանջէր 'ի նմանէ հաւատս, այլ՝ վաղվաղակի բժշկէր 'ի ցաւոցն։

«Զի յելանել դիւին՝ խօսեցաւ համրն։ Զարմանային ժողովուրդն և ասէին, եթէ ոչ երբէք՝ երևեցաւ այսպիսի յԻսրայելի»։ Զի կարի զայրացուցանէր զփարիսեցիսն, զի առաւել քան զամենեսեան զնա յարգէին. ոչ քան զնոսա ևեթ՝ որ յայնժամ էին, այլ քան զառաջինսն։ Զ'չ զի բժշկէրն՝ համարէին զնա մեծ, այլ զի վաղվաղակի և դիւրաւ զբաղում անհնարին ցաւս, որոց ոչ ոք ունէր ակն՝ թէ բժշկելոց իցեն։ Զի ժողովուրդն այնպէս զարմանային. բայց փարիսեցիքն ասէին զնորին հակառակն. ոչ միայն զգործսն որ գործէին 'ի նմանէ՝ խոտէին, այլ և անձանց իսկ հակառակ խօսէին, և ոչ ամաչէին. զի այնպիսի իսկ է չարութիւն։

«Զիսնանաւ դիւաց, ասէ, հանէ դա զդևս»։ Զան զոր զնչ այլ կայցէ անմտութիւն՝ Զանաւանդ զոր յառաջ մատուցեալ՝ ասէր, թէ չէ հնար դիւի զդև հանել. զի ժողովել սովոր է զիւրսն, և ոչ օգտել։ Զսկ նա ոչ միայն զդևս հանէր, այլ և զբորոտս սրբեաց, և զմեռեալս յարոյց, և զծով սանձեաց, և զմեղս թողոյր, և զարքայութիւն քարոզէր, և առ հայր մերձեցուցանէր. զոր ոչ երբէք ախորժեն դևք, և

ոչ յօժարեն զայն առնել։ Օ՛ի գիւք յայ հանեն, և առ կուռսն մերձեցուցանեն, և 'ի հանդերձեալ կեանսն ջնանն առնել թերահաւատ։ Դ՝և թշնամանեալ՝ բարի ինչ ունիք ոչ առնէ. նա և յորժամ չը-թշնամանիցի իսկ, փնաս առնիցէն պաշտօնէից իւրոց՝ որք զնա պաշտիցեն։ Իսկ սա զհակառակն նորին առնէ՝ յետ այնչափ թշնամանաց և բամբասանաց։

«Շ ը՛ջէր, ասէ, ընդ քաղաքս և ընդ գեօղս, ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զաւետարան արքայութեն երկնից, և բժշկէր զամենայն հիւանդութիս և զնա՛մ ցաւս»։ Դ՝ու ոչ միայն չպատժէր զանհաւատսն, այլ և ոչ դոյզն սաստիւ սաստէր. միանգամայն զի և զհեզութեն ցուցանիցէ, և զամբաստանութեն յանդիմանեսցէ. միանգամայն և այլովք ևս նշանօք զհանդէս զօրութեն կամի ցուցանել. ապա և բանիւք իսկ յանդիմանէր։ «Շ ը՛ջէր, ասէ, ընդ քաղաքս և ընդ գեօղս և 'ի ժողովուրդս նոցա». զի զմեզ ուսուցանիցէ չարախօսացն՝ ոչ չարութե՛ամբ, այլ մեծաւ երախտեօք պատահել։ Օ՛ի թէ ոչ վասն մարդկան, այլ վասն ա՛յ առնէս երախտիս ծառայակցացն, որչափ և բամբասիցեն՝ սակայն դու 'ի բարիս առնելոյ մի կասեսցիս, զի ևս մեծաց վարձուց ընդունիս արժանի։ Իսկ որ յետ չարախօսութեն կասիցէ ինչ 'ի բարիս առնելոյ, յայտ առնէ՝ թէ վասն նոցա յարգանաց և ոչ վասն ա՛յ առեալ էր 'ի ձեռն զառաքինութեն։ Վասն այնորիկ խրատէ զմեզ Դ՝ա՛՝, թէ առ բարերարութե՛ միայն եկն յայն. զի ոչ միայն յայնմ մնայր՝ թէ առ նա գայցէն հիւանդքն, այլ և ինքն իսկ փութայր առ նոսա երթալ. մանաւանդ երկուս իսկ բարութիս տարեալ պարգևէր. մի՝ զարքայութեանն աւետիս խոստանայր. և միւս՝ զպէսպէս ցաւոց բժշկութի՛. ոչ զգեօղս թողոյր, և ոչ զքաղաքաւանցս առնէր, այլ յա՛՝մ տեղիս երթայր. և ոչ այսչափ միայն, այլ և միւս ևս ինամ [1] ցուցանէր։

«Դ՝տես, ասէ, զժողովուրդն, և գթացաւ 'ի նոսա. զի աշխատեալք էին և անկեալք իբրև զոչխարս՝ որոց ոչ իցէ հովիւ։ Յայնժամ՝, ասէ, ցաշակերտսն.

1 Յորինակին հրման. եղաք ըստ լուս։

հունձք բազումք են, և մշակք սակաւք. արդ աղաչեցէք զտէր հնձոց, զի հանցէ մշակս 'ի հունձս իւր »։ Ցէս դարձեալ և աստ զանմեծարգութիւն. զի զամենեսեան առ ինքն ձգիցէ, առաքէ զաշակերտսն։ Ա՛չ վասն այնորիկ միայն, այլ զի և զնոսա խրատիցէ իբրև 'ի հրահանգս ինչ. նախ 'ի պաղեստինացւոց աշխարհին վարժէր զնոսա, և ապա 'ի պատերազմ ընդ ոմանս տիեզերս առաքէր։ Ոմն այնորիկ զհրահանգսն առաւել մեծ քան զպատերազմունսն դնէ, որչափ նոցա ինչ պատշաճ իցէ առաքինութիւն. զի դիւրագոյն առ 'ի յապա խառնիցէ ընդ ձակատս. իբրև զձագս ինչ նորափետուրս հասուցեալ 'ի թռիչս արձակիցէ։ Բ՛ռ ժամանակն՝ մարմնոյ և եթ բժիշկս առնէ զնոսա. յետոյ և զոգւոյ իսկ բժշկարանս տայ 'ի ձեռս նոցա՝ զլուն և զկարևորն. և տէս, զիարդ դիւրագոյն զլիսն ցուցանէ։

« Հունձք, ասէ, բազումք են, և մշակք սակաւք». ոչ 'ի սերմանել ինչ առաքեմ զձեզ, այլ 'ի հնձել։ Օ՛որ և Յովհաննէս ասէ, թէ « Բ՛.յլք աշխատեցան՝, և դուք 'ի վաստակս նոցա մտէք »։ Օ՛այս ա սեղով՝ և զմտացն հպարտութիւն ցածուցանէ, և խրատ խոյս իմն աւելի տայ. և ցուցանէ՝ թէ մեծ ջանն անցեալ է. միտ դիր և աստ, զի մարդասիրութիւն է, և ոչ երախտիք։

« Գ՛թացաւ, ասէ, զի աշխատեալք էին և անկեալք իբրև զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ »։ Բ՛ս այս զիշխանաց հրէիցն է ամբաստանութիւն. զի հովիւք էին, և զգայլոց գործ գործէին. ոչ միայն ուղղութիւս ինչ չցուցանէին, այլ և զայլոց ևս յառաջադիմութիւն ապականէին։ Ա՛ինչդեռ ժողովուրդքն զարմանային և ասէին, թէ « Ա՛չ երբէք երևեցաւ այսպիսի Յ՛ս բայելի », նոքա ընդդէմ դարձեալ բամբասէին, թէ « Յ՛շխանաւ դիւաց հանէ դա զդևս »։

Ա՛շակս աստ զերկոտասանսն կոչէ։ « Ա՛շակք, ասէ, սակաւք են »։ Ա՛ի թէ յաւէլ զոք 'ի նոսա։ Ա՛չ. այլ զնոսա միայն առաքեաց. և վասն էր ասէ, « Բ՛ղաչեցէք զտէր հնձոցն, զի հանցէ մշակս 'ի հունձս

1 'Ի ԼՍՍ. ՄՇՆԷՐԳԵՅՍ։

իւր », և յաւելուած ինչ 'ի նոսա ոչ արար։ Օ՛ի զերկոտասանսն իսկ բաղումն արար այնուհետև. ոչ թուոյ ինչ յաւելուածով, այլ զօրութիւն ընդարձակելով։ Այս զի ցուցանիցէ՝ թէ որպիսի ինչ պարգևն իցէ, « Զաչեցէք, ասէ, զնոր հնձոց »։ Այս ընդ աղօտ տա- կաւին զանձն մեղմով ակնարկէ, թէ ինքն է նոր պարգևացն։ « Զաչեցէք, ասէ, զնոր հնձոցն »։ Այս մինչ- չև նոցա յաղօթս կացեալ էր, և ոչ խնդրեալ, ինքն իսկ տայր նոցա զձեռնադրութիւն։ Այս յուշ առնէ զբանն Յովհաննու՝ զկալոյն և զհոսողին և զյարդին և զցորենոյն զընտրութիւն. ուստի յայտ իսկ է, թէ ինքն է մշակ, և ինքն է նոր հնձոցն, և մարդա- բերիցն հրամանատար. զի հնձել առաքեաց, յայտ է՝ ոչ զօտարոտի ինչ, այլ զոր ինքն մարգարէիւքն սերմանեաց։ Այս ոչ միայն հունձս կոչելով զնոցա սպասաւորութիւն՝ տայր խրախոյս նոցա, այլ ևս հզօրս առնելով զնոցա սպասաւորութիւն։

« Այս կոչեաց զերկոտասանսն աշակերտսն, և ետ նո- ցա իշխանութիւն հանելոյ զայսս պիղծս. և բժշկել զամ զցաւս և զշիւանդութիւնս »։ Զոչիպետ և չև ևս էր զհոգին տուեալ. « Ողջ ևս էր, ասէ, հոգի, քանզի Յն չև էր փառաւորեալ »։ Այս զիարդ հանէին զայսն պիղծ, թէ ոչ նորա իշխանութիւն, և նորին հրամանաւ։ Այս միտ դիր, զիարդ 'ի դէպ ժամանակի է առաքելութիւն, և ոչ անդէն 'ի սկզբանն առա- քեաց, այլ յորժամ շատ շրջելով ընդ նմա վայելեալ էին. զմեռեալս տեսանէին յարուցեալ, և ծռվուն սաստեալ, և զդևսն հալածեալ, և զանդամալոյծս պնդեալ, և զմեղս լուծեալ, և զբորոտս սրբեալ, և զաղաւամ ևս զչափ և զհանդէս առեալ զզօրութիւն՝ և արդեամբք և բանիւք. և ապա առաքէ. և ոչ 'ի դժուարին ինչ երկիրս. և 'ի ժամանակի, զի չև ևս յայնժամ 'ի պաղեստինացւոց աշխարհին գոյր նոցա կասկած ինչ։ Այլ յառաջ քան զմեղադրութիւն պարտ էր յանգուցանել միայն. սակայն զայն յառաջագոյն ասաց նոցա, և յետոյ ևս՝ թէ վիշտք հասանելոց էին 'ի վերայ նոցա և կասկածս. և պատրաստագոյն առնէ զնոսա՝ ստէպ յառաջագոյն զնոյն ասելով։

Բանզի զերկուց ևԵթ զզուգացն՝ թէ որպէս կո-
չեացն, յայտ արար, զՊետրոսեանցն և զՅովհան-
նեանցն. և յետ նոցա զՄատթէոս նոյնպէս կոչեալ
ցուցանէ. և զայլոց առաքելոցն կոչմանէն, և զա-
նուանց նոցա զյորջորջանացս չարար ինչ յայտ, սատ
կարևոր ինն համարի և զթիւն և զիւրաքանչիւր ա-
նուանս 'ի մէջ բերել ասելովն, թէ «Լուկոտասանից
առաքելոցն էին անուանքն այսոքիկ. առաջինն՝ Սի-
մոնն, որ անուանեցաւն Պետրոս»։
Բանզի միւս ևս Սիմոնն էր՝ կանանացին, և Յու-
դա սկարիովտացին՝ և Յուդա Յակոբայն, Յակոբոս
Մ.ալփեայ և Յակովբոս Օ.եբեդեայ։ Իսկ Մարկոս ըստ
իւրաքանչիւր պատուոյ կարգ ըստ կարգի դնէ զա-
նուանսն. զի յետ երկուց զլեաւորացն՝ ապա զՄ.
գրէաս ածէ 'ի թիւ։ Բայց սա ոչ այսպիսի ինչ, այլ
խառն 'ի խուռն ինն. մանաւանդ զի և զՄովսէս
իսկ՝ որ հուսկ վերջին է, առաջին դնէ։ Բ.ոդ տես-
ցուք անդուստ 'ի վերուստ զիւրաքանչիւր կարգնոցա։
«Բ.ոաջինն՝ Սիմոնն, որ անուանեցաւ Պետրոս, և
Անդրէաս եղբայր նորա»։ Ո՛չինչ սակաւ յարգանք
են և այս, զի զմինն յառաքինութեանն, և զմիւսն
յաղգականութե՝։ օրինակի անուանեաց։ Բ.պա զՅա-
կոբոս Օ.եբեդեայ, և զՅովհաննէս եղբայր նորա։
Տես զիարդ ոչ ըստ իւրաքանչիւր պատուոյ դնէ։
Մ.ասի ինձ՝ թէ Յովհաննէս ոչ քան զայլսն միայն,
այլ և քան զեղբայրն մեծ իցէ։ Բ.պա ասացեալ զՓի-
լիպպոս և զՄարթողիմէոս, յարէ 'ի նոյն և զՄովս-
մոս և զՄատթէոս մաքսաւորն։ Իսկ Ղուկաս ոչ
այսպիսի ինչ, այլ անդրէն ընդդէմ, զսա յառաջ
դնէ քան զՄովսէս։ ԼՒ ապա զՅակովբոս Մ.ալփեայ,
քանզի որպէս ասացի՝ էր և զեբեդեան։ Բ.պա և
զՂեբէոս՝ որ անուանեցաւն Թադէոս, և զՍիմոնն
նախանձայոյզ, զոր և կանանացին կոչէ։ ԼՒ յետոյ
'ի մնանելն գայ, և ոչ իբրև զԹշնամւոյ ուսեալ, այլ
իբրև զպատմագիր պատմէ ստոյգ զնա։ Բանզի ոչ
ասաց, ժանտի և ամենաժանտի, այլ 'ի քաղաքին
անուանէ կոչէ՝ թէ Յուդա սկարիովտացի. զի գոյր

1 Յօրինակին յաքանութիւն։

և այլ Յուդա։ Պ երէոս՝ որ անուանեցաւն Թադ-
դէոս. զոր Յակոբայն ասէ Պ ուկաս, թէ «Յուդաս
Յակոբեայն». զի 'ի սմանէ՝ զատանիցէ զնա, Յու-
դա սկարիովտացի կոչէ զնա և մատնիչ. քանզի ոչ
'ի Թշնամանացն՝ որ նախատինս կարծին, թաքու-
ցանեն։ ԼՀ նախ զլխաւորն ամենեցունց՝ ոգեաւ և
առանց դպրութեան էր։ ԼՀ արդ տեսցուք, յոս[1] և
առ յոյս առաքեսցէ զնոսա։

«Օ սոսա, ասէ, զերկոտասանեսին առաքեաց ՅՀ»։
Օ սոսա. զո՞. զձկնորսսն և զմաքսաւորսն. զի չորքն
'ի նոցանէ ձկնորք էին, և երկուսն մաքսաւորք,
Մատթէոս և Յակոբոս. բայց միոն և մատնիչ իսկ։
ԼՀ զինչ ասիցէ ցնոսա անդէն վաղվաղակի։ «Պա-
տուիրեաց, թէ ընդ Ճանապարհս հեթանոսաց մի եր-
թիցէք, և 'ի քաղաքս շամրտացւոց մի մտանիցէք.
այլ երթայք մանաւանդ առ ոչխարս կորուսեալս
տանն Իսրայելի»։

Մի, ասէ, կարծիցէք, թէ վասն զի Թշնամանեն զիս
և դիւահար կոչեն, ատեմ զնոսա և զերեսս դարձու-
ցանեմ։ Օ 'ի նախ զնոսա փութացայ ածել յուղ-
ղութիւն. և զձեզ արգելում յայլոց, և առ նոսա ա-
ռաքեմ վարդապետս և բժիշկս. և ոչ միայն յա-
ռաջքան նոցա պատմել՝ արգելում յայլոց, այլ և
ընդհարկանիլ իսկ ընդ Ճանապարհ՝ որ առ այլսն
տանիցի, չհրամայեմ. և ոչ 'ի քաղաքս շամրտացւոց
մտանել. քանզի շամրտացիքն ընդ հակառակ իմն են
հրէիցն։ ԼՀ թէպէտ և նոքա դիւրահաւանք էին 'ի
հաւատս, և սոքա դժնդակք, առ դժնդակսն առաա-
քէ, զի զնմանսն՝ զոր ունէր առ նոսա՝ ցուցանէ, և
զբերանս հրէիցն անամոթիցն կարկիցէ. և Ճանա-
պարհ հորդիցէ վարդապետութեան առաքելոցն։ Օ 'ի
մի միւսանգամ մեղադիր լինիցին, թէ առ անթլիւ-
փատսն չոգան, և իրաւունս ինչ համարիցին զմիսա-
չէնն։ ԼՀվաթս կորուսեալս կոչէ զնոսա, և ոչ սրա-
ցեալս, զի ամենևին զպատՃառս ներելոց և թողութեան
հնարիցի, և յանդուցանիցէ յինքն զմիտս նոցա։

«ԼՀրթեալ քարոզեսջիք, ասէ, և ասասջիք, թէ

[1] Թերևս յոՀ։

մերձեալ է արքայութիւն երկնից »։ Յեսանեն զսպասաւորութիւն առաքելութեան. տեսանեն զառաքելութիւն զպատիւն։ Ոչ ինչ երևելի կամ մարմնաւոր հրամայէ ասել, որպէս Մովսէսի և առաջնոց մարգարէիցն, այլ նոր իմն և չքնաղ։ Զի նոքա ոչ այսպիսի ինչ քարոզէին, այլ զերկրի բարութիւն. իսկ սոքա զարքայութիւն, և որ ինչ անդ երանութիւնքն իցեն։ Եւ ոչ այսու միայն մեծամեծք իցեն սոքա, այլ և հնազանդութեամբն. զի ոչ դանդաղէին ինչ և վհատէին իբրև զառաջինսն. թեպետ և զվշտացն և զպատերազմացն և զանհնարին չարչարանացն լսէին, որ քարոզքն էին, բազում համարձակութիւն ընդունէին զհրամանսն։

Եւ զինչ, ասեն, զարմանք իցեն, յորժամ ոչ տրրտմականս ինչ էին քարոզելոց, եթէ վաղվաղակի հնազանդէին։ Զինչ խօսիս, թէ չհրամայեցան տրտմականս ինչ քարոզել։ Զլսիցես զինչ ասէր յառաջագոյն, եթէ կապանք և բանտք պատահելոց են ձեզ, պատերազմունք յընտանեաց և յօտարաց, ամենեցունց ատելի լինիք. որ յետոյ՝ այլոց բազում բարութեամբ լինելոց էին առիթք և քարոզք։ Անհնարին, ասէ, չարչարանք չարչարելոց իցէք։ Եւ զոր ինչ յառաջագոյն ասաց, արդեամբք իսկ ցուցանէ. և անդէն տայ զառհաւատչեայ իշխանութիւն։

« Զիւանդս, ասէ, բժշկեցէք, զբորոտս սրբեցէք, զդեւս հանէք. ձրի առէք, և ձրի տուք »։ Յեսանեն, զի քան զնշանսն առնել՝ զմիտսն յարդարել կամի. զի նշանքն առանց մտաց ուղղութեամբ չէին ինչ օգուտ։ Զի զմիտսն ցածուցանիցէ, և յընչասիրութենէ սրբիցէ, « Ձրի, ասէ, առէք և ձրի տայջիք »։ Այսպէս զի մի կարծիցի՝ թէ նոցա իցէ ուղղութիւն, և հպարտանայցեն ինչ նշանօքն, ասէ. ձրի առէք, և ոչ յանձանց ինչ շնորհ. և ձրի ձերոց ընդունելեացն առնիցէք։ Վասնզի ոչ եթէ վարձուք ինչ վարձեցայք, կամ գնեցէք. իմ են շնորհք. որպէս յինէն ձրի առէք, նոյնպէս և դուք ձրի տուք. քանզի չիք ինչ արժանաւոր շնորհացդ դատանել։

Եւ զի զարմատ ամենայն չարեացն վաղվաղակի խլեսցէ, ասէ. « Մի ստանայք ոսկի, և մի արծաթ,

և մի պղինձ 'ի գոտիս ձեր, և մի պարկ 'ի Ճանապարհի, և մի երկուս պարեգօտս, մի կօշիկ և մի ցուպ »։ Այլ ոչ ասաց թէ մի առնուք ընդ ձեզ. բայց եթէ այլ ուստեք մուտ լինիցի, փախնուցուք 'ի չարէն։ Այս և բազում ինչ իսկ այն յարգարէ. մի՝ զի առանց կարծեաց առնէ զաշակերտսն. երկրորդ անգամ՝ ազատել յամ հոգոց, զի ամենևին բանին և եթ պատրաստ իցեն. երրորդ անգամ՝ զի ցուցանիցէ զիւրոյ զօրութիւնն զՀանդէս. զոր և յետոյ իսկ ասէր, « Այնթէ պակասեաց ինչ ձեզ՝ յորժամ առաքեցի զձեզ մերկս և բոկս »։ Այլ ոչ նախ ասաց՝ թէ մի ինչ ստանայցէք. այլ յորժամ ասաց՝ եթէ զբորոտս սրբիջիք, և զդևս հանիջիք, և ձրի առէք և ձրի տուք, ապա ասէ՝ թէ մի ինչ ստանայցէք. և այսու զպարտն և զպատշաՃ իրաց նոցա, և եթէ կարօղ են իրքն տալ զամենայն, յայտ առնէ։

Այլ թերևս ասիցէ ոք, թէ այդ ՃամՃ 'ի դէպ է. այլ զպարէն 'ի Ճանապարհի չբառնալ և երկուս պարեգօտս և ցուպ և կօշիկս ընդէր չհրամայիցես։ Զ'գլուխ իսկ առաքինութեաց կամի հանել զնոսա. որպէս վերագոյն և ոչ զվաղուն հրամայէ հոգալ։ Զ'ամենայն զի ընդհանուր իսկ ՃամՃ տիեզերաց առաքելոց էր զնոսա վարդապետս, իբրև զհրեշտակս 'ի մարդկանէ կամի յարդարել զնոսա. անհոգս և ազատս յամենայն հոգոց երկրաւորաց կատարել։ Զ'ի մի և մի ինչ իրօք ըմբռնիցին 'ի հոգոց, այլ միայն վարդապետութեանն և եթէ սկիցեն։ Զ'անաւանդ զի և անտի ևս անհոգս առնէ. « Զ'ի, ասէ, հոգայցէք, թէ զիարդ կամ զինչ խօսիցիք »։ զի որ ինչ կարի ծանրատաղտուկն թուէր՝ զայն ևս դիւրագոյն երևեցուցանէ։ Զ'ի չիք ինչ՝ որ այնպէս զմիտսն ուրախացուցանէ, որպէս 'ի հոգոց և 'ի տարտամութեաց փարատել. մանաւանդ յորժամ 'ի հոգոց ազատ լինիցին, և ՃՃ ևս մօտ կայցէ, և փոխանակ ընդ ամենայնի լինի ձեռնկալու։

Զ'ապա զի մի ասիցեն, թէ ուստի զկարևոր սիտս կերակրոյն վՃարիցեմք, ոչ ասաց՝ թէ լուարուք զոր յառաջագոյն իսկ ասացի՝ թէ նայեցարուք ընդ թռչունս երկնից. այլ քանզի չէ ևս հանդարտեին զհրամանն զայն արդեամբք ցուցանել, միւս ևս քան զնոյն

նուազագոյն բերեալ 'ի մէջ՝ ասէ. թէ «Արժանի է մեկն վարձու իւրոյ»։ Այսպէս առնէ՝ թէ յաշակերտ տելոյն պարտ է նոցա կերակրել. զի մի մեծամտիցեն ինչ առ աշակերտսն, որպէս թէ զամենայն ինչ շնորհիցեն, և 'ի նոցանէ ինչ չառնուցուն. զի և մի նոքա անջատիցին ինչ 'ի սոցա անտես առնելոյ. և զի մի ասիցեն՝ թէ մուրողութիւն հրամայեցեր կեալ մեզ, և ամենի ինչ զիրսն համարիցին, վասն այնորիկ իբրև զպարտս իմն ցուցանէ՝ զկերակրելն նոցա յաշակերտացն, մեկս անուանելով զնոսա, և զտուրսն վարձս կոչէ։ Մի, ասէ, զի բանիւք է գործն, փոքր ինչ համարիցիք զերախտիսն զոր առնիցէք. քանզի բաղում իսկ ջան կայ յիրսն. և զոր ինչ տայցեն աշակերտեալքն՝ ոչ եթէ ընդ շնորհս ինչ տայցեն, այլ ըստ պարտսն հատուցանիցեն։ Վասնզի «Արժանի իսկ է սատարն կերակրոյ իւրոյ»։ Զայս ասաց, ոչ զի այն չափ միայն իրաց արժանի զվաստակս առաքելոցն ցուցանիցէ. ծն անդր, քա՛ լեցի. այլ նոցա օրէնս դնէ մի աւելի ինչ խնդրել, և զտուիչսն հաւանեցուցանէ՝ թէ չէ առատութիւն գործն որ 'ի նոսա գործի, այլ պարտք։

«Յոր քաղաք, ասէ, կամ 'ի գեղ մտանիցէք, հարցանիջիք՝ թէ ո՞ է 'ի նմա արժանի, և անդ լինիջիք, մինչև ելանիցէք անտի»։ Ա՛յլ, ասէ, զի ասացի ձեզ՝ թէ արժանի է սատարն կերակրոյ իւրոյ, զամենայն դրուանս բացի ձեզ այնու. այլ զի և անդ բաղում ճշդիւ գնալ հրամայեմ. և այն իսկ 'ի փառս լինիցի ձեզ շահաւոր՝ առ 'ի կերակրել զպատշաճականն։ Զի թէ ընդունելոյ արժանի իցէ, հարկ է՝ զի և զկերակուրն ևս տացէ. մանաւանդ յորժամ աւելի ինչ ոչ քան զկարևորն խնդրիցէք։ Այլ ոչ միայն զարժանիսն ասպնջականութեան հրամայէ խնդրել, այլ ոչ 'ի տանէ 'ի տուն փոփոխել. մի զասպնջականն տրտմեցուցանել, և մի որկոծութիւն կարծիս՝ աւելի ինչ շուխթափելոյ առնուլ 'ի յանձինս։ Վասնզի ասելովն՝ թէ «Մնդ լինիջիք, մինչև ելանիցէք անտի», զայս յայտ առնէ։ Զ սոյն և յայլոց աւետարանչացն մարթի իմանալ։ Ցեսանես, զի և այսու ևս զնոսա պարկեշտագոյնս առնէ, և զասպնջականն անկասկածա-

գոյնս. եցոյց իսկ՝ եթէ նոքա աւետարանիս շահին փառս և օգուտ։ Դարձեալ 'ի սոյն յաւելուս, եթէ «Ի տունն՝ յոր մտանիցէք, ողջոյն տայջիք նմա։ Եթէ արժանի իցէ տունն, եկեսցէ ողջոյնն ձեր 'ի վերայ նորա. ապա թէ չիցէ արժանի, ողջոյնն ձեր 'ի ձեզ դարձցի»։ Տեսանես, մինչ յորչափ ոչ դադարէ 'ի պատուիրելոյ. և մանաւանդ յիրաւի իսկ է. զի նահատակս ՅԾՕՍԱՇՏՈՒԹԵ, և քարոզս ՅՄ աշխարհաց յարդարէ. և այսու խնամարհութիւն ուսուցանէ, և ցանկալիս առնէ։

«Եւ ուր չընդունիցին զձեզ, ասէ, և ոչ լսիցեն բանից ձերոց, յորժամ ելանիցիք 'ի տանէն կամ 'ի քաղաքէն, թօթափեսջիք զփոշի յոտից ձերոց. ամէն ասեմ ձեզ, դիւրագոյն լիցի երկրին սոդոմացւոց և գոմորացւոց յաւուրն դատաստանին՝ քան քաղաքին այնմիկ»։ Այ՛ի, զի ուսուցանիցէքն, վասն այնորիկ ակն ունիցիք՝ զի այլք նախ ձեզ ողջոյն տայցեն, այլ դուք նախ գնոսա պատուեսջիք։ Եւ զի ցուցանիցէ, թէ ոչ ողջոյն միայն լոկ է, այլ և օրհնուն, ասէ. «Լիակ իցէ տունն արժանի, եկեսցէ ողջոյնն ձեր 'ի վերայ նորա». ապա թէ թշնամի իցէ, նախ այն իսկ տանջանք են, չվայելելն յողջունին. երկրորդ անգամ, զի զսոդոմացւոցն զտանջանսն կրիցեն։ և ձեզ զինչ փնաս իցեն, ասէ, նոցա տանջանքն, յորժամ դուք զարժանեաց տունս ունիցիք։

Եւ զինչ կամիցի ասելն, թէ «Թօթափեսջիք ըզփոշի յոտից ձերոց»։ Օ՛ի ցուցանիցեն՝ եթէ ոչինչ առին 'ի նոցանէ. կամ՝ զի 'ի վկայութիւն լինիցի, եթէ երանելի հիւրութենն՝ որ վասն նոցա էր՝ չեղեն արժանի։ Եւ միտ դիր, զիարդ չև ևս զՅՄ ինչ աւանդեաց նոցա, և ոչ կանխաւ գիտել՝ թէ ո՞ որ արժանի իցէ, և ո՞ որ ոչ նոյնպիսի. այլ խուզակ լինել, և փորձին կալ և մնալ հրամայէ։ Լակ նա զիարդ առ մաքսաւորին վասն կալաւ։ Այ՝ ասն զի արժանի եղև դառնալոյ։ Տես, զիարդ յՅՄՀ մերկացոյց, և զՅՄ ինչ հնորհեաց նոցա. յաշակերտելոց տունսն հրամայեաց ունել վասն, և ոչինչ ունել՝ և մոռանել անդ. զի և ինքեանք 'ի հոգոյ աղատանայցեն, և զնոսա հաւանեցուսցեն՝ թէ վասն նոցա փրկութեան են եկեալ։

Ո՛չինչ ընդ ինքեանս բառնալ, և ոչ աւելի քան ըզ-պէտսն ինչ պահանջել, և ոչ վայրապար առ ամենեսեան մտանել. զի ոչ միայն նշանօքն կամի առնել զնոսա պայծառագոյնս, այլ նախ անձանց առաքինութիւն, և ապա նշանօքն։ Ո՛չ այնպէս ինչ նկարել զզգաստութիւն, որչափ յաւելորդացն հրաժարել, և զկարևորսն միայն բաւական համարել։ Օ՛ր չգիտէին սուտ առաքեալքն. վասն այնորիկ ասէր և Պաւղոս, թէ «Որով պարծիցին՝ գտանիցին իբրև ըզմեզ»։ Օ՛ի թէ նոցա՝ որ յօտարութենէն էին և առանձանօթսն երթային, չէր պարտ աւելի ինչ խնդրել քան զաւուրսն կերակուրսն, որչափ ևս առաւել որ 'ի տունս իւրեանց իցեն։

ՑՈՐԴՈՐԱԿ

Ը՝ՆՏՍ մի միայն լսիցեմք, այլ և նմանօրէք նոցա լիցուք. քանզի ոչ եթէ զառաքելոցն միայն է ասացեալ, այլ և զայլոց յետ այնորիկ սրբոց։ Լ՝ցիցուք այսուհետև արժանաւորք նոցա ասպնջականութեան։ Վ՝անզի ըստ մտաց ասպնջականաց մտանէ խաղաղութիւն այս, և միւսանգամ վերանայ. զի ոչ յուսոյ ցանելեացն միայն համարձակութենէ, այլ և յառնելեացն արժանաւորութենէ լինի այն։ Լ՝ւ մի սակաւ ինչ փաս համարիցիք զչվայելելն յայնպիսի ողջունին. զոր և մարգարէն անդուստ յառաջագոյն կարապետէ. «Որպէս զի գեղեցիկ են, ասէ, ոտք աւետարանչացն խաղաղուն»։ և առ 'ի զնորին պատիւն մեկնելոյ՝ ածէ զնովին, թէ «Լ՝ուետարանչացն բարութեան»։ Օ՝նոյն և Վ՝ռոյ մեծամեծար ընծայեցուցեալ՝ ասէր՝ թէ «Օ՝խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն[1] զիմ տամ ձեզ»։

Լ՝ւ պարտ և պատշաճ իցէ զնամ ինչ առնել, զի 'ի նմա վայելել հասանիցէ, և 'ի տան և յեկեղեցւոջ։ Վ՝անզի և յեկեղեցւոջ՝ վերակացուն նախ զխաղաղութիւն տայ. և այն իսկ է նորա նշանակ. և պարտ

1 Յօրինակին վ՝խաղաղում։

էր ամ յօժարութեամբ լինել նմա ասպնջական կա-
մաք. և նախ քան 'ի սեղանոյն վայելել՝ այնմ պատ-
կառ կալ։ Այլ թերևս ծանր թուեսցի բանս. և եթէ
այս ծանր իցէ, ուրեմն ևս առաւել 'ի բանիցն մեր-
ժել ծանրագոյն իցէ։ Յաղագս քո նստի երէցն.
վասն քո կայ յոսն ուսուցիչն, յաշխատութեանն և 'ի
տառապանս։ Օ՜ որ պատասխանատուութիւն ունիցիս,
թէ ունկնդրութեանն չտայցես ասպնջականութիւն։

Հասարակաց տուեալ է եկեղեցիս, և նախ քան
զձեզ մեք մնանեմք, և զնոցա օրինակ ցուցանել յան-
ձինս պահիցեմք. և հասարակաց ամենեցուն 'ի մտա-
նելն իսկ և իսկ ըստ [1] նմին օրինակի տամք զխաղաղու-
թիւն։ Որ՝ ոք այսուհետև ծոյլ, մի՛ ոք զբօսեալ գտա-
նիցի 'ի մնանել քահանայից և վարդապետաց. քան-
զի չէն սակաւ պատիժք այնորիկ։ Այս և ես լաւ հա-
մարէի յուրուք 'ի ձեր տուն մնանել՝ և լսկ գնալ,
քան թէ ասա՛ ոք չլսիցէ՝ յորժամ խօսիցիմ. զի այս
ծանրագոյն է ինձ քան զայն։ Օ՜ և տուն այս վաւեր-
ական է քան զայն, և ասա՛ էն մեծամեծ ստացուածք
մեր, ասա՛ և բնաւ իսկ յոյս։ Օ՜ ինչ ինչ չիցէ ասա՛
մեծ և ահագին։ Օ՜ և սեղանս այս պատուական և
ցանկալի է, և աշտանակս քան զաշտանակն։ Այլ
հմուտ այնոքիկ են՝ որ հաւատով 'ի պատշաճ ժամա-
նակի օծան իւղովն, և ընկեցին 'ի բաց զցաւս։ Այլ
տապանակս այս քան զայն արկեղս առաւել կարևոր
է. զի ոչ հանդերձս, այլ զողորմածութեան ունի բո-
վանդակ փակեալ, թէպէտ և սակաւք իցեն ասա՛ այն-
պիսի ստացուածոց տեր։ Այլ գահոյքս այս աղնուա-
գոյնք. զի ամենեքին զրոց հանգիստն քան զնմա գա-
հոյս հեշտական է։

Այլ եթէ բարի էր, ամենևին ոչ՛ տուն չունէաք
քան զայս։ Օ՜ չէ ծանրագոյն բանս, վկայեն երեք
հազարքն և հինգ հազարքն, որ մի տուն և մի սեղան
և մի շունչ ունէին։ Արանզի ասէ իսկ ստուգութիւն,
թէ «Միանայն հաւատացելոցն էր սիրտ և անձն մի»։
Այլ քանզի յորժամ 'ի բացեայ ելեք 'ի նոցա յառա-
քինութենէն, և ուրոյն և զատ եմք տամքք 'ի միմեանց,

1 'Ի լուս. ՀԴ։

գոնէ յօժարուի՝ յորժամ այսր ժողովիցիմք՝ ցուցա-
նիցեմք։ Այլ եթէ այլով աղքատք և տնանկք իցեմք,
գէթ աստէն ընկալարուք սիրով՝ յորժամ մնանի-
ցեմք առ ձեզ։ Այլ յորժամ ասիցեմք, եթէ Խաղաղ-
զուի ընդ ձեզ, ասացէք և դուք, թէ Այլ ընդ հոգ-
ւոյդ քում, մի միայն բանիւք, այլ և կամաք. մի բե-
բանով և եթ, այլ և մտօք։ Իսկ եթէ ասա ասիցես՝
խաղաղութիւն և ընդ քում ոգւոյդ, և արտաքս ե-
լեալ՝ Ձակատ տայցես ընդ իս, անգոմանել և բամբա-
սել, բիւրապատիկ թշնամանօք գաղտ լուտանալ հա-
տանել, որ խաղաղութի իցէ այն։ Դայց ես, թէպէտ
բիւրապատիկ բամբասիցես, սուրբ սրտիւ տամ քեզ
ողջոյն, և Ձմարիտ մտօք. և չար ինչ երբէք զքէն
չկարեմ խօսել. քանզի հայրենի աղիս ունիմ. թէ-
պէտ և սաստիցեմ երբէք, և զայն վասն խնամ և
դարման տանելոյ առնեմ։ Այլ դու գաղտ խածա-
նես. քանզի և ոչ 'ի տերունի տանս ընդունիցիս զիս,
կասկածեմ թէ զուցէ միւսանգամ զայրացուցանես
զտրտմութիս իմ. ոչ զի թշնամանեցեր, և ոչ զի սը-
տաքս հաներ, այլ զի զխաղաղութիւնն մերժեցեր 'ի
քէն, և զանհնարին զտանջանսն յանձին կորզեցեր։
Այլ եթէ ես զփոշի ոտից չթօթափիցեմ, և ոչ զե-
բեսս դարձուցանիցեմ, սակայն սպառնալիքն անշարժ
մնան։ Այս հանապազ բարբառիմ ձեզ զխաղաղու-
թիւն, և ցանգ զնոյն ասել ոչ դադարեմ. իսկ եթէ
հանդերձ թշնամանօքն և ընդունիցիք ևս ոչ զայն,
նա և այնպէս չթօթափեցից զփոշի յոտից. ոչ զի ան-
սաստիցեմ ՝ն հրամանաց, այլ զի կարի խորովիմ
ձեզ։

Այլ այլ աղգ ևս, զի և ոչ չարչարանս ինչ չարչա-
բեցայ վասն ձեր, և ոչ զտարաշխարհ ուրեք հատի
անցի. և ոչ հանդերձ այնպիսի կերպարանօք և չքա-
ւորութեամբ զկողմ ընտրեցի. վասն այնորիկ նախ ան-
ձանց մեղադիր լինիցիմ. և ոչ առանց կօշկաց և երբ-
կուց պարեգօտից եղէ երբէք. թերևս և վասն այնո-
րիկ և ձեր կողմանն թերի իցէ։ Այլ չէ ձեզ բաւա-
կան այն 'ի պատասխանատուութիւն. մեզ մեծ դա-
տաստանք են, այլ ձեզ ոչինչ այն 'ի ներել թողու-
թեան վՁարիցի։

Յայնժամ և տունք եկեղեցիք էին. իսկ այժմ և եկեղեցի տուն եղև։ Յայնժամ 'ի տուն ոչ էին խօսք աշխարհականք. իսկ այժմ և ոչ յեկեղեցւոջ հոգևոր ճառք, այլ և այսր ևս վաճառաց համարք մտին։ Լու մինչդեռ ՝ն՝ խօսի, թողուք զլռութիւն պատգամացն լսել, և զնոցին հակառակն 'ի մէջ բերէք. ազգի ազգի որոնս որոնիք։ Լու երանի թէ զերոց ի-բացդ. աւադիկ որ չէ ինչ ձեզ անդ՝ զայն խօսիք և լսէք. վասն այնորիկ ողբամ, և չդադարեմ յաշխատելոյ։ Վասնզի չեմ իշխան փոխել զտունս, այլ հարկ է ստէն լինել՝ մինչև ելանիցեմք յաշխարհէս։

Ցարաչք մեզ, որպէս և Պաւղոսն պատուիրեաց. քանզի ոչ եթէ զսեղանոյն ինչ ասէր անդ, այլ զկամացս և զմտացս։ Օ՝նոյն և մեք 'ի ձէնջ խնդրեմք, զսէր, զիմաստ, զնոյն ջերմութիւն, զմտերմութիւն։ Լու եթէ այսմ ևս չանսայցէք, գոնէ զանձինս սիրեսցուք, 'ի բաց մերժել աստ զծուլութիւն. և այն իսկ բաւական է մեզ 'ի միսիթարութիւն։ Լու եթէ տեսանիցեմք զձեզ ընտիրս, և ազնուագոյնս լեալ, նոյնպէս և ես մեծ սէր ցուցից ձեզ. զի թէ յառաւել սէրն՝ սակաւ սիրիցեմ։ Վասնզի բազումք են՝ որ ժողովեն զմեզ 'ի միմեանս. սեղանս՝ որ հասարակաց ամենեցուն առաջի կայ. մի հայրն՝ որ ծնաւն զմեզ. զնոյն ցաւս ընկալաք ամենեքեան. զնոյն ըմպելի ամենեցուն ետ. մանաւանդ թէ և ոչ միայն նոյն ըմպելի, այլ և 'ի միոջէ իսկ բաժակէ։ Օ՝ի հայրն՝ քանզի կամի զմեզ 'ի մի սէր դաւմարել, և զայն ևս հնարեցաւ՝ 'ի միոջէ բաժակէ ըմպել մեզ. որ յաճախ իսկ սիրոյ է։

Լ.ՍԼ մեք ոչ եմք ինչ արժանի առաքելոյն. և ես իսկ խոստովան լինիմ՝ և ոչ ուրանամ. զի ոչ միայն նոցա, այլ և ոչ ստուերին նոցա արժանի եմք։ Լայց սակայն որ ինչ 'ի ձէնջն պարտիցէ լինել՝ լիցի. չառնէ ինչ զձեզ այն յամօթ, այլ ևս օգուտ գործիցէ. յորժամ և առ անարժանս անդամ այնպիսի սէր և հպատակութիւն ցուցանիցէք, յայնժամ իսկ և զմեծ հատուցումն առնուցուք։ Վասնզի ոչ եթէ զմեր ինչ ասեմք, քանզի և չէք իսկ ձեր վարդապետ յերկրի.

1 Յորինակին հայն. եղաք ըստ լուս։

այլ զոր ինչ առաքն՝ տամք. և ընդ տալոյն՝ 'ի ձէնջ առելն ինչ ոչ խնդրեմք, բայց միայն սիրել. թէ և այսմ ևս չկցեմք արժանի, այլ վասն առ 'ի զձէնջ[1] սիրելոյ վաղվաղակի լինիցիմք արժանի. թէպէտ և հրաման իսկ առեալ իցէ՝ մի միայն զսիրելիս սիրել, այլ և զթշնամիս։ Ո՞ոք այնպէս անագորոյն իցէ, ո՞ այնչափ վայրենի, որոյ զայնպիսի օրէնս ընկալեալ, և սիրելեացն ևս սրտնուցու և ատիցէ, թէպէտ և բիւրապատիկ չարութիւն լի իցէ։

Հաղորդեցաք միմեանց 'ի սեղանն Հոգևոր, հաղորդեսցուք և 'ի սէրն Հոգևոր։ Այլ թէ աւաղակք յորժամ ընդ միմեանս աղ առնուցուն, մոռանան զբարսն, մեք զո՞ր պատասխանատուութիւն ունիցիմք՝ որ տերունի մարմնոյն կցորդ եղեաք, և նոցա ևս զգօնութեանն ընտանեմք։ Ոչ զի և բազմաց ոչ միայն 'ի միոյ սեղանոյ, այլ և 'ի միոյ քաղաքէ լինել՝ բաւական եղև բարեկամութիւն։ Իսկ մեք յորժամ զմի քաղաք ունիցիմք և զնոյն տուն և սեղան և ՂանասարՀ և դուռն և արմատ և կենաս և գլուխ և Հովիւ, և զնոյն թագաւոր և վարդապետ և դատաւոր և արարիչ և Հայր, և ա՞մ ինչ մեր Հասարակաց է, որո՞ւմ ներելոյ և թողուլ արժանի լինիցիմք՝ 'ի միմեանց նենգեալ[2]։

Այլ նշան ինչ խնդրիցէք՝ զոր նոքա 'ի մտանելն առնէին. զբորոտս սրբէին, զդևս հալածէին, զմեռեալս յարուցանէին։ Այս և այն իսկ ձերոց ազնուութիւն և սիրոյ մեծ նշանակ է՝ և առանց գրաւականացն հաւատալ յա՞ծ։ Զի վասն նորին իսկ, և վասն այլ իրիք դադարեցոյց զնա ա՞ծ. զի եթէ 'ի չլինել նշանաց, որ այլովք յոլովութիւք ժողովեալ[3] էն, այս ինքն է բանին խնստութեան, երկիւղածութեան օրինակաւ, մեծարգին և Հպարտանան և 'ի միմեանց ձեղքին, եթէ նշանք ևս լինէին, ո՞ւր ուրեք ոչ լինէին հերձուածք։ Այս զի չէն կարծիք բանս, վկայեն կորնթացիքն՝ 'ի բազում մասունս բաժանեալք անտի։ Այ՞ի խնդրեր նշանս, այլ զոգւոյդ առողջութիւն. մի Հայցեր զմեռեալս յարուցեալ տեսանել. քանզի

1 'Ի լուս. վասն զի սա 'ի ձէնջ։
2 'Ի լուս. թողեալ։
3 'Ի լուս. ծաղկեալ կամ ծաղեալ։

և ուսար իսկ՝ եթէ համբէն տիեզերք կանգնեցան։ Այլ ինդբեր զկոյր բժշկեալ տեսանել, այլ տես զա-մենեցուն իսկ աչս բացեալ 'ի լուսագոյն և 'ի շահա-ւոր բացումն. և ուսիր դու ցածութիւն հայել, ուղ-ղել զքո ակնդ։

Եկ ամենեքեան՝ որպէս պարտ է կեալ, կեաք, ա-պա առաւել իսկ ընդ մեզ քան ընդ նշանագործսն զարմանային հեթանոսաց որդիք։ Վասնզի նշանք՝ և ցնորք ինչ առ աչօք կարծիս ունին բազում անգամ, և այլոց չարեաց բարուրս. թէպէտ և մերքս չեն այն պիսիք։ Վասնզի վարք պարկեշտ և ոչ մի ինչ այնպէս մի մասակարութեի կարեն ընդունել, այլ զամենե-ցունց բերան կարկէ առաքինութեան ստացուածք։ Զ՚ինմ դարման տարցուք, քանզի բազում է նորա մեծութիւն, և զարմանք մեծամեծք 'ի նմա։ Զա զբա-տոյգ ազատութիւն պարգևէ մեզ, և 'ի ծառայութիւն՝ երևեալ մտերիմ՝ նոյն հանդերձ։ Ոչ հանէ 'ի ծառայ-ութենէ, այլ անդէն 'ի ծառայութեն քան զազատս աշխուագոյնս գործէ. որ քան յաղատութի կալ՝ ա-ռաւել լաւութի է։ Ոչ առնէ մեծատուն զաղքատն, այլ անդէն յաղքատութեն շահաւէտ ցուցանէ։

Իսկ եթէ նշանս ևս կամիցիս առնել, ազատ լեր 'ի յանցանաց, զնամ վնարեցեր։ Վասնզի դև մեծ իսկ մեզքն են, սիրելի. եթէ զայն հանիցես, քան զբա-զում դևս հալածել՝ մեծ գործ գործեցեր։ Լուր Պաւղոսի, որ զառաքինութիւն՝ նշանաց առընթեր դնէ. «Լաւագոյն ընտրեցայն, ասէ, նախանձորդք լե-րուք, և ևս առաւել ձանապարհ ցուցանեմ ձեզ»։ Զ՚ի իբրև կամէր ասել զնանապարհն զայնմանէ, ոչ զմեռելոց յարութեէ ձառեաց, և ոչ զբորոտս սրբե-լոյ, և ոչ զայլ իմաքն զայնպիսեաց. այլ զի՞նչ. զԼ-ուսիս ամի այնորիկ զսերն եդ։

Լուր և Ովսէ. «Այլ խնդայք, ասէ, զի դևք հնա-զանդին ձեզ, այլ զի անուանք ձեր գրեալ են յեր-կինս»։ Զ՚ի նախ զայն դարձեալ, թէ «Հաղումք ասիցեն ցիս յաւուր յայնմիկ, թէ ո՞չ 'ի քո անուն մարգարէացաք և դևս հանաք և զօրութիւնս բա-զումս արարաք. և յայնժամ ասացից ցնոսա, թէ ոչ երբէք գիտէի զձեզ»։ Զ՚ի յորժամ մերձ էր 'ի խաչն

էլանել, կոչեաց առ ինքն զաշակերտսն, և ասէ. «Յայսմ ծանիցեն ամենեքեան՝ թէ իմ աշակերտք էք». ոչ զի դէս հանիցէք, այլ զի «Սէր ընդ միմեանս ունիցիք». և դարձեալ՝ թէ «Յայսմ ծանիցեն ամենեքեան՝ թէ դու առաքեցեր զիս». ոչ զի մեռեալս յարուցանիցեն սոքա, այլ թէ «Օ՛ի լինիցին մի»։ Լիանք բազում անգամ այլոց օգուտ եղեն, և նշանագործին փնաս. զի 'ի հպարտութիւն ածէին և 'ի մեծարգութիւն, կամ այլով իւիք օրինակաւ։ Լակ 'ի գործսն չիք ինչ այնպիսի կարծել, այլ և գործելեացն և այլոց բազում շահս գանձեն։

Օ այն այսուհետև բազում փութով 'ի գործ արկցուք։ Լ՝թէ յանողորմածութենէ յողորմածութիւն փոխեացիս, զձեռն գօսացեալ պարզես։ Լ՝ու եթէ 'ի թատերսն հեռացեալ՝ յեկեղեցի ստէպ գայցես, զոսն կաղ բժշկեացես։ Լ՝ու եթէ դարձուցանիցես 'ի բոզից և յօտարոտի գեղոյ զաչս, աչս կուրացեալ բացցես։ Լ՝ու եթէ փոխանակ սատանայական երգոց՝ սաղմոսս հոգևորս ուսանիցիս, համբ էիր՝ և խօսուն եղեր։ Լ՝այն է սքանչելիք մեծամեծք, նոյն և նշանք զարմանալիք։ Օ՝նոյն ունիցիմք մինչև ցքուն. զի և մեք նոքիմբք մեծամեծք և սքանչելիք երևեսցուք, և զանազգամն 'ի լաւութիւն ածիցեմք. և 'ի հանդերձեալ կեանսն հասանիցեմք շնորհօքն Տն մերոյ Յի՛սի Ք՛ի. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ՈՒԹԵՐՈՐԴ

« Ի՛հաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև զոչխարս 'ի մէջ գայլոց. եղերուք այսուհետև խորագէտք իբրև զօձս, և միամիտք իբրև զաղաւնիս »։

Այ՛ն քանզի վասն կարևորս պիտոյից կերակրոցն ա՛բար զնոսա վստահագոյն, և զամենեցուն տանց դուրս եբաց նոցա առաջի, և պարկեշտագոյնս զմտանելոյ և զելանելոյ նոցա կերպարանս յարդարեաց. ո՛չ իբրև զմուրջս և զթափառականս մտանել հրամայէ, այլ քան զասպնջականսն ևս ընտանեգոյն և համարձակս և պարկեշտագոյնս։ Օ՛ի զայս ուսոյց ասելովն, թէ « Ա՛րժանի է մշակն վարձու իւրոյ »։ Այ՛ն հրամայեաց հարցանել՝ թէ ո՞ արժանի իցէ, և անդ վանս ունել, և ողջոյն տալ ընդունելեացն պատուիրեաց, և չընդունելեացն զանհնարին պատիժս կրել սպառնացաւ։ Այ՛ն քանզի զայն հոգս մերժեաց 'ի նոցանէ, և նշանագործութեցն հանդիսիւ ամուր վառեաց ըզնոսա, և երկաթիս և անդամանդեայս գործեաց. յա՛մ իսկ 'ի մարմնաւոր և 'ի ժամանակեան հոգոց ազատս և յապահովս արար զնոսա. և ապա ասէ որ ինչ առ յապայ ժամանակի գալոց էին 'ի վերայ նոցա չարչարանք. ո՛չ որ ինչ անդէն 'ի մօտոյ պատահէր, այլ որ ինչ յետ բազում ընդ յերկար ժամանակս լինելոց էր. անդստին 'ի վերուստ յառաջագոյն վարժէ զնոսա՝ լինել պատրաստական տալոց ճակատս ընդ սատանայի։

Այ՛ն բազում ինչ անտի ուղղութեն գործէր։ Ա՛յսս զի զկանխածանօթ գիտութենն ուսանէին զզօրութեն։ Դարձեալ՝ զի մի որ կարծիցէ, թէ առ տկարութեն ինչ գայցեն չարչարանքն։ Այ՛րրորդ անգամ՝ զի յորժամ զվիշտն կրիցեն, մի ինչ յանկարծադէպ և առանց սպասելոյ զիրսն կարծիցեն։ Չորրորդ անգամ՝ զի մի նախ 'ի խաչին ժամանակս ընկիցեն և խուռ վեսցին։ Ո՛անզի ախտացան իսկ բազումք. զորս և

նախատէ ինքն, թէ «Օ այս խօսեցայ ընդ ձեզ, և տրտմութիւն լցան սիրտք ձեր. և ոչ ոք 'ի ձենջ հարցանիցէ ցիս՝ թէ յո՞ երթաս»։

Այլ չէ և և է այնպիսի ասացեալ զանձնէ, թէ կապիցի և տանջիցի և մեռանիցի, զի մի և և պղտորիցէ զմիտս նոցա. այլ զայն և է թէ որ ինչ ընդ նոսայն էր անցանելոց, զայն յառաջագոյն բարբառի։ Այսպէս զի ուսանիցին իսկ, թէ նոր և չքնաղ էն օրէնք պատերազմին, մերկս առաքէ զնոսա և միապարեգօտս և բոկս և առանց ցպոյ և առանց 'ի գօտւոջ ինչ բառնալոյ, յասպնջականացն հրամայէ կերակրիլ։ Այլ ոչ այսչափ միայն, այլ և և առաւել ինն ցուցանէ զզօրութիւն. զի զգօնացեալ և յոչխարաց կերպի երթիցէն, և 'ի մէջ գայլոց մտանիցէն։ Այլ ոչ միայն ոչխարաց զգօնութիւն հրամայէ ցուցանել, այլ և աղաւնեաց միամտուն։ Օ 'ի այնպէս, ասէ, առաւել ցուցանեմ զիմ զզօրութիւն, յորժամ ոչխարքդ գայլոցն յաղթիցէք. և 'ի մէջ գայլոցն թէպէտ և բիւր անգամ կեղեքիցիք, ոչ միայն չխածանիցիք, այլ և գնասա 'ի ձեր բարս դարձուցանէք։ Այլ առաւել զարմանալի է, և մեծ քան զսպասանելն, զբարոյսն փոխել՝ և զմիտսն յարդարել. և այն զի երկոտասան այր թուով, և զամենայն աշխարհս լի գայլովք զգօնացուցանեն։

Այմանէսցուք որ և այժմ գնոցին հակառակն առնեմք. և իբրև զգայլս 'ի թշնամիս և 'ի բարեկամս առ հասարակ յարձակիմք։ Օ 'ի մինչ ոչխարքն ի ցեմք, թէպէտ և բազում վոհմակք գայլոց շուրջ պատեցեն, ոչինչ գամազիտ լինիցին. ապա թէ գայլանայցեմք, 'ի պարտութիւն մատնիցիմք, և վերանայ 'ի մէնջ օգնականութիւն։ Օ 'ի ոչ եթէ զգայլս արածէ, այլ զոչխարս. թողու զքեզ՝ և գնայ. իսկ եթէ ոչ գայլանայցես, ոչ տայ թոյլ կեղեքել զքեզ զօրութիւն նորա։ Այլ՝ եթէ չարչարիցիս և զգօնութիւն ցուցանիցես, այնուհետև ամենևին քո լինի յաղթութիւնն. իսկ եթէ ընդդէմ դարձեալ ոգորիցիս ընդ չարչարանացն չարչարել, զեղջես և չառնես զյաղթութիւնն յաղթութիւն։

Այ մեր դիր, ո՞ ոք էին՝ որք խստից և աշխատուն

հրամանացս այսոցիկ ունկնդիրքը լինէին։ Վասա-
սիրտք և տգէտք, անուսմունք և անդրագէտք. որ
ամենևին իսկ անհնանք էին. որ չէին երբէք հմուտք
արտաքին օրինաց, և ոչ վայրապար երբէք 'ի հրապա-
րակս ուրեք երթային։ Զկնորսք և մաքսաւորք, որք
բիւրապատիկ նուաղութիւնքն լի էին։ Այլ եթէ զա-
ւագս և զմեծամեծս զարհուրեցուցանեն այնպիսի
իրք, իսկ զանփորձն և զանպիտանս՝ որոց չէր երբէք
լեալ յառաջագէմ, զիարդ ոչ էին բաւական պա-
խեցուցանել այնպիսի արհաւիրք. այլ ոչ կասեցու-
ցին. և կարի իսկ յիրաւի։

Այլ թերևս ասիցէ ոք. այնպիսի իշխանութիւն
ետ, զբորոտս սրբել, զդևս հանել. զիարդ զարհու-
րէին։ Այլ ես ասեմ, թէ այն իսկ կարի զարհուրե-
ցուցանէր [1] զնոսա։ Օ 'ի մերթ զմեռեալս յարուցա-
նէին, և մերթ յանհնարին տանջանս և 'ի չարչա-
բանս և 'ի հալածանս մտանէին, և ատեցեալք յամ
տիեզերաց. որք զայնպիսի աքանչելիսն առնեն, այն-
չափ վշտաց ակնունել։ Այլ զի ոչ մխիթարուի կայր
ընդ այնր ամի, թէ ոչ զօրութիւն առաքչին։ Վասն
որոյ և յառաջ քան զամ՝ զայն եդ, եթէ «Հնաւա-
սիկ առաքեմ զձեզ»։ Զ ատ է ձեզ, ասէ, այդ 'ի մխի-
թարութիւն և 'ի խրախոյս՝ առ 'ի չզանգիտել 'ի փոր-
ձանաց, որ 'ի վերայ գայցեն. տեսանեա՛ զնոխութիւն
և զիշխանութիւն և զամմարտ զօրութիւն։

Այլ զոր ասէն՝ այս է. մի ինչ երկնչիք ընդ այն, զի
'ի մէջ գայլոց առաքեմ իբրև զոչխարս, և իբրև զա-
ղաւնիս հրամայեմ լինել։ Կարօղ եմ, ասէ, զի բնաւ
չգայցեն 'ի վերայ ձեր չարչարանք, և ոչ իբրև զոչ-
խարս 'ի գայլոց կեղեքիցիք, այլ քան զառեւծ ևս
ահագին լինել։ Այլ այդ օգուտ ձեզ է, զի և զձեզ
լուսաւոր առնէ, և զիմ զօրութիւս քարոզիցէ։ Օ սոյն
և ցՊաւղոս ասէ, «Զ ատ են քեզ շնորհք իմ՝, զի
զօրութիւն իմ 'ի տկարութիւն կատարի»։ Այս իսկ ա-
բարի ձեզ այդպէս լինել այսուհետև. զի յորժամ
ասիցէ, թէ «Այս աւասիկ առաքեմ զձեզ իբրև զոչ-
խարս», զսոյն ակնարկէ. մի ինչ այսուհետև զանգի-

1 Յօրինակին զարհուրեցուցանէր։

տիցէք. զի գիտեմ և կարի իսկ քաջ գիտեմ, թէ՝ այդիւ լինիջիք անսրբութեանքիք յամենեցունց։ Այլ թէ և յանձանց նպաստ ինչ լինիցին, և մի՝ ի շնորհսն եւեթ ապաստան, և ձրի կարծիցին պսակիլ, ասէ. «Զերծուք խորագէտք իբրև զօձս»։

Զի զինչ բաւական իցէ, ասեն, մեր խորագիտութիւն առ այնչափ ճգունս, և կամ բնաւ զիարդ կարիցեմք ուշաբերել՝ յորժամ այնչափ սահեալ ալիք զմեզ ծփիցին։ Արդեաւք և լինիցի ոչխար խորագէտ՝ ի մէջ այնչափ գայլոց, զինչ ինչ աւելի կարիցէ վճարել. և որչափ ինչ լինիցի աղաւնի միամիտ, զինչ ինչ կարիցէ օգտել՝ ի մէջ այնչափ բազէից խուճապելոց։ Նասաւնքն և ոչինչ. բայց դուք՝ եթէ կամիցիք, եւ մեծամեծս վճարէք։

Զի արդ աղէ՛ տեսցուք, որպիսի՞ ինչ խորագիտութիւն պահանջէ՝ ի մէնջ աստ։ Օ՜ օձի ասէ. զոր օրինակ օձն, եթէ զա՞մ զմարմինն տալ իցէ՝ ի կոտորել, տայ, բայց զգլուխն եւեթ զգուշանայ պահել, նոյնպէս և դու՝ բայ՝ ի հաւատոցն՝ զա՞մ ինչ տացես. եթէ զինչս, եթէ զմարմնդ, եթէ զոգիդ եւ՝ ի վերայ դնել հասանիցէ, մի ինչ զանգիտիցես. զի նա է գլուխ և արմատ։ Զի եթէ նա պահիցի, թէպէտ և զա՞մ կորուսանիցես, զընաւն միւսանգամ վերստին շահիցիս բազմապայծառ վայելչութի՞ւ։ Զ ամն այնոքիկ ո՛չ կարի միամիտ և պարզամիտ հրամայէ լինել, և ո՛չ բնաւ խորագէտ, այլ զերկոսեանն ընդ միմեանս խառնել. զի յերկոցունցն մի ինչ առաքինութի՞ն յարդարիցի։ Զի զխորագիտութի՞ն օձին տայ ունել, զի մի յաղդոյ անդամն ոք վիրաւորեսցի. և զմիամտութիւն աղաւնւոյն՝ առ՝ ի յոյ խնդրելոյ վրէժս՝ ի ՀԱՍ սակարացն, և ո՛չ քէնս՝ ի նենգագործացն. ապա թէ ոչ՝ չէ ինչ օգուտ՝ ի խորագիտութենէ, եթէ այս այսպէս ո՛չ լինիցի։

Զի զինչ այլ ինչ զօրագոյն քան զայնպիսի պատուիրանս կայցէ։ Զի չիցէ՞ բաւական զչարչարանս կրել։ Զէ, ասէ. այլ և ո՛չ զայրանալ իսկ հրամայեմ ձեզ. քանզի այսպիսի ինչ է աղաւնին. զոր օրինակ

1 Ի լուս. զէ ՈՅԴԻ՝։

եթէ զեղէգն ոք 'ի հուր հրամայիցէ արկանել և չայ-
բել, այլ զհուրն շիջուցանել։ Բայց մի ինչ խռովեա-
ջիք. քանզի եղև իսկ, և 'ի գլուխ եկ, և արդեամբք
իսկ ցուցաւ. և խորագէտք քան զօձս եղէն, և միա-
միտք քան զաղաւնիս. և ոչ եթէ յայնց բնութենէ
էին, այլ 'ի մերմէս։ Լաւ մի ոք կարծեսցէ՝ թէ ան-
հնարին ինչ էն պատուիրանքն։ Բան զայլս ամենե-
սին՝ նա տեղեակ է իրացն, և գիտէ՝ թէ խստութիւն
խստութիւն ոչ մղի, այլ զգօնութեամբ։

Բայ՝ եթէ արդեամբք իսկ կամիցիս հասանել 'ի վե-
րայ՝ թէ ուր եղև այնպիսի իրք, ընդ Երցիր զգործոց
առաքելոց գիրսն. և անդ բազում անգամ դտանիս,
զի յորժամ ամբոխքն հրեից 'ի վերայ յարուցեալ
էին, և զատամունս կրճտէին, նմանեալք աղաւնւոց
զգօնութեան՝ տային զառողջ պատասխանիսն, և ցա-
ծուցանէին զբարկութիւն. և 'ի ցաճնուլ մոլորութեան՝
և 'ի յարձակելոյն կարձէին։ Յորժամ սպառնա-
ցեալ ասէին. «Ոչ պատուէր տուաք ձեզ՝ մի ինչ
խօսել յանունն յայն». և նոքա թէպէտ բազում
սքանչելիս կարէին առնել, ոչ խիստ ինչ խօսէին, և
ոչ բանս ինչ կսկծելիս անդէն ընդդէմ տային. այլ
քաղցրութիւն և աղերսիւ տային զպատասխանիսն։
«Լաթէ արժան իցէ ինչ ձեզ անսալ առաւել քան
նոցա, զայն դուք ընտրեցէք»։ Ցեսանես զանմեղութիւն
աղաւնւոյն, արդ տես և զխորագիտութիւն օձին։
«Ոչ կարեմք մեք, ասէ, զոր ինչ տեսաք և լուաք՝
չխօսել»։ Ցեսանես, զի ամենևին պարտ է հաստա-
տունս լինել. ոչ 'ի վիշտս կասել, և ոչ 'ի ցասմանէ
զայրանալ։

Վասն այնորիկ ասէ, թէ «Օգոյշ լերուք 'ի մարդ-
կանէ, զի մատնեսցեն զձեզ յատեանս, և 'ի ժողո-
վուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ, և առաջի դատա-
ւորաց և թագաւորաց տանիցեն 'ի վկայութիւն նոցա և
հեթանոսաց»։ Դարձեալ արթունս և զուարթունս
յարդարէ զնոսա. զի նոցա հրամայեաց մտանել 'ի չոր-
չարանս, և այլոց չարի չար Հրամայեաց առնել։ Օ՛ի
ուսանիցիս, թէ 'ի չարչարելոյն է յաղթութիւն, և անտի
իսկ կանգնի յաղթութեան նշանակ։ Բանզի ոչ ասաց, թէ
դուք մշցիցիք և 'ի դիմի հարկանիցիք ՀԱսասկարացն՝

որ զձեզ նենգել կամիցին, այլ թէ ամենեին ժուժկալ լինիցիք անհնարին չարչարանացն։ ԲաՀէ, որպիսի՞ ինչ զօրութիւն նորա է՝ որ պատուիրէրն, և որպիսի՞ հնազանդութիւն նոցա՝ որք լսէին։ Այս և կարի իսկ պարտ է զարմանալ, զի՞արդ ո՛չ վաղվաղակի խրատ-չէին, արք՝ որ զայնպիսի խիստ հրամանս լսէին. որք և 'ի խոտոյ խարշափելոյ երկնչէին, և ըստ լՀակն՝ յորում որսային՝ չէին ուրեք անցեալ 'ի բաց։ Օ՛ի՞արդ ո՛չ ածէին զմտաւ, թէ յո՞ կարիցեմք փախչել, յորժամ դատաւորք և թագաւորք՝ և ժողովք հրեիցն 'ի վերայ յառնիցեն, ազգք հեթանոսաց, և իշխանք ամ։ Օ՛ի այնուհետև ո՛չ միայն զոր 'ի պաղեստինացւոց աշխարհին հասանելոց էին չարչարանք՝ գուշակէր կանխաւ, այլ որ ինչ ընդհանուր ընդ ամ տիեզերս յառնելոց էին 'ի վերայ նոցա պատերազմունք։ «Բ՛ռաջի դատաւորաց, ասէ, և թագաւորաց տանիցեն զձեզ». յայտ արարեալ թէ ընդ ամ իսկ հեթանոսս առաքելոյ է զնոսա քարոզս։ Օ՛ի ամ բնաւ կիչք երկրի մարտնչէին ընդ նոսա, ազգք և թագաւորք և բռնաւորք և իշխանք։

Այլ որ և-ս ահագին էր, զի եղբայրասպանք և մանկակոտորք և հայրախեղդք լինելոց էին բազումք վասն նոցա։ «Մատնեսցէ, ասէ, եղբայր զեղբայր 'ի մահ, և հայր զորդի, և յառնիցեն որդիք 'ի վերայ հարց»։ Այլ զի՞արդ, ասեն, այլքն հաւատայցեն մեզ, յորժամ տեսանիցեն զորդիս 'ի հարց կոտորեալ և զեղբարս յեղբարց։ Ո՞չ ապաքէն իբրև յաղանդաւործ և 'ի մեսսակար դիւաց փախչիցին, և ապակաւնիչս ամ աշխարհաց համարիցին, յորժամ արեան Ճաղպախի 'ի մէջ հարազատաց և ազգականաց անկանիցի։ Այն իսկ լաւ էր՝ թէ յորժամ մտանէաք 'ի տուն ումեք, և ողջոյն իսկ չտայաք, քան թէ զայնպիսի անչափ սպանութիւն գործէաք։ Այլ թէ բազումք ինչ էաք, և ո՛չ երկոտասանք միայն, և կամ տգէտք չէաք և առանց դպրութեան, այլ իմաստունք և Ճարտարախօսք և բանիբունք և կորովիք, և բնաւ թէ թագաւորք իսկ էաք և զօրս ունէաք և ընչից յաՃախութիւք, զի՞արդ կարէաք զոք հաւանեցուցանել, յորժամ ընտանեաց ընդ ընտանիս Ճակատս գլըգ-

ռէաք. և եթէ այնչափ 'ի վսեր ինչ գայաք, և զանձինս 'ի մահ դնէաք, սակայն ո՞՞ք էր՝ որ մեզ անսայր։

Այլ չամէին ինչ այսպիսի զմտաւ, և ոչ ընդդէմ դառնային պատուիրանացս. այլ հաճեալք և հաւանեալք՝ առնուին յանձն զամ։ Այս այս ոչ 'ի նոցա միայն առաքինութենէն էր, այլ և 'ի վարդապետին իմաստութենէն և 'ի զօրութենէն։ Տես, զիարդ ըստ իւրաքանչիւր ամ կարեացն և զմխիթարութիւն ընդ նմին յօդէ։ Օ՛ի որք ոչն ընդունէին զնոսա, ասէ, «Գիւրագոյն լիցի երկրին սոդոմացւոց և գոմորացւոց յաւուրն դատաստանի՝ քան քաղաքին այնմիկ». և ասա դարձեալ ասէ՝ թէ «Յորժամ առաջի դատաւորաց և թագաւորաց տանիցին», և ածէ զնովիմբ, թէ «Ո՛ ասն իմ 'ի վկայութիւն նոցա և հեթանոսաց». և չէ ինչ սակաւ մխիթարութիւն, յորժամ վասն Քրիստոսի որք չարչարիցի, և յանդիմանութիւն նոցա՝ որք չարչարիցեն։ Օ՛ի թէպէտ և չառնուցումք 'ի միտ, այլ ամ զիւրն ամ ուրեք առնէ։ Այս այն իսկ է նոցա մխիթարութիւն, ոչ զի ընդ այլոց պատիժս ինչ կամիցին, այլ զի վստահ իցեն՝ թէ ամ ուրեք ածէ մեռ է առ նոսա, որ յառաջագոյն գիտէ և կանխաւ գուշակէ. և նոքա իբրև զապականիչս ինչ չկրեն՝ զչարչարանս։ Հանդերձ սոքիմբք և այլ իմն ոչ սակաւ մխիթարութիւն յաւելու, թէ «Յորժամ մատնեսցեն զձեզ, մի՛ ինչ հոգայցէք՝ թէ զինչ խօսիցիք. զի տացի ձեզ 'ի ժամուն, զինչ խօսելոց իցէք. քանզի ոչ եթէ դուք իցէք՝ որ խօսիցիքն, այլ Հոգին հօր ձերոյ իցէ՝ որ խօսիցի 'ի ձեզ»։ Օ՛ի մի՛ ասիցեն՝ թէ զիարդ կարիցեմք խօսել, յորժամ այսպիսի իրք գործիցին, և 'ի պատասխանին ևս վստահ լինել հրամայէ։ Յայլում վայրի ասէ, «Այս իսկ տաց ձեզ բերան և իմաստութիւն». և ասա՝ թէ «Հոգի հօրն ձերոյ խօսիցի 'ի ձեզ». 'ի մարգա բերից պատիւ հանէ զնոսա։ Զմին իրի իսկ՝ յորժամ ասաց, թէ զօրութիւն ընդունելոց են, ապա յարէ 'ի նոյն զկոտորածոցն և զսպանութեաց։ «Ո՛ատնեսցէ եղբայր զեղբայր 'ի մահ, և հայր զորդի, և յարիցեն

1 Յորինակին էին։

որդիք 'ի վերայ հարց և սպանանիցեն զնոսա »։ Այլ ոչ այսչափ միայն, այլ և սահմանիս յաւելու, որ և զվնասն անդամ շարժել կարէր։ « Այլ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ »։ սակայն և աստ առ դուրս կայ միսիթարութիւն. « Վասն անուան իմոյ »։ ասէ, զայն կրիցէք։ և դարձեալ՝ թէ « Որ համբերէ 'ի սպառ, նա կեցցէ »։ Այլ այսու այլ ազգ ևս ուղղէ զմիտս նոցա, թէ այնչափ բորբոքելոց իցէ քարոզութեն զօրութի, զի և զընութիւն արհամարհել հասանիցէ, և զազգս և զտոհմ ուրանալ, և զբանն պատուել քան զամ ինչ։ և յայտ է թէ ամենևին իսկ ամ ինչ մերժիցի։ Օ՛ի եթէ ընութեան բռնութի չկարիցէ գամագիտ լինել բանին, այլ լուծանիցի և անկանիցի և կոխիցի, զինչ այն ինչ է՝ որ ձեզ յաղթել կարիցէ։ Դայց ոչ՝ զի այնպէս լինիցի, յասպահով ինչ և անկասկած լինիցիք. այլ հասարակ զամենեսեան ունիցիք պատերազմողս և թշնամիս, և զընտանիս և զարտաքինս։

Այլ արդ ո՞ւր իցէ Պղատոն, ո՞ւր Պիթագորաս, ո՞ւր կոյտք որդանց և ՃՃեաց[1]։ Դանզի նա իսկ 'ի բազում պատուի վայելեաց, և այսպէս վատթարեցաւ, զի վաճառակուր ևս եղև, և ոչ կարաց՝ որպէս և կամէր՝ ուղղութիս ինչ առնել և ոչ առ միով բռնաւորաւ, այլ մատն ևս իւրոց աշակերտացն լինէր, և ողորմելի և եղկելի յարևէն ևս անկանէր։ Դա և ընդ փիլիսոփայիցն ևս ընդ շնաբարոյ խաբէութիս՝ իբրև ընդ երազ և ընդ ստուերս ամենեքին անցանէին[2]։ Դմէպէտ և այսպիսի ինչ վիշտք երբէք ընդ նոսա ոչ անցին. այլ պայծառագոյնք վասն արտաքին իմաստութեն ամենեցուն երևէին։ Այլ զթուղթսն Պղատոնի, որ 'ի Դիոնիսեայ[3] առաքեցաւ, առեալ աթենացւոցն՝ 'ի հրապարակս ամենեցունց յանդիման կախեալ տարածանէին։ Այլ հանգստեամբ և հեշտիւ զժամանակն անցուցանէին. ընչիւք մեծատունք, այնպէս զի Անբիստիոսն[4] բոլոր գեղեցիկս զներ. 'ի

1 Թարգմանիչն մեր Թուի ընթերցեալ σκωλήκων, որ բառն Ե ՃՃեաց. ուր այժմու յունունի σταφυλῶν, որ նշանակէ եղաք ըստ լուս.

2 'Ի լուս. անցուցանէին։

3 'Ի լուս. 'ի Դիոնս։

4 Յօրինակին, Անբիսդիոն. եղաք ըստ լուս։

սիւնս կտակս հաստատէր, և ոչ սակաւ ինչ ժառանգութիւն թողցեր յեռանոցն. և միւսոյն զաշակերտսն կամուրջ գործեալ՝ և 'ի վերայ շրջէր. և զԳեսինովպեայն[1] ասէն թէ 'ի հրապարակի յայտ յանդիմման ծանակէր։ Լ.սպիսի ինչ էին նոցա պարկեշտութիւնքն։

Ոչ նոյնպիսի ինչ և աստ, այլ առաւել զգաստութիւն, և հաւաստեաւ ցածութիւն, և պատերազմ ընդ ամ աշխարհի վասն ճշմարտութեան և ճծպաշտութեան, և հանապազ կոտորիլ, և ապա նշան յաղթութեան կանգնել։ Լ.յլ էին ոմանք 'ի նոցանէ և զօրավարք, որպէս Թէմիստոկլէսն և Պերիկլէսն. սակայն և այն՝ մանկտուց իմն խաղ և խնձոյ էր առ ձկնորսացն քաջութեն։ Լ.ւ զինչ կամիցիս ասել, եթէ զաթենացիս յօժարեցոյց մտանել 'ի նաւ, յորժամ Խսերքսէս զօրաքն յելլադւոց աշխարհն արշաւէր։ Լ.յլ անդ Խսերքսէս միայն. և աստ սատանայ ամ տիեզերք և անչափ դիւք յերկոտասանիցն վերայ դիմեալ. և չինայր ինչ ժամանակի, այլ հանապազ 'ի վերայ յարձակէր, և երբեք չյաղթէր. և զարմանք այն էին, զի ոչ կոտորէին զթշնամին, այլ յարդարէին և յինքեանս դարձուցանէին։ Լ.ւ այնմ եւեթ պարտ է միտ դնել, զի ոչ կոտորէին զնենգիչսն, այլ առաւել զդիւաց նմանիսն առնէին հանգոյնս հրեշտակաց. զմարդկեղէն բնութիւնս յայնպիսի խիստ բռնութենէ ազատէին. զթափառական դեւս որ զամենեսեան առ հասարակ խռովէին, 'ի հրապարակաց և 'ի տանց, և մանաւանդ զի յանապատին իսկ տեղեաց՝ մերժէին։ Լ.ւ վկայեն վանականացն դուռնդք, զորս յամ տեղիս տնկեցին առաքեալքն. ոչ միայն զշէնս, այլ և զանշէնս սրբեցին։

Լ.ւ ընդ այն է զարմանալ, զի ոչ 'ի մարտ մտեալ և ոչ Ճակատ տուեալ, այլ անձանց չարչարանօք զամ վՃարէին։ Օ երկոտասան այր 'ի մէջ առեալ ամենեցուն՝ կապէին, տանջէին, այսր անդր խուՃապէին, սակայն չկարէին լռեցուցանել. զոր օրինակ չէ ինչ մարթ զՃառագայթս արեգական կապել, նոյնպէս ոչ զնոցա լեզուն ունել կարէին։ Օ՝ի ոչ եթէ ինչ-

[1] Յոյն Ն զինովկոսոյն։

քեանք էին՝ որ խօսէին, այլ Հոգւոյն զօրութիւնն։ Յոյսպէս և Պաւղոս յաղթեաց Կիպրիսեայ և Ելիմասի, որ քան զամ մարդիկ զանցուցին չարութիւն. որպէս և ասէ իսկ, եթէ «Տէր եղև իմ պաշտպան, և զօրացոյց զիս և փրկեաց զիս 'ի բերանոյ առիւծուն»։

Այլ դու և ընդ այն զարմացիր, թէ զիարդ իբրև լուան՝ թէ մի հոգայք, հաւատացին և ընկալան, և ոչինչ յահաւորացն զարհուրեցոյց զնոսա։ Այսպէս թէ ասիցես, մեծ մխիթարութիւն ետ՝ ասելովն, թէ «Հո զի հօր ձերոյ ինչ՝ որ խօսիցի». այլ ես ընդ այն իսկ առաւել զարմանամ, զի ոչինչ երկմտեցին և հրաժարեցին 'ի կարեացն. և զայն ոչ թէ զերկեամ, և զերեամ մի էին կրելոց, այլ զաւուրս կենաց իւրեանց։ Օ՛ի ասելովն՝ թէ «Որ համբերեսցէ 'ի սպառ, նա կեցցէ», զայս յայտ առնէ։ Այնպէս կամի, զի ոչ 'ի նմանէ միայն առնուցուն, այլ զի և յանձանց ևս նպաստ լինիցին։

Այս դու միտ դիր անդստին 'ի վերուստ, զիարդ կէաքն նորա են, և կէաքն աշակերտացն։ Օ՛նչանսն առնել՝ նորա էր, և չստանալ ինչս՝ նոցա։ Պարձեալ՝ զդուրս ամ բանալ առաջի, վերին շնորհացն էր. և ոչինչ աւելի քան զպէտսն պահանջել՝ նոցա լաւութեան. «Արժանի է մշակն վարձու իւրոյ»։ Այս զխաղաղութիւն շնորհել՝ այ պարգևացն էր. իսկ զարժանաւորսն խնդրել և ոչ վայրապար առ ամենեսեան մտանել՝ նոցա ազնուութեան էր։ Պարձեալ՝ տանջել զչընդունելիսն՝ նորա էր, և զգծնութիւն գնալ և չբամբասել և չթշնամանել՝ առաքելոցն հեզութեան։ Օ՛չ զին տալ, և անհոգս առնել՝ առաքչին էր. և իբրև զոչխարս և զաղաւնիս լինել, և ամի տանել առաքինութիւն՝ նոցա ժուժկալութիւնն և իմաստութիւն։ Այտելի լինել և չանկանել 'ի կոխան՝ այն նոցա էր. կեցուցանել զհամբերողն և պսակօք պատուել՝ առաքչին նոցա։ Այսն որոյ և ասէր իսկ, թէ «Որ համբերէ 'ի սպառ, նա կեցցէ»։

Այս քանզի սովոր էն բազումք յառաջնումն պնդիլ, և յետոյ թուլանալ, վասն այսորիկ ասէ՝ զվախճանն խնդրեմ։ Օ՛ինչ օգուտ իցէ 'ի սերմանեացն, որ 'ի բոյսն բարւոք իցեն, և յետոյ խամրիցին։ Այսն որոյ

և պահանջէ 'ի նոցանէ զհամբերութիւն։ Օ՛ի մի՛ ոք ասիցէ՝ թէ ամ ինչ 'ի նմանէ էր, և չէն ինչ զարմանք՝ զի այնպիսիքն եղեն, քանզի ոչինչ ծանրատաղտուկս կրեցին յանձինս. վասն այնորիկ ասէ, թէ ձերում համբերութեան պէտք են։ Լ՛թէ յառաջին վշտացն ապրեցուցանիցեմ, և յայլոց ևս դժնդակաց պահեմ, և յետ նոցա այլք մի ըստ միոջէ առնուցուն, և չհասանիցէ ձեզ յողն առնուլ 'ի վշտաց նեղզագործացն, որ և ոչ ոգիք 'ի մարմնոց բաժանեսցին։ Օ՛այս ակնարկէ ասելովն՝ թէ « Որ համբերէ 'ի սպառ, նա կեցցէ »։

Վասն այնորիկ ասէ, թէ « Մի՛ ինչ հոգայցէք, զինչ՝ խօսիցիք »։ Թ՛Եպէտ և այլուր ասիցէ, « Պատրաստ լինիջիք տալ պատասխանի ամի՝ որ պահանջիցէ 'ի ձէնջ զբանն վասն յուսոյն որ 'ի ձեզ »։ Օ՛ի յորժամ 'ի մէջ բարեկամաց իցէ մարտն, և մեզ հրամայէ հոգալ. իսկ յորժամ յահեղ ատենի առաջի մոլեկան դահճաց հասանիցէ կալ, և ահ դատաւորաց և զօրաց շուրջ փեսիցէ, յայնժամ զիւր օգնականութիւն յայտ առնէ հասեալ 'ի Թիկունս՝ քաջալերել և տալ համարձակ պատասխանի. և մի՛ ինչ ծլլել[1], և զիրաւունս և զարժանն կորուսանել։

Լ՛ու մեծ իսկ սքանչելիք էին արանց, որ միշտ զծովակքն ԼԵԹ զբօնոյին, և կէսքն զմրթովք զբաղեալք, և այլք 'ի մաքսաւորութեանէ ջերանէին, յորժամ բռնաւորքն նստիցին, և զօրականքն առաջի կայցեն, և սպասաւորքն աստի և անտի շուրջ կայցեն, սուրք մերկացեալք, և պէսպէս գործիք տանջանաց կազմեալ, և առաջի ամենեցուն մնանիցեն մի մի կապեալք և գլխարկեալք ակամայ, եթէ կարիցեն բաւնալ զբերանս. որոց և ոչ բանս անգամ պատասխանի տալ վասն կրօնից առնիցեն արժանի. այլ իբրև զապականիչս ամ աշխարհի 'ի չարչարել ԼԵԹ ձեռն 'ի գործ արկանիցեն։ « Որք զամ տիեզերս, ասէ, խանգարեցին, և այսր աւասիկ նմին իրի եկեալ են »։ և դարձեալ՝ թէ « Հակառակ հրամանաց կայսեր են, զՀՅՇ ՎԻՇ զոմն թագաւոր անուանեն »։ Լ՛ու ամ ու-

1 'Ի լուս. ծՔեւ։

ըեք յառաջագոյն ատեանք կազմէին վասն այսպիսի կարծեաց. և բազում պէտք էին վերին օգնականութեանն առ երկոսին կողմանսն. զի և կրօնքն՝ զոր ուսուցանէին, Ճշմարիտ երևեցին, և նոքա չգտանէին ապականիչք հասարակաց օրինացն. և մի առ փութալ ինչ զկրօնիցն Ճառել՝ անկանիցին 'ի կարծիս հասարակաց օրինացն խախտելոյ. և դարձեալ՝ մի ինչ փութացեն ցուցանել՝ թէ ոչինչ խախտեն զհասարակաց սովորութիւն, և ապականիցեն զկրօնիցն Ճշմարտութիւն։ Օ ի զամ իսկ տեսանիցես՝ և Պաւղոսի և Պետրոսի և այլոցն ամենեցունց պատշաՃ 'ի մասատութիւն յարդարեալք. և խռովիչք և նորակրօնք ամ ուրեք բամբասէին։ Սակայն և զայն ամ կարծիս 'ի բաց մերժէին, և ուղղութիւն վառեցան, և իբրև զփրկիչս և զինամակալս և զերախտաւորս քարոզէին ամենեցունց. և զայս ամ համբերութիւն կատարէին։ Որպէս Պաւղոս ասէ, եթէ «Հանապազ մեռանիմ». և մինչև ցվախՃան Ճգնեալ՝ տևական լինէր։

ՑՈՐԴՈՐԱԿ

Այ արդ մեք իմ իմիք արժանի լինիցիմք, որ այսչափ օրինակս ունիմք, և 'ի խաղաղութիւն մեղկեալք և ծուլացեալք, և առանց ուրուք պատերազմ տալոյ՝ կոտորիմք, և առանց ուրուք հալածելոյ՝ լքանիմք. 'ի խաղաղութեան ապրել հրաման առաք, և զայն ևս ոչ կարեմք վՃարել։ Այրա՝ մինչդեռ տիեզերք այրէին, և ընդ ամ երկիր խարսկք բորբոքեալ, մնանէին 'ի ներքս, և 'ի միջոյ բոցոյն զայրեցեալն կորզէին. իսկ դու և ոչ զանՃն կարես ապրեցուցանել։

Այ արդ որ համարՃակութիւն լեցի ՃեզՃ, զինչ նեբել թողութիւն. զի ոչ տանջանք 'ի վերայ կան, և ոչ բանտք, և ոչ իշխանք, և ոչ ժողովուրդք, և ոչ այլ ինչ 'ի նոյնպիսեաց. այլ ամենևին հակառակն։ Մ'ենք տիրեմք, և մեք իշխեմք և ունիմք. զի և թագաւորք ՃՃպաշտք են, և բազում պատիւ քրիստոնէից, և

գահերիցութիւնք և փառք և հանդիստ. և ոչ այնպէս գեր 'ի վերոյ լինել կարեմք։ Զոքա հանապազ եկաց կոչք և դատաստանք՝ և վարդապետքն և աշակերտք. այլ պէսպէս վարս։ Յանձն առեալ և յաձախ հաւրուածք, քան 'ի բուրաստանս առաւել զուարճանային. և մեր և ոչ յերազի անգամ այնպիսի ինչ կրեալ՝ և քան զնա մամ կակղագոյն գտանիմք։

Այլ նոքա նշանս առնէին, ասեն։ Իսկ վասն այնորիկ արդեաք տանջէին, նմին իրի ինչ լինէին խուճապեալք։ Զա և այն իսկ էին մեծասքանչ զարմանալիք, զի յերախտառուացն բազում ինչ այնպիսի կրեցին. և այնպէս չխռովէին, զի ընդ բարեացն չար հատուցումն առնուին։ Զու թէ սակաւիկ ինչ երախտիս ումեք առնիցես՝ և տրտմութիւն ինչ կրիցես, խռովիս և աղմկիս, և զոր արարեալն զղջանաս։

Այթէ յանկարծ լիներ, որ մի լոցի, և մի երբեք դիպեսցի, լինել պատերազմ և հալածանք եկեղեցւոյ, զմտաւ ած՝ որչափ ծաղր արդեաք կայր, որչափ նախատինս։ Այս յոյժ իսկ յիրաւի։ Յորժամ 'ի հրահանգս ոք չկրթիցի, 'ի մարտսն զիարդ կարիցէ առաքինի ոք գտանել։ Ո՞ ոք նահատակ՝ որ 'ի հանդիսի չգիտիցէ անցանել. և յորժամ ըմբշամարտ մրցութիւնքն կոչիցեն յառաքինութիւն, և քաջութեան ախոյեան կարիցէ՞ ցուցանել։ Զէր պարտ հանապազ կռուել, մրցել, ընթանալ։ Ցտեսանիցեմք զնոսա՝ որ հընգամարտիկքն կոչին, յորժամ չգուցէ ախոյեան 'ի միջի, զիարդ զամբրոցն ընուն աւազով և առնուն ըստ անձին, զի այնու զբնաւ ոյժն փորձիցեն։ Այս որ քան զնոսա տխմարք էին, յայլոց մարմինս կրթին՝ վասն 'ի մարտս թշնամեացն պատրաստ գտանելոյ։ Զոյին նախանձաւոր լեր և դու, և կրթեա զանձն 'ի զգաստութիւն հրահանգս։ Զանգի և 'ի ցասումն բաղումք գրգռեն, և 'ի ցանկութիւն գրգռեն. և բազումք և այլ ինչ բոցս վառեն։ Պինդ կաց ընդդէմ կաւ բեացն։ Զառաքինութեամբ տար խորհրդոցն՝ որ 'ի միտդ մտանիցեն, զի յորժամ 'ի մարմնդ բորբոքիցեն՝ համբերել կարիցես։

1 Յոյն Ձեռ.։

Վանդի և երանելւոյն Յոբայ թէ չէր քաջ յառաջագոյն քան զմարտն կրթեալ, չլինէր այնպէս առաքինի 'ի պատերազմունսն։ Այլ եթէ չէր նախ զմտաւ ածեալ՝ արտաքոյ ամ տրտմութեանցն լինել, թերևս և ասէր իսկ՝ թէ զինչ չար կայցէ քան զորդւոց կոտորած։ Իսկ նա աւանիկ առ ամ պատերազմունս հաստատուն եկաց. առ ընչիցն կորուստ, առ այնչափ արարոց ապականութիւն, առ յորդւոցն անկանելոյ, առ 'ի կնոջն գութ և գորով արկանելոյ, առ 'ի մարմնոյն տանջանսն, առ բարեկամացն նախատինսն, առ ծառայիցն բամբասանսն։

Իսկ եթէ կամիցիս և զհանդէս նորա ևս տեսանել, լուր նմին իսկ, զիարդ արհամարհէր զինչսն. թէ «Ելարխ երբեք ոչ եղէ ընդ մեծութիւն [1] որ էին ինձ. եթէ թաղեցի ոսկի 'ի հող, և եթէ յուսացայ յականս պատուականս»։ Ա՝ ասն այնորիկ և 'ի յափշտակել ընչիցն 'ի նմանէ չխռովէր, զի մինչ առ նմա էր չցանկայր։ Լուր զիարդ և զորդւովքն սգայր [2], ոչ աւելի քան զարժանն իգացեալ, որպէս և մերքս [3]. այլ զամ հաստատութիւն պահանջէր 'ի նոցանէ։ Որ վասն անյայտիցն պատարագս մատուցանէր, զմտաւ ած՝ թէ որպիսի՛ ինչ յայտնեացն էր ստոյգ [4] դատաւոր։

Այլ թէ զցածութեամ պատերազմաց նորա կամիցիս լսել, լուր դարձեալ և նմին իսկ։ «Ելխատ ե դեալ և դաշինս կռեցի, ասէ, ընդ աչս իմ, չհայել և 'ի գեղ կուսի»։ Ա՝ ասն այնորիկ չկարաց մեղկել զնա կինն. թէպէտ և սիրէր զնա յառաջագոյն, այլ ոչ ինչ աւելի քան զչափն. բայց որպէս 'ի դէպ ի՛ցէ առն զկին իւր սիրել։ Ուստի և յոյժ իսկ զարմանալի է թէ զիարդ յօժարեաց սատանայ՝ որ զիտէր զհանդէս նորա, շարժել զպատերազմունսն։ Այլ արդ զիարդ մտաբերեաց 'ի վերայ դալ։ Վանդի չար է դաղանն, և ոչ երբեք զանգիտէ և վհերէ [5]։ Որ 'ի

1 Փարիզեան օր. թէ ոչ՝ ամ էր էրէ։ ընդ բազմամ ինչս։
2 Փար. օր. զորդոցն գոյր. նման յունին։
3 Փար. օր. և յոյնն դէս։
4 Յոբինակին պակասէր ստոյգ, և դատաւորկ էր տեղին։
5 'Ի լուս. վնոգէ. փարիզեանն վնոգէ։

մեծ դատապարտութիւն լինելոց է մեզ. զի նա ոչ երբեք յուսայ 'ի մեր պատասխանատուութիւն, և մեք յանձանց փրկութենէ անյոյս լինիմք։

Իսկ զմարմնոյն ապականութենէ և զչարչարանացն զինչ [1] ասիցես։ Այիտ դիր զիարդ յառաջագոյն և յայնմ կրեցեր։ Վասզի ինքն ինչ այնպիսի երբեք ոչ կրեաց, այլ 'ի մեծութիւնէ և 'ի փափկութիւնէ և 'ի մեծաշուք փառաւորութենէ վայելելոց 'ի կեանս. զայլոց զվիշտս զօրհանապազ քննելոց և դարմանելոց։ Իսկ [2]. և զայս իւր յայտ արարեալ ասէր, թէ «Երկիւղն յորմէ երկնչէի, եկն 'ի վերայ իմ, և յորմէ կասկածէի՝ պատահեաց ինձ»։ և դարձեալ՝ թէ «Ես 'ի վերայ ամ տկարի լայի և յոգւոց հանէի՝ յորժամ տեսանէի զոք 'ի վիշտս [3]»։ Ա՛ն այնորիկ ոչինչ խռովեր զնա 'ի մեծամեծ և յանհնարին չարեացն [4]։

Բայց մի միայն 'ի կորուստ ընչեցն նայիցիս, և մի յորդւոցն 'ի նմանէ յանջատելն, և մի յանհնարին հարուածսն, և մի 'ի կնոջն նենգութիւն. այլ 'ի յայնս որ ևս քան զևս դժնդակագոյնք են։ Իսկ զինչ, ասեն, քան զայն այլ ինչ դժնդակ կրեաց Յովբ. զի 'ի պատմութենէն քան զայս ինչ աւելի չուսանիմք։ Ա՛ն զի 'ի քուն կամք, յայն սակս չուսանիմք։ Օ՛ի որ հոգ 'ի մտի դնիցէ, և զմարգարիտն բարւոք որոնիցէ, բազում ինչ քան զայս իմանայ. զի դժնդակագոյնք՝ որ և մեծամեծ խռովութիւս կարէին ածել, և այլ ևս էին։ Իսկ՝ չլինելն քաջահմուտ արքայութենէ երկնից և յարութենէ. վասն որոյ և ողբս առեալ ասէր, «Ա՛յնթէ յաւիտեան կեցցեմ, զի երկայնամիտ եղեց»։ Իսկ երկրորդ անգամ, զի բազում լաւութիւնս զիտեր զանձնէ։ Իսկ երրորդ անգամ, զի չգիտեր ինչ զնիղձ մտաց։ Չորրորդ անգամ, զի յոյ կարծէր հասանել վշտացն 'ի վերայ. և եթէ 'ի սատանայէ ևս, այն իսկ բաւական էր զարհուրեցուցանել [5] զնա։ Հինգերորդ [6] լսէն 'ի բարեկամացն, թէ վասն չա-

1 Փար. օր. դարուրելոյ ինչ։

2 'Ի փար. օր. չկայ բառն. և ոչ 'ի յոյնն։

3 Փար. օր. դէսանէի զարդ 'ի վերայ։

4 Փար. օր. յաւելու լաբրեցն որ էին 'ի վերայ նորա։

5 Փար. օր. ըստ յունին գայրեցուցանել։

6 Փար. օր. յաւելու ասա և զկնի հինգերորդ անգամ. վեցերորդ անգամ. եօթներորդ անգամ։

բեաց ինչ իրքն 'ի վերայ հասեալ իցէ · և զզուէին և խոտէին զնա, թէ ոչինչ ըստ մեղացն տանջեցար։ Վեցերորդ՝ զչարագործսն 'ի բարիս տեսանել, և ոտնհար եւս լինել նմա։ ՅուԹեերորդ՝ զի չգոյր ընդ ոք հայել՝ որոյ զայնպիսի ինչ երբեք կրեալ էր։

Յու եԹէ կամիս ուսանել, եԹէ որպիսի ինչ իրքն էին, զմտաւ ած զայժմուս։ Օ՛ի Թէ մինչ արքայուԹեանն ակն ունել, և յարուԹեն սպասել, և անձառ բարուԹեանցն մնալ, և բազում ինչ խիղճ զանձանց գիտիցեմք, և այսչափ օրինակք կան առաջի, և յայս քան զդաստուԹեան վայելեմք, և սակաւ ինչ ոմանք ոսկի կորուսանեն, և Թերևս և այն 'ի յափշտակուԹենէ եւս իցէ, չմամբին ինչ զկեանսն կեանս[1]։ Որ ոչ կինն ստիպիցէ, և ոչ որդիքն վարատիցին, և ոչ բարեկամքն նախատիցեն, և ոչ ծառայքն ոտնհար լինիցին · այլ եւս բազումք[2] մխիԹարեսցեն, ոմանք բանիւք և ոմանք արդեամբք, օրչափ և որպիսի ինչ պսակաց չիցէ արժանի, որ զարդարուԹեան վաստակոցն համբարս տեսանէր զուր և 'ի նանիր յափշտակեալ · և յետ այնր ամի բազում եւս ձիւնաբերս յանձին կուտեալ, և յամի անչարժ մնայր, և զպատշաճ գոհուԹիւնսն[3] մատուցանէր այ։ Յու եԹէ զայլսն եւս զկիրսն ինչ ոք չասիցէ, կնոջն միայն բաւական էին բանքն և զքարինս գրգռել[4], չասեմ Թէ զառնն զսիրսն։

Տես զչարագործուԹիւն կնոջն, ոչ զընչիցն յուշ առնէր, և ոչ զուշտուցն և զխաշանց և զանդոց[5]· քանզի գիտէր զառնն զաշնուուԹիւն, Թէ չառնէ ինչ փոյԹ զայնմ ամէ · այլ որ ինչ ծանրագոյն քան զնմա էր, զորդւոցն ասեմ։ Յու սատարացուցանէր զձաղուԹիւնն · և զիւրսն եւս 'ի նոյն յաւելու։ ՅԹէ մինչդեռ մնաց դիւրուԹիւն[6] իցէ, և չկայցեն ինչ վիշտք 'ի վերայ, 'ի բազում ինչ բանից անդամ[7] մտա-

1 Փար· օր· զկենան 'ի կեանս։
2 Փար· օր· այլ Ն բազմամ կեանս։
3 'Ի լուս· գովք-ՐԻՆ։
4 Փար· օր· զսրտին դգրգռել։
5 Տես զաշարագործութիւն։
6 Փար· օր· զանդիցոց· փանդի
5 Փար· օր· զանդիցոց· փանդի գիտէր զառանն զաշնութիւն։
6 Փար· օր· մարդասիրութիւն իցէ։
7 Փար· օր· Ն բազամ ինչ փա-

բերեալ դրդէն կանայք։ Օ մտաւ ած, ուրչափ պա-
տիր իրքն առնէին[1], որ այնչափ զինուք վառեալ կէին
եկեալ՝ կարէր զեղծուցանել. և մանաւանդ երկու
բռնաւոր կարեաք. և նա առ ոտն կոխեաց զկնոջն
ցանկութիւն և զգութն։ Ուր զի և բաղումք՝ որք
ցանկութեցն[2] յաղթեցին, 'ի գթոյն պարտեցան։ Որ-
պէս և առաքինին Յովսէփ, որ բռնաւոր ցանկու-
թեանն յաղթեաց, և զգուժ կէին ամենայնից 'ի բաց
մերժեաց, որ զմինչենայն մատուցանէր. բայց ար-
տասուացն չկարաց հանդարտել. այլ իբրև ետես
զեղջարան խուճապեալս, այրեցաւ գթոյնն, և զերեսս
'ի վայր կախեալ՝ յայտնեաց վաղվաղակի զխորհուրդն։

Իսկ յորժամ կէին իցէ, և զաղի և զողորմ և զա-
ղերսանաց բանս խօսիցի, և զժամանակն գործակից,
և զվերսն և զհարուածսն, և զպէսպէս ալիս վշտացն
խումբ 'ի վերայ գործելոց, զիարդ ոչ ոք յիրաւի քան
զնամ ադամանդ կարծրագոյն զմիտս նորա գրէ, որ
յայնչափ մրրկաց չկրեաց ինչ ինասել[3]։

Տուք ինձ համարձակ ասել, թէ և քան զառա-
քեալսն ոչ մեծ՝ այլ և ոչ փոքր էր երանելին։ Օ՛ի
զնոսա վասն Քրիստոսի չարչարիչն մխիթարէր, և այն իսկ
դեղ բաւական էր կանգնել զնոսա. քանզի ամենայն
ուրեք զնոյն եղեալ ՝ն՝՝՝

մեաց, յատելեաց [1], յերախտաւորաց սրտառուչ։ Եւ զգեղեցիկ խաբիսին անշարժ պահեաց՝ իբրև 'ի նաւահանգստեան առանց ալեաց դրդելոյ, և այն իսկ էր զոր ցառաքեալսն ասաց՝ թէ վասն իմ. և նմա չէր ընդ ոք հայել։

Օ արմանամ ընդ երիս մանկունսն զի չխորեցին զՀնոցն [2], և ընդդէմ կացին բռնաւորին։ Զ.յլ լուր զինչ ասէին, թէ «Դիւց քոց պաշտօն ոչ տանիմք, և պատկերիդ զոր կանգնեցեր երկիր ոչ պագանեմք»։ Զր մեծ իսկ մխիթարութիւն էր նոցա գիտելն ստոյգ, թէ վասն ոյ կրեն զնա՞մ որ ինչ կրիցեն։ Իսկ նա չգիտաէր՝ թէ պատերազմունք ինչ իցեն և կռիւք. զի թէ գիտացեալ էր, և զգացեալ իսկ ոչ էր։ Իսկ յորժամ լուաւ, թէ «Զ.յլ ազգ իմն կարծես դու զիւնէն՝ տալ զքէն հրամանս, զի արդար երևեսցիս», միտ դիր՝ զիարդ վաղվաղակի 'ի լոկ բանէն ուշաբերեալ կազդուրեաց, և որպէս խոտեալ զանձն. զիարդ և ոչ զվիշտսն զոր կրեաց՝ համարի ինչ, այսպէս ասելով. «Օ խարդ դատիցիմ խրատեալս և յանդիմանեալս 'ի՞ ձենէ, լսեմ զայդպիսիս, զի ես ոչինչ եմ». և դարձեալ՝ «Մինչև ցայժմ լսելով լսէի զքէն. բայց այժմ և աչօք իսկ տեսի զքեզ. քանզի և խոտեցի զանձն և մաշեցայ, և համարիմ զիս հող և մոխիր»։

Զ.նպիսի արութիւն և հեզութիւն [3] և մեք նախանձաւորք լիցուք, որ յօրինաց յետոյ 'ի շնորհս եմք [4], նմա որ յառաջ քան զօրէնսն 'ի շնորհսն էր՝ նմանել. զի և յաւիտենից յարկաց նորա կարասցուք յարկակիցք գտանել. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօքն ձեռն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Փար. օր. ատելեաւ, ըստ բնամբ նմին հեղինակի։
2 Փար. օր. Խաբելոցն զՀնոցն։
3 Փար. օր. Աստուծոյ արու.
4 Փար. օր. որ յետ օրինաց Ն յունին։
շնորհաց եմք։

ՃԱՌ ԻՆՆԵՐՈՐԴ

«Յորժամ հալածեսցեն զձեզ 'ի քաղաքէ յայսմանէ, փախիջիք 'ի միւս եւս. ամէն ասեմ ձեզ, ոչ սպառեսջիք զքաղաքս Իսրայելի, մինչեւ եկեսցէ որդի մարդոյ»։

ԻՐԵՒ ասաց զահագինս եւ զեկիստս, որք եւ զանդամանդս անգամ բաւական էին վանել, որք յետխաչին եւ յարութենէն եւ համբառնալոյն պատահելոց էին նոցա, ապա ածէ զբանն 'ի հեշտականն, եւ տայ ոգի առնուլ նահատակացն, եւ 'ի բաղում սպառնալիս առնէ զնոսա։ Ո՛չ հրամայեաց՝ յորժամ հալածիցեն զձեզ՝ ընդդէմ կալ, այլ փախչել. քանզի դեռ սկիզբն է, եւ զառաջինն մեղմով ըստ նոցա զիջուցանէ զբանն։ Ո՛չ վասն յետին հալածանացն ինչ ասէ զայս, այլ վասն որ յառաջ քան զնապէլուրենն եւս չարչարանքն պատահելոց էին։ Լ՚ս յայտ այնու առնէ զոր ասէն, թէ «Ո՛չ կատարեսջիք զքաղաքս Իսրայելի, մինչեւ եկեսցէ որդի մարդոյ»։ Օ՚ի մի ասիցեն, թէ զինչ օգուտ իցէ, յորժամ հալածիցիմք եւ փախչիցիմք. եւ դարձեալ ուր փախչիցիմք, եկեալ հասանիցեն 'ի վերայ. զի զայսպիսի կասկած բառնայցէ, ոչ ժամանիցէք, ասէ, ընդ Պաղեստինեայ անցանել, եւ վաղվաղակի ես եկեալ հասանիցեմ առ ձեզ։ Տես զի՝արդ եւ ասա՝ ոչ անցուցանէ զվիշտն, այլ զօրավիգն լինի 'ի Հգուէնն։ Բ՚անզի ոչ ասաց՝ թէ զերծուցից եւ անցուցից զհալածանն, այլ թէ «Ո՛չ կատարեսջիք զքաղաքս Իսրայելի, մինչեւ եկեսցէ որդի մարդոյ». զի միայն տեսանելն նոցա զնա՝ բաւական էր 'ի մխիթարութիւն։ Լ՚ս տես զի՝արդ ամ՚ուրեք ոչ զամ ինչ 'ի հնարէն ապաստան առնէ, այլ եւ 'ի նոցանէ նպաստ ինչ հրամայէ լինել։ Օ՚ի թէ երկնչիցիք, ասէ, փախիջիք. եւ զայն իսկ յայտ արարեալ ասելովն՝ թէ փախերուք եւ մի երկնչիք։ Լ՚ս ոչ նոցա նախ հրամայէ փախչել, այլ յորժամ հալածի-

ցեն՝ յայնժամ, ասէ, խուսեսջիք. և մի 'ի բաց ուրեք, այլ անդէն Յերուսաղէմ՝ քաղաքաց 'ի քաղաք անկանիջիք։

Զարձեալ և յայլ իմն մտան առաքինութեանն կրթէ. նախ զՀոգ կերակրոցն հանէ 'ի մտացն, և ապա ասէ զերկիւղ նեղութեանցն. իսկ ասա [1] և զամբաստանութեանն զկասկածն։ Զնդ ասելովն, թէ «Զրժանի է մշակն վարձու իւրոյ», փարատէ զՀոգսն և ցածուցանէ, թէ բազումք են ընդունելոց զնոսա։ Իսկ 'ի նեղութեանցն Հոգոցն՝ ասելովն, թէ «Մի Հոգայք թէ զիարդ կամ զինչ խօսիցիք». և եթէ «Որ համբերէն 'ի սպառ, նա կեցցէ»։ Զու քանզի այսու 'ի դէպ էր նոցա չար ինչ կարծիս կարծել՝ որ բազմացն ծանրատաղտուկ թուի, տես ուստի մխիթարէ։ Զիւրմէ և յիւրոց բանիցն տայ մխիթարութիւն։ Որ օրինակ անդ ասէ, «Զդիջիք ատեցեալք յամենեցունց» [2], և յաւել՝ թէ «Ոչ ան անուան իմոյ». նոյնպէս և ասա ասելովն, թէ «Ոչիք աշակերտ 'ի վեր քան զվարդապետ իւր, և ոչ ծառայ քան զտէր։ Բ ասա է աշակերտին՝ թէ իբրև զվարդապետն լինիցի, և ծառայն իբրև զտէրն։ Զթէ զտանուտէրն բեղզեբուղ կոչեսցին, որչափ ևս առաւել զընտանեան նորա. մի ինչ, ասէ, երկնչիցիք 'ի նոցանէ»։

Զեսանես, զիարդ տակաւ յայտնէ զանձն, թէ աւանեցուն տէր և ՏԱԾ և արարիչ է. և արդ չլինիցի աշակերտն 'ի վեր քան զվարդապետ իւր, և ոչ ծառայ քան զտէր իւր։ Մինչդեռ աշակերտն աշակերտ լինցի, և ծառայն ծառայ, չարեն անցանել ընդ պատիւ վարդապետին և տէրն. բայց թէ յանկարծ դուն ուրեք լինիցի, յայն ինչ մի ձգեր զքանն, այլ 'ի բազումն։ Զու ոչ ասէ, թէ որչափ ևս առաւել զծառայսն, այլ թէ զընտանիսն։ Զի ցուցցէ՝ թէ որչափ ընտանութիւն ունի ընդ նոսա. և այլուր ասէ, թէ «Ոչ կոչեցիս զձեզ ծառայս, այլ բարեկամս». և ոչ ասաց, թէ զտանուտէրն թշնամանեցին, կամ բամբասեցին, այլ զօրինակս թշնամանացն դնէ՝ թէ բեեղզեբուղ կոչեցին։ Զպա և այլ իմն ոչ տակաւ

1 'Ի լուս. Խ։ ասա Ե։ 2 Զօրինակին չունի։

միթարութեան տայ, որ և բաւական էր կրթել զմիտս նոցա յառաքինութեան. և թուի թէ առ ամ իրս ասացեալ ինչ իցէ. ոչ առ ամ իրս, այլ առ այն և եթ որ ինչ առաջի կայր։

«Արդեաք ինչ է, ասէ, զաղտնի՝ թէ ոչ յայտնեսցի, և ոչ ծածուկ ինչ է՝ թէ ոչ ծանիցի»։ Եւ զոր ասէն՝ այսպիսի ինչ է, թէ շատ է ձեզ 'ի միթարութեան այն իսկ՝ զի ես հոս և վարդապետս եղէ հաղորդ բամբասանաց ձերոց։ Բայց թէ և այլ ևս ինչ դժկամակ լինիցիք 'ի լսել զբամբասանս, 'ի միտ առէք, զի յայնպիսի կարծեաց յետոյ ևս ազատ լինիցիք։ Ընդէր զարիցիք, եթէ կախարդս և մոլորեցուցիչս կոչիցին զձեզ. այլ անսասջիք փոքր մի, և ապա փրկիչս և եբախտաւորս ամ աշխարհս կոչիցին զձեզ։ Զանգի յայտնի իսկ ժամանակն զծածկեալն, և յանդիմանի զզրպարտութեան նոցա, և ածէ 'ի վեր զձեր առաքինութիւն։ Յորժամ արդեամբք իսկ երևեսջիք փրկիչք և երախտաւորք, և յանձին ցուցանիցէք զնաւառաքինութիւնս. յորժամ արդեամբք իսկ երևեսջիք լուսաւորք, ապա ոչ նոցա բանիցն անսայցեն մարդիկ, այլ արդեանցն ճշմարտուն. և նոքա զրպարտք և սուտք և չարախօսք լինիցին, և դուք քան զարեգակն ևս պայծառագոյն երևեսջիք։ Յորժամ բազում ժամանակս յայտնեալ քարոզիցին զձեզ առաւել քան զփողոց հնչիւն, և քան զամենեսեան վկայս ձերում առաքինութեանն կայցեն։ Օ՛ի թէպէտ և այժմու բանքս կասեցուցանեն զձեզ, այլ յոյս հանդերձելոց բարեացն յորդորեսցէ զձեզ. զի չէ ինչ հնար՝ թէ թաքչիցին ձեր իրք։

Եւ իբրև յամ կասկածելոյ և յերկիւղէ ազատեաց զնոսա, և բարձրագոյնս արար 'ի նախատանաց, ապա 'ի դէպ ժամանակի և վասն համարձակութեան քարոզութեանն ճառէ։ «Օ՛ որ ինչ ասեմ ձեզ 'ի խաւարի, ասացէք 'ի լոյս, և զոր ինչ յականջս լսէք՝ քարոզեսջիք 'ի վերայ տանեաց»։

Թէպէտ և չէր խաւար՝ զի զայսպիսի բանս խօսէր, և ոչ յականջս ինչ չշնչէր, այլ մեծաձայն բարբառով, բայց քանզի ընդ նոսա միայն խօսէր, և 'ի միում անկեան, վասն այնորիկ 'ի խաւարի և յականջս

նէ՝ ասէ, առ այնչափ համարձակութիւն՝ որ լինելոց էր՝ և նոքօք խօսել ընդ տիեզերաց յետոյ, տալ նոցա զօրինակն, զոր նովին բանիւ զատանէ։ Զի ոչ ասէր, թէ միում կամ երկուց կամ երից քաղաքաց, այլ ընդ ամ աշխարհ քարոզեցէք. ընդ ծով և ընդ ցամաք հատեալք անցեալք, ընդ շէնս և ընդ անշէնս, բռնաւորաց և ռամկաց, փիլիսոփայից և հեթանոսաց յայտ յանդիման մերկագլուխ պատմեցէք։ Զ ամն այնորիկ ասէ «Ի վերայ տանեաց, և Ի լոյս»։ Թէ առանց խորշելոյ և զանգիտելոյ։

Զ՝ ընդէր արդեւք ոչ ասաց միայն, քարոզեցէք Ի վերայ տանեաց և Ի լոյս, այլ յաւել՝ թէ զոր ինչ Ի խաւարի և յունկանէ լսիցէք։ Զի յորդորեսցէ զմիտս նոցա. զոր օրինակ յորժամ ասիցէ, թէ «Զոր հաւատայ յիս, զգործսն զոր ես գործեմ՝ և նա գործեսցէ»։ Նոյնպէս և աստ յայտ արարեալ՝ եթէ զամենայն ինչ նոքօք աւելի գործէ քան անձամբ, վասն այնորիկ դնէ զայս սկիզբն։ Զ՝սէ, ես իսկ անձամբ ցուցի, և զեւսն աւելի ձեւք կամիմ վէճարել։ Զ՝ այսու՝ ոչ եթէ հրամայեմ միայն, այլ և զհանդերձեալսն յառաջագոյն գուշակեմ. և վստահ Ի բանսն առնէ թէ ամ իմիք յաղթիցեն. և զչարախօսութիւնն կասկած Ի միջոց բառնայ։ Զ՝որ օրինակ քարոզուիս, ասէ, մեղմով՝ ընդհանուր անցանիցէ, նոյնպէս և անուղղայ կարծիքն հրեից վաղվաղակի կորնչին։ Զ՝երբև յորդորեայ զնոսա և բարձրացոյց, ապա յառաջագոյն բարբառի զնեղութիւն՝ որ հասանելոց էին նոցա. թռուցանէ զմիտս նոցա, և Ի վեր քան զամենայն հանէ։

«Զ՝Ի երկնչիք, ասէ, յայնցանէ, որ զմարմինս սպանանեն, և զոգին ոչ կարեն սպանանել»։ Ցեսանեն, զիարդ քան զամ Ի վերոյ էհան կացոյց զնոսա. ոչ միայն հոգոց և բամբասանաց և նեղութեց, այլ և մահու՝ որ քան զամենայն ինչ ահագին թուի։ Հաւանեցուցանէ քամահել՝ ոչ վայրապար ինչ զմահու, այլ զբռնութիւն. և ոչ ասաց թէ չմեռանիցիք, այլ որպէս իւրում մեծութեն վայելէ՝ զայն յայտ արար։ «Զ՝Ի երկնչիք, ասէ, յայնցանէ, որ սպանանեն զմարմին, և զոգին ոչ կարեն սպանանել. այլ երկնչիցիք

առաւել յայնմանէ՝ որ զՀոգի և զմարմին կարօղ է կորուսանել 'ի գեհենի »։

Որպէս և միշտ հակառակորդաւն զնորին հակառակն յուցանէ, նոյնպէս և աստ. 'ի մահուանէ, ասէ, երկնչիցիք, և յայն սակս զանգիտէք քարոզել. վասն այնորիկ իսկ քարոզեսջիք՝ զի 'ի մահուանէ երկնչիք, և նոյն իսկ զերծուցանէ զձեզ 'ի ստոյգ մահուանէն։ Զոհպէտ և սպանանիցեն զձեզ, սակայն լաւութեն չկարեն յաղթել, թէպէտ և բազում անգամ կայցեն 'ի հենգնող։ Վասն այնորիկ իսկ ոչ ասէ՝ թէ չսպանանիցեն զոգի, այլ թէ չկարիցեն սպանանել. թէպէտ և կամիցին՝ չկարիցեն դամբգիտ լինել։ Զի եթէ 'ի տանջանացն երկնչիցիք, յայնմանէ երկնչիջիք՝ որ կարի դժուգակացոյն է։

Տեսանես, զի ոչ խոստանայ նոցա զերծուցանել 'ի մահուանէ, այլ թոյլ տայ մեռանել. զի քան զերծուցանել 'ի մահուանէ, հաւանեցուցանելն արհամարհել զմահ կարի մեծ է։ Լաւ արդ ոչ եթէ 'ի վիշտս կամի արկանել զնոսա, այլ 'ի վերոյ քան զվիշտս առնել զնոսա. և միով բանիւ վաղվաղակի զանմահութեն ոգւոյն հաստել զկրօնսն. և երկուք և երեք բանիւք զկենարար կրօնսն տնկէ. և այլովք մտօք մխիթարէ, զի մի կարծիցեն՝ յորժամ սպանանիցին և կոտորիցին, թէ իբրև 'ի ձեռաց ինչ թողեալք՝ կրիցեն զայնպիսի չարչարանս, դարձեալ յոյ տեսչութիւն ածէ զբանն։

« Ոչ ապաքէն երկու ճնճղուկք նաքարակտի։ միոջ վաճառին, և մի 'ի նոցանէ ոչ անկանիցի յորդայթ առանց հօրն ձեր, որ յերկինս է. բայց ձեր և հեր գլխոյ թուեալ է առաջի նորա »։ Զինչ ինչ նուազագոյն քան զճնճղուկս կայցէ. սակայն և նոքա չըմբռնիցին, ասէ, առանց այ գիտելոյ։ Ոչ զայն ինչ ասէ, թէ ած ածիցէ և արկանիցէ 'ի գործիս, որ չէ իսկ արժան այ. այլ թէ չիք ինչ ոչ լինիցի, և 'ի նմանէ թաքչիցի։ Բայց զձեզ և սիրէ իսկ՝ առաւել քան զամենայն հարս զորդիս իւրեանց. և այնպէս սիրէ, զի և հեր գլխոյ ձերոյ թուեալ է նմա. ապա

։ 'Ի լուս. ասորի։

չէ պարտ ձեզ երկնչել։ Այլ ոչ եթէ ՚ի ամ զմաղ գլխոյ թուիցէ, այլ զստոյգ գիտութիւն և զբազում տեսչութիւն յայտ առնէ այսուիկ։ Այսպէս թէ գիտէ զնմա ինչ որ լինելոց է, և կարող է ապրեցուցանել զձեզ, և կամի, որչափ ինչ և չարչարանս կրիցէք, մի կարծիցէք՝ թէ իբրև ՚ի ձեռաց ինչ թողեալ չարչարիցիք։ Ոչ կամի զերծուցանել զձեզ ՚ի վշտաց, այլ արհամարհել զվիշտսն ուսուցանէ։ զի այն իսկ առաւել զերծուցանէ ՚ի վշտացն։

«Ի ինչ այսուհետև երկնչիցիք, զի քան զբազում ՀՆՁՂՈՒԿս լաւ էք դուք»։ Տեսանեա՛ զի զահի իմն հարեալ էին։ և քանզի գիտէր զծածուկս սրտից նոցա, վասն այնորիկ ասէ՝ թէ մի երկնչիցիք։ Օ՛ թէպէտ և տիրիցեն, փոքուդ տիրիցեն։ զմարմնոյ ասեմ։ Թէպէտ և նոքա չապանանիցեն, սակայն բնութիւնն զնոյն բերէ, զի յայտնեսցի՝ թէ և ոչ նմա տիրեն։ Այլ եթէ յայտնանէ երկնչիցիք, ապա և՚ի մեծէն իսկ քաջ պարտիք երկնչել։ և երկնչել յայտնանէ՝ որ զմարմին և զհոգի առ հասարակ կարող է կորուսանել ՚ի գեհենի։ Այլ ոչ զանձնէ ինչ ասէ յայտնադոյն, որպէս յառաջինսն զանձն դատաւոր եցոյց։ այլ այժմ նմին հակառակ։ և զի ասէ՝ թէ զմարմին և զհոգի առ հասարակ կարող է կորուսանել, զտանջելն կորուսանել ասէ։ և ոչ թէ կորնչիցին ուրեք հագիքն, այլ ՚ի բարութեանցն վրիպեն, որ և չար ևս է քան զկորուստ։ Այլ արդ երկիցուք, մի յայտնցանէ որ զմարմին սպանանեն, այլ յայտնանէ՝ որ զոգին և զմարմին առ հասարակ տանջէ։ զի նոքա ոչ միայն զոգին, այլ և ոչ զմարմին ցանգ կարիցեն տանջել։ թէպէտ և առ ժամանակ մի բեւր կոտանօք կոտրիցեն, այլ ևս լուսաւորագոյնս յետոյ առնեն։ Տեսանեա՛, զիարդ ցուցանէ դիւրին զպատերազմունսն։ զի կարի իսկ տագնապեր զմիտս նոցա մահն, քանզի դեռ ահագին և սաստիկ հնչէր։ զի չեւ էր դիւրին առ ՚ի պարտել երևել, քանզի չեւ ևս էին՝ որք արհամարհելոց էին զնա, վայելեալ ՚ի հնարս հոգւոյն։

Այլ իբրև եհան ՚ի մտացն զահն և զկասկածն՝ որ յողդողդեր զմիտս նոցա, ապա յաջորդօքն ևս խրատեցոյս տայ, և երկիւղիւ զերկեւղն մերժէ, և ոչ միայն

Եկեղեցին, այլ և խոստմամբ մեծացն յուսոյ. և բա-
զում իշխանութիւն սպառնայ, և երկոքումբք յարդա-
ւել զնոսա 'ի Աշմարտութիւն համարձակութիւնն։

«Որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, և ես
խոստովան եղէց 'ի նա առաջի հօր իմոյ՝ որ յերկինս
է. և որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և
ես զնա առաջի հօր իմոյ՝ որ յերկինս է»։ Օ՛ի ոչ մի-
այն 'ի բարեացն, այլ և 'ի հակառակորդացն դրդէ[1].
և 'ի տրտմակնանն հանգուցանէ զբանն։ Այլ միտ
դիր հաստատութեամբ իրացն, զի ոչ ասաց՝ թէ զիս, այլ
թէ յիս։ Օ՛ի ցուցանիցէ, թէ ոչ անձին ինչ զօրու-
թեամբ, այլ 'ի վերին շնորհացն առեալ զօգնակա-
նութիւն՝ խոստովանի, որ խոստովանիցին[2]։ Իսկ զու-
բանալեացն ոչ ասաց՝ թէ յիս, այլ թէ զիս։ Օ՛ի
յորժամ ունայն լիցի 'ի պարգևացն, յայնժամ ու-
բանայ։ Այլ նորա զի՝ մեղ լցէ, ասէն, թէ յորժամ 'ի
ձեռաց թողեալ լցէ՝ յայնժամ ուրանայ։ Օ՛ի 'ի
ձեռաց թողլոյ պատճառք ինքն եղև որ թողաւն։

Այլ ընդ՞ի, ասէն, չհամարիցի բաւական զմտացն
հաւատս, այլ և զբերանոյ ևս խոստովանութիւն պա-
հանջիցէ։ Օ՛ի ևս 'ի համարձակութիւն կրթիցէ, և
առաւել սէր և գութ 'ի միտսն բորբոքիցէ. և բարձ-
բագոյնս և փառաւորս առնիցէ։ Զատն որոյ առ-
ամենեսեան իսկ Ճառէ. զի ոչ յաշակերտացն ևեթ
'ի դէմս հանէ զբանն, և ոչ զնոսա միայն, այլ և զա-
շակերտեալսն 'ի նոցանէ յարդարէ առաքինիս։ Օ՛ի
որ զայսպիսիս ուսանիցի, ոչ միայն համարձակ ուսու-
ցանիցէ[3], այլ և զբարբարանսն յանձն կրթիցէ դիւրաւ
և յօժարութեամբ։ Զոյնս և զբազումս իսկ յօժա-
րեցոյց ածել առ առաքեալսն, և հաւատալ բանիս
այսմիկ։ Զանզի և 'ի տանջանսն պատիժք բազումք
են, և 'ի բարութենն մեծամեծ հատուցմունք։

Այլ քանզի ժամանակաւն յոլովք ուղղագործն, և
յամբելով 'ի պատժոցն՝ կարծէ շահիլ ինչ յանցա-
ւորն, նմին համեմատ՝ մանաւանդ թէ յոյժ իսկ ա-
ռաւել յոլովութիւնս էմոյծ յաւելուածով հատուց-

1 'Ի լուս. խնդրէ։
2 'Ի լուս. խոստովանի, և խոս-
կովանիցին։
3 Յօրինակին սոսանիցէ։

մանն։ Դգահեցեր, ասէ, դու չլինելովն յառաջագոյն յիս խոստովան. գրեմ[1] և ես զքեզ ասա՝ մեծամեծս հատուցանել, և անչափ մեծամեծս քէն, զի և ոչ ես զքեզ խոստովան եղէց։ Տեսանէս, զի բարիք և չարիք համբարեալ կան։ Այլ արդ ընդէր ձեպիս և փութայցես և ասէն խնդրիցես հատուցումն՝ յուսովն ապրեալդ։ Վասն այնորիկ թէ առնիցես ինչ լաւութի, և չառնուցուս ընդ այնր ասէն ինչ հատուցումն, միտ դիր, քանզի յաւելուածովք 'ի հանդերձեալ ժամանակին պահի քեզ ընդ այնր հատուցումն։ Այլ եթէ չարիս ինչ գործեսցես՝ և չտայցես ինչ վրէժս, մի ինչ ծուլայցես, քանզի անդ կայցեն մնայցեն քեզ պատիժք, թէ չդառնայցես և լինիցիս պիտանի։

Այլ եթէ այնմ չհաւատայցես, ասա ինչ իրօք առ զհանդամանս հանդերձելոյն։ Օր թէ 'ի պատերազմաց ժամանակի այնպէս պայծառագոյն իցեն դաւանողքն, զմտաւ ած՝ թէ 'ի ժամանակի պսակացն որպիսիք լինիցին։ Լոկ ասէն թշնամիքն գովիցեն, որ քան զամ հարս յաձախագուլթ հայրն է՝ զիարդ ոչ մեծարիցէ՝ և մեծաձայն քարոզ առաջի հրամայիցէ կարդալ։ Յայնժամ գայցեն մեզ ընդ բարեացն պարգևք, և ընդ չարեացն պատիժք. որպէս զի ուրացողքն և ասա և անդ կրիցեն վնաս։ Այս՝ զի 'ի չար խիղճ մտացն կայցեն. թէ յայնժամ չմեռանիցին, սակայն մեռանելոց են. և անդ զանհնարին պատիժս կրիցեն։ Լոկ այլք և ասա և անդ շահիցին. զի ըստ՝ վաձառաց շահն գործիցեն. և քան զկենդանիսս եղեն այնուհետև պայծառագոյնք. և անդ յանձառ բարութիւն վայելիցեն։ Զանզի ոչ եթէ 'ի տանջելն միայն, այլ և 'ի բարի առնելն պատրաստ է ած. և յայս յոլովագոյն քան յայն։ Զայց ընդէր զայս միանգամ զնիցէ, և զայն կրկին։ Զանզի գիտէ՝ թէ այնու առաւել գտանի զգաստութիւն. վասն այնորիկ ասէ, թէ «Զրկերուք յայնմանէ՝ որ զոգի և զմարմին կարող է կորուսանել 'ի գեհենի»։ Այլ դարձեալ

1 'Ի լուս. գլխմ։

ասէ, թէ «Ուրացայց զնա և ես». սոյնպէս և Պաւղոս ասէպ յիշեցուցանէ զգէհենէն։

Իբրև կրթեաց զլսօղսն ամենայնիւ, քանզի և զերկինս էբաց նոցա, և զահագին ատեանն ած կացոյց 'ի վերայ, և զՀրեշտակս 'ի տեսիլ կուտեաց, և ըզպսակացն խոստմունս, և յառաջագոյն Ճանապարհ հորդեաց բանիւն՝ դիւրութեամբ ածպարտութեան, այնուհետև վստահ իսկ առնէ. զի մի 'ի նոցա վատասրտութենէ խափան քարոզութեան լինիցի, և 'ի սպանութենէ իսկ պատրաստագոյնս հրամայէ գտանիլ նոցա. զի ուսանիցին՝ թէ որք մեղրութեամբն մեղին, և ընդ նոցա նենգն գործելոյ վրէժս տալոց են։

ՑՈՐԴՈՐԱԿ

ԱՐՀԱՄԱՐՀԵՍՑՈՒԹ այսուհետև և մեք զմահ, թէպէտ և չիցէ ինչ այնպիսի ժամանակ՝ որ զայն պահանջիցէ, զի և յԱս առաւել կեանսն փոխեսցուք[1]։ ԱՅԼ մարմինն ինչ եղծանիցի, և ընդ այն տատամսիս. նա և վասն այնր պարտ է ուրախ լինել, զի մահն եղծանի, և մահկանացութիւնն կորնչի, և ոչ մարմնոյ բնութիւնս։ Քանզի ոչ եթէ անդրի ձուլեալ տեսանիցես՝ և կորուստ համարիցիս, այլ լաւ կազմած և նորոգութի։ Զնոյն և մարմնոյ իմա, և մի ողբասցես. քանզի յայնժամ պարտ է ողբալ, թէ 'ի տանջանս ցանգ կայր։

ԱՅԼ պարտ էր, ասեն, առանց մարմնոյ ապականութեան՝ այնմ լինել, և ողջ բովանդակ կալ մնալ նոցա։ Այլ զինչ օգուտ այն կենդանեացն էր, կամ որ շահ վախճանելոցն։ Մինչև յերբ մարմնասէրք, մինչև յերբ ցգետին քարշեալք և ստուերաց տենչացեալ իցէք։ Այլ արդ զինչ արդեւք օգուտ գործէր այն. մանաւանդ թէ զոր մեաս ոչ։ Զի թէ մարմինքն նախ չապականէին, քան զամ չարիս բռնաւորագոյնն՝ ամբարտաւանութիւնն մնայր առ բազում։ Զի թէ

1 'Ի լուս. ՀԻՆԳՆԵԱՆ ԵՎԹ։

այն լիներ, և որդանցն բերը բղխեին, և բազումք զաՃծ քամահեալ[1] հակառակեցան, զինչ արդեւք ոչ լիներ՝ թէ այն կայր մնայր։ Չորրորդ անգամ, և հաւատայր իսկ ոչ՝ եթէ յերկրէ իցէ. զի թէ 'ի վախճանին վկայել՝ տակաւին երկմտեն ոմանք, զոր ինչ ոչ կարծէին՝ թէ զայն չտեսանէին։ Չորրորդ անգամ, կարի իսկ սիրունք մարմինք թուէին, և բազումք մարմնաւորագոյնք և թանձրամիտք լինէին. եթէ մինչ ոմանք 'ի գերեզմանս փտին և 'ի տապանս ապականին, և այնպէս չհաւատալի իրք են, զինչ ինչ ոչ գործէին եթէ զպատկեր ողջ պահեալ տեսանէին։ Չորրորդ անգամ, և ցանկային իսկ ոչ հանդերձելոցն։ Հինգերորդ անգամ, որք զաշխարհս ամենայն համարէին լինել՝ առաւել 'ի սոյն հաստատէին, և բնաւ չհամարէին իսկ թէ ՈՃ արարիչ իցէ։ Վեցերորդ անգամ, և զառաքինութիւն ոգւոցն չառնուին յանձն, և եթէ որչափ առաւել է ոգին քան զմարմին։ Յութերորդ անգամ, բազումք իսկ զտուն և զքաղաքս թողուին, և 'ի գերեզմանս բնակէին, մերձաւորք իւրեանց մեռելոցն լինել և ցանգ խօսել ընդ նոսա։

Օ՛ի թէ այժմ պատկերս ստեղծանէն մարդիկ, յորժամ զմարմին չկարեն ունել 'ի բռին, և եթէ կամիցին և եթէ ոչ կամիցին՝ ծիւրէ անցանէ, բեւեռեալք ընդ տախտակսն են, զորպիսի՞ յառուի յայնժամ ոչ հնարէին։ Զուտ ինձ թէ և տաՃար իսկ շինէին այնպիսի մարմնոց. բազումք և զդեւս իսկ հաւանեցուցանէին խօսել. որք և այնպիսի իրաք մնքեանաւորել հմուտ են։ Բայց զի և այժմ իսկ՝ որք զուրուականաց հմայութիւնս յանդգնին, բազում ինչ ևս չար քան զայն յառութիւնս մտաբերեն, որչափ կռապարիշտք անտի լինէին. որք յետ մխիթարոյն իսկ և դաղաղ լինելոյ տակաւին զնոյն առնել հակառակին։

Օ՛այս ՈՃամ իսկ յառութիւն 'ի միջոց բարձեալ ՈՃ՝ խրատեալ զմեզ հեռանալ յայմ երկրաւորաց. ապակաւնէ զմարմինս առաջի աչաց մերոց։ Զանազի մարմնաւսէն, և որ 'ի կանանց զեղ պակշռեալ իցէ, եթէ բանիւք չխրատիցի, աչօք և արդեամբք իսկ տեսանի-

[1] 'Ի լուս. ասքոնաՃի համարէաչ։

ցէ զյոռութիւն բնութեան։ Վասնզի և բազում իսկ հասակակիցք կնոջ ուրուք սիրեցելոյ՝ թերևս գեղեց-կագոյն իսկ քան զնա յառաջագոյն մեռեալք, յետ միոյ և երկուց աւուրց հոտին, և ցումն և թարախ և որդունս ծնանին։ Այլ արդ զմտաւ ած, զոր գեղ սիրես, յորպիսի վայելչութեան երեսաց հարեալ ես։ Օ՛ի թէ մարմնք չապականէին, և ոչ այն իսկ բարւոք ճանաչէր· այլ զոր օրինակ դևք 'ի գերեզմանս ընթանան, նոյնպէս և բազումք 'ի սիրելեաց շիրիմն դեգերէին, և դիւաց յանձինս մուտ տային, և դժբնդակ մոլորութիւն վաղվաղակի իսկ մեռանէին։

Բայց սա աւասիկ, հանդերձ այլովք ամենեքումբք՝ և եղծանիլն ևս մարմնոյն՝ մինթարէ զմտսն· և անյայտ լինել պատկերին՝ մոռացօնս կարեացն գործէ։ Այթէ այն չէր, նա և գերեզմանք իսկ չգործէին· այլ և զբաղաքս ևս տեսանէիր փոխանակ անդրեաց մեռելովք լի, առ իւրաքանչիւր ցանկութեան զանցնիւր մեռեալս տեսանել· և բազում ինչ անտի եղծագործէին, և ոչ ոք 'ի բազմայ զոգւոց դարմանս դարմաներ, ոչ տայր թոյլ անմահութեան բանին 'ի միտսն մտանել· և այլ ևս ինչ բազում յոռութիւք քան ըզսոյն գործէին, զոր և ասել չէ բարւոք։ Վասն այնորիկ փութ վաղվաղակի, զի տեսանիցես մերկանդամ զոգւոյն գեղեցկութիւն· զի թէ նա այսպիսի գեղեցիկ է, և այսպիսի կենաց արժանի եղև, ուրչափ ևս առաւել նա ազնուագոյն իցէ· թէ գարշելիս և չարատեսս ունի շահել տիրել, ուրչափ ևս առաւել նա։ Վասնզի ոչ եթէ մարմինն ինչ գեղեցիկ է, այլ գործուածն և ծաղիկն, յոր ոգին զետեղեալ կայ հաստատեալ։ Միրեա այսուհետև զնա, որ և զսայն գեղեցիկ երևեցուցանէ։

Այլ զի՞ ասիցես զմահուանէ, ուր և ասատէն 'ի կեանսս ցուցանեմ քեզ՝ թէ զիարդ իսկ ամ գեղեցկութիւնք նորա է· զի թէ նա ուրախ իցէ, վարդ ցանէ զերեսաքն· և եթէ տրտում իցէ, հանեալ զգեղեցկութիւն՝ սեաւ պատմուճան զգեցուցանէ· իսկ եթէ ցանգ բերկրիցի, բարեշնան և լուսաւոր մարմնոն լինիցի· և եթէ տխատիցի, քան զսարդիոստեայն անօսրագոյն և կնատագոյն գործէ։ Դարձեալ եթէ ցանու-

ցու, տգեղ զերեսն և դարձուցանելն առնէ. և եթէ ակն հանդարտ ցուցանիցէ, առաւել գեղ վայելչութիւն շնորհէ։ Իսկ եթէ խանտայցէ, բազում դեղնութիւն և գունատութիւն հեղու զերեսօքն. և եթէ սիրիցէ, բազում գունաւորութիւն պարգևէ։ Այս այսպիսի իսկ բազում կանայք, որ չիցեն գեղեցիկ երեսօք, բազում վայելչութիւն 'ի խնդութենէ սրտին յաւելին 'ի գեղն. և այլք գեղեցիկ երեսօք, առ 'ի տգեղ զոգիսն գործելոյ՝ ապականեցին զերեսացն վայելչութիւն։ Այս միտ դիր, զիարդ յորժամ կարմրանայցեն երեսք սպիտակք, ազգի ազգի գունովքն բազում ցանկուն գործեն, յորժամ ամաչել պարտ էր և ակնածել. որպէս զի թէ անամօթ լինի, քան զնամ գաղանի չաբատես զերեսն գործիցէ։ Օ՛ի չիք ինչ գեղեցկագոյն քան զոգիս ազնուագոյնս, և ոչ ցանկալի ինչ այսպէս։ Օ՛ի մարմնոյ՝ տրտմութիւն է գուշեն. և հոգւոյն՝ սուրբ և առանց ալեաց ցանկութիւն։

Այս արդ ընդէր թողեալ զթագաւորն և 'ի կարապետն հարեալ իցես. զմէ՞ լքեալ զփիլիսոփոսն 'ի թարգմանս պակշոտիցիս։ Ցես զերանգսն գեղեցիկ. զնեաւ մանր և զնեբքին գեղն. եթէ զայն գեղեցկուն չունիցի, արհամարհեա և զայս։ Արանզի ոչ եթէ կլոն տգեղ երեսօք տեսանիցիս սքողեալ, տգեղ զնա համարիցիս. նոյնպէս և ոչ զգեղեցիկն զբարենչան՝ երեսօք սքողելովք, այլ 'ի բաց առնուլ զքօղն կամիցիս [1], և յայտ յանդիման յերեսան հայել։ Օ՛նդոյն և յոգւոյ իցս արա, և զնանախ մանր զնեա։ Արանզի 'ի քողոյ տեղի՝ մարմնդ է պատրուակ. վասն որոյ կայ մնայ մարմնդ նոյնպէս որպիսի իցէ. բայց ոգի թէ և տգեղ իցէ, կարէ վաղվաղակի լինել գեղեցիկ։ Այս եթէ ակն յոռի [2], անպայտ և բիրտ, կարօղ է լինել գեղեցիկ, հանդարտ և մեղմ և զգօն և յանդ։ Օ՛այն գեղեցկուն այսուհետև խնդրեսցուք նովին վայելչութիւն զարդարեսցուք զերեսս, զի և ՝ուծ ցանկասցի գեղոյ մերում, և պարգևեսցէ մեզ զերկնից բարութիւնսն շնորհօքն նոցա մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն փառք, իշխանութիւնն և պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Յօրինակին կարդէր։ 2 Յօրինակին թուէր յոռի։

ՃԱՌ ՏԱՍՆԵՐՈՐԴ

«Մի համարիք, եթէ խաղաղութիւն եկի արկանել յերկիր. ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր»։

ԴԱՐՁԵԱԼ ահագին ինն Ճառէ, և մեծաւ առաւելութեամբ։ Օրոր նոքա ընդդէմ բերելոց էին, զնոյն յառաջագոյն ասէ. զի մի յորժամ զայս ամ լսիցեն, ասիցեն՝ թէ վասն այնորիկ եկիր զի զմեզ կորուսանիցես, և զայնոսիկ որք մեզ հաւանիցին. և պատերազմաւ զերկիր ընուցուս։ Այսխսկ զնոյն ասէ, թէ ոչ եկի արկանել խաղաղութիւն յերկիր։ Իսկ նոցա զիարդ հրամայեաց, թէ յիւրաքանչիւր տուն յոր և մտանիցեն՝ ողջոյն ասիցեն. և զիարդ հրեշտակքն ասէին, «Փառք ի բարձունս այ, և յերկիր խաղաղութիւն». զիարդ և մարգարէքն զսորին տային աւետիս։ Այլ այն իսկ իցէ, ասէ, առաւել խաղաղութիւն, յորժամ զիւուն հանիցէք, և զկուռարանն ի միջոյ բառնայցէք, և այնպէս իսկ մարթիցի երկնից ընդ երկիրս միաբանել։ Որանզի և բժիշկ յայնժամ բուժէ զմարմին, յորժամ զիւուն չբժշկեալ ի բաց կտրիցէ, և զօրաւոր յորժամ զանդէպ գումարեալսն ցրիցէ։ Որպէս առ աշտարակաւն, զի զանդէպ խաղաղութիւն՝ դիպող երկպառակութիւն լուծանէր. և ապա լինէր խոր խաղաղութիւն։ Այնպէս և Պաւղոս զորս վասն նորայն մեղմեխանօք միաբանեալ էին՝ քակտէ. և առ Աբովթաւ միաբանութիւն քան զամ պատերազմունս դժնդակ էր։

Օ ի ոչ ամենայն ուրեք ինչ միաբանութիւն բարւոք իցէ. ապա թէ ոչ և աւազակք ընդ աւազակս միաբանին. և ոչ ըստ իւրաքանչիւր միաբանութեամբ բարի գործ ինչ կատարի, այլ ըստ իւրաքանչիւր կամաց կամ պատերազմ կամ խաղաղութիւն։ Որանզի նա այնպէս կամէր՝ զի ամենեքեան միաբանեսցեն յաճապարտութիւն. բայց քանզի ինքեանք անձամբ գրգռին, վասն այնորիկ լինի պատերազմ։ Այլ ոչ ասաց ինչ

այնպիսի. այլ թէ ես ոչ եկի արկանել խաղաղութիւն, զի զնոսա միսիթարեսցէ. մի, ասէ, կարծիցէք՝ եթէ դուք իցէք պատճառք այնր. այլ ես եմ որ կազմեմ զայն այնպէս. քանզի յայն իսկ եկեալ ստիպեմ։

Այս արդ մի ինչ խռովեսջիք, եթէ յանկարծագործ ինչ իրք լինիցին. վասն այնորիկ իսկ եկի, զի մարտ արկից յերկիր, այն իսկ են իմ կամք. մի ինչ զանգիտիցէք, յորժամ տեսանիցէք զերկիր 'ի պատերազմունս. յորժամ քակեսցի 'ի բաց յոռին, ապա 'ի լաւն խառնեսցին երկինք։ Զայս վասն այլոց չար կարծեացն ասէ, և զնոսա 'ի սնդութիւն կրթէ։ Մէ՛ ասաց պատերազմ, այլ ևս դաժանագոյն, սուր. զի թէպէտ ահագինք իցեն բանքն և դժնդակագոյնք, ընդ այն մի ինչ խռովեսցիս։ Խիստ բանիւքն զնոցա լսելիսն կամի ածել 'ի կրթութիւն. զի մի յորժամ դժուարին իրք 'ի վերայ հասանիցեն զանգիտիցեն. և այնպէս իմն զբանն կերպարանեաց։ Այս դարձեալ զի մի ոք ասիցէ, թէ հրապուրելով հրապուրեցայց զնոսա, և զդժուարինսն թաքցայց, վասն այնորիկ զահագինսն ևեթ և զդժուարինսն առաջի դնէ. զի լաւ իցէ զարդիւնսն մեղմագոյնս տեսանել, և ոչ ըղբանսն. վասն որոյ և ոչ զայս միայն բաւական համարի, այլ ևս սաստիկ տայ զպատերազմին նշանս, թէ և անդէն իսկ 'ի մէջ ընտանեաց լինիցին պատերազմունք։

«Այկի, ասէ, քակել զայր 'ի հօրէ և զդուստր 'ի մօրէ, և զնու 'ի սկեսրէ»։ Զի ոչ միայն 'ի մէջ բարեկամաց և քաղաքացեաց լինիցին կռիւք, այլ և ընտանիք ընդ ընտանիս, և ազգք ընդ ազգ անկանիցին, և ինքն իսկ բնութիւնն ընդ անձին կռուիցի։ Զի «Այկի քակել զայր 'ի հօրէ, և զդուստր 'ի մօրէ, զնու 'ի սկեսրէ»։ Այս ոչ եթէ դոյզն ինչ թայրաթոտք ընդ միմեանս անկանիցին, այլ կարի հարազատք և սիրելիք միմեանց. յորս առաւել նորա զօրութիւնն երևեսցի։ Այս այն էին զարմանք, զի և ինքեանք ախորժելով լսէին[1], և զայլսն ևս հաւանեցուցանէին։

1 'Ի լուս. ասէին։

թէպէտ և ոչ նա ինչ էր պատճառք պատերազմին՝ այլ նոցա չարութիւն, սակայն զանձն պարտառնէ՝ թէ ես եմ։ Օ ի այնպէս իսկ է սովորութիւն գրոց· որպէս և այլուր իսկ ասէ. «Լու ետ նոցա ՝ճծ աչս զի մի տեսանիցեն»։ Օ այս ասէ՝ զի յառաջագոյն ընդ ելնուցուն ընդ բանսն, և մի ինչ խռովիցին՝ յորժամ թշնամանիցին և նախատիցին։ Այլա թէ ոմանք ծանուցս ինչ զբանսն համարիցին, զմնաւ ածցեն ըզ հին պատմութիւնս. զի և յառաջին ժամանակսն այսպիսի գործեցան, որք առաւել զհինն նորոյս ազգական ցուցանեն, և եթէ որ զայս ասաց, նոյն է՝ և որ զայն պատուիրեաց։ Օ ի և առ հրեիւքն յորժամ իւրաքանչիւր այր զընկեր կոտորէին, յայնժամ արձակեր զբարկութիւն, և յորժամ զորթն արարին, և 'ի Մեղրեդովը կատարեցան[1]։

Լու արդ ՝ուր իցեն, որք ասեն՝ թէ այն ՝ճծ չար էր, և սա բարի, որ այսչափ հարազատաց արեամբք ելից զտիեղերս։ Այլ սակայն և զայս բաղում մարդասիրութիւն գործ համարիմք։ Լու այսու յայտ առնէ, եթէ և զառաջինն նոյն արար. և զմարգարէութիւն յիշեցուցանէ, թէպէտ և ոչ զսոյն ասիցէ, այլ այսպիսի իմն յայտ առնէ թէ «Լցիցին թշնամիք առն ընտանիք իւր»։ Օ ի և առ հրեիւքն այսպիսի գործ գործեցան։ Լին մարգարէք, և սուտ մարգարէք. և ժողովուրդն երկպառակեալ, և տունք ընդ միմեանս անկեալ. կէսքն՝ նոցա հաւատային, և կէսքն՝ սոցա։ Ա՛ն այնորիկ և խրատ իսկ տայ մարգարէն, թէ «Մի՛ հաւատայք բարեկամաց ձերոց, և մի՛ յուսայք յառաջնորդս. և 'ի կնոջէ քումմէ պահեսջիր զբանս քո, և թշնամիք առն ընտանիք իւր են»։ Օ այս ասելով, զի զայն՝ որ զբանն ընդունելոց էին, վերագոյն քան զնմա յարդարիցէ։ Ա՛յ թէ մեռանիլն չար ինչ իցէ, այլ չարեօքն մեռանիլ։ Զանազն ասէ իսկ, թէ «Հուր եկի արկանել յերկիր»։ և այսու առաւել իմն սէր պահանջէ 'ի մէնջ։ Զանազն ինքն կարի յոյժ սիրեաց զմեզ, նոյնպէս կամի և ինքն 'ի մէնջ սիրել։ Լու այսպիսի բանիւք, զի նոքա օգ-

1 'Ի լուս. Խոսրէցոն։

տիցին և բարձրագոյնք երևեսցին։ Այլ թէ նոքա, ասէ, որ 'ի ձէնջ աշակերտեսցին, զաղջ և զտոհմ և զորդիս և զհարս արհամարհելոց իցեն վասն իմ, 'ի միտառ թէ ձեզ վարդապետացդ որպիսի ինչ պարտ է լինել։ Ա՛յլ թէ ձեզ միայն հասանիցեն դժուարինքն, այլ և առ նոսա և հասանիցեն։ Այլ քանզի բազում բարութիս օղերձեալ բերի, ասէ, մեծամեծ բարութիս և գութս պահանջեմ։

«Որ սիրէ զհայր կամ զմայր, ասէ, առաւել քան զիս, չէ ինձ արժանի. և որ սիրէ զորդի կամ զդուստր առաւել քան զիս, չէ ինձ արժանի. և որ ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ, չէ ինձ արժանի»։ Տե՛ս սանե՛ս զպատիւ վարդապետին. հայիս, զիարդ ցուցանէ զանձն Աստմարիտ որդի ծնողին. զամ ինչ 'ի խոնարհ հրամայէ թողուլ, և զիւր սէրն ևեթ պատուական համարել։ Այլ զինչ ասիցեմ, ասէ, զբարեկամս կամ զաղգատոհմն. եթէ զքո իսկ ոգիդ նախամեծար քան զիմ սէրն առնիցես, չես ինչ մեծելոց յիմ աշակերտութի։

Այլ արդ չիցէ՞, ասեն, այս հնոյն հակառակ. քանզի անդ զկռապարիշտսն ոչ միայն ատեայր, այլ և քարկոծ հրամայէր առնել. և յերկրորդ օրէնս զնոյն իմն յարգէ, թէ «Որ ասիցէ ցհայր կամ ցմայր՝ եթէ ոչ տեսի զձեզ, և զեղբարս իւր ոչ ճանաչիցէ, և զորդիս իւր ոչ ընտրիցէ, պահէ զպատուիրանս քո»։ Ա՛պա թէ Պաւղոս բազում ինչ վասն ծնողացն պատուիրէ, և ամենևին հպատակ հրամայէ նոցա լինել, որք յանծպաշտութենն չլինիցին նոցա վնասակարք. ապա թէ աւելի ինչ պատիւ՝ որ ՚այ վայելէ, զայն անձանց խնդրիցեն, այսմ չէ պարտ անսալ, և ոչ յանձին ունել։ Ա՛ն որոյ և Ղուկաս ասէ. «Այլ թէ որ գայցէ առ իս՝, և ոչ ատիցէ՝ զհայր իւր և զմայր և զկին և զորդիս և զեղբարս, նա և զանձն ևս, ոչ կարէ իմ աշակերտ լինել»։ Ա՛յլ վայրապար ինչ հրամայէ ատել, զի այն կարի իսկ անօրէն գործք են. այլ յորժամ կամիցի աւելի քան զիս սիրել 'ի քէն, յայնժամ աստուծիր. զի այն զնա և զքեզ որ սիրեցերդ՝ առ հասարակ կորուսանէ։

Օ այս ասելով և զորդիսն առաքինիս կատարէ, և զՀարսն խափանիլս ցուցանէ։ Օ՛ի յորժամ տեսանիցեն թէ այնպիսի զօրութիւն է՝ որ կարող է զորդիսն քակել՝ի նոցանէ, մի՛ ինչ ժամիցին խափանել զորդիսն, զի մի՛ ամենևին անկանիցի՝ի նոցանէ։ Վա՜ յսորիկ թողեալ զսոսա՝ առ նոսա ձգէ զբանն, թէ մի՛ ինչ ջանայցէք ընդ անհնարինսն։ և զի մի՛ զչարիցին ինչ և դժամակ լինիցին, տես, ուր և յառեալ տանի զբանն։ զի յետ ասելոյն թէ «Որ ոչ ատիցէ զՀայր կամ զմայր», յարէ՝ի նոյն՝ թէ «Այլ զանձն ևս»։ Այլ արդ զի՛ զչարիցիս, ասէ, զի զՀայր և զմայր և զեղբայր և զքոյր և զկին և զորդիս հրամայեցի ատել։ զի քան զանձն այլ ինչ մտերիմ ուրուք ո՛չ կայ։ այլ թէ զայն ևս չատիցես՝, հակառակ գործս ցուցանիցես այնմ որ սիրեացն։ Այլ ո՛չ վայրապար ինչ հրամայէ ատել, այլ և՝ի մարտ և՝ի պատերազմ հրամայէ զանձն տալ, և՝ի մահ և յարիւն մատնել։

«Որ ո՛չ առնու, ասէ, զխաչ իւր և գայ զկնի իմ, չէ ինձ արժանի»։ Ո՛չ վայրապար՝ի մահ ինչ հրամայիցէ պատրաստել, այլ՝ի բռնութեն, այլ և՝ի նախատանացն։ Այլ չէ ևս զիւրոյ չարչարանացն ձնռէ, զի յորժամ ընդ այն բանս ընդեղնուցուն, ապա գիւրաւ և զնորա չարչարանաց ձառս ընդունիցին։ Այլ դու տես, զիարդ չիցէ պարտ զարմանալ, թէ մինչ զայս ամ լսէին, ո՛չ պակէին և ելանէին ոգիքն՝ի մարմնոց։ զի տրտմականքս ամ անդէն առ ոտս բուսեալ, և հեշտականքն յոսով ևեթ խոստացեալ։ Այլ յայն տակս ինչ ո՛չ մեռանէին[2], զի բազում էր զբութի սասղին, և յորդ և յոքն սեր լսողացն։ զի ևս տաղտկալիս և ահագինս քան զաւագ որեարոյն լսէին, զՍոմսեսի ասեմ և զՅրեմիայէ, և հաւանեալք յանձն առնուին, և ո՛չ ինչ դիմադարձ լինէին։

«Որ գտանէ զանձն իւր, ասէ, կորուսցէ զնա։ և որ կորուսցէ վասն իմ՝, գտցէ զնա»։ Տեսանես, որպիսի ինչ մեսս է այնոցիկ՝ որ աւելի քան զդէպսն սիրիցին։ և որպիսի շահ այնոցիկ՝ որ՝ի դէպսն ատիցեն։ Այլ քանզի հրամանքն ծանուցեալ էին, զի ընդ հարս

1 Յօրինակին ոգիոցն։ 2 ՝Ի լուս. յայն սակս ինչ ոչ մեռանէին։

և ընդ որդիս և ընդ բնութիւնն իսկ և ընդ ազգի և ընդ տոհմի և ընդ ամ տիեզերս և ընդ անձին և ս հրամայէ կուռել, զնե՛ ապա և զմեծ շահն 'ի միջի, եթէ ոչ միայն վնասցէ ոչ, այլ և ս մեծամեծ օգուտս գործիցէ. և սորին հակառակն իցէ՝ որ վնասիցէն։ Որպէս և միշտ, զոր սիրիցեն՝ այնու յօժարեցուցանէ մարանչել։ Ինդէ՞ր չկամիցիս քամահել զանձն. ոչ ապաքէն զի սիրիցես. և եթէ այդպէս իցէ, վասն այնորիկ արհամարհեա, և յայնժամ առաւել շահիցիս, և սիրելոյ գործ ցուցանիցես։

Այլ միտ դիր անբաւ իմաստութենն։ Օ՛ի ոչ միայն 'ի հարցն և յորդւոցն կրթէ, այլ և յանձնէ և ս, որ քան զամենայն ինչ մտերմագոյն է. զի և այն այսու առանց երկմտութեան լինիցի, և ուսանիցին թէ և նոքա և ս առաւել այնու օգտեցան, յորժամ և քան զամ կարևորս և յանձն և ս ոչ խնայեցին վասն այ։ Բաւական էր և այս զայնոսիկ՝ որք ընդունելոց էին զնոսա, հաւանեցուցանել. զի ո՞ որ տեսանէր զայնպիսի առաքինիս և զյաղթօղս՝ որք իբրև զառիւծունս ընդ ամ տեղիս ընթանային, և զամ ինչ իւրեանց օգուտ թողեալ՝ զի զայլս ապրեցուսցեն. և ո՞վ ոչ ամ յօժարութիւ ընդունէր զնոսա։

Սակայն և վարձս 'ի միջի դնե, և ցուցանէ առաւել ասպնջականացն քան հիւրոցն լինել խնամածու, և զգլխաւոր պատիւն տայ։ « Որ զձեզ, ասէ, ընդունի, զիս ընդունի. և որ զիս ընդունի, զառաքիչն իմ ընդունի»։ Որոյ զինչ այլ ինչ կայցէ զուգական, որ հօր և որդւոյ միանգամայն լինիցի ասպնջական։ Ինդ սմին և այլ ինն հատուցումն խոստանայ, թէ « Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի, զվարձս մարգարէի առցէ. և որ ընդունի զարդարն յանուն արդարոյ, զվարձս արդարոյ առցէ »։

Վերագոյն և սպառնայ չընդունելեացն. բայց աստ և հանդիսիստ և բարութեաց սահմանէ ընդունելեացն։ Այլ զի գիտասցես, թէ և նոցա աւելի և ս խնամարկէ, ոչ լոկ ասաց՝ թէ որ ընդունի զմարգարէ և զարդար, այլ ածէ զնովիմբ, եթէ յանուն մարգարէի և յանուն արդարոյ։ Այն իսկ է. յորժամ ոչ վասն աշխարհիս ինչ իրաց պաշտպանութեան, և ոչ վասն

այլ իրիք առժամայն անցաւորացս ընդունիցի, այլ զի մարդարէն է և կամ արդարն, զվարձս մարգարէին և զվարձս արդարոյն առցէ։ Այլ եթէ չիցէ որ մարդարէ կամ արդար, և նա յանուն մարգարէի և արդարոյ ընդունիցի, սակայն զվարձս մարգարէի և արդարոյ առնուցու. և եթէ ոտոյգ որ իցէ՝ զոր ընդունիցին, այն ևս առաւել լաւութիւն է։ Այսպէս զոր և Պաւղոս ասէ, թէ «Ձեր առաւելութիւն լիցի ի լուսին նոցա պակասութիւն, և նոցա առաւելութիւնն՝ լուսին ձերոյ պակասութիւն»։

Այսպէս զի մի զաղքատութիւն որ պատճառս դնիցէ, «Որ արբուսցէ, ասէ, միում ումեք ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ յանուն աշակերտի, մի կորուսցի վարձք նորա»։ Թէպէտ և բաժակ մի ջուր ցուրտ տայցես, ուստի քեզ ծախս ինչ ոչ լինիցի, սակայն և ընդ այնր վարձք կայցեն ինայցեն քեզ. վասն ձեր, ասէ, ընդունելեացդ առնեմ զամ։ Տես, ոչչափ բանիւք հաւանեցոյց, և զամ տունս տիեզերաց եբաց նոցա առաջի. և ամենեին եցոյց՝ թէ պարտապանք նոցա են։ Այս ասելովն, թէ «Այժանի է մշակն վարձու իւրում». երկրորդ անգամ, զի առանց պախրեի և պաշարի առաքեաց. երրորդ անգամ, զի ի մարտ և ի պատերազմ վասն ընդունելեացն մատնեաց. չորրորդ անգամ, զի և նշանս առաւել հաւատաց ի ձեռս նոցա. հինգերորդ անգամ, զի զամ բարութեաց պատճառն զնաղաղուին՝ նոցա բերանովքն տանել յամ տունս ընդունելեացն հրամայեաց. վեցերորդ անգամ, զի ևս չար քան զսատանայն սպառնացաւ այնոցիկ՝ որք զնոսայն չընդունիցին. եւթներորդ անգամ, զի յուցցէ թէ զնա և զՀայր ընդունելոց են՝ որք զնոսա ընդունիցինն. ութերորդ անգամ, զի մարգարէի և արդարոյ վարձս խոստացաւ տալ. իններորդ անգամ, զի ընդ բաժակի միոյ ցուրտ ջրոյ խոստացաւ մեծամեծս հատուցանել։ Այս և իւրաքանչիւր մի մի ի նոցանէ կարօղ էր յորդորել զտեսօղսն։ Որ տեսանիցէ զզօրավար՝ բաղում վերս ի յանձն առեալ, և յարիւն և յապաժոյժ համակեալ, և մեծաւ յաղթութիւն ի պատերազմն դարձեալ, և ո՞ որ ոչ բանայցէ զամենայն

գրուեսս իւր՝ և լինիցի այնպիսուոյն վանք։ Այլ այժմ, ասեն, ուր գտանիցի այնպիսի ոք։ Պէտ այնորիկ իսկ յաւելու, թէ յանուն մարգարէի և արդարոյ և աշակերտի, զի ուսանիցիս, թէ ոչ վասն հիւրոցն պատուոյ, այլ ըստ մտաց ասսմնջականացն զնոսա վարձս։

ԳՈՐԴՈՐԱԿ

Այլ ասա՛ի մարգարէից և յարդարոց և յաշակերտաց անուն ասէ. իսկ այլուր և զկարի անկածսն հրամայէ ընդունել. և որք չընդունին՝ նոցա տանջանս սպառնայ։ «Որովհետև, ասէ, ոչ արարէք միում՝ ի փոքրկանց, և ոչ ինձ արարէք». և զնորին հաւատակն դարձեալ առ նոքուանքն ասէ։ Թէպէտ և չիցէ ինչ ուրուք գործ ինչ բարի գործեալ, սակայն մարդ է, և՝ ի նմին աշխարհի բնակեալ, և զնոյն աբև տեսանէ, զնոյն օդի ունի, նմին տեն ծառայ, և նորին խորհրդոց խորհրդակից, և՝ ինոյն երկինս հրաւիրեալ, և մեծ իրաւունս զաղքատութիւն ունի և զկարօտութիւն կարևոր կերակրոցն։

Յորժամ պահայոյզքն շրջիցին, և փողովք և քնարօք՝ ի ժամնակս ձմերայնոյ՝ ի քնոյ զարթուցանեն, և զուր և ընդ վայր թախանձիցեն, պարգևս բազումս առնուն և զնան։ Այլ որ զծիծառունսն շրջեցուցանեն, մրրեալս և օձեալս և ամենեցուն ամբառտանս, վարձս ընդ հաւատմայութիւն առնուն։ Այլ եթէ աղքատ ոք կարօտեալ՝ առ վշտին մատուցեալ աղաչիցէ վասն պատառոյ միոյ հացի, անդ տեսանես ազգի ազգի չարախօսութիւն, բամբասանս, վատուեց պարսաւանս։ Այլ զայն չածիցես զմտաւ, թէ և դու վատանաս, և սակայն ոչ զիւրն տայ քեզ։

Այլ զայն մի՛ ինչ ասիցես, թէ ես գործ գործեմ, այլ զայն ցոյց՝ եթէ վասն ո՞յ գործիցես։ Ո՛չ եթէ վաճառատցն տուրևառիկք կամ այլոց շահից ինչ հայթայթանքք իցեն գործն, այլ ողորմութիւն և աղօթք, և նեղելոց վերակացու լինել, և որ այլ ինչ նոյնպիսիք, յորոց այսչափ՝ ի վատութիւն հատեալ եմք։ Սա

կայն չասէ՝ ՃԾ, եթէ վասն զի 'ի վատութեէ հատեալ էք, չծաղեմ զարեգակն, շինջուցանեմ զլուսին, կապեմ զարգանդ երկրի, խնուամ զակունս աղբերաց, ցամաքեցուցանեմ զգետս, արգելուամ զօդս, կարձեմ զտարեւոր անձրեւս։ Այլ զամ ինչ առատութեամբ պարգեւէ։ և ոչ միայն վատաց, այլ և չարագործաց եւ հնարէ վայելել։ Իսկ եթէ տեսանիցես զաղքատն, և ասիցես, թէ հեղձնուամ և մղձկիմ, զի մանուկ մարդ է և ողջ, և չունի ինչ ցաւս յանձին, և մուրով կամի կեալ, 'ի վատութեէ հատեալ, ծառայ ուրեմն 'ի տերանց փախուցեալ։ Այս զայս համ՝ զոր ասացի, դու զքումմէ անձնէ ասա. մանաւանդ թէ նմա իսկ տայցես համարձակութիւն ասել։ Այս յիրաւի իսկ ասիցէ, թէ հեղձնուամ և մղձկիմ, զի ողջդ ես և 'ի դատարկութեան հատեալ, և չառնես ինչ 'ի պատուիրանացն ՅՍ, այլ փախստական ես 'ի հրամանացն ՅՍն. յածեալ շրջիս, և զայլոց տունս ձանձրացուցանես. արբենաս, գողանաս, յափշտակես զայլոց, կործանես զտունս։ Այս դու վատութեամբ մեղադիր լինիս, և նա չարութիւն գործոց քոց, յորժամ խարիցես և սուտ երդնուցուս և յափշտակես և այլ ինչ նոյնպիսի գործս գործիցես։

Զ այս ասեմ, ոչ զի 'ի վատութիւն ինչ հատեալ դրդեմ. քաւ լիցի. այլ կարի իսկ կամիմ զամենեսեան 'ի գործս վաստակել. քանզի զամ չարիս դատարկութիւն ուսոյց։ Այլ աղաչեմ, մի անողորմ և անագորոյն լինել. զի Պաւղոս յաճախ մեղադիր լինի՝ և ասէ, թէ «Որ ոչ կամի գործել, և կերիցէ մի»։ և չեկաց յայնմ աւեթ, այլ յաւել՝ թէ «Զուք մի ձանձրանայք զբարիս գործել»։ Այլ սակայն այս այնմ հակառակ է. զի եթէ հրամայեցեր նոցա չուտել, մեզ զիարդ հրամայեսցես տալ նոցա։ Հրամայեցի, ասէ, խորշել 'ի նոցանէ և չխառնակել. և դարձեալ ասացի՝ թէ մի իբրև թշնամիս համարիցիք զնոսա, այլ խրատեցէք. ոչ հակառակ ինչ ընդդէմ օրէնս եդեալ, այլ կարի միաբանս։ Զի եթէ դու յողորմածութիւն պատրաստ էիր, ապա վաղվաղակի իսկ և աղքատն 'ի վատութենէն զերծանէր, և դու յանագորոյն մնաց։

Լ.ՍԼ բազում ինչ ստէ, ասէն. և պէսպէս պատ-
ճառս դնէ։ Զա այն իսկ արժանի է ողորմելոյ, զի
յայնպիսի վիշտս եհատս, մինչև այնչափ անամոթել։
Զ.ու մեք ոչ միայն չողորմիմք, այլ և զանազորոյն բանս
յաւելումք, թէ ոչ միանգամ և երկիցս առէր։ Իսկ
զիարդ. մի թէ չիցէ պարտ միւսանգամ հայց ուտել,
քանզի միանգամ կերաւ։ Ընդէր ոչ և քում որո-
վայնիդ այդպիսի օրէնս դնես՝ և ասիցես, թէ երէկ
և եռանդ յագեցար, այսօր մի խնդրեր. այլ զդա-
աւելի քան զչափն երգիծուցանիցես, և զնա որ չա-
փովն խնդրէ՝ հալածես։ Զ.մին իրի իսկ պարտ է ողոր-
մել, զի հանապազ առ վշտի նեղի՝ գալ յերեսդ քո
և կողկողել. զի թէ այլ ուստեք չգթայցես, յայն
սակս պարտիս ողորմել։ Զ.անզի աղքատուէն հարկ
բռնադատէ յայն, և դու չողորմիս. և զայնպիսի լսէ
բանս և ժամ։ Զ.ռնաւորէ հարկն խնդրել զպէտս
իւր. և դու ոչ միայն չողորմիս, այլ և ձաղես և ս-
և այն զի ածի դաղտ հրամայէ տալ. և դու 'ի հրա-
պարակագոյժ արկանես. յանդգնիս և նախատես,
վասն որոյ ողորմելն պարտ էր։ Զ.թէ տալ չկամիցիս,
ընդէր պատուհասիցես, և յայ, յա՛ւ, և հայ, հա՛ւչ
զտառապեալ ոգին և զվարանեալն առնիցես։

Զ.ա դիմեաց 'ի քեզ իբրև 'ի նաւահանգիստ, և 'ի
քո ձեռսդ նայի. ընդէր յարուցանիցես ալիս և սաս-
տիկ զմրրիկ ձմերայնւոյ գործիցես։ Զ.նազատութիւն
պարսաւես։ Զ'թէ ակն ունէր այդպիսի' ինչ լսել, և
ժառեցաւ մերձենալ։ Զ ասն այնորիկ իսկ արժանի
այնմ է, զի դիտէր զայն յառաջագոյն՝ և մատեաւ
գտանել ողորմութիւն, չասակացեալ 'ի քումմէ անագո-
ղոյն մնացդ։ Օ՛ի և ոչ այնպէս անհրաժեշտ զվիշտն
տեսեալ՝ որ 'ի վերայ կայ, լինիս մեղմագոյն. և չհա-
մարիս բաւական յիրաւունս ժառութեանն զքաղցին կաւ-
կած, այլ անամոթութեամբ պարսաւանս 'ի վերայ դնես.
թէպէտ և դու իսկ յոյժ բազում անգամ անամոթ
գտանիս և 'ի դժպատեհ իրս։ Զ.նդ և արգահատու-
թիւն բերէ անամոթութիւնն, բայց մեք և բազում
անգամ տանջանաց արժանի լսելոյ լսելիմք. և
պարտ էր զայն զմտաւ ածել և խոնարհել, և մեք
ոտնհար եւս լինիմք թշուառանայն. որք դեղս վի-

բայն խնդրեն, վերս եւ 'ի վերայ յաւելումք։ Այթէ
չկամիցիս տալ, ընդէր թշնամանես։

Այլ չառնուցու յանձն, ասեն, այնպէս գնալ։ Թէ
այնպէս իցէ, որպէս է խնամուութիւն՝ այնպէս արա, և
պատասխանի արա նմա հեզութեամբ զխաղաղականն։
Այանգի չէ հնար և չէ իսկ մարդոյ՝ կամաքն անսամանել
լինել։ Թէպէտ և բիւրապատիկ ոմանք հակառակիցին, այլ ես չառնում զայս յանձն երբեք հաւանել՝
թէ մարդ որ 'ի բարիս իցէ, մուրանալ ախորժիցէ.
և մի ոք զձեզ խաբիցէ։ Այլ թէպէտ և ասիցէ
Պաւղոս, թէ « Որ ոչ կամի գործել՝ և կերիցէ մի »,
առ նոսա ասէ, և ոչ առ մեզ. այլ առ մեզ զնորին
հակառակն, թէ « Դուք զբարիս գործել մի ձանձրանայք »։

Օնոյն և 'ի տան արասցուք և 'ի հրապարակս։
Յորժամ տեսանիցեմք զերկուս ընդ միմեանս կռուեալս, զմի մի առանձինն առեալ տայցես խրատ.
զոր ասծայինն արար Մովսէս. « Այթէ թողուս, ասէ, զդոցա զմեղս, թող. ապա թէ ոչ, և զիս ջնջեա »։
Այայց նոցա հրամայեաց զմիմեանս կոտորել՝ և իւրաքանչիւր զիւր ազգական. թէպէտ և հակառակ իսկ միմեանց՝ չէին նոյնք, բայց սակայն եղէն, և երկոքին յիւրաքանչիւր վախճան հայէին։ Դարձեալ և ասծ
յՄովսէս ասէ լու 'ի լու հրէիցն. « Թոյլ տուր
ինձ և սատակեցից զժողովուրդդ ». Թէպէտ և չէին
մնար՝ մինչ զայս խօսէր ասծ, այլ յետոյ լսելոց էին։
Այս առանձինն զնոցին հակառակն տայ նմա խրատ.
և զայն Մովսէսի հարկ եղև 'ի վեր հանել, և ասել.
« Այթէ թէ ես յորովայնէ կրեցի զնոսա, զի ասես ցիս,
թէ առ զնոսա՝ որպէս բառնայցէ դայեակ զստրնդիեայ 'ի ծոց իւր »։

Այոյնպէս և 'ի տունս լինի. բաղում անգամ հայր
զորդի իւր թշնամանիցէ, և առանձինն պատուհասէ,
բայց յետոյ ընդ դաստիարակն ասէ, թէ մի խստութեամբ և բռնութեամբ ջանար. և մանկանն զնոցին հակառակն ասէ, թէ և յանխրաւի ինչ թշնամանիցիս,
համբեր. 'ի միմեանց զհակառակացն մի ինչ գուսուրէ։ Այոյնպէս և Պաւղոս զողջոյն՝ որ մուրանային,
ասէ, թէ « Որ ոչ կամիցի գործել, և կերիցէ մի ».

զնոսա 'ի գործ արկանիցէ. և կարողացն ողորմել՝ ասէ, «Լուք զբարիս գործել մի ձանձրանայք», զի զնոսա յողորմածութիւն ածիցէ։ Այսպէս և յորժամ զայնոսիկ որ 'ի հեթանոսացն էին խրատէ 'ի հոռմայեցւոց Թղթին՝ չպարտանալ առ հրեայսն, զվայրենի ձիթենին եբեր 'ի մէջ. և այլ ինն նոցա երևի ասել։ Մի այսուհետև յանագորութիւն կործանիցիք. այլ լուիցուք Պաւղոսի՝ որ ասէ, թէ «Օ բարիս գործել մի ձանձրանայք»։ Նոսացուք և նոն՝ որ ասէ, թէ «Մենայնի որ խնդրէ տայիր»։ և «Զդերուք գթածք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր»։ Զոհ պէտ և բաղում ինչ ասաց, և ոչ ուրեք եդ զայս, այլ միայն յողորմածութիւնն. քանզի չառնէ ինչ զմեզ նմանօրս լինել՝ այլ՝ իբրև զբարի առնել ընկերաց։

Զայլ ինչ, ասեն, ժառգոյն քան զաղքատն։ Զնդեր, ազաւեմ. զի շրջին և մոլորին։ Կամիս այսուհետև՝ զի ցուցից քեզ, թէ քան զնոսա մեք անամոթագոյնք եմք, և կարի իսկ լրբագոյնք։ Ցիշեա զպահոցն ժամանակ, յորժամ սեղանն իսկ առաջի կայցէ երիկունն, և զծառայն՝ որ և պաշտիցէ՝ կոչիցես, և նա յամիցէ ևս զգալն, զիարդ զայրանաս, աբացի ծեծես և թշնամանես, և մեղադիր լինիս վասն սակաւ ինչ յամելոյն. թէպէտ և զիտես իսկ Ճարտար, զի թէ ոչ վաղվաղակի, այլ յետ սակաւ միոյ վայելեսցես 'ի խորտիկսն։ Զու զքեզ՝ որ վասն ուշնչին զայրագնիս, չկոտիցես անամոթ. իսկ զաղքատն՝ որ վասն կարևորացն կասկածէ և դողայ, ո՞ւրում ոչ վասն յամելոյն՝ այլ վասն քաղցին է երկիւղն, հմմ լերբ և անամոթ կոչես, և զամ ինչ՝ որ քան զսոյնս ձանձրագոյնք իցեն։ Զու զիարդ չկոչ այն վերջին անմոռութիւն. այլ չառնումք 'ի միտ զայն, և վասն այնորիկ զնոսա տաղտկալիս համարիմք. որպէս թէ զմերս քննէաք, ընդ նոսա ոչ կուռէաք, և ոչ համարէաք զնոսա ծանուցս։

Մի լինիր դատաւոր. զի թէ յամ մեղաց աղատ էիր, սակայն և այնպէս չտային քեզ հրաման՝ այ օրէնք՝ ստոյգ քննիչ օտարոտի մեղաց լինել։ Զոհ փարիսեցին յայն սակ կորեաւ, մեք որում պատասխա-

նատրութիւն հասցուք։ Զոմ ուղղագործացն չհրամայէ դառնագոյնս քննել զայլոց զմեղս, ոչչափ և առաւել յանցաւորացն։ Զի այսուհետև անագորոյնք և անգութք՝ և անխնամք և անողորմք. մի և ջար քան զգազանս։ Զանզի և զբազումս իսկ գիտեմ յայսպիսի գազանաբարոյ միտս եկեալ, մինչև վասն սակաւ ինչ դանդաղանաց զսովամահսն անտես առնել, և այսպիսի բանս խօսել, թէ չէ առ իս պատանին, չէ մօտ տունն. տրապիզիսն ոք զիս ասա՛ ոչ ճանաչէ։ Զի՛հ անագորոյն մտացն. զմեծն խոստանաս, և զփոքրն չվճարես. զի մի դու սակաւ ինչ աշխատիցիս, այլ զի նա՝ ի սովոյ մեռանիցի։ Զի՛հ թշնամանացս, ո՛հ ամբարտաւանութեա՛ս։ Զոմ տասն իսկ վտաւանս հասանէր երթալ, դանդաղել չէր պարտ։ Զա՛ չածիցես զմտաւ, զի մեծամեծ վարձք այնպէս լինիցին քեզ։ Յորժամ տայցեսն, ընդ տալոյն և եթ առնուս զարձս. իսկ յորժամ գնայցես և՛ս, ընդ այնր կան պահին քեզ անբաւ հատուցմունքն։ Զանզի և ընդ հայրապետին վասն այնորիկ զարմանամք, զի ինքն ընթացաւ յարքառսն, և էած վաղվաղակի զորթն. և այն զի երեք հարիւր ութուտասն ընտրեալս ունէր։ Զսակ այժմ այնպէս հպարտութի՛ լի են ոմանք, մինչ ծառայիւքն առնեն զայն՝ և չամաչեն։

Զայլ անձամբ հրամայիցես, ասեն, վճարել զայն, և զկարդ չհրամայիցիսք անձնագով։ Զա՛ և այժմ իսկ վասն միւսոյն անձնագովութեան առնես. քանզի ամենի համարիս տեսանել զաղքատն և խօսել։ Զայց ընդ այնր ոչինչ ստուգիւ վիճեսցուք. միայն տուր և եթ, եթէ անձամբ իցէ՝ և եթէ այլովք զայն կամեաց առնել։ Զի՛ բամբասեր, մի զզուեր, մի պատուհասեր. քանզի դեղոք, և ոչ վիրոք կարօտ է մուրոցն. ողորմութի՛ և ոչ սրոյ։

Զայց աղէ՝ դու եկ ասա՛ ցիս։ Զոմ քարիւ ոք վէր՝ ի գլուխ առեալ, և զամենեսեան թողեալ՝ ի քո ծունկս դիմէր, արեամբ և ապաժուժաւ թաթաւեալ, միթէ միւս ևս քարիւ հարկանէիր զնա, և այլ ևս վէրս՝ ի վերան յաւելուիր։ Զոուի ինձ՝ թէ ոչ. այլ զայն ևս ձեռն՝ ի գործ արկանէիր՝ բժշկել զնա։ Զսակ առ աղքատն ընդէ՞ր զնորին հակառակն առ-

նես։ Եվ չգիտիցես, որչափ կարօղ է կանգնել և կործանել բանքն. զի «Լաւ է, ասէ, քաղցր բանք քան զտուրս»։ Զմտաւ ած, զի 'ի քո անձնդ ձգես զսուրն, և եւս չարաչար վերս առնուս։ Զի յորժամ բամբասեալ 'ի քէն գնայցէ նա, և ընդ միտսն թախծեալ և բաղում արտասուօք լցեալ. քանզի յայ իսկ առաքի առ քեզ. զմտաւ ած՝ որ թշնամանեսդ գնա, թէ յո՞ ձգես զթշնամանսն։ Յորժամ նա առ քեզ յղէ զմուրօղն, և քեզ հրամայիցէ տալ, և դու ոչ միայն չտաս, այլ և թշնամանես զեկեալն առ քեզ։ Այնթէ անտեղեակ ինչ յաձախութեն յոռութեն լցես, ասասէն 'ի մարդկան տես, և ասպա առնուցուս 'ի միտ բարւոք զմեղայն ստուարութիւն։ Այնթէ ոք ծառայ 'ի քէն հրաման առեալ երթալ առ այլ ծառայ՝ որ զքո գանձս ունէր՝ առնուլ ինչ անտի, և ոչ միայն դատարկաձեռն դայր, այլ և թշնամանեալ, որպիսի՞ ինչ գործ գործէիր ընդ թշնամանիչն, զո՞ր վրէժս ոչ պահանջէիր. քանզի դու այնուհետև կրէիր զթշնամանսն։ Զոնոյն և զա՛յ ած զմտաւ. քանզի նա յղէ առ մեզ զաղքատն, և զնորա տամք՝ եթէ տայցեմք արդեւք։ Իսկ եթէ ընդ չտալոյն և թշնամանօք ևս յղարկեմք, զմտաւ ած՝ որչափ բարկութեան, քանի՞ փայլատականց գործս գործեմք։

Զայսուհետև զայս ամ իմացեալ, և լեզուի սանձս դիցուք, և զտմարդութի 'ի բաց ընկեսցուք, և ըզձեռս յողորմածութիւն կարկառեսցուք։ Ոչ միայն ընչիւք, այլ և բանիւք մխիթարեսցուք զկարօտեալսն։ Զի և 'ի բամբասողաց տանջանացն ղերծանիցիմք, և յօրհնութեէ և յողորմածութէ զարքայութիւնն ժառանգեսցուք։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօքն և մարդասիրութեամբ նոն մերոյ Յոսի Քրիստոսի. ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութի և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

«Յու եղև իբրև կատարեաց Յն զպատուէր աշակերտացն, փոխեցաւ անտի՝ ուսուցանել և քարոզել 'ի քաղաքս նոցա»։

ՎԱՆՁԻ զնոսա առաքեաց, մեկուսի առնէր զանձն այնուհետև՝ տալ նոցա տեղի և ժամանակ առնելոց զոր ինչ հրամայեաց։ Վանդի մինչդեռ նա մնա էր և բժշկէր, և ոչ ոք յօժարէր առ նոսա մերձենալ։

Օ՛ի սա ասէ, թէ «Յովհաննէս իբրև լուաւ 'ի բանտին զգործսն Քրիստոսի, առաքեաց զաշակերտսն՝ ասել ցնա, դո՞ւ ես որ գալոց իցես՝ եթէ այլումբ ակնունիցիմք»։ Իսկ Ղուկաս ասէ, թէ նոքա իսկ պատմեցին զնշանացն առ Յովհաննու, և ասպա առաքեաց զնոսա։ Այլ սակայն և այս ոչ մի ինչ երկմտութիւն գործէ, այլ միայն կրթութիւն և հանդէս տեսանել։ Օ՛ի զնախանձընդդէմ նոցա և այս իսկ յայտ առնէ, զոր ունէին ընդ նմա։ Յու զյաջորդն[1] կարի իսկ պարտ է խնդրել՝ զոր ասացին, թէ «Դո՞ւ ես որ գալոց ես՝ թէ այլումբ ակնունիցիմք»։

Որ յառաջ քան զնշանսն գիտէր զնա՝ ուսեալ 'ի հոգւոյն, որոյ 'ի հօրէ իսկ լուեալ էր, և առաջի ամենեցուն վկայեաց զնմանէ, զիարդ յետոյ յղէր և 'ի նմանէ ուսանէր, թէ նա՞ իցէ և թէ չիցէ նա։ Յու թէ չգիտէիր ստոյգ՝ թէ նա իցէ, ընդէ՞ր այնչափ հաւատալի ամենեցուն կարծեցուցանէիր զայսպիսի իրս՝ որում դու անտեղեակ էիր. նախ քան զայլոց վըկայել, պարտ է՝ զի յառաջ ինքն հաստատեսցի։ Որ՞ դու ասէիր, թէ «Ոչեմ բաւական զիրաց մի կօշկաց նորա լուծանել»։ Որ՞ դու քեզէն ասէիր, թէ «Այս ոչ գիտէի զնա, այլ որ առաքեացն զիս ջուրբ մկրտել՝ նա ասաց ցիս, թէ յոյր վերայ տեսանիցես զՀոգին

1 'Ի լուս. զաջորդն։

իջեալ և հանգուցեալ, նա է՝ որ մկրտիցէ 'ի Հոգին սուրբ»։ Եւ դու իսկ տեսեր զՀոգին 'ի նմանութիւն աղաւնւոյ։ Եւ քեզէն իսկ լուար զբարբառն հօր։ Այս յորժամ 'ի մկրտութենն գայր, արգելլիր, թէ «Ինձ պիտոյ է 'ի քէն մկրտիլ». և դու իսկ ասէիր ցաշակերտսն, թէ «Այսմ առեալ պարտ է, և ինձ մեղանալ». և զբնաւ ժողովուրդն ուսուցանէիր, թէ «Այս է՝ որ մկրտելոցն է զձեզ 'ի Հոգին սուրբ և 'ի հուր». և եթէ՝ «Այս է գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի»։ Եւ յառաջ քան զնշանսն և սքանչելիսն զայս ամ՝ քարոզէիր. արդ զիա՞րդ իցէ, զի յետ յայսնի լինելոյ ամենեցուն, և տարածանելոյ ընդ Հանուր համբաւ նորա, յետ մեռելոցն յառնելոյ և դիւացն հալածական լինելոյ, և յետ այնչափ սքանչելիս ցուցանելոյ՝ առաքեսս առ 'ի նմանէ ուսանել. մի թէ խաբէութիւն էր այն ամ՝, կամ վէպք և առասպելք։

Այս ո՞վ ոք որ ուղիղ 'ի գլուխս ունիցի, և այնպիսի գործս գործիցէ. Թող թէ Յովհաննէս, որ անդստին 'ի յարգանդին ցնծայր խաղայր ընդդէմ ածորդւոյն, և յառաջ քան զծնունդ կանխաւ կարապետէր. որ անապատին քաղաքացի էր, որ զՀրեշտակաց վարս յանձին ցուցանէր։ Այս թէպէտ մի 'ի բազմաց էր, նա թէ և կարի ևս ոք յապա ժամանակաց, ոչ յետ այնչափ վկայութեանց և յայլոց և յընկերացն, երկմտէր։ Ուստի և յայտ իսկ է՝ թէ ոչ ինքն երկմտեալ առաքէր, և ոչ անգիտութեամբ հարցանէր։ Այս և ոչ ոք կարէ ասել, թէ գիտել գիտէր, բայց երկմտեաց, և անտի կամէր զերծանիլ։ Օ՛ի եթէ անտի կամէր զերծանիլ՝ սակայն և ոչ այնպէս լինէր մտան ածգպաշտութեան[1], որ յառաջ քան զանՀն նմին իսկ ակն ունէր. և յազգ մի՝ որ այնպէս յարիւն և եթ կայեն, ոչ[2] զմարգարէիցն վկայութենն զեղայր արկանէր, և ոչ այնչափ համարձակութեամբ զբառնաւոր իշխանն յանդիմանէր, 'ի քաղաքին միջի և 'ի հրապարակս, իբրև մանկան միոջ փոքրու սաստկագոյն սաստէր՝ ամենեցուն լու 'ի լու։ Ով զանդիտեալ ինչ էր,

[1] Յօրինակին և -ն արմատ ածգ-պաշ-ութ. եգաք ըստ լուս։

[2] Յայլ օրինակ չէք ուն։

զնարդ ոչ ամաչէր յաշակերտացն, որոց առաջի այնչափ վկայէր զնմանէ. այլ նոքօք առաքեալ հարցանէր. Թէպէտ գիտէր ստոյգ, զի նախանձընդդէմ նոքա են, և պատճառս կամին խնդրել։ Օ խարդ ոչ 'ի հրէական ժողովրդենէն ակն ածէր, որոց առաջի այնչափ մեծամեծս քարոզէր զնմանէ։ Այլ զինչ առ 'ի զերծուցանել 'ի բանտէն այն օգուտ գործէր։ Զան զի ոչ եթէ վասն Քրիստի մտեալ էր 'ի բանտն, և ոչ վասն զնորա զօրութիւնն ինչ քարոզելոյ, այլ վասն յանդիմանելոյն զանօրէնն Հերովդէս։ Զան զորպիսի՞ մանուկ անմիտ կամ քան զորպիսի՞ ոք այր շամբշեալ՝ չառնոյր կարծիս յանձն։ Այս արդ զինչ ինչ յարդարիցի ասասի, զի չէր ինչ մարթ Յովհաննու երկմտել. նա և ոչ այլ ուրեք՝ որ կարի իսկ վատթարագոյն իցէ կամ անմիտ կամ անկեալ 'ի հանձարոյ. և այս անդէն իսկ 'ի բանիցն յայտ է։

Բայց պարտ է այսուհետև և զլուծումն իսկ 'ի մէջ ածել, թէ ընդէր առաքեալ հարցանէր։ Օ՛ի խրտչէին ամն 'ի Քրիստոսէ աշակերտքն Յովհաննու. և զի նախանձընդդէմ լինէին, 'ի բանիցն՝ զոր ասէին ցվարդապետն՝ յայտ է։ Օ՛ի ասէն, «Որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանան գետոյ, որում դու վկայեցեր, ահաւանիկ նա եկեալ մկրտէ, և ամենեքեան երթան առ նա»։ Այս դարձեալ յորժամ խնդիր եղև 'ի մէջ աշակերտացն Յովհաննու և հրէիցն վասն սրբութեան, դարձեալ մատուցեալ առ նա ասէին, թէ «Ընդէր մեք և փարիսեցիքն պահեմք յաճախ, և քո աշակերտքն ոչ պահեն»։ զի չև ևս էին տեղեկացեալ Քրիստի, այլ լոկ մարդ ամն կարծէին զՅն, և զՅովհաննէս մեծ քան զմարդիկ։ Այս այն իսկ լիներ արգել յարելոյ նոցա առ Յն, զի նախանձընդդէմ էին։ Մինչ ընդ նոսա էր Յովհաննէս, ստէպ մխիթարէր, աղաչէր և ուսուցանէր, սակայն ոչինչ կարէր հաւանեցուցանել. և յորժամ մերձ լինէր 'ի վախճանել, ապա և կարի իսկ փութայր զնայն ուղղել։ Քանզի կասկածէր՝ գուցէ չար ինչ և օտարոտի կրօնից թողուցուն պատճառք, և այնպէս զատեալք մնասցեն 'ի Քրիստոսէ։ Այս և զառաջինն իսկ փութայր առնել զամենեսեան զիւրսն առ նա. և քանզի չկարաց

հաւանեցուցանել, մեծ 'ի վախճանն կարի ինն փու-
թայր զնոյն ուղղել։ Եվ ասացեալ էր, առ նա էր-
թայր, զի նա լաւ է քան զիս, չկարէր հաւանեցու-
ցանել։ Վասն զի դժուարահաւանք էին, և կասկա-
ծէին՝ թէ առ խոնարհութեամբ ինչ ասիցէ. թերևս ա-
ռաւել հաստատէին, և բևեռէին ընդ նմա։ Այլ
եթէ լուռ կացեալ էր, և ոչ այն ինչ աւելի գործէր։
Այլ արդ զինչ գործիցէ։ Նոցայ մինչև 'ի նոցանէ
լուիցէ, թէ աքանչելիս մեծամեծս առնէ. և ոչ յայն
ժամ ինչ տայր նոցա խրատ. ոչ զամենեսին առաքէր,
այլ երկուս ոմանս՝ զորս գիտէր, թէ նոքա քան զայլսն
առաւել հաւանագոյնք էին. զի մի կարծիս ինչ հար-
ցուածն լինիցի, այլ զի արդեամբք իսկ ուսանիցին՝
թէ որչափ ինչ ընդհատ իցէ նա 'ի Քրիստոս։ «Այրթայք
ասացէք, ասէ. դո՛ւ ես որ գալոց ես՝ թէ այլ ումեք
ակնուսնիցիմք»։
Բայց քանզի Քրիստոս գիտէր զմիտսն Յովհաննու, ոչ
ասաց՝ թէ ես եմ. զի դարձեալ և այս յողդողդէր
զմիտս լսողացն, թէպէտ և զսոյն իսկ 'ի դէպ էր ա-
սել. այլ յիրացն տայ ուսանել նոցա զհաւաստին։
«Այրբև մերձեցան նոքա առ նա, բժշկեաց զբա-
զումս»։ Այս այն զինչ 'ի դէպ իցէ, ասէն, թէ յոր-
ժամ նոքա հարցանիցեն՝ պատասխանի ինչ չտայցէ,
այլ վաղվաղակի բժշկիցէ զհիւանդս։ Բայց որպէս
ասացի իսկ, յիրացն կամի տալ զվկայութիւն հաւա-
տարիմ, և այնպէս առանց կարծեաց առնել զբա-
նիցն Աշմարտութիւն։ Այբրև ետես, քանզի ՈՒԾ էր՝ և
գիտէր զմիտսն՝ վասն որոյ առաքեաց զնոսա Յով-
հաննէս, վաղվաղակի ձեռն 'ի գործ արկանէ բժշկել
զկոյրս և զկաղս, և զայլ ևս պէսպէս հիւանդութիւս.
ոչ զի զհաւանեալսն ուսուցանիցէ, այլ զերկիմիտսն։
Այբրև բժշկեաց, «Այրթայք, ասէ, պատմեցէք Յով-
հաննու՝ զոր լուայք և տեսէք. կոյրք տեսանեն,
կաղք գնան, բորոտք սրբին, և խուլք լսեն, և մե-
ռեալք յառնեն, և աղքատք աւետարանին». և
յաւել ևս, թէ «Երանի որ ոչ գայթագղեսցի յիս». և
եցոյց՝ զի և զծածուկս նոցա գիտէ։ Զի թէ ա-
սացեալ էր, թէ ես եմ, և յողդողդէր ևս զմիտս
նոցա. և զայն ևս նոքա ասասցեն. ոչ հրեայքն ասա-

ցին, դու վասն [1] անձին քո վկայես։ Վասն այնորիկ ինքն ինչ ոչ ասէր, այլ արդեամբքն տայր իմանալ նոցա զայժմ, և առանց կարծեաց պահէր զվարդապետութիւնն։ Այլ մեղմով յայտ ածէր զնոցա մտացն երկևանսն. քանզի գայթագղէին 'ի նա, զախտ մտացն նոցա յայտ առնէ, և նոցա միայն տայր իմանալ։ Ցառնէր զայլ ոք վկայս կշտամբութեան, բայց զնոսա միայն՝ որ գիտէին։ Այլ այնու ևս յաճախագոյն ասէր զնոսա զիւրև, զի ասէր՝ թէ «Այրանի որ ոչ գայթագղեսցէ յիս». քանզի զնոցանէ իսկ առաւել ասէ զայս։

Այլ զի մի մերովքս միայն բանիւք, այլ և այլովքն ևս ասացելովք ցուցանիցեմք զիրացս 'ի մէջ առելոց զշնմարտութիւն, հարկ է և զնոցայն ևս ասել։ Օ՛ի ոմանք ասեն, թէ չեն այս պատճառք՝ որ 'ի մէնջս ասացան, այլ թէ չգիտէր իսկ Յովհաննէս. և ոչ թէ զայմ ինչ, այլ զի նա էր Քրիստոս՝ գիտէր, բայց թէ վասն ամ մարդկան մեռանելոց իցէ՝ այնմ չէր ինչ տեղեակ. և վասն այնորիկ հարցանէր՝ թէ դու ես որ 'ի դժոխսն գալոց ես։ Այլ չէ ինչ 'ի դէպ։ Օ՛ի Յովհաննէս և զայն ևս կարի քաջ գիտէր. և յառաջ քան զայլսն նա վկայեաց՝ թէ «Ահաւասիկ գառն ամ, որ բառնայ զմեղս աշխարհի». և գառն կոչելովն զնաչէն յայտ առնէ. և բառնալ զմեղս աշխարհի՝ զնոյն գուշակէ. զի ոչ այլ ազգ ինչ՝ այլ խաչիւն կատարեաց։ Օ՛սոյն և Պաւղոս ասէ, թէ «Օ՛ ձեռագիրն որ կայր մեր հակառակ՝ եբարձ զայն 'ի մէջդ, և բևեռեաց զնա ընդ խաչին»։ Ասելովն՝ թէ «Ահկրտեսցէ զձեզ 'ի հոգին սուրբ», զյարութեանն մարգարէանայ։

Այլ զի յառնելոց էր և տալոց զհոգին սուրբ՝ գիտէր, ասեն. բայց թէ խաչելոց էր՝ այնմ ինչ չէր տեղեակ։ Այլ զիարդ էր յառնելոց, որ ոչ չարչարեր և խաչէր։ Այլ զիարդ էր նա առաւել, որ ըստ չափոյ մարգարէիցն անգամ չգիտէր։ Օ՛ի և առաւել քան զմարգարէ էր, ինքն իսկ Յն վկայեր. և զի մարգա-

[1] 'Ի լուս. Ե զայն Ե՝ զոր Ն՝ զոյն լուսոյն. հրեայսն ասացին. ա. ոնեն երեք դու վասն.

րէքն զչարչարանսն գիտէին, ամենեցուն յայտ է։ Այսպէս ասէ, «Երբէ զոչխար 'ի սպանդ վարեցաւ, և իբրև զորոջ առաջի կտրչի անմռունչ կայ»։ Եւ յառաջ քան զայս վկայութիւն. ասէ «Զղեցի արմատն Յեսսէ, և որ կանգնելոց է իշխան հեթանոսաց, 'ի նա հեթանոսք յուսասցին»։ Եւ յետ Ճառելոյ զչարչարանացս, ապա և զփառացն որ լինելոցն էր', զնովիմբ ածէ. «Զղեցի, ասէ, հանգիստ նորա պատուով»։ Ոչ միայն զի խաչելոց էր, յառաջագոյն ցուցանէր, այլ թէ որպիսի խաչեսցի. «Ընդ անօրէնս, ասէ, համարեսցի»։ Եւ ոչ միայն այսչափ, այլ զի և պատասխանի չտայցէ. «Ոչ բանայ, ասէ, զբերան իւր». և զի զուր դատապարտեցաւ. «Որ խոնարհութեամբ նորա դատաստան նորա բարձաւ»։

Եւ յառաջ քան զսա՝ Դաւիթ ասէ, և զատեանն ևս՝ թէ որպիսի լինելոց է, յայտ առնէ. «Ընդէր, ասէ, խռովեցան հեթանոսք, և ժողովուրդք խորհեցան մնոտի։ Յարեան 'ի վերայ թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան 'ի միասին վասն Տն և վասն օծելոյն նորա»։ Եւ 'ի միաւում վայրի և զկերպարանս իսկ զնախելութեան ասէ, թէ «Օգակեցին ըզձեռս իմ և զոտս իմ». և զզինուորացն յանդգնութիւն հաւաստեաւ, թէ «Դատեցին զհանդերձս իմ, և 'ի վերայ պատմուճանի իմոյ արկին վիճակս». և զի քացախս մատուցանելոց էին. «Եւտուն, ասէ, ուտել ինձ լեղի, և 'ի ծարաւս իմ արբուցին ինձ քացախս»։ Իսկ եթէ մարգարէքն այնչափ յառաջ քան զբաղումս ամն և զդատաստանէն և զանիրաւ պատժելոյն և զխաչելութիւնն և զհանդերձիցն բաժանելոյն և զվիճակս արկանելոյ և զայլոց ևս բազում չարչարանացն, զոր չէ ինչ հարկ 'ի մի վայր կուտել, զայս յառաջագոյն գուշակէին. և զի մի երկայնութիւնք զՃառս, սա որ քան զնոսա զամենեսեան մեծ էր զայս ամ չգիտէր արդեւք. և զիարդ 'ի դէպ լցէ. և վասն էր չասէր, դու ես որ գալոց ես 'ի դժոխս. այլ լոկ թէ «Դո՞ւ ես որ գալոցն ես»։

Եւ զևս ծաղրալիցն յաւելուն. զի և անդ ևս, ա-

1 'Ի լուս. որ չէր լուրաբանան վինելոցն էր։

սեն, երթեալ քարոզիցէ։ Որոց 'ի դէպ ժամանակի ասիցեմք, « Լցղբարք՝ մի տղայք լինիք խորհրդովք, այլ 'ի չարեաց տղայացարուք »։ Օ՛ի այժմու ժամանակս առաքինութեան ժամանակ է. և յետ վախճանելոյն՝ դատաստանաց և տանջանաց. ըստ այսմ, թէ « Ո՞վ է որ 'ի դժոխս խստասոյն լինի քեզ »։ Լաւ զիարդ, ասեն, խորտակեցան դրունք պղնձիք և նիզք երկաթիք։ Լ՚այ, խորտակեցան մարմնովն Քրիստոսի։ Օ՛ի յայնժամ նախ երևեցաւ անմահ մարմինն, և էլոյծ զբռնութիւն նորա։ Լաւ այլ ազգ ևս յայտ առնէ այնու զմահու զօրութեան բարձեալ, և ոչ եթէ զայնոցիկ որ յառաջ քան զչարչարանս նորա էին վախճանեալք՝ զմեղսն լուծեալ։ Լ՚այս թէ զայս այսպէս հաստատիցիս՝ թէ 'ի գեհենէն իսկ ապրեցոյց զամենեսեան, զիարդ ասէր՝ թէ « Դիւրագոյն լիցի երկրին սոդոմացւոց և գոմորացւոց յաւուրն դատաստանի »։ Լաւ այսու յայտ առնէ, թէ և նոքա տանջելոց են, բայց մեղմագոյնս. թէպէտ և աստ ետուն զանհնարին տոկոսիսն, այլ ոչ այն ինչ ապրեցուցանէ զնոսա յանտի տանջանացն։ Լաւ եթէ նոքա այնպէս պատուհասին, որչափ և առաւել որոց չիցէ աստէն պատիժս կրեալ։

Լաւ զի՞նչ յանցեան, ասեն, որք յառաջ քան զչարչարանսն նորա էին։ Լ՚սեմ թէ կարի իսկ քաջ յանցեան. զի մարթ էր նոցա, թէպէտ և զՔրիստոս չիսոստովանէին, ապրել յայնժամ։ Քանզի ոչ եթէ զայն ինչ պահանջէր 'ի նոցանէ, այլ զչլինելն կռապարիշտ և Ճանաչել զՀնմարիտն Ած։ Օ՛ի Տէր Ած քո Տէր մի է, ասէ Տէր »։ Ամն այնորիկ և մանաւանդ զինացն աքանչելելք երևին. զի վասն պահպանութեան օրինացն չարչարեցան զոր ինչ չարչարեցան։ Լաւ երկք մանկունքն, և այլք բազումք 'ի հրեից, որք զբարի վարս ցուցին յանձինս, և զչափ նորին զիտութեան պահեցին, և ոչ ինչ այլ աւելի քան զայն պահանջեցան։ Օ՛ի Ճանաչէին և եթէ զնոցա բաւական էր նոցա յայնժամ 'ի փրկութեան, որպէս կանխաւ իսկ ասացի։ Իսկ այժմ ոչ այնչափ միայն, այլ և Քրիստոսի դիտութեան պէտք են, և երախտեացն նորա փոխարէնս հատուցանել։ Քանզի ինքն իսկ ասէր, « Իմ եթէ չէր ե-

կեալ և խօսեցեալ, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ չէք պատճառք վասն մեղայ իւրեանց»։ Այսպէս և ի գործսն. յայնժամ սպանութիւն և եթ կամ բուսանէր զգործելին, բայց այժմ և բարկանալն։ Յայնժամ շնալն և եթ ընդ օտարոտի կանայս, իսկ այժմ և յայրատն նայել։ Որպէս գիտութիւն այժմ մեծ է, նոյնպէս և վարք այժմ մեծամեծք պահանջին։ Այս յայտ է՝ թէ չէին ինչ անդ պէտք կարապետի։ Այս այլ ազգ ևս. զի թէ մարթ ինչ էր յետ մահուն անդ հաւատալ և ապրել, ապա ոչ որ երբէք կորնչէր. քանզի ամենեքեան զղջանային են յայնժամ, և երկիր պագանէլոց։ Այս զի ճշմարիտ է այս, լուր Պաւղոսի՝ որ ասէ, թէ «Այնպէս լեղու խոստովան լիցի, և ամ ծունր կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց»։ և դարձեալ՝ թէ «Յետին թշնամին խափանեսցի մահ»։

Այլ էր ինչ օգուտ ի հնազանդութենէն յայնժամ. զի ոչ մոռացեալ ինչ կամաց է, այլ ի բռնութենէ։ Այս մի ինչ այնպիսի կրօնս պառաւական և առասպելս հրէականս ի մէջ բերիցեմք. այլ լուիցուք Պաւղոսի՝ որ վասն այսպիսի ինչ իրաց ճառէ, թէ «Որ արտաքոյ օրինացն մեղան, արտաքոյ օրինացն և կորնչին». զայս զառաջին ժամանակէն ասէ՝ որ քան զօրէնսն էր։ Այս «Որք ընդ օրինօքն յանցեան, յօրինաց անտի դատեսցին». զայս յետ մովսիսական ժամանակին և այլոցն ամենեցուն ասէ։ «Օ՛ի յայտնեսցի բարկութիւն այ՝ ի վերայ ամպարշտութեան և անիրաւութեան մարդկան». և դարձեալ՝ թէ «Պրտմտութեան և բարկութեան, նեղութեան և անձկութեան՝ ի վերայ ամի որ գործէ զչար, նախ հրէին, և ապա հեթանոսին»։ Մեծպէտ և բիւրապատիկ իսկ աստէն կրկնեն չարիս հեթանոսք. և զայս արտաքին վէպն յայտ առնէ, և մեր իսկ գիրք։ Ո՞ կարիցէ պատմել որ ինչ բաբելացիքն և եգիպտացիքն կրեցին։

Օ՛ի որք զԲ՚ն չճանաչէին յառաջ քան զմարմնաւորս գալուստն, և՝ ի կռապաշտութենէն խորշէին, և այ միայն երկիր պագանէին, և բարի վարս յանձին ցուցանէին վասն այ, յամ բարութիւնս վայելելոց էին, լուր զինչ ասէ, թէ «Փառք և պատիւ և խա-

զաղութի՝ ամի որ գործէ զբարիս, նախ հրեէին և ապա հեթանոսին »։ Տեսանես, զի և բարեացն հաստատումնքն նոցա յառաջ, և չարեացն դարձեալ տանջանք և պատիժք՝ նոցա, որ զնոցին հակառակսն գործեն։

ԳՈՐԴԱՐԱՆ

Այլ արդ ոչ ի՞նչ իցեն, որ գեհենին չհաստատացեն. զի թէ որ Վրդի գալստեանն յառաջ էին, և զգեհենին և զանուն անգամ չգիտէին՝ և ոչ գյարութիւն, և աստէն իսկ տանջեցան, և անդ պատժելոց են, որ չափ ևս առաւել մեք՝ որ այսչափ 'ի մէջ այսպիսի զգաստութիւն ճառից մնեալ եմք։ Այլ զիարդ 'ի դէպ իցէ, ասեն, որոց զգեհենին չիցէ լուեալ՝ 'ի գեհենին երթալ. քանզի, ասեն, թէ սպառնացեալ էր գեհենն, առաւել երկնչէաք և ցածնուաք։ Զ)ն անդր 'ի բաց. քանզի ոչ թէ որպէս մեք զօրհնասպաս ազգ առնիցեմք զբանիցս, զոր վասն գեհենին լսեմք, և ամենևին չանսայք։ Զ՝ուանց այսոցիկ և զայն ևս լսել[1], թէ որ մնտաւոր պատժովքս չիրատի, ևս առաւել այնու չիրատիցի։ Վանզի զանհանձարազոյնսն և զթանձրամիտսն՝ որ անդէն առ կռան իցեն և վաղ-վաղակի 'ի գլուխ ելանիցեն, մանաւանդ սոքոր են զգաստացուցանել, քան որ յերկար ուրեք ժամանակս յետոյ դիպեսցին։

Զ՝ԱՍ'ի մեր վերայ, ասեն, սաստիկ կախեալ կայ ահ։ Այլ այնու ինչ նոքա զրկեալ իցեն։ Այլ ոչ երբեք։ Զ՝ասխ զի նոյն ոչ պատերազմունք առաջի կան մեզ և նոցա, այլ յոյժ սաստիկ մերքս. զի որք մեծամեծ ճգունս առին յանձին, և մեծի օգնականութիւն պարտ էր վայելել. և ոչ սակաւ օգնութի՝ է զահն աճեցուցանել։ Զ՝թէ գլեմք զնոսա՝ զհանդերձեալսն գիտելով, գլեն և նոքա զմեզ՝ առ ժամայն զպատիժս կրելով։

Զ՝ա և այլ միւս ևս իմն՝ միւսոյն յար ասեն բա-

1 'Ի լուս. ասել։

զումք։ Լսեն. նա՝ ուր են իրաւունք, յորժամ ասա-
ոք մեղանչէ, ասա և անդ տանջիցի։ Կամիք զի յիւ-
շեցուցից ձեզ զձեր իսկ բանս, զի մի և ես տակաւին
աշխատութեան առնիցէք մեզ, այլ 'ի ձէնջ իսկ ընդոստ
բերցէք զլուծումն։ Լիւ բազում մարդկան խօսս
լուայ զաւուրս. երբեմն ուրեմն թերևս 'ի վերայ հա-
սին, թէ սպանօղ ոմն ընդ մէջ կոտրեցաւ յատենի,
ըմբոստացեալք այսպիսի բանս խօսէին. երեսուն,
ասեն, սպանութեան ժամտս այս և դրուժանս յանդգն-
նեցաւ գործել, կամ թէ բազում, և ինքն մի մահ
և-եթ կրեաց. և ուր է զի իրաւունք իցեն։ Լսա ու-
րեմն դուք ձեզէն դաւանիք, թէ չէ բաւական մահ
'ի պատիժս։ Իսկ այժմ ընդ հակառակ սմին վէճիս
տայցէք. զի ոչ այլք, այլ անձամբ անձանց իրաւունս
տայք. զի այնչափ անձնասիրութեն լինի արգել հարթ
իմանալոյ զիրաւունս։ Զմին իբրի իսկ յորժամ զայլս
դատիցիմք, ստուգութեամբ իսկ զամբ քննեմք. և յոր-
ժամ զանձանց ինչ դատ ընտրել իցէ, խաւարիմք։
Որպէս թէ զմեզ իբրև զայլս դատէաք, անաչառ
տայաք վճիռ իրաւանց. քանզի դուն և մեր մեղք,
ոչ երկուց և երից՝ այլ բազում մահուց արժանի։

Լիւ զի զայլսն թողից, յիշեցուսցուք անձանց՝ որ-
չափ իցեմք որք անարժան սուրբ խորհրդոյն հաղորդ
լինիմք. զի այսպիսիքն պարտականք են մարմնոյ և
արեան Տէրն։ Որպէս յորժամ զսպանողն խօսեա-
ցի, և զանձնէ զմտաւ ած. զի նա մարդասպան, և
դու տիրասպան պարտական ես. նա չէ ինչ հաղորդ
խորհրդոյն այ, և մեք 'ի նուիրական սեղանոյն
վայելեմք։

Իսկ զնոցանէ զինչ ասիցեմք, որք զեղբարս հալա-
ծեն, և մանր ուտեն, և բազում թոյնս արկանեն,
կամ որ զկերակրիկ աղքատացն հանիցեն, կամ որ
չտայցէ տուրս, չիցէ՞ այնպիսի։ Տէ՛ր զո՞րչափ աւա-
զակս չիցեն և-ս չար ագահքն, քան զորչափ սպանօղս՝
յափշտակողքն, քան զորքան զերեզմանակրկիտս։
Տէ՛ր զի՞նչ մերկելոյն, և արեամբն և-ս ծա-
բաւի իցեն։ Զ'ն անդր, ասեն, քաւ լիցի։ Լսյժմ ա-
սես, թէ քաւ լիցի. բայց յորժամ թշնամի զոք ունի-
ցիսն, յայնժամ ասասջիր, թէ քաւ լիցի։

Լ. յիշեսջիր զայս բան, և վարս լի բաղում հաս-
տատութիւն ցուցանիցես. զի մի և մեզ Պողոմայ իրքն
պահիցին, և Պոմորայ անցք անցանիցեն. զի մի զտիւ-
բացւոց և զսիդոնացւոց պատիժն կրիցեմք։ Մա-
նաւանդ զի մի Վշտի գիմադարձք լինիցիմք, որ քան
զամ ինչ դժնդակագոյն է։ Լ. Թէ բաղմաց գեհենն
ահագին թուիցի, այլ ես ոչ երբէք դադարեմ 'ի
ստէպ բողոքելոյ, թէ քան զամ գեհեն՝ այն դժնդա-
կագոյն և ահագին է. և դուք նոյնպէս համարեսջիք
աղաչեմ։ Զ. Ի այնպէս 'ի գեհենէն ապրիցիմք, և 'ի
Վշտէ պարգևեալ փառն վայելեսցուք. որոց լցցի
ամենեցուն մեզ հասանել շնորհօքն և մարդասիրու-
թեամբ տն մերոյ Յսի Վշի. ընդ որում հօր և սուրբ
հոգւոյն վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ
այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

«Իբրև գնացին նոքա անտի, սկսաւ Յն ասել ցժող ղովուրդսն վասն Յովհաննու. զի՞ ելէք յանապատն տեսանել. եղէգն 'ի հողմոյ շարժեալ։ Զ.յԼ զի՞ ելէք տեսանել. այր 'ի հանդերձս փափկութեամբ զգեցեալ. զի՛ ա՛ւասիկ որ զփափուկսն զգեցեալ են՝ 'ի տունս թագաւորաց են։ Զ.յԼ զի՞ ելէք տեսանել. մարգարէ՞. այո՛ ասեմ ձեզ և առաւել ևս քան զմարգարէ»։

Յովհաննու աշակերտացն ամ պէտք բարւոք վէճարեցան, և հաստատեալ գնացին 'ի նշանացն որք առ ժամայն գործեցան։ Պարտ էր այնուհետև զժողովրդեանն զմիտս բժշկել։ Նոքա ոչ այնպիսի ինչ կարծէին զևրեանց վարդապետէն. իսկ ժողովուրդն 'ի հարցանելոյն Յովհաննու՝ բաղում ինչ անդէպս կարծէին. քանզի չգիտէին, որպիսի՞ ինչ մտօք առաքեաց զաշակերտսն. և 'ի դէպ էր նոցա ածել զմտաւ, թէ ո՞րչափ վկայութիս վկայեաց զնմանէ, արդ շրջեցա՞ւ ի՞ն, և երկմտէ թէ սա՞ իցէ և թէ չիցէ սա՝ որ գալոյն է։ Ա՝ԼԹէ 'ի կռիւ ինչ կացցէ ընդ Յն, զայսպիսի բանս խօսելով. միթէ 'ի բանտին զանգիտեաց ինչ արդեւք. միթէ վայրապա՞ր ինչ և զո՞ւր խօսեցաւ զառաջինն։ Այ.ւ քանզի 'ի դէպ էր նոցա զայսպիսի ինչ կարծել, տե՛ս զիարդ ածէ յուղղութի՛ զերկմտութի՛ նոցա և բառնայ զկարծիսն։

«Իբրև գնացին նոքա, ասէ, սկսաւ Յն խօսել ընդ ժողովրդեանն»։ Այ.ւ ընդէ՞ր արդեւք՝ յորժամ գնացին։ Զ.յԼ զի մի՛ կարծիցի, թէ ողբիցէ ինչ զայրն։ Ա՛ւղղէ զմիտս ժողովրդոցն, և չյայտնէ՝ զկարծիսն. այլ զլուծումն ևեթ 'ի մէջ բերէ զխռովութի՛ մտաց նոցա, զի ցուցցէ՝ թէ զիտէ զծածուկս ամենեցունն։ Այ.ւ ո՞չինչ ասէ՝ որպէս առ Հրեայսն, եթէ զի՞ խորհիք զչարութի՛ 'ի սիրտս ձեր։ Այ.ւ սոքա թէպէտ

1 Յորինակին յայտնէ։

և ածին զայս զմտաւ, ոչ առ չարութեան ինչ, այլ զի չէին տեղեակ բանիցն։ Ա՛ն այնորիկ և ոչ զայրա-գինս ինչ բարբառի առ նոսա, այլ ուղղէ միայն ըղ-միտս նոցա. և վասն Յովհաննու առնէ պատասխա-նի. և յայտնի առնէ, թէ ոչինչ շրջեցաւ յառաջին կարծեացն։ Վասնզի ոչ եթէ ցոփ ոք էր և թեթև, այլ այր հաւատս և հաստատուն. և ոչ այնպիսի ոք ինչ՝ թէ որ ինչ նմայն հաւատացաւ, այնմ մատն լի-նիցէ։ Այլ զայս ոչ եթէ անձին ինչ հրամանաւ, այլ ըստ նոցա վկայութեան կազմէ՝ ոչ միայն բանիւք, այլ և արդեամբք. զի ցուցցէ՝ թէ և ինքեանք իսկ վկայք են հաստատութեան նորա։ Ա՛ն որոյ և ասէ, թէ «Օ՛ի եղէք յանապատն տեսանել»։ Որպէս զի ա-սիցէ, ընդէր թողէք զքաղաքս և զտունս, և դառն ետուք խուռնութեամբ դիմեալ ամենեքեան յանա-պատն. զայր մի անպիտան և թեթև տեսանել. այլ չէ ինչ 'ի դէպ՝։ Այլ զայս յայտ առնէր փոյթն և ա-մենեցուն դառն տալն յանապատին։ Վասնզի ոչ այն չափ յօժարութիւն ժողովուրդք և քաղաքք դիմէին յանապատն և 'ի Յորդանան գետ, թէ ոչ զմեծ ոք և զսքանչելի և զհաստատուն քան զվեմ ակն ուսանէին տեսանել։

«Օ՛ինչ եղանիցէք՝, ասէ, յանապատն տեսանել. եղէգն 'ի հողմոյ շարժեալ»։ Օ՛ի թեթևքն և վա-ղահասուկքն, որ երբեմն զայս ասիցեն և երբեմն զայն, չկան երբէք 'ի հաստատութեան։ Այլ տես, զիարդ զամ չարիս թողեալ, և զայն ևեթ գնեն՝ որ գեռ առժամայն սողմեալ մտեալ արծարծէր. և բառնայ զպատՀառս թեթևութիւնն 'ի միջոյ։

«Այլ զի՞ եղէք տեսանել. այր 'ի հանդերձս փափ-կութեան զգեցեալ. ահաւասիկ որ զփափուկսն զգե-ցեալ են՝ 'ի տունս թագաւորաց են»։ Այլ զոր ասէն՝ այսպիսի ինչ է։ Օ՛ի ոչ վաղվաղուկ էր, դուք իսկ ձեզկն ձերով փութոլոգ յայտ արարէք։ Կա և ոչ զայն ոք ինչ կարէ ասել, թէ այսր հաստատուն էր, բայց փափկութեամբ ծառայ էր, և յետոյ յուլացաւ և

1 Յորինակին մի ինչ յայտ. եգաք ըստ լուսս։

2 Յոյնն մի ելանիցէք... տես-անել եղիցի։

թուլացաւ։ Վանդի՛ մարդկանէ կէսք՝ ի բնէ այն-պիսիք են, և կէսք յետոյ լինին այսպիսիք։ Որպէս զի ոմն՝ ի բնէ իսկ բարկասիրտ է, և միւսն յետոյ առ-յաւս բազում ժամանակաց ախտանայ զայնպիսի ախտ. և կէսք՝ ի բնէ իսկ ցոփք և թեթևք, և կէսք յետոյ լինին՝ նոյնպիսիք։ Այլ Յովհաննէս ոչ՝ ի բնէ ինչ այսպիսի էր, և ոչ յետոյ եղև։ Վանդի՛ ոչ եթէ զեղէցն ինչ՝ ի հոգմոյ շարժեալ էք տեսեալ, և ոչ առ՝ ի փափկութեց յուլութեց կորոյս զլաւութիւն։ Այլ զի ոչ փափկութեց ծառայէր, վկայեն պատմու-ՀՀանն և անապատն և բանսն։ Զոհ փափկութեց կամէր ծառայել, ոչ յանապատ բնակէր, և ոչ՝ ի բանտ մտանէր։ Զի եթէ լռեալ եթէ էր, ՝ի բիւ-բասպատիկ բարութիւս վայելէր. յորմէ մինչ յանդէ-մանէրն իսկ և՝ ի կապանս կայր, այնչափ ակնածէր Հերովդէս, որչափ եւս առաւել՝ թէ լռեալ էր, պա-տուէր զնա և արդեամբք։ Զ այնպիսւոյն զիա՞րդ ոք կարիցէ չարաչար կարծիս ինչ կարծել։

Իբրև՝ ի բնակութենն և՝ ի հանդերձիցն, և յամ ուստեք յայտ արար թէ որպիսի ինչ ոք էր, և յա-մենեցունց առ հասարակ առ նա ընթանալոյն՝ նկա-րեաց զբարս նորա, ապա յարէ՝ ի նոյն և զմարգա-բէն. ասէ. «Զի՞ ելէք տեսանել. մարգարէ՞. արդա-րև ասեմ ձեզ, և առաւել եւս քան զմարգարէ։ Զի սա է՝ վասն որոյ գրեալ է, թէ առաքեցից զհրեշտակ իմ առաջի քո, որ պատրաստեսցէ զճանապարհս քո»։ Նախ զհրեից վկայութենն դնէ, և ապա զմարգարէ-ին՝ ի նոյն յարէ. մանաւանդ թէ նախ զհրեիցն իսկ վճիռ դնիցէ. որ մեծ իսկ օրինակ լինիցի, յորժամ և՝ ի թշնամեացն իսկ վկայութիւն գայցէ՝ ի մէջ. երբորդ անգամ, զառնն զվարս. երրորդ անգամ, զիւրոյ դատաստանին ընտրութիւն. չորրորդ անգամ, զմարգարէն. որ յամ կողմանց ըմբերանիցէ զնոսա։

Այլ զի մի ասիցեն, թէ յայնժամ այնպիսի էր, և այժմ փոխեցաւ, յարէ՝ ի նոյն և զայս՝ զոր յետոյ առնէր, զհանդերձն և զբանսն, և զմարգարէութիւն ընդ նմին։ Ապա և զայն, թէ առաւել է քան զմարգ-

1 Ի լաս. յեթոյ ... յոտ-ՐԷ ԷՆԷն։

դարէ. և եթէ թէ առաւել իցէ. զի մծատակաց էր այնր՝ որ եկեալ հասեալ էր։ «Բ.հաւասիկ առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո». այն իսկ է, զի անդէն իսկ մծատ առ նմա էր։ Օ՞ որ օրինակ և թագաւորաց առաջի՝ որ մծատ առ կառօքն կամ առ անդրմարօք գայցեն, նմա քան զայլն էն պատուականք. նոյնպէս և Յովհաննէս առ գալստեամբն ձի արկեալ վարէր։ Ցե՛ս, զիարդ և այսու զառաւելութիւն յայտ առնէ. և ո՛չ այսչափ միայն, այլ զի՛ւր իսկ վՃիռն'ի մէջ բերէ։ «Բ.ամէն ասեմ ձեզ, չէ յարուցեալ'ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս մկրտիչ»։ Եւ այսպիսի իմն կամի ասել, թէ չծնաւ այլ ոք'ի կանանց մեծ քան զնա, և բաւական վՃիռն իսկ էր հաւանեցուցանելոյ. բայց թէ կամիցիս և յիրաց անտի ուսանել, միտ դիր սեղանոյն, բնակութեան, բարոյիցն բարձրութեան։ Օ՛ի իբրև յերկինս՝ այնպէս շրջէր'ի յերկրի. և'ի վերս քան զկարիս բնութեն համբարձեալ՝ զնոր իմն Ճանապարհ զնաց. յօրհնութիւն և յաղօթս ծախէր զամ ժամանակն. ընդ մարդկան և ո՛չ երբէք, այլ ընդ այ խօսէր Ճանապաց։ Օ՛ի ո՛չ երբէք ետես զծառայակիցս, և ո՛չ երբէք երևեցաւ ումեք'ի նոցանէ։ Ա՛չ խորտկօք կերակրէր, և ո՛չ'ի մահիճս ննջէր, և ո՛չ ընդ յարկօք մտանէր, և ո՛չ ընդ հրապարակս շրջէր, և ո՛չ այլովք ինչ իրօք մարդկան վայելէր։ Եւ զգօն էր միանգամայն և սաստիկ. և լուր, զիարդ ընդ իւր աշակերտն զգօնութիւ խօսի, և ընդ հրեայսն մեծաւ սաստիւ, և ընդ թագաւորին բազում համարձակութեամբ։ Ա՛ն այնորիկ ասէր տՊ՚ա, թէ «Ազիք յարուցեալ'ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս մկրտիչ»։

Բ.այլ զի մի առաւելութիւն գովութեացն յոռութիւ ինչ ծնանիցի, և զնա պատուական ինչ քան զՊ՚ա համարիցին հրեայքն, տես զիարդ և զայն ևս ուղղէ. և որպէս որովք շինէին աշակերտքն, միասէին ժողովուրդքն, զի թեթև իմն համարէին զնա, նոյնպէս և որով շինէին այլք, միասէին նոքօք բազումք. և'ի պարկեշտութեանն՝ զորս պատմէր զնմանէ տՊ՚ա, առնուցուն չար ինչ կարծիս. վասն այնորիկ և զայն ևս կարծիս'ի միջոյ բառնայ, ասելով թէ «Փոքրիկն

յարքայութեն երկնից մեծ է քան զնա »։ Փոքր ըստ տիոցն և ըստ բազմաց կարծեացն ասէ. քանզի կերօղ և արբեցօղ իսկ կոչէին զնա. և դարձեալ « Ո՞չ սա է որդի հիւսան »։ և ամ՛ ուրեք ջանային խտրել զնա։ Այլ արդ զիմ՛դ, ասեն. ըստ համեմատութեանն միայն Յովհաննու մեծ էր. ծն անդր՝ քաւ լիցի. և ոչ յորժամ Յովհաննէս ասիցէ, « Օ՛ օրագոյն քան զիս է »։ ըստ համեմատուն՝ ինչ ասէ։ Զա և ոչ Պաւղոս՝ յորժամ զՄ՛ովսիսէ ասէ, գրելովն՝ թէ « Լ՛ուաւեալ ևս փառաց արժանի եղև քան զՄ՛ովսէս »։ ըստ համեմատութե՛ ինչ ասէ։ Զա և ոչ ինքն իսկ յորժամ ասիցէ՝ թէ « Մ՛եծ քան զՅ՛ողովմին այժմ ասա է »։ միթէ ըստ համեմատութեան ասացեալ է։ Այլ եթէ տայցեմք ևս ըստ համեմատութեան ասացեալ զայս՝ ի նմանէ, սակայն և այնպէս ըստ մտաւորութեն իմանամք վասն տկարութե՛ լսողացն։ Օ՛ի կարի ինն յօրացեալ էին մարդիկն յայնժամ՝ ի Յովհաննէս. մանաւանդ զի՝ ի բանտին իսկ լուսաւորագոյն արար զնա. և համարձակ էր առաջի թագաւորին. զի կարի իսկ ախորժելի էր յայնժամ բազմաց։ Զա և հինն իսկ այնպէս գիտէր ածել յուղղութե՛, յորժամ զանկշիռ համեմատութե՛ն անմանն իրաց ինչ ածիցէ. որպէս յորժամ ասիցէ, « Ո՞չ ոք է նման քեզ յածս ձոր »։ և դարձեալ՝ թէ « Ձ՛ենք ձեզ ի՞ծ մեր »։

Բայց ոմանք ասեն, թէ զառաքելոցն ասաց զայս Տ՛էր, և այլք զՀրեշտակաց. յորժամ՝ ի ՀՀմարտութենէն վրիպեացին, յաՀախ ինն սովոր են դանդաչել այսր անդր։ Օ՛ինչ՝ ի դէպ էր կամ վասն հրեշտակաց կամ վասն առաքելոցն ասել զայս։ Այլ այլ ազգ ևս. եթէ զառաքելոցն ասէր, զինչ արդեալ էր, զի ոչ յանուանէ իսկ ածէր զոմն՝ ի մէջ։ Բայց քանզի զանձնէ ասէր, յիրաւի թաքուցանէր զերեսն. զի դեռ ևս տարածեալ էին կարծիքն. և զի մի տացէ պատճառս՝ թէ անձամբ զանձնէ մեծամեծս խօսիցի. և՝ ի բազում տեղիս երևի այսպիսի ինչ արարեալ։

Այլ զինչ իցէ « Յարքայութեն երկնից »։ Ի՝ հոգևորսն և յերկնաւորականս ամ՛։ Զա և ասելովն իսկ թէ « Ձ՛ենք յարուցեալ՝ ի ծնունդս կանանց մեծ քան զՅ՛ովհաննէս », անջրպետութե՛ ինն առնէր ընդ ինքն

և ընդ Յովհաննէս իւրոյ առաւելութեամբն։ Օր թէպէտ ծնունդ կանանց էր և ինքն, այլ ոչ իբրև զՅովհաննէս. և ոչ մարդ ոք լոկ, և ոչ ըստ նմա-նութեան մարդկան ծնաւ, այլ նոր ինն և չքնաղ ծնունդ։

«Յաւուրցն անտի, ասէ, Յովհաննու մկրտչի մինչ և ցայժմ արքայութիւնն երկնից բռնադատի, և բռունք յափշտակեն զնա»։ Լաւ զինչ 'ի դէպ իցէ այս առաջնոց բանիցն. այլ բազում իսկ և կարի քաջ միաբան։ Վասնզի ձեպէր այնուհետև և ստիպէր տանէր յիւր հաւատս. և միանգամայն առաջին իսկ բանիցն Յովհաննու լինէր ջատագով։ Օր թէ մինչ ցՅովհաննէս կատարեցան ամ ինչ, ապա ես եմ՝ որ գալոցն էի։

«Վասնայն, ասէ, օրէնք և մարգարէք մինչև ցՅովհան մարգարէացան»։ Լաւ չդադարեին իսկ, ասէ, մարգարէքն, թէ չէի ես եկեալ. և արդ մի ինչ սպասէք այլում. զի ես եմ՝ որ գալոցն էի. և եկի՝ 'ի մարգարէիցն դադարելոյն յայտ է. և զի հանապազ օր ըստ օրէ յափշտակեն զհաւատն՝ զոր յիս պարտիցին ունել, այնպէս լուսաւոր և յայտնի կայ՝ զի բազումք իսկ յափշտակեն զնա։ Լաւ ոչ յափշտակիցէ զնա. ամենեքեան իսկ՝ որ փութով մերձենայցեն. ապա և զմիւսն ևս նշանս դնէ 'ի միջի։

«Լթէ կամիք ընդունել, նա իսկ է Լղիա՝ որ գալոցն է»։ ըստ այսմ, թէ «Դաւթեցիդ ձեզ զԼղիա թեղեացի, որ դարձուսցէ զսիրտ հարց առ որդիս»։ Այս է, ասէ, Լղիա, եթէ կամիցի ոք հաւատեաւ միտ դնել. քանզի և ասէ իսկ, թէ «Դաւթեցիդ զհրեշտակ իմ առաջի քո»։ Լաւ բարւոք ասաց. «Լթէ կամիք ընդունել». զի ցուցցէ՝ թէ ոչ հարկ ինչ 'ի վերայ դնէ, այլ ինքնակամ միտս պահանջէ։ Լաւ յայտ առնէ, թէ սա նա է, և նա սա. զի երկոքինն մի սպասաւորութիւն ընկալան, և կարապետք եղեն երկոքինն։ Այն որոյ և ոչ լոկ ասաց, թէ նա է Լղիա, այլ թէ կամիք ընդունել. այս իսկ է, զի յօժարմտութեամբ միտ դնիցէն իրացն գործելոց։ Լաւ ոչ զայն միայն, այլ և յաւել և ասաց, զի ցուցցէ՝ թէ իմաստութեան պէտք են առ այն՝ թէ նա է

Լղնա[1] որ գալոցն է. « Ոչ ունիցի, ասէ, ականջս լսելոյ՝ լուիցէ »։

Թէպէտ և այնչափ հարցուածս եդ 'ի միջի, զի զարթուսցէ զնոսա 'ի հարցուածսն, սակայն նոքա ոչինչ ընդոստ լինէին։ Լու զայն չկարէ ոք ասել, թէ չիշխէին հարցանել. կամ թէ դժուարամատոյց ինչ ոք էր։ Օ՛ի որք վասն դոյզն ինչ իրաց հարցանէին և փորձէին, և բազում անգամ և ընդդէմ ևս դառնային՝ և չտային խօսել, և զի՞արդ՝ թէ վասն կարևորացն ինչ հարցանէին և ուսանել կամէին՝ արգելլոր։ Լու թէ վասն օրինացն հարցանէին, « Ո՞ր պատուիրան առաջին է », ասեն, և այլ ինչ նոյնպիսի. թէպէտ և չէր ինչ հարկ այնպիսեացն տալ պատասխանի, սակայն տայր. զի՞արդ զայնս՝ որ 'ի նմանէ ասացան, և պարտական պատասխանւոյ էր, ոչ քննէին[1]։ Լու մնաւանդ զի ինքն իսկ յորդորէր զնոսա յայն. ասելովն՝ թէ բռունք յափշտակեն, յառաջադիմութիւն յօժարեցուցանէ զնոսա. նոյնպէս և այնու թէ որ ունիցի ականջս լսելոյ, 'ի նոյն դրդէ։

« Ո՞ւմ, ասէ, նմանեցուցից զազգս զայս կամ ո՞րում. նման իցեն մանկտւոյ՝ որ նստիցին 'ի հրապարակս, և ասիցեն ընդ ընկերս, փող հարաք ձեզ՝ և ոչ կաքաւեցէք, ողբացաք՝ և ոչ կոծեցարուք »։ Դարձեալ թուի այս՝ թէ սմնման ինչ իցէ առաջնոցն. բայց կարի իսկ հանգոյն նոցին է։ Օ՛ի դեռ ևս զգրէ խոյն ունի, և կամի ցուցանել՝ թէ միաբան իւրոց գործոցն գործէ Յովհաննէս, թէպէտ և իւրքն այլազգ գործէին, այլ միտք արդեանցն նոյն էին։ Լու զայս՝ հարցուածս յայտ առնէ, թէ չէ ինչ՝ որ պարտ էր առնել վասն նոցա փրկութեան, և ոչ արարաք։ Ուրպէս մարգարէն զայգւոյն ասէ, թէ « Օ՛ինչ ինչ պարտ էր առնել այգւոյ իմում և ես ոչ արարի »։

« Ո՞ւմ, ասէ, նմանեցուցից զազգս զայս։ Նման են մանկտւոյ՝ որ նստիցին 'ի հրապարակս, և ասիցեն ցընկերսն, փող հարաք ձեզ՝ և ոչ կաքաւեցէք, ողբացաք՝ և ոչ կոծեցարուք։ Լին Յովհաննէս, ոչ ուտէր և ոչ ըմպէր. և ասեն, դև գոյ 'ի նմա։ Լին

1 'Ի լուս. Քրիստոսն։ 2 Յօրինակին ոչ ասէր. եդաք ըստ լուս։

որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ. և ասեն, ահա այր կեր-
ծող և արբեցող՝ բարեկամ մաքսաւորաց և մեղաւո-
րաց ,, : Եւ զոր ասէն այսպիսի ինչ է, թէ երկոքինն՝
հակառակս միմեանց ցուցաք Ճանապարհ, ես և Յով-
հաննէս, և զգործ զմի և զնոյն վՀարեցաք : Այսպի-
սի ինչ, զոր օրինակ զգազան ինչ որսոյ յորժամ կա-
միցին որսալ, ընդ երկուս Ճանապարհս ելեալ՝ և
հանդէպ միմեանց կայցեն 'ի կրծի, զի ուստի և ի-
ցէ հնարիցեն ածել և արկանել 'ի գառագէզ : Եւ
դու միտ դիր, զիարդ ամ՛ ուստէք ազգ մարդկան 'ի
պահս իմն հարկեալ են, և ընդ այն առաւել իմն զար-
մանան, և աքանչելի և խիստ վարս համարին : Այն
այնորիկ այնպէս մատակարարեցաւ, զի անդատին
յառաջին տիոցն այնպէս սկսանիցի Յովհաննէս, զի
այնպէս հաւատարիմ առնէ զվկայութիւնն :

Եւ ընդէր ո՞չ, ասեն, և նա ընդ նոյն Ճանապարհ
կամեցաւ գնալ : Այնուանդ զի և նա ընդ նոյն Ճա-
նապարհ էին, յորժամ զքառասնօրեայ ժամանակն
պահեաց միանգամայն, և շրջէր և ուսուցանէր, և
ո՞չ գոյր տեղի՝ որ զգլուխն դնիցէ : Այլ սակայն և
այլ ազգ ևս յարդարէ գնոյն, և շահիւքն զոր մատա-
կարարէր անտի՝ գնոյն Ճանապարհ գնայր : Եւ ևս
մին աւելի քան զայնր որ եկեալն է վկայէ զնմանէ :
Զի Յովհաննէս այլ ինչ աւելի չեցոյց, բաց 'ի վա-
րուցն և յառաքինութենէն : « Յովհաննէս, ասէ, նշանս
ինչ ոչ արար » : Զայլ ետ Յովհաննու պահքն պայ-
ծառանալ. և ինքն զհակառակս նորին գնայր. զի 'ի
Ճաշս մաքսաւորաց մտանէր և ուտէր ընդ նոսա :

Եւ արդ հարցցուք ցհրեայսն. բարւո՞ք ինչ և զար-
մանալի գործ իցեն պահք : Եւ եթէ բարւոք իցեն,
պարտ էր նոցա հաւատալ Յովհաննու. զի այնպէս
իսկ ածելոց էր գնոսա 'ի Քրիստոսի Ճանապարհն : Այլ
խիստ ինչ և ծանրատաղտուկ իցեն պահք : Զի՞ այն
պէս իցէ, պարտ էր նոցա հաւատալ Քրիստոսի, որ ընդ
միւս ևս Ճանապարհ էին՝ գնորին հակառակն. զի երբ-
կոքուն՝ Ճանապարհքդ որով և էր՝ յարքայութիւնն
երթալոց էին : Այլ զերկոսին իբրև զգազան ինչ
չարաբարոյ յոռեցուցանէին :

Եւ արդ ո՞չ եթէ նոցա ինչ մեղ էր որք հաւատա-

ցանն [1], այլ նոցա ամբաստանութիւն՝ որք ոչն հաւատացին։ Եւ զի ոչ ոք երբէք զյոռիս ինչ պարսաւել Քանայ, զոր օրինակ և ոչ գովել իսկ։ Յորժամ զգեղեցիկ ինչ և զպայծառ գովիցէ, զյոռին և զանպիտան ապագովէ. և յորժամ զյոռին գովիցէ, զլաւն պարսաւէ. քանզի չէ հնար՝ եթէ զերկոսին կողմանն ընտրիցէ։ Վասն այսորիկ իսկ և նա ասէր թէ «Փողս հարաք ձեզ՝ և ոչ կաքաւեցէք»։ Եւ այսու զբարի կեալն յայտ առնէ, թէ դիւրին Ճանապարհս ցուցի, և դուք 'ի միտ ոչ առէք։ «Ողբացաք՝ և ոչ կոծեցարուք»։ Յովհաննէս, ասէ, խիստ վարս էցոյց և դուք ոչ անսացէք։ Եւ ոչ ասէ, թէ նա զայն և ես զայս, այլ քանզի մի կամք էին երկոցունցն, թէպէտ և վարքն այլագունակք էին, վասն այսորիկ զգործն հասարակաց դնէ։ 'Այս և ընդ երկուս [2] Ճանապարհս գնալ՝ 'ի կարի միաբանութենէն լինէր, և 'ի մի վախճան ուշ ունելոյ։

Եւ արդ զինչ ինչ ունիցիմք տալ պատասխանի. վասն այսորիկ յարէ 'ի նոյն, թէ «Արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց»։ Այն իսկ է. թէպէտ և դուք, ասէ, չհաւանեցարուք, սակայն ինձ մեղադիր ինչ այսուհետև չկարէք լինել. զոր օրինակ զհօրէ ասէ մարգարէն, թէ «Ոչիպես արդար եղիցիս 'ի քանս քո»։ Օ՛ի ՝ՀԾ թէպէտ և ոչինչ վՀարիցէ աւէլագոյն, սակայն զուբ խնամն՝ որ վասն մեր պարտ ինչ իցէ կատարել՝ կատարէ. զի որք յանդգնելն կամիցին՝ մի ինչ գտանիցեն պատՀառս իւրեանց ապախտաւորութենն և երկմտութեանն։ Ոչ իրքն ինչ ոչ յարգոյգ, այլ յոռիք երևեսցին, ընդ այն մի ինչ զարմանայցես. քանզի ըստ տկարութեանն լսողացն խօսէր, և ոչ ըստ իւրում ՝ՀԾութենն։ 'Այս և Եզեկիել բազում ինչ ասէր՝ որ նոցա 'ի դէպ էին, և նորա մեծութենն կարի անարժանք. բայց սակայն և զայն ևս վասն բազում խնամոցն արժանի համարէր։

Եւ դու միտ դիր, զիարդ այլ ևս կերպարանօք այլ ինն անուղղայս կարծիս կարծէին։ Յորժամ ա-

1 'Ի լուս. էՀոՀոգացանն։
2 Յօրինակին Նա և ալ երկոս. եդաք ըստ լուս։

սէին զՅովհաննէ, թէ «Դէ՛ւ դոյ 'ի նմա», ոչ զայն միայն բաւական համարեցան, այլ և զՅոհ՝ որ ոչ ինչ այնպիսի՝ զոր Յովհաննէս ախորժէր, կամեցաւ ցուցանել, զնոյն խօսէին. և այնպէս միշտ 'ի հակառակ ինն միմեանց կարծիս կային։ Օ՛ի Պ ուկսա հանդերձ սոքիմ՛ք և այլ ինն մեծ ամբաստանութի՛ն զնոցանէ, թէ «Պաքսաւորք և մեղաւորք արդարացուցին զա՛ծ, զի մկրտեցան 'ի մկրտութի՛ն Յովհաննու»։

Բ՛պա այնուհետև նախատէ զքաղաքն, յորժամ արդարացաւ խնդութի՛ն, յորժամ եցոյց զնա՛մ ինչ կատարեալ. և քանզի ոչ հաւանեցոյց, ապա հեգս և թշուառական կոչէ. որ երկեցուցանելոյ նշանակ է, և ոչ նախատանաց։ Լ՛ւ զի զանիցն վարդապետութիւն և զարդեանցն միանգամայն եցոյց նշանագործութի՛ն, և նոքա և՛ս տակաւին 'ի նմին թերահաւատութի՛ն յամառեալ կացին, ապա և 'ի նախատել մատչի։ «Յայսժամ սկսաւ Յի՛ս նախատել զքաղաքն, ուր եղէն բազում զօրութի՛ք նորա, և ոչ ապաշխարեցին։ Վա՛յ քեզ, ասէ, Խորազի՛ն, վա՛յ քեզ Բեթսայիդա»։ Բ՛պա զի գիտասցես՝ թէ ոչ այնպիսի՛ք ինչ էին բնութի՛ւն, և զանուն քաղաքին դնէ, ուստի հինգ իսկ առաքեալ՛ն էին։ Օ՛ի Փիլիպպոս, և այլ և՛ս երկու լուծ՛ք գլխաւորացն անտի էին։

«Եթէ 'ի Տիւրոս և 'ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն՝ որ 'ի ձեզ եղեն, վաղուց և՛ս արդեաք խորգով և մխրոով ապաշխարեալ էր։ Բայց ասեմ ձեզ, թէ տիւրացւոց և սիդոնացւոց ‖ [1] դիւրագոյն լիցի յաւուրն դատաստանի, քան ձեզ։ Եւ դու Կապառնաում, որ մինչև յերկինս ես բարձրացեալ, մինչև և 'ի դժոխս իջցես. զի եթէ 'ի Սոդոմ եղեալ էին զօրութի՛քն որ 'ի քեզդ եղեն, ապաքէն կային և՛ս մինչև ցայսօր։ Բայց ասեմ ձեզ, եթէ երկրին սոդոմացւոց դիւրագոյն լիցի յաւուրն դատաստանի, քան քեզ»։ Լ՛ւ ոչ վայրապար զՍոդոմ նոցա ընդ միտ

1 'Ի նշանակէ առտի ‖ և 'ի գիւրագոյն բառէ մինչև 'ի միւս նշանն, ուր աւարտի գլուխն առնիլ, պակասէր հատուածդ յօրինակին, զի թուղթ մի անդիր կայր. զոր 'ի յուսէն լցուցաք նորոգ թարգմանութի՛ւն։

արկանէ, այլ զի զբամբասանսն աՀեցուսցէ. քանզի սաստիկ էաւ չարեաց յանդիմանութիւն այն է, ոչ միայն քան զորս էիսն յայնժամ, այլ զի և քան զորս եղէսն երբեմն չարք՝ վատթարագոյն երևէր։ Այսպէս և այլ ուր այլոց զնոսա ընդդէմ դնէ, նկնուէացուվքն դատապարտեալ և բամբասմէն հարաւոյ. այլ անդուղղագործօքն, ասա՝ մեղուցելովք. որ այն իսկ կաբի ծանրագոյն էր։ Զսոյն և Լուկիէ օրինակ դատապարտութիւն գիտաց, որպէս և ասէրն իսկ ցԼրու սաղէմ, "Բ.ղդարացուցեր զքոյսն քո յամ 'ի մեղն քում"։ Լու ոչ յայս միայն հանեալ զբանն, այլ և զահն սաստկացուցանէ, և չարաչար քան զսոդոմայեցիսն ասէ և զտիւրացիս տանջել նոցա. և ամենայն ուստէք ահափետիւքն և աւաղելով ընդոստուցանէ զնոսա։

ՑՈՐԴՈՐԱԿ

Զ.ԱՑՍ և մեք լուիցուք. զի ոչ անհաւատիցն միայն, այլ և մեզ դաժանագոյն քան զսոդոմացուցոյն տանջանս պատրաստեաց, եթէ զհիւրսն եկեալս չաւ պընջականիցեմք. զի և զփոշին անգամ թօթափել հրամայեաց։ Լու առաւել յիրաւի իսկ. զի նոքա թէպէտ և մեծամեծս անօրինեցան, այլ յառաջ քան զօրէնսն և զշնորհս. իսկ մեք յետ այսչափ խնամոց և տեսչութեց մեղուցեալ, որոմ ներելոյ թողութեան լինիցիմք արժանի, որ զայսպիսի օտարատեցութիւն ունիցիմք, և կարօտելոց զդուրս, և զլսելիս յառաջ քան թէ զգրուսս փակեմք. նա՝ ոչ աղքատաց միայն, այլ նոցին առաքելոցն. և վասն այնորիկ աղքատացոյն, վասն զի և առաքելոցն։ Զի յորժամ Պաւղոս ընթեռնուցու, և դու միտ չդնիցես, յորժամ Յովհան քարոզիցէ, և դու չլսես, զիարդ զաղքատսն ընկալցիս՝ որ զառաքեալսն չընկալար։

Բ.յսուհետև զի նոցա տունք, և սոցա լսելիք հանապազ բաց կայցեն, սրբեսցուք յաղտից զանկնջ ոգւոց։ Զի զոր օրինակ աղտ և գայր զմարմնոց ականջս, սոյնպէս և ցուցք պոռնկականք և խառնա-

զանՃ վէպք, և պարտուց և փոխոց և տոկոսեաց խրն-
դիրք՝ քան զՅՍՄ կեղտ չար և խնուն զլսելիս մնացին.
մանաւանդ թէ և ոչ խնուն միայն, այլ և լի առնեն
պղծուիք. զի աղբ 'ի լսելիս մեր արկանեն՝ որ զայնսն
Ճառիցեն։ ԼՍ զոր խուժդուժն սպառնայր, «Ո-
տիցէք զաղբ ձեր» ասէ, և որ զՀետն այնորիկ, զայն
սոքա թէպէտ և բանիւք չսպառնայցեն, այլ արդ-
եամբք անցուցանեն ընդ ձեզ. նա աւանիկ զդժնդա-
կագոյնն. զի քան զաղբևսն և պիղծ այն երգք են։
ԼՍ անհնարին չար այն է, ոչ միայն տաղտուկ զլսելն
չՀամարել, այլ ծիծաղել և ընդ այն՝ յորմէ դար-
շելն և մերժել պարտ էր։ ԼՍ՝ եթէ դարշանք ինչ
չՀուիցին քեզ, էջ աղէ՝ ընդ գուսանսն խառնեաց և
ընդ կաբաւիչսն. նախանձ ընդ նմա բեր զոր գովեսդ.
և զի՞ իսկ նախանձել ասիցեմ, յարեաց միայն մեր-
ձեցիր 'ի նա որ զծաղրն զայն ածիցէ. այլ ըմբռստա-
նաս, չառնուս յանձն։ ԼՍ զի՞ զայն պատիւ դնիցես
նմա. դա աւադիկ և 'ի հելլենագիր օրէնսն վատա-
նշան գրեցան նոքա, և դու քաղաքավէն զնոսա իբրև
հրեշտակուԹեՃ պատգամաւորս և սպասաւորս ընդ-
ունիս, և հրաւիրես զամենեսին դալ կոյանոց զլսե-
լիսն առնել։ ||

ԼՍ ծառայ քո յորժամ աղտեղի ինչ խօսիցի քՀՀ-
լու 'ի լու, բազում տանջանս կրէ. նա և որդին իսկ
կամ կինն կամ ովք և իցէ՝ և զայն գործիցէ, թՀնա-
մանս զիրսն կոչես։ Լսկ եթէ մարդք շաղաշոյտք և
երից դանգաց գինք կոչեն զքեզ զլկտի բանս լսել,
ոչ միայն չցասնուս, այլ և ուրախ լինիս և գովես.
և զի՞նչ ինչ այնր անհնարուԹեՃ հանպոյն կայցէ.
ԼՍյլ դու ինչ այնպիսի լկտիս չՀօսիս. և այն զի՞նչ
օգուտ իցէ. նա և զայն իսկ չառնես. և ուստի՞ յայտ
իցէ. զի թէ ոչ խօսէիր, ապա և ոչ յորժամ լսէ-
իրն՝ ծիծաղէիր, և ոչ այնչափ փուԹով ընԹանայիր
'ի բարբառան՝ որ յամօԹ առնէր զքեզ։ ԼՍայց աղէ՝
ասա դու ցիս. ուրախուԹիւն ինչ իցէ զՀայՀոյուԹիւն
լսել. և չզարՀուրեսցիս, և ոչ զակամՁդ խնուս.
Թուի ինձ, թէ դու երբէք ոչ ՀայՀոյեացես. բայց զի
զՀայՀոյուԹիւն ախորժելով լսես, գրե՝ թէ դու Հայ-
Հոյես։ Լոյնպէս և 'ի խառնիսուԹիւն յայտնի ցու-

ցանես. զի թէ ոչ ուրախ լինիցիր ընդ աղտեղի բանին, ապա և ոչ լսել անսայիր։

Այլ երբ կարիցես լինել պիտանի, յորժամ ցանդ յայնպիսի երգս մանիցիս. երբ վասն զցածութեան քրտունս կրելոյ յանձն առնուցես, որ առ սակաւ սակաւ հալիս անկանիս 'ի ծաղուէին և յերգոցն և յայնպիսի բանից լկտեաց։ Այնզի սովորութիւն ոգւոցն այն է, յորժամ յայնմ ամէն սրբիցին, ապա կարին լինել պարկեշտ և ցածուն. և ոչ յայնպիսիս մնեալ. քանզի չկայ յակաստանի, վասն զի միտադոյն 'ի չարիս եմք. իսկ յորժամ արուեստ և գործ ևս զայն առնիցեմք, երբ զերծանիցիմք յայնպիսի հնոցէ։

Ոչ լուար զինչ ասէ Պաւղոս, թէ «Ուրախ լերուք 'ի Տէր»։ և չասաց թէ 'ի սատանայ. երբ կարիցես լսել Պաւղոսի. երբ զգայցես մեղայն, որ հանապազ արբեալ և ցանդ զեղխեալ յայնմ տեսլեան։ Այլ բնաւ զի՞ եկիր իսկ այսր։ Ձիցէն զարմանք. մանաւանդ թէ ոչ զարմանք իսկ. զի այսր վայրապար և քամահանաց գաս. և անդ փութով և յշնեթացս և բաղում յօժարութիւ։ Այլ յայտ անտի է, զի և 'ի տունս ևս բերես, յորժամ անտի գնայցես. քան զնամ զտիղմ՝ որ զձեւք անդ յայտնիցի բանիւքն և երգովք և ծաղու, իւրաքանչիւր ոք ժողովեալ և 'ի տունս բերէք. մանաւանդ թէ ոչ 'ի տունս միայն, այլ և 'ի միտս անցնիւք։ Այլ յորմէ չէ արժան գարշել, անտի միանգամայն զերեսս դարձուցեալ թալկաս, և զատելիսն սիրես։

Բաղումք իսկ յորժամ 'ի գերեզմանաց դառնայցեն, նախ լուանան՝ և ապա գան 'ի տուն. և որք 'ի թատերացն մեկնին, չխնեն յոգւոց, և չհեղուն վրատիս արտասուաց։ Ամէնայն և մեռեալն չէ ինչ պիղծ. և մեղքն այնչափ աղտ և կեղտ կուտեն, մինչև բազում աղբերաց դժուարին լինելոյ առ 'ի սրբել, բայց միայն արտասուաց և խոստովանութեամբ. այլ չզգայ ոք կեղտոյն այնմիկ։ Այնզի յորմէ պատշաճ է երկնչել՝ չերկնչիմք. վասն այնորիկ յորմէ չէ պատշաճ կասկածել, զարհուրիմք։

Օ՜ինչ ժխորն իցէ, զի՞նչ աղմուկն և սատանայ ակամն ամբոխքն և դիւական կերպարանքն։ Ամն յեր

տոյ զիսաւոր, մանուկ տիոմք, և զարու բնութիւնն յիգական բարս դարձուցեալ, և աչք և կերպարա-նք և հանդերձիւք և ամենևին իսկ առ հասարակ զպատկեր դիրդ և փափուկ աղջկան յօրինեալ։ ԼՀ-միւս ծեր հանդէպ նմին՝ զՀերս դերծեալ, և զմե-ռուս դերծեալ, պնդեալ և կծկեալ զկողն. և նախ քան զՀերսն զամօթ կտրեալ և 'ի բաց ընկեցեալ, յանդգնեալ պատրաստ կայ ապտակաւոծ[1] զընկերսն առնելով, և խօսել և գործել զաղտեղիս կամ։ Մրչափ կանայք մերկացեալք քողընկեցք, յանդգնեալք կան յայրատեալք՝ ընդ ամբոխն խօսելով. և այնչափ կաւատութիւն բանս և գործս անամօթութիւն գործեն, և զամ լրբութիւն և զպղծութիւն յոգիս լու-ղայն զեղուն արկանեն։ ԼՀ-մի փոյթ ամենեցուն է՝ 'ի հիմանց բրել զցածութիւն, և յամօթ առնել զբարս բնութիւն, և կատարել զչար դիւին ցանկութիւն։ ԼՀ-ան-զի բանք աղտեղիք անդ խօսին. և կերպարանք նշա-ւակութիւն. և այնպիսի խայտառակութիւն վարք, և գնացք պչրանաց, և հանդերձք լկտութեան, և բար-բառք պատրանաց, և նուագք երգոց մոռխաբաց, և աչաց մեղմեղանք, և սրինգք և փողք, և ամենևին ամենայն իրք և գործք՝ յետին անառակութեամբ և անհնարին պղծութեամբ լի։

ԼՀ-արդ ասա, երբ սթափեսցիս, ուր այնչափ սեռն պատրանք պոռնկութիւն հանապազ 'ի լսելիս և 'ի տե-սանելիս հոսեսցին. այնչափ փայլատակունք բարկու-թեան յանառակութենէ ձեպեալ։ ԼՀ-անզի շնութիւք անտի, և ամուսնութիւն գողութիւք, և կանայք պոռ-նիկք, և արք բողոքմանիք, և երիտասարդք խղա-ցեալք. և ամ անօրէնութիւն լի, և բնաւին ամ նշա-ւակութիւն, համբերն և ամենևին անամօթութեամբ։ ԼՀ-արդ չեր պարտ նոցա՝ որ անդ դեգեալ նստի-ցին՝ ծիծաղել, այլ արտասուել և յոգւոց հանել դառնութիւն։

ԼՀ-արդ զիարդ, ասեն. խափանել ինչ պարտ է զխաղսն և զկաքաւսն[2] և զզբօսանսն. քանզի ամ

1 Յօրինակին ապապանոծ։
2 Յօրինակին վիսաղսն. գուցէ վիսաղսն։

իսկ եղծանիցի։ Այս այնպէս ամ իսկ եղծանի. և արդ աղէ՝ ասա, ուստի իցեն որ ամենանութեաց նեն գութիս գործիցեն, ոչ ապաքէն յայմմ գուսանուէ։ Ուստի և որ զօրէնս հարսանեացն եղծանեն, ոչ ապաքէն անտի են. արք կանանց ատելի լինին, և կանայք արանց արհամարհելիք. ոչ անտի իսկ յաձախ գործին ընութիք։ Այսպա ուրեմն որ 'ի Թատերսն երթայ, նա է՝ որ զամ կարգս հոգևորս եղծանէ, և զբռնութիւն չարեացն գումարեալ կուտէ։

Այ, ասեն. այլ օրինաց այն իմն յօրինուած Թուին։ Օրինաց յօրինուածողք իցեն՝ զկանայս յարանց քակել, և զորդիս Թշնամանել և զերիտասարդս, և ըզտունս կործանել՝ յայնպիսի բազմամբոխ հրապարակն երթալոյ։ Այս ով, ասեն, շուն՝ որ յայնց տեսլեանց եղև։ Այս ո՞ իսկ անտի ոչ շուն. և եթէ մարթ էր՝ յանուանել իսկ ասեի. Թերևս և ցուցանեի իսկ, որչափ արս 'ի կանանց քակտեցին, որչափ ոգիս առին դերի բոզքն. զոմանս նախ քան զամենանութիւնն խնամ 'ի պղծալից յանկողինսն. և ոմանց և ժամանել իսկ ոչ ետուն յօրէնս հարսանեաց։

Այ արդ աղէ՝ ասա, զօրէնս ինչ զամ եղծանիցեմք։ Այս աւանիկ զանօրէնութիւն է եղծանել զայն պիսի Թատերսն լուծանել. քանզի քաղաքաց ապականութիւնք անտի իսկ են, անտի կռիւք և խռովութիւնք։ Որ վասն կաքաւելոյն կերակրիցին, և որոշվայնին գինս զբարբառն առնիցեն, որոց գործ աղաղակելն է և գործելն զամ յոռութիս, նոքա են՝ որ զբազմամբոխ ռամիկն յուզեն, և խռովութիւն քաղաքաց գործեն։ Օ՛ի մանկութիւ՝ որ յայն դատարկութիւն մտաբերէ, և յայնպիսի չարիսն մտանիցի, քան զամ դազան գազանագոյն լինի։

Իսկ կախարդութիւնք ուստի իցեն, զի չիցեն անտի. զի միայն զամ զզուր դատարկացեալսն յայն պակշոտեալ ցուցանիցեն. և որոց կաքաւենն 'ի բազում խռովութիւն տայցեն մրրկել. և զցածուն կանայս 'ի բոզութիւն գրգռիցեն։ Այս յայնչափ մինչեն նաւորուն եկեալ, մինչև զոսկերս անգամ զերեխայիցն 'ի շաբաժելոյ չդանդաղել։ Ոչ անտի իսկ բիւրապատիկ ցանկութիւնք ստիպեն 'ի չարութիւն պարսն սատանայի ծա-

խել ծախս։ Իսկ զեղխութիւն ուստի իցէ, և յաճախութիւն չարեացն։ Տեսանես զի դու իսկ կործանես զկեանսդ, որ անդր քարշեալ տանիս. և ես հաստատուն ունիմ, որ զայն խոտեմ։

Խափանեա, ասէ, զարուեստ կաբաւչացն, և աւերեա զտեղին։ Դու երանի թէ հնար իսկ էր խափանել և աւերել. մանաւանդ թէ կամիցիք, 'ի ձերմէ կողմանէ խափանել և աւերել և յատակաց բրել։ Բայց ոչինչ այնպիսի հրամանս տամ. այլ զայն միայն, զի մինչ կայն՝ խոտան համարեսցուք. որ մեծ գովութիւն քան զքակելն է։ Դու եթէ ընդ այլ ինչ ոչ, գէթ ընդ բարբարոսն նախանձ բերէք, զի յամենայն յայնպիսի տեսլեանց սուրբ են։ Դու արդ զինչ այսուհետև պատասխանատուութիւն կայցէ մեզ, յորժամ մեք՝ որ երկնից քաղաքացիքս եմք և քերովբէիցն գնդակիցք և հրեշտակաց հաղորդք, և 'ի վայր քան զբարբարոսն երևիցիմք։

Դու այն զի ունիցիս այլ ևս բազում քան զայն զեղեցիկ զբօսանս գտանել։ Թող կամիցիս սթափել, երթ 'ի բուրաստանս ուրեք, ուր աղբերքք բղխիցեն, և վտակք գետոց խաղայցեն, և 'ի ծովալեռն. և միտ դիր ծաղկոցացն, և լսիցես զդեղեցիկ երգս ճպռանացն։ Մօտեաց 'ի հանդրուանս մարտիրոսացն, ուր մարմնոց առողջութիւնք և ոգւոց շահք, և փառս ամենեին ոչ, և ոչ զղջումն յետ ցանկութեանն, որպէս և անդ։ Կին ունիս, և որդեակք իցեն. զինչ հանգոյն այնր ցանկութեամբ կայցէ։ Տուն ունիս, և բարեկամք իցեն. այդ առաւել՝ զբօսանք վայելչութեամբ են. ցաւութեամբ հանդերձ և շահս յաճախիցեն։ Օ ինչ քաղցր քան զորդիս կայցէ, աղէ՝ ասա. զինչ հեշտական քան զկին, որ ցածնուլն կամիցի։

Այսեն՝ թէ երբեմն բարբարոսք ոմանք բանս ցաւութիւն և զգաստութիւն խօսէին, լուեալ զթատերաց և զանօրէն և զանօգուտ զբօսանաց, թէ հոռոմոց՝ որպէս թէ չիցեն կանայք և որդիք, իմացան զայնպիսի զբօսանս։ Օ ինչ քաղցր քան զկին և զորդիս կայցէ, թէ պարկեշտութիւն կեանս կեալ կամիցին։ Իսկ

1 Յորինակին այլ սոսոսել։

եթէ ցուցից, ասէն, զի ոչինչ վնասեցան յայնմ պա-
բակոլթենէ. նա և այն առաւել վնաս է, վայրա-
պարն և ընդ վայր անդր ժամանակ ծախել, և այլոց
գայթագղուլթի լինել. եթէ դու ոչ վնասեցիս, սա-
կայն զայլս գրգռես անդ փութալ։ Այս դու իսկ զի-
ա՛րդ չվնասիցիս, որ պատՃառս իսկ իրացն գործե-
լեացն տայցես։ Այս և ցասման իսկ պատՃառք, և
արանցն պառնկուլթի, և կանանցն բոզուլթի, և ամ
իսկ սատանայական պարուցն պատիժք՝ ի քո գլուխ
կուտիցին։ Որպէս զի թէ չէին թատրատեաք, և ոչ
ոք այնպիսի գործս գործէին. և քանզի նոքա ընդ նո-
սին առնուն բաժին գործոցն հուր։ Որպէս զի թէ
ցածուլթե վնաս ինչ ոչ լինիցի քեզ, որ անհնարինն
է, սակայն ընդ այլոցն կորստեան անհնարին պատիժս
կրիցես, և ընդ տեսողացն և ընդ նոցա որ անդր մի-
ախուռն կուտիցին։ Այս և՝ զգաստուլթին իսկ մե-
ծամեծ յաւելուածս գործէիր, եթէ անդր չերթայիր.
եթէ անդ ևս ցածուն իցես, յորժամ յայնպիսի տես-
լենէն փախչէիր՝ ևս առաւել ցածնագոյն լինէիր։

Մի այսուհետև աւելի վնասիցիմք, և մի անօգուտ
պատասխանիս հնարիցիմք իմանալ. մի միայն պա-
տասխանատուլթի է, փախչելն ի բաբելացւոց հնա-
ցէն, և հեռանալն յեգիպտացւոց պառնկուլթենէն,
թէ և մերկ ևս հասանիցէ յայնպիսի ձեռաց զերծա-
նել. զի այնպէս և ի ցանկուլթե վայելիցես։ Ա՛յլ
լեսցուք ի ցանկուլթենն առանց խղճի զմիտս մեր տան
Ջելոյ. զի և ասա ցածուլթե կեանս կեցցուք, և հան-
դերձելոց բարեացն հասցուք. որոց լիցի ամենեցուն
մեզ հասանել շնորհօքն Տն մերոյ Յի՛սի Վ՚ի. ընդ
որում հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք յաւի-
տեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

«Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յն և ասէ. գոհանամ զքէն հայր, տէր երկնի և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց. այո՛ հայր զի այսպէս հաճոյ եղև առաջի քո»։

Տեսանես որչափ իրօք փութայ ածել զնոսա 'ի հաւատս։ 'Լսես Յովհաննու գովութիւնքն, զի եղոյց զնա մեծ և սքանչելի, և հաւատարիմս զոր 'ի նմանէ ասացան. որովք նա 'ի սորա գիտութեան ձգէ զամենեսեսն։ Դարձեալ անգամ, ասելովն՝ թէ «Դ.ըքայութիւնն երկնից բռնադատի»։ զի այն իմն կարի յորդորելը և փութացուցանելը։ Դարձեալ անգամ, ցուցանելովն՝ թէ ամ մարգարէք կատարեցան. և այնուհայտ առնելը՝ թէ նա է, վասն որոյ նոքա յառաջագոյն գուշակեին։ Դարձեալ անգամ, ցուցանելովն՝ թէ որչափ ինչ պարտ էր 'ի նմանէն՝ եղև ամ. վասն որոյ և զառակ մանկտուց 'ի մէջ բերեալ յիշատակէր։ Դարձեալ անգամ, նախատելով զանհաւատսն, և երկեցուցանելովն, և մեծամեծ սպառնալիս յաձախելով։ Դարձեալ անգամ, գոհանալովն վասն հաւատացելոց, զի խոստովան լինել գոհանալն է[1]։

«Գոհանամ զքէն, ասէ, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի հանճարեղաց»։ Դե արդ զիարդ. ընդ կորո՞ստ ինչ ուրուք խնդասցէ, և ընդ չուսանէն ինչ ուրուք կամիցի. քաւ լիցի. այլ այն է փերկութեամբ պատճառք, և ողջութեամբ ճանապարհք, յորժամ զանգոնիչն որք ոչ կամիցին ընդունել զբանսն, ոչինչ բռնադատիցէ։ Օ՛ի որք կուելովն չեղեն պիտանիք, այլ յուլացան և արհամարհեցին, տարագիր լինելովն՝ գայցեն 'ի նորին ցանկութեան. զի այնպէս և հաւանեալքն ևս քան զևս յորդորիցին. զի սոցա

1 Յոյն լեզու խոսքովն վինել զգոհանալն ասէ։

յայտնեէն՝ ուրախութեամբ արժանի էր. և 'ի նոցանէ ծածկեալն՝ ոչ ուրախութեան ինչ, այլ արտասուաց. քանզի և իւր զնոյն յայտ արարեալ՝ արտասուէր ըզքաղաքն։ Եւ արդ ոչ ընդ այն ինչ ուրախ լինէր, այլ ընդ միւսն, զի զոր ինչ իմաստունքն չառին 'ի միտ, նոքա 'ի միտ առին։ Որպէս յորժամ Պաւղոս ասիցէ, թէ «Յոհանամ զայ, զի եկիք երբեմն ծառայք մեղաց, հնազանդեցարուք 'ի սրտէ այնմ որում աւանդեցայք յօրինակ վարդապետութեան». և ոչ եթէ Պաւղոս վասն այնր ինչ գոհանայր՝ զի ծառայք մեղայն էին, այլ թէ որպիսիք էին, և յորպիսիս վայելեցին։

Իսկ իմաստունս յայսմ վայրի զդպիրսն և զփարիսեցիսն կոչէ. և զայս ասէ, զի զաշակերտսն ևս յորդորագոյն առնէ. և ցուցանէ, թէ իմ արժանի եղեն որսորդքն ձկանց, և ուստի տարագիր եղեն այլ քան ամենեքին։ Կոչէ զնոսա իմաստունս, ոչ եթէ ըստ ճշմարիտ ինչ և յարգաւոր իմաստութեան, այլ ըստ այնմ զոր 'ի խորամանգութենէ իմաստութի կարծէին։ Քանզի չատաց իսկ՝ թէ յայտնեցեր զայս մեր ուսաց, այլ թէ տղայոց. այն իսկ է անմեղաց, միամտաց. և յայտ առնէ, թէ ոչ միայն անարժանս չվայելեցին յայնս, այլ և կարի իսկ յիրաւի. և խրատէ զմեզ՝ ամենևին ցածնուլ յամբարտաւանութենէ, և նախանձաւոր լինել միամտութենն։ Օ որ և Պաւղոս կարի ինն յաճախագոյնս գրէ. «Եթէ ոք կամիցի իմաստուն լինել, յաշխարհիս յայսմիկ յիմար լիցի, զի եղիցի իմաստուն յոյծ. և այնպէս իսկ յայտնի լինիցին այ հնարքն»։

Եւ արդ ընդ՞ի գոհանայցէ զՀօրէ, քանզի ինքն էր որ առնէր զայն։ Օ՞ որ օրինակ յաղօթեան կալով և բարեխօս լինելով առ ՅԾ՝ զբազում սէրն զոր ունի առ մեզ՝ ցուցանէ, նոյնպէս և աստ զբազում խրատամն ցուցանելոյ աղագաւ գոհանայր ընդ մեր վասն մեր։ Եւ յայտ առնէ՝ թէ ոչ 'ի նմանէ միայն անկան[1], այլ և 'ի Հօրէ։ Օ՞նոյն և ցաշակերտսն ասէր, թէ «Այ տայք զարբութիս շանց». զնոյն նախ ինքն առնէ։

1 'Ի լուս. էն կամ։

Լե իբրև եցոյց այսու՝ թէ իւր և հօր մի կամք են, զիւրն՝ գոհանալով և ուրախ լինելով ընդ գործսն, և զհօրն՝ ցուցանելով, թէ ոչ նա ինչ աղաչեցաւ և արար, այլ ինքն յանձնէ կարգեաց զամ զոր ինչ հօրն կամ էր։ Վանգի և ասէր իսկ, թէ «Յսպէս եղև հաճութիւն առաջի քո»։ զի յայտ արասցէ՝ թէ զնոսն կամէր և հայր, զոր նայն արար և վճարեաց։ Լե եթէ ասիցես, թէ իսկ 'ի նոցանէ ընդէր ծածկեցաւ, լուր Պաւղոսի, զի նա ասէ զպատճառսն։ «Օ իւրեանց արդարութիւն, ասէ, խնդրեն կացուցանել. քանզի արդարութեն ՝ այ ոչ հնազանդեցան»։

Օ մտաւ ած այսուհետև, թէ զինչ պարտ էր լինել՝ աշակերտացն՝ յորժամ լսէին՝ թէ զոր իմաստունքն չառին 'ի միտ, նոքա 'ի միտ առին. և 'ի միտ առեալ՝ մնային տղայք, և ծանեան ՝այ յայտնութ՝ն։ Պ ուկաս ասէ, թէ յորժամ եկին եւթանասունքն և պատմեցին վասն գիւացն, յայնժամ ցնծացաւ Յ՝ս, և ասէ. զի միանգամայն ընդ յորդորելոյն 'ի փոյթն՝ և զխոնարհութի ուսուցանիցէ։ Վանգի 'ի դէպ էր և նոցա մեծամտել վասն զգևսն հանելոյ, ցածուցանէ այսու և զայն ևս հպարտութի, թէ յ՝այ յայտնութենէն եղև, և ոչ 'ի ձերմէ ինչ քաջութ։ Վանգի զդպիրքն և փարիսեցիքն իմաստունք կարծէին նոցա, ծածկեցաւ, ասէ, 'ի նոցանէ՝ որ ինչ ձեզդ յայտնեցաւ. և արդ մի ինչ հպարտանայցէք իբրև զնոսա. այլ երկնչիջիք, և զանձինս 'ի չափս ունիցիք իբրև զտղայս. զի զձեզ այն իսկ արար արժանի յայտնութեան, և զնոսա նորին հակառակն՝ տարագիրս։

Լե ոչ յորժամ՝ ասիցէ՝ թէ ծածկեցեր զայս յիմաստնոց, զա՝ծ ինչ պարտ առնէ, այլ զոր օրինակ յորժամ Պաւղոս ասիցէ, «Ի՝ատնեաց զնոսա 'ի միտս անփորձս, և կուրացոյց զմիտս նոցա», ոչ զնա ինչ պարտ առնէ, այլ զնոսա՝ որ նմին պատճառք լինէին, նոյնպէս և աստ զնոսա պատճառս դնէ ծածկելոյն։

Լե քանզի ասաց՝ թէ «Գոհանամ զքէն հայր, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և յայտնեցեր տղայոց»։ զի մի ոք կարծիցէ՝ թէ ինքն զրկեալ ինչ ելցէ յայնպիսի զօրութենէ, և չկարիցէ ուղղութիս ինչ առնել, ասա ասէ և զայն, եթէ «Մենայն ինչ

տուաւ ինձ 'ի հօրէ իմմէ »։ Եւ յաշակերտացն խլեալ ընդ գիւաց հնազանդութիւն՝ ասէ, զի զարմանայք թէ դեռք հնազանդին ձեզ. զի ամ ինչ իսկ իմ է. և ամ ինչ, ասէ, տուաւ ինձ։ Եւ դու յորժամ լսիցես, թէ ամ ինչ տուաւ ինձ, մի մարդկօրէն ինչ կարծիցես. այլ զի մի երկուս ածս անծինս կարծիցես, դնէ զբանն։ Եւ զի միանգամայն ընդ ծնանելն՝ ամենեցուն որ էր, 'ի բաղում իսկ տեղեաց յայտ առնէ։ Եւպա ասէ այլ իմն մեծ, որ կարօղ է, ասէ, ուղղել զքո միտդ։

« Եւ՛չ ոք, ասէ, գիտէ զորդի, եթէ ոչ Հայր. և ոչ զՀայր ոք գիտէ, եթէ ոչ որդի »։ Եւ թուի այս տխմարաց՝ թէ չիցէ այս հանգոյն առաջնոցն. այլ կարի իսկ միաբան է։ Զանազի ասաց՝ թէ « Զմենայն ինչ տուաւ ինձ 'ի հօրէ », յարէ զայս 'ի նոյն. և զի զարմանայցէք, ասէ, թէ ամենեցուն որ իցեմ. զի այլ իմն մեծ քան զսոյն ունիմ. զի զՀայր գիտեմ, և 'ի նորին էութեէ եմ։ Եւ զայս իսկ ընդ աղօտ մեղմով յայտ առնէ ասելովն, թէ միայն ինքն գիտէ զնա. յորժամ ասիցէ՝ թէ « Եւ՛չ ոք գիտէ զՀայր, եթէ ոչ որդի », զսոյն յայտ առնէ։ Եւ տեսս, երբ յայտն առնէ զայս. յորժամ 'ի գործոցն իսկ առեալն զՀանդէս զօրուն նորա. ոչ միայն՝ զի զնորա նշանսն տեսանէին արարեալ, այլ զի անուամբ նորա այնպիսի զօրութիւս կարացին առնել։ Եւ քանզի ասաց՝ թէ յայտնեցեր տղայոց, յայտ առնէ՝ թէ սոյն իսկ նորա գործ է։

« Եւ՛չ Հայր ոք գիտէ եթէ ոչ որդի, և ում կամիցի որդին՝ յայտնէ »։ ոչ որպէս հրամանն ինչ առէլոյ. իսկ եթէ զնա յայտնիցէ, ապա և զանձն իսկ. բայց զուրն իբրև զյայտնի ինչ եթող, և զՀօրն իբրև զծածուկ ինչ եդ։ Եւ 'ի բաղում տեղիս զսոյն Ճառէ. որպէս յորժամ ասիցէ, թէ « Եւ՛չ ոք կարէ դալ առ Հայր, եթէ ոչ ինձ »։ Զայց այսու և այլ իմն յայտնի ցուցանէ, թէ միաբան և կամակից է հօր։ Զայսպէս, ասէ, չեմ ինչ մօտ 'ի կուիս, զի և երթալ առ նա չէ հնար՝ թէ ոչ ինձ։ Եւ քանզի այն իմն առաւել զայթագղեցուցանէր զնոսա, զի ածէ հաւակառակ այ կարծէին, ամ իրօք զայն բառնայ 'ի մի-

ջոյ. և նշանաւքն ոչ սակաւ, այլ և յոյժ իսկ առաւել զնոյն փուԹայ հաստատել։

Իսկ յորժամ ասիցէ, ԹԷ «Ո՛չ զՀայրն ոք Ճանաչէ՝ ԹԷ ոչ որդի», ոչ զայն ինչ ասէ՝ ԹԷ ամենեքեան իսկ ոչ գիտէին զնա. այլ ըստ այնմ գիտուԹԷ՝ որպէս ես գիտեմ զնա, այլ ոք ոչ գիտէ. զոր և զորդւոյ իսկ պարտ է խմանալ։ Իսայց ոչ եԹԷ զանգիտէ ումեքէ՝ որ չիցէ ումեք ծանուցեալ, ասէ զայս, որպէս Ա՝արկիումն ասէ. այլ զՀաւաստի գիտուԹիւն, ԹԷ որպէս ինչ ոք իցէ՝ ակնարկէ այսուիկ։ Իսա և ոչ զորդի ինչ կարեմք գիտել՝ որպէս պարտ է գիտել. և զայս Պաւղոսի յայտ արարեալ՝ ասէ, ԹԷ «Փոքր 'ի շատէ գիտեմք, և փոքր 'ի շատէ մարգարէանամք»։ Իսւ իբրև յորդորեաց զնոսա 'ի ցանկուԹիւն բանիցն, և եցոյց զուր զորուԹիւն, ապա և կոչէ առ ինքն։

«Իսկայք, ասէ, առ իս ամ վաստակեալքդ և ծանրաբեռունք, և ես հանգուցից զձեզ»։ Ո՛չ այս անուն և այս անուն, այլ՝ ամենեքեան՝ որ 'ի հոգս ինչ իցէք, կամ 'ի տրտմուԹիւն, կամ 'ի մեղս։ Իսկայք, ասէ. ոչ զի վրէժս ինչ պահանջեցից, այլ զի զմեղսն ջնջեցից։ Իսկայք առ իս, ասէ. ոչ զի կարօտ ինչ եմ 'ի ձէնջ փառաւորիլ՝ այլ զի կարօտ եմ ձերում փրկուԹիւնդ։ Իսւ ես հանգուցից զձեզ. և ոչ ասաց՝ ԹԷ կեցուցից միայն, այլ ԹԷ ամենևին իսկ 'ի հանգստեան արարից զձեզ։

«Իառէք զլուծ իմ 'ի ձեզ, և ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւք, և գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոցի»։ Իսւ մի զանգիտիցէք ինչ զի լուծ լուսէ, քանզի քաղցր է. և մի ինչ վհատիցիք զի բեռն անուսանելի, քանզի ԹԷԹև է։ Իսւ զնա՞ւդ վերաւոյն ասէ նեղ դուռն և անձուկ Ճանապարհ։ Յորժամ հեղգայցես ինչ, յորժամ ծանր լինիցիս. ապա ԹԷ արասցես զասացեալս, ԹԷԹև է բեռն. քանզի և այժմ իսկ այսպիսի կոչեաց զսոյն։ Իսւ եԹԷ զնա՞ւդ կարիցես առնել զՀրամանսն։ ԻսԹէ խոնարհ լինիցիս, հեզ և հանդարտ. զի այն իսկ է մայր ամ առաքի-

1 'Ի լուս. -ոյն Ե։

նութեան։ Բանզի յորժամ սկիզբն արար ճաճեղէն օրինացն, անտի արար սկիզբն. և ասա դարձեալ զնոյն պատուիրէ։ Եւ կարի մեծամեծ վարձս խոստանայ. զի ոչ այլում միայն օգուտ գործիցես, այլ նախ քան զամենեցուն՝ քեզ հանգիստ առնիցես։ "Եւ գտջիք, ասէ, հանգիստ անձանց ձերոց"։ Եւ նախ քան զհանդերձեալսն աստէն տայ քեզ հատուցումն և պսակ պարծանաց։

Եւ զիւր անձն ցուցանելով օրինակ՝ դիւրընկալ կամի առնել զբանն. զի կասկածիցես, ասէ. միթէ նուաղելոց ինչ իցես յորժամ խոնարհիցիս. յիս հայեսջիր և ամենևին զիրսս յինէն ուսջիր, և ծանիցես հաւաստեաւ՝ թէ որպիսի ինչ իցէ լուն։ Ցե՛ սանե՛ս, զի ամենևին 'ի խոնարհութենէ յորդորէ զնոսա, զոր ինքն իսկ նախ եցոյց յանձին. "Լուսարուք, ասէ, յինէն, զի հեզ եմ". որով և դուք իսկ շահել կարիցէք զանձինս. "Եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց". զոր ինքն ընդհէն նոցա. "Եւ ես, ասէ, հանգուցից զձեզ". թեթև առնէ զբեռն. "Լուծ իմ քաղցր է, ասէ, և բեռն փոքրագի". որպէս Պաւղոս խրատէ, թէ "Որ առ սակաւ մի թեթևնեղութիւն է, ըստ առաւելութեան յաւաւելութեան՝ զյաւիտենից ծանրութիւն փառացն գործէ 'ի մեզ"։

Եւ զիարդ, ասէն, թեթև իցէ բեռն, յորժամ ասիցէ՝ թէ "Որ ոչ ատեայ զհայր կամ զմայր, և առնուցու զխաչ իւր և գայ զկնի իմ, չէ ինձ արժանի". և "Որ ոչ թողու զտամ ինչս իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինել". յորժամ և զանձն ևս հրամայիցէ 'ի մահ մատնել։ Զայլ ուսուցանէ զքեզ առաքեալ, որ ասէ՝ թէ "Ի մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի. նեղութիւնք, թէ անձկութիւնք, թէ հալածանք, թէ սով, թէ մերկութիւն, թէ վիշտք, թէ սուր". և դարձեալ՝ թէ "Ոչն արժանի չարչարանք ժամանակիս՝ հանդերձելոց փառացն, որ յայտնելոցն է 'ի մեզ"։ Լուսուցանեն զքեզ՝ և որք 'ի հրեից ատենէն տանջեալք և անարգեալք ելանէին, և ուրախ լինէին, զի արժանի եղէն վասն անուանն Թշնամանս ընդունել։

ԾՈՐԴՈՐԱԿ

Բ. ՐԴ ԵԹԷ ևս վհատիցես վասն լուծ և բեռն ըսէ-
լոյ, որ չեն ինչ ահագին իրք, այլ առ քո ծուլութեդ
ծանր երևեսցին։ Օ՛ի թէ կազմ և յօժար լինիցիս,
ամ ինչ քեզ թեթեւ և դիւրին պատահելոց է։ Այլ
զի զմեզ 'ի գործ և 'ի վաստակ արկանիցէ Աստուած, ոչ
զհեշտականն միայն ասաց և լուեաց, և ոչ զծա-
նուանն ևեթ, այլ զերկոսինն ընդ միմեանս խառն
եդ։ Թէպէտ և լուծ ասաց, այլ քաղցր կոչեաց.
թէպէտ և բեռն ասաց, այլ զթեթեւն յաւել. զի մի
իբրև 'ի ծանուէ փախչիցիս, և մի իբրև զյոյժ դիւ-
րին ինչ արհամարհիցես։

Այլ թէ տակաւին դժուարին թուիցի քեզ առաքի-
նութիւն, 'ի միտ առնուցուս՝ թէ ևս դժուարագոյն
չարիքն են. քանզի և գնոյն իսկ ակնարկեաց. ոչ
յառաջ ասէ՝ թէ զլուծն առէք, այլ նախ՝ թէ եկայք
առ իս աշխատեալք և ծանրաբեռնիք. զի ցուցցէ
թէ մեղքն կարի աշխատութիւն և տաղտուկ է և ծան-
րաբեռն. զի ոչ զաշխատեալն միայն ասէ, այլ և
զծանրաբեռինսն։ Այա և մարգարէն ցուցանէ զծանր-
բուին. «Իբրև զբեռն, ասէ, ծանր ծանրացաւ 'ի վե-
րայ իմ». և Օ աբարիա կշիռ կապարոյ կոչէ զմեղսն։
Այա և փորձ իսկ իրացն գնոյն յայտ առնէ։ Օ՛ի
չիք այնչափ ինչ ծանր և տաղտուկ ոգւոց, որ 'ի վայր
տանիցի զմարդ, իբրև զմեղայն խիղճ. և ոչ որ
դարձեալ թռուցանիցէ և վերացուցանիցէ՝ իբրև զար-
դարութեան ստացուածս։ Այս դու քեզէն իսկ միտ
դիր. զինչ ծանրագոյն կայցէ քան զչստանալն ինչ
բնաւ, կամ զծնօսն տալ ապտակի, կամ դան ըմպել
և փոխարէն չհարկանել, կամ քան զմահ իսկ 'ի հար-
կէ մեռանել. բայց թէ վասն այ զայն ամ յանձն առ-
նուցուսք, ամենայնն թեթեւ և դիւրին և ցանկալի և
հեշտ թուի։ Այլ մի ինչ խռովեսջիք, այլ զիւրա-
քանչիւր մի մի 'ի նոցանէ ստուգութեամբ զբռամբ
ածեալ քննեսցուք։ Այթէ կամեսջիք՝ զառաջինն, որ
և բազմոց իսկ աշխատութիւն թուի։

Լ,ու արդ աղէ՝ ասա, ո՞ ծանր և տաղտկալի թուի. ընդ միոյ որովայնի հոգալ, թէ ընդ բազմաց տա-տամնել. մի՞ հանդերձ ագանել՝ և աւելի ինչ քան զոյն չինդրել, եթէ բազում ինչ 'ի ներքս ունել, և զօրհանապազ հոգալ, և զգիշերն ամ յորալ[1], և դո-ղալ և երկնչել, և վասն պահպանութեան կասկածել, և հեղձամղձուկ լինել վասն փնասելոյն՝ թէ գուցէ ցեցակեր լինիցի, կամ թէ ծառայն առնուցու և գնայցէ։ Լ,այց սակայն ո՛րչափ և ասիցեմ, չկարեն այնպէս բանքն յանդիման կացուցանել՝ որպէս իրացն փորձ. վասն որոյ կամէի ումեք յայնցանէ՝ որք 'ի զը-լուխ զգաստութեան հասեալ իցեն, այսր առ մեզ գալ, և ապա հաստատութեամբ 'ի վերայ հասանելիս իրացն ցանկութեան։ Օ՛ի ո՛չմինչ յանձն առնոյր՝ որ ցանկա-ցեալ չքաւորութեան էր, թէպէտ և բազմապատիկ ոք պարգևս մատուցանէր՝ առնուլ. և ո՛չ սոքա զաղքա-տութեան յանձին ունել։ Լ,ու ձեզ թէպէտ և բիւրա-պատիկ պատուիրեմ զհոգսն 'ի բաց ընկենուլ, չառ-նուք 'ի միտ։ Լ,ի այն իսկ անմտութեան, և չարաչար ախտի նշանակ է։ Ա՛յս և չէն իրքն հեշտականք, և վկայեսցեն մեզ նոքա՝ որ զօրհանապազ 'ի հոգս ծրն-դին, և չհամարին կեանս զկեանսն։ Լ,ոկ սոքա ո՛չ այնպիսի ինչ, այլ ուրախ են և ցնծան, և քան զթա-գաւորն թագաւն՝ նոքա աղքատութեամբն զուարա-ճանան։

Պարձեալ զմիւս ծնօտս յապտակս տալ թեթևաա-գոյն է այնմ, որ ուշ եդեալ իրացն հայեսցի։ Լ,ու զի անդ սկիզբն առնու պատերազմին, և ասա վախճան. այսու և զայլոյ խարդախ բորբոքես, իսկ այնու և զքո բոցն շիջուցանես. և զի քան զայրեալն՝ չայրեալն[2] ախոր-ժելի է, ամ ումեք յայտ է. իսկ եթէ 'ի մարմնոս այն, ո՛րչափ և առաւել յոգւոյ իրս։ Լ,ու արդ ո՛ր թեթևագոյն իցէ. կռուելն, թէ պսակիլ. մի՞ցեն, թէ պարգև առնուլ. ընդ ալիսն ոգորել, թէ 'ի նա-ւահանգիստն դիմել։ Ա՛յն այնպէս իցէ, մեռանելն քան զկեանն լաւագոյն իցէ. զի մին հանէ 'ի վշտաց և 'ի կարեաց, և միւսն ընդ նոքիմբք արկանէ, և

[1] 'Ի լուս. տիրու։ [2] 'Ի լուս. զայրեալն՝ չայրեալն։

պարտապան գործէ բաղում նեղութեաց և վշտաց. վասն որոյ չհամարիս [1] 'ի կեանս զայն կեանսն։

Այլ եթէ բանիցս ոչ հաւատայցես, լուր յայնցանէ՝ որք և տեսեալ իսկ իցեն զերեսս մարտիրոսացն 'ի ժամանակի պատերազմացն. զիարդ տանջեալք և քերեալք՝ լուրջք և զուարթք էին. և իբրև 'ի վարդենիս մտեալ՝ առաւել ուրախ էին պրկեալք [2] 'ի տապակս։ Վասն որոյ և Պաւղոս ասէր՝ յորժամ մերձ էր 'ի չուել և 'ի վախճանել զկեանս բռնութիւն մահուամբ, եթէ «Յնդամ և ուրախ եմ ընդ ամենեսին ձեզ, նոյնպէս և դուք խնդացէք և ուրախս լերուք ընդ իս»։ Տեսեր զհոգևոր արբեցութիւնն զառաւելութիւն. զնմա տիեզերս 'ի հաղորդութիւն ուրախութեանն կոչէ. այնպէս մեծ ուրախութիւն զաստի անդր չուելն գիտէր. այնպէս ցանկալի և փափաքելի էր նմա, և աղօթից արժանի՝ ահագին մահն։ Զայլ զի հեշտական և թեթև է առաքինութիւն լուծն, և այլուստ բաղում ուստեք յայտ է։

Այլ այսուհետև թէ կամիք և զմեղացն բեռինս տեսցուք։ Զի այդպէս իցէ, զագահն 'ի մէջ ածցուք և զաշխարաւանդիկս, և դարձեալ զչինեվաճառս ամօթալից հանդանակացս։ Օ՜ինչ ծանրագոյն քան զայնպիսի վաճառականութիւնն կայցէ։ Որչափ տրտմութիւք, քանի հոգք, որչափ դիմադարձութիւնք, որքան վիշտք, քանիսն նենգութիւնք և պատերազմունք 'ի վերայ նոցա յառնեն, որչափ խռովութիւնք և աղմուկք։ Որպէս զծով չէ տեսանել [3] երբէք առանց ալեաց, նոյնպէս և ոչ զայնպիսի հոգիս 'ի հոգոց ազատեալ, և ոչ 'ի տրտմութենէ և 'ի խռովութէ մեկուսի. այլ առաջնոցն երկրորդքն հասանեն, և դարձեալ այլք 'ի վերայ նոցա գան. և այլքն չէ են ցածուցեալք, այլք միախուռն գումարին։

Իսկ զբամբասողացն և զվաղցասմանցն կամիցիս զոգիսն տեսանել։ Այլ զինչ քան զայն տանջանսն չար կայցէ. զինչ քան զնեբքին վերսն սաստկագոյն. զինչ քան զՀնոցն՝ որ հանապազ բորբոքի, և զբոցն՝

1 'Ի լուս. համարիս։
2 'Ի լուս. արկեալս։
3 Յօրինակին ՀԵՎ ԼԵՏՈՒԷ։

որ ոչ երբէք շինանի։ Իսկ զմարմնասիրացն, և ասասէն 'ի սոյն կեանս ծնգելոցն ասիցես։ Լուս զինչքան զայն ծառայութիւն դժնդակագոյն կայցէ, որ զԱյսպէսի կեանսն երերեալ և տատանեալ կեցցեն, և յահ և յերկիւղ կործանեալ յիւրաքանչիւր վախճանելոց. մանաւանդ թէ քան զնոցա վախճանն՝ զանձինս պարտ է աչխարել։ Ո՞ՉՔ քան զՀպարտացեալսն 'ի խռովութիւն և 'ի մոլորութիւն իցէ. վասն որոյ և ասէ իսկ, «Լաւարոյք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց»։ Այսպա ուրեմն ՝ամ բարութեաց անսխակալութիւն է մայր։

Լուս արդ մի զանգիտիցէք և մի տաղտկայցէք 'ի լծոյն՝ որ քան զՀամ թեթևագոյն է. այլ մնաս ընդ նա ՝ամ յօժարութիւ, և ապա առնուցուս 'ի միտ հաստատութիւ զՀեշտականութիւն։ Հարկանէ զվիզդ, այլ վասն յօրինուածութեան ևեթ կայ 'ի վերայ, և յերիւրելոյ զուղղորդն գնալ, և յաբքունի ՝անաւ պարհն տանել, և յերկոցունց կողմանց 'ի քարավիժութենէն ապրել, և դիւրաւ երթալ ընդ անձուկ ՝անապարհն։ Որովհետև այնչափ բարութիւնք են անտի, այնպիսի զգուշութի, այնչափ ուրախութի, ՝ամ հոգովք՝ համբրէն փութով ձգեսցուք առցուք 'ի մեզ զլուծն. զի և ասասէն հանգիստ գտցուք անձանց, և 'ի հանդերձեալ բարութիւնն վայելեսցուք հնարհօքն և մարդասիրութիւ ՝ան մերոյ Յսի ՀՀսի. ընդորում հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

«Ի ժամանակին յայնմիկ զգնայր Յի՛ն ի շաբաթու ընդ արտօրայն. քաղցեան աշակերտքն, և սկսան հասկ փշրել և ուտել»։

ՊՈՒԿԱՍ ասէ ի շաբաթու երկրորդում առաջնում։ Օ՛ինչ իցէ երկրորդ առաջնորդն. եթէ ոչ յորժամ կրկին ինչ դատարկութիւն լինէր, յորժամ ի բուն շաբաթուց և յայլոց տօնից բժշկութիւն լինէր։ Վասնզի զնմա դատարկութիւն շաբաթս կոչէին. և շաբաթն իսկ դատարկութիւն թարգմանի։

Այլ զի արդեւք ընդ անդն ածէր զնոսա ամենազէտն. եթէ ոչ զի զշաբաթն կամէր լուծանել. այլ ոչ վայրապար առանց ինչ պատճառանաց. զի և զօրէնսն դադարեցուցանիցէ, և զնոսա ոչինչ զայրացուցանիցէ։ Այլ է ուրեք՝ զի առանց բարուրանաց իսկ լուծանէր, և զայն ինն լաւ համարի. որպէս յորժամ յաչս կուրին զկաւն ծեփիցէ, կամ յորժամ ասիցէ, թէ «Հայր իմ մինչև ցայս օր գործէ, և ես գործեմ»։ Օ՛ի միոմն զՀօր փառաւորութիւն յայտ առնէ, և միւսոմն զակարութիւն հրեիցն միսիթարէ։ Որպէս և աստ յարդարէ, զընութիւն հարկ բարուրս առաջի եդեալ։ Թէպէտ վասն յայտնի մեղացն ոչ ոք ինչ կարիցէ պատճառս դնել. ոչ սպանօղն զցասումն, և ոչ հնացօղն զցանկութիւն. մանաւանդ թէ և ոչ մի ինչ պատճառք կայցեն ի միջի։ Բայց աստ զքաղցն դնէ պատճառս, զի այնու ազատեսցէ զնոսա յամբաստանութենէն։ Այլ դու զարմացիր ընդ աշակերտսն, զի ամենևին հրաժարեալ էին յամ մարմնաւոր դարմանոց, և սովամահ լինէին հանապազ, սակայն և այնպէս ոչ թողային զվարդապետն և զնային։ Օ՛ի թէ չէր կարի ստիպեալ զնոսա քաղցին, ոչ երբէք յայնպիսի գործ մտաբերէին։

«Տեսին, ասէ, փարիսեցիքն, և ասեն ցնա, տե՛ս ա-

ամենիկ զինչ գործեն աշակերտքն քո, զոր չէ օրէն 'ի շաբաթու»։ Բայց անդ ոչինչ կարի ստիպէին զբամբասանսն, թէպէտ 'ի դէպ իսկ էր. այլ ոչինչ անչափ կարի զայրանային, բայց դայլն մեղադիր ևեթ լինէին։ Իսկ յորժամ զձեռն գօսացեալ պարզեաց, ասա իմն կարի գազանային, և սպանանել խորհէին։ Ուր ոչինչ մեծ նշան տեսանէին, հանդարտէին փոքր մի. իսկ ուր մեծամեծս ինչ տեսանէին, յայնժամ իմն կարի գրգռէին և խռովէին, և քան զամ զայրագնեալս զայրանային։ Մանզի այնպէս իմն թշնամիք փրկուութեամբ մարդկան էին։

Այլ դու միտ դիր պատասխանւոյն՝ զոր արար ընդ աշակերտացն։ «Ոչ ընթերցայք, ասէ, զոր արարն Դաւիթ 'ի ժամանակին, իբրև քաղցեաւ նա, և որ ընդ նմայն էին. զիարդ եմուտ 'ի տուն ՅՀՍ, և զհաց պատարագացն եկեր. զոր չէր արժան նմա ուտել՝ և ոչ որոց ընդ նմա էին, բայց միայն քահանայիցն»։ Յորժամ վասն աշակերտացն առնէր պատասխանի, զԴաւիթ 'ի մէջ ածէ. և յորժամ վասն իւր, զՀայր։ Այլ տես, զիարդ մորմոքեցուցանելով. «Ոչ, ասէ, ի ընթերցեալ ձեր զինչ արարն Դաւիթ». զի յոյժ իսկ մեծ էին փառք մարգարէին։ 'Այս և Պետրոս՝ յորժամ իրաւունս տալով յետ այնորիկ առնէ պատասխանի հրէիցն, ասելիսն իմն ասէր, թէ «Պարտ է համարձակութիւն խօսել ընդ ձեզ վասն նահապետին Դաւիթի, զի վախճանեցաւ և թաղեցաւ»։ Այլ ընդէր ոչ արդեաք հանդերձ պատուոմն յիշէ զանուն նորա ոչ ասա և ոչ յետոյ։ Այլ զի և ինքն յայնմ ազգէ էր։ Օի թէ արգահատօղք ոքք լեալ էին, զքաղցին իսկ կարիս 'ի մէջ բերէր. բայց քանզի անազորոյնք և տմարդիկք էին, զդրոց ընթերցուածս 'ի մէջ բերէ։ Իսկ Արկոս «Այլ Աբիաթարաւ քահանայապետիս» ասէ, ոչինչ դիմադարձ լեալ պատմութեան, այլ ցուցանէ՝ թէ երկու անուանք էին քահանային։ Այլ յաւել ևս, թէ «'Այս ետ նմա»։ զի այսու ևս մեծ բարուրս ցուցանիցէ զպատասխանւոյն, թէ և քահանայն իսկ հրամայեաց, այլ և սպասաւոր[1] ևս եղև։

1 Յորինակին «պասաւոր»։

Լ։ զայն ինչ մի ասիցես, թէ մարգարէ էր Դաւ-
ւիթ։ Լ։ ո՛չ այնպէս օրէն ինչ էր, այլ քահանայիցն
էր պատիւն։ քանզի և յաւելու իսկ, թէ "Բայց միայն
քահանայիցն"։ Թէպէտ և բազմապատիկ իսկ մարգ-
գարէ էր, այլ ո՛չ թէ քահանայ։ Թէպէտ և նա մարգ-
գարէ էր, այլ ո՛չ թէ և նոքա որ ընդ նմայն էին.
քանզի և նոցա ետ ուտել։ Լ։ զի՞արդ, ասէն. նոքա
ինչ Դաւթի համեմատ էին։ Լ։ զի՞ բերես զպա-
տիւն 'ի մէջ, որ առ օրէնսն երկոքին կողմանքն յան-
ցաւոր դատն. և բնութենն հարկ 'ի վերայ երկոցունց
կողմանցն կայր. և այն իսկ ազատէր զնոսա 'ի մե-
ղադրութէ, յորժամ մեծի և անուանելոյ դատանիցի
զնոյն գործ գործեալ։

Լ։ այդ զի՞նչ մնա իցէ, ասէն, 'ի խնդիրն. քանզի
ո՛չ էթէ նա զշաբաթն էլոյծ։ Ո՛և մեծն ասեմ, որ
կարի իսկ ցուցանէ զԲ՚ոի իմաստութիւն. զի թողեալ
զշաբաթն՝ այլ և մեծ օրինակ բերէ քան զշաբա-
թուն։ Վասնզի չէին համեմատ միմեանց զայն օր
լուծանել, և 'ի նուիրեալ սեղանն մնաքերել՝ յոր
չէր իշխանութէ մերձենալ։ Ո՛ի շաբաթ և լուծաւ
բազում անգամ, և միշտ լուծանի թլփատութէ և
ծննդովք և այլովք բազում իրօք. և յԱրիքով։
Բայց այն անդ միայն և էթէ եղև. որպէս 'ի բազում
ինչ իրաց յաղթութէն։ Լ։ ընդէ՞ր ոք ո՛չ եղև մեղա-
դիր Դաւթի, թէպէտ և մեծ մեղադրութէ կայր 'ի
միջի՝ քահանայիցն կոտորածն։ Բ՚այլ չգնէ ինչ զայն.
այլ զոր ինչ առաջի կայ՝ այնմ և էթէ պարապէ։ Բ՚պա
դարձեալ այլ ազգ լուծանէ զնոյն. և նախ զԴաւիթ
ածէ օրինակ, զի պատուով երեսաց պատուականին
ցածուցանիցէ զմիտս նոցա. և յորժամ ըմբերանեաց
զնոսա, և ցածոյց զՀպարտութիւնն, ապա և զբուն
իսկ լուծումն բերէ 'ի մէջ։ « Ոչիցէ՞ ընթերցեալ յօ-
րէնս, զի քահանայքն 'ի շաբաթն պղծէին զշա-
բաթն, և անմեղք էին »։ Բ՚նդ Ձէպն արար զլու-
ծումն, և ասա առանց Ձեպոյ ինչ լուծանի։ Բ՚այց
ո՛չ իսկ և իսկ այնպէս էլոյծ. այլ նախ ներբերո�, և
ապա սաստիւն. նա և յետոյ իսկ պարտ էր յառաջ
բերել զսաստկագոյնն. թէպէտ և առաջինն զնոյն
իսկ զօրութիւն ունէր։ Լ։ զայն մի ասիցես, թէ և

այնու ինչ իցէ ապրեալն 'ի մեղադրութենէն, յորժամ զայլ յանցաւոր նորին յանցանացն օրինակ ոք 'ի մէջ բերիցէ։ Յորժամ ոչ պատուհասեսցի որ գործեացն, օրէնք պատասխանատրութեան լինին յանցանքն։ Բայց ոչ զայս միայն բաւական համարեցաւ, այլ և զառնն իսկ և զայրէ 'ի նոյն, թէ բնաւ իսկ մեղք ինչ ոչ էին գործքն։ Որ և պայծառագոյն ցուցանէ զյաղթութիւն, թէ օրէնքն անձամբ զանձն լուծանեն, և կրկին զնոյն գործեն, և 'ի տեղւոյն և 'ի շաբաթէն. մանաւանդ թէ երեքկին իսկ զգործն գործելով. հանդերձ այսու և միւս և՝ զի 'ի քահանայիցն. և որ մեծն իսկ է, զի մեղադրութիւն չէր. քանզի ասէ՝ թէ առանց պատժոց լինէին։

Տեսանես, որչափ ինչ եդ. զտեղին՝ քանզի 'ի տաճարի անդ ասէ. և զերեսան՝ զի զքահանայսն ասէ. և զժամանակն՝ և զի զշաբաթսն, ասէ, իսկ պղծեն. և ոչ, ասէ, լուծանեն, այլ զևս ծանրագոյնն, եթէ պղծեն։ Այսն որոյ ոչ միայն պատիժս չտայցեն, այլ և անմեղք ևս իցեն։ Զի այն մի անգամ միայն եղև, և ոչ 'ի քահանայէ ումեքէ, և առ վշտի. վասն այնորիկ և թողութեամբ արժանի լինէին. և այս ցանգ 'ի շաբաթու և 'ի քահանայից և 'ի տաճարին և ըստ օրինացն. վասն որոյ և ոչ ըստ ներելոյ, այլ ըստ օրինացն իսկ են աղաւաք 'ի պատժոց։ Այս զայս ոչ է թէ մեղ ինչ դնելով ասեմ, ասէ, և ոչ ներելով աղաւեմ զնոսա 'ի պատժոց, այլ ըստ օրինացն համարի։

Այս թուի թէ իրաւունս ինչ տայցէ քահանայիցն. այլ զաշակերտսն աղաւոս առնէ 'ի մեղադրութենէ. յորժամ ասիցէ զքահանայիցն, թէ անմեղք էին, յայտ առնէ՝ թէ և առաւել սոքա։ Այլ ասեն, չեն քահանայք։ Այս և մեծամեծք են քան զքահանայքն. զի ինքն իսկ նորն քահանայութեամբ և տաճարին ընդ նոսա էր. ճշմարտութեան և ոչ օրինակն։

Այսն որոյ և ասէր իսկ։ «Այսեմ ձեզ, թէ մեծ քան՝ զտաճարն է այժմ աստ»։ Բայց թէպէտ և այնչափ լուան, չետուն ինչ պատասխանի. քանզի ոչ մարդոյ ուրուք փրկութեամբ էր՝ որ առաջին կայր։ Այս քանզի ծանր թուէր լսողացն, ծածկէ վաղվաղակի զբանն, և 'ի ներբէն դարձուցանէ։

« Թէ զիտէիք, ասէ, զինչ է՝ զողորմութիւն կամիմ և ոչ զպատարագ, ապա ոչ դատապարտէիք զանմեղսն » ։ Ցէս, զիարդ դարձեալ և քան զներելն ևս 'ի վեր հանէ զբանն, ասելովն՝ թէ « Ո՛չ դատապարտէիք զանմեղսն » ։ Այլ նախ 'ի քահանայիցն բերէ զօրինակն, թէ անմեղք լինէին. ապա և յիւրմէ զնէ. մանաւանդ թէ ոչ իսկ յիւրմէ, այլ յօրինացն և 'ի մարգարէիցն կանխասացութենէն ։

Ապա այլ ինն պատճառս զնէ, թէ « Ցէր է որդի մարդոյ շաբաթու » . զանձնէ ասէ ։ Իսկ Մարկոս այնպէս ինն յայտ առնէ, թէ զհասարակաց բնութիւն ասացեալ է ։ Զ.անզի ասէ, թէ « Շաբաթ վասն մարդոյ եղև, և ոչ թէ մարդ վասն շաբաթու » ։ Այս եթէ վասն նորա է շաբաթն, իսկ ընդեր պատժեցաւ այն՝ որ զփայտն քաղէր 'ի շաբաթուն ։ Օ՛ի թէ յաւաջնումն արհամարհեալ էին օրէնք, ապա և յետոյ բնաւ իսկ չպահէին ։ Կարի իսկ օգուտ է շաբաթուցն պահպանութիւն. զի զգօնանալ հրամայէր, և առ իւրեանց ծառայսն մարդասէրս լինել, և զ

դարմանսն և զհնամանս՝ զոր ունէր առ նոսա, ուսուցանէր։ Որպէս Զգեկիէլ ասէ, թէ խրատեր զնոսա առ սակաւ սակաւ հեռանալ 'ի չարեաց, և 'ի հոգևորսն և եթէ յարդարեր հայել ։ Այս եթէ ասացեալ էր, ըզբարիս գործեցէք 'ի շաբաթու և զչարիս մի առնէք, ոչ անսային. թէպէտ և յիւմէ դատարկանալ հրամայեաց, սակայն և այնպէս չդադարէին 'ի չարեաց ։ Զ.այլ նա զօրէնսն և զշաբաթն յայն սակս հրամայեաց պահել, զի միայն 'ի չարեացն ցածուցանիցէ ։ Մի՛ ինչ, ասէ, գործ գործիցէք 'ի շաբաթու, բայց ո՞ւրով կարի կարևոր պէտքն վճարիցին ։ Այս 'ի տաճարին զիտ՝ ինչ գործէին. և բազմապատիկ քան զայլոց աւուրցն ։ Օ՛ի և 'ի ստուերէն զՀիմարտութեան դուռն թերաբան բանայցէ ։

Այս զայնպիսի, ասէ, շահն խափանեաց Տ՚ռ ։ Զ.աւ լիցի. այլ ևս յոլովագոյնս յաւել 'ի նոյն ։ Օ՛ի ժամանակն եկեալ հասեալ էր 'ի բարձրագոյնսն հանելոյ զամենեսեան, և չկապել զձեռս ուրուք, այլ 'ի չարեացն միայն հեռանալ, և 'ի բարիսն թռչել. և ոչ անտի միայն ուսանել՝ թէ ՝ած արար զիտ՝, և ոչ 'ի

շաբաթու միայն զգօնանալ, այլ նմանել ՝այ մարդա-սիրութեան։ Այլ 'ի կատարեալն միանգամայն հանել. «Այղերուք, ասէ, ողորմածք՝ որպէս և Հայրն ձեր»։ Ոչ մի օր միայն ողորմել, այլ զամենայն աւուրս կենաց. ըստ այնմ, թէ «Բաստցուք տօնս, ոչ 'ի խմորս հինս, և ոչ 'ի խմորս չարութեան և անօրէնութեանց, այլ յանխմորս հաստատութեան և Աշխարհութեան»։ Այլ ոչ շուրջ զտապանակաւն կալ և զոսկի սեղանովն, այլ զամենեցուն ՝որն ունել բնակիչ 'ի միտս և 'ի սրտի, և ամենևին ընդ նմա խօսել յաղօթս, և 'ի գրոց, և 'ի ժամ պատարագի. տուրս տալ և ողորմութիւն առնել. և միշտ 'ի նեղբին մարդն ունել զ՝որն։ Այլ արդ զինչ այլ պէտք շաբաթուցն իցեն այնմ, որ միշտ ուրախութեաբ զտօնսն առնիցէ, և զէ նուորեալ է յերկինս։

ՑՈՐԴՈՐԱԿ

Բ.ՐԱՍՑՈՒՔ այսուհետև ցանգ տօնս, և մի՛ երբէք գործեսցուք զչարիս. քանզի այն խակ է տօնն։ ՅաՀախեսցեն հոգևորքն, և տեղի տայցեն երկրաւորքս. և դատարկասցուք զՀոգևոր դատարկութիւն։ 'Ի բաց արասցուք զձեռս յագահութէ, և զմարմինս յաւելորդ և յանօգուտ իշխանութեց։ Երծցուք և 'ի վաստակոցն՝ զոր Այգիպտոս կրեաց ազգն երբայեցւոց։ Արանզի չէ ինչ ընդհատ որ զոսկին ժողովին՝ 'ի նոցանէ, որ 'ի կաւագործին և յաղիւսարկին կապեալ կային, և շրջելին յարդ ժողովելին, և յայնմ վերայ գան և ըմպելին։ Արանզի և այժմ սատանայ հրամայէ յաղիւսարկի աշխատել, որպէս և յայնժամ Փարաւոնն։ Զինչ այլ ինչ իցէ ոսկին, թէ ոչ կաւ. և զինչ այլ ինչ արծաթն, եթէ ոչ յարդ։ Արանզի իբրև զյարդ բորբոքէ զրոց ցանկութիւնն, և իբրև զկաւ աղտեղէ ոսկին զունելիսն։

Վասն այնորիկ առաքեաց առ մեզ ՝այ՝ ոչ զՍովսէս յանապատն, այլ զորդին յերկնից։ Իսկ եթէ յետ գալոյ նորա՝ անդրէն Այգիպտոս մնայցես, զնոյն

անցս անցուցանէ՝ զոր ընդ եգիպտացիսն անցոյց։ Բայց եթէ զնա Թողեալ՝ ելանիցես ընդ հոգևորին Իսրայելի՝ տեսանել զամ սքանչելիսն, սակայն և ոչ այն բաւական է 'ի փրկութիւն. զի ոչ միայն Յեգիպտոսէ պարտ է զերծանել, այլ և յաւետիսն մնանել։ Բանզի և հրեայքն՝ որպէս Պաւղոս ասէ, «Ընդ ծովն կարմիր անցին, և զմնանայն կերան, և զհոգևոր ըմպելին արբին», սակայն ամենեքեան ¹ սատաւ կեցան։

Լու արդ զի մի և մեք զնոյն կրիցեմք, մի դանդաղեսցուք, և մի օր յօր առնիցեմք։ Յորժամ լսիցեմ զաւրեաց դիտացն, քանզի և այժմ լրտեսք շրջին 'ի խոտել զնեղ և զանձուկ Ճանապարհն, և ասեն զոր ինչ ասացին յայնժամ լրտեսքն, բայց դու մի ընդ ամենայն գունդն նայիցես, այլ Յեսուայ լեր նախանձաւոր, և Բաղեբայ որդւոյն Յեփոնեայ։ Լու մի դադաւեսցես, թէ ոչ նախ յաւետիսն հասանիցես, և յերկինս ելանիցես. և մի դժուարին Ճանապարհորդութիւն համարիցիս. զի թէ «Մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ ՅՍ, ուրեմն և առաւել հաշտեալքս սպասեսցուք»։ Բայց նեղ և անձուկ է այս Ճանապարհս։ Բայց առաջինն էր՝ որ գնայիր, ոչ միայն նեղ և անձուկ, այլ և անկոխ և լի ջուր գազանօք։ Լու որպէս զի չէր հնար ընդ ծովն կարմիր անցանել՝ թէ չէին սքանչելիքն գործեալ, նոյնպէս չէր հնար յառաջին կեանսն կեալ, և յերկինս ելանել, թէ չէր մկրտութիւն 'ի մէջ անցեալ։ Լու եթէ անհնարինն հնարաւոր եղև, ուրեմն և առաւել դժուարինն՝ դիւրին։ Բայց այն խոկ, ասեն, հնարհայն միայն էր։ Օ՛ի թէ և անդ հնարքն եւեթ էին գործակից, ուր և վաստակս և ցուցանիցես՝ ոչ ապաքէն և նոքա և գործակից լինին. եթէ զդատարկսն ապրեցոյց, ուրեմն և առաւել գործօնեացս օգնական լինի։

Պ՝երադոյն ասացի իսկ, թէ անհնարինցն և դժուարոցն՝ վստահ և պարտիս լինել. բայց արդ և զայն և ասեմ, թէ արթունք լինիցիմք, և սոքա ոչ լինին դժուարինք։ Լու տես իսկ՝ զի մահ կոխեալ է, և

¹ 'Ի լաս. ՈՉՆԵԼԻՆ։

սատանայ անկեալ, և օրէնք մեղացն խափանեալ, և շնորհք հոգւոյն բաշխեալք, և կենաց պարգևեալ, ծանուցեալն 'ի բոլոր անկեալ և կարձեալ։ Այլ զի ուսանիցիս զնոցանս և արդեամբք խակ նոցին, միտ դիր։ Վասնզի են՝ որ զօրինաւքն Աստի անցին զանցին. և դու 'ի չափոյիցն զանգիտեալ ես։ Այլ զի՞նչ պատասխանատուութիւն ունիցիս, յորժամ այլոց վաղեալ ընդ մարտսն դատանիցին, և դու ծոյլ և 'ի պատրանս իցես։ Մի՛ եթ տուրս հրամայեմք յընչիցն՝ զոր ունիս՝ տալ, և միւսն զա՞մ զոր ունիս՝ մերկացաւ։ Մի՛ եթ ցաւ ծուութիւն աղաչեմք կեալ կնաւ հանդերձ, և միւսն և հպեաց իսկ ո՛չ 'ի հարսանիսն։ Այլ քեզ հպատակութիւն մատուցանեմք չլինել չարակն, և զայնպիսիսն ունիմք օրինակ՝ որ զանձն 'ի վերայ ընկերին եդ սիրով։ Այլ զքեզ փարելի առնեմք արդահատող լինել, և մի սաստիկ առ յանցաւորսն երևել. իսկ միւսն ապտակեալ՝ և զմիւս ծնօսն մատուցանել։

Այլ արդ զի՞նչ ասիցեմք, աղէ՝ ասա, զո՞ր պատասխանի տայցեմք. զի և զայն ևս չառնեմք ընկերացն, որ տեսանեմք՝ այնչափ բազում անցեալ ընդ մեզ. որք և չանցանէին ևս, թէ ո՛չ դիւրութի՞ էին իրքն։ Այլ արդ ո՞ ծնդի. որ խանտայցէ՞ ընդ այլոց բարիսն, թէ որ ուրախակից լեալ խնդասցէ։ Մի՞ 'ի կարծիս և 'ի դողութեանն կայցէ հանապազ. ցածո՛ւնն, եթէ շնացօղն։ Մի՞ 'ի հեշտակաւն յոյսն հանգուցեալ է. որ յափշտակէ՞ն, թէ որ ողորմն և յիւրմէն ևս տայցէ կարօտելոցն։ Ո՞ այս ա՞մ զմնաւ ածեալ, մի կասեցուք յառաքինութե՛ն ընթացեալն. այլ ա՞մ յօժարութեամբ հոլոնեալք 'ի գեղեցիկ պատերազմն մնացուք։ Աշխատեսցո՛ւք սակաւ ինչ ժամանակս, զի զմշանջենաւոր և զանթառամ պսակն ընկալցուք. որոց լեցի ամենեցուն մեզ հասանել շնորհքն տո՛ն մերոյ Յի՞սուսի. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

ՃԱՌ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

«Երբև գնաց անտի Յն, եկն 'ի Ժողովուրդս նոցա. և աշաւասիկ էր անդ այր մի, որոյ ձեռն գոսա-ցեալ էր»։

ԳԱՐՁԵԱԼ'ի շաբաթու բժշկէ. ընդ այնր իմն ի բաւունս տալ կամի՝ որ ինչ յաշակերտացն գործե-ցաւ։ Իսկ այլ աւետարանիչքն ասեն, թէ «Ի մէջ էած զայրն, և հարցանէր՝ թէ պարտ իցէ 'ի շաբա-թու բարիս գործել»։ Տես զառաւելութիւն մարդա-սիրութեան. 'ի մէջ անցոյց զայրն, զի երեսաքն փոքր մի խոնարհեցուսցէ զնոսա. և յորժամ զիջանիցին տեսլեամքն, ապա և 'ի չարեացն ցածնուցուն, և յառնէն և ակնածեալ՝ դադարեսցեն 'ի վայրենա-կան մտացն։ Զ.յլ ստահակքն և մարդատեացքն ա-ռաւել ինասել փառացն Քրիստոսի հաճեին, քան թէ զայրն բժշկեալ տեսանել. քանզի երկոքումբք կող-մամբք ցուցանիցեն զչարութիւն, ընդ Քրիստոսի մարտնչե-լովն, և այնչափ հակառակութեամբն, և զի ընդ այ-լոց բարիս դժկամակ լինէին։

Զ.յլ աւետարանիչքն ասեն, թէ նա եհարց. բայց սա՝ թէ նոքա հարցին։ «Հարցին ցնա և ասեն, թէ պարտ իցէ 'ի շաբաթու բժշկել. զի ամբաստան լինիչ-ցին զնմանէ»։ Երկոցունց իսկ կողմանցն 'ի դէպ էր լինել. քանզի դժկամակք էին, և գիտէին թէ 'ի շա-բաթու ցուցանելոց է զգործն, հարցանելովն գրա-ւել զնա փութային։ Օ՛ի այնպէս իմն ակն ունէին մեղմեխանօք արգելել 'ի բժշկութենէն. վասն որոյ և հարցանէին իսկ, թէ պարտ իցէ զոք բժշկել 'ի շաբաթու. ոչ զի ուսանիցին, այլ զի չարախօսեսցեն։ Թէպէտ և գործն իսկ բաւական էր տալ պատճառս՝ թէ չարախօսել ինչ կամէին, այլ և բանիւք ևս հնա-րէին գտանել պատճառս խարդախութեան։ Իսկ մարդասէրն և զգործն կատարէր, և հարցուածոյն պատասխանի առնէր. զի ցուցանիցէ զիւր հեղուին,

և 'ի նոսին դարձուցանիցէ զնա՝ չարիսն, և ցուցանիցէ զանմարդութեն նոցա։ Ասացուցանէ զայրն 'ի միջէ՝ ոչ երկուցեալ ինչ 'ի նոցանէ, այլ օգուտ գործել վուրթայ, և յողորմութեն յորդորել զնոսա։ Այլ յորժամ և ոչ այնպէս խոնարհեցոյց, ապա, ասէ, արտմեցաւ, և բարկացաւ նոցա՝ վասն կուրութեն սրտից նոցա. և ասէ, «Ո՞վ իցէ 'ի ձէնջ մարդ՝ որ ունիցի ոչխար մի, և եթէ անկանիցի այն յաւուր շաբաթու 'ի խորխորատ, ոչ ունիցի և յարուցանիցէ զնա։ Այլ արդ՝ որչափ առաւել է մարդ քան զոչխար. որպէս զի պարտ է 'ի շաբաթու բարիս գործել»։

Այլ զի մի ունիցին պատճառս յանդգնութենն, և դարձեալ 'ի մեղադրութեն օրէնսդանցութեն գրդռիցին, ցածուցանէ զնոսա օրինակաւս այսուիկ։ Այլ դու մի՞ դիր, զիարդ ստէպ և յաճախագոյն ամ ուսաէք կուտէ պատասխանիս վասն շաբաթուցն լուծանելոյ։ Իսկ առ կուրաւն ոչինչ պատասխանի առնէր նոցա իրաւունս տալոյ, յորժամ զկաւն արար և ծեփեաց զաչսն, թէպէտ և յայնժամ բամբասէին. այլ բաւական էր արարչութենն օրինակ ցուցանել զօրինացն ճարն։ Իսկ առ անդամալուծացն՝ մահիճն զոր եբարձ ըստ անձին, կարէին հաւանեցուցանել, թէպէտ և անդ ևս բամբասէին։ Իսրբեամն իբրև զնա՞ծ և եբբեամն իբրև զմարդ տայ զերբաւանացն պատասխանին։ Իբրև զմարդ՝ յորժամ ասիցէ, թէ թլփատուի առնու մարդ 'ի շաբաթու՝ զի մի օրէնքն լուծցին, և ոչ ասաց՝ թէ օգտեսցի մարդ. ինձ, ասէ, ցասուցեալ էք, զի ողջոյն իսկ զմարդն արարի առողջ 'ի շաբաթու։ Իսկ իբրև զնա՞ծ՝ յորժամ ասիցէ, թէ «Հայր իմ մինչև ցայժմ գործ գործէ, և ես գործեմ»։ Այլ վասն աշակերտացն յորժամ մեղադիր լինէին նմա, ասէր. «Ունիցէ՞ ընթերցեալ դեր՝ զոր արարն Դաւիթ, յորժամ քաղցեաւն, և որ ընդ նմայն էին. զիարդ եմուտ 'ի տուն ՅԻ և զՀաց պատարագացն եկեր». և զքահանայսն 'ի մէջ ածէ։ Այլ ասա դարձեալ ասէ, «Պարտ իցէ 'ի շաբաթու բարիս գործել, եթէ չար առնել»։

«Ո՞վ իցէ 'ի ձէնջ, որ ունիցի ոչխար մի»։ Զանազի զիսաէր զընչասիրութենն նոցա, զի առաւել այնպի-

սիք էին և ոչ մարդասէրք. նա և միւս աւետարանին ասէ, թէ հայեցաւ շուրջ՝ յորժամ զայս բանս խօսեցաւ. զի և այնու ձգեսցէ զնոսա առ ինքն. սակայն և այնպէս չեղեն ազնուագոյնք։ Եւ և աստ իսկ բարբառի ասէթ, և այլուր բազում անգամ ձեռն դնէ և բժշկէ. սակայն և ոչ մի ինչ յայսպիսի իրաց ցածուցանէր զնոսա. այլ այրն բժշկէր, և նոքա նոքա առողջութեամբն ևս քան զևս ախտանային։ Եւ և այնպէս կամէր, զի նախ քան զնա՝ զնոսա բժշկիցէ. և բիւրապատիկ յորդորէր զբժշկուէ օրինակս, և այնոքիւք՝ զորս յառաջագոյն արար, և ոլովք խօսէրն և ցուցանէրն զհանգամանսն։ Եւ քանզի զանբժշկական ախտն ջերանէին, այնուհետև 'ի գործն իսկ մտեցաւ։

"Յայնժամ ասէ ցայրն, ձգեա զձեռն քո. և նա ձգեաց և եղև ողջ իբրև զմիւսն"։ Եւ նոքա զինչ. ելանէին, ասէ, խորհուրդ առնէին, զի սպանցեն զնա։ "Փարիսեցիքն, ասէ, ելանէին՝ խորհուրդ առնէին վասն նորա, զի զնա կորուսանիցեն". ոչինչ միաբանեալք 'ի նմանէ՝ և սպանանել մտաբերէին։ Ոչինչափ ինչ անհնարին չարիք էն քէնք և նախանձք, զի ոչ ընդ օտարս միայն, այլ և ընդ ընտանիս մարտնչի։ Եւայց Մարկոս ասէ, թէ հերոդիանոսաքն հանդերձ խորհեցան։ Եւ զինչ արդեւք հեղն և խոնարհն։ Տեղի եւ՝ իբրև իմացաւ զայս։ "Եւ Յն, ասէ, խոյս եւ, և գնաց անտի"։

Եւ արդ ուր իցեն՝ որ ասիցեն թէ նշանաց պարտ է լինել։ Օ՛ի այսու իսկ յայտ արարեալ՝ թէ անհնազանդ միտք և ոչ այնու հաւանին, և եցոյց թէ աշակերտացն զուր մեղադիր լինէին։ Եւ այնմ և ևթ պարտ է ուշ ունել, զի ևս առաւել ընդ ընկերաց բարիս դժկամակ լինէին։ Յորժամ տեսանէին զոք 'ի ցաւոց բժշկեալ և 'ի չարեաց ինչ զերծեալ, յայնժամ բամբասէին և զայրանային. յորժամ զտուն հիկան ապրեցուցանել կամէր, չարախօսէին զնմանէ, և յորժամ ընդ մաքսաւորսն ուտէր. և աստ՝ յորժամ զձեռն գօսացելոյն բժշկեալ տեսանէին։ Եւ դու միտ դիր, զի ոչ 'ի հիւանդացն դարմանացն լռեր, և զնոցա նախանձն մխիթարեր։

«Լ,ու զՀետ չոգան, ասէ, Նորա ժողովուրդք բա-
զումք, և բժշկեաց զնոսա. և սաստեաց 'ի բժշկեալսն
զի մի յայտ ինչ ուսցէն զնա»։ Լ,ողովուրդն
ամ ուրեք զարմանային, և զՀետ երթային Նորա,
իսկ Նորա ոչ երբեք դադարէին 'ի չարեաց։ Լ,ու զի
մի խռովեսցի ոք ընդ իրսն գործեալ, և ընդ նոցա
իբրև ընդ նոր ինչ կատաղութիւն, ածէ և զմարգա-
րէն 'ի մէջ՝ զայս ամ գուշակեալ։ Լ,յնպէս իսկ էին
հաւաստիս մարգարէիցն, զի և զայս մի ևս վերիպե-
ցուսցին, այլ և զՀանապարհ Նորա, և զայսր անդր
փոփոխել մարգարէանան, և զմիտս Նորա՝ որով զայս
ամ գործեր։ Լ,ու զի ուսանիցիս թէ զամ ինչ հո-
գւոյն բարբառէին, եթէ զմարդկան գծածուկս ոչ
է մարթ գիտել, ևս առաւել զԼ,ոի միտսն անհնար
էր ուսանել՝ եթէ ոչ հոգւոյն էր յայտնեալ։ Լ,ու
արդ զինչ արդեւք զմարգարէն ածեալ զնովիմբ՝
ասէ, «Օ զի կատարեսցի բանն Լ,սայայ մարգարէին,
զոր ասէ, թէ ահաւասիկ մանուկ իմ՝ ընդ որ հաճե-
ցայ, և սիրելի իմ՝ զոր ախորժեաց անձն իմ. եդից
զոգի իմ 'ի վերայ Նորա, և զդատաստանս հեթանո-
սաց պատմեսցէ։ Ո՛չ հակառակեսցի, և ոչ աղաղա-
կեսցէ, և ոչ լուիցէ ոք 'ի հրապարակս զբարբառ Նո-
րա։ Օ եղէգն ջաղջախեալ ոչ բեկցէ, և զպատրոյկն
առկայծեալ ոչ շիջուսցէ. մինչև հանցէ 'ի յաղթու-
թիւն զդատաստան. և յանուն Նորա հեթանոսք յու-
սասցին»։

Օ զի զՀեզութիւն Նորա և զանչափ զօրութիւնն յա-
ռաջագոյն երգէ, և դուռն մեծ բանայ հեթանոսաց,
և յայտնէ, որ ինչ չարիք հասանելոց էին հրէիցն՝
յառաջագոյն գուշակէ, և զմիաբանութիւն Նորա որ
ընդ հօր՝ ցուցանէ։ «Լ,հաւասիկ, ասէ, մանուկ իմ
ընդ որ հաճեցայ, և սիրելի իմ ընդ որ ախորժեաց
անձն իմ»։ Լ,թէ հաճեցաւ, ապա ոչ իբրև զՀակա-
ռակ ոք լուծանէ զօրէնսն, և ոչ իբրև զՀնամի ոք
ինչ էր օրէնսդրին, այլ իբրև զկամակից՝ որ զնոյն
գործիցէ։ Լ,ստա և զՀեզութիւն Նորա յայտ արարեալ
քարոզէ. «Ո՛չ հակառակեսցի, և ոչ աղաղակեսցէ»։
Լ,ա և զնոսա կամէր բժշկել, բայց քանզի մերժեցին,
և ոչ առ այն ինչ դիմադարձ լինէր։ Լ,ու ցուցեալ

զղջութիւն նորա և զտկարութիւն նոցա՝ ասէ. «Օ՜ է-
զէգն ջաղջախեալ ո՛չ բեկեցէ»։ Ասանզի և դիւրին
իսկ է նմա զամենեսեան զնոսա, ո՛չ իբրև զեղէգն ինչ
ողջ, այլ իբրև զջաղջախեալ միանգամայն բեկանել։
«Այլ զպատրոյկն առկայծեալ ո՛չ շիջուսցէ»։ Պատ-
և զցասումն նոցա բորբոքեալ յայտ առնէ, և զնո-
րա զօրութիւն բաւական շիջուցանել զցասումն. ուս-
տի բազում իսկ հանդարտութիւն երևի։ Այլ զիարդ.
միշտ արդեաք նոքա լինիցի, և 'ի սպառ տանիցի նեն-
գութիւն և կատաղութիւն նոցա։ Զն անդր. այլ յոր-
ժամ զիւրն ցուցանիցէ, ապա և զայն ևս վՀարեսս-
ցէ։ Ասանզի և զսոյն իսկ յայտ արարեալ ասելովն,
թէ «Մինչև հանցէ յաղթութիւն զդատաստան, և
յանուն նորա հեթանոսք յուսասցին»։ Օ՜ր օրի-
նակ և Պաւղոս ասէ. «Պատրաստ լինիջիր առնուլ
զվրէժ յամ անհնազանդութենէ. յորժամ լնուցու
ձեր հնազանդութիւն»։

Օ՜ինչ իսկ «Մինչև հանցէ յաղղութիւն զդա-
տաստան»։ Յորժամ զիւրն զամ կատարեսցէ, յայն-
ժամ և զվրէժխնդրութիւն ածիցէ, և զասատիկ վրէժ-
խնդրութիւն։ Յայնժամ կրեսցեն զանհնարին պա-
տիժս, յորժամ նշանն յաղթութեան կանգնեսցի, և
իւր արդարութիւն յայտ յանդիման երևեսցի. և ո՛չ
ինչ թողուցու պատՃառ 'ի միջի իրաւունս ցուցանե-
լոյ նոցա յանդգնութեան։ Ասանզի զիտէր իսկ զար-
դարութիւն դատաստան կոչել։ Այլ ո՛չ եթէ 'ի տան-
ջելն ևեթ զանհաւատսն իցէ տեսչութեան մատակա-
բարութիւն, այլ և զամ տիեզերս առ ինքն ձգեսցէ։
Զ այսն որոյ և յարէ իսկ 'ի նոյն, թէ «Յանուն նո-
րա՝ հեթանոսք յուսասցին»։ Այլ զի ուսանիցիս ևս՝
թէ այս ըստ հօր կամացն լինէր, 'ի սկզբան իսկ հան-
դերձ այլովքն՝ և այսմ ևս երաշխաւոր լիեալ մար-
գարէին՝ ասէր, «Միրելի իմ՝ զոր ախորժեաց անձն
իմ». և յայտ է թէ սիրելին՝ ըստ կամաց այնորիկ,
զոր սիրեացս, առնէ զամ ինչ զոր և առնիցէ։

«Յայնժամ, ասէ, մատուցին առ նա դիւահար մի՝
կոյր և համր, և բժշկեաց զնա, զի կոյրն և համր խո-
սեսցի և տեսանիցէ»։ Զ՚վ անհնարին դժնդակ դի-
ւին. զերկոսին զմուտան եխից՝ որովք հաւատալն

մարթ էր, և զայն և զբերանն. այլ սակայն զերկոսինն եբաց Աստուծ։ «Այս զարմանային, ասէ, ամ ժողովուրդն, և ասէին, միթէ սա ինչ Աստուն որդի Դաւթի։ Իսկ փարիսեցիքն իբրև լուան՝ ասէին, ոչ հանէ սա զդեւս, եթէ ոչ բեեղեբուղաս իշխանաւն դիւաց»։

Ամենայն և մեծամեծս բարբառեցաւ, սակայն և այնմ չհանդարտէին. որպէս յառաջագոյն ասացի, միշտ այնպէս ընդ այլոց բարիս կսկծէին. և ոչ ինչ այնպէս տրտմեցուցանէր զնոսա՝ որպէս մարդկան փրկութիւն։ Ամենայն և խոյս ետ և գնաց և Թողացոյց փոքր մի ցածնուլ 'ի ցաւոց, այլ դարձեալ բորբոքէին 'ի նոսա չարիքն, յորժամ միւսանգամ բարութիւնք ինչ ումեք գործէին։ Այս առաւել դիւին զայրանային՝ թէ ընդէր եթող և գնաց։ Այրա եւ լեալ 'ի մարդոյն՝ անմունչս փախստական լինէր. և նոքա մերթ սպանանել մտաբերէին, և մերթ բամբասել. քանզի և այնմ ինչ գամագիտ չկարէին լինել, ապա 'ի կարծիս մեծարանացն ինքասակարք լինէին։

ԳՈՐԴՈՐԱԿ

Զի այնպէս իսկ է հեռն նախանձուն, որոյ չիք այլ ինչ համեմատ։ Շնացողն թերևս 'ի ցանկութիւն ինչ սակաւ մի ժամանակ վայելիցէ՝ յորժամ 'ի մեղսն ըստ յօժարութիւն կամացն անկանիցի. իսկ նախանձոտն յառաջ քան ընդ որում նախանձին՝ զանձն տանջէ։ Այս ոչ երբեք դադարէ 'ի մեղաց, այլ միշտ ընդ նոյն թաթաւի, որպէս խոզ 'ի տղմի. և ևս չար քան զդևս խնդայ ընդ ինքասս, և ընդ ընկերին կարիս։ Յորժամ 'ի վշտի զոք տեսանիցէ, յայնժամ հանգչի և ոգի առնու. և զայլոց թշուառութիւն՝ իւր փառաւորութիւն համարի, և զբարիս ընկերացն՝ անձինն հիքուն. և ոչինչ թուի նմա հեշտ, բայց միայն ընկերին տրտմութիւն։ Այս զայնպիսին իբրև զշունս կատաղիս պարտ էր քարկոծ առնել, և իբրև զդևս հալածականս, և իբրև զընդդայս ծովու ինքասակարս։

Լ՝ իբրև զկոյսդնդիւռն որ աղբով պարարին, նոյնպէս և նոքա այլոց չարեօք և վշտօք։ Հասարակաց ինն թշնամիք, և պատերազմողք ամենեցուն բնուեն։ Լ՝ՍՍԼՔ և անամոյ սպանանելոյ ողորմին, դու և զմարդոյ բարիս գտելոյ տեսանես՝ և զայրանաս, և դողաս, և դեղնիս. և զինչ քան զայն մոլորութիւն դժնդակագոյն կայցէ։

Պ՝ ամն այնորիկ և պոռնիկք և մաքսաւորք կարիցեն մտանել յարքայութիւն երկնից՝, և չարակուսքն 'ի ներքս էին՝ և արտաքս ելին. զորոց և ասէ իսկ, թէ « Որդիք արքայութեան ելցեն 'ի խաւարն արտաքին »։ Որ չարեօքն զդաժեալ էին, ազատեցան 'ի չարեաց. և որք ոչ ակն ունէին, հասին բարեաց. և որոց բարիքն միշտ 'ի ձեռս էին՝ վրիպեցան։ Լ՝ յիւրաւի իսկ, քանզի այնպէս գիտէ նախանձն զմարդիկ 'ի դէս դարձուցանել, և էս չար քան զատանայ առնել։ Օ՝ի այնու իսկ գործեցաւ սպանութիւն առաջին, և նովիմբ լիներ անծանօթութիւն հարազատացն բնութեան. նովիմբ պղծեր և երկիր. նովիմբ և առյապայ ժամանակս բանայր զերեան, և ընդունէր զկենդանիս՝ զԱդամն և զԱ՝բիրոն, և զԼոթս և զայնչափ զժողովուրդսն։

Ա՝ՍՍ բամբասել զչարակնութիւն թերեւս դիւրաւ որ համարեսցի. բայց պարտ է գիտել՝ թէ զիարդ ապրիցեն յախտէն։ Լ՝ արդ զիարդ բուժիցիմք յայնպիսի չարեաց. թէ իմանայցեմք զի որպէս պոռնիկքն չէ՞ օրէն յեկեղեցի մտանել, նոյնպէս և ոչ չարակն. և էս յոլովագոյն սմա՝ քան նմա. իսկ նա աւանիկ անխտիր ինն թուին իրքն, վասն որոյ և ոչ պէտք ինչ են փութոյ։ Լայց թէ յայտնի լինիցին՝ թէ չարիք են, դիւրաւ 'ի բաց մեկնիցիմք։ Լ՝ աց այսուհետև, և աշխարեսմ, յոգոց հան, և աղաչեսմ զնա. և ուսիր որպէս վասն անհնարին մեղայ ստրջանալ և ապաշխարել. և եթէ այնպէս ստրջանայցես, վաղվաղակի զերծանիցիս յախտէն։

Իսկ ո՞ ոչ գիտիցէ, ասէ, թէ չար է չարակնութիւն։ Լ՝ անտեղեակ չէ իսկ ոք. բայց որպէս զպոռնկուհին և զշնութիւնն կարծէին, ոչ նոյնպիսի ինչ և վասն այնր ցաւոց։ Ո՞վ ոք երբէք ըստգիւտ զանձն համարեցաւ

չարակենալ. ոմ ոք երբեք պաղատեցաւ առ Ն՚ած վասն այնր ախտի՝ լինել նմա քաւիչ. ոչ ոք երբեք. այլ թէ պահիցէ, և սակաւ ինչ արծաթ աղքատաց տայցէ, թէպէտ և բիւրապատիկ չարակնիցէ, չհամարի չար ինչ գործեալ, որ այնպիսի ժանտ ախտիւք վանդեալ իցէ, որ քան զՆ՚մ ախտ սաստիկ իցէ։

Ի՚նչ արդ ուստի Այէն այնպիսի եղև. ուստի Խաւ. ուստի որդիքն Ղ աքանայ. ուստի Յակովբայ ուս. տերքն. ուստի ժողովն Կորխայ, և Դադան և Ի՚բիր ոն. ուստի Ա՚արիամ. ուստի Ա՚հարոնն. ուստի ինքն բանսարկուն։ Սոքիմբք հանդերձ զայն ած զմտաւ, զի ոչ նմա ինչ պնաս առնեսցէ՝ ընդ որում նախանձիսն, այլ յանձն մղեսցէ զսուրն։ Օ ինչ պնաս արար Ա՚բիլն Այէն. ոչ վաղվաղակի զնա և ակամայ առաքեաց յարքայութիւն, և զանձն ընդ բազում պատժովք փա. կեաց։ Օ որ պնաս արար Խաւ Յակովբայ. ոչ ապա. քէն սա մեծանայր, և 'ի բազում բարութիւն վայե. լէր, և նա 'ի հայրենի տանէն տարագիր եղև, և յօ. տարութիւն թափառական լիներ՝ յետ զնենդութիւնն նիւթելոյ։ Ի՚նչ կամ զինչ սորա ուստերքն կարացին Յովսեփայ ստանանել. և այն զի արեամբ ևս չափ ե. կէին 'ի վերայ. ոչ ապաքէն նոքա և սովոյ մատնեցան, և անհնարին վիշտս կրեցին, և նա թագաւոր եղև ամ երկրին եգիպտացւոց։ Օ ի որչափ խանտայցես, ևս առաւել քան զայն լինիցիս առիթ բարութեանց այնմ ընդ որում նախանձիսն։ Ո՚ռանդի ած է՝ որ հայի ընդ իրսն. և յորժամ տեսանիցէ զինուսակարն, զզրկեալն առաւել բարձրացուցանել և լուսաւոր առ. նել, և այնու իսկ տանջէ զքեզ. զի ոչ տայ թոյլ թըշ. նամեացն ոտնհարաց առանց պատժոց անցանել։ « Ա՚ի ուրախ լինիր, ասէ, ընդ կործանումն թշնա. մւոյ քոյ. գուցէ տեսանիցէ ած, և չլինիցի նմա հա. ճոյ ». և ևս առաւել ընդ չարականցն, և որ նա. խանձ ընդ անմեղին բերիցէ՝ դժկամակ լինի։

Ղ՚ևիատեսցուք այսուհետև զբազմագլուխ գա. զանն. քանզի բազում կերպարանք են չարակնուն։ Օ ի թէ որ զսիրելին միայն սիրէ, չիցէ ընդհատ 'ի մաքսաւորէ, որ զանմեղն ևս ատեայ, ուր կամիցի կեալ. վասն որդ մարթիցի ապրել 'ի դեհենէն, որ ևս

չար քան զՀԵԹԱՆՈՍն եղև. վասն որոյ և յոյժ իսկ զոփայ։ Օ ի որք հրեշտակաց՝ մանաւանդ թէ ՝ն իսկ հրեշտակաց առաք հրամանն նմանօղ լինել, մեք սա-տանայի նախանձաւորք լինիմք։ Օ ի բազում իսկ յեկեղեցւոջ է չարակնութիւն՝ քան ՝ի ժողովուրդս. վասն որոյ և առ մեզ իսկ ՝ի դէպ է ասել, թէ աղէ՝ ասա, ընդեր չարակնիցիս ընդ ընկերին, յորժամ ՝ի պատիւ տեսանիցես վայելեալ՝ և ՝ի բանս հեշտա-կանս։ Լ՝ու զայն չածիցեն զմտաւ, թէ ոչչափ վիշտս պատիւքն բերիցեն այնոցիկ՝ որ ոչն զգուշանայցեն. յանձնգովութիւն մտաբերեցուցանեն, ՝ի հպարտուն, յամբարտաւանութիւն, յամբարհաւաճութիւն. ծոյլս գործեն, և հանդերձ այսպիսի չարեօք՝ և դիւբաւ իսկ համարի [1]։ Լ՝ու այն իսկ անհնարին աղէտք, զի չարիքն՝ որ ՝ի նմանէ գործին՝ անմահ մնան, և ցաւ կութիւն ընդ երևելն իսկ և իսկ սրանայ։

Ա՝ռդ վասն այնորիկ ինչ չարակնիցեն։ Կամ թէ զիշխանուն բազում ունիցիս ՝ի թագաւորէն, և տա-նիցիս և ածիցիս՝ ուր և կամիցիս, զդիմադարձն տրտմեցուցանես, և հպատակացն բարի առնես, և բազում զօրութիւն ունիցիս։ Ա՝շխարհականաց քանք են այդ, և մարդոց՝ որ ընդ երկիր բևեռեալ իցեն. իսկ զՀոգևորն չէ ինչ որ տրտմեցուցանէ. զի չէ ինչ չար [2] ձեռնհաս առնել նմա։ Ի՝ ձեռնադրութեէ պա-տուոյն ընկենուցումն. և այն զինչ ևս իցէ. թէ յի-բաւի, ևս օգուտ գործիցէ. զի չիք այնպիսի՝ որ զՁԾ բարկացուցանէ, որպէս անարժանութիւն ՝ի քահանայ-ութիւն մատչել. ապա թէ յանիրաւ ինչ, պատիժքն գանձեալ էին, և ոչ ՝ի սմա մթերէին. զի որ յանի-բաւ ինչ ոք վշտանայ՝ և ժուժկալութիւն տանիցի, այ-նու առաւել համարձակութիւն ունի առ ՁԾ։

Լ՝ու արդ մի զայն ևԵթ գիտասցուք, թէ զիարդ ՝ի պատիւս և յիշխանութիւս հասանիցեմք, այլ որպի-սիք ոք յառաքինութիւն և զգաստութիւ իցեմք։ Վ՝ան-զի իշխանութիքն՝ բազում ինչ արտաքոյ կամացն ՁՅ յօժարեցուցանեն գործել. և յոյժ առաքինի հոգւոց պէտք են՝ իշխանութիք ՝ի լաւութիւն փոխել. Լ՝ու որ

1 Գուցէ արհամարհի. յոյնն Խոտի։ 2 Ցայլ օրինակ չիք ՀՍՐ։

մեկուսի յայնմանէ իցէ, կամաւ և ակամայ զգաստանայ. և որ 'ի նմա վայելիցէ, այնպիսի ինչ կրիցէ, որպէս թէ ոք ընդ գեղեցիկ և բարենշան աղջկան կայցէ, և միշտ գրգռիցէ, և օրէնս դիցէ անձին չհայել երբէք ընդ նա յայրատուութիւն. նոյնպիսի է իշխանութիւնն։ Այանզի զբազումք և ակամայ ածեն 'ի թշնամանել, և 'ի ցասումն գրգռեն, և զսանձս լեզուի արձակեն, և զդուռն բերանոյն բանալ վայրապար. և իբրև հողմոյ տատանել զոգիսն, և յանհնարին չարեաց անդունդս ընկղմել զնաւ մտացն։

Այլ արդ ընդ այնպիսի վտանգսն զարմանայցես, և նախանձաւորութիւն արժանի համարիցիս. և որչափ անմտութիւն է այն։ Հանդերձ ասացելովքս և զայն ևս զմտաւ ած, որչափ չարախօսս, քանի թշնամիս, քանի սուտակասպասս կուտեալ ունի զիւրև այնպիսին։ Այլ արդ աղէ՝ ասա, երանութեց ինչ արժանի իցէ այն. և ո՞վ ոք ասիցէ զայն։ Այլ 'ի ժողովրդենէն, ասեն, մեծարին։ Այլ այն զինչ իցէ. քանզի ոչ եթէ ժողովուրդն ած իցէ, որուսմ զնամարն տալոց իցեն։ Որպէս յորժամ զժողովրդենէն ասիցես, ոչ զայլ ինչ ասես, եթէ ոչ զառապարաց, և զսիթիցս, և զվիմաց որ ընդ ծով ծածկեալ իցեն, և բարանձաւաց։ Զի մեծարին յամբոխէն, որչափ և պայծառագոյն գործէ, ևս քան զնոսն մեծամեծ վիշտս և հոգս և տրտմութիւն ած 'ի վերայ։ Իսկ ոգի առնուլ այնպիսւոյն մարթիցի՞, և կամ բնաւ կալ իսկ 'ի յոտից վերայ կարիցէ՞, որ զայնպիսի աղիտարար տեր ունիցի։

Այլ զինչ ասիցեմ, թէ յոտից վերայ կալ և ոգի առնուլ. թէպէտ և բիւրապատիկ ուղղութիւք իցեն այնպիսւոյն, չմտանէ դիւրաւ յարքայութիւն երկնից։ Զի չէք որ այնպէս սովոր է ամբարտաւանել՝ որպէս առ 'ի բազմաց փառաւորութիւնն. զի ակնկոյրս և անազատս և սուտակասպասս և կեղծաւորս գործէ։ Զայն էր կոչէին փարիսեցիքն դիւահար զԲ՚ա, ոչ ապաքէն վասն զի փառաց բազմաց ցանկացեալ էին. կամ ուստի բազում ուղիղ վՀիռս բերէին զնմանէ

1 'Ի լուս. ՀԻԻԻ։

առաքեալքն, ոչ ապաքէն զի չէին անկեալ յայնպէս
սի ախտս։ Զի չէր ինչ և չէր իսկ որ այնպիսի անօ-
րէնս և անմիտս գործէ, որպէս առ 'ի բազմաց փա-
ռաց տեսեալ. և ոչինչ մեծարոյս և աղամանդեայս
առնեն, որպէս զայն անտես առնել։ Այարի իսկ առաջ-
քինի ոգւոց պէտք են այնմ՝ որ այնպիսի յորձանաց
ընդդէմ կալ ոգորիցի և բռնութեան հողմոց։ Զի
յորժամ 'ի բարութեան իցէ, քան զամենեսին զանձն
լաւ համարի. և յորժամ զնորին հակառակն կրիցէ,
փորել և թաղել զանձն կամիցի. և նոյն իսկ նմա
գեհեն և արքայութիւն է, յորժամ այնու ախտիւ
մերձեալ ընդ ջրով կայցէն։

Այս արդ աղէ՝ ասա, նախանձաւորութեանն ինչ
արժանի իցէ այն, և ոչ ողբոց և արտասուաց. յայտ
իցէ ամենեցուն թէ արտասուաց։ Զոր զայն իսկ
առնիցես, որ ընդ այնպիսի մեծարելոյն նախանձիս,
որպէս զի թէ կապեալ ոք և տանջեալ և բազում
գաղանաց ցրցտեալ տեսանիցէ, և նախանձաւոր լինի
վիրացն և հարուածոց նորա։ Զի որչափ մարդիկ 'ի
ժողովրդեանն իցեն, նոյնչափ նմա կապանք, նոյնքան
և տեարք։ Այա և այն իսկ կարի անհնարին աղէտք
են, զի իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ այլ և այլ միտս
ունին. և զոր լսեն և որում ծառայեն, այնմ հա-
մարին ամենեքեան, և չքննեն ինչ. այլ այլազգ այլ-
ում թուի, և այլգունակ այլում. և ինքեանք որ-
պէս կամին՝ հաստատեն։ Այս արդ 'քան զոր ալիս,
քան զոր չափ մերիկս չիցէ այն դժնդակագոյն. քան-
զի և հպարտանայ իսկ վաղվաղակի այնպիսին յախտը-
ժուութենէն, և ընկղմի երագ երագ։ Զի միշտ 'ի
վտանգի կայ, և ոչ երբեք 'ի հանդարտութեան։ Զա-
ռաջ քան զթատերոյն հանդէս և քան զմարտն՝ 'ի
բանիցն իսկ 'ի վտանգի կայ և 'ի դողութեան. և յետ
թատերն զբաւ լինելոյ, պարտասի և մեռանի 'ի տրտ-
մութենէն, և կամ դարձեալ անչափ ուրախ լինի, որ
և ևս չար տրտմութեան է։ Այս զի խնդութենն չէր սուղ
քան զտրտմութենն, յայտ յոգւոցն քայքայանացն է.
քանզի թեթեւամիտ գործէ և զբօսեալ և զբաղեալ։

1 Յորինակին Ե՝ անդ։

Օ այս և 'ի հնոց արանցն է տեսանել. երբ ազնուագոյն էր Դաւիթ. յորժամ ուրախ լինէրն, թէ յորժամ 'ի նեղութեան էր։ Երբ ազգն հրէից. յորժամ նեղէինն և առ ՅԾ կարդային, թէ յորժամ ուրախ լինէին յանապատին, և որթուն երկիր պագանէին։ Ամն որոյ և Սողոմոնն առաւել քան զամենեսին գիտէր՝ թէ զինչ է ուրախութիւն. «Լաւ է, ասէ, երթալ 'ի տուն սգոյ՝ քան 'ի տուն ծաղուոյ։ Զմին իրի և ԶՅ զոմանս երանէ, «Երանի է, ասէ, սգաւորաց». և զոմանս եղուկս կոչէ, «Վայ ձեզ որ ծիծաղիքդ, զի լայցէք»։ Եւ կարի իսկ յիրաւի. քանզի 'ի փափկութեան մեղկին և թուլանան ոգիքն. և յորժամ սգով ամիոփին, և զգաստանան և յախտին կապանաց ամենևին զերծանին, և բարձրագոյնք և զօրագոյնք լինին։

Եւ արդ զայս ամենայն իմացեալ, փախիցուք առ 'ի բազմանցն փառաց, և որ անտի ուրախութիւն իցէ. զի և մշանջենաւոր փառացն հասանիցիմք. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօքն Տն մերոյ Յսի ԶՅի. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

«Դիտաց Յն զխորհուրդս նոցա, և ասէ ցնոսա. ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ եղծանի. և ամ քաղաք կամ տուն բաժանեալ յանձնէ՝ ոչ կացցէ հաստատուն. և եթէ սատանայ զսատանայ հանէ, յանձն իւր բաժանեցաւ. և զիարդ կացցէ թագաւորութիւն նորա»։

Եւ և յառաջագոյն իսկ բամբասէին, թէ «ՅԱեղ զեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս». այլ յայնժամ ոչինչ սաստեաց, զի տացէ նոցա պատճառս 'ի բազում նշանացն իմանալ զզօրութիւն նորա, և 'ի վարդապետութիւնն ուսանել զմեծութիւնն. բայց քանզի զնոյն յաճախէին ասել, ապա սաստէ և։ Եւ նախ՝ այն իսկ զմեծութիւնն իւր ցուցանէր, զի զծածուկս սրբոյ նոցա 'ի մէջ բերէր. ապա և երկրորդաւն, զի դիւբաւ վաղվաղակի զդեւսն հանէր։ Լուեպէտ և չարախօսութիւնն կարի յանդգնութիւն էր. որպէս և վերագոյնն ասացի՝ թէ նախանձ ոչ զայն ինչ խնդրէ, թէ զինչ բամբասիցէ, այլ զի բամբասիցէ ևեթ. սակայն և ոչ այնպէս ինչ արհամարհէր զնոսա Յն. այլ իրաւունս տայ ըստ իւրում պատշաճ՝ հեզուէն. առ 'ի զմեզ խրատելոյ՝ լինել զդօնագոյնս առ թշնամիսն, թէպէտ և այնպիսի ինչ բամբասիցեն՝ զոր ոչ ինչ գտանիցեն զանձանց։ Լու թէպէտ բնաւ 'ի դէպ իսկ չիցեն բամբասանքն, սակայն մի ինչ խռովել և մի աղմկել, այլ ամ երկայնմտութիւն տալ իրաւունս. զոր մանաւանդ յայնժամ իսկ առնէր մեծաւ օրինակաւ, յայտ արարեալ՝ թէ ամենևին ստութիւն էին բամբասանքն։ Օ՛ի չէր դիւահարի գործ՝ այնպիսի հեզութիւն ցուցանել, և զծածուկս մտացն Ճանաչել։

Լու քանզի յանդգնութիւն էին կարծիքն, վասն զի 'ի բազմաց իսկ երևէին, և չիշխէին հրապարակաւ առնել զբամբասանսն, այլ 'ի միտս յածէին. և նորա յայտ արարեալ նոցա՝ թէ զայն ևս Ճանա-

չէ. և զչարախօսութենէն ինչ ոչ ձառէ, և ոչ յայտ ածեալ ձաղէ զչարիս նոցա, այլ զլուծումն ևեթ զմոռացս խղճի յարեալ՝ի նոցն, թողու յանդիմանիչ չարախօսացն։ Վասնզի մի ինչ միայն փոյթ յանձին ուներ յարդարել, զի զյանցաւորսն շահիցի, և ոչ զի ձաղ ինչ առնիցէ. թէպէտ և կամեցեալ էր երկայնաձիգ բանս ինչ՝ յօդել և ձաղել զնոսա, և հանդերձ այնու և անհնարին վրէժս պահանջել՝ի նոցանէ, չէր ինչ՝ որ արգել կարէր լինել։ Այլ զայս ամենայն թողեալ՝ի մին ևեթ հայէր. մի ևս քան զևս՝ի հակառակութեն ինչ գրգռել, այլ զգօնագոյնս, և նոլին յուղղուիս ածել, և առնել պիտանացուս։ Այս տես զնարդ տայ նոցա իրաւունս. և ոչ՝ի գրոց ինչ, քան զի և անսային իսկ ոչ, և այլ ընդ այլոց մեկնելոց էին. այլ՝ի հասարակացն դէպաց։

«Մինայն թագաւորութի բաժանեալ յանձնէ, ոչ հաստատեսցի. և քաղաք և տուն բաժանեալ՝վաղ-վաղակի քայքայի»։ Օ՛ի ոչ այնչափ ինչ արտաքին պատերազմունք իբրև զընտանեացն պատերազմունսն կարեն կոտորածս առնել, որ՝ի մարմնոս և յամ իրս գոծի, այլ առ՝ի ծանօթիցն բերէ օրինակս։ Լաւեպէտ և չկայցէ ինչ յերկրի զօրագոյնս քան զթագաւորութիս, սակայն կորնչելոց է՝ յորժամ անձամբ ընդ անձին հարկանիցի։ Այս եթէ յայնպիսի մեծութեան՝ պատճառաք իրացն՝ անձին կործանումն իցեն, ապա զի և զայնպիսի տանէ և զքաղաքէ ձառիցես. թէպէտ փոքր և կամ բնաւ մեծ ոք իցէ՝ և ընդ անձին կռուիցի, կորնչելոց է։ Այս եթէ ես, ասէ, դև ունիցիմ, և այնու դև հանիցեմ, ապա մարտ և պատերազմ՝ի մէջ դիւացն կայցէ. ընդ միմեանս անկեալք՝ և միմեամբք քակտիցին. և եթէ ընդ միմեանս հարկանիցին, կորեաւ ուրեմն և եղծաւ զօրութի նոցա։ «Այթէ սատանայ զսատանայ հանիցէ»։ և ոչ ասաց՝ թէ զդևս, յայտ արարեալ զկարի անմիաբանութին նոցա. և եթէ անձամբ յանձնէ ինչ բաժանեսցի, ապա տկարացաւ և կորստական եղև. զիարդ իցէ՝ զի զայս հանիցէ։

Տեսանես որչափ ինչ ծաղու և ձաղանաց են բամբասանքն. որչափ անմտութի, որպիսի ինչ պատե-

բազմ. քանզի ոչ զոյր ասել թէ կայցէ հաստատուն և զգեաս հանիցէ. և ոչ ասել թէ վասն այնորիկ իսկ կայ, զի 'ի դէպ էր նմա այնուհետև քակիլ։ Զառաջինն այն իսկ է լուծումն բանիս. երկրորդ ընդ սմին և զաշակերտսն 'ի մէջ բերելով, ոչ թէ միով օրինակաւ, այլ երկուք և երիւք քակէ միշտ զհակառակուութիւնսն ինչ՝ որ ընդդէմ զնէին. զի մեծաւ առաւելութիւն կամի կարկել զբերանս յանդգնելոցն։ Օ որ օրինակ վասն շաբաթուն զ[1]աւիթ ածէր 'ի մէջ, և զքահանայսն, և զվկայութիւն գրոց, որ ասէր «Օ ողորմութիւն կամիմ, և ոչ զպատարագ», և զպատճառս շաբաթուն՝ թէ վասն էր իսկ տուաւ, զի վասն մարդոյ, ասէ, եղև շաբաթ, նոյնպէս ասա յետ առաջնոյն յերկրորդ լուծումն գայ, որ ևս յայտնագոյն է։

«Օ 'ի թէ ես, ասէ, բեեղզեբուղաւ դիւաց իշխանաւն հանեմ զդևս, իսկ որդիքն ձեր ի՞ւ հանիցեն»։ Հայեաց զէթ ասա ընդ հեզութիւնն. ոչ ասաց՝ աշակերտքն իմ և առաքեալքն, այլ որդիքն ձեր ասէ։ Օ 'ի թէ կամիցին դառնալ անդրէն յիւրեանց աղգականութիւն, բազում ինչ առնուցուն 'ի բանիցն պատճառս. ապա թէ հեստիցեն և անդէն 'ի նմին յամառութեան կայցեն, չգտանիցեն ինչ պատճառք։ Զոր ասէն՝ այսպիսի ինչ է, թէ առաքեալքն ոչ զոր անուամբ հանէին զդևս. քանզի 'ի վաղուց հետէ հանեալ էր նոցա զդևս՝ վասն առնլոյ նոցա զիշխանութի 'ի նմանէ. և ոչ մեղադիր լինէին նոցա. զի ոչ թէ ընդ իրսն, այլ ընդ դէմսն՝ կուուէին։ Զոր արդ ցուցանել կամի՝ թէ նախանձու աղագաւ միայն բամբասէին, ածէ և զառաքեալսն 'ի մէջ։ Օ 'ի թէ ես այնպիսի ինչ հանիցեմ զդևս, որչափ ևս առաւել նոքա՝ որք յինէն իսկ առին զիշխանութիւն. բայց սակայն ոչ այնպիսի բամբասանօք բամբասիցէք զնոսա. և զիս՝ որ նոցա ամենայնի պատճառք եղէ, զիարդ իցէ զի բամբասիցէք, և զնոսա ազատս առնիցէք 'ի մեղադրութենէ. բայց այդ ոչինչ ազատէ զձեզ 'ի պատժոց, այլ կարի իսկ յոյժ դատապարտիցէ։ Զի՞ որոյ յարէ իսկ 'ի նոյն, թէ «Զոքա լիցին ձեր դատա-

1 Յորինակին ԸՆԴ ԳԼՈՒ։

տաւորք »։ Յորժամ 'ի ձէնջ իսկ իցեն, և ոչ զդոյն իսկ զմտաւ ածիցեն, այլ հաւանեցան և հնազանդեցան, կարի իսկ յայտ է՝ թէ դատապարտելոց են զձեզ, որք զհակառակսդ իմանայք, և զանուղայսդ գործէք։

« Իսկ եթէ հոգւովն ՝այ հանեմ զդևս, ապա հասեալ է 'ի վերայ ձեր արքայութիւն ՝այ »։ Այս զինչ իցէ արքայութիւն ՝այ. գալուստն իմ, ասէ։ ՅԷս, զիարդ միւսանգամ բժշկէ զնոսա, և ձգէ ածէ յիւր գիտութիւն. և յայտ առնէ թէ ընդ իւրեանց բարիսն մարտնչին, և արդ իւրեանց փրկութեանն հետեն։ Պարտ էր ձեզ, ասէ, խնդալ և ցնծալ, զի մեծամեծքն և ծանուցեալքն՝ որ 'ի մարգարէիցն յառաջագոյն գուշակէին՝ եկին հասին. և ժամանակ ձերոյ բարութեանցն ժամանեալ կայ առ դուրս. և դուք զհակառակն նորին գործէք. ոչ միայն չընդունիք զբարիսն, այլ և բամբասէք և, և բիծս կարկատեք առանց իրիք պատճառանաց։

Մատթէոս ասէ, թէ « Հոգւովն ՝այ հանեմ զդևս ». և Ղուկաս՝ թէ « Մատամբն ՝այ », յայտ արարեալ՝ թէ մեծի զօրութեն է հանել զդևս, և ոչ դոյզն ինչ ընորհաց։ Այս կամի այսուհետև զհանգամանսն ցուցանել նոցա և ասել, թէ այդ այդպէս իցէ, ապա որդին ՝այ եկն եհաս։ Այլ յայտ չառնէ; բայց մեղմով ընդ աղօտ. որպէս զի մի ինչ ժամանակ՝ լինիցի նոցա. զնոյն ակնարկէ ասելովն, թէ « Այսպա եկն եհաս ուրեմն 'ի վերայ ձեր արքայութիւն ՝այ ». զի ցուցցէ թէ իւր գալուստն՝ ՝այ գալուստ է։

Յեսանեն զառաւելութիւն իմաստութենն. զի որովք բամբասէինն, նոքիմբք եցոյց զիւր գալուստն ծագեալ։ Այս զի առ ինքն ձգել կամէր զնոսա, ոչ խառն 'ի խուռն ասաց՝ թէ եկն եհաս արքայութիւնն, այլ թէ 'ի վերայ ձեր։ Զեկ, ասէ, եկեալ հասեալ է երախտիքն. ընդէր դժկամակ լինիցիք ընդ ձեր բարութիս, և հեստել առ ձեր փրկութիս։ Այս այն ժամանակ է՝ զոր յառաջագոյն կարապետէին մարգարէքն. սոյն իսկ նշանակ է գալստեանն՝ որ 'ի նո-

1 Յոյնն Ի ԻՆ ԴԻՒՆՈՒ։

ցանէ երգեալ[1] զուշակէր, թէ ածեղէն զօրութիւն իցեն գործք՝ որ գործեցան։ Օ ի լինելոց էին գործք այս՝ որ գործեցան, զայն և դուք իսկ Ճարտար գիտէք. զի ածեղէն իսկ զօրութեամբն, զայն արդիւնքն իսկ աղաղակէին։ ԼՀ չէ մարթ լինել սատանայի զարագոյն, այլ ամ՝ հարկաւ կարի իսկ տկարագոյն. և զտկարացեալն չէ ինչ ինքն զօրագոյն որ դև մեծէ։ Օ այս ասէ, զի զզօրութի իւրոյ սիրոյն յայտ առնէ, և զկռուոյն և զհակառակութեան տկարութիւնն. վասն որոյ և ինքն իսկ ստէպ զաշակերտսն միշտ վասն սիրոյ պատուիրէ. և սատանայի գործ այն իսկ է՝ զի միշտ զնոյն 'ի միջոյ բառնայցէ։

ԼՀ իբրև ասաց զերկրորդ լուծումնն, ապա և զերրորդն 'ի նոյն յարեալ ասէ, թէ «Օ իսկզդ կարիցէ որ մտանել 'ի տուն հզօրի, և զկազմած նորա յափշտակել, թէ ոչ նախ զհզօրն կապիցէ, և ապա զտունն աւար հարկանիցէ»։ ԼՀ զի չէ մարթ սատանայի զատանայ հանել, յայտ 'ի բանիցն ասացեալոց է. և զի չէ այլ ազգ ինչ հանելոյն, թէ ոչ նախ նմա իսկ որ յաղթիցէ, և այս ամենեցուն իսկ յայտ է։ ԼՀ յայտցանէ իսկ մեծ առաւելութիւն զառաջինն հաստատէր. այնչափ ինչ, ասէ, չեմ մեռ զօրավիգն առնուլ զսատանայ, զի և պատերազմ ևս տամ ընդ նմա և կապեմ. և նշանակ սորին՝ զկազմած նորին յափշտակելն է։

ԼՀ տես, զիարդ 'ի հակառակ նորին՝ զոր նոքայն յանդգնեին հնարել, ցուցանէ. զի և նոքա կամէին յայտ առնել՝ թէ ոչ իւրով ինչ զօրութիւն հանէ զդևս. և նա ցուցանէ՝ թէ ոչ միայն զդևս, այլ և զզօրագլուխն ևս մեծաւ իշխանութեամբ ունի կապեալ. և նախ նմա յաղթեաց՝ անձին զօրութեամբ։ ԼՀ յայտ յիրացն գործելոցն է. զի թէ մին իշխան իցէ, և այլքն ընդ նորին հնազանդութեամբ, զիարդ մինչ նա չիցէ կապեալ և մնեալ ընդ բռնութեամբ, այլքն յափշտակիցին։

Լայց ասա և մարգարէութիւն թուի ինձ բանն. զի ոչ միայն դևքն էին կազմած և գործի սատանայի,

[1] Յորինակին Երեալ։

այլ և մարդիկ՝ որ զնորին գործ գործէին։ Յոյց այսուհետև՝ թէ ոչ միայն զդէս հաներ, այլ բնաւ իսկ զնա՝ տիեզերաց զմոլորութիւն փարատեր, և զմինչև նայս նորա քակտեր, և զնա՝ զդժոդակութիւս ի հեշտակնս դարձուցաներ։ Յու իբրև եցոյց՝ թէ այն ոմ նորա էին, յայտ առնէ՝ թէ յանկարծակի յա-փշտակէ. քանզի ոչ ասաց, թէ յափշտակէ միայն, այլ թէ աւար հարկանէ. զի ցուցցէ՝ թէ իշխանութիւն էառ զաւարն։ Հզօր կոչէ զնա, ոչ թէ այնպիսի ինչ իցէ. ծն անդր ի բաց. այլ զառաջին բռնուելն յայտ առնէ, որ ի մերմէ ծուլութենէ եղեն նպաստ նորա զոռոզութեան։

«Որ չէ ընդ իս, ասէ, նա հակառակ իմ է. և որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ»։ Հաւասիկ երրորդ լուծումն. ես, ասէ, կամիմ առ ած մերձեցուցանել, և առաքինութիւն ուսուցանել, և արքայութիւն խոստանամ. և սատանայ և դևք՝ զնորին հակառակն։ Յու արդ զիարդ. որ ոչ ընդ իս ժողովիցէ՝ և ոչ ընդ իս իցէ, իմ գործակից լինել ոչ իցէ։ Յու զինչ ասացից գործակից. զի և գրահանգ ևս լինի՝ զիմ ժողովեալն ցրուել. և արդ ոչ միայն չլինիցի գործակից, այլ և օգտել ևս ջանայ. զիարդ այնչափ միաբանութիւն ցուցանէ ընդ իս՝ զի ընդ իս և զդէս հանիցէ։ Յու զայս ոչ զսատանա միայն, այլ և իւր զանձնէ ասացեալ՝ի դէպ էր կարծել՝ եթէ սատանայի հակառակ է. և զոր նորա ժողովեալ՝ սա ցրուէ։

Յու զիարդ, ասէն. որ չիցէ ընդ նմա՝ հակառակ նմա իցէ։ Այն իսկ զի ոչ ընդ նմա ժողովէ. թէ այս ճշմարիտ իցէ, ապա ևս առաւել այն՝ որ հակառակ նորա ոք իցէ. զի թէ որ ոչն լինի գործակից՝ թշնամի իցէ, որչափ ևս առաւել այն՝ որ զնակատն տայցէն։ Օ այս ամ ասելով յայտ առնէ զկարի և զանչափ թշնամութիւն իւր ընդ սատանայի։ Այլ դու աղէ՝ ասա. թէ դէպ ուրեք լինիցի քեզ տալ ընդ ումեք պատերազմ, որ ոչն կամիցի քեզ զօրավիգն լինել՝ նովինն իսկ յայտ առնէ, թէ թշնամի քո է։ Պէտպետ և այլուր ասիցէ, թէ «Որ որ չէն մեզ հակառակ, նա ի մեր կողմ է», ատ նմին ևս ընդդէմ ցուցանէ, թէ որ չէ ընդ նմա, հակառակ նմա է. և արդ

թէպէտ չէր ընդ նոսա՝ չէր նոցա հակառակ, այնու-
զի անուամբ նորա հանէր զդէս։ Լուսի ինձ, թէ և
ասա զՏրէիցն ակնարկիցէ, և ընդ սատանայի համարի
զնոսա. քանզի նոքա հակառակ նմա էին, և ցրուէին՝
զոր ինչ նա ժողովէր։

Լու զի զնոցանէ ևս ակնարկէ և յայտ առնէ ա-
սելովն. «Ամն այնորիկ ասեմ ձեզ, թէ ամ մեղք
և հայհոյութիւնք թողցին մարդկան»։ Լրբև արար
զիրացն պատասխանի, և ելոյծ զհակառակուէին՝ զոր
ընդդէմ դնէին, և յայտ արար թէ զուր յանդգնեալ
էին, այնուհետև ահ ևս արկանէր։ Օի և այն իսկ
ոչ սակաւ խրատու և ուղղութեան մանն էր, և ոչ մի-
այն իրաւունս տալ, այլ և հաձել և սպառնալ։ Լու
ընդ բազում տեղիս զսոյն յայտ արարեալ՝ դնէ օ-
բէնս և խրատս. և թուի թէ անյայտ ինչ իցէ բանն,
բայց թէ միտ դնիցեմք, կարի դիւրին է լուծուէնն։
Լայս բանիցն իսկ պարտ է ուսնիցիր լինել. «Ամ-
նայն, ասէ, մեղք և հայհոյութիւնք թողցին մարդկան.
և որ ասիցէ բան ինչ զորդւոյ մարդոյ թողցի նմա։
Իսկ որ ասիցէ զՍուրբն, մի թողցի նմա, մի
յայսմ աշխարհի և մի 'ի հանդերձելումն»։

Օ ինչ իցէ զոր ասէն։ Լաղուամ ինչ ասացէք զի-
նէն, թէ մեղրեցուցիչ է, և ոչ հակառակ ոչ. զայն
ամ թողուամ ձեզ, ասէ, թէ ապաշխարիցէք. և ոչ
պահանջեցից 'ի ձէնջ վրէժս ընդ այնր։ Լայց զՀայ-
հոյութիւն որով զՀոգին սուրբ հայհոյեցէք, մի թող-
ցի, թէպէտ և ապաշխարիցէք։ Լու զիարդ իցէ 'ի
դէպ. քանզի և այն հայհոյութիւն թողաւ այնոցիկ՝
որք ապաշխարեցին. քանզի բազումք յայնցանէ՝ որք
զայն բան ասացին, հաւատացին յետոյ, և թողաւ
ամ նոցա։ Լու արդ զինչ իցէ զոր ասէն. եթէ քան
զամ մեղս՝ այն կարի ծանրագոյն և առանց ներելոյ
է. թէպէտ և նմա ինչ չէին տեղեակ, թէ ո՞ իցէ,
սակայն զՀոգւոյն կարի քաջ գիտէին զփորձ։ Լու եւ
թէ զնա ինչ այնպիսի զօրութիւն չհամարէին՝ վասն
մարմնոյն, այլ զգործսն Հոգւոյն պարտէին համարել[1]։
Վանզի և մարգարէքն նովաւ խօսէին զամենայն ինչ

[1] 'Ի լուս. գաղտնել հմտեցն.

զոր խօսէին, և ամենեքեան իսկ 'ի հնումն տեղեակ էին նմա։

Լ.։ արդ զոր ասէն՝ այսպիսի ինչ է։ Գրեսջիր, ասէ, թէ յինէն գայթագղեցեալք վասն մասապատ մարմնագղած լինելոյս, միթէ և վասն հոգւոյն պատճառս ինչ ունիցիք եթէ չհանաչեմք զնա. վասն այնորիկ առանց ներելոյ ունիք զհայհոյութիւնդ, և աստ և անդ տայցէք զտոկոսիս։ Լ.ազումք աստ միայն տանջեցան. զոր օրինակ պոռնկացեալն, և որք անարժան մատչէին 'ի խորհուրդն կորնթացիքն. բայց դուք աստ և անդ տաջիք վրէժս։ Որչափ հայհոյեսջիք զիս յառաջ քան զվաչելութիւն, զայն համ թողում ձեզ, և ըզխաչելութիւն ևս յանդգնութիւն. և ընդ անհաւատութեանդ միայն դատապարտեսջիք։ Վանզի և ոչ որք յառաջ քան զվաչն հաւատացին, կատարեալ հաւատս ունէին. և ընդ բաղումս տեղիս պատուիրէր՝ մի ումեք յայտ առնել զնա յառաջ քան զչարչարանսն. նա և 'ի խաչին իսկ ասէր թողուլ նոցա զմեղս։ Լ.յլ որ ինչ զհոգւոյն սրբոյ, ասէ, խօսեցարուք, այն առանց ներելոյ լինիցի ձեզ. և զի վասն այնց բանիցն՝ որ յառաջ քան զվաչն խօսէին զնմանէ՝ ասէր, յաւել 'ի նոյն, եթէ «Որ ասիցէ բան զորդւոյ մարդոյ, թողցի նմա. իսկ որ ասիցէ զհոգւոյն սրբոյ, ոչ թողցի»։

Լ.ուդէր. զի զնա յայտնի իսկ գիտէին, և առ ծաղնօթականն յանդգնէին. զի թէ զինէն ասէք, ասէ, չգիտէք, այլ ոչ եթէ զհոգին չգիտէք. զի զդէս հանել և բժշկութիւս կատարել՝ հոգւոյն սրբոյ գործ է. ապա ոչ միայն զիս թշնամանէք, այլ և զհոգին Սրբ. վասն որոյ և անհրաժեշտ լեցի ձեզ դատաստանն աստ և անդ։ Լ.ն ումանք 'ի մարդկանէ՝ որք աստ տանջին և անդ. կէսք աստ միայն. և այլք անդ միայն. և ումանք ոչ աստ և ոչ անդ։ Լ.աստ և անդ, որպէս նոքայն. և աստ ետուն վրէժս՝ յորժամ անհնարին չարչարանօք 'ի վերայ եկին 'ի պաշարել և յաւերել քաղաքին. և անդ անհնարին տանջանօք էն տանջելոց. որպէս սոդովմացւոց քաղաքսն, և այլք բազումք։ Լ.ւ անդ միայն, որպէս մեծատունն տապակէր 'ի տապ տապակին, և ոչ կաթի մի ջրոյ իշխեր

ձեռնհաս լինել։ Եւ ասա միայն, որպէս պոռնկա-
ցեալն 'ի կորնթացւոց քաղաքին. և ոչ ասա և ոչ
անդ, որպէս առաքեալքն և մարգարէքն և որպէս
երանելին Յովհ, զի ոչ տանջանաց վասն չարչարէրն,
այլ առաքինութեաց և պատերազմաց աղագաւ։

ԳՈՐԴՈՐԱԿ

Փոխանցուիր այսուհետև և մեք լինել 'ի նոցա
կողմանէն. թէպէտ և ոչ այնպիսի առաքինիք ինչ,
զէթ զմեղսն ասացէն մերկանայցեմք։ Օ՛ի կարի ահա-
գին է ատեանն, և անհրաժեշտ պատիժքն, և անդա-
դար տանջանքն։ Եւ եթէ ոչ կամիցիս մնանել 'ի
տանջանսն, անձամբ անձինդ լնիցիր դատաւոր. քեզէն
'ի քէն պահանջեսցիր համարս, ունկնդիր լինել Պաւ-
ղոսի՝ որ ասէ, «Եթէ զանձինս քննէաք, ապա ոչ դա-
տապարտեսցաք»։ Եւ զայդ յորժամ առնիցես, ոմն
ոմն յառաջ փոխելով՝ և պակին և ես արժանի լի-
նիցիս։

Եւ զիարդ, ասէ, անձամբ զանձն դատիցիմ։ Յոր-
ժամ 'ի սուգ մնանիցես, հաւեսցես, հառաչես դառ-
նասպէս, զանձն չարչարեսցես, խոնարհեսցիս, զմեղսն
միշտ զմտաւ ածիցես մի ըստ միոջէ ըստ իւրաքան-
չիւր կերպարանաց։ Եւ չէն այն սակաւ տանջանք
ոգւոցն. և որոյ առեալ իցէ զչափ զղջմանն, գիտէ
թէ քան զնամ ինչ այն չար տանջէ զոգին. և եթէ
ունիցի ոք զյիշատակս մեղացն 'ի մտի, գիտէ զինչ
ցաւք անտի են։ Պատն այնորիկ զարդարութիւն
պարգև դնէ ՝ած ընդ այնպիսի ապաշխարութեան.
«Եա՛, ասէ, դու նախ զմեղս քո, զի արդարասցիս»։
Զի քանզի չէ իսկ փոքր նպաստ յուղղութի, զնամ
մեղս մի ըստ միոջէ 'ի մի վայր դումարել, և յեղյեղ-
ուլ, և ստէպ զմտաւ ածել։ Օ՛ի որ զայն առնիցէ,
այնպէս զղջանայցէ՝ մինչև կենդանութեան զանձն չհա-
մարել արժանի. և որ զայն այնպէս համարիցի, քան
զնամ մամ ևս կակղագոյն լինի։

Եւ դու մի ինչ ցիս միայն զպոռնկութի և զնուէ

ասիցես, որ յայտնի և յանդիման ամենեցուն էն. այլ զդաղտնի նենգութեանցն և զզրպարտութեանցն և զչարախօսութեց և զնապարծութեանց և զնախանձու, և զայլն ամ նոյնպիսիք 'ի մի վայր գումարեսցես. քանզի և այն ոչ սակաւ տանջանս ածէն 'ի վերայ։ Օ՚ի և բամբասողն 'ի գեհենն երթայ. և արբեցողն չունի ժառանգութիւն. և որ չսիրէ զընկերն՝ դիմադարձ լինի ոյ, որպէս զի թէ մարտիրոս իցէ՝ չգտցի ինչ. և որ իւրում տանն խնամ չունիցի, 'ի հաւատոցն ուրացեալ է. և որ զաղքատաց զանց առնիցէ, 'ի հուրն առաքի։ ԼՀ արդ մի՛ ինչ զայն փոքր համարիցիս. այլ գումարեա զամ 'ի մի վայր, և 'ի գիր արկ։ ԼԹէ դու գրեսցես, ածՋՆՋԷ. իսկ եթէ դու ոչ գրեսցես, ածՋ 'ի գիր արկանէ, և պահանՋէ վրէժս։ ԼՀ արդ կարի իսկ քաջլաւ է մեզ գրել՝ և վերստին ՋՆՋել, քան եթէ նորին հակառակ մեզ մառանալ՝ և ոյ զայն առաՋի աչաց մերոց բերել 'ի յաւուրն յետնում։

ԼՀ արդ զի մի՛ այն լինիցի, զամ ստուգութեամբ ածցուք զմտաւ, և գոցուք բազում պարտուց պարտատոս զանձինս։ Քանզի ո՞ որ սուրբ յագահութիւն իցէ. և դու մի՛ ինչ ցիս զչափոյն ասիցես. թէպէտ և սակաւ ինչ իցէ, զնոյն վրէժս եմք տալոց. զայն զմտաւ ած, և ապաշխարեա։ Ո՞վ ազատ 'ի թշնամանաց, քանզի և նա 'ի գեհենն տանի. ո՞ ոչ խօսեցաւ չար զընկերէն. ո՞վ ոչ հպարտացաւ, որ քան զամենեսեան իսկ պղծագոյն է. ո՞վ ոչ հայեցաւ յայրատ աչօք, որ է ընացօղ կատարեալ. ո՞վ ոչ բարկաւցաւ եղբօրն 'ի զուր, որ է պարտաւոր ատենին. ո՞վ ոչ երդուաւ սուտ, որ ևս չար և 'ի չարէն է. ո՞վ ոչ ծառայեաց մամոնայի, որ գեհենին մասն է, և անկեալ 'ի Քրիստոսի ծառայութենէ։ Ունէի և այլ ինչ մեծամեծս քան զսոյն ասել, այլ շատ և բաւական են այսոքիկ այնմիկ՝ որ չիցէ քարեղէն, և ոչ կարի անզգայ՝ գալոց 'ի զղջումն։ Օ՚ի թէ իւրաքանչիւր որ յայտնասցէ 'ի գեհենն արկանէ, զամ 'ի մի վայր կուտեալ՝ զինչ գործիցէ։

ԼՀ արդ հնար գուցէ, ասէն, ապրելոյ։ Ի՞ստ նմին համեմատութեամբ դեղ 'ի վերայ դնել՝ զողորմութիւն,

զաղօթս, զզղջումն, զապաշխարութիւն, զխոնարհութիւն, զսիրտ բեկեալ, զընչից անտեսութիւն։ Զանգի բաղում ճանապարհս փրկութիւն հարդեաց մեզ ՅԾ, թէ կամիցիմք անսալ։ Խնամացուք այսուհետև և ամենեին սրբեսցուք զվերուն զայնոսիկ. ողորմեսցուք և մի կալցուք ոխս ընդ տրտմեցուցիչսն. զոհայցուք լիցուք ընդ ՅՄի զՅ. պահեսցուք ըստ կարի. յաղօթս կացցուք սրտիւ մտերմութիւն. արասցուք բարեկամս 'ի մամոնայէ անիրաւութեան. զի այնպէս թողութեան յանցանաց կարասցուք հասանել, և խոստացելոցն բարեաց ժամանել. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել հնորհօքն և մարդասիրութիւն ՅՆի մերոյ Յնի Զնի. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ԵՒԹՆՈՒՏԱՍՆԵՐՈՐԴ

«Կամ արարէք զծառն բարի և զպտուղն նորա բարի, կամ արարէք զծառն չար՝ և զպտուղն նորա չար. քանզի 'ի պտղոյն ծառն ճանաչի»։

ԶԱՐՁԵԱԼ այլազգ յամենայն առնէ զնոսա, և չհամարի բաւական զառաջին յանդիմանութիւնն։ Եւ այսու ոչ եթէ զանձն ազատէ 'ի բամբասութենէ, քանզի բաւական էին առաջինքն, այլ զնոսա կամի ածել յուղղութիւն։ Եւ զոր ասէն՝ այսպիսի ինչ է. ոչ ոք 'ի ձէնջ պարսաւեաց զաժշկեալսն իբրև զչաժշկեալս. և չասաց ոք, եթէ չար ինչ իցէ 'ի գիւաց ազատել։ Մոլեպէտ կարի յանդգնէին, այսպիսի ինչ չկարէին ասել։ Եւ քանզի զգործն չաղարտէին, և զնշանագործն բամբասէին, յայտ առնէ 'ի հասարակաց մնացն և յիրացն կարգէ, և եթէ չարախօսութիւնն յանդգնութիւն էր, ոչ միայն զչարն խորհել, այլ և այնպիսի ինչ հաշուել՝ ոչք և 'ի հակառակաց մնաց ինչ իցեն։

Եւ դու տես զանհակառակութիւնն. ոչ ասաց՝ թէ արարէք զծառն բարւոք, քանզի և պտուղն բարւոք է. այլ կարի իմն յաճախ ըմբերանէ զնոսա, և զիւր հեղուութիւն և զնոցա յանդգնութիւն յայտ արարեալ։ Մոլեպէտ գործոցն ինչ բիծ դնիցէք, չարգելում. միայն մի անբանս ինչ և անկարգս բամբասիցէք։ Օ՛ի այնպէս յայտնագոյնս ըմբռնելոց էին, յորժամ կարի յայտնի յիրսն անամեթ գտանէին։ Մոլեպէտ և չար ինչ, ասէ, 'ի մտի կայցէ, տակայն 'ի ձերոց պատշաճիցն մի ելանիցէք։ Օ՛ի և ծառոյն ընտրութիւն 'ի պտղոյն երևի, և ոչ եթէ պտուղն 'ի ծառոյն։ Այլ դուք զհակառակսն առնէք. զի թէ ծառն ինչ իցէ պատճառք պտղոյն, այլ և պտուղն է ծառոյն ծանուցիչ։ 'Ի դէպ այնպէս էր, կամ զգործն խոտել՝ և զմեզ բամբասել, կամ զգործն գովել՝ և զմեզ 'ի բամբասանաց ազատել։ Իսկ այժմ զհակառակն ինչ

առնէք. զգործսն ինչ չկարէք խոտել՝ որ պտուղն են, և զվնիս բամբասանացն զծառո

զչարիսն 'ի ներքս մթերեալ՝ որչափ բանքն ևեթ ցուցանին, այլ ևս առաւել իմաստիրը զաղբեւրն. զի զոր արտաքոյն խօսի՝ յաւելուածք են ներքին շտեմարանացն։

Տեսանես, զիարդ յաձախագոյն կսկծեցոյց զնոսա։ Լ,թէ խօսք այնչափ չար իցեն և անտուստ իսկ 'ի սատանայի կամաց, 'ի միտ առնուցուս՝ որպիսի՞ ինչ արմատն և աղբեւր բանիցն իցէ։ Լ,ւ այնպիսի ինչ իրք 'ի դէպ լինիցին, զի լեզուն առ պատկառելն բաղում անգամ ոչ զա՞մ չարութիւն յառաջ բերէ միանգամայն. իսկ սիրտն՝ ոչ զոք ունի 'ի մարդկանէ վկայ դժկամակացս, որչափ և կամի՝ ծնանի զչարիսն. և ա՞յ չէ ինչ դժուար զայն գիտել։ Լ,ւ քանզի խօսքն՝ որ արտաքս ելանեն, 'ի քինոս դան, և ամենեցուն առաջի դնին, և խորհուրդքն 'ի ծածուկ մթերին, վասն այնորիկ յայտնիքն սակաւք երևին, և սրտին մթերքն յաձախագոյնք. և յորժամ կարի յոյժ 'ի ներքս մթերեսցին, ապա և արտաքս ևս հեղու։ Օ որ օրինակ որոյ թալուկ զսրտիւն գայցեն, զառաջինն անդէն 'ի ներքս ունել և զմտաքսն ջանան. իսկ յորժամ շարժիցի, այնուհետև բազում խիխաւրաս ընկենու արտաքս. նոյնպէս և որ չար խորհրդովքն լի իցեն, առ չժուժալ կարեացն՝ միշտ զայլն բամբասեն։

«Լ,ւ մարդ բարի 'ի բարի գանձուց իւրոց բղխէ զբարիս. և չար մարդ 'ի չար գանձուց իւրոց հանէ զչարիս»։ Լ,ւ զայն մի՞ ինչ ածիցես զմոռաւ, թէ 'ի չարութենէն միայն սոյնպիսի գործիցի, այլ և 'ի բարութէն սոյնպիսի ինչ դիպի. զի առաւել քան զարտաքին բանսն՝ 'ի ներքս մթերեալ կայ առաքինութիւն։ Օ՞ի յայտ լիցի, թէ և զնոսա ևս չար պարտ է համարել քան զբանսն, և զմիւսն՝ ազնուագոյն քան զիսոսն. և գանձս կոչելով՝ զմթերեալսն յայտ առնէ։ Դարձեալ ևս առաւել պարսպէ երկիւղիւն. մի՞ ինչ համարիցիք, ասէ, թէ այնու ինչ այլոց յանցանքն վնասիցին, այլ անհնարին վրէժս տայցեն ամենեքեան որ 'ի նոյն չարութիւնս հատանիցին։ Լ,ւ ոչ ասաց՝ եթէ դուք, միանգամայն զի զա՞մ ազգս հասարակ խրատիցէ, և զբանն ատելի չառնիցէ։

«Լ՞սեմ ձեզ, ասէ, ընդ ա՞մ դատարկ բանից՝ զոր

խօսեսցին մարդիկ, դատ տայցեն յաւուրն դատաստանին »։ Դատարկ բան զայն ասէ, յորժամ ոչ ըստ իրաց՝ որ առաջի կայցեն՝ խօսեսցի ոք, կամ թէ սուտ ոք խօսեսցի, և զուր ինչ զրպարտ առնիցէ։ Իսկ ոմանք՝ և դոյզն ինչ բանս ասիցեն, յորժամ ծաղր ոք ածիցէ, կամ 'ի խեղկատակութիւն ինչ հաստանիցի, կամ անազատս ինչ խօսեսցի։

« 'Ի բանից քոց արդարասցիս, և 'ի բանից քոց պարտաւորեսցիս »։ Տեսանես, զի արդ է 'անտաղտուկ դատաստանն, որպէս մեղմագոյն պահանջմունք։ Զի ոչ այնու ինչ՝ որ ոք զքէն ասիցէ, այլ որովք դու տայցես անձին վճիռ, վճարէ դատաւորն. որ քան զամ ինչ իրաւականն է. յորժամ անձամբ իշխան իցես ասել և չասել։ Եւ այսուհետև չէ պարտ չարախօսելոյն երկնչել, այլ չարախօսացն. զի ոչ նոքա ինչ բռնադատին տալ պատասխանի առ այն՝ զոր չարաչարն լուան, այլ նոքա ընդ այսր՝ զոր չարաչարն խօսեցան. և 'ի նոցա իսկ պարանոցս ամենեւին կրթիցի տագնապն։ Որպէս զի բամբասելոյն անհոգս համարիցի լինել, և ոչինչ տայցեն վրէժս ընդ բամբասանացն. և բամբասողքն յահ և յերկիւղ իցեն, յորժամ ձգելոց իցեն վասն նոցա յատեան։

Զանգի սատանայական իսկ են որոգայթք և մեղք. յորմէ չկք ինչ հանգիստ, բայց միայն վնաս. ուստի չար իսկ զանձս զանձիցէ յոգիսն այսպիսին։ Զի թէ որ զգառն մաղասն ունիցի, նախ ինքն վշտանայ յախտին, որչափ և առաւել որ զգառն մաղձն ունիցին զչարեացն, նախ զիւր միտսն ներկանիցէ դառնութեն։ Եւ յայտ յայնցանէ է՝ զոր զգայութիւնն. զի եթէ զայլս արտմեցուցանէ, որչափ և առաւել զմիտսն՝ որ զայն ծնանիցին։ Որ զնենգութիւնն նիւթէ, նախ զանձն սպանանէ. որ զչուր կոխիցէ, նախ զանձն այրէ. որ զադամանդ հարկանիցէ, նախ ինքեան վնասէ. և որ ընդ խթանի ընդդէմ աքացիցէ, զիւր մարմինն խոցոտիցէ։ Զ.յսպիսի է՝ որ վշտանալն զիտիցէ և տանել առաքինութեամբ, իբրև զադամանդն, և զխթանն, և զչուրն. և որ 'ի մեղանչելն և եթէ խոկասցէ, քան զամ կաւ տկարագոյն զտանի։

։ Յորինակին չ։

Այլ արդ ոչ եթէ չարչարիլն ինչ չար իցէ, այլ տաղտապելն, և չտանել չարչարանաց։ Որչափ ինչ չարչարեցաւ Դաւիթ, և որչափ ինչ չարչարէր Հաւուղ. և արդ տեսցուք, ո՞ զօրագոյն գտաւ, ով երանելի, ով թշուառական և հէք. ոչ ապաքէն Հաւուղ՝ որ 'ի զուրն չարչարէր։ Այլ միտ դիր. խոստացաւ Հաւուղ, թէ սպանանիցէ զայլազգին Դաւիթ, փեսայ 'իւր առնիցէ զնա, և զդուստր իւր տացէ նմա 'ի կնութեան բաղում խնդութիւն։ Սատակեաց զայլազգին, և նա էանց ընդ դաշինսն. և ոչ միայն չտայր, այլ և սպանանել մտաբերէր։ Այլ արդ ո՞ եղև պայծառագոյն. ոչ մինն խեղդէր 'ի տրտմութենէն և 'ի չար դիւէն, և միւսն քան զարեգակն ևս պայծառագոյն էր յաղթութիւնքն, և ընդ ՅՍ զինսամն ուներով։

Դարձեալ և 'ի պարս կանանցն՝ ոչ ապաքէն մինն 'ի խեղդ մտաբերէր առ նախանձուն, և միւսն լուութիւն ամի տանէր, և զամենեսեան առ ինքն գրաւէր, և առ իւր ամիոփէր. քանզի և նա իսկ յորժամ 'ի բուռն անկաւ, խնայեաց։ Դարձեալ ով երանելի էր, կամ ով թշուառական. ո՞ տկարագոյն, կամ ո՞ զօրաւոր. ոչ ապաքէն սա, որ ոչ և յիրաւի 'ի վերայ երթայր. և կարի իսկ նմանագոյնս. զի նա զօրակամս վառեալ, և սա զարդարութի՝ քան զբիւրոց բեւրս[1] զօրակամաց ունէր զօրավիգն 'ի թիկունս։ Ո՞ ասն այնորիկ նենգեալ զուր, և ոչ յիրաւի սպանանել մտաբերէր. քանզի գիտէր զփոքր առաջնոյն, եթէ ոչ չար առնել, այլ չարի տանէն առնէ զօրագոյնս։ Այնպէս և 'ի մարմնիս լինի, և 'ի ծառս[2]։ Իսկ Յակովբ զրկեցաւ 'ի Լաբանայ, և վշտացաւ. և արդ ո՞ զօրագոյն էր. որ 'ի բուռն անկաւ և չիշխեաց հուպ լինել, այլ զահի հարեալ դողայր, թէ որ ա առանց զինուց և զօրաց թուեցաւ նմա ահագին քան զթագաւորս։

Օ՛ի այլովք ևս քան զսոյն մեծամեծօքն տաց[3] զբանիցս օրինակ, դարձեալ 'ի Դաւիթ անդրէն կրթեսս-

[1] Յօրինակին բանդ բիւրոց բիւրս։
[2] Յօրինակին 'ի ծառսս։
[3] Յօրինակին տայ։

ցուք զանս. որ զրկեցաւն՝ և զօրաւոր եղև, զրկեաց յետոյ՝ և տկարագոյն լինէր։ Յորժամ մեղաւն Ա-ւրիայ, փոխեցաւ դարձեալ կարգն, տկարութիւն 'ի մեղանչականն, և զօրութիւնն 'ի զրկեալն։ Վանդի մեռեալ էր, և զտուն նորա աւար հարկանէր. սա թագաւոր էր՝ և կենդանի, և չկարէր ինչ վնասել. և նա զօրական՝ և սպանեալ, և զնամ զսորա վերայ տապալեաց։

Կամիք, զի այլուստ ևս զոր ասեմն արարիցէ յայտնագոյնս։ Վնասեցուք և զարդարսն, որք և վրէժս պահանջեցին։ Մեղանչականքն քան զամենեսին իսկ վատթարագոյնք են, և զի ընդ անձինս մարտնչին՝ ամենեցուն իսկ յայտ է։ Այլ որ խնդրեաց զարդարութիւն վրէժս, և ոչ բեւր չարիս բորբոքեաց, և ընդ բազում վշտօք էարկ զանձն, Դաւթայ զօրավարն. զի նա և պատերազմ անհնարին գումարեաց, և բազում վշտօք վշտացաւ. թերևս ոչ լինէր այնպիսի, թէ իմացեալ էր զգաստանալ։

ԳՈՐԴՈՐԱՊ

Փանիցուք այսուհետև յայնմ մեղաց, և մի արդեամբք և մի բանիւք զրկեսցուք զընկերս։ Զի չասաց, թէ չարախօսեսցես, և ատեան կանգնեսցես, այլ թէ լոկ չարախօսեսցես և առանձինն ևս, սակայն և այնպէս զանհնարին վրէժս տայցես։ Թէպէտ և ստոյգ իցեն՝ զոր խօսիցիսն, և դու ոչ ստոյգ գիտիցես և բամբասիցես, և այնպէս պատիժս կրես։ Զի ոչ ըստ նորա գործոցն, այլ ըստ քում խօսիցն տայ ՅԾ վՃիւ. «'Ի բանից քոց, ասէ, արդարասցիս, և 'ի բանից քոց պարտաւորեսցիս»։

Զլսես, զի և փարիսեցին արդար խօսէր, և զայնպիսի ինչ իրաց՝ որ ամենեցուն յայտ էր՝ ասէր, և ոչ զծածուկս ինչ յայտնեաց. բայց սակայն զանհնարին վրէժս ետ։ Զի թէ զայտնեացն չէ պարտ խօսել, որչափ ևս առաւել զծածուկսն։ Վանդի գոյ դատաւոր յանցաւորին. մի յափշտակեր զպատիւ Միա-

ծնին. քանզի նմա պահի աթոռ դատաստանին։ Եւ յԼ կամիցիս դատ վարել. զոյ ինչ և քեզ ատեան, որ բազում շահս ունի, և չածէ ինչ պատիժս 'ի վերայ։ Կացո՛ 'ի վերայ խղճի մտացդ դատաւոր զիսոր-հուրդդ, և ա՛ծ կացո 'ի միջի զամ յանցանս քո, և քննեա՛ զամ մեղս ոգւոյդ, և պահանջեա՛ ստուգութիւն զհաւաստիսն, և ասասցես՝ թէ զայս ինչ և զայս ընդէր իշխեցեր գործել։ Եւ եթէ յայնմանէ խոս-տեսցէ, ընդ այլոցն պահանջիցես և ասիցես, թէ ո՛չ վասն այդպիսի ինչ իրաց դատեմ զքեզ, և ո՛չ վասն այնորիկ մտեր տալ պատասխանի. և արդ այս անուն չար իցէ, թէ դու. և արդ ընդէր զայս ինչ և զայս յանցեար, տուր պատասխանի. լեր ամբաստան, զքոյսն տես և մի զայլոց։

Եւ ստէպ 'ի յայն հրահանգս մուծանիցես զնա։ Եւ եթէ չկարիցէ տալ պատասխանի, և յապաղիցէ, պրկեա՛, քերեա՛, տանջեա՛ իբրև զաղախին մի վայ-բաղնաց և պոռնկացեալ. և զայն ատեան զօրհնա-պազ ուղղեա՛. և գրեա՛ 'ի գիրս՝ առաջին զգեստն հրե-ղէն, զորդնն թունաւոր, և զայլ ևս տանջանս։ Եւ մի՛ տար այնուհետև հպել նմա 'ի սատանա. և մի՛ տար յանձն առնուլ յանդուգն խօսել, թէ յորժամ նա առ իս գայ, խաբէ և վնասս գործէ։ Եւ դար-ձեալ ասիցես. եթէ դու ո՛չ կամիցիս, ամենայնն 'ա-ւելորդ է։ Եւ եթէ միւսանգամ տայցէ պատասխա-նի՝ եթէ մարմին զգեցեալ եմ, յաշխարհի բնա-կեալ եմ, յերկրի շրջիմ, ասասցես ցնա, թէ այդ ամ բարուրք և պատճառք են. զի և այս անուն՝ մարմին զգեցեալ էր, և յաշխարհի բնակեալ էր, և յերկրի շրջէր, և քաջացաւ։ Եւ դու յորժամ 'ի բարութիւն իցես, և մարմին զգեցեալ՝ առնես զայն, և յորժամ արտում իցես՝ և լսիցես զայս, չառնուս զձեռս 'ի վեր. քանզի ո՛չ եթէ մեռանիցի, թէ հար-կանիցես զնա, այլ 'ի մահուանէ փրկեսցես զնա։ Եւ թէ դարձեալ ասիցէ ցքեզ, այս անուն զայրացոյց զիս, ասասցի՛ր ցնա՝ այլ իշխանութիւն է քեզ չզայրա-նալ, քանզի բազում անգամ կալար իսկ զցասումն։

1 Յորինակին ՝ի։

Լ,ԵԹԷ ասիցէ, գեղեցկութիւն այս մնուան պատ-
բեաց զիս, ասասջիր՝ թէ կարօղ ես յաղթել։ Ա՛ծ 'ի
մէջ զայնոսիկ՝ որք յաղթեցին. ած 'ի մէջ և զառա-
ջին կինն՝ որ ասէր, օձն խաբեաց զիս, և ոչ ազատե-
ցաւ 'ի պատժոցն։

Լ,Ե յորժամ զայս ամ 'ի քնին արկանիցես, մի ոք
ուրեք 'ի մօտ կայցէ, մի ոք աղմկիցէ. այլ որպէս
թագաւորք, զի ընդ սրահակօք նստիցին՝ յորժամ
դատիցին, նոյնպէս և դու փոխանակ սրահակաց
զժամանակն խնդրեա և զպարապութիւն և զտեղի։
Օ՛ի յորժամ յընթրեաց յառնիցես, և յանկողնին
երթալոց ես, յայնժամ յուզեսցես զայն դատաս-
տան. այն ժամանակ 'ի դէպ է, այն տեղի պատշաճ,
մահիճք և սենեակք։ Ա՛յս և մարգարէն իսկ զնոյն
պատուիրէ. «Օ՛ որ ասէք, ասէ, 'ի սիրտս ձեր, յան-
կողնիս ձեր զղջացարուք»։ Լ,Ե ընդ փոքունցն մե-
ծամեծս պահանջեա զպարտսն, զի 'ի մեծամեծսն
բնաւ իսկ երբէք չհպեսցի։

Լ,Ե եթէ զայս առնիցես հանապազօր, համարձա-
կութիւն կայցես առաջի բեմին Ա՛ծի։ Ա՛յսպէս օրբէ-
ցաւ և Պաւղոս. սմին իրի իսկ ասէր, «Ով զանձինս
քննէաք, ապա ոչ դատապարտեաք։ Այնպէս որ
զորդիսն յբստակեալ՝ սրբէր Յովք. զի որ վասն
անյայտիցն պատարագս մատուցանէր, որչափ ևս ա-
ռաւել ընդ յայտնեացն համարս պահանջէր։

Իսկ մեք չառնեմք այնպէս, այլ ամենևին զնորին
հակառակն։ Զև յանկողնին ելեալ՝ և զամ երկրա-
ւորս յեղյեղեմք. ոմանք պիղծ խորհուրդս ընդ
միտս ածեն. և այլք փոխս և հանգանակս և հոգս
մահկանացուս։ Լ,Ե յորժամ դուստր կոյս 'ի տան
ունիցիմք, զգուշութիւն պահեմք. և որ քան զդուստրն
պատուական է մեզ՝ ոգիս մեր, սմա թոյլ տամք ընդ-
վայր պոռնկել և ժանտանալ, բազում խորհուրդս
չարս ընդ միտս ածելով, կամ զագահութիւն ցանկու-
թիւն, կամ զփափկութիւն, կամ զգեղեցիկ մարմնոյ,
կամ զցասմանն, կամ զայլ իրիք 'ի նորին վերայ,
զդուրս բացեալ կոչեմք և ձգեմք, և համարձակ

1 'Ի լուս. «գանձեալ»։

տամք տեղի՝ խառնել ընդ ոգիս։ Եւ զինչ քան զայն հէն և աղաղակ կայցէ։ Որ քան զնա՝ ինչ պատուական է մեզ ոգիքն, յանչափ ընացողաց ծանանկեալ տեսանել՝ և անփոյթ առնել. և այնչափ խարդաւանեալ՝ մինչև յագեսցին և.ս. որում քաւ և մի երբեք ուրեք լինիցի։ Վասն այնորիկ յորժամ քուն հասանիցէ, յայնժամ ևեթ փարատին. մանաւանդ թէ և ոչ յայնժամ իսկ։ Վասնզի երազք և ցնորք զնոյն պատկերս ածեն 'ի վերայ. ուստի և 'ի հասանել տուընջեանն՝ առ այնչափ ցնորից ոգւոցն, 'ի գործ իսկ ցնորիցն բազում անգամ անկանին։

Եւ 'ի բիբս աչացդ և ոչ սակաւ մի փոշի տաս մըտանել, և յոգիսդ այդչափ խաւար չարեաց կուտեալ և անտես առնես։ Եւ արդ երբ կարիցեմք պեղել արտաքս զայնչափ աղբ, զի ցանգ հանապազ մթերեմք. երբ զփուչն խլիցեմք, կամ զսերմանս ցանել։ Ղիցեն ակահ[1], թերևս ամարայնւոյ ժամանակ իսկ այսուհետև եկն եհաս 'ի վերայ, և մեք ոչ վարս հարաք, և ոչ հերկս հերկեցաք. և եթէ յանկարծակի գայցէ մշակն և պատուհասեսցէ, զինչ ասիցեմք, զոր պատասխանի տացուք։ Եթէ զսերմանն որ չետ մեզ։ Այս աւասիկ[2] հանապազ իսկ ցանին։ Եւ եթէ զփուչն որ ոչ խլեաց. սա աւասիկ[3] ցանգ սրեմք զմանկաղն։ Իսկ երկրաւոր ինչ հարկք ձգեսցեն. ընդէր ոչ խաչեցեր զանձն աշխարհի։ Օ՛ի թէ որ զաւանդն դարձոյց՝ չար իցէ, վասն զի ոչ կրկին շահեցաւ, որ զերկոսին իսկ ապականեաց, զինչ լսիցէ։ Ով նա կապեալ հանաւ արտաքս՝ ուրալալ աչաց է և կրձել ատամանց, մեք զոր կիրս կրկիցեմք, որ բազմապատիկ իրք ձգեն զմեզ յառաքինութիւն, հեղգամք և ծուլամք։

Եւ արդ չիցէ՞ քեզ բաւական 'ի յորդորումն։ Ղոտեանիցես, զի ոչինչ է աշխարհս և զի չեն կեանքս ուրուք յայտ, կամ զվաստակս և զբրտունս անցաւոր կենացս։ Վասնզի զառաքինութիւնն աշխատութիւ՝, և զչարիս առանց աշխատութեան իցէ վնասել։ Իսկ

1 Յորինակին «գահ։
2 'Ի լուս. «ահաւասիկ։
3 Յորինակին «ահաւասիկ. եղաք ըստ լուս։

եթէ աստ և անդ աշխատութիւն է, ընդէր ոչ զայն կամիցիս՝ յորում շահքն են. մանաւանդ թէ չիք ինչ աշխատութեան յառաքինութենն։ Որ աշխատութեան կայցէ 'ի ջամբասէն, 'ի սուտն չխօսել, 'ի սուտն չերդնուլ, յընկերն զցասումն չարկանել։ Զ սոցին հակառակն առնել՝ աշխատութեան է, և բազում հոգս բարձեալ բերէ։ Զչ արդ զինչ պատասխանատուութեան կայցէ մեզ, որ ներել թողութեան, թէ զայն ևս չառնիցեմք։ Զչ յայնցանէ յայտ է, զի որ ինչ աշխատութեան իցէ՝ 'ի ծուլութեան և 'ի վատութեան զերծուցանէ զմեզ։ Զ այս ամ զմտաւ ածելով՝ փախիցուք 'ի չարեաց, և ընտրեսցուք զբարիս. զի և մեծաւորացս և հանդերձելոցն հասցուք շնորհքն և մարդասիրութիւն մերոյ Յեսի Քրիստի, ընդ որում հօր և սուրբ հոգւոյն փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն.

ՃԱՌ ՈՒԹՈՒՏԱՍՆԵՐՈՐԴ

«Յայնժամ պատասխանի ետուն ոմանք 'ի դպրացն և 'ի փարիսեցւոցն, և ասեն. վարդապետ՝ կամիմք ինչ նշան 'ի քէն տեսանել։ Նա պատասխանի ետ և ասէ, ազգ չար և շնացող նշան խնդրէ, և նշան մի տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի»։

Արդ կայր ինչ քան զայն անմտութիւն. ոչ միայն ամպարշտութիւն էր, այլ և յոյժ նախանձ և չարութիւն։ Որ յետ այնչափ նշանաց, իբրու թէ չէր ինչ բնաւ լեալ՝ ասէին, կամիմք 'ի քէն նշան ինչ տեսանել։ Նա ընդէր ասէին զայս։ Օ՛ի դարձեալ բիծս ինչ կարկատիցեն։ Քանզի և 'ի բանից պապանձեցոյց զնոսա՝ և մի անգամ և երկիցս և բազում անգամ, և զանազան թեթ լեզուս նոցա լուեցոյց, ապա և 'ի գործս իսկ գային։ Որ և զարմանալով ասէ աւետարանին, եթէ «Յայնժամ պատասխանի ետուն ոմանք 'ի դպրացն նշան խնդրել»։ Յայնժամ. երբ։ Յորժամ խոնարհելն պարտ էր, յորժամ զարմանալն, և սքանչանալ, և տեղի տալ, յայնժամ 'ի չարեացն չդադարէին։

Նա արդ տես, զիա՞րդ մեղմեխանօք և խարդախութիւ՞ն լի էին բանքն։ Կարծէին՝ թէ զեղծուցանել ինչ կարիցեն. վասն այնորիկ մերթ թշնամանէին, և մերթ փաղաքշէին. երբեմն դիւահար կոչէին, և երբեմն վարդապետ. և զերկոսեան 'ի չար կամաց, և հակառակ միմեանց էին բանքն՝ զոր խօսէին։ Վասն այնորիկ և կարի իսկ մրմնջեցուցանէ զնոսա։ Նա յորժամ խստագոյնս ինչ հարցանէին և թշնամանէին, մեղմով տայր պատասխանի. և յորժամ փաղաքշէին, թշնամանօք և կարի սաստկագոյնս. յայտ արարեալ՝ թէ յերկոցունց վերագոյն է։ Օ՛ի և ոչ յայնժամ 'ի ցասումն ինչ դրդէր. և ոչ 'ի փաղաքշանացն մեղկեր։ Նա միտ դիր թշնամանացն. ոչ վայրապար ինչ բամբասք էին, այլ զկերպարանս նոցա

չարութեան ցուցանէ։ Լու առ այն զինչ տայցէ պա-
տասխանի։

«Լազգ չար, ասէ, և նացաղ՝ նշան խնդրէ». և
զոր ասէն՝ այս ինչ է։ Զինչ զարմանք իցեն, եթէ
առ ինև զայսպիսի գործս ցուցանիցէք, որ յանծա-
նօթս թուիմ ձեզ. ուր և առ հարբ այնչափ զիարձ
առեալ զօրութեցն՝ զդոյն գործս ցուցանէիք. թող
զեալ զնա, և առ դէս ընթանայիք. հոմանիս չարս
անձանց ստանայիք. որպէս և Լազեկիել ստէպ նա-
խատէ զնոսա։ Զայս ասելով յայտ արարեալ զինքն
հօր միաբան, և նոցա ոչինչ նոր գործ գործեալ, և
զծածուկս սրտից նոցա յայտնեալ, զի կեղծաւորու-
թեամբ իբրև զթշնամիք հայցէին։ Լմին իբրի իսկ ա-
սէր՝ ազգ չար. քանզի միշտ ապախտաւորք լինէին
ընդ իւրեանց երախտաւորսն, և յորժամ 'ի բարիսն
վայելէին, և-ս չար անարժանք լինէին. որ վերջին իսկ
չարութիւն է։ Շ նացաղս կոչէ, զառաջին և զմծտաւոր
անհաւատութիւն՝ յայտ արարեալ. որով դարձեալ
զանձն ցուցանէ զուգական հօր, թէ և յորժամ որք
նմա չհաւատայցեն՝ ընդ շունս համարեալ են։ Լու
իբրև թշնամանեաց, ասա և 'ի խնդրուածոցն և-ս
զրկէ։

«Լչան, ասէ, խնդրէ. և նշան ոչ տացի նմա,
բայց նշանն Յովնանու մարգարէի»։ Լնդէն վաղվա-
զակի զիւրոյ զյարութիւն ձառս յառաջագոյն գուշա-
կէ, և հաւատալի առնէ զնոցն յօրինակէն։ Լու արդ
ջտուաւ, ասեն, արդեւք նմա նշան։ Ո՛չ տուաւ այնպի-
սի՝ զոր խնդրէիքն։ Ո՛չ զնոսա ինչ յորդորելով առ-
նէր զնշանսն, քանզի գիտէր՝ եթէ 'ի վախճան հա-
սեալ էին. այլ զի զայլս ածիցէ յուղղութիւն. կամ
եթէ զայն իսկ պատշաճ էր ասել. և կամ այնպիսի
ինչ նշանս ոչ առնուցուն։ Դայց տուաւ նոցա նշան,
յորժամ տանջանօքն իւրեանց ծանեան զնոսա զօ-
րութիւն։ Լյնուհետև սպառնալով իսկ զնոցն ակն-
արկէ, որպէս զի ասիցէ. բիւրուց բեւրս երախտիս
ցուցի ձեզ, և ոչ մի 'ի նոցանէ յորդորեաց զձեզ, և
չկամեցայք պագանել երկիր իմում զօրուէս։ Զայն-
ժամ ծանիջիք զզօրութիւն իմ, յորժամ քաղաքն
Տիմն 'ի վեր յատակիցի, և պարիսպքն բարձրաշէնք

քակեալ կործանիցին. յորժամ զտաճարն աւերակ տեսանիցէք, և յառաջին քաղաքաւորութեանն և զաստուածեանն անկանիջիք, և սովեալք և փախստականք ընդ ամ տեղիս թաքթափիցիք։

Եւ այս ամ յետ խաչելութեանն լինէր։ Այս ամ անցք փոխանակ մեծամեծ նշանաց անցանիցեն ընդ ձեզ. և այն իսկ է մեծ նշան, զի անշարժ պատիժքն 'ի վերայ մնայցեն նոցա. որք 'ի բազումն ձեռնամուխս լինիցին, և այնպիսի ինչ չարչարանս ոչ կրեցին, և յորժամ մի վայրի պատժոցն տուեալ ապա բիւրապատիկ հնարեցին՝ և չկարեցին 'ի պատժոցն ազատանալ։ Եւ զայն չէ եւս ասէ, այլ միւրում ժամանակին թողու կատարել առ նոսա հաւատեաւ։ Այլ առ ժամանակն դյարութեանն ձառն 'ի խոկ [1] արկեալ կրթէր. զի 'ի միտ առնուցուն՝ յորժամ տեսանիցեն նորա կրեալ յետոյ զայնպիսի չարչարանս։

«Օ որ օրինակ էր, ասէ, Յոնանն 'ի փոր ձկանն զերիս տիւս և զերիս գիշերս, նոյնպէս եղիցի որդի մարդոյ 'ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գիշերս»։ Եւ յայտնի ինչ ոչ ասաց՝ թէ յարիցէ, քանզի և ծաղր էս առնէին. բայց ակնարկեաց զնոսն, զի նոցա հաւատացուսցէ՝ եթէ յառաջագոյն գիտէր։ Եւ զի նոքա 'ի նմանէ յառաջագոյն գիտէին, ասէին ցՊիղատոս. «Մոլորեցուցիչն այն ասէր՝ թէ յետ երից աւուրց յառնելոց եմ»։ Մեծապէտ և աշակերտքն այնմ չէին ինչ տեղեակ, զի տխմարագոյնք քան զնոսա էին զառաջինն. վասն որոյ և անձամբ իսկ դատապարտեալ լինէին հրեայքն։

Եւ դու տես, զիարդ ակնարկելով զնոսն դնէ հաւաստեաւ. ոչ ասաց՝ թէ յերկրի, այլ եթէ 'ի սիրտ երկրի. զի և զգերեզմանէն գուշակիցէ. և մի ոք առաջք ինչ իրրև զկարծիս համարիցի զնրան. զերիս աւուրս յայն սակս թոյլ ետ մարմնոյն կալ 'ի գերեզմանին, զի հաւատացուսցէ՝ թէ արդարև մեռաւ։ Ոչ միայն խաչիւն զնոսն հաստատէր, և ոչ ամենեցուն յանդիման տեսանելով, այլ և ժամանակաւ աւուրցն. զի ամենեքին իսկ ամ ժամանակն յետոյ լի-

1 'Ի լուս. Դ ։Բ։

նիցի վկայ յարութեան։ Քանզի խաչին՝ թէ ոչ այն-
պիսի բազում վկայութիւք էին լեալ նշանաւք, թերեւս
երկմտութեան ինչ համարէր. և եթէ մահուն չէր լեալ
հաւատալի, ապա և յարութեան ոչ ոք հաւատայր։
Զ ամն այնորիկ և նշան իսկ կոչէ զնա. զի թէ չէր
խաչեալ, և ոչ նշան տուեալ լինէր. վասն այնորիկ և
զիւր օրինակն 'ի մէջ բերէ, զի լինիցի հաւատարիմ
Ճշմարտութեան։

Լոյս արդ աղէ՝ ասա. ցնորք ինչ առ աչօք էր Յովհան-
'ի փոր վիշապ ճկանն. այլ չունիս ինչ առ այս տալ
պատասխանի. ապա և ոչ Քա 'ի սիրտ երկրի կեր-
պարանաւք։ Օ՛ի չէ ինչ 'ի դէպ, եթէ օրինակն Ճշ-
մարտութիւն իցէ, և Ճշմարտութիւնն կերպարանաւք։
Զ ամն այնորիկ իսկ ամ ուրեք զմահն նորա պատ-
մեմք, և 'ի խորհրդականս, և 'ի մկրտութեանէ, և յայլսն
ամենեսեան։ Լորին աղագաւ և Պաւղոս համարձա-
կաձայն բարբառով աղաղակէր, թէ «Մնամ մի լինցի պար-
ծել, բայց միայն խաչիւն Տն մերոյ Յսի Քսի»։ Լուս-
տի յայտ իսկ է, թէ սատանայի ծնունդք են՝ որք ըզ-
Զ՝արկիրոնի ախտն ջերանին, զի զայն եղծանել հնա-
րին. վասն այնորիկ ազգի ազգի գործս գործեաց Քա՝
զի մի եղծանիցի. և գունակս գունակս փութացաւ
թշնամին առ յեղծանել, զխաչէն ասեմ և զչարչա-
բանացն։ Զ ամն այնորիկ իսկ և 'ի միւսում վայրի
ասէ, եթէ «Քակեցէք զտաճարս զայս, և յերիր
աւուր կանգնեցից զսա». և դարձեալ՝ եթէ «Լուկես-
ցեն աւուրքդ, յորժամ բարձցի 'ի նոցանէ փեսայն».
և ասա ասէ, թէ «Ոչ ասացի նմա նշան, բայց նշանն
Յովհաննու». և զի վասն նոցա էր չարչարելոց՝ յայտ
առնէ, և զի նոքա չէին ինչ օգտելոց. սակայն յե-
տոյ գուշակեաց. թէպէտ և զայն ամ յառաջագոյն
գիտէր, այլ մեռաւ։

Քանզի այնպիսի իմն կարևոր էր խնամակալու-
թիւն. զի մի համարիցիս՝ թէ յետոյ այնպիսի լինիցի
հրեիցն, որպէս առ նինուէացւովքն, և դառնայցեն՝
որպէս և նոքայն. զոր օրինակ նա զշարժելաւ քաղաքն
կանգնեաց, զխուժանն և զվայրենիս դարձոյց, նոյն-
պէս և սոքա ինչ յետոյ յետ յարութեանն զղջանայ-
ցեն. լուր զիարդ ևեթ զնորին հակառակն գուշակէ,

եթէ ոչինչ են վայելելոց 'ի նորա երախտաւորութեան, այլ անհնարին պատիժս կրելոց են։ Եւ զայն յաջորդօքն գուշակէ դիւրին օրինակաւ։ Խայց առ ժամանակն՝ ընդ չարչարանացն, զոր կրելոց էին, տայր իրաւունս, յայտ արարեալ՝ թէ յիրաւի կրելոց են զպատիժսն. բայց զվիշտն և զաւերուածսն 'ի դիւրին օրինակէ կամի հաստատել։

Եւ ասա ցուցանէ՝ թէ յիրաւի են կրելոց զնմա չարչարանս. որպէս և 'ի հնումն առնէր։ Զի յորժամ զՍոդոմն կամէր կործանել, նախ իրաւունս տայր Աբրահամու՝ զանօրէնութիւնն ցուցանելով, և զառաքինութեանն զչքաւորութիւն, վասն որոյ կործանելոց էր. զի ոչ տասն անգամ արդարք գտան յայնչափ քաղաքս, որ կամէին զգաստութիւն կալ։ Եւ Ղոտայ նոյնպէս ցուցանէր զօտարացն ատելուն, և զհիւրոցն անմեծարուն, և զանպատշաճ ցանկութիւնս. և ասա ածէր զբարկութիւն հրոյն։ Եւ առ ջրհեղեղն զսոյն արար. 'ի գործոց անտի իսկ տայր զվկայութիւն և իրաւունս։ Զոյի։ Սմին նմանագոյնս և Եզեկիէլն անդրէն 'ի Խաբիլոնի ցուցանէր՝ որ ինչ չարիք յԵրուսաղէմ գործէին։ Եւ Երեմիայի զիրաւունս ցուցանելով ասէր, «Մի կար յաղօթս 'ի վերայ ազգիդ այդորիկ. ոչ տեսանես, ասէ, զինչ գործեն»։ և ամ ուրեք ըստ նմին օրինակի առնէ։ Որպէս և ասա իսկ ասէ. «Զբ նինուէացիք յարիցեն ոսոխ ընդ ազգիս ընդ այսմիկ, և դատապարտեսցեն զսա, զի ապաշխարեցին 'ի քարոզութիւնն Յովնանու, և ասա առաւել քան զՅովնան է»։

Զի նա ծառայ էր, ասէ, և ես որ եմ. նա 'ի կիսաէն էլ, և ես 'ի մահուանէ յարեայ. նա կործանումն քարոզէր, և ես զարքայութիւնն եկեալ աւետարանեմ. նմա առանց նշանի հաւատացին, և ես բազում նշանս ցուցի, և ոչ ոք հաւատաց. նորա աւելի քան զսպառնալեացն բանս ինչ ոչ լուան, և ես զամենայն զգաստութեան հառս յուզեցի. նա իբրև զոր պատաւոր առեալ հրամանն չոգաւ, և ես իբրև զիշխան և զամենեցուն որ եկի. և ոչ սպառնալեօք և ոչ վրէժս պահանջելով, այլ թողութիւն բերելով և շնորհս ազատեցուցիչս. նոքա խուժք և տխմարք։

և սոքա ընդ բազում մարդարէս մնեալք։ Զնմանէ
ոչ ոք կարապետեաց. զինէն ամենեքեան իսկ մարգա-
բէքն, և արդիւնքն բանիցն գոսան հանգուցեալքք.
նա փախստեայ լեալ՝ կամէր ապրել, զի մի ծաղր
ինչ լինիցի, և ես գիտէի իսկ եթէ 'ի ծաղր և 'ի ձա-
ղանս լինելոց եմ, նա և 'ի խաչ ելանել եկի մոա-
դեւրս. նա և ոչ նախատինս ինչ առնոյր յանձն
կրել վասն փրկելոցն, և ես զմահ ևս յանձին կալայ,
և այնպիսի մահ՝ որ քան զՅամ մահս առականաց էր.
և յետ այնր ՅԱմի և զայլս ևս առաքեմ վասն նոցա
փրկութեան. նա տարաշխարհիկ մի, և օտար և անծա-
նօթ էր քաղաքին, և ես առ ազգականս ըստ մարմնոյս
և 'ի նոցունց նախնեաց. և այլ ևս բազում ինչ
ոք գոսանէ, եթէ զՅամ նմանագոյնս 'ի մի վայր կու-
տիցէ։

Այլ զայս ՅամՅ չՅամարի բաւական, այլ միւս ևս
առակ յաւելու։ «Տիկինն հարաւոյ յարիցէ 'ի դա-
տաստանի ոսոխ ընդ ազգիս ընդ այսմիկ, և դատա-
պարտեսցէ զսա. զի եկն 'ի ծագաց երկրի լսել զի-
մաստութենն Սողոմմոնի. և ասա առասիկ առաւել
քան զՍողոմմոն է»։ Այս քան զառաջինն ևս առա-
ւել է. զի Յովհան առ նոսա չոգաւ. և տիկինն հա-
բաւոյ ոչ այնմ ինչ ակնուներ՝ թէ Սողոմմոն առ նա
երթիցէ, այլ ինքն առ նա չոգաւ. և այն զի կին
մարդ և խուժադուժ ևս, և այլազգի, և կարի իսկ
հեռաւոր. որում ոչ սպառնալիք ինչ 'ի վերայ կայ-
ին և ոչ բազում կասկած, այլ վասն տենջանաց բա-
նիցն միայն իմաստնոյ։ «Այհաւասիկ, ասէ, ասա ևս
առաւել քան զՍողոմմոն է»։ Ընդ կին առ թագա-
ւորն եկն, և ասա նորն իսկ զլեսովին. նա 'ի ծագաց
երկրի յարեաւ, և ես ընդ քաղաքս և ընդ գեօղս
շրջիմ։ Սողոմոն վասն ծառոց և փայտից խօսէր, որ
ոչինչ օգուտ գործէին եկեղեցոյն. և ես զանձառն իրաց
և զահպին խորհրդոց։

Այլ իբրև դատապարտեաց զնոսա, և եցոյց յա-
ՅախագոյՅս յիրացն՝ որ շուրջ կային՝ առանց ներբ-
լոյ և թողութեան զյանցուցեալսն. և այն՝ 'ի նոցա ան-
հնազանդութեանէ, և ոչ 'ի վարդապետին ինչ տկարու-
թենէ. և զայս այլովք բազմօք, և նիհանեցուովքն,

և հարաւային տիկնաւն եցոյց. ապա և զպատիժն՝ որ հասանելոց էին նոցա՝ յայտնէ։ Թէոպէտ և առաւել ասէ, սակայն յայտ առնէ՝ թէ գալոց էին, և բաղում արհաւիրս արկանէ պատմութեամբն։

«Յորժամ, ասէ, ելանէ այս սիղծ 'ի մարդոյ, երթայ շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ, և ոչ գտանէ. ապա ասէ, դարձայց 'ի տունն իմ ուստի ելին. և գայ գտանէ պարապորդ՝ աւէլ ածեալ և մաքրեալ։ Յայնժամ երթայ և առնու ընդ իւր եւթն ևս այլ այսս՝ չար քան զինքն, և գայ բնակէ անդ. և առնի մարդոյն այնմիկ վերջինն չար քան զառաջինն։ Այնպէս եղիցի ազգիս այսմիկ»։ Այս աստ յայտ առնէ, եթէ ոչ յայնմ աշխարհի միայն, այլ և աստէն իսկ կրելոց են զանհնարին պատիժս։ Այս քանզի ասաց, եթէ «Արք Նինուէացիք յարիցեն 'ի դատաստան, և դատապարտեսցեն զազգս զայս». զի մի ժամանակին յամենայնի՝ արհամարհիցեն, և 'ի ծուլութիս հատանիցին, աստէն իսկ ածէ 'ի վերայ նոցա տանջանս։ Որպէս և մարգարէն Եվսէէ ասէր սպառնալով, եթէ «Զոլիցին իբրև զմարգարէ մի յիմար, և իբրև զայր մի այսակիր». այս ինքն իբրև զմոլիս ինչ յանզգայեալս յայսոց չարաց էին սուտ մարգարէքն. մարգարէ յիմար աստ զսուտ մարգարէսն կոչէ, որպիսի ինչ մոլիքն և խղճքն իցեն։

Զոսոյն յայտ արարեալ Յովի՝ ասէր, եթէ «Զերջինն քան զառաջինն ևս չար լինիցի նոցա»։ Ցեսա՛ նեն, զիարդ ամ ուստեք յորդորեալ խունէ զնոսա՝ միտ դնել բանիցն ասացելոց, և զգուշանալ 'ի մեղաւորացն և 'ի հանդերձելոցն, և 'ի հաճոյիցն՝ որք զլաւութենն ցուցին, զնինուէացւոցն ասեմ, և զհաւային տիկնոջէն, և 'ի դիմադարձացն՝ 'ի տիւրացւոցն և սոդոմացւոցն։ Որպէս և մարգարէքն ասէին օրինակ զորդիսն Աբաքարայ, և զՀարսն՝ որ ոչ մոռանայցէ զզարդ իւր և զանջգեղ կամար զարդուն իւրոյ, և զեղն՝ որ Ճանաչիցէ զստացիչ իւր, և էշ զմուր տէն իւրոյ։ Այնպէս և աստ յորժամ 'ի համեմատութենէն արար յայտ զնոցա անհնազանդութիւն, ապա և զպատժոցն Ճառէ։

Զոր օրինակ, ասէ, դիւահարք բուժիցին յայ-

տէն, և 'ի ծուլութիւնս հատանիցին, եւ չար ձգէն յանձինս զանզգայութիւն, նոյնպէս և ձեզ լինիցի։ Վասզի զառաջինն դիւ իսկ լկեալ էր զձեզ, մինչ կռոցն երկիր պագանէիք, և զորդիս ձեր զոհս առնէիք դիւաց. առ որս կարի իսկ յաճախէիք զմնալութիւն. սակայն ոչ թողի և ոչ ընդ վայր հարի զձեզ. այլ հանի զդևն մարգարէիւքն, և անձամբ իսկ եկեալ կամեցայ եւս աւելի սրբել զձեզ. և քանզի ոչ կամեցայք անսալ, այլ անդրէն 'ի նոյն չարիս զառածայք։

Վասն զմարգարէսն կոտորել՝ եւս անօրէն գործ այն էր, զի 'ի նա իսկ յանդգնէին ձեռնամուխս լինել. վասն այնորիկ եւս անհնարին քան զառաջինսն կրեցին. քան զԱբիլովնին, և զԱգիպտոսին, և զԷնոտիոքայ զառաջնոյ օրինակի։ Վասն զամ որ ինչ յաւաղ կրեցին զչարչարանս, այն անհնարին չար էր՝ որ առ Տիտոսիւ և Ադրիանոսիւ անցք անցին ընդ նոսա։ Ամն որոյ և ասէ իսկ, եթէ «Աղիցի նեղութիւն մեծ, որպէս զի չիցէ լեալ երբէք, և մի այլ լինիցի»։ Աւ ոչ զայս միայն զուշակէ օրինակն, այլ և յայլ իսկ առաքինութեանցն թափուր մնայցեն, և դիւացն ազդեցութեանցն լինիցին ընդ ձեռամբ այժմ քան յայնժամ։ Զի յառաջին ժամանակսն թէպէտ և մեղանչէին, սակայն գոյին 'ի նոսա՝ որ ուղղութիւս ինչ առնէին. և այ խնամքն 'ի վերայ կային, և հոգւոյն ընտրեալքն դարմանիչք ուղղէին զամ իրս նոցա և կատարէին։ Աւ այժմ, ասէ, յայնպիսի խնամոյ թափուր գտանիցին ամենեքին. և առաքինութեանցն անօգուտութիւնք լինիցին, և բազում նեղութիւնք 'ի վերայ յառնիցեն, և դիւացն եւս ազդեցութիւնք բռնազոյնք լինիցին։

Աւ գիտէք իսկ, զի առ մերով ազգաւս՝ յորժամ քան զամենեսեսան անցոյց մոլեալ ամպարշտութեամբ Յուլիանոս կայսր, զիարդ զանձինս ընդ կռապարիշտս համարեցան հրեայք, 'ի նոսա հարեալք՝ զնոցա անօրէնս յանձն առնուին։ Զի յայտնի լինիցի, թէ և այժմ մինչ կարծեցուցանեն փոքր մի ցածուցեալ զանձինս, առ ահի թագաւորաց քրիստոնէից կերպաւորանին։ Աթէ յայնմանէ 'ի բաց էր, եւս չար քան զա-

առաջինն յանդգնէին։ Օ՛ի և այժմ ևս անօրէն գոր-
ծովք անցանեն քան զառաջինն. կախարդութիւն,
մինչեւնայիւք, պղծութիւնք, և այլ պէսպէս չարեաք։
Եւ թէպէտ և այսպիսի ամենամուղ սանձք՝ ի բերան
կայցեն, սակայն բազում անգամ անսաստեցին, և
թագաւորաց դիմադարձ կացին, և ամենևին իսկ
անկանէին՝ ի թշուառութիւն։

Եւ արդ՞ուր իցեն՝ որ զնշանսն խնդրիցեն. լուի-
ցեն, զի հնազանդութիւն պէտք են և հպատակ բա-
ղոյից. և եթէ այն չիցէ, չեն օգուտ նշանքն։ Հա-
ւանիկ և նենուէացիքն առանց նշանի հաւատացին.
և նոքա յետ այնչափ նշանաց՝ ևս չար կործանեցան
յանօրէնութիւն, և անչափ դիւաց պատրաստեցին
յանձինս բնակութի, և ազգի ազգի նեղութիւս ածին
զանձամբ։ Եւ մանաւանդ յիրաւի իսկ. յորժամ
մի անգամ աղատանայ ոք՝ ի չարեաց՝ և ոչ ցածնու-
ցու, ևս յանհնարին դժնդակութիւս մատնի քան զա-
ռաջինն։ Այ՝ այնորիկ իսկ ասաց, եթէ «Մի՛չ դտանէ
հանգիստ», զի ցուցցէ՝ թէ՝ ի հարկէ կրիցեն պատիժս.
քանզի և այնպիսի իսկ է դիւացն վնասակարութիւն։
Եւ յերկոցունց յայսցանէ պարտ էր նոցա ցածնուլ.
և յառաջին չարչարանացն, և զի յետոյ ազատեցան
յայնմանէ. մանաւանդ զի և երկրորդ իսկ առընթեր
կայցեն սպառնալիք, եթէ «Յետինն ևս չար լինիցի
քան զառաջինն». այլ ոչ միով իւիք՝ ի սոցանէ եղէն
աղնուագոյնք։

ԳՈՐԴՈՐԱԿ

Եւ զայս ոչ եթէ առ նոսա միայն, այլ և առ
մեզ՝ ի դէպ ժամանակի է ասել։ Յորժամ լուսաւո-
ր իցիմք յաւազանէն, և յառաջին չարեացն զերծա-
նիցիմք, և դարձեալ՝ ի նոյն յոռութիւնս դառնայ-
ցեմք, ևս չար այնուհետև՝ ի տանջանս մատնիցիմք։
Այ՝ ամն այսորիկ և անդամալուծին պատուիրեր Քրիստ.
«Հաւատիկ ողջացար, այլ մի՛ ևս մեղանչիցես, զի
մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ»։ Եւ զայս առ այր մի՝
որոյ երեսուն և ութ ամ էր հիւանդութեանն։ Եւ
քան զայն, ասէն, զի՞նչ այլ ինչ չար հասանէր նմա։

Կարի իսկ և անհնարին չար։ Եւ մի լեցի յայնչափ 'ի տանջանս մտանել մեզ՝ որչափ ինչ չարչարիլ կա-
բիցեմք. զի չսպառին տանջանքն առ 'ի յոյ. ըստ
բազում ողորմութեանն նորա և բարկութեանն է։ Որով
Երուսաղեմի մեղադիր լինեալ Եզեկիելիս. «Տեսի,
ասէ, զքեզ թաթաւեալ յարեանն, և լուացի և
օծի. և եղև քեզ անուն 'ի գեղեցկութեանդ քում. և
տարածեցեր զպոռնկութիւնս քո առ սահմանակիցսն
քո». վասն որոյ և կարի ինն անհնարին սպառնայր
մեղուցելոցն։

Եւ արդ մի միայն զտանջանսն հաշուիցես, այլ և
զանբաւ երկայնմտութիւնն զմտաւ ածջիր. բազում
անգամ ընդ նոսն չարիս անցանեմք, և երկայնամիտ
լինի։ Եւ յայն ինչ ապաստան մի լինել, այլ երկի-
ցուք. քանզի և Փարաւոնն եթէ առաջին սպառ-
նալեօքն խրատեալ էր, ոչ էս առնոյր զփորձ վերջ-
նոցն, և ոչ յետ այնորիկ միանգամայն ընկղմէր զ-
ըօքն 'ի ծովուն։ Օ այս ասեմ՝ զի բազումք այժմ
էն նման Փարաւոնի. և ասեն, եթէ չճանաչեմք
զաած, և 'ի կաւ և յաղիւսարկի մաշեն զպատժա-
պարտս։ Քանզի իցեն, որոց ՝ուծ պատուիրէ՝ նե-
րելով առնել զսպառնալսն. և նոքա և ոչ յաշխա-
տութենէն անսան դիւրութի առնել։ Դա և չէր իսկ
անցանել մեզ այժմ ընդ ծով կարմիր, այլ և ընդ
հրեղէն համատարած ծովն. ոչ այնչափ միայն այն է,
այլ էս մեծ և անհնարին և դաղանագոյն։ Հրեղէն
ծով, հրեղէն ալիք, նոր իմն և հնաշխարհիկ. ահագին
անդունդք, սաստկացեալ բոցոյն այսր անդր արշա-
ւեալ, յամենայն կողմանս տարածեալ։ Ցնմանէ ինչ
այնմ սաստկութենն՝ ոչ դաղանաց դաղանութի, ոչ
խարամանեացն արհաւիրք։ Օ ի թէ երևելի հուրս,
և նիւթական բոց իբրև զգաղան ինչ սաստիկ 'ի վե-
րայ դիմեալ յարձակէր այնոցիկ՝ որք արտաքոյ հնո-
ցին նստէին, զինչ զինչ կենդանի հուրն գործիցէ։

Բ.դդ լուարուք վասն աւուրն 'ի մարգարէիցն, որ
ասէին՝ եթէ «Օր ՝ան առանց բժշկութեան է, և
սրտմտութիւն և բարկութիւն»։ Եւ չէր որ 'ի թի-
կանց կայցէ, և ոչ այն որ ապրեցուցանիցէ. և չհա-
սանիցէ տեսանել զԲ՝ի զգօն և զհանդարտ երեսն.

այլ զոր օրինակ 'ի քրէականն՝ յերկաթահատ կամ 'ի պղնձագործ մետալն՝ մատնիցին 'ի ձեռս անողորմ գործավարաց, ոչ զոք յընտանեաց տեսանիցեն, այլ միայն զգործավարսն, սոյնպէս և անդ։ Այլ ոչ այսչափ միայն, այլ և ես խստագոյնս։ զի ասա բազում անգամ ժամանակ լինի անդրէն 'ի տուն դառնալոյ, յորժամ ըստ բարեխօսութեանէ ուրուք հրաման տայցեն թագաւորքն արձակել. իսկ անդ չիք ինչ հնար թողութեանէ, այլ հանապազ խորովիցին իբրև 'ի տապոյ տապակի. և յայնպիսի ցաւս լինիցին, զոր և պատմել անգամ դժուարագոյն է։ Այնթէ զաստի հրոյս կակիծ չկարէ զոք բանիւք պատմել, որչափ ևս առաւել զայնր հրոյ. և ասա 'ի սակաւ մի ժամանակ խարշատի և անցանէ, և անդ միշտ այրի, և ոչ ծախի այրեցեալն։

Այս արդ զինչ գործեսցուք անդր. քանզի և զանձնէ ասեմ զայս։ Այս դու, ասէ, վարդապետդ զանձնէ՞ ասիցես զայդ. չէ ինչ ինձ փոյթ այսուհետև. և զինչ զարմանք իցեն՝ եթէ ես տանջիցիմ։ Մի աղաչեմ, մի զոք զայն մխիթարութիւն խնդրիցէ. քանզի չէ ինչ այն սփոփութեան։ Բայց աղէ՞ եկ ասա դու ցիս. ոչ անմարմին զօրութեանէ էր բանսարկուն. ոչ լաւագոյն քան զմարդիկ, այլ սակայն անկաւ. և արդ իցէ՞ զոք որ 'ի նորա անկանելոյն մխիթարութեանէ ինչ առնուցու. և ոչ երբէք։ Իսկ որ Յոգիպատոսն էին ամենեքեան ոչ ապաքէն զայնոսիկ՝ որ յիշխանութեան էին, տեսանէին պատժեալս, և իւրաքանչիւր սգով զգածեալ։ Մինթէ սփոփեցան ինչ անտի և մխիթարեցան. և ոչ երբէք. և յայտ անտի է՝ զոր յետոյն արարին. իբրև 'ի բոցոյ ինչ տապնապեալք կուտեցան 'ի վերայ թագաւորին, և ստիպէին հանել զազգն եբրայեցւոց։

Զանզի և ցուրտ էն այնպիսի բանք, կարծէին՝ եթէ մխիթարութիւն ինչ բերիցէ ընդ Ամի տանջել, ասէին՝ եթէ որպէս ամենեքեան՝ և ես. զինչ օգուտ իցէ զայն ասել 'ի գեհենին։ Օ մտաւ ած զայնոսիկ՝ զոր յոտիցն ցաւս զրաւեալ իցեն. յորժամ 'ի սաստիկ խեթոյն տանջիցին, թեպետ և զբազումն ցուցանիցեն որ ևս չար քան զնոսա յախտին իցեն, բնաւ

և զմտաւ չածէն. քանզի զայրուցք ցաւոցն չտան պարապել մտացն առ 'ի զայլս ածելոյ զմտաւ, և մխիթարութեան գտանել։ Վասն այսուհետև սուտ յուսով մանսիցիմք. զի մխիթարութիւն առնուլ յայլոց վշտաց՝ 'ի չափով ինչ ցաւոց է. իսկ յորժամ աւելի ինչ անցանիցեն տանջանքն, ամ աղվաւ լի իցէ 'ի նեղբոյ, և անձինն ևս չզգայցէ այնուհետև զգիքն, ուստի շահիցի մխիթարութիւն. որպէս զի ծաղու են ամ այնպիսի բանք, և անմիտ մանկտուց առասպելք։ Օ այդ զոր ասեսդ՝ 'ի տրտմութեան դիպի, և 'ի չափով տրտմութեան, յորժամ լսիցեմք եթէ այս անուն և այն անուն զնոյն վիշտս վշտացան. և է զի 'ի տրտմութեան ոչ նոյնպէս։ Զոմ անդ ոչ նոյնպէս ազդիցէ, որչափ ևս առաւել 'ի ցաւսն և յանհնարին խիթան, զոր կրէել առատանցն յայտ առնէ։

Այլ զիտեմ, զի ծանր թուին ձեզ, և տրտմեցուցանեմ զձեզ այսպիսի բանիւք։ Այլ զի զործիցեմք. քանզի և կամի իսկ ոչ զայսպիսի ինչ իսկ ասել, այլ զանձին և զձեր առաքինութեան 'ի միասին տեսանել։ Այլ քանզի բազումք 'ի մեզ եմք, և ո՞ իսկ տայր ինձ՝ եթէ ստոյգ կարէի տրտմեցուցանել զձեզ, և կսկծեցուցանեմ զվիտս լսողացդ. թերևս յայնժամ հանգչիցի։ Այլ այժմ և կասկածեմ իսկ, եթէ զուցէ ոմանք և արհամարհիցեն ևս զբանս, և մեծամեծ տանջանք վասն ծուլութեան ունկնդրութեան լինիցին։ Զանզի ոչ զնոն ուրուք սպառնալիս լուեալ 'ի ծառայակցացն՝ արհամարհիցէ ոք, թէ առանց պատժոյ ինչ վնարիցի նման որ ըմբոստացաւն, այլ և այն իսկ նման մեծամեծ պատժոյ պատձառք լինիցին։ Զո՞ որոյ աղաչեմ ստրջացուսցուք զանձինս, յորժամ լսիցեմք բանս զգեհենեաց. քանզի և չեն իսկ ախորժելի բանքն, թոյլ թէ և իրքն իսկ որ դառնութեան են։

Այլ զիարդ, ասիցեն, ախորժելի է զգեհենեաց լսել։ Այլ արդ քանզի դժկամակութեամբ է 'ի գեհենն արկանել, մերժէ զայնս՝ որ ծանր բանքն թուիցին. և նախ քան զայս այլ հեշտութիւս 'ի ներքս արկանել։ Զանա զի ժողովէ զոգիս մեր, և երկիւղածագոյնս գործէ, և վերացուցանէ զխորհուրդս, և զչար ցանկութեանցն մերժէ զպաշարումն, և բժշկարան իրքն լինին։ Զո՞

որոյ հանդերձ տանջանօքն թոյլ տուք ինձ և զամենայն ասել. զի որպէս զՀրեայսն նինուէացիք դատապարտեն, նոյնպէս և զմեզ բաղումք դատապարտեն յայնցանէ՝ որք այժմ խոնարհագոյնք թուին։

Օ մնաւ ածցուք այսուհետև, փրկափ ծաղր, քանի պարսաւանք։ Լամասցուք և արկցուք և այժմ սկիզբն ինչ ապաշխարութեան. առ իմ անձն ասեմ զայս, և նախ ինձ խրատ տամ. մի որ բարկասցի իբրև զդատապարտեալ։ Մխեսցուք 'ի նեղ ձանապարհն. մինչև ցերբ 'ի փափկութի, մինչև ցերբ հանգիստ։ Զլցեմք յագեալ ծուլութեամբ և ծաղու և յապաղելով։ Ոչ նոյնք ցանգ լինին, սեղանն և յագեցութիւնն, և ազգի ազգի խորտիկք, և ինչք և ստացուածք և շինուածք. և վախճան նոցա զինչ իցէ. մահ և աճիւն և մոխիր և շիրիմք և որդունք։

Յուցցուք այսուհետև և նոր ինչ կեանս. արասցուք զերկիրս երկինք. ասասէն ցուցցուք հեթանոսաց՝ թէ յորպիսի բարութեանց վրիպեալ են։ Յորժամ զմեզ 'ի բարւոք վարս տեսանիցեն, զարքայութեան երկնից իսկ զերեսս տեսանեն։ Յորժամ ցածս տեսանիցեն, և սուրբ 'ի բարկութենէ, ազատս 'ի չար ցանկութենէ, 'ի նախանձուէ և յագահութենէ, և զայլ ամ իրս ուղղեալ, ասեն՝ եթէ ասասէն իսկ հրեշտակք եղեն քրիստոնեայքն, իսկ յետ աստի անդր երթալոյն զինչ լինիցին։ Լաստ՝ ուր օտարքս են այսպէս պայծառացան. յորժամ զիւրեանց աշխարհն առնուցուն, որպիսիք ոք լինիցին։ Լու այնպէս նոքա լաւք լինիցին, և բանն ածպաշտութեանն տարածանիցի, ոչ նուազագոյն քան զառաքելովքն. զի եթէ նոքա երկոտասանք էին, և զողջոյն քաղաքս և զաշխարհս խրատեցին, լեալ վարդապետք դարման տալոյ կենաց մարդկան, զմնաւ ած՝ թէ մերս որչափ սփռեսցի։ Չանգի ոչ այնպէս հաւանեցուցանէ զՀեթանոսս՝ մեռեալս յարուցանել, որպէս զմարդ ըզգաստացեալ։ Օ ի այն զարմացուցանէ, և այս շահս գործէ. այն եղև և էանց, և այս կայ և մնայ, և հանապազ գործէ զոգիս։

Դարմանեսցուք այսուհետև զանձինս, զի և զնոսա շահեսցուք։ Զպատուիրեմ ինչ ծանուցս. չա-

սեմ եթէ մի ամուսնանար. չասեմ եթէ թող զքա-
զաքս, 'ի բաց կաց յաշխարհական իրաց։ Բ. յլ մինչ
անդէն իցես ցոյց առաքինութիւն։ Օ՛ի կամիմ՝ թէ
որ 'ի քաղաքս կան, առաքինանայցեն քան զայնոսիկ՝
որ 'ի լերինսն երթեալ դադարեալ իցեն։ Ինդէր։
Վանդի բազում շահք անտի գործին. «Ողուցանէ ոք
Ճրագ, և դնէ ընդ գրուանաւ». վասն այնորիկ կա-
միմ զի ամենայն Ճրագունք 'ի վերայ աշտանակի կայ-
ցեն։ Պառեսցուք այսուհետև զհուրն. արասցուք
այնոցիկ որ 'ի խաւարի նստիցին՝ զերծանել 'ի մոլ-
բութենէն։

Եւ զայն մի ինչ ասիցես ցիս, եթէ կին ունիմ և
որդեակք են և տան հոգս, չկարեմ այնպիսի ուղ-
ղութիւնս առնել։ Օ՛ի թէ և յայնցանէ ինչ չունի-
ցիս՝ և ծոյլ իցես, ամենայն 'ի դերև ելանէ. և եթէ
բոլոր իսկ այն շուրջ զքև իցէ և փայթ իցես, գեր
'ի վերոյ ես առաքինութեան։ Վանդի մի ինչ պիտոյ
է, մնաց առաքինեաց կազմած. ոչ հասակ, ոչ աղ-
քատութիւն, ոչ մեծուն, ոչ իրաց զբօսանք, և ոչ այլ
ինչ կարիցէ խափանել։ Վանդի և ծերք և երիտա-
սարդք և կանամբիք և որդւոց հարք և արուեստա-
գէտք և զինուորք՝ ցուցին ուղղութիւնս զամենայն
զհրամանացն։ Օ՛ի և Դանիէլ մանուկ էր, և Յով-
սէփ ծառայ, և Մկիւռաս ձեռագէտ, և Ծիրանէվա-
ճառն՝ խանթի տիկին, և ոմն բանտապետ, և ոմն
հարիւրապետ՝ որպէս և Կոռնելիոս, և ոմն ախտա-
ժէտ՝ իբրև զՏիմոթէոս, և ոմն 'ի տերանց փախու-
ցեալ՝ իբրև զՍնեսիմոս, և ոչինչ ումեք 'ի նոցանէն
եղև արգել. այլ ամենեքեան քաջացան, և արք և
կանայք և երիտասարդք և ծերք և ծառայք և աղատք
և զինուորք և ռամիկք։

Մի այսուհետև զաւելորդս տաճեսցուք, այլ ըզ-
կամն ազնուականս կազմեսցուք. և զիարդ և ոք իցեմք
զառաքինութենէ բուռն հարցուք. զի և հանդերձ-
լոց բարութեանցն հասցուք. որոց լնցի ամենեցուն
մեզ հասանել շնորհօքն և մարդասիրութեամբ Տն-
մերոյ Յի՛սի Վ՛ին. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն
վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ԻՆՆՈՒՏԱՄՆԵՐՈՐԴ

«Մինչդեռ նա խօսէր ընդ ժողովուրդսն, ահաւասիկ մայրն և եղբարքն եկեալ կային արտաքոյ, և խնդրէին խօսել ընդ նմա։ Ասէ ոմն ցնա. ահաւասիկ մայր քո և եղբարք կան արտաքոյ և խնդրեն խօսել ընդ քեզ։ Այլ նա առ պատասխանի և ասէ ցայն՝ որ ասացն ցնա, ով է իմ մայր, կամ ով են իմ եղբարք. և ձգեաց զձեռն յաշակերտսն՝ և ասէ, ահաւասիկ մայր իմ և եղբարք իմ. զի որ արասցէ զկամն հօր իմոյ՝ որ յերկինսն է, նա է իմ եղբայր և քոյր և մայր»։

Զոր յառաջագոյն ասէի թէ առանց առաքինութեան ամ խոտան է, նոյնպէս և այժմ նոյն իսկ մեծաւ առաւելութեամբ յայտնի լինի։ Այս ասէի՝ թէ և հասակ կատարեալ, և բնութիւն, և յանապատի բնակել, և այլ ինչ նոյնպիսիք անշահք են առանց բարոյից բարուրոց։ Այլ այսօր և այլ իմն աւելի ուսանիմք, թէ և ոչ յղանալն իսկ զԱյն, և ոչ զայնպիսի աքանչելի ծնունդն ծնանել՝ շահ ինչ էր առանց առաքինութեան[1]. և այս անտի առաւել ևս յայտ է։

1 Զոր միանգամ յայսոսիկ բանս մեղադրականս ինչ յազգս սրբոյ Կուսին խօսի սուրբ վարդապետս, յայտնի է 'ի կարգէ բանիցն՝ հարկանել առաւել զազգականս Յն՝ ընդ որս և մայրն գտանելով, ընդհանուր ձևանայ բանն. մանաւանդ ոչ այնչափ զներքին մեղադրելի կերպս նոցա հաստատէ, քան թէ նկարագրել կամի զանիսս այնոցիկ ոմանց՝ որք այսպիսի կրիւք շարժին 'ի պարծանս ազգականաւն։ Ապա եթէ յեղանակ բանիցն ցուցանէ սագիւտ ինչ նաև 'ի մայրն՝ թէ 'ի մեկնուէս, և թէ 'ի մեկնուէն Յովհաննու 'ի պատմութեանէ հարսանեացն որ 'ի Կանայ, չեն ինչ զարմանք. քանզի յանգգոյշ ասացուածոց ինչ Որոգինի և Տերտուղիանոսի սպրդեալ էին այդպիսի բանք 'ի գրուածս նախնի վարդապետացն ոմանց արևելեայց և արևմտեայց. զոր ապա զկնի եկեալք զգուշաւոր քննիչք 'ի բաց մաքրեցին, և զգուշացան, դատանելով զսուրբ Կոյսն մայն մեղուցելոյ կնոջն առաջնոյ զաւակ առանց յանցանաց։

«Մինչդեռ, ասէ, խօսէր նա ընդ ժողովրդեանն, ասէ ոմն ցնա, թէ մայր քո և եղբարք քո խնդրեն զքեզ։ Եւ նա ետ պատասխանի, թէ ո՞վ է իմ մայր կամ ո՞վ են իմ եղբարք»։ Օ այս ասելով՝ ոչ եթէ ամենեքին համարէր զմայրն, և ուրանայր զծնիչն. զի եթէ ամենեքին համարէր, ապա և անցանէր իսկ ոչ ընդ արգանդն նորա՝ առեալ մարմին 'ի նմանէ. այլ զայն յայտ առնէ, եթէ չէր ինչ օգուտ նմա յայնմանէ միայն, եթէ ոչ զամ պատշաճն առնիցէ։ Եւ նա և իբրեւ իսկ հպարտութեամբ նշանակ էին. զի կա մեցաւ ցուցանել մարդկանն՝ եթէ այնչափ իշխանութիւն ունի որդւոյն. և չէ և մեծս իմանայր զնմանէ. վա՛ որոյ և յանժամ ժամանակի իսկ էին։ Եւ արդ տես զնորա և զնոցա գոռոզութիւն. զի պարտ էր նոցա և մտանել և լսել ընդ ժողովրդեանն. ապա թէ ոչ՝ անսալ, մինչև կատարէր զխօսն, և ապա մատչել։ Եւ որքա եկեալ արտաքս կոչէին զնա, և առաջի ամենեցուն պարծանս ինն ցուցանէին. յայտ առնել ինն կամէին՝ եթէ որպիսի իշխանութիւն հրամայեն նմա։

Եւ զանազն և աւետարանիչն զայն յայտ առնէ ակնարկելով. «Մինչդեռ նա, ասէ, խօսէր ընդ ժողովրդան». որպէս զի ասիցէ, միթէ չէր այլ ժամանակ, միթէ չէր մարթ առանձինն խօսել. և կամ զի՞նչ կամէին խօսել. եթէ վասն ՀՇմարիտ կրօնից կամէին խօսել, առաջի ամենեցուն պարտ էր Հառել, զի և այլքն ևս շահեսցին. ապա եթէ վասն այլոց՝ որ նոցա ինչ պատշաՀ էին, սակայն և այնպէս չէր պարտ ստիպել։ Օ՛ի թէ զՀայր թաղել միայն չետ Հրամանն, զի մի խափան ինչ զՀետ երթալոյն լինի, ո՛րչափ ևս առաւել նոցա զՀրապարակախօս վարդապետութիւն չէր պարտ վասն ինչին ինչ իրաց խափանել. ուստի և յայտ իսկ է, եթէ վասն անձանց մեծարանաց միայն առնէին։ Օ որ և ՅովՀաննու իսկ յայտ արարեալ ասէ, եթէ՝ «Մի՛չ եղբարքն իսկ էին Հաւատացեալ 'ի նա»։ Եւ նա և զբանսն իսկ պատմէ՝ որ բազում անմտութիւն լի էին. ստիպէին ասէ զնա յԵրուսաղէմ երթալ, ո՛չ վասն այլ ինչ իրիւք, այլ զի յանձանց փառս և 'ի մեծարանս լինիցին նշանքն նորա։ «Եթէ զայդ առնես, ասեն, ցոյց զանձն քո աշխար-

հի. զի չէ ոք որ առնէ ինչ 'ի ծածուկ, և կամիցի ինքն համարձակ լինել»։ Յորժամ և ինքն սատեր նոցա, մարմնաւոր մնացն լեալ մեղադիր։

Եւ քանզի հրեայքն նախատէին և ասէին, եթէ «Ոչ սա է հիւսանն որդի, զորոյ մեք գիտեմք զհայրն և զմայր, և եղբարք սորա ո՞չ ապաքէն առ մեզ են», զանկածուն ազգին կամէին 'ի բաց քերել յանձանց։ Վասն այնորիկ ստիպեալ զնա 'ի հանդէս նշանաց կոչէին, և նա յառնոյր յանձն՝ կամեցեալ զախտ մնաց նոցա բժշկել. որպէս զի թէ ուրանալ ինչ կամէր զմայրն, յայնժամ ուրանայր՝ յորժամ նոքայն նախատէին։ Եւ զա և այնպէս իմն երևի խնամակալ մօրն լեալ, զի և 'ի խաչին ևս ժամանակի՝ կարի սիրելոյ քան զայլսն ամենեսեան աշակերտին յանձն առնէր զնա, և յոյժ խնամածէր նմա։ Եւ ասա ո՞չ այնպիսի ինչ, զի այնու ևս տեսուչ նմա և եղբարցն լինիցի։ Վասնզի իբրև 'ի մարդ ոք լոկ հայէին, և պարծանաց պատճառս զգործն համարէին. զախտն մերժէ 'ի մնաց նոցա, ո՞չ թշնամանելով ինչ, այլ յուղղութիւն ածելով։

Եւ դու մի միայն զբանն քննիցես՝ յորս սակաւ ինչ սաստ կայր, այլ զվստահութիւնն և զյանդգնութի եղբարցն. եթէ ո՞ ոք իցէ, որ սատեացն. զի ո՞չ մարդ ոք է լոկ, այլ միածին որդին նոյ։ Եւ զինչ ինչ կամէր վճարել սաստելովն. ո՞չ եթէ զրկել ինչ կամէր 'ի պատասխանւոյ. այլ 'ի բռնաւոր ախտէն կամէր ազատել, և առ սակաւ սակաւ հանել յայնպիսի ինչ միտս որ զնմանէ պարտ էր իմանալ նոցա. և հաւանեցուցանել՝ եթէ ո՞չ միայն որդի նորա է, այլ և նոր։

Եւ տես զի և նմա խակ կարի վայել էր սատն, և մօրն և եղբարցն յօգուտ, զի առ յապա մեղմագոյնս մատչիցին։ Վասնզի ո՞չ ասաց, եթէ երթ ասա ցմայրն, եթէ չես իմ մայր. այլ ցպատգամաւորն ասէ սատելով՝ թէ ո՞վ է իմ մայր։ Եւ հանդերձ այսու՝ և այլ իմն յօրինէ, զի մի նոքա և մի այլք յաղագական ինչ ապաստան լեալ՝ ծուլանայցեն յառաքինութենց։ Եթէ նմա ո՞չ այն միայն օգուտ գործէր՝ զի մայրն էր, ապա մի ոք յուսասցի յաղագականութենէ փրկութի գտանել։ Այլ միայն է աղնուականութի, յորժամ

զկամն ՝ի՝ ոք առնիցէ. և այն իսկ է աղնուագոյն օրինակ ազգականութեան, քան եթէ այլ ոք ինչ ազգ յոք վստահ լինիցի։

Այս մեր զայս իմացեալ, մի՛ ինչ յարդարս ազգականս ապաստան լեալ մեծամտիցեմք, եթէ ոչ զնոցն առաքինութիւնն յանձինս ցուցանիցեմք. մի՛ ի հարս, եթէ չլինիցիմք կրօնից նոցա կրօնակիցք. զի մարթի և ծնողն չլինել հայր, և որոյ չիցէ ծնեալ՝ նմա հայր անուանիլ ուստիք։ Պատն այնորիկ և յորժամ կինն ասէր, թէ «Այրանի՝ որովայնին՝ որ կրեաց զքեզ, և ստեանցն՝ որ դիեցուցին», ոչ ասաց՝ թէ չկրեացն զիս որովայն և ստինք չդիեցուցին, այլ է թէ՝ «Այրանի այնոցիկ, որ առնիցեն զկամս հօր իմոյ»։ Տեսանէս, զի ոչ երբէք ուրանայ զընութեան ազգականութիւն, այլ զառաքինութիւնն նախամեծար համարի։ Այս և Կարապետն իսկ ասէր, «Օնունգք իժից, մի՛ ինչ պանծայցէք՝ եթէ ունիմք հայր զԱբրահամ»։ ոչ զայն ինչ յայտ առնէ, թէ չէին Աբրահամէ ըստ բնութեան, այլ թէ ոչինչ օգուտ գործէ նոցա այն՝ զի Աբրահամն էն, եթէ ոչ զնորին առաքինութեամբ ազգականութիւն ունիցին։ Օ որ և Փրկչի յայտ արարեալ՝ ասէր. «Այրեթէ որդիք Աբրահամու էիք, ապա զգործսն Աբրահամու գործէիք». և այսու ոչ եթէ՝ ի մարմնաւոր ազգականութենէն Աբրահամու զրկէր զնոսա, այլ խրատէր՝ զմեծն և զհաստատունն ինդրել։

Օ սոյն և ասա յարդարէ. ոչ ծանրագոյնս ինչ, այլ խնամով իսկ, քանզի ընդ մօրն էին բանքն. և ոչ ասաց՝ եթէ չէ իմ մայր, և ոչ եղբարքն՝ եղբարք իմ, քանզի չառնեն զկամս իմ. և ոչ վՀիս ինչ ետ և դատապարտեաց, այլ զնոսա առնէ իշխանս՝ կամել իմանալ զպատշաՀական իմաստս. որպէս և իւրում իսկ հեղութեն վայել էր այսպիսի բանս բարբառել։ «Որ առնիցէ, ասէ, զկամս հօր իմոյ, նա է իմ եղբայր և քոյր և մայր». որպէս զի թէ կամիցին լինել նորա մտերիմք, ընդ այնՀանապարհ գնայցեն։ Այս յորժամ կինն աղաղակէր, եթէ «Այրանի որովայնին՝ որ կրեացն զքեզ», ոչ ասաց՝ եթէ չէ իմ

մայր. այլ թէ որ կամիցի երանելի լինել՝ զկամս հօր իմոյ արասցէ. զի այնպիսին է և եղբայր և քոյր և մայր իմ։

Նաբէ. քանի՞ ինչ պատիւ և փառք են առաքի-նութիւնք. յորպիսի բարձունս հանէ զառաքինացեալսն. որչափ կանայք երանեցին զսուրբ Կոյսն, և երանելի և երջանիկ զարգանդն համարէին, և ըղձանայ-ին՝ եթէ ինքեանք արժանի լեալ էին լինելոյ մարք. և այնպէս կարօտէին, զի ամենևին զնամ ինչ ծախի-ցեն՝ եթէ այնմ հնար ինչ լինիցի։ Եւ արդ զի՞նչ իցէ արգել, զի ահաւասիկ ընդարձակ Ճանապարհ հորդեաց. և ընդարձակ է՝ ոչ կանանց միայն, այլ և արանց մտանել յայնպիսի երանելի կարգ. մանա-ւանդ թէ յԼեւ վերագոյնն։ Օ՛ի այն իսկ առաւել առնէ մայր և մտերիմ քան զերկունս և զծնունդս. զի եթէ այն երանութեանց է, ապա և առաւել սա, և և հաստատագոյնս։ Եւ արդ մի վայրապար ինչ ցանկանայցես, այլ և ընդ Ճանապարհն որ տանի յայն ցանկութիւն, գնասջիր մեծաւ փութով։

«Եւ զայս իբրև ասաց, ել արտաքս 'ի տանէ անտի»։

Տեսանե՞ս, զի և զարմացոյց, և արար զկամն՝ զոր խնդրէին. որպէս և 'ի հարսանիսն արար. քան-զի և անդ նախ սաստեաց վասն անժամ խնդրելոյն, բայց սակայն ոչինչ դարձաւ ընդդէմ. առաջնումն զտկարութիւն ուղղեաց, և երկրորդաւն զգութիւն զոր ունէր ընդ մօրն՝ ետոյց։ Նոյնպէս և աստ նախ զմա-պարծութեան զախտն բժշկեաց, և ապա զպատշաճ պատիւն մօրն հատոյց. թէպէտ և ոչ 'ի դէպ ժամու խնդրեաց։

«Զաւուրն յայնմիկ ելեալ Յի արտաքս 'ի տանէն՝ նստէր առ ծովեզերն»։ Եթէ կամիցիք, ասէ, ինչ տեսանել կամ լսել, ահաւասիկ արտաքս իսկ ելանեմ և խօսիմ. և քանզի բազում նշանս արար, և ապա և 'ի վարդապետութիւնն պարգևէ շահս։ Նստէր առ ծովուն՝ ոգալ և արկանել ընդ ուռկանաւ զայ-

1 'ի լուս. նոքա։

նոսիկ, որ առ Ծովեզերբն էին և 'ի ցամաքի։ Եւ ոչ վայրապար ինչ նստէր, այլ որպէս աւետարանիչն ըզ-սոյն իսկ առակեալ, եթէ զի առ հասարակ զամենեսեան 'ի մի վայր գումարիցէ, և մի զոք 'ի Թիկանց թողուցու, այլ զամենեսեան 'ի դիմի կացուցանիցէ։

«Եւ Ժողովեցան առ նա, ասէ, ժողովուրդք բազումք, մինչ զի մտանել նմա և նստել 'ի նաւուն, և ամենայն ժողովուրդքն ծովեզերքն կային։ Եւ իբրև նստաւ անդ՝ սկսաւ խօսել, և խօսեցաւ ընդ նոսա բազում ինչ առակաւ»։ Զ՝Հէպէտ և 'ի լերինն յայնչափ վարդապետութեանն ոչինչ առակս յօդեաց, քանզի անդ տխմարքն ևեթ էին և ռամիկք. և աստ դպիրքն և փարիսեցիքն խառն։ Եւ զու միտ դիր տես, զոր առակ նախ Ճառէ. և զիարդ կարգ ըստ կարգի դնե զնա՝ Մատթէոս։ Եւ արդ զոր նախ ասիցէ։ Զոր պարան իսկ էր նախ ասել, և յորդորելոց էր զլսողսն յառաւել ևս ունկնդրութեան. և քանզի օրինակաբ խօսելոց էր ընդ նոսա, զարթուցանէ նախ զմիտս լսողացն առակաւն։ Զանզի և միւս աւետարանիչն ասէ, եթէ սաստեաց 'ի նոսա, զի չառնին 'ի միտ։ «Զ՝խրդ, ասէ, ոչ իմացայք զառակն»։ Եւ ոչ վասն այնորիկ միայն առակաւ խօսէր, այլ զի յայանագոյն ևս զբանն առնիցէ, և առաւել ևս յիշատակ դնիցէ 'ի միտս, և յայտ և զառաջեաւ ածիցէ զիւրսն[1]. սոյնպէս և մարգարէքն առնէին. և զինչ ասիցէ առակն։

«Զ՝հաւադիկ, ասէ, եկ սերմանահան սերմանել»։ Եւ ուստի՞ եկ, որ յամենայնին է՝ և զնա՞մ ընու. կամ որպիսի՞ իրաք եկ։ Զ՝Ոչ 'ի տեղւոջէ ինչ 'ի տեղի, այլ խնամով և տեսչութեամբ եկեալ մերձեցաւ առ մեզ՝ ըստ մարմնազգած մարմնապատն լինելոյ։ Եւ քանզի մեք չկարացաք մտանել առ նա վասն մեղացն, որ պարըսպեալ պահէին զեզ և զմուտ Ճանապարհացն մերոց, ինքն իւրովն եղեալ գայ առ մեզ։ Եւ արդ եղծանել ինչ գայցէ զերկիրն փշալից, կամ պատժել զմշակսն. և ոչ ուրեք. այլ գործել և դարման տալ և սերմանել զբանն ՅԾՕՊԱՇՏՈՒԹԵՒ։ Զերմ աստ զվարդապե-

[1] Ցոյնն ՀԻՐՈՒ։

տուԹիւն կոչէ, և անդ զոգիս մարդկան, և սերմանա-
հան զանձն։ Այլ զինչ ինչ գործիցի 'ի սերմանէն։
Այրեք մասունքն կորնչին, և մին միայն ապրէ։

«Այլ 'ի սերմանելն զնա, ասէ, կէսն անկաւ զձա-
նապարհաւն, և եկին Թռչունք երկնից՝ և կերան»։
Այլ ոչ ասաց՝ Թէ նա ընկէց, այլ Թէ անկաւ։ «Այլ
կէսն յառապարի, ուր ոչ գոյր հող բազում, և վաղ-
վաղակի բուսաւ. և զի ոչ էր 'ի խոր, ընդ ծագել ա-
րեգականն՝ խորշակահար եղև. և քանզի ոչ գոյին
արմատք, ցամաքեցաւ։ Այլ կէսն 'ի մէջ փշոց. և ե-
լին փուշքն՝ և հեղձուցին։ Այլ կէսն յերկիր բար-
ւոք. և տայր պտուղ, ոմն հարիւր և ոմն վաԹսուն
և ոմն երեսուն։ Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ»։

Զորրորդ մասնն ապրէր. և այն ոչ հասարակ
ինչ, այլ այլազունակ կերպարանօք։ Զայս ասելով՝
յայտ առնէ, եԹէ առատուԹիւն իսկ աննախանձ ընդ
ամենեսեան խօսէր։ Զոր օրինակ որ սերմանէն,
ոչինչ ընտրէ զերկիրն՝ որ առաջի կայցէ, այլ առ հա-
սարակ խառն 'ի խուռն ընդ ամենայն վայրն ցանէ
զսերմին. նոյնպէս և նա, ոչ զմեծատունն և ոչ զաղ-
քատն ընտրէ 'ի միմեանց, ոչ զիմաստունն և ոչ զան-
իմաստն, ոչ զծայրն և ոչ զժիրն, ոչ զքաջասիրտն և
ոչ զվատասիրտն. այլ ընդ ամենեսեան խօսէր, զի
գնամն զիւր նկարեսցէ, Թէպէտ և գիտէր զապառնին
և զլեալսն, զի համարձակ լինիցի նմա ասել, «Զինչ
ինչ պարտ էր առնել, և ես ոչ արարի»։

Այլ մարգարէքն այգւոյ իմն նմանեցուցեալ՝ խո-
սէին ընդ մարդկան. այգի եղև, ասէ, սիրեցելոյն.
և որԹն՝ զոր փոխեցեր յեգիպտոսէ. և սա 'ի սերմն
առակի։ Այլ զինչ նշանակիցէ։ Այլ զի երագահաս
և դիւրաւ լինիցի հնազանդուԹիւն, և վաղվաղակի
տայցէ զպտուղն։ Այլ դու յորժամ լսիցես, եԹէ
«Այլ սերմանահան՝ սերմանել», մի միայն զնոյն և
զմին ասացեալ իմանայցես. զի բազում անգամ
վասն այլոց ինչ իրաց ելանէ սերմանահանն, կամ 'ի
վար, կամ 'ի քաղ հանել զինասակար բանջարսն,
կամ զփուշ կուտել, կամ այլ ինչ նոյնպիսի դարման
տանել. բայց նա 'ի սերմանել և եԹ ել։

Այլ ուստի եղև բազում մասին սերմանն կորնչել։

Ո՛չ 'ի սերմանողէն ինչ, այլ յերկրէն՝ որ ոչ ընկալաւ. այս ինքն յանհնազանդ ոգւոց։ Եւ ընդէր չասիցէ, թէ զկէսն ընկալան ծոյլքն՝ և կորուսին, և զկէսն մեծատունքն՝ և հեղձուցին, և զկէսն յոյլքն՝ և աղաւաղեցին։ Ո՛չ կամի կսկծեցուցանել, զի մի 'ի վհատութիս ինչ արկանիցէ. այլ թոյլ տայ լսողացն մտաց անձամբ զանձինս յանդիմանել։ Օ՜ի ոչ 'ի սերմանն միայն այսպիսի ինչ իրք գործեցան, այլ և յուռկանին. քանզի և ուռկանն բազում անպիտանս ժողովեաց։ Եւ նախ առակաւս զաշակերտսն կրթէ 'ի խրատ. թէպէտ և բազումք իցեն, ասէ, որ ընկալան զբանն՝ և կորնչիցին, մի ինչ վասն այնորիկ զանգիտել և կասել 'ի սերմանելոյ. քանզի և ընդ ՝ուրս ձեր, ասէ, դոյն անցք անցին։ Եւ զի ամենագէտ էր, և յառաջագոյն գիտէր՝ որ ինչ լինելոց էր, թէպէտ և չէին ընդունելոց, սակայն 'ի սերմանելոյն ոչ դադարեաց։

Եւ զինչ 'ի դէպ է, ասէն, 'ի մէջ փշոցն սերմանել, կամ յառապարի և առ Ճանապարհաւ։ Սերման և երկրի չէ ինչ այն 'ի դէպ. բայց ոգւոց մարդկան և վարդապետութեանն կարի իսկ 'ի դէպ է, և առաւել դովելի։ Սշակին 'ի դէպ է մեղադիր լինել, որ 'ի քարին վերայ և առ Ճանապարհաւն սերմանիցէ. զի չէ հնար՝ թէ քարն երկիր լինիցի, և ոչ Ճանապարհն չՃանապարհ, և ոչ փշոցն չլինել փուշ։ Իսկ 'ի խօսնոցն՝ 'ի միջի ոչ այնպիսի ինչ. քանզի մարթի քարին յերկիր պարարտ դառնալ, և Ճանապարհին չլինել Ճանապարհ և կոխան անցաւորաց, այլ անդ պարարտ և պտղաբեր. և փշաբերացն՝ կակղել և լինել սերմանեացն տեղիս. զի թէ չեր հնար, և սերմանէր իսկ ոչ։ Եւ եթէ առ ամենեսեան չեղև նորոգութիւն և փոփոխումն, այն ոչ սերմանահանին ինչ միասս է, այլ նոցա՝ որք ոչ կամեցան դառնալ։ Ա՝յս զի՛ւրն որ ինչ պարտ էր առնել՝ արար. եթէ նոքա նորայոյն եղեն մատնիչք, նա չէ ինչ միասու պատՃառք՝ որ այնչափ մարդասիրութիւն եցոյց։ Եւ դու մի՛ա դիր, զի ոչ մի միայն է Ճանապարհ կորստեան, այլ բազում

1 Յօրինակին Դ Խ՝ոոոյն։

և գունակ գունակ, և 'ի միմեանց անջրպետեալք։
Լսատնակոխ Հանապարհի նման են ծոյլք և յոյլք
և պղերգք։ «Յամենայնի, ասէ, որ լսիցէ զբանն աբ-
քայութիւն՝ և ոչ առնուցու 'ի միտ, գայ չարն և յափշ-
տակէ զսերմին 'ի սրտէն. այնպիսին է որ առ Հանա-
պարհաւն սերմանեցաւ»։ Լչ 'ի քարին վերայ՝ տկա-
բադոյնք և անզօրք։ «Լչ որ յառապարին սերմանե-
ցաւ՝ այն է որ լսիցէ զբանն, և վաղվաղակի խնդու-
թեամբ ընդունիցի, և քանզի ոչ ունի արմատս, այլ
առ ժամանակ մի է, յորժամ նեղութիւնք և հալա-
ծանք վասն բանին 'ի վերայ հասանիցեն՝ վաղվաղակի
գայթագղէ»։ Վանզի չեն ընդ մի համար, յորժամ
վիշտք ինչ 'ի վերայ չգայցեն [1] խախտել զվարդապե-
տութիւն, և յորժամ փորձութիւնք հասանիցեն։ Լչ
որք փշոցն նմանեցան՝ նոքա կարի առանց ներելոյ և
թողութիւն են։ «Իր 'ի մէջ փշոցն, ասէ, սերմանեցաւ՝
այն է, որ լսէ զբանն, և հոգք աշխարհիս և պատ-
բանք մեծութեան հեղձուցանեն զբանն և անպտուղ
լինի»։
Լչ արդ զի մի անցք ինչ յայնցանէ ընդ մեզ ան-
ցանիցեն, ծածկեսցուք յօժարութիւն զսերմին, և հա-
նապազ յիշատակօք զգուշասցուք նմին։ Օ՛ի թէ-
պէտ և յափշտակել կամի սատանայ, այլ մեք եմք
տեարք՝ տալ 'ի ձեռս և չտալ։ Լչ թէպէտ և ցամա-
քիցին սերմանիքն, այն ոչ 'ի խորշակէն ինչ լինի.
քանզի ոչ ասաց թէ 'ի խորշակէն ցամաքեցաւ, այլ
թէ վասն զի ոչ ունէր արմատս։ Վէպէտ և հեղձնու-
ցուն բանքն, ոչ 'ի փշոցն ինչ բռնութէ, այլ 'ի ծու-
լութէն այնոցիկ՝ որք փշոցն ետուն բուսանել։ Պոյ
հնար արգելուլ զչար բոյսն, եթէ կամիցիս յօգուտ
մատակարարել զմեծութիւնն։ Վանզի ոչ ասէ՝ թէ
աշխարհս, այլ թէ հոգք աշխարհիս. և ոչ ասաց՝ և-
թէ մեծութիւն, այլ եթէ պատրանք մեծութէ։
Լչ արդ մի ինչ զիրսն խոտիցեմք, այլ զմիտսն ա-
պականեալս. քանզի մարթի մեծանալ՝ և չպատրիլ.
և յաշխարհի բնակել՝ և չհեղձնուլ հոգովք։ Օ՛ի
երկուս թերութիւնս հակառակ միմեանց ունի մեծու-

1 Յորինակին գոյին։

թիւնն։ Մինչ հանէ փարատէ զխաւար հոգոց 'ի մը-
տացն. և միւսն մեղկէ արկանէ յանկողնն փափկու-
թեանց։ Խաբուրք ասաց՝ եթէ պատրանք մեծութիւն.
զի ամ՛ ինչ մեծութիւն պատրանք են. քանզի անուանք
և եթ են, և ոչ իրք հաստատունք. և ցանկութիւնս
իսկ և փառք և հանդերձիցն պաճուճանք ցնորք
իսն առ աչօք են և ոչ իրք ճշմարիտք։

Յորժամ ասաց զկերպարանս կորստեանն, ապա
յետոյ զբարւոք երկիրն գնէ. և ջոյ թոյլ 'ի վճա-
տութիւս կործանել, այլ տայ յոյս ապաշխարութիւն.
և ցուցանէ եթէ մարթի յառաջնոցն, որ ասացան,
շրջել և լինել այսպիսի։ Թէպէտ և երկիրն բարւոք
իցէ, և սերմանահանն մի, և սերմն նոյն, վասն էր
արդեւք ոմն հարիւր և ոմն վաթսուն և ոմն երե-
սուն տայցէ զտոհմականն։ Այս ասաց դարձեալ յերկ-
րին բնութիւն գունակ գունակք տոհմականացն. և
թէպէտ երկիրն բարւոք իցէ, սակայն և 'ի նմա գու-
նակ գունակք երևին։ Ցեսանես, զի ոչ մշակն ինչ է
պատճառք, և ոչ սերմնն, այլ երկիրն որ ընդունի-
ցի. ոչ ըստ բնութիւն ինչ, այլ ըստ կամացն։ Այս և
ասաց իսկ բազում նշանակ է մարդասիրութիւն. զի ոչ
մի սակ միայն պահանջէ զառաքինութիւն տոհմակա-
նաց, այլ և զառաջինսն ընդունի, և զերկրորդսն
չխոտէ, և երրորդացն ևս տեղի տայ։ Օ այս ասէ,
զի մի կարծիցեն՝ որ զՀեսու երթեալ էին նորա, եթէ
բանից ևեթ ունկնդրութիւն բաւական ինչ իցէ 'ի
փրկութիւն։

Այս ընդէր ոչ, ասէն, զայլ ևս կերպարանս չա-
բեացն յօդեաց 'ի նոյն, և զմարմնոյն ցանկութիւն և
զնսապարծութիւն և զփառասիրութիւն։ Այսելոյն՝ թէ
հոգք աշխարհիս և պատրանք մեծութիւն, զամ՛ ինչ
ընդ նմին եդ. քանզի փառասիրութիւն և անձնագո-
վութիւն և այլն ամ՛ աշխարհիս այսորիկ են և մեծու-
թեանն պատրանացս. և ցանկութիւն և որովայնի ծա-
ռայութիւն և չարակնութիւն և մնապարծութիւն, և
այլն ևս ամ՛ նոյնպիսիք։ Խայց յաւել զՀանապարհն
և զառապարն, յայտ արարեալ՝ եթէ չէ միայն բա-
ւական յընչից ազատանալ, այլ պարտ է այլովքն
ևս առաքինութիւք կրթիլ։ Այլ եթէ յընչից ազատ իցես

և 'ի վատութենս հատանիցիս, զինչ օգուտ իցէ։ Լիթէ սրտիւ պինդ իցես, և 'ի ծուլութիւն հատանիցիս՝ և չկամիցիս բանին ունկնդիր լինել, զինչ շահ իցէ։ Վասնզի չեն մի միայն դէմքը բաւական 'ի փրկութեան. այլ պարտ է նախ հաւատաւոր ունկնդրութիւն միտ դնել, և միշտ ածել զմտաւ. ապա և արութեան սկիզ, և զընչից անփոյթ առնել, և յամէ իսկ յերկրաւորացս ազատանալ։ Լու զայս իսկ յառաջ քան զայլսն դնէ, քանզի սորին իսկ նախ սկիզբն են. «Օ խարդ, ասէ, հաւատայցեն, եթէ ոչ նախ լուիցեն»։ Որպէս և մեք եթէ ոչ անսայցեմք բանիցն, և ոչ ուսանել կարեմք՝ զոր պարտ է առնել. ապա զզօրութեան յանձին ունել և զմտաւորացս անտեսութեան։

ՑՈՐԴՈՐԱԿ

Օ ԱՑՍ ամենայն լուեալ՝ յամ կողմանց պարեսցուք [1] զանձինս, և անսասցուք բանիցս ասացելոց. արձակեսցուք 'ի խոր զարմանն, և յամ երկրաւորաց սրբեսցուք զանձինս։ Այս եթէ զկէսն առնիցեմք, և կիսոցն անփոյթ առնիցեմք, ոչինչ լաւութեան գործիցի մեզ։ Լիթէ ոչ այսպէս, սակայն այլ ազգ կորնչիմք։ Օ զինչ շահ իցէ [2] եթէ ոչ վասն մեծութեան, այլ վասն ծուլութեան, և եթէ ոչ վասն ծուլութեան, այլ վասն անօրէնութեան եղծանիցիմք։ Վասնզի և մշակն եթէ այսպէս և կամ այնպէս կորուսանիցէ զսերմանսն, մի ազգ սուգ առնու։

Լու արդ մի, զի ոչ ամ օրինակօք կորնչիմք, միսիթարութեան ինչ համարիցիմք. այլ որով օրինակաւ և կորնչիմք՝ սուգ առցուք։ Այրեսցուք զփուշն, քանզի և հեղձուցանեն զբանն։ Լու զայնր փորձ [3] մեծատունք գիտեն, որք ոչ յայսոսիկ միայն, այլ և ոչ յայլսն պիտանիք են, քանզի ծառայք և գերիք եղեն ցանկութեանց. նա և 'ի քաղաքային իրս անպիտանք

1 Փարիզեան օրինակն դարձեալ դեղցուք։
2 Փար. օր. զինչ ընդոստ իցէ։
3 Փար. օր. զայն փորձ։

էն. և եթէ յայնս՝ որչափ և առաւել յերկնաւորսն։ Այանցն և կրկին ապականութիւն անտի խորհրդոցն լինի և 'ի փափկութենէ և 'ի հոգոց. յորոց մի մի իւրաքանչիւր բաւական են ընկղմել զնաւն. իսկ յորժամ երկոքեան արշաւիցեն, 'ի միտ առ թէ որպիսի մրրիկ յառնիցէ։

Այնդ այն մի ինչ զարմանայցես, զի զփափկութիւն փուչ կոչեաց։ Դու չառնուս 'ի միտ, քանզի արբեալ ես ախտիւն. բայց առողջքն գիտեն, եթէ քան զփուչ և չար կոտէ փափկութիւնն, և մաշեն հոգք զհոգիս, և անհնարին ցաւս ածեն մարմնոյ և հոգւոյ։ Բայց ոչ այնչափ 'ի հոգոցն խոցին, որչափ յաղեցուցեալքն։ Յորժամ քունն յաչացն հատանիցի, և իբանունքն ընդոստ ընդոստ խաղայցեն, և գլխոյն թմբրութիւն, և աղեաց ցաւք ստիպեն զայնպիսին, քան զորչափ փուչս չիցեն դժնդակագոյնք։ Այսպէս՝ զփուչն ուստի և ունիցի ոք, յարեան առնեն զձեռս ունելեացն, նոյնպէս և բարեկեցութիւնն զոտս և զգլուխս և զաչս և զնամ անդամն առ հասարակ ապականեն, և գոս և անպտուղ առնեն, և ևս չար քան զփուչս կոտեն, և 'ի կարևոր իրս տրտմեցուցանեն, և տարաժամ ալիս ածեն, և խնու զգայունսն, և խաւարեցուցանեն զխորհուրդսն, և կուրացուցանեն զաչս մտաց քաջատեսիկս, և զմարմինն բոյն վնասուց առնեն, և ընդարձակ զաղբոյն շտեմարանս դործեն, և տուռն տուռն բլուրս առ բլուրս զանդամն մարմնոյն քրքռեցուցանեն[1], և մեծ և անչափ ծանրութիւս ոսկեբաց կուտեն. ուստի բազում և ստէպ ստէպ ոտնառութիւք, և յաճախ նաւակոծութիւք լինին։

Լաւ արդ աղէ՝ ասա, ընդէր պարարիցես զմարմինդ։ Այ թէ իբրև զպարարակ զենուցումք զքեզ՝ և 'ի սեղան բերիցեմք։ Օ՜ հաւն յիրաւի պարարեն, մանաւանդ թէ և ոչ զնոսա յիրաւի. քանզի յորժամ պարարիցին վնասակարք առողջութեանն լինին. և յոլովեն զչարիսն, մինչև յանասունսն ևս ցուցանեն զբարեկեցութեան զվնասակարութիւն։ Այանզի և 'ի պարարել զնոսա և մեզ վնասակարս առնեմք. զի ա-

1 Փար. որ. քրքռոյցուցանէ։

ՀԵԼՈՐԴՔՆ ԵՒ ԽՈՆԱՒ ՓՈՒԹԻՒՔ ՅԱՅՆՊԻՍԻ ԴԱՐՄԱՆՈՑ ԼԻՆԷՆ։ Իսկ որ անդամքն այնպէս ոչ մնանիցին, այլ որպէս ասիցէ ոք՝ ընդ պահս ընդելեալ, և չափով կեանս կեցեալ, և 'ի վաստակս և յաշխատութեան կրթեալ, և անձանց և այլոց պիտանացուք են, առ կերակուրս և առ ՇԱՄ ինչ։ Իսկ որք այսպէս կերակրիցին, առաւել ողջք լինին. և որք խորտկաքն պարարիցին, ախտաժէտք և ցաւածք [1], և սաստիկ գործեն զկապանսն։

Օ՛ի չիք ինչ փնտռակար և թշնամի մարդկան՝ իբրև զբարեկեցութիւն. և չիք ինչ՝ որ այնպէս երդիծեցուցանէ [2] և հեղձուցանէ և ապականէ զնա, իբրև զզեղխութիւն։ Զ սան որոյ և այնու իսկ ոք զարմանայցէ ընդ անմտութիւնն նոցա, զի որպէս այլք ընդ տկաց կասկածեն՝ նոքա յիւրեանց անձինս չկամին զընդալ. զի զնոսա գինւոյն չտան ուռուցանել, և ոչ աւելի քան զչափն արկանել՝ զի մի հերձնուցուն. և սոքա զորովայնն տառապեալ՝ ոչ այնչափ խնամոց առնեն արժանի. յորժամ ընուցուն [3] և խծկիցեն՝ մինչև յականջսն և յունչսն և ցկոկորդսն ամացեալ, և ոչ յաւգին. և այն ոգւոյն և դարմանիչ զօրութիւն կենդանւոյն՝ կազմեն անձկութիւն։

Զ՝ի թէ վասն այնորիկ տուաւ քեզ կոկորդ, զի մինչ և ցբերանն ընուցուս հանիցես զգինին, և այլ խիխաւրաս [4] ամանայցես 'ի ներքս։ Զ՝չ վասն այնորիկ, ով մարդ. այլ զի նախ ՅՈՅ երգիցես օրհնութիւնս, և զնուիրական աղօթսն առաքիցես, և զՅԾԵՂԷՆ օրհնսն ընթեռնուցուս, և ընկերին օգտակար խրատս տայցես։ Զ՝ո աւադիկ գոգցես վասն այնորիկ առեալ ի՛ցէ, և ոչ սակաւ մի ժամանակ պարապել տաս պաշտամանն. այլ զՇԱՄ կեանս 'ի չար ծառայութեան հարկանես։ Զ՝չ զոր օրինակ քնար ուրուք ոսկի առեալ ի՛ցէ՝ գեղեցիկ կազմուածով յօրինեալ, և փոխանակ զՇԱՄ խառն նուագսն ածելոյ՝ յաղբ թաղիցէ, և ընդ կաւ ածիցէ, նոյնպէս և սոքա առնեն։ Իսկ աղբ ոչ զկերակուրն կոչիցէ, այլ զբարեկեցութիւնն, և զան-

1 Փար. օր. ցաւածք։
2 Փար. օր. երգիծուցանէ։
3 Փար. օր. խնուցուն։
4 Փար. օր. 'ի խաւրէ։

չափ շուայտութիւն. զի աւելին քան զպէտսն՝ ոչ կերակուր է, այլ միայն ապականութիւն։

Լրովայնն վասն կերակրոցն միայն ընդունելութիւն եղև. բայց բերանն և կոկորդն և լեզուն՝ և վասն բաղում ինչ այլոց քան զսոյնս կարևորաց։ Մանաւանդ թէ և որովայնն իսկ ոչ վայրապար զկերակուրսն ընդունելոյ, այլ յաղագս չափոնն ընդունելոյ. և զայն ինքն իսկ յայտ առնէ պաղատելովն և յաճախ զմէնջ բողոք հարկանելով, յորժամ կարի նեղիցեմք։ Լու ոչ միայն վասն ագահութիւն բողոք բառնայ, այլ և անհնարին և սիրէժս ընդ զրկանացն պահանջէ 'ի մէնջ։ Լու նախ զոտսն պատժէ՝ որ տանին և ածեն 'ի չար հանգանակսն, և ապա զձեռսն՝ որ պաշտեն զնա՝ կապէ, փոխանակ զի այնչափ և այնպիսի խորտիկս մատուցին։ Օ բազմաց և զբերան իսկ ծռէ, և զաչս և զգլուխս ապականէ։ Լերև զձառայ՝ որ յորժամ հրամանս առնուցու, յանդգնի թշնամանել զհրամանատարն բազում անգամ, նոյնպէս և նա՝ հանդերձ այլովք անդամովքն, յորժամ նեղիցի, և զուղիղն[1] իսկ խանգարէ։ Լու զայն բարւոք իսկ մատակարարեաց ՝ՀԾ՝ յանչափութենէ անչափ վնասուցն լինել. զի յորժամ կամաւ չցածնուցուս, գոնէ ակամայ վասն այնչափ երկիւղի ապականութիւն ուսանիցիս ի՝ջնել 'ի չափ։

Օ այս ՝ՀՄ իմացեալ՝ փախիցուք 'ի բարեկեցութենէ, և դարման տարցուք անձանց չափոնքն[2], զի 'ի մարմնոյս առողջութիւն վայելեսցուք, և զոգիս յՀՄ ախտից զերծուսցուք, և հանդերձելոց բարութեանցն հասցուք շնորհօքն ՝Հն մերոյ Յսի Լսի. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Փար. օր. զ՝ՆԴԻՂՆ։ 2 Փար. օր. ՀՄԷՈՒԹԻՒՆ։

ՃԱՌ ԿՍԱՆԵՐՈՐԴ

« ՅԻ մատեան աշակերտքն, և ասէն ցնա. ընդէր առակօք խօսիս ընդ նոսա։ ՅԻ նա ետ պատասխանի. Ձեզ, ասէ, տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեն երկնից, բայց նոցա չէ տուեալ »։

ԱՐԺԱՆ է զարմանալ ընդ աշակերտսն, եթէ զիարդ ցանկային ուսանել, և 'ի դէպ ժամանակի մնային՝ եթէ երբ պարտ լիցէ հարցանել. զի ոչ առաջի ամենեցուն զայն առնէին։ ՅԻ զայս Մատթէի յայտ արարեալ՝ ասէ, թէ մատեան առ նա։ ՅԻ զի ոչ կարծիք ինչ էն՝ զոր ասեմն, Մարկոս յայտնագոյն իսկ ասէ, թէ « Մատեան առ նա առանձինն »։ Յայսպէս պարտ էր եղբարցն և մօրն առնել, և ոչ արտաքս կոչել, և 'ի ցոյց առնել։ ՅԻ միտ դիր սոցա խնամոյն՝ զոր ունէին առ այլս. զի նախ զնոցայն խնդրէին, և ապա զանձանց։ « Ընդէր, ասեն, առակօք խօսիս ընդ նոսա ». և ոչ ասացին, ընդ մեզ։ Այլ և այլուր ընդ բազում տեղիս ցուցանեն ունել գութ ընդ ամենեսեան. որպէս յորժամ ասիցեն, եթէ « Գրձակեա զժողովուրդդ ». և դարձեալ՝ եթէ « Գիտիցես ապաքէն, զի գայթագղեցին ոմանք »։

ՅԻ առ այն զինչ ասիցէ Տէր։ « Ձեզ, ասէ, տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեն երկնից, և նոցա չէ տուեալ »։ Օ այս ասէ, ոչ զի հարկ ինչ մուծանիցէ, կամ վիճակ ինչ վայրապար առանձինն հասեալ նոցա, այլ զնոսա յայտ առնէ համ չարեաց պատճառս. և ցուցանել կամի՝ թէ պարգևք են իրքն, և 'ի վերուստ տուեալ շնորհք. բայց ոչ վասն զի պարգևքն են՝ այնու ինչ զանձնիշխանութեն բառնայցէ. և այս 'ի յաջորդացն յայտ է։ ՅԻ արդ միտ դիր. զի մի նոքա ինչ վհատիցին, և մի սոքա որ լուանս՝ թէ ձեզ տուեալ է՝ ծուլանայցեն, յայտ առնէ թէ 'ի մեր ձեռս է իշխանութեն, և 'ի մէնջ է սկիզբն։

« Որ ունիցի, ասէ, տացի նմա և յաւելցի. և որ

ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ »։ Կարի իմն անյայտ թուի բանս. բայց անչափ արդա-
բութիւն ցուցանէ. և զոր ասէն՝ այսպիսի ինչ է։ Եթէ
յորժամ յօժարութիւն ոք և փոյթ յանձին ունիցի,
տացի նմա ամ ինչ և յաճախագոյս կողմանէ անտի. իսկ
յորժամ յայսցանէ թափուր ոք իցէ, և չլինիցի
նպաստ յանձնէ, ապա և ոչ յայ ինչ տացի նմա.
քանզի « Եւ զոր ունիցին, ասէ, բարձցի 'ի նմանէ »։ ոչ
իբրև այ ինչ բառնալով, այլ նորա զիւր անձնն չառ-
նելով արժանի նորայոցն։

Օ սոյն և մեք իսկ առնեմք. յորժամ տեսանի-
ցեմք զոք ծուլագոյնս լուիցէն բանից մերոց, և բա-
զում անգամ աղաչիցեմք ունկնդիր լինել, և չկա-
ցեմք հաւանեցուցանել, ապա և մեք լռեմք. զի եթէ
ստիպիցեմք ինչ, և ս քան զևս յաճախէ 'ի ծուլու-
թիւնն։ Իսկ որ փոյթն իցէ՝ նմա յօժարագոյնս զե-
ղումք զվարդապետութիւնն. և կամ բանս ինչ յոր-
ժամ խօսիցիմք՝ և ախորժելով լսէ, և ս յաւելումք։
Եւ բարւոք ասաց, եթէ զոր թուին թէ ունիցին.
քանզի և զայն իսկ չունի։ Զ՝ապա յայտնի իսկ արար՝
զոր ասացն, եթէ զինչ իցէ՝ թէ « Զոր ունիցի՝ տացի
նմա. և որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի 'ի
նմանէ »։

« Զ ան այնորիկ, ասէ, առակաւք խօսիմ ընդ նոսա,
զի տեսանեն և ոչ տեսանեն, և լսեն՝ և ոչ լսեն, և
ոչ առնուն 'ի միտ »։ Եւ եթէ չտեսանէին, ապա
պարտ էր զայս բանալ։ Եթէ բնութեամբ ինչ կուրութիւն
էր, ապա պարտ էր բանալ. իսկ եթէ կամաց և անձն
իշխանութեամբ, զայն զինչ հարկ էր բանալ. վասն այ-
նորիկ և ոչ լոկ ինչ ասաց, եթէ չտեսանեն, այլ եթէ
տեսանեն և չտեսանեն [1]. զի յայտ լինիցի՝ եթէ յան-
ձանց չարութենէ է կուրութիւն։ Զ՝անզի տեսանէին
զդէս հանեալ, և ասէին, բեեղզեբուղաւ՝ զիւաց ի-
խանաւն՝ հանէ դա զդէս։ Զ սէին, թէ առ ած մեր-
ձեցուցանէ զնոսա, և բաղում միաբանութիւն ցուցա-
նէ զիւր ընդ այ. և ասէին, թէ չէ այրդ այդ յայ։
Եւ քանզի հակառակս միմեանց՝ զոր տեսանէին և

1 Յորինակին ԹԵՍՆԷՆ։

լսէին՝ խօսէին, վասն այնորիկ, ասէ, և զլսէն և-ս բարձից 'ի նոցանէ. զի ոչինչ անտի աւելի օգուտ գործի, այլ և դատապարտութիւն և-ս մեծ։

Քանզի ոչ միայն չհաւատային, այլ և սատէին և-ս, և չարախօս լինէին, և նենգութիւնս նիւթէին։ Այլ չասէ ինչ զայն. քանզի ոչ կամի ծանր ինչ ուս-մանք լինել, և ոչ ամբաստան զուսանէլ։ Զա և զառա-ջինն այնպէս ինչ չխօսէր առակօք, այլ բազում յայտնութիւն. և քանզի նոքա արարին կամակոր զան-ձինս, ապա և առակօք իսկ խօսէր։ Օ՛ի մի ոք կար-ծիցէ, եթէ դոյզն ինչ ամբաստանութիւն իցեն բանքն, և կամ առ թշնամանել ինչ մեզադիր լինիցի և բամ-բասիցէ, ապա և զմարգարէն ածէ 'ի մէջ զայս ամ-նմա համարեալ։

«Օ՛ի կատարեսցի առ նոսա մարգարէութիւնն Եսայայ, որ ասէ, եթէ լսելով լուիջիք՝ և մի իմասջիք, և տեսանելով տեսջիք՝ և մի տեսջիք։ Օ՛ի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, և ականջօք իւրեանց ծանրագոյնս լուան, և զաչս իւ-րեանց կափուցին, զի մի երբէք տեսցեն աչօք, և ականջօք լուիցեն, և սրտիւք իմանայցեն, և դարձ-ցին և բժշկեցից զնոսա»։ Տեսանեն զմարգարէն մե-ծամեծ հաւաստեօք լեալ ամբաստան զնոցանէն։ Քանզի ոչ ասաց, եթէ չտեսանիցէք, այլ եթէ տե-սանիցէք և չտեսանիցէք, և լսիցէք և ոչ լսիցէք, և չառնուք 'ի միտ։ Քանզի անձամբ իսկ զանձանց նախ խոյին զականջս, և կափուցին զաչս, և թանձ-բացուցին զսիրտս. զի ոչ միայն լսել չկամեցան, այլ և ծանուանս լսէին։ Լու զայս այսր աղագաւ, ասէ, առ-նէին, «Օ՛ի մի երբէք դառնայցեն և բժշկեցից զնո-սա». զյաձախուն չարեացն նոցա կամի ցուցանել, և զյօժարութիւնն զյետս կալ։ Լու զայս ասելով՝ կամի զնոսա առ ինքն ձգել և յորդորել, զի ցուցանիցէ, եթէ դառնայցեն՝ բժշկեմ զնոսա։

Օ՛որ օրինակ յորժամ ասիցէ ոք, եթէ չկամե-ցաւ տեսանել զիս, և չնորհ ունիմ, քան թէ աղաչէ-ցեալ էի՝ և վաղվաղակի ներեալց էի։ Լու ոչ այն կամք իցեն՝ զի չտեսանիցենն, այլ այնու իսկ կամի տալ պատճառս հաշտութեան։ Այնպէս և սատ ասէ՝

զուցէ երբէք դառնայցէն, և բժշկեցից զնոսա. յայտ արարեալ՝ թէ և դառնալ մարթ է. և եթէ ապաշխարեսցէն, զոյ հնար փրկուիցէ։ Այլ ոչ եթէ յիւր ինչ փառս, այլ ի նոցա փրկուիցի առնել զայմ։ Զի եթէ չկամէր զլսելն նոցա և զկեալ, ապա լուել ինչ պարտ էր, և ոչ առակօք խօսել։ Այս աւանիկ այնու իսկ կամի յորդորել զնոսա, զի անյայտն խօսի. քանզի զի ՝ն ոչ կամի զմահ մեղաւորին՝ որպէս զդառնալն նորա և կեալ։ Այլ զի ոչ բնութիւն ինչ էն մեղքն, և ոչ ՝ի հարկէ և ոչ ՝ի բռնութէ, լուր զինչ ասէր ցառաքեալսն։

«Զեր երանի է աչաց՝ զի տեսանէն, և ականջացդ՝ զի լսէն»։ Ո՛չ զայսմ ինչ տեսանելեաց ասէ, և ոչ զյայտնի լսելեացս, այլ զմտացն աչաց և զսրբոյն լսելեաց. քանզի և նոքա իսկ հրեայք էին և ընդ նոսա մնեալք, և նոցին օրինաց օրինաւորք, սակայն ոչինչ ինասեցան ՝ի մարգարէութենէն. զի զարմատս բարութեաց յանձին ունէին, և միտս յանգս, և կամն հաճոյականս։ Տեսանէ՞ս, զի ձեզ տուեալն՝ ոչ ՝ի հարկէ ինչ է։ Այս և երանելին իսկ ոչ, եթէ ոչ անձանց ինչ էր ուղղութիւն։ Այլ զայն մի ինչ ասիցես, եթէ նա աւանիկ անյայտս խօսէր։ Զի կարող էին մատչել և հարցանել իբրև զաշակերտսն. այլ ոչ կամեցան, քանզի և յոյլք էին և պղերգք։ Այլ զինչ ասիցեմ եթէ ոչ կամեցան. ուր և հակառակ ևս գործս գործէին։ Զի ոչ միայն չհաւատային և չլսէին, այլ և պատերազմ ևս տային, և կարի իսկ դժկամակ լինէին ընդ քանսն։ Վասն որոյ զմարգարէն ածէ ՝ի մէջ ամբաստան զնոցանէն՝ ասելովն, եթէ և ականջքն ծանուցեալ լուան։ Այլ աշակերտքն ոչ այնպիսիք օր էին. և քանզի երանի իսկ տայր նոցա, և միտսն ևս հաստատէ զնոսա։

«Այլ, ասէ, ասեմ ձեզ, բազում մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ, և ոչ տեսին, և լսել զոր լսէքդ, և ոչ լուան». զգաւլուստս իմ, ասէ, զնչանսդ, զբարբառս, զվարդապետութիւն։ Այլ ասա ոչ քան զանպիտանս օր, այլ և քան զպիտանիս առաւել համարի զնոսա։ Այլ զիարդ իցէ։ Զի ոչ միայն զոր հրեայքն ոչ տեսին՝ տեսանէին,

այլ և զոր արդարքն ցանկային տեսանել՝ և ոչ տեսին. այլ նոքա հաւատովք տեսին. և սոքա աչօք իսկ՝ և յայտ յանդիման։ Տեսանես զկարդ զՀինն միաբանել ընդ նորոյս, յայտ արարեալ՝ եթէ ոչ միայն գիտէին նոքա զՀանդերձեալսն, այլ և կարի իսկ ցանկային։ Այլ եթէ օտարոտի ուրուք և հակառակորդի ՝՝ էին, ապա ոչ ցանկային այնմ՝՝ որ առ յապա ժամանակս լինելոց էին։

«Այլ արդ, ասէ, դուք լուարուք զառակ սերմանահանին»։ Այլ սկսաւ ասել՝ զոր յառաջագոյնն ասացաք, վասն ծուլութեանն և փութոյ, վասն երկիւղի՝ և քաջասիրտ լինելոյ, վասն ընչից՝ և չստանալոյ կարասի. յայտ արարեալ զանտի մնասն, և զաստի օգուտ. ապա և զառաքինութեանն ընծայեցուցանէ զգուշակ գունակ կերպարանս։ [1]Անդի մարդասէր է, և ոչ մի միայն Ճանապարհ հորդեաց, և չասաց՝ եթէ որ հարիւրաւորն չառնիցէ՝ խոտան գտանի, այլ եթէ և զվաթսնաւորն առնիցէ՝ կեայ. և ոչ այսչափ միայն, այլ եթէ և զերեսնաւորն առնիցէ, և այնուղիւրին յարդարէ զփրկութիւն։

ԳՈՐԴՈՐԱԿ

Այլ արդ դու եթէ չկարիցես կուսութիւն պահել, օրինօք ամուսնասջիր։ Այլ եթէ չկարիցես անմնչ և առանց կարասւոյ լինել, տաջիր աղքատաց յընչիցն զոր ունիցես։ Այլ եթէ այնմ ևս բեռին չհանդարտիցես, բաժանեա ընդ [1]Անի զնչան։ Այլ եթէ զայմ չկամիցիս թողացուցանել 'ի նա. գէթ կիսոյն հասարակորդ՝ առնիջիր. և եթէ այնպէս ոչ, գոնէ զերիր մասն տաջիր։ Այղպայր քո է և ժառանգակից, արա և դու զնա քոյումն ժառանգակից. և եթէ նմա տայցես, գիտասջիր եթէ անձին տաս։ Ցլսիցես մարգարէին՝ որ ասէ, թէ «Յարենէ քումմէ ակն մի արկանիցես»։ Այլ եթէ յարենէ ակն չիցէ պարտ արկա-

1 Փարիզեան օրինակն հասարդ։

նել, որչափ զնոնէն [1], որ ընդ տերութեան և զազգա-
կանութեանն ես խնամ ունիցի ընդ քեզ։ Այս ես աւե-
լի, զի և բաժանակից ես արար զքեզ իւրոյ սեպհա-
կանացն, և յառնու ինչ 'ի քէն, այլ և վայելեցոյց
զքեզ յայնչափ բարութեան։ Օ խարդ չիցէ վերջին
անմտութեան [2] այնպիսի պարգևօք չլինել մարդասէր,
և ոչ փոխարէն շնորհացն հատուցանել, և ընդ մե-
ծամեծացն սակաւ ինչ [3] տալ. զի նա զքեզ երկնից
ժառանգաւոր արար, և դու երկրաւորացս ոչ։ Այս
ընդ քեզ՝ մինչև ուղղութեան [4] գործեալ էր, և թէպա-
մի ես էիր, հաշտեցաւ. և դու մինչդեռ բարեկամն և
երախտաւորն է՝ չհատուցանես ինչ երախտիս։ Զոհ
պէտ և յառաջ քան զարքայութեան խոստանալոյ՝ և
զայլ ամ բարութեան շնորհելոյ՝ պարտ էր զարժանն
հատուցանել։

Զանցի և ծառայք յորժամ զտեարս 'ի ձաշ կո-
չիցեն, ոչ տալ ինչ, այլ առնուլ ակն ունին տեարքն։
Այս ասա նմին հակառակ ինն եղև. ոչ եթէ ծառայն
զտէրն, այլ նախ տէրն կոչեաց զծառայն յիւր սեղանն.
դու և յետոյ չկամիցիս կոչել։ Այսպէս նա յիւր բնա-
կութեան տարաւ զքեզ, դու և յետոյ ոչ. նա մերկ է-
տես զքեզ և զգեցոյց, դու տեսանես զնա մերկ, և
զանց առնես. օտար էիր, և ժողովեաց զքեզ, դու
տեսանես զնա յօտարութենէ և անտես առնես։ Օ բա-
ժակն իւր ետ [5] 'ի ձեռին քում, դու բաժակաւ մի
ջուր հով չկամիս տալ նմա. զհոգին սուրբ արբոյց
քեզ, և դու զմարմնաւոր ծարաւոյ նորա չկամիցիս
հարկանել [6] զփափաք. զհոգին սուրբ արբոյց քեզ՝
որ արժանիդ էիր տանջանաց, դու զնա ծարաւ տե-
սանես, և անտես առնես, և այն զի 'ի նորայոցն ես
ծախելոց ես։

Այս չհամարիցցես մեծ՝ զբաժակն 'ի ձեռին ունելով,
ուստի Զոհ ըմպելոց է, մատուցանել 'ի բերանն։ Ա՞չ
տեսանիցես, զի քահանային միայն օրէն է տալ զբա-
ժակ արեանն. և ես ոչինչ խորշիմ, ասէ, և ոչ հա-

1 Փար. օր. զրաֆ նս սահնէն 'ի ինն։
2 Փար. օր. անմտութիւն։
3 Փար. օր. սակաւ ինչ։
4 Փար. օր. սրդութիւն ինչ։
5 Փար. օր. էր։
6 Փար. օր. լնուն սրանել։

ւասստիս պահանջեմ, եթէ այս անուն կամ այն անուն տայցէ. եթէ քահանայն տայցէ և եթէ աշխարհակալն, ոչինչ խտրեմ. ոչ որպէս ետուդ՝ նոյնպիսի ինչ խնդրեմ. չպահանջեմ արիւն, այլ ջուր ցուրտ։ Եւ արդ՝ ի միտ առնուցուս՝ ուր իցես մատուցանելոց զբաժակն. զահի հարեալ երկնչիցիս, զի Տէր քահանայ եղեր. քոյին ձեռօք ոչ մարմին մատակարարես, այլ հաց. և ոչ արիւն, այլ բաժակ մի ցրտի ջրոյ։

Օ գեցոյց քեզ հանդերձ փրկութեամբ ինքնին անձամբ. դու գէթ ծառայիցն հրամայեսջիր զգեցուցանել զմերկս։ Լաւ զքեզ փառաւոր յերկինս. դու ի սաբսուոյն ապրեցուցանիջիր, զմերկութիւն ծածկեսջիր։ Լաւ զքեզ քաղաքակից հրեշտակաց. դու գտնէ մի օր տաջիր վասն իբրև ծառայի ի քում տանն։ Ողորմիր, ասէ, յայնպիսի բնակուէ. ես, ասէ, քեզ զերկինս բացի, և յանհնարին բանտէն զերծուցի. ի քէն ոչ այնպիսի ինչ պահանջեմ, բայց տեսանել եթէ գայցես ի բանտն. զայն միայն բաւական համարիմ ի մխիթարութիւն։ Վերեալ երիր՝ և յարուցի զքեզ. և ի քէն այսպիսի ինչ ոչ պահանջեմ, բայց միայն զի ի տես եթէ երթիցես հիւանդաց։

Եւ արդ յորժամ զայսպիսի մեծամեծս առեալ իցէ, և սակաւս պահանջիցիմք, և յայն ևս ծոյլ գտանիցիմք, որպիսոմ գեհենի չլցեմք արժանի. և յիրաւի իսկ երթայցեմք ի հուրն՝ որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակացն նորա, որ քան զքարինս ևս անզգայագոյն գտանիմք։ Որ անմտուն քան զայն չար կայցէ, զի այսչափ առեալ, և այնչափ առնլոց եմք, և ընչից կայցեմք ի ծառայութիւն, յորոց և յետ սակաւ մի ժամանակի մեկնիցիմք։ Այլ և զոգիսն անպամ եդին ի վերայ, և զարիւն պարանոցաց հեղին. դու և զաւելորդն չկամիս ումեք տալ վասն երկնից բարութեանցն և այնպիսի պսակաց, և որպիսի ներելոյ և թողութիւն արժանի լինիցիս, որում պատասխանատուութիւն։ Յերկիր ցրուեալ ախորժելով սերմանես, և մարդկան փոխ տալ յանինայ առա-

1 Փար· օր· Ե· [illegible]։

տանաս. և յորժամ զքո Տէրն իցէ կերակրել, աստ
Ճղճիմ և տմարդի դատնիս։

Օ այս ամենայն զմտաւ ածեալ, եթէ ո՞րչափ ինչ
առաք, և ո՞րչափ առնլոց եմք, և ո՞րչափ ինչ խնդրե-
լոց եմք, զամ ինչ փոյթ ՚ի հոգւոյն ցուցանիցեմք.
լինիցիմք քաղցունք, առատք և մարդասէրք, զի մի
զանհնարին տանջանսն յանձինս կորզիցեմք։ Այլ արդ
զինչ ոչ իցէ բաւական դատապարտել զմեզ. առա-
ջին բարութիւնն՝ յոր վայելեցաք, եթէ յոր վայելե-
լոյն եմք, եթէ զի ո՞չ մեծ ինչ խնդրէ. զի զայն խընդ-
դրէ՝ զոր և ակամայ իսկ աստէն թողուցումք. զի բա-
զում առատութի յերկրաւորսս ցուցանեմք։ Յորոց
մի մի բաւական է դատապարտել, թող թէ յորժամ
իսկ [1] ՚ի մի վայր դումարիցին, զինչ յոյս փրկութե
կայցէ։ Այլ արդ զի յամ դատապարտութէ փախ-
չիցիմք, ցուցցուք առատութի առ կարօտեալս. զի
այսպէս յաստի և յանտի բարութիւն վայելեսցուք.
որոց լիցի ամենեցուն մեզ հասանել ընդ հօքն և մար-
դասիրութեամբ Տն մերոյ և փրկչին Յի Քի. ընդ
որում հօր և սուրբ հոգւոյն փառք յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն։

1 փար. օր. յորժամ ամ ի-ի։

ՃԱՌ ԿՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

«Այլ միւս և առակ եդ առաջի նոցա։ Զմանեցաւ, ասէ, արքայութիւն երկնից մարդոյ՝ որ սերմանիցէ սերմն բարի յիւրում ագարակի. և իբրև 'ի քուն է զէն մարդիկն, եկն նորա թշնամի, և սերմանեաց որոմն 'ի մէջ ցորենոյն և գնաց։ Իբրև բուսաւ խոտն, և արար պտուղ, ապա երևեցաւ որոմն։ Եւ մատուցեալ ծառայք տէրն՝ ասէն, տէր ո՞չ սերմն բարի սերմանեցեր 'ի քում յագարակին, արդ ուստի՞ ունիցի զորոմն։ Եւ նա ասէ ցնոսա. այր թշնամի արար զայն։ Եւ ասէն ցնա ծառայքն. կամիս, զի երթիցուք քաղեսցուք զայն 'ի բաց։ Եւ նա ասէ. մի, գուցէ մինչ զորոմն քաղիցէք՝ և զցորեանն ընդ նմին խլիցէք. թոյլ տուք առնել երկոցունց մինչև 'ի հունձս, և 'ի ժամանակի հնձոյն ասացից ցհնձողսն, ժողովեցէք զորոմն և կապեցէք զնոսա խրձունս առ 'ի յայրումն, և զցորեանն ժողովեցէք յշտեմարանս իմ»։

Զ ԻՆՉ 'ի միջի կայցէ այսր և առաջին առակին։ Ընդ զայնոսիկ՝ որ բնաւին իսկ ոչ անսային նմա, և բայց 'ի բաց փախեան՝ առակէ, և որք զսերմնն ամենևին 'ի դերև հանին։ Եւ աստ զհերձուածոզայն ժողովս, զի մի և այն ինչ խռովիցէ զաշակերտսն. վասն այնորիկ յառաջագոյն ասէ, յետ ցուցանելոյ նոցա՝ թէ վասն էր առակօք խօսիցի։ Յայսմ առակի ասէ, բնաւ չընկալան. և յայսմ, եթէ զապականիչսն ընկալան։ Եւ այս իսկ սատանայի խարդախութեան գործ է, միշտ ընդդէմ Աշմարտութեան զմոլորութիւն Ճակատել. բազում կերպարանս նմանս նմին գունաւորել, առ 'ի դիւրաւ գողանալ զայնոսիկ՝ որք վաղվաղակին պատրիցին։ Զ ասն այնորիկ ոչ այլ ինչ սերմն սերմանէ, այլ զորոմն, որ նման իսկ էր ցորենոյ։

Զպա ասէ և զկերպարանս ինասակարութեանն,

եթէ յորժամ 'ի քուն եղէն մարդիկ· որ ոչ սակաւ ինչ վտանգ տագնապի կախէ զպարանոցէ իշխանաց, որոց հաւատացեալ իցէ պահպանութիւն անդաստանաց· և ոչ միայն իշխանաց, այլ և նոցա՝ որ ընդ իշխանութեամբն իցեն։ Այսր առնէ և զմոլորութիւն առընթերակաց Ճշմարտութեան, որպէս զի և ելք իսկ իրացն վկայեն· զի և առ մարգարէիւքն՝ սուտ մարգարէքն էին, և առ առաքելովքն՝ սուտ առաքեալք, և յետ Քրիստի՝ Անտիքրիստոսն, այսմիջոցս է Ղեռնն՝ հակառակ Քրիստի։ Զի եթէ ոչինչ տեսանիցէ՝ ոմ լինիցի նմանօղ սատանա· կամ ոմ ուստեք փնասակար, քանզի ոչ գիտէ ինչ, և ոչ ժամ։ Բայց այժմ գիտաց՝ եթէ ոմն զհարիւր տոհմականն արար, և ոմն զվաթսնաւորն, և ոմն զերեսնաւորն· ապա ընդ այլ Ճանապարհ գայ գաղտագողի։ Քանզի յա փշտակել ոչ կարէ զհաստատեալ արմատն, և ոչ հեղձուցանել, և ոչ խորշակահար առնել, այլ պատրանօք կամի փնասել արկանել զիւր թոյնն մեղանչականս։

Զինչ ընդհատ իցէն, ասէն, որ ենջիցէն՝ յայնցանէ ոչք Ճանապարհի նման իցէն։ Ընդ վաղվաղակի յափշտակեաց, և չետ արմատս հաստատել· բայց աստ բազում մենքենայիւք ջանացաւ։ Զայս ասէ Քրիստ՝ առ 'ի խրատել զմեզ միշտ արթուն լինել· զի թէպէտ և յայսմ խաղրից զերծանիցիս, սակայն այլ փնասակարուն 'ի դիմի հարկանիցի· զոր օրինակ անդ Ճանապարհաւն և առապարաւն և փշովքն, նոյնպէս աստ քնոփն լինի կորուստ։ Ա՝ ամն որոյ հանապազորդ իսկ զգուշութեամբ պէտք էն· որպէս և ասէ իսկ, եթէ «Զի համբերիցէն իսպառ՝ նա կեցցէ»։ Բայսպիսի ինչ եղև զառաջինն· քանզի բազումք յառաջնորդաց ըստմարդս անօրէնս յայլանդակաց մուծին յեկեղեցի գաղտագողի, և բազում պատՃառս ետուն փնասակարութեամբ չարի· որով և ոչ ջան ինչ է այսուհետև սատանայի, յորժամ զայնպիսին 'ի ձեռին ունիցի։

Եւ զիարդ մարթ իցէ, ասեն, ենջել։ Զենութեամբ քունն չէ հնար հատանել, այլ զկամացն՝ դիւրագոյն է։ Ա՝ ամն որոյ և Պաւղոս ասէ, «Բրթուն լերուք, հաստատուն կացէք 'ի հաւատն»։ Զայս և աւետարդ

իսկ զկրսն ցուցանել, ոչ միայն վնասակարս. զի յետ գործելոյ զանդն, և ոչ իւիք պակաս գտանելոյ, ապա ցանել 'ի վերայ այնր սերմանն զորոմնն։ Օ՞որ օրինակ և հերձուածողքն ոչ վասն այլ իրիք, այլ վասն մնապարծութեան միայն արկանեն զուրեանց թոյնսն։ Այս ոչ այսու միայն, այլ և յաջորդօքն եւս կարի յայտ առնեն զխաբէութիւն նոցա։

» Յորժամ արձակեաց, ասէ, զբոյսն, և արար պտուղ, ապա երևեցաւ որոմնն »։ Օ՞որ օրինակ և հերձուածողքն զառաջինն թաքուցանեն զանձինս. և յորժամ համարձակիցին, և մեծարանաց եւս արժանի լինիցին, յայնժամ զեղուն զթոյնսն։ Այս զի՞ բերիցէ զնաւս ծառայիցն 'ի մէջ, որք զչարացան ընդ բոյսն որոմանն. և զի ասիցէ, թէ չէ պարտ զնոսա 'ի միջոյ բառնալ։ Թէ՞նամի այր զնա կոչէ ատ՝ վասն մարդկան վնաս առնելոյ, և զի զմեղանչականութիւնն 'ի մեզ ցուցանէ։ Այս սկիզբն մեղանչականութեան ոչ յայնցանէ ինչ է, զի մեզն մեղանչէ, այլ զի ընդ այ կամացն իշխեաց կացուցանել թշնամուի։ Աւստի և յայտ իսկ է, զի ած առաւել եւս սիրեր զմեզ՝ քան թէ մեք զանձինս։

Տես և այլ ուր զչարագործուն բանսարկուին. զի ոչ յառաջ ինչ ժամանակաւ սերմանեաց, քանզի ոչ ինչ գտանէր կորուսանել. այլ յորժամ ամ գործն կատարեցաւ, ապա փոյթ յանձին կալեալ զգործս մշակին ապականել։ Տես և զծառայիցն խնամակալութիւն, զիարդ փութային իսկ և իսկ զորոմնն 'ի միջոյ խլել. որ կարի իսկ նշանակ դարման տանելոյ նոցա սերմանն էր. և 'ի մին միայն նայէին, եթէ ոչ սերմանիչն ինչ որոմանն չտայցէ վրէժս, այլ զի սուրբ սերմնն՝ որ սերմանեցաւ, մի կորնչիցի։ Այլ ոչ, ասեն, զայդ ինչ յայտնէ փոյթն, այլ զի զմնան 'ի միջոյ հանիցեն, առժամայն գիտէին. նա և ոչ այնպէս ինչ վայրապար հայցէին հրաման, և ոչ զմնաց պէտս կատարէին, այլ կամաց ամն անսային։ « Կամիս, ասէին, երթիցուք խլեսցուք զորոմնն »։ Այս ասրն արգելոյր. « Մի՛, ասէ, գուցէ և զցորեանն ընդ նմին խլիցէք »։

Օ՞այս ասէ՝ զի զպատերազմունս և զարիւնս և

զսպանութիւն կարձիցէ։ Զի՝, ասէ, պարտ կոտորել զայլանդակսն. ապա թէ ոչ՝ անհաշտ պատերազմ մուծանելոց էր յաշխարհ։ Երկուք մտաք արգելոյր զնոսա. մի՝ զի ցորենոյն ինչ ոչ մեղանչիցեն. երկրորդ անգամ՝ եթէ կրելոց են զանհնարին պատիժս՝ որ զառանց բժշկութեան ցաւսն ախտանայցեն։ Որպէս զի թէ կամիցիս տեսանել զպատիժս նոցա առանց ցորենոյն վնասու, անսասջիր մնասջիր 'ի դէպ ժամանակի։

Եւ զինչ յայտ առնիցէ այն, թէ գուցէ և զցորեանն ևս ընդ նմին խլեցէք։ Օ՛ն եթէ զնոս կազմիցէք, ասէ, կոտորել զհերիսիկոսս, հարկ լինիցի և 'ի սրբոցն բազումն ընդ նոսա կոտորել։ Կամ թէ անդատին իսկ յորոմնէն բազումք իցեն դառնալոց՝ լինել ցորեան. եթէ յառաջագոյն, ասէ, զնոսա խլեցէք, ապականէք զայնոսիկ՝ որ ցորեանն լինելոց են. զի մարթի դառնալ և լինել պիտանացուս՝ թէ կամիցին։ Այ՛ն եթէ արգելու զհերիսիկոսսն ըմբերանել, և կարձել զհամարձակութիւնն նոցա և զժողովուրդսն և զվոյթսն՝ քաջքայել՝ արգելու, այլ կոտորել և սպանանել։ Եւ դու մնա դիր հեզութեան նորա, զիարդ ոչ միայն վնասուն տայ և ոչ արգելու, այլ և միտս ինչ գնե 'ի միջի, եթէ նոյնպէս մնացէ մինչև ցվախճան որոմնն, ապա «Այսացից, ասէ, ցհնձողսն, եթէ ժողովեցէք զորոմնն և կապեցէք խրձունս խրձունս 'ի նիւթ հրոյ»։

Դարձեալ յիշեցուցանէ նոցա զՅովհաննու ըզբանսն, որք դատաւորն ցուցանեն զնա։ Զինչ մնա 'ի ցորեանն կայցէ որոմնն, խնայել պարտ էր 'ի նա. զի մարթ էր նմա և 'ի ցորեան դառնալ. և յորժամ ոչինչ շահեալ գնայցեն աստի, յայնժամ 'ի հարկէ իսկ անհրաժեշտ պատիժքն ընդունիցին զնոսա։ «Այսացից, ասէ, ցհնձողսն, ժողովեցէք նախ զորոմնն»։ Եւ ընդէր նախ զորոմնն։ Օ՛ն մի կասկածիցեն նոքա, թէ և ցորեանն ընդ նմին ժողովիցի։ «Եւ կապեցէք խրձունս խրձունս 'ի նիւթ հրոյ. և զցորեանն ժողովեցէք յշտեմարանս իմ»։

1 Ա. յժամու յայնն ՁՈՒԷՐՆ. մեր թարգմանն ընթերցեալ է ընթերցեալ տէս տրոսնդէ. իսկ տէս տրոսնդէ, ՁՈՒՆՆ։

«Զ.յլ միւս առակ արկ առաջի նոցա։ Նման է արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ»։ Զի քանզի 'ի սերմանեացն առակի եցոյց, եթէ երեք մասունքն կորնչին և մին միայն ապրէ, և որ ապրիցէն՝ և նմա այնչափ փնաս լինի, զի մի ասիցէն՝ եթէ քանի՞ ինչ հաւատացեալքն լինիցին, և զայն ևս կասկած բառնայ 'ի միջոյ՝ մանանխոյն առակաւ, և յորդորէ զնոսա 'ի հաւատս. յայտ արարեալ՝ թէ առաւել տարածելոց է քարոզութիւն։ Զ.ատն այնորիկ զբանքարոյն օրինակ 'ի մէջ բերէ, որ կարի իմն նման է ի բացն։ «Զ.որ փոքրագոյն է քան զամ սերմանիս. և յորժամ աճիցէ, մեծանայ քան զամ բանջարս, և լինի ծառ, որպէս գալ թռչնոց երկնից և բնակել յոստս նորա»։ Զ տարածելոյն նշանակ կամի ցուցանել. նոյնպէս, ասէ, և քարոզութիւն լինիցի։ Զ.ան զամ որ անաւագ՝ էին աշակերտքն, և քան զամենեսին տկարք. բայց սակայն զի մեծ էր զօրութիւն որ 'ի նոսա էր, սփռեցաւ ընդ ամ տիեզերս։

Զ.պա և զխմորն ևս 'ի սմին առակի յաւելու օրինակ։ «Նման է, ասէ, արքայութիւն երկնից խմորոյ, զոր առ կինն, և թաքոյց յերիս գրիւս ալեր, մինչ զի ամենայնն խմորիցի»։ Զ որ օրինակ նա զլաւագոյն ալերն յիւր զօրութիւն շրջէ, նոյնպէս և դուք զամ աշխարհս դարձուցանիցէք։ Զ.ու տես զիմաստութիւն, զի զբնութեամբ ինչ իրս 'ի մէջ բերէ. յայտ արարեալ՝ թէ որպէս այնմ մարթի լինել, նոյնպէս և այսմ։ Զ.ու զայն մի ասասցեն, թէ երկոտասան այր յայնչափ բազմութեամբ մէջ՝ որչափ ինչ կարիցեմք ազգել։ Զ.այն իսկ, ասէ, առաւել առնիցէ զձեր զօրութիւն յայտնի՝ խառնել 'ի բազմութիւն, և չփախչել։ Զ որ օրինակ և խմորն յորժամ 'ի զանկուածն մտանիցի, յայնժամ խմորէ. և ոչ վայրապար մտանի, այլ որպէս խառնեալ. քանզի չասէ՝ թէ առընթեր լոկ, այլ եթէ թաքոյց յալերն. նոյնպէս և դուք յորժամ միջամուխ լինիցիք ձերոց պատերազմողացն, յայնժամ յաղթիցէք նոցա։ Զ.ու զոր օրինակ խմոր՝ զի թաղի, և ոչ ապականի, այլ առ սակաւ սակաւ լինքն ձգէ

1 'Ի լուս. ՀԱՅԿԱԶ։

և դարձուցանէ, նոյնպէս և ձեր քարոզութիւն առ սակաւ սակաւ զամենեսին դարձուցանիցէ։ Այլ արդ մի ինչ երկնչել վասն բազում նեղութեաց, զոր յաճախագոյն գուշակեցի՝ եթէ հասանելոց են ձեզ. զի ահա՝ գեր ի վերայ լինելոց էք։

Արիս գրիւս զբազմութիւն առակէ. քանզի գիտէ զթիւս զայս ի վերայ բազմութեան առնուլ։ Այլ ընդ այն մի ինչ զարմանայցես, եթէ զարքայութիւն ճառեալ՝ մանանխոյ և խմորոյ նմանեցուցանէ։ Քանզի ընդ տիմարս և ընդ տգէտս մարդկան խօսելոց էր, որք այնու իմն առաւելագոյն յորդորէին. այնչափ անտեղեակք էին, զի մեկնութեամբ ևս կարօտանային։

Այս արդ ուր իցեն կռապաշտիցն մանկունք. եկեալ լսիցեն զԱրդի զօրութիւն, և ուսանիցին զիրացն Ճշմարտութիւն, և երկրորդումբ նմա երկիր պագանիցեն. զի և յառաջագոյն ասաց զայնպիսի իրաց, և կատարեաց։ Այս ինքն է՝ որ էարկ ի խմորն զզօրութիւն. նմին իրի և խառնեաց յայնչափ բազմութիւն անհաւատիցն և արար հաւատացեալս, զի և մեք փոփոխեցեմք յայլս ի մերմէ իմաստութենէ։ Այս արդ մի ոք զնուազութիւն աղարտիցէ, զի բազում է զօրութիւն քարոզութիւն. և որ խմորեցաւ միանգամ, դարձեալ զայլս խմորէ։ Օ որ օրինակ և կայծակունք յորժամ զփայտէ վառիցին, զվաղուց այրեցեալ բոցոյն յաւելուած առնէն, և անտի ևս Ճարակին, նոյնպէս և քարոզութիւնն։ Այս ոչ ասաց հուր, այլ խմոր. զի հրոյն ոչ ամենայն իւր է, այլ կէս մի և փայտին. իսկ խմորն ամենևին ինքն անձամբ ազդէ։

ՑՈՐԴՈՐԱԿ

Այ եթէ երկոտասան այր զՇամ աշխարհս խմորեցին, ի միտ առ որչափ ինչ է մեր անպիտանութիւն, զի այսչափ ինչ եմք, և չկարեմք զմնացեալսն ածել յուղղութիւն. որոց բազում աշխարհաց պարտ էր լինել բաւական խմորել Ա.յլ նոքա, ասեն, առաքեալք

1 Յօրինակին ՇՀ։

էին։ Եւ այն զինչ աւելի գործիցէ. ոչ իբրև զմեզ մարդիկ էին, և 'ի քաղաքս մնեալ, և դոյզն արուեստի արուեստագէտք. միթէ հրեշտակք էին, կամ յերկնից իջին։ Բ. յլ, ասեն, նշանս առնէին։ Մինչև յերբ իբրև պատրուակ ընդ երեսաց ունիցիմք զծուլութիս. ոչ եթէ այնու ինչ աքանչելիք էին՝ զի նշանս առնէին։ Բազումք իսկ զդէս հանէին, և վասն զի զանօրէնութիս գործէին, չեղեն ինչ զարմանալիք, այլ և 'ի տանջանս մատնեցան։ Եւ զինչ ինչ իցէ, ասեն, որ արար զնոսա մեծամեծս և աքանչելիս։ Օ՛ի զինչսն արհամարհէին, և զփառասիրութիս խոտէին, և յամ մարմնաւորաց ազատք և անարատք լինէին։ Օ՛ի եթէ այնպիսիք չէին լեալ, և ցանկութեց ծառայեալ էին, թէպէտ և բեւեր մեռեալս յարուցանէին, ոչ միայն չշահէին զոք, այլ և խաբեբայք էս կարծէին։ Եւ այսպէս վարքն պարկեշտագոյնք ամ ուրեք առնեն զմարդիկ պայծառագոյն, և արժանաւոր հոգւոյն շնորհաց։

Օ՛ինչ ինչ նշանս արար Յովհաննէս. և քաղաքք ամ զնմանէ կախէին։ Եւ զի չարար նշանս, լուր աւետարանչին՝ որ ասէ, եթէ «Յովհաննէս նշանս ինչ ոչ արար»։ Ի՞նչ եղև զարմանալի Եղիա, ոչ ապաքէն 'ի համարձակութենէն առ Թագաւորն, և 'ի նախանձուէն՝ զոր ունէր վասն այ. ոչ ապաքէն 'ի չքաւորութէն, և 'ի մաշկեկէն, և յայրէին, և 'ի լեռանցն. թէպէտ և արար ինչ նշանս, յետ այնր ամի արար։ Օ՛ինչ նշանս ետես արարեալ զՅովբայ սատանա և հիացար և պարտաւորեցար. նշանս և ոչ մի ինչ, բայց վարս առաքինիս, և համբերութի ևս կարծը քան զադամանդ։ Օ՛ինչ նշանս արար Դաւիթ մինչ դեռ մանուկն էր. զորմէ և ասէ վկայեր, եթէ «Գտի զԴաւիթ զորդի Յեսսեայ՝ այր ըստ սրտի իմում»։ Իսկ Աբրահամ և Սահակ և Յակովբ զոր մեռեալս յարուցին, զոր բորոտս սրբեցին։

Եթէ չիմանայցես, զի նշանքն՝ թէ ոչ արթունք լինիցիմք՝ բազում անգամ և 'ի վնաս ևս լինին։ Օ՛ի այնու իսկ բազումք 'ի կորնթացւոցն Ձեղքեցան 'ի միմեանց. և հռովմայեցիքն նովին հպարտացան. և Սիմոնն այնու ևս եղև տարագիր. և որ զԲեղին ըն-

հետ յայնժամ ցանկայր երթալ՝ խոտան գտաւ, յորժամ լուաւ՝ եթէ աղուեսուց դադարք են։ Եւ իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ ոմն ընչից, և ոմն փառաց ցանկացեալ առ 'ի նշանացն, անկեալ կորնչէին և կործանէին։ Իսկ վարուցն կրթուեցին և առաքինութեամբ գուրթ՝ ոչ միայն չծնանի ինչ զայսպիսի ցանկութիւն, այլ և այրէ և, և անհետ առնէ։

Եւ ինքն իսկ Տէրն յորժամ դնէր օրէնս աշակերտացն, զինչ ասաց. թէ արարէք նշանս, զի տեսցին մարդիկ. և ոչ երբէք. այլ զինչ. եթէ «Լուսադեսցէ լոյսդ ձեր առաջի մարդկան, զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զհայրն ձեր՝ որ յերկինս է»։ Եւ Պետրոսի չասաց՝ եթէ սիրես զիս՝ արա՛ նշանս. այլ եթէ արածեա՛ զոչխարսն իմ։ Եւ մեր ուրեք զնա նախամեծար ինն առնէր հանդերձ Յակովբաւ և Յովհաննու. միթէ վասն նշանաց ինչ. նա աւանիկ ամենեքեան իսկ միապէս սրբէին զաղօրատս, և յարուցանէին զմեռեալս. քանզի ամենեցուն մի ազգ էր զիշխանութիւն։ Եւ արդ ուստի ունէին նոքա զաւելին. յայտ է թէ յոգւոյն առաքինութիւն։ Տեսանէս, զի մեր ուրեք վարուց պէտք են, և գործոցն հանդիսից. ըստ այնմ եթէ «Լոյս պտղոյ նոցա ծանիջիք զնոսա»։

Օ զինչ իցէ՝ որ զկեանս մեր հաստատուն պահիցէ. նշանացն հանդէսք, եթէ առաքինութեանցն հաւատք։ Կարի իսկ յայտ է՝ թէ երկրորդն։ Քանզի և նշանքն անտի իսկ ունին պատճառս՝ և սկիզբն և կատարած։ Յորժամ վարս առաքինիս ցուցանիցէ, յայնժամ ընդունի և զայն շնորհս. և յորժամ ըշնորհսն առնուցու, վասն այնորիկ առնու՝ զի զայլոց վարս ուղղեսցէ։ Քանզի և Քո յայն սակս առնէր զաքանչելիսն, զի արժանի հաւատարմութեամբ երևեալ՝ և այնու առ ինքն ձգիցէ, և առաքինութեամբ մուծանիցէ։ Վասն որոյ և այնմ իսկ պատկառ կայ. զի ոչ եթէ զնշանսն միայն բաւական համարի, այլ և գեհենն սպառնայ, և արքայութեամբ խոստանայ, և շնաշխարհիկ օրէնս դնէ, և զամ ինչ վասն նորին 'ի վաճառաշահ արկանէ, և հրեշտակս գործէ։

Եւ զինչ ասիցեմ, եթէ Քո զամ վասն այնորիկ

առնէր։ Եւ եթէ յընտիր ոք առնէր՝ մեռեալս յա-
րուցանել յանուն նորա, կամ թէ վասն նորա ա-
նուանն մեռանել, զոր լաւ համարէիր. ոչ կարի յայտ
է՝ թէ զերկրորդն. քանզի մին՝ նշան է, և միւսն գործ։
Եւ եթէ առաջի քո առնէր, զխոտ ոսկի առնել և
կամ զամ ինչս իբրև զխոտ արհամարհել, զոր յանձն
առնուիր. ոչ ապաքէն զերկրորդն. և կարի իսկ յի-
բաւի. քանզի և զմարդիկ այն առաւել ածէ զքև։
Օ՛ի եթէ զխոտն տեսանէին ոսկի լեալ, թերևս ցան-
կային և ինքեանք զնոյն զօրութիւն առնուլ՝ որպէս
Սիմոնն, և յաձախէր 'ի նոսա ընչիցն ցանկութի. այս
եթէ տեսանէին իբրև զխոտ արհամարհեալ զոսկի,
իսկ և իսկ և ինքեանք յախտէն զերծնուին։ Տեսա-
նեա՞, զի վարքն առաւել օգուտ կարօղ են գործել։
Զ այս այժմ ոչ զպահոցն ինչ ասեմ, և ոչ զխոր-
դոյն՝ և զմոխրոյ ստանալոյ. այլ եթէ զընչից անփոյթ
առնիցես՝ որպէս պարտ է անփոյթ առնել։ Եւ թէ
զթաց և խնամոտ իցես, եթէ տայցես քաղցելոց ըզ-
հաց քո, եթէ ցաստանն յաղթիցես, եթէ զմնասպար-
ծութի 'ի բաց մերժեսցես. որպէս և ինքն իսկ խրա-
տեաց՝ եթէ «Ուսարուք յինէն, զի հեզ եմ և խո-
նարհ սրտիւ»։ Եւ չասաց, եթէ պահեցի. թէպէտ
և գոյր ասել եթէ զքառասուն օր պահեցի. նա ա-
ւանիկ չասէ զայն, այլ թէ հեզ եմ և խոնարհ սրտ-
իւ։ Եւ դարձեալ յորժամ զնոսա առաքէր, չա-
սաց՝ եթէ պահեցէք, այլ եթէ զամ որ ինչ դնիցի
առաջի ձեր՝ կերիջիք. բայց ընչիցն վասն բազում
ստուգուի պահանջեաց. «Ի՛ ստանայք, ասէ, ոսկի,
և մի արծաթ, և մի պղինձ 'ի գօտիս ձեր»։
Օ՛այս ասելով ոչ եթէ զպահս ինչ խոտեմ. քաւ
լիցի. այլ կարի իսկ քաջ գովեմ։ Բ.այլ ընդ այն
արտմիմ, զի զայլոցն անփոյթ արարեալ՝ զայն միայն
բաւական համարիք 'ի փրկութի, որ զվերջին կողմն
գնդին առաքինութեն ունի։ Բ.անզի մեծ սէրն և ո-
ղորմածութիւնն են, և կուսութիւնն որ անցանէ իսկ
քաջ 'ի բաց։ Որպէս զի եթէ կամիցիս լինել հաւա-
սար առաքելոցն՝ չէ ինչ արգել. քանզի բաւական է
քեզ և միայն ընդ առաքինութի անցանել, և ոչինչ
նուազագոյն քան զնոսա ունել։

Լու արդ մի ոք 'ի նշանս պատճառիցէ։ Զրտմի յորժամ եղանիցէ դևն 'ի մարմնոյ, և առաւել յոյժ՝ յորժամ 'ի մեզանն տեսանիցէ ազատեալ զոգի. քան զի այն իսկ է նորա զօրութիւն մեծ։ Զայն այնորիկ մեռաւ Լազ, զի զնա լուծցէ. զի նա իսկ եմոյծ ըզմահ. վասն այնորիկ ամ իրք եղծան։ Լթէ զնա 'ի միջոց բառնայցես, կտրեցեր զՄիս սատանայի, ջաղխեցեր զգլուխ նորա, քակեցեր զենաւ զօրութիւն նորա, և ցտեցեր ցրուեցեր զանական, քան զամ նշանս մեծ նշան ցուցեր։ Լու էէ իմ բանս, այլ երանելի առաքելոյն. «Լայսանձեցուցանեմ զձեզ, ասէ, 'ի լաւագոյն շնորհն, և ևս առաւել ճանապարհ ցուցանեմ». և յաճէ զնովիմբ եթէ զնշանս, այլ եթէ զսէր՝ զարմանն ամ բարութեաց։ Լու արդ եթէ նոսվաւ զմեռեսցուք, և ամ առաքինութիւն որ 'ի նմանէ իցէ, չկարօտանայցեմք ինչ նշանաց. զոր օրինակ եթէ նոսվաւ չկազմիցիմք, չօգտիմք ինչ 'ի նշանացն։

Զայս ամենայն իմայեալ՝ որովք առաքեալքն աւաղացան, նմին նախանձաւորք լիցուք՝ որով նոքայն մեծացան։ Լուր Պետրոսի. «Լհաւասիկ, ասէ, մեք թողաք զամ՝, և եկաք զքնի քո. զինչ արդեաք լինիցի մեզ»։ Լուր և Լոնի, զինչ տայ նոցա պատասխանի. «Լամենայն որ եթող զտուն, կամ զեղբարս, կամ զքոյր, կամ զհայր, կամ զմայր, հարիւրապատիկ ասա առցէ, և զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ»։ Զերժեսցուք այսուհետև և յամենայն երկրաւորաց, և նուիրեսցուք զանձինս Լոնի. զի և առաքելոյն հաւասարորդք լիցուք՝ ըստ նորա վճիռն տալոյ, և 'ի յաւիտենից կեանսն վայելեսցուք. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօքն և մարդասիրութեամբն ամ մերոյ և փրկչին Յոնի Լոնի. ընդորում հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

« Օ այս ամ խօսեցաւ առակօք Յն ընդ ժողովուրդսն, և առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա։ Օ ի կատարեսցի բանն՝ որ ասացաւ 'ի ձեռն Եսայայ մարգարէի, եթէ բացից առակօք զբերան իմ, և բղխեցից զծածկեալսն 'ի սկզբանէ աշխարհի »։

Արկոս ասէ, որպէս ինչ կարէին լսել՝ խօսէր ընդ նոսա զբանն առակօք։ Եւ զի ցուցցէ՝ եթէ ոչ օտարս ինչ և նորոգ է, ածէ զմարգարէն 'ի մէջ՝ որ յառաջագոյն գուշակէր զօրինակ այնպիսի վարդապետութեան. և ուսուցանէ մեզ զԵրեմի միտսն, եթէ ոչ զի մի իմանայցեն՝ այլ զի զնոսա ածիցէ 'ի հարցուածս, խօսէր այնպէս, յարէ 'ի նոյն՝ եթէ « Առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա »։ Զի պէտք և բազում անգամ առանց առակաց խօսեցաւ, այլ յայնժամ և ոչինչ։ Սակայն ոչինչ որ եհարց ցնա. թէպէտ և բազում անգամ զմարգարէսն հարցանէին, որպէս ցԶզեկիել և ցայլս բազումս. այլ նորա ոչինչ հարցանէին. թէպէտ և բաւական էին բանքն 'ի տաղնապի կացուցանել զնոսա, և զարթուցանել 'ի հարցուածս։ Զանզի տանջանս մեծամեծս սպառնային առակքն սակայն ոչինչ ընդդոստեան. վասն որոյ թողոյր զնոսա և գնայր. « Զթող, ասէ, զժողովուրդսն, և գնաց 'ի տունն Յն »։ Եւ ոչ որ երթայր զհետ նորա 'ի դարբասն. ուստի և յայտ իսկ է՝ եթէ ոչ վասն այլ իրիք եկեալ էին անդ, այլ զի բանս ինչ կարիցեն հանել 'ի նմանէ։ Երբև ոչինչ խմացան յասացելոցն, եթող զնոսա և գնաց։

« Եւ մատուցեալ, ասէ, առ նա աշակերտքն նորա և ասէին, մեկնեա մեզ զառակ որոմանն ագարակի »։ Թէպէտ և ուրեք՝ յորժամ ուսանել ինչ կամէին, զանգիտէին հարցանել. և արդ ուստի եղև նոցա այնպիսի համարձակութիւն։ Յայնմանէ՝ զի ուսանն, եթէ ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արք-

քայութիւն երկնից, և ընդելան։ Ամսն որոյ և առանձինն իսկ հարցանէին, և ոչ առաջի բազմութեան, զի մի՝ ի նախանձ զոք գրգռիցեն, այլ զտեղն պահիցեն զօրէնս, զի նոցա, ասէ, չէ տուեալ։ Այս զիսաբդ իցէ, զի զիմնրոյն և զմանանխոյն առակն թողեալ՝ զայն ևեթ հարցանէին։ Այլ զայնս իբրև զայսմանի ինչ թողին. և զայս իբրու թէ առ Ճառեալ առակն ունիցի, և աւելի ինչ քան զայն ցուցանիցէ, կամէին ուսանել։ Օի թէ և կրկին իսկ ասացեալ էր, այնպէս ախորժէին իսկ ուսանել. մանաւանդ զի բազում իսկ սպառնալիք երևէին յառակէն. վասն որոյ և ոչ սատակ ինչ՝ ի նոսա, այլ և վերստին ևս ընու զաւ սացեալն։

Այս զոր միշտն ասէի, թէ յառակին ոչ ըստ բանիցն պարտ է ելանել, այլ ըստ մտացն, ապա եթէ ոչ՝ բազում իսկ անդէպ իբրև գտանիցին անտի. նոյնպէս և ինքն խրատէ զմեզ՝ պատմելով զառակն. ոչ ասաց՝ եթէ ո՞ որ էին ծառայքն որ մտտեան. այլ յայտ արարեալ՝ եթէ կարգի իմն աղադաւ յարեաց զնոսա յառակն, և յօդելոյ վասն զկերպարանն. ըզսոյն թողեալ՝ զկարի պիտոյն մեկնէ, վասն որոյ և մանաւանդ իսկ առակն ասացաւ, զի ցուցանիցէ զանձքն դատաւոր և նոր ամենեցունց։

«Պատասխանի ետ նոցա, և ասէ. սերմանահանն է որդի մարդոյ. և ագարակն աշխարհս է. սերմն բարի սոքա են որդիքս արքայութեան. և որոմին են որդիք չարին. և թշնամին որ զորոմին սերմանեաց՝ սատանա. հունձքն՝ վախճան աշխարհիս, և հնձողքն հրեշտակք են։ Որ օրինակ ժողովի որոմին և՝ ի հուր այրի, նոյնպէս եղիցի և՝ ի վախճան աշխարհիս այսր բիկ. առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս, և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամ գայթագղութիս, և զայնոսիկ որոյ արարեալ իցէ զանօրէնութիս. և արկանիցեն զնոսա՝ ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ աչաց և կրճել ատամանց։ Յայնժամ ծագեսցեն արդարքն, իբրև զարեգակն, յարքայութեան հօր իւրեանց»։ Յորժամ ինքն իցէ սերմանիչ. և նորին ագարակն, և յարքայութենէ իւրմէ հրամայիցէ ժողովել, ապա կարի իսկ յայտ է՝ եթէ այս աշխարհս նորա է և այն։

Եւ արդ դու միտ դիր անչափ մարդասիրութեանն, և զի մեծ և յօժար 'ի բարերարութիւն է, և չախորժէ զտանջանսն. 'ի սերմանելն ինքնին սերմանէ, և 'ի տանջելն՝ այլոց հրամայէ։

«Ուսարուցէ, ասէ, որդի մարդոյ զհրեշտակս իւր։ Եւ յայնժամ արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն յարքայութեան հօր իւրեանց»։ Եւ ոչ այնպէս միայն. այլ քան զայն աստղ պայծառագոյն ինչ մեք ոչ դիտեմք, վասն այնորիկ 'ի մերոց ծանօթիցն տայ մեզ օրինակս։ Լուսէպէտ և այլուր իսկ ասէ, թէ արդէն իսկ հասեալ են հունձք. որպէս յորժամ ասիցէ վասն շամփտացուցոյն, եթէ «Ամբարձէք զաչս ձեր և տեսէք զարտոբեայն, զի սպիտակացեալ են, և արդէն իսկ 'ի հունձս հասեալ». և դարձեալ եթէ «Հունձք բազումք են, և մշակք սակաւ». և զիարդ իցէ, զի անդ յայտ առնէ՝ թէ հասեալ իսկ էին հունձքն. և աստ ասէ՝ թէ հանդերձեալ են. և անդ ասէ, այլ է՝ որ սերմանէ, և այլ է՝ որ հնձէ, և աստ զանձն կոչէ սերմանացան։ Զի անդ ոչ ընդ անձն ինչ, այլ ընդ մարդարէսն և ընդ առաքեալսն դնէ անջրպետուն 'ի միջի. և առ հրեիւքն և առ շամփտացուցիչքն. բայց մարդարէիւքն ինքն իսկ սերմանեաց։ Եւ է ուրեք զի հունձս և հարաւունս զնոյն կոչէ, այլ և այլ իրօք ինն անուանեալ։ Յորժամ զհաւանութենէ և զհնազանդութենէ լսողացն ձառիցէ, հունձս կոչէ զիրսն[1], որպէս եթէ զնամ ինչ 'ի գլուխս եհան. իսկ յորժամ զպտուղ ունկնդրուէ հայցիցէ, հարաւունս կոչէ. այլ միշտ հունձս զվախճանն աշխարհիս կոչէ։

Եւ զիարդ, ասեն, այլուր ասէ, եթէ նախ արդարքն յափշտակին։ Յափշտակեալ յափշտակին յառաջագոյն. բայց 'ի գալստեանն Որդի նոցա նոքա մատնին 'ի տանջանս, և ապա սոքա մատնեն յարքայութիւն։ Եւ քանզի արդարոցն յերկինս պատրաստեալ է բնակութիւն, վասն այնորիկ ինքն այսր գայ, և դատի զնամ մարդիկ. և յորժամ տայցէ զվճիռ մեղաւորացն, ապա իբրև զայր մի թագաւոր յառնէ իւրովք բարեկամաքն՝ տանի զնոսա յերանութիւն հանգիստն ի-

[1] Յօրինակին զիրսն։

բոյ բնակութեան։ Տեսանես, զի կրկին տանջանք առ-
նին մեղաւորաց. մի՝ զի միշտ պրկին և խորովին. և
միւս ևս՝ զի յայնպիսի փառաց վրիպին։

Եւ ընդ ելս արդեաք յորժամ ժողովուրդքն մեկնե-
ցան, և ընդ նոսա ևս առակաւ խօսէր։ Զի ևս ի-
մաստանագոյնք լինիցին յառակէն։ Ասէր իսկ երբեմն
յետոյ, 'ի միտ առէք զայս ամ. ասեն, այո տո։ Ա-
յսպէս հանդերձ այլովքն և զայն ևս ուղղութիւն առ-
նէին առակքն, զի իմաստանագոյն ևս գործէին զնոսա։
Եւ զինչ ասիցէ։

«Զման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ
յագարակի. զոր գտանիցէ մարդ և թաքուցանիցէ.
և առ ի նդուտ երթիցէ վաճառիցէ զամ ինչս իւր,
և գնիցէ զագարակն։ Զարձեալ նման է արքայութիւն
երկնից վաճառականի, որ խնդրիցէ ազնիւ մարգա-
րիտս. և յորժամ գտանիցէ մարգարիտ մի պատուա-
կան մեծագնի, երթիցէ վաճառիցէ զամ ինչս իւր,
և գնիցէ զայն»։ Զոր օրինակ անդ հասն մանանիսոյ
և խմորն սակաւ ինչ այլագունակ կերպարանս ունին
'ի միմեանց, նոյնպէս և աստ երկու առակս՝ գանձիս
և մարգարտին։ Զանգի երկոքումբք իսկ ակնարկէ,
եթէ պարտ է քան զամ ինչ զբարողութիւն պատուա-
կան համարել։ Զի զխմորն և զհատ մանանիսոյն
վասն զօրութեան քարոզութեան յօդէ յառակին, եթէ
յաղթելոց է ամ տիեզերաց. և զգանձս և զմարգա-
րիտս վասն պատուականութեան։ Եւ ձգի իբրև խմ-
բով, և տարածանի իբրև զմանանիսն, և պատուա-
կան է իբրև զմարգարիտ, և բազում շահս յորդէ
իբրև զգանձս։

Եւ ոչ զայն միայն է ուսանել, եթէ ոչ զամ զայն
ինչ պարտ է 'ի բաց մերկանալ, և քարոզութեան մի-
այն պատկառ կալ, այլ զի խնդութեամբ իսկ պարտ է
ունել զայն յանձին, և զամ ինչ 'ի բաց թօթափել,
և զնա միայն շահ համարել։ Տեսանես, զիարդ ծած-
կեալ կայ յաշխարհի քարոզութիւն, և 'ի քարոզունն
ամ բարութիւք։ Զի պէտ և տայցես զինչն ամ, չկա-
րիցես գնել զնա, եթէ միտս այնպիսիս ոչ ունիցիս՝
որ զայն ևեթ ածիցեն զմտաւ, և 'ի նոյն թևակոխ
ցեն։ Եւ արդ երկուց ինչ իրաց պէտք են. նախ՝ զի

յամ երկրաւորացս հրաժարիցես, և ապա՝ միշտ արթուն լինիցիս։

«Որ խնդրիցէ, ասէ, ազնիւ մարգարիտս. և յորժամ գտանիցէ մի պատուական ծանրագնի, վաճառիցէ զինչս իւր, և գնիցէ զնա»։ Բանդի մի է ճշմարտութիւն, և ոչ 'ի բազումս ձեղքեալ։ Այս զոր օրինակ որ զմարգարիտն ունիցի, ինքն գիտէ՝ թէ մեծանալոց է, և բազմաց չէ ինչ յայտ. բազումս ամ գամ և 'ի ձեռին իսկ ունիցի, և ոչ որ գիտէ. քանզի ոչ եթէ անձնեղ ինչ մարմին իցէ։ Այոյսպէս և որք զքարոզութիւն ունին, գիտեն եթէ մեծանալոց են. իսկ անհաւատքն ոչ զգանձն գիտեն, և ոչ զմեծութիւն 'ի միտ առնուն։ Այս զի մի 'ի քարոզութիւնն ապաստան լինիցիմք, և զհաւատն միայն բաւական համարիցիմք անձանց 'ի փրկութիւն, ապա այլ միւս առակ առաջի դնէ՝ զուռկանին։

«Այման է, ասէ, արքայութիւն երկնից ուռկանի արկելոյ 'ի ծով, որ յամ ազգաց ժողովիցէ։ Որ յորժամ հանիցեն 'ի ցամաք, նստեալ ընտրիցեն ըզբարի բարին յամանս, և զյոռի յոռին արտաքս ընկենուցուն»։ Այս թէ ընդհատ իցէ այս յորոմանն առակէ. քանզի և անդ ոմանք կեան, և ոմանք կորնչին։ Այլ անդ վասն չարեաց ինչ կրօնից ընտրութիւն է, որք ոչ բարւոք նայիցին 'ի միտս գրոց. և աստ վասն գործոց չարաց, որ քան զամենեսեան հիքագոյնք իցեն. զի թէպէտ 'ի ճշմարիտ գիտութիւնն վերայ հասին՝ անկեալ ընդ ուռկանաւ, սակայն և ոչ այնպէս կարացին ապրել։ Թէպէտ և այլ ուր ասէ, թէ ինքն որոշելոց է զնոսա, որպէս որոշէ, ասէ, հովիւ զոգիս յայծեաց. և աստ ասէ, թէ հրեշտակաց հրամայէ որոշել. որպէս յորոմանն առակի։

«Այնպէս եղիցի, ասէ, 'ի վախճանի աշխարհիս. ելցեն հրեշտակք և որոշեսցեն զչարս 'ի միջոյ արդարոց և արկցեն զնոսա 'ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ աչաց և կրճել ատամանց»։ Այս արդ զիարդ իցէ, զի մերթ թանձրագոյնս խօսի ընդ նոսա, և մերթ անօսրագոյնս և բարձրագոյնս։ Ո՛ այս առակ և առանց հարցանելոյ իսկ նոցա՝ ինքնին մեկնէ, և սակաւ մասամբ զնմա յայտ առնէ. և աձեղուցանէ զհն-

Օ լ մի յորժամ լսիցես՝ եթէ զյոռի յոռին արտաքս ընկեցին, անպատժական ինչ զկորուսան համարիցիս, մեկնութեամբն յայտ առնէ զտանջանս, թէ 'ի հնոց հրոյն արկանելոց են, ուր լալ աչաց է և կրճել ատամանց. և այսու զդառնութեն տանջանացն յայտ առնէ։ Ցեսանեա՞ որչափ ինչ Ճանապարհք են կոբստեան՝ յառապարէն, 'ի փշոցն, 'ի Ճանապարհէն, յորոմանէն, յուռկանէն։ Օ լ ո՛չ եթէ անմնանագոյնս ինչ ասաց, եթէ «Ընդարձակ է Ճանապարհն՝ որ տանի 'ի կորուստ. և բազումք են՝ որ գնան ընդ նա»։ Օ այս, ասէ, և յահագինն յեղուս զբանն. և եւ բազում՝ քան զսոյն ուսուցանէ, և առաւել պատկառեցուցանէ զնոսա։

«Ի՞նչ միտ առէք, ասէ, զայս ՝ամ։ Ասեն. այո՛ ՝ամ»։ Ա՛յս քանզի իմացան, ապա և գովէ զնոսա։ «Ա՛ման այնորիկ, ասէ, ՝ամ դպիր՝ որ աշակերտիցի յարքայութենն երկնից, նման է առն տանուտեառն՝ որ հանէ 'ի գանձուց իւրոց զնոր և զհին»։ Ա՛ման որոյ այլուր ասէ, թէ առաքեցից 'ի ձեզ իմաստունս և դպիրս։ Ցեսանեա՞, զի չխոտէ զհինն, այլ գովէ, և գանձ եւս կոչէ. որպէս զի որք ՝ածեղէն գրոց չիցեն տեղեակ, չեն երբէք լինելոց տանուտեարք. որք ո՛չ յանձանց ինչ ունիցին, և ո՛չ յայլոց ինչ առնուցուն, այլ անփոյթ արարեալ՝ լինիցին սովամահ։ Ա՛ւ ո՛չ այնպիսիքն միայն, այլ և հերձուածողքն զրկեալ են յայնպիսի երանութենէ. զի ո՛չ հանեն զհինն և զնորն. քանզի և ո՛չ իսկ ունին զհինն, վասն որոյ և ո՛չ զնորս։ Օ որ օրինակ որ զնորս ո՛չ ունիցին՝ և ո՛չ զհինն ունին, այլ յերկոցունց զրկեալ են. զի սոքա երկոքեան ընդ միմեանս կապեալ՝ ընդ միմեանս գրկախառն են։

ՑՈՐԴՈՐԱԿ

Այ՝ արդ լուիցուք, որ զգրոցն ընթերցուածոց փոյթ յանձին չկամիցիմք ունել, որչափ վնաս անձանց կուտիցեմք, որպիսի ինչ աղքատութիւնք։ Վասնզի երբ պարապիցեմք 'ի նահատակութիւնս առաքինուց ձեռն 'ի գործ արկանել, որք և օրինին պատերազմաց չիցեմք տեղեկացեալ, թէ որպէս ինչ պարտ է առաքինանալ։ Վեծատունք որ 'ի կարասւոջն հարեալ են, ստէպ թօթափեն զհանդերձան, զի մի ցեցակեր մեցամէս լինիցին։ Այս դու և սա չար քան զցեցն տեսանես զմոլորութիւն՝ զապականիչ ոգւոցդ, և չկամիցիս 'ի գիրս հայել, չքերես 'ի բաց զապականութիւնն, չզարդարես զոգիդ, չմնիս այցելու և դարմանիչ ստէպ առաքինութեանն պատկերի, և որոնես զանդամն նորա և զգլուխն. քանզի գլուխ և անդամ ունի՝ գեղեցիկ և վայելուչ քան զամ կնոջ գեղեցկի։

Այ զինչ իցէ, ասեն, գլուխ առաքինութեանն։ Այս նարհութեան. քանզի և Աստ անտի առնէ սկիզբն. «Այ բանի, ասէ, աղքատաց հոգւով»։ Այսր գլխոյ ոչ վարսք են, և ոչ գիսակք. այլ այնպիսի ինչ գեղ՝ որ զամ պատրէ։ «Յո՞, ասէ, հայեցայց, թէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս, և որ դողան 'ի բանից իմոց». և «Այ՛ չէ՞ն 'ի խոնարհս երկրի». և «Վերձ է՞ որ առ բեկեալս սրտիւ»։ Այն գլուխ փոխանակ հերոյ և վարսից՝ զենումն մատուցանէ, որ զամ ուրախ առնէ. բազին ոսկեղէն և սեղան հոգևոր. «Օ՛ենումն ա՞յ, ասէ, հոգի բեկեալ»։ Այա է մայր իմաստութեան. եթէ գնա որ ունի, և զայլն ևս ունիցի։ Տեսեր որպիսի ինչ է գլուխն, եթէ իցէ երբէք տեսեալ։

Կամիս և զերեսան տեսանել, թէ որպէս իցէ. միտդիր, զիարդ գոյնն կարմիր ծաղկեալ, և բազում շնորհք զեղեալ զերեսօք։ Այ տես, ուստի գումարեալ իցեն վայելչութիւնքն. յանկածութի՝ ամենոյ։

1 Ցօրինակին կարմրով նշանագրեալ 'ի բառդ, դուցէ ակնարկեցէ ըստ այլոց օրինակի յոյնաց՝ՈՒՆԻՆ։

Վասն որոյ և ասէ իսկ ոմն ուրեմն, թէ յառաջ քան զամենազածն՝ նախ զնորհքն եկեսցեն։ Զայլ և զայլոց անդամոցն և զհաստատունի զգեղեցկութիւն. թէպէտ և բեւեր երանգս խառնիցես, չկարես այնպիսի ինչ գեղեցկութիւն գործել։

Զպա եթէ զաչսն և կամիցիս տեսանել, միտ դիր, զի ցածութիւն և զգաստութիւն շուրջ ամ ուրեք զարդարեալս և պսակեալս։ Օ՛ի այնպէս գեղեցիկք և քաջատեսք գործին, մինչև զնորն իսկ գլխովին տեսանել։ «Զրանի, ասէ, այնոցիկ որ սուրբ են սրբութիւք, զի նոքա զնոր տեսցեն»։ Զերան նորա խնամութիւն և հանձար է, և զհոգևոր օրհնութիւս գիտել. և սիրտ՝ գրոց տեղեկութիւն, և ճշմարիտ կրօնից զգուշութիւն, մարդասիրութիւն և քաղցրութեան կրթութիւն։ Զոչ զոր օրինակ առանց այսր չէ հնար կեալ, նոյնպէս և ոչ առանց այնր երբեք սպրել. քանզի անտի ծնանի ամ գեղեցկութիւք։ Զեռք և ոտք նորա՝ զգործոց բարութեց զհանդէս ցուցանեն. շունչ՝ ածպաշտութիւն. լանջք ոսկիք և կարծրագոյն քան զադամանդ՝ արութիւնն, ամ ախտից մեռուցումն. ամենայնի մարթի գիւրաւ խախտել, և ոչ այնմ լանջաց վատթարութի ինչ լինել. ոգի յուղիւղն և 'ի սրտի՝ սէր է։

Զամին, զի և անդստին իսկ 'ի գործոցն ցուցից քեզ զհանգամանս պատկերիս։ Օ՛մտաւ ած զայս իսկ աւետարանիչ. թէպէտ և ոչ զամ զկեանս նորա ունիմք մի ըստ միոջէ գրոյ, սակայն 'ի սակաւուցն մարթի զչափ առնուլ մեծամեծաւ պատկերին։ Օ՛ի հեզ և խոնարհ սրտիւ էր, լուր նմին իսկ, զի յետ աւետարանին մաքսաւոր կոչէ զանձն. և զի ողորմած էր, տես զկարդ զամ մերկացեալ՝ երթայր զհետ Զ՚ոի. և զի ածապաշտ էր, յայտ 'ի կրօնիցն էր։ Զամ զնմանութիւն նորա 'ի կարգելոց զաւետարանս գիւրաւ է խնամալ. և զսէրն՝ յամ տիեզերաց խնամակալութիւն. և զբարեաց գործոց հանդէս՝ յանձռոյն, ուր նստելոց էր. և զզօրութիւնն՝ զի խնդութիւք դարձաւ յատենին։

Զախանձաւոր լիցուք այսուհետև այնմ առաքինութիւն. և մանաւանդ քան ամի՝ խոնարհութիւն և

ողորմածութիւն. զի առանց այսր չէ հնար ապրել։ Եւ յայտ հինգ կուսանքն առնեն, և ընդ նոսա և փարիսեցին։ Բ. առանց կուսութիւն մարթի տեսանել զաբբայութիւն. բայց առանց ողորմութիւն անհնար է տեսանել։ Զանազի և սա 'ի բուն իսկ 'ի կարևորայն է, որ զբնաւն ունիցի զաւարտ առաքինութեանն։ Բ. պա ուրեմն ոչ ինչ աննմանագոյն սիրտ առաքինութեան կոչեցաք զսա. այլ սիրտ այս է. եթէ ոչ սիրոն յամենեսեան բաշխէ զհոգին՝ վազվազակի շինչանի։ Օ որ օրինակ աղբիւր եթէ ոչ ստէպ զակունսն բղխիցէ, անդէն իսկ յանձնէ նեխի, նոյնպէս և մեծատունք եթէ առ իւրեանս զինչսն ունին, նեխին։ Զ՝ այնորիկ և ըստ հասարակաց սովորութեանն ասեմք, եթէ փտեալ կան այն անուան բազում ինչք. և չասեմք զայն բազում արարս և բազում գանձս, այլ փտութիւն կոչեմք, և ընդ վայր կոչիմ՝։ Զանազի և փտութիւն իսկ է՝ ոչ միայն ստանալեացն, այլ և մեծութեանն. քանզի և հանդերձք նորա ապականին, և ոսկի և արծաթ նորա ժանգոտին, և արդիւնք նորա ոջլակեր լինին. և միտք այնպիսւոյն ևս չար քան զինչսն մաշին և ժանգոտին և փտին։ Եւ եթէ հնար էր զմիտս արծաթասիրին 'ի մէջ բերել, իբրև զհանդերձ ամենևին ցեցակեր և ծակոտեալ գտանէր 'ի հոգոյն[1], 'ի մեղաց հարեալ և ժանգոտեալ։

Զայց ոչ և զկամաւոր աղքատացելոյն նոյնպիսի ինչ տեսանեմք, այլ պայծառ և փայլածուն. իբրև զոսկի լուսաւոր, և իբրև զմարգարիտ պատուական, իբրև զվարդ անուշահոտ։ Զիք անդ ցեց և ոչ գող և ոչ հոգք երկրաւորք, այլ իբրև զհրեշտակս հարկանեն զհարկս առաքինութեան։ Կամիս զայնպիսի ողորմոյն տեսանել զառաքինութիւն. կամիս զայնր աղքատութեան տեսանել զմեծութիւն։ Զհրամայէ մարդկան, այլ դիւաց հրաման տայ. չկայ թագաւորի 'ի սպասու, այլ ՝՝՝ սպասաւորէ. չզինուորի ընդ արս, այլ ընդ հրեշտակս զինուորեալ է. չունի երկուս արկեղս կամ երիս կամ քսան, այլ այնպիսի ընչաւէտութիւն ունի, մինչ զաշխարհս ամենայն առ ոչինչ հա-

1 Ցոբինակին 'ի հոգոյն։

մարել. չունի գանձս, այլ զերկինս։ Զի կարօտ ծառայից, քանզի ընդ ծառայութիւն ունի զկարիս ցանկութեանն. ունի ծառայս զխորհուրդսն՝ որ և թագաւորաց տիրեն, որ ծիրանաւորին հրամանս տան։ Այս զնոսա հնազանդեալ ունի ընդ իւրև, և չիշխեն ընդդէմ հայել։ Զ թագաւորութիւն և զոսկի և զամ ինչ նոյնպիսիս իբրև զմանկտուց խաղ համարին. և իբրև զանիւս և իբրև զլիցս և զդունդս և զկոզոփոցս հաշուին զամենայն։ Այլ այնպիսի ինչ զարդ ունին, զոր և տեսանել չկարեն՝ որք այնպիսեաքն խաղայցեն։

Այլ արդ զինչ քան զայնպիսի աղքատ՝ մեծ, որ յատակ զերկինս ունի։ Այլ եթէ յատակն այնպիսի ինչ է, զմնաւ ածէ որպիսի ինչ ձեղունն իցէ։ Այլ ձիս և կառս չունիցի. և զինչ պէտք նմա այնր իցեն, որ յամենն ելանիցէ, և ընդ Աստի լինելոց է։ Զ այս ամ զմնաւ ածեալ արանց և կանանց՝ զայն մեծուն խնդրեսցուք, և զանծախ ընչաւետութի. զի և արքայութեն հասանիցիմք. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել ընորհօքն Տն մերոյ Յիսի Աստի. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն փառք, իշխանութի և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

« Լու եղև իբրև կատարեաց Յի զառակս զայսոսիկ, գնաց անտի »։

Լու ընդէր ասիցէ՝ զառակս զայսոսիկ։ Վասնզի և այլ առակ խօսելոց էր։ Լու վասն էր արդեւք գընայր անտի։ Զի ամենայն ուրեք կամէր սերմանել զբանն։

« Լու եկն, ասէ, 'ի քաղաք իւր, և ուսուցանէր զնոսա 'ի ժողովրդեան նոցա »։ Լու զո՞ր քաղաք կոչիցէ նորա։ Զուտ ինձ՝ թէ այժմ զԼաղարեթ. քանզի ոչ արար անդ զօրութիւնս բազումս. իսկ 'ի Կափառնաումն արար նշանս. վասն որոյ և ասէր իսկ, « Լու դու Կափառնաում, որ մինչև յերկինս բարձրացեալ ես, մինչև 'ի դժոխս իջցես. զի թէ 'ի Սոդոմ եղեալ էին զօրութիւնքն որ եղէն 'ի քեզ, թերևս կայէն մինչև ցայսօր »։

Զբդ եկեալ անդ, և 'ի նշանաց զանձն պահելով ոչ առնէր, զի մի ևս 'ի մեծ նախանձ գրգռիցէ զնոսա, և մի դատապարտութիս կուտիցէ 'ի գլուխ նոցա վասն անհաւատութեան։ Զի յորժամ զվարդապետութիւնն առաջի դնիցէ, ոչ սակաւ ինչ քան զնշանս դնէ առաջի զբանելիս։ Զի քան զնամ իւիք՝ անմիտացն ընդ բանին զօրութիւնն պարտ է զարմանալ և զբանչանալ. և նոքա խոտեին զնա Յովսեփաւ՝ որ Հայրն կարծէր։ Զեպետ և բազում օրինակս ունէին յառաջնոյ ժամանակսն, զի յանշանաւոր հարց ծնանէին որդիք առաքինիք։ Վասնզի և Դաւիթ դոյզն ուրուք մշակի որդի էր՝ Յեսսեայ. և Լմնոս հովուի որդի, և ինքն հովիւ։ Լոտ և Մովսէս իսկ օրէնսդիրն՝ այնպիսւոյ առն որդի էր, որ կարի իսկ անարժան էր նմա։ Լու արդ ընդ այն իսկ պարտ էր զարմանալ, և նմա երկիր պագանել, զի այնպիսի ծնողաց որդի զայնպիսի բանս խօսէր։ Զատի կարի իսկ յայտ է՝ թէ ոչ 'ի մարդկեղէն ինչ կրթութենէ, այլ

իբրև յաճեղէն շնորհաց պարտ էր համարել զվարդապետութիւնն. թէպէտ և նմա չէին ինչ տեղեակ՝ թէ ո՞ւմ իցէ և որդի ո՞ւ, այլ ընդ բանսն պարտ էր զարմանալ. և նոքա՝ ընդ որ զարմանալն արժան էր, նոքիմիք արհամարհէին։

Յառաջն 'ի ժողովուրդսն շինամուտ լեալ ուսուցանէր, զի մի՛ վասն յանապատին յամենայն չարախօսութիւնս ինչ յօդիցեն, իբրև զառնէ միոջէ՝ որ հերձուածս ինչ կամիցի մուծանել, և հնոյն առաքինութեանն հակառակ ինչ լինել։ Այլ արդ զարմանային, և 'ի վարանս մտանէին, թէ «Ուստի՞ է սմա այսպիսի իշխանութի՞ն». և զնշանսն զօրութիւն կոչէին, և կամ զիմաստութիւն իսկ։

«Ո՞չ սա է հիւսանն որդի»։ Այլ եթէ դա իցէ, ապա ևս մեծամեծ սքանչելիք են, և առաւել զարմանալիք։

«Ո՞չ մայր սորա, ասէն, Մարիամ կոչի, և եղբարք սորա Յակոբոս և Յոսկէս և Սիմովն և Յուդաս. և քոյրք սորա ո՞չ ամենեքեան առ մեզ են. և ուստի՞ է սմա այս ա՞մ. և գայթագղէին 'ի նա»։ Ցեսանեն, զի 'ի Նազարէթ խօսէին. ո՞չ, ասէն, եղբարք սորա այս անուն և այս անուն։ Այլ այն զինչ արգել լինիցի. մանաւանդ զի այնու իսկ պարտ էր յորդորիլ նոցա 'ի հաւատս։ Այլ չար է նախանձն, և անձամբ անձին առնէ վնաս հանապազ։ Օ՛ի սքանչելիքն և զարմանալիքն՝ որ և պարտ էին ածել զնոսա յուղղութիւն, 'ի գայթագղութիւն ձգէին զնոսա։ Այլ արդ առ այս զինչ ասէ Տէր։

«Օ՛ է, ասէ, մարգարէ անարգ, թէ ո՞չ յիւրում աշխարհի և յիւրում տան։ Այլ ո՞չ արար անդ զօրութիւնս բազումս վասն անհաւատութեանն նոցա»։ Իսկ Ղուկաս ասէ, «Այլ ո՞չ արար անդ նշանս բազումս». թէպէտ և պարտ իսկ էր առնել. և եթէ զարմանալ ինչ մնա գոյր ընդ նա, և յայնժամ իսկ զարմանային. և ընդէ՞ր արդեաք չարար։ Օ՛ի ո՞չ անձին ինչ մեծարանս կամէր դնել, այլ զնոցա օգուտն խորհէր։ Այլ իբրև այն ինչ նոցա հնարքն չլինէին, ապա և զիւրն անտես առնէր, զի մի՛ ևս քան զևս ածեցուցանիցէ զտանջանս նոցա։ Այլ դու տես իսկ, յետ

որչափ ժամանակաց եկն առ նոսա, և յետ որչափ նշանս ցուցանելոյ. սակայն և այնպէս չժուժեցին, այլ միւսանգամ այրէին նախանձովն։

Եւ ընդէր սակաւ նշանս արար անդ։ Զի մի՞ ա սիցեն, բժիշկ՝ բժշկեա նախ զանձնդ. զի մի՞ ասիցեն, թէ թշնամի է եղբարց իւրոց, և վասն այնորիկ չառնէ ինչ փոյթ զընտանեացն. զի մի՞ ասիցեն, թէ նշանս ինչ արարեալ էր՝ մեք հաւատացեալ էաք։ Ոմն այնորիկ արար և արդեւ, զի միոմն զիւր արժանն ընուցու, և միւսոմն մի՞ կարի դատապարտիցէ զնոսա։

Եւ դու մի՞ դիր բանիցն իմաստութեան. թէպէտ և նախանձու հեղձեալ էին, սակայն զարմանային. այլ որպէս 'ի նշանսն ոչ զգործսն ինչ աղարտէին, այլ պատճառս ինչ յօդէին՝ որ չէին 'ի դէպ. «Բեղզէ բուղաւ, ասէին, հանէ զգեաս». նոյնպէս և աստ՝ ոչ զվարդապետութիւնն պարսաւէին, այլ զաղգին անկածութիւնն արհամարհէին։ Եւ դու ուշ կալ հեղութեամբ վարդապետին, զիարդ ոչ թշնամանէ զնոսա, այլ մեծաւ զգուշութեամբ ասէր, թէ «Ոչ ուրեք սնարդ մարգարէ, թէ ոչ յիւրում քաղաքի». և ոչ այսչափ միայն, այլ «Եւ ոչ 'ի տան իւրում»։ Զուտի ինձ, թէ զայս յաւելով՝ զեղբարց իւրոց ակնարկիցէ։ Զանազի և Զ ուկաս այլ օրինակս յաւելու, թէ զԵղիա ոչ ոք ընկալաւ յիւրոց ընտանեացն, այլ այրին այն այլազգի. և Յղիշայէ ոչ ոք բժշկեցաւ իսրայէլացի, այլ Նեեման ասորի։ Զանազի իսրայէլացիքն թէպէտ և բարի ինչ գտանէին, չարիս հատուցանէին, և ոչ երախտիս ումեք առնէին, և ոչ երախտիս յումեքէ առնուին, բայց միայն օտարքն։ Զայս ասելով՝ յայտ առնէ, թէ հին իսկ սովորութի՞ էր չարութեն նոցա, և ոչ առ նովաւ միայն նոր լինէր այն։

«Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չորրորդապետ զլուրն Յիսի»։ Զանազի թագաւորն Հերովդէս սորա հայրն մեռեալ էր, որ զմանկտին կոտորեաց։ Եւ ոչ վայրապար ինչ զժամանակն նշանակէ աւետարանիչն, այլ զի ուսցիս զՀպարտութիւն իշխանին և զծուլութեն. զի ոչ յառաջնումն կամեցաւ լսել զլուրն նորա, այլ յետ բազում ժամանակաց։ Զի այնպիսիք են՝ որ յիշխանութիւնս ինչ յաւագս ելանիցեն,

հպարտութիւն զգածեալք 'ի մեծութենէն՝ անագան ուսանին զկարևոր ինչ իրս՝ վասն կարի անսիրայթ առնելոյն։ Այլ դու տես որպիսի ինչ է առաքինութիւն. զի յետ վախճանելոյն Յովհաննու երկնչէր 'ի նմանէ, և առ ահին վասն յարութեան Ճարտար խօսէր։

«Այսաց, ասէ, ցծառայսն իւր, սա է Յովհաննէս մկրտիչ. նա ուրեմն յարեաւ 'ի մեռելոց, և վասն այնորիկ զօրութիւք լինին նովաւ»։ ՑԵսանէս զերկիւղն աճեցեալ. քանզի և ոչ յայնժամ 'ի վեր իշխեաց հանել, այլ անդէն ցիւր սեպհականսն ասէր։ Սակայն և այն զինուորական կարծիք էին և արհամարհանաց. զի բազումք յարեան 'ի մեռելոց՝ և այնպիսի ինչ գործ ոչ գործեցին. և թուի ինձ՝ թէ պարծանաց իմն և երկիւղի էին բանքն. քանզի այնպիսի իսկ էն միշտ անիմաստացն ոգիքն, և ընդ ախտս մնացն՝ և այլ իմն կարծիս խառնեն։

Իսկ Ղուկաս ասէ՝ եթէ 'ի ժողովրդոյն ոմանք ասէին, եթէ Այլիա է, և ոմանք՝ թէ մարգարէ ոք յառաջնոց մարգարէիցն. և սա իբրև իմաստուն ոք քան զայլսն՝ ասէր, թէ Յովհաննէս է։ Ուրուք 'ի դէպ էր չառնուլ յանձն՝ թէ Յովհաննէս իցէ։ Այլ նա աւանիկ պարծանօք իմն և գոռալով, և մանաւանդ թէ առ երկիւղն իսկ ասիցէ, թէ զոր ես սպասնի։ Օ սոյն և Մարկոս և Ղուկաս յայտ առնեն. «Օ Յովհաննէս, ասէ, ես զլնատեցի»։ Յորժամ համբաւն տարածեցաւ, ապա և ինքն իսկ ասէ զնոյն բազմաց։

Ղա և զիրսն իսկ պատմէ աւետարանիչն։ Այլ էր աղաչաւ յառաջագոյն իսկ չպատմեսցէ։ Բայլ քանզի ամենեին իսկ փոյթ նոցա վասն Քրիստոսի էր խօսելոյ, և ոչ զայլ ինչ պատուական համարէին. թէպէտ ճառէին ինչ զուսքէ, սակայն զվախճան բանիցն 'ի նա առնէին։ Ղա և այժմ իսկ չյիշէին ինչ զպատմութիւն, եթէ ոչ վասն Քրիստոսի կամիցին ցուցանել, և վասն Հերովդէի[1] ասելոյն՝ թէ յարեաւ նա 'ի մեռելոց։ Մարկոս ասէ, թէ կարի քաջ պատուէր Հերովդէս զՅովհաննէս, թէպէտ և յանդիմանէր առ 'ի նմանէ։

1 'Ի լուս. Հերոդէի։

Վանզի և այնպիսի իսկ է առաքինութիւն. յորժամ յանդիմանեսցէ՝ պատուի։ Եւ արդ պատմէ զերան. «Հերովդէս, ասէ, կալաւ զՅովհաննէս, և եդ 'ի բանտի վասն Հերովդիադայ կնոջն Փիլիպպոսի եղբօր նորա. քանզի ասէր ցնա Յովհաննէս, թէ չէ քեզ արժան ունել զդա կին. և կամէր սպանանել զնա, բայց երկնչէր 'ի ժողովրդէնէն. զի ամենեքեան իբրև զմարգարէ ունէին զնա»։ Եւ ընդէր ոչ զկինն յանդիմանէր, այլ զայրն։ Վանզի այրն Հոխագոյն էր քան զկինն։ Եւ տես, զիարդ ոչ թշնամութեամբ Հաւէ զամբաստանութիւն, այլ իբրև զպատմութիւն ինչ, և ոչ զամբաստանութիւն։

«Իբրև եղեն, ասէ, ծնունդք Հերովդի, կաքաւեաց դուստրն Հերովդիադայ 'ի մէջ բազմականացն. և հաճոյ թուեցաւ նմա»։ Ո՛վ խրախութի դիւական, և կաքաւք և կայթիւնք սատանայականք։ Ո՛վ կաքաւք անօրէնութիւն, և վարձք կաքաւելոյն և չար քան զանօրէնութիւն. սպանութի՝ քան զնամ սպանութի անօրինագոյն. ժանտն՝ որ յայնչափ յանդգնութիւն իշխեաց մտաբերել. զգլուխն՝ որ պսակելոյ և բարձրագոյն քարոզելոյ արժանի էր, կառափեալ հատեալ 'ի մէջ բազմականացն բերէին, և դիւաց նշան առաջի կանգնէին. և կերպարան յաղթութի՝ արժանի իրացն գործելոց։

«Կաքաւեաց, ասէ, դուստրն Հերովդիադայ առաջի բազմականացն, և հաճոյ թուեցաւ Հերովդի. ուստի և երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրիցէ։ Եւ նա յառաջագոյն խրատեալ 'ի մօրէն, տուր ինձ, ասէ, այսր բերել զգլուխն Յովհաննու մկրտչի սկտեղը»։ և կրկին չարիք գործէին. մի՝ զի կաքաւեացն իսկ, և հաճոյ թուեցաւ. և միւս ևս՝ զի այնպէս հաճոյ եղև, մինչ զի զմահ մարգարէին պարգև խնդրիցէ։ Ցեսանեն, որպիսի որ անմիտ և անպիտան էր. զանձն ընդ երդմամբ գրաւէր, և զաղջիկ[1] մի լկտի՝ իշխան անօրէն պարգևին՝ զոր խնդրեաց, առնէր։ Իբրև ետես չար աչքն զանօրէն զգործն, ապա, ասէ, տրտմեցաւ. թէպէտ և ինքն

1 'Ի լուս. զաղջիկ։

զառաջինն էարկ 'ի բանտ, ապա վասն էր տրտմի։ Զանգի այնպիսի իսկ զարմանալի թուի և առաջի չարագործաց առաքինութեան, և արժանի գովելոյ։

Զի արդ տես զմոլորութիւն աղջկանն, և զկատաղութեան լկտուոյն. որում շնորհակալն պարտ էր լինել, զի վրէժս թշնամանաց նորա պահանջէր մարգարէն. քանզի ըստ օրինացն մեծ թշնամանք են որդւոց, եթէ մարք 'ի տայգերաց ցաւսն իցեն. իսկ նա գործակից ևս լեալ, և ընդ նմին զմենքեանեայս և զորդայթս սատանայի կազմէր, և պարգևս սատանայական հայցէր։

«Զի նա երկեաւ, ասէ, յերդմանցն և 'ի բազմականացն, և հրամայեաց տալ։ Ընաքեաց և գլխատեաց զՅովհաննէս 'ի բանտին, և բերել տալ զգլուխն ցաղջիկն սկտեղը. և տարաւ ետ մօրն իւրում։ Զի չոգան աշակերտքն, և առին զմարմինն և թաղեցին. և եկեալ պատմեցին Յսի»։ Ո՛վ պանդոյդ և յիմար, զիա՞րդ 'ի կարևոր չարեացն ո՛չ երկեար։ Թո՛ւ վասն զի վկայս սուտ երդմանն զբազմականսն ունէիր, և յայն սակս կասկածէիր, ևս կարևոր յարդար արեանն պարտ էր երկնչել, և ո՛չ անօրէնն սպանութենն այնչափ բազմութի վկայից կուտել։ Զի քանզի զբազումս համարիմ, թէ փնասակար իրացն չկացեն տեղեակ՝ ուստի նախանձն ծնաւ, հարկ է զիրսն ասել իսկ, զի ուսանիցէք զօրէնսդրին իմաստութիւն։

Զին իսկ օրէնք էին, զոր Հերովդէս ընդ ոտն էհար, և Յովհաննէս վրէժխնդիր լինէր։ Օ՛ի զմեռելոյ ուրուք անորդւոյ հրամայէին օրէնքն միւս եղբօրն առնուլ. քանզի առանց միութարութեան ինն չարիս համարէին զմահն, և զնա՞մ միաս այսց կենաց ևեթ հայթայթէին։ Հրամայէին օրէնքն կենդանի եղբօրն՝ առնուլ զկին մեռելոյն, և որդին որ լինէր՝ յանուն վախճանեալ եղբօրն կոչէր, զի մի անկանիցի տուն եղբօրն մեռելոյ։ Օ՛ի թէ որդի չէր թողեալ վախճանեալն, որ մեծ միութարութի էր մահուն, անհնարին լինելոյց էր սուգն։ Զ՚ասն այնորիկ հնարէր զայնպիսի սփոփանս օրէնսդիրն այնոցիկ՝ որ բնութեամբ զրկէին յորդւոցն. և զորդին որ ծնանէր՝ նմա հրամայէր համարել։

Լ.սպա թէ որդի մնայը, ոչ ևս այնուհետև հրամայէր ամուսնութիւն։ Լ.ու ընդէր, ասեն, եղբօրն և ոչ օտարի։ Լ.թէ օտարին պարտ իցէ առնել, ապա ևս առաւել եղբօրն։ Լ.յլ կամի զի և ազգն բազմանայցէ, և բազում խնամոց պատճառք 'ի միջի լինիցին։ Լ.ու ընդէր 'ի վախճանել անորդւոյն՝ այլ որ ոչ առնէր զկինն։ Օ՛ի ոչ այնպէս համարէր յօտարէն յանուն վախճանելոյն որդին, որպէս և յեղբօրէն. այլ յորժամ յեղբօրն սերմանէն էր, յայնժամ հաստատուն լինէր հայթայթանքն։ Լ.ու այլ ազգ ևս. նա և ոչ հարկ ինչ խնամոց 'ի վերայ օտարին կայր, թէ դայցէ և զայրոյ զմեռելոյ զատուն կանգնիցէ. այլ յայզպականութիւնն պատշաճ էր լինել ազգականացն։ Ա՛ան այնորիկ Հերովդիայ, քանզի որդի կայր յառաջին յառնէն, չէր օրէն լինել կին Հերովդի. վասն որոյ և յանդիմանէր իսկ Յովհաննէս, թէ չէ պարտ առնուլ քեզ զկին եղբօր քոյ, վասն զի որդի կայր յեղբօրէն. և յանդիմանէր մեղմագոյն, զի ընդ համարձակութեան և զհեզութեան ցուցանիցէ։

Լ.ու դու մի՛ դիր սատանայական խնձոյիցն։ Լ.սպ՝ զի դեռ յարբեցութեամբ և 'ի զեղխութեամբ էին, յորժամ ոչ այնպէս ոք իշխէ մտաց։ Լ.րկրորդ անգամ, զի և տեսօղքն անմիտք էին, և տէր խրախութեան՝ անօրէն քան զամենեսեան։ Լ.րրորդ անգամ, ժամն տարաժամ, և խաղն լկտի։ Չորրորդ անգամ, զի աղջկանն վասն որոյ անօրէն հարսանիքն եղեն, թաքչէլ պարտ էր՝ յաղագս ծանականացս մերս, և անօրէն ամուսնութեան։ Նա շկթեալ շուայլեալ, մտեալ կաքաւեր քան զտամ պոռնիկ ևս յայրատագոյն. կոյսն որում 'ի սենեկէ չէր պարտ արտաքս ելանել, պար առեալ 'ի մէջ բազմականացն իբրև զհերատուկ և զանուանարկ վաղեր։ Լ.ու յորում աւուր պարտ էր Հերովդէի գոհանալ զայ, զի յայնմ աւուր էած զնա 'ի խաւարէ 'ի լոյս, 'ի նմին աւուր զայնպիսի անօրէն գործս յանդգնեալ գործէր. և յորում աւուր պարտ էր զկապեալսն արձակել, 'ի նմին աւուր առաջի՝ամ կալանաւորացն մահ և սպանումն 'ի բանտին գործէր։

1 'Ի լուս. Եթէ էրէր... տպ. Ե. տպարին։

Բ.դդ լուարուք կոյսք, առաւել և առնականայք իսկ, որ յայլոց հարսանիս լկտել ախորժէք. վաղս առեալ պար առնուցուք, և զհասարակաց ընուԹիւն ցածուԹեն խայտառակիցեք։ Լուարուք և արք, որ զկոչնոց և զարբեցուԹեն զհետ ելեք։ Բ.ս երկերուք 'ի մինչենայից սատանայի, զի յայսպիսի խրախուԹի կալաւ կապեաց սատանայ զհէքն և զԹշուառականն Հերովդէս, մինչև երդնուլ և զկէս ԹագաւորուԹեն 'ի պարգևի խոստանալ։ Պարկոս ասէ, "Բ.դդուաւ նմա՝ Թէ զինչ և խնդրիցէ տալ՝ մինչև ցկէս ԹագաւորուԹեն"։ Բ.մնչափ պատուէր զուշանուԹենն, զի ընդ հնչին ինչ իրաց խոստանայր տալ 'ի պարգևի։ Բ.անզի այնպիսի իսկ յանկարծակի վաղվաղակի մատնեցաւ 'ի գերուԹի յախտէն, մինչ զի զկէս ԹագաւորուԹեն ընդ կաքաւելոյ տայր։

Բ.ս ընդ այն զի զարմանայցես, Թէ յայնժամ այնպիսի ինչ եղև։ Որ և այժմ իսկ յետ այսչափ զգաստուԹեան, ընդ կաքաւելոյ միոյ ժամու աղջկանց և պատանեկաց, որք զմիտսն մեղկեցելոցն գերիցեն, զմարմին և զոգի առ հասարակ տան. ուր ոչ հարկ ինչ երդման 'ի վերայ կայցէ. այլ 'ի ցանկուԹէ գերեալք, 'ի Ճեմելոյն և 'ի Ճօձելոյն պատրեալք, և իբրև խաչինս գոհ տուեալ զհետ գայլոց. որպիսի ինչ յայնժամ 'ի մտաց անկեալն ախտանայր։ Բ.ր-կուք անհնարին յիմարուԹիք յիմարեցաւ. զի զմնալն և զկատաղին և զարբեալն ախտիւ, առնէր տիկին պարգևին, և զիւր անձն ընդ երդմամբ փակէր։ Բ.յլ սկիզբն անօրէն գործոյն, և աղջկանն, և անօրէն իշխանին, և ամ չարեացն Ճարտարապետ՝ Հերովդիադա էր. զի նա իսկ նիւԹեաց զչարիսն ամ։ Որուամ պարտ էր կարի իսկ հնարհակալ լինել մարգարէին, զի զվրէժս ծանականաց նորա խնդրէր. և դուստրն նովաւ խաբեցաւ՝ զծանականաց կաքաւանն կաքաւել, և սպանուԹիւն հայցել. և Հերովդէս նովիմբ պարտեցաւ։

Ցեսանես, զի յիրաւի իսկ ասէր Պօ, Թէ "Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, չէ ինձ արժանի"։ Օ այս բան եԹէ կալեալ էր աղջկանն 'ի մտի, ապա ոչ այնչափ անցանէր զօրինաքն. նա և զանձ

արժան սպանութիւն իսկ խարփանէր, և 'ի պատժոց ապրէր։ Եւ զինչ այլ ինչ քան զայն վայրենամիտ գազանաբարոյ կայցէ, արիւն 'ի պարգև խնդրել, և սպանութիւն՝ որ կարի անօրէն էր, յընթերիսն՝ յայտ յանդիմանն ամենեցուն. ոչ ակնածել, ոչ պատկառել, և ոչ մեծ երթալ և աղաչել, այլ յանդգնեալ և հոլմնեալ առաջի ամենեցուն հայցէր, և զատանայ առեալ իւր գործակից՝ և նովաւ խօսէր։ Զանազի նա իսկ արար հաճոյ զկաբաւն, և առնուլ յանձն Հերովդի։ Օ՛ի ուր կաբաւք են, անդ է և սատանայ։ Մ՛է վասն այնորիկ ետ մեզ ՅԱ՝ ոտս, զի անձկոյ աքսոտեմք, և ուղտուց պէս անհեթեթս վազիցեմք. քանզի և նոքա անձկոյ իմն կաբաւեն։ Եւ արդ մի՛ ընդ կանայս կաբաւիցեմք, այլ ընդ հրեշտակս 'ի հրգևորացն՝ անցանիցեմք պարս։ Օ՛ի թէ մարմնոյ այնչափ անուղղայ և 'ի զուր են կաբաւք, որչափ և առաւել հոգւոյ անօգուտ։ Դիւաց արուեստ են կաբաւք. նոցին գործ և տրոփիւնք, և որք նոցին պաշտօնեայք իցեն։ Եւ դու միտ դիր, զինչ խնդրեր 'ի պարգևին։

"Ցուր ինձ, ասէ, սկտեղք զգլուխն Յովհաննու մկրտչի"։ Ցեսանես զՀերատուին յանդգնեալ. զոր ամենեքին իսկ կլեալ էր սատանայ։ Եւ զպատիւ ևս մարգարէին չակնածէր ասել, և ոչ թաքուցանել պատկառէր. այլ իբրև զխորտիկ ինչ ուտելի՝ զնուիրական և զերևելի գլուխն խնդրէր սկտեղք առաջի բերել։ Եւ մեաս ինչ 'ի վերայ չգնէ, քանզի ոչ գոյին ինչ պատճառք՝ մեաս 'ի վերայ դնել, այլ վայրապար իմն աղաչէր՝ պատուիլ այլոց չարչարանօք։ Եւ չասաց, թէ այսր տուր ածել և ապա սպանանել։ Զանզի և ոչ 'ի վախճանի ժամանակն աներկիւղ էր, և չկարէր համարձակութիւնն ժուժալ, և 'ի խողխողելոյն ժամանակին չհանդարտէր ահագին բարբառոյն տանել. քանզի և ոչ 'ի գլխատութիւնն ժամ լռելոց ինչ էր 'ի յանդիմանելոյ։ Ցուր ինձ, ասէ, ասա՛ 'ի վերայ սկտեղ տեսանել. զի ցանկամ զայն լեզու լռեալ տեսանել։ Մ՛է միայն ազատիլ 'ի յանդիմանութեանցն փուԹայր, այլ ոտնհար լինել, և վաշ և յայ կարդալ։ Եւ ՅԱ՝ անսայր, և ոչ արձակէր փայ-

1 Յորինակին 'ի հոգեաւոր ոտն։

լատականս 'ի վերուստ, և զկնեալ աչսն և զյանդգրգնեալ երեսսն խարշատել. կամ երկրի տալ հրամանն պատառիլ, և զբազմականսն միանգամայն կենդանւոյն ծածկել, և զարդարն մեծապայծառ պսակել, և յայլոց որ յետոյ 'ի զուր ինչ չարչարիցին՝ մեծ միխիթարութիւն թողուլ։

Լու արդ լուիցուք զայս, որք և այժմ յառաքինութիւնս կայցէք, և չարչարիցիք յանօրէն մարդկանէ. քանզի և յայնժամ անսայր ՝ած, մինչդեռ անապատականսն չարչարէր. որոյ գօտին մաշկեղէն էր, և հանդերձն ստեւ ուղտու։ Ի՝արգարէն և մեծ քան զմարգարէս գլխատեր 'ի հերատուկ և յայրատ աղջկանէն, 'ի բոզէ միոջէ եղծելոյ և 'ի պոռնկէ խայտառակելոյ։ Լու այն ընդ այսր՝ զի ՝ածեղէն օրինացն լինէր վրէժխնդիր մարգարէն։ Լու մեր զայս ամենայն զմնաւ ածեալ՝ տանիցիմք առաքինութիւն չարչարանացն։ Վանզի յայնժամ մարդախոշոշն և անօրէնն՝ այնչափ էառ վրէժս 'ի յանդիմանէն, որչափ և միտքն ասէին, և ՝ամ բարկութիւն յագեցաւ։ Լու ՝ած անսայր, և ոչ հանէր անդրէն ընդ կառափին։ Ամէպէտ և ոչ զնա ինչ բամբասէր, այլ առնն և էթ մեղադիր լինէր. այլ և 'ի խիղճ մտացն էր նմա դառն դահիճ և սաստիկ ամբաստան։ Ի՝ասն որոյ առ սրբոտին կակծելոյ 'ի մելորութիւն մտաբերէր, և զ՝ամ ոք զիւրսն առնէր ամօթոյ, զդուստրն, զայրն մեռեալ, զկենդանի շնացօղն։ Լ՝թէ ընդ այս ինչ ցաւիցէ՝ քեզ, ասէ, զի շնացաւն, սպանօղ էս արարիչ զնա։

Լուարուք զայս որ կարի անկարգ հարեալ էք 'ի կանայս։ Լուարուք զայս և որք վասն անյայտ ինչ իրաց յանդգնիցիք ընդ երդմամբ գրաւիլ, և զայլս տեարս ձերում կորստեան առնէք, և անձամբ անձանց փորիցէք խորխորատ. քանզի և նա այսպէս կորեաւ։ Ի՝նն ունէր՝ թէ ըստ ընթրեացն արժանի պարգև ինչ խնդրիցէ, քանզի աղջիկ է, և 'ի խրախուիս և 'ի տօնս բարի ինչ պարգևի ցանկանայցէ խնդրել, և խաբեցաւ։ Ի՝այց սակայն ոչինչ յայսպիսեացս օգնէ. զի թէպէտ և նա զաղանամարտիկ արանց

1 'Ի լուս. ստորոգեալ։

նմանեցաւ, այլ ոչ էր պարտ խաբիլ, և ոչ այնպիսի անօրէն հրամանս տալ։

Այլ զոր ոչ սարսէր, յորժամ զայնպիսի այ նուիրեալ կլուխն արեամբ զանգեալ տեսանէր յայնպիսի ընթրիս և 'ի խրախութիւն։ Այլ ոչ անօրէնն Հերովդէս, և ոչ պիղծ կին նորա. քանզի այնպիսի իսկ էն բարք պոռնկացելոց կանանց, քան զամենեսին անագորոյնք և անողորմք։ Այլ եթէ մեք 'ի լսելոյս այսչափ սոսկամբ, որպիսի ինչ պարտ էր բազմականացն սոսկալ, որ արդեամբք իսկ տեսանէին խոխով զնորա սուրբ գլուխն [1] արեամբ զանկեալ թաթաւեալ 'ի մէջ բազմականացն, որք 'ի խրախութենն էին։ Այլ ոչինչ այնպէս ժանան, որ քան զնհանգս ծովականս դազանազոյն էր, ածէր ինչ զմտաւ. այլ և խրոխտայր և, և զատամունսն կցրէր։ Ամենայնիւ և ոչ այլ ուստեք, զոնէ 'ի հրեշտակատեսիլ երեսացն պարտ էր ցածնուլ. այլ ոչինչ այնպիսի զգայր ծանրագործ սպանօղն և ծարաւին արեան մարգարէին։ Այլ զանգի այնպիսի է պոռնկութիւն. ոչ աղտեղի միայն և զազիր գործէ, այլ և բազում ոճիրս սպանութեան առնէ։ Այս ուրեմն կանայք որ շնութեան ցանկան, նոքա և սպանութեան զրկելոց արանցն մտաբերեն։ Այլ զմի միայն, այլ և զերկուսն, այլ և բազում սպանութիւն մտաբերեն յանդգնել։

Այլ զայնպիսի ոճիրս գործելոյ՝ բազում իսկ էն վկայք, զոր և նա իսկ յայնժամ արար. և կարծէր թաքուցանել և ծածկել զյանդգնութիւնն իւր. որում ամենեւին նորին հակառակն պատահէր. քանզի և մեծամեծս յետոյ խօսեցաւ Յովհաննէս։ Այլ չարիքն անդէն 'ի մօտաւորսն և եթէ հայէին, որպէս ջերմ նոքաքն յորժամ զցուրտն յանժամ ժամու խնդրեցեն։ Օ՛ի թէ չէր զամբաստանն սպանեալ, նա և յայսանէր իսկ ոչ այնչափ յանդգնութիւն։ Այլ զանգի և աշակերտքն յորժամ 'ի բանտ էարկ զնա ոչինչ այնպէս ասացին. բայց յորժամ եսպանն, ապա հարկ եղև զպատճառսն ասել։ Օ՛զործ հնացողացն ծածկել կամէին, և չախորժէին ճաղել զայլոց զքարուա-

1 'Ի լուս. ընդ-ոլոգվոյ գլխոն։

կանս. բայց իբրև 'ի հարկ պատմութենն մխեցան, աւ-
սեն զնամ յանդգնութենն։ Օ ի մի չարաչար ինչ կարծիս սպանութենն ոք հաշուիցի, իբրև զԱվետարանն և զՅուդայն, հարկ համարին այնուհետև զբարուրս սպանութենն ասել։ Արդեսք զի ոչչափ կամիցիս զմեզ որով և իցէ օրինակաւ խաղաղել և կամ ծածկել, և-ս քան զեւս յայտնես։ Ոչանզի մեզք ոչ եթէ մեզաց յաւելուածով ծածկի, այլ խոստովանութիւն և ապաշխարութիւն։

Այս տեսս զաւետարանիչն, զիարդ ոչ թշնամութիւն պատմէ զնամն. այլ որպէս մարթ էր նմա՝ արգահատութիւն պատասխանատուութիւն յօդել։ Ոչանզի զՀերովդէ ասէ՝ վասն երդմանն և բազմականացս, և թէ տրտմեցաւ. և զաղջկանէն՝ թէ յառաջագոյն խրատեալ էր 'ի մօրէն, և թէ տարաւ առ մայրն զգլուխն. որպէս զի ասիցէ՝ թէ զնոքա հրամանսն կատարիցէ։ Օ ի ոչ վասն այնոցիկ որ չարչարիցին, այլ վասն այնոցիկ որ չարչարիցենն՝ տրտմին արդարքն. քանզի նոքա առաւել չարչարին՝ որք զայլս չարչարեն. զի Յովհաննէս ինչ ոչ վնասեցաւ, այլ նոքա՝ որ զայն նիւթեցին նմա։

ԳՈՐԴՈՐԱՊ

Արդ այնպիսի արդարոց նմանեսցուք և մեք, և մի ոմնհար լիցուք մեղաց ընկերաց, այլ ոչչափ 'ի դէպ իցէ՝ խաղաղեսցուք։ Կալցուք յանձինս զբարս ցածուսնս. քանզի և աւետարանիչն զպոռնկէ միոջէ պատմէ և զաղտեղի սպանող կնոջէ, և ոչ թշնամանաբար, որպէս և նմա պարտ էր։ Ոչանզի չասաց ինչ իբրև զսպանողէ և զաղտեղի պղծոյ, այլ թէ յառաջագոյն խրատեալ էր 'ի մօրէն. բարւոք անուամբ ինն խաղաղել զիրսն կոչել։ Այս դու թշնամանեաս և բամբասես զընկերն, և չառնուս յանձն երբէք զտրտմեցուցիչ եղբայրն այնպէս յիշատակել՝ որպէս նա զպոռնիկն. այլ բազում անզգայաբար մնօք, գազան և չարագործ և մեղմեխ և անմիտ, և այլ ևս չարաչար անուանս կոչեմք քան զայն։ Ոչխատեմք և զայրանամք ինն, և իբրև զօտարազգի 'ի

մարդկանէ կոչեմք. և յանդգնիմք և զգուեմք զնա, բամբասեմք և թշնամանեմք։ Եւ յլ ոչ այսպիսի ինչ և սուրբքն առնէին, այլ աշխարհէին զյանցաւորն՝ քան թէ անիծանէին։

Օ սոյն և մեք արասցուք, և արտասուեսցուք զՀերովդիադա, և զայնոսիկ որ նմանօղ իցեն նմա։ Վասնզի բազումք և այժմ գինարբուք լինին. թէպէտ և Յովհաննէս չսպանանիցի, այլ Վրէի անդամքն մնանէանդ քան զայն. զի ոչ զգլուխն սկըտեղը խնդրէն կաքաւիչքն, այլ զոգիս բազմականացն։ Յորժամ ծառայել տան նոցա, և յանօրէն ցանկութիւնսն տանիցին, և բոզիւք շուրջ փակիցեն, ոչ զգլուխն հատանէն, այլ զոգին սպանանէն. զի շնացօղս գործեն և իգասէրս և պոռնիկս։ Վասնզի ոչ նոքանպէս պատրիս՝ յորժամ զգինեզէնն և զաբեալսն տեսանիցես, որպէս զկին մարդ՝ զի կաքաւիցէ և աղտեղի բանս խօսիցի. իսկ արդ չքայքայիցիս, և չգրգռիցիս 'ի նա, չկործանիցիս անկանիցիս 'ի նոյն խորխորատ՝ պատրեալ 'ի ցանկութէ. և կրես ծանրագոյն զպատիժսն, զի զանդամսն Վրէի՝ անդամս պոռնկութէ առնես։

Ոչ դուստրն Հերովդիադայ չիցէ մեծ, այլ որ նովաւ կաքաւեաց յայնժամ սատանա՝ և սոքօք և այժմ 'ի պարու անցանէ, և զոգիս բազմականացն գերի առեալ երթիցէ։ Ոչ պէտ և դուք առանց աբ բեցութէ կայցէք, սակայն այլոց եւս չար մեղաց կըցորդ լինիցիք. քանզի բազում իսկ յափշտակութիւն լի են այնպիսի գինարբուքքն։ Եւ մի ընդ կուտեալ առաջի միսն ևեթ հայիցիս և ընդ պղակունսն՝, այլ թէ ուստի ժողովեալ իցեն, զայն ած զմտաւ. և տեսանիցես, զի յապիրատութենէ և յագահութէ և 'ի բռնաւորութենէ և 'ի յափշտակութենէ է։ Եւ յլ չէ, ասէն, այն անտի, քաւ լիցի։ Եւ ա և ես իսկ զայն կամիմ։ Բայց թէ և յայնմ ամէ սուրբ իցէ, սակայն չէ ազատ 'ի պատժոց այնպիսի բազմախորտիկ ընթերիցն։

Եւ արդ լուր, զիարդ առանց այնր մեղադիր լինի

1 'Ի լուս. գլուխ-նան. նոյնպէս և 'ի վայր։

մարգարէն։ « Վայ այնոցիկ, ասէ, որք ըմպիցեն պարղեալ գինի, և ընտիր իւղովք օծանիցին »։ Տէ-սանէս, զիարդ և վասն բարեկեցութեան պատուհասէր. զի ոչ զաղահութիւն խոտէ անդ, այլ միայն ըզ-զեղխութիւն։ Այս դու աւելի իմն քան զչափն ուտես, և Աստի և ոչ զկարևոր պէտսն տաս։ Դու աղդի աղ-գի պղակունտս ուտես, և նմա և ոչ հաց աշտուձ։ Դու զմեսասուն գինին ըմպես, նմա և ոչ բաժակ մի ցուրտ ջրոյ տաս 'ի ծարաւ։ Դու 'ի կակուղ և 'ի զարդարուն անկողինս ննջես, և նա 'ի ցրտոյ մեռա-նի։ Վասն որոյ թէպէտ յագահութենէ սուրբ իցեն ընթերիցն, սակայն և այնպէս պիղծ են առաջի ՅՀ. զի դու աւելի քան զպէտսն ուտիցես, և նմա և ըզ-պէտսն անգամ չտաս. և այն զի 'ի նորայոցն եւս վայ-ելես։ Այնթէ որդւոց ուրուք ոստիկան էիր, և առեալ զնորայն՝ անտես առնէիր զնորայսն, ոչ ապաքէն 'ի վտանգի կայիր, և բազում դատախազս զանձնեդ կուտէիր, և ըստ օրինացն պատիժս կրէիր։ Իսկ արդ զԱստի առեալ, և այդպէս ընդ վայր ծախես, և չհա-մարիս տալ համարս։

Այս զայս ոչ զայնցանէ՝ որք զբոզսն 'ի սեղանս իւ-րեանց կուտիցեն՝ ասեմ, քանզի չէք ինչ իմ բան ընդ նոսա. որպէս և ոչ ընդ շունսն և ընդ ագահսն, և ոչ ընդ այլ որովայնապարարսն. քանզի չունիմ ինչ և ոչ ընդ նոսա հաղորդութիւն, որպէս և ոչ ընդ խոզս և ընդ գայլս. այլ ընդ այնոսիկ՝ որք յիւ-րեանց արարսն վայելեսցեն, և այլոց չտայցեն. որք զհայրենիսն ընդ վայր ծախեն. քանզի և նոքա չեն մեկուսի 'ի պատժոց։ Այս արդ աղէ՝ իսկ ասա. զիարդ ապրիցիս 'ի պատժոց և 'ի պատուհասից, յորժամ հացկատակքն զորովայն պարարիցեն, և շունն որ ա-ռաջի քո կայցէ՝ և նա զորովայնն ընու, և զԱստ և-նոցա արժանի չհամարիս առնել։ Յորժամ վասն զծաղրն ածելոյ՝ այնչափ առնուցու 'ի քէն, և որ արբ-քայութենն առիթ իցէ՝ և ոչ սուղ ինչ և խուն մասն տայցես։ Այլ՝ վասն խեղկատակութեան ինչ բանս խօ-սելոյ յագեալ գնասցէ. և զնա՝ որ ուսուցանէ զոր ոչն գիտեմք, և ոչ առ շունս ինչ համարիցիմք, և ոչ այսմ արժանի առնեմք։

Մեր ելս լսիցես զբանս և զահի հարկանիցիս. թէ այնպէս իցէ, արդեամբք իսկ զարհուրեաց, և քան զհացկատակսն մոյծ բազմեցո զԼՒՇ։ Եթէ այլոց իրաց [1] և սեղանոյն հաղորդ լինիցի, և մեղմագոյնս պահէ զքեզ 'ի դատաստանին. քանզի գիտէ ԼՒՇ ակն առնուլ 'ի սեղանոյ։ Օ՛ի թէ աւազակքն գիտեն պահել զդաշինս աղևհացի, որչափ ևս առաւել նոքն։ Օ՛մնաւ ած՝ զիարդ զպոռնիկն 'ի սեղանոյն արդարացոյց, և զՍիմոն նախատեր, թէ համբոյր մի ողջոյն ինձ ոչ ետուր։ Օ՛ի մինչև արարեալ այս պիսի ինչ՝ կերակրէ զքեզ, որչափ ևս առաւել թէ առնիցես, տացէ քեզ փոխարէնս։

Մի ընդ աղքատն նայիցիս՝ զի խարուեալ և երիթացեալ մատչի առ քեզ, այլ զմնաւ ած՝ թէ ԼՒՇ նովաւ գայ 'ի տունս քո, և ցածիր յանագորոյն մտացըդ և յամբարտաւան բանիցդ, որով միշտ լուտաս հանես զմուրոցն, խաբեբայս և վատս և այլ ևս քան զսոյնս չարաչար անուանս կոչես։ Օ՛ի յորժամ զայն բանս խօսեցիս, հաշուեա 'ի միտս, զոր գործ քեզ հացկատակքն գործիցեն զնչ օգուտ տան քում առնիցեն։ Այլ թերևս խրախուշ ինչ 'ի Հաշն առնիցեն։ Այլ զնչ այն խրախուութիւն իցէ՝ զմիմեանս ապտակել և գարշելի բանս խօսել. և զնչ քան զայն չախորժելի կայցէ, զի նմանութիւն այ պատկերի դէմքն ծեծիցին, և յերեսացն թշնամանացն քեզ թատր զբօսանացն գործիցես. և լցեալ զտուընն մանոօք և գուսանօք և խնձոյիւք գլխագերծաց, որ իւրաքանչիւր ումեք կեղծաւորեալ նման են, 'ի գինը ըմպելին կուտիցես աղատս և աղնուականս, և անդ կայցէ ծաղր և ապտակոծ զմիմեանս առնել։ Այլ արդ զայն խրախուութիւն կոչիցես, որ բազում արտասուաց արժանի է, և սատանիկ ողբոց և աշխարանաց։ Օ՛որս պարտ իսկ էր բռնի ածել 'ի փոյթն, զորս խրատել և 'ի կարդ արկանել արժան էր, զու 'ի սուտ երդմունս և 'ի բանս լկտիս զրգռես. և ուրախութիւն զիրան կոչես, և զգեհենին առիթն խրախութիւնս համարիս։ Օ՛ի յորժամ չգտանիցեն կա-

[1] Ա՛յժմու յոյնն ἀλῶν, ալիոյ. իսկ ἄλλων, ալլոյ իրոյ։

տակութեան ինչ բանս խօսել, երդմամբք սուտ վնաբեն զամ։ Այլ արդ այն ծաղռն ինչ արժանի իցէ, թէ լալոյ և արտասուաց. և ոչ ոք որոյ միտք կայցեն, զայն ասիցէ։

Այլ զայս ասելով՝ ոչ եթէ արգելում կերակրել զնոսա, այլ մի յայնպիսի պատճառս. մարդասիրութեամբ բարուրք լինիցին կերակուրքն և մի անագորունութեամբ, ողորմութեան և մի թշնամանաց։ Այլ եթէ աղքատ իցէ կերակրեա, քանզի Աստուծ կերակրի. կերակրեա, մի վասն զսատանայական բանսն խօսելոյ, որով զիւր կեանսն իսկ յամօթ առնէ. մի հայիր ընդ նա զի 'ի վերոյ ծիծաղի, այլ զթախիծ [1] մտացն քննեա, և տեսանիցես՝ զի ստէպ անձամբ զանձն ապիծանէ և հեծէ և զոփայ. և եթէ 'ի վեր չհանիցէ, և զայն վասն քո առնէ։

Արդ եղեսցին արք աղքատք և աղատք սեղանակիցք քո, և մի սուտերդմունք զմիմեանսիք, որ խանդարեն զերեսսն և ըստ իւրաքանչիւր ումեք նմանին։ Այլ եթէ կամիցես փոխարէն կերակրոցն պահանջել 'ի նոցանէ, հրաման տուր՝ եթէ տեսանիցես ինչ յոռուն գործեալ, սաստել, խրատել, օգնական տանն դարմանոցն լինել, ծառայիցն վերակացութեան։ Որդեակս ունիցես, հասարակ ընդ հարք [2] լինիցին նոցա՝ այնպիսի վերակացութիւն, բաժանեսցեն ընդ քեզ ըզշահսն, յանձին կրեսցեն զայ հաճոյսն, արկ զնոսա 'ի հոգևոր վանառաջնորդսն։ Այլ եթէ տեսանիցես զոք կարօտ վերակացութեան, հրաման տուր օգնել, պատուիրեա պաշտել։ Այրոքք մեծարեա զհեւրս, նորոքք զգեցո զմերկս, նորոքք առաքեա 'ի բանտս, և դիւրեա զվիշտս նեղելոցն։ Այլ զայն ամ տացի քեզ փոխարէնս ընդ կերակրոցն, ուստի քեզ և նոցա օգուտ գործեցի, և ոչ մի ինչ պարսաւանք լինիցին։

Այլ այնպիսի իրօք առաւել հաստատի բարեկամութիւնն։ Այլ այժմ ևս շահս շահին՝ զի սիրինն, սակայն ամաչէն՝ զի դատարկն կերակրին 'ի քէն։ Իսկ եթէ զայն վնարիցեն, և նոքա աչալուրջք լինիցին, և դու ախորժելով կերակրեսցես, քանզի ոչ ընդ

1 Յօրինակին ը Խիծ։ 2 'Ի լուս. ընդ հարք։

վայր ծախես։ Լաւ նոքա համարձակ լինին ընդ քեզ, և պատշաճ ազատութիւն. և տունն փոխանակ թա-տերն եկեղեցի լինի քեզ, և սատանա հալածական գնայ. և Ինչ եկեալ մտեալ՝ և դունդք հրեշտակաց. զի ուր Ինչ է, անդ են և դունդք հրեշտակաց. և ուր Ինչ և հրեշտակք, անդ երկինք, և լոյս առաւել քան զարեգակնն։

Լսակ եթէ և այլ ևս ինչ մխիթարութիւն կամիս շա-հել 'ի նոցանէ, հրամայեա դպրացն ժողովել, զգիրս ՅԾեղէն օրինացն առնուլ և ընթեռնուլ։ Լաւ այնու ևս ախորժելով սպասաւոր լինիցին քեզ՝ քան այլով-քն։ Օ՛ի այն զքեզ և զնոսա պարկեշտագոյնս գոր-ծէ, և միւն զամենեսին միանգամայն յամօթ առ-նէ. զքեզ՝ իբրև զթշնամանօղ և զգինեմոլ, և զնո-սա իբրև զհէքս և որկորեայս։ Լ՚Թէ թշնամանօք կէ-բակրես, ևս չար քան զայն եթէ սպանանէիր. իսկ եթէ յօգուտ և 'ի շահ, ևս լաւագոյն է քան զայն եթէ 'ի մահուանէ թափէիր։ Լ՚այց այժմ քան զծա-ռայն ևս չար զնոսա յամօթ առնես, և ստրուկքն աւելի քան զնոսա ունին համարձակութիւն և ազատ միտս 'ի կասկածանաց. իսկ յայնժամ հրեշտակաց հա-ղորդս առնես զնոսա։

Լ՚յսուհետև զանձն զերծո 'ի դարովանաց, և փո-խեա զանուն հացկատակացն, և կոչեա սեղանակից. և շրջեա զանուն սուտակասպասացն, և դիր անուն բարեկամաց։ Ա՚ն այնորիկ իսկ արար զբարեկա-մութիւն ՅԾ, ոչ 'ի՝ չարութիւն բարեկամացն և 'ի բարե-կամեցելոցն, այլ 'ի բարութիւն և 'ի շահ։ Օ՛ի որ այլազգ բարեկամութիւք իցեն, քան զթշնամութիւն ևս դժնդակագոյնք են։ Օ՛ի 'ի թշնամեացն՝ թէ կա-միմք, օգտիմք. և 'ի նոցանէ ամենևին հարկ է վնա-սիլ. մի առներ բարեկամ՝ վարդապետս վնասուց. մի ունիր բարեկամս սեղանոյ, և ոչ բարեկամութի՝ խնամոյ ցանկացօղս։ Օ՛ի այնպիսիքն ամենեքեան՝ եթէ 'ի բարեկեցութէն կասիցես, և 'ի բարեկամու-թենէն կասին։ Լսակ որ վասն առաքինութէ խնամարկ կիցեն ընդ քեզ, և ոչ երբեք վրիպեն, այլ ՅՄ ան-

1 'Ի լուս՝. Բարեխամութէ։

հարթութեամբ։ Համբերեն։ Իսկ հացկատակաց ազգն՝ և վրէժս ևս բազում անգամ պահանջեն, և չարաչար կարծիս կարծեցուցանեն. և անդ իսկ զբազում ազատաց գիտեմ առեալ չարաչար կարծիս։ Օ՛ի ոմանք՝ ի կախարդութիւս, և ոմանք՝ ի հնութիւնս, և զմանկունս ապականել բամբասեցան։ Օ՛ի յորժամ այլ գործ ինչ ոչ ունիցին, այլ ընդ վայր կեանս կեցեն, որպէս թէ այնպիսի ինչ սպասաւորութիւն հարկանիցեն կարծիս բազմաց։

Լու արդ զի զանձինս՝ ի չարաչար կարծեաց ազատիցեմք, և նախ քան զամ՝ ի հանդերձեալ գեհենէն, և զայ հաճոյն արասցուք, և զայնպիսի սատանայական խնամութիւնն՝ ի բաց ընկեսցուք. զի և ուտելն և ըմպելն՝ ի փառս այ եղիցի, և առ՝ ի նմանէ զփառսն վայելեսցուք. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել հնորհօքն Տեառն մերոյ Յիսուսի. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Յորինակին հաբթութեամբ։

ՃԱՌ ԲՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ

«Լու իբրև լուաւ Յա, ասէ, գնաց նաւով անտի յա նապատ տեղի առանձին. և իբրև լուան ժողովուրդքն, զհետ գնացին նորա հետի ընդ ցամաք յամենայն քաղաքաց»։

Տե՛ս, զիարդ ամ ուրեք թողու զբազմութիւն, և յորժամ մատնեցաւն Յովհաննէս, և յորժամ սպանաւն, յորժամ հրեայքն լուան՝ թէ զբազումն աշակերտէ։ Վասնզի բազում ինչ մարգկօրէն կամի մատակարարել. զի չև և ես կոչէր ժամանակն՝ մերկանալ յայտնի զաւծութիւն։ Այս և աշակերտացն պատուիրէր մի ումեք 'ի վեր հանել՝ թէ նա իցէ Քրիստոս, զի յետ յարութիւնն կամէր յայտնել զայն. ուստի և հրէիցն անհաւատից չև ևս էր կարի ծանրագոյն, այլ ներելով։

Այսոյս ետ, ասէ, անտի. ոչ 'ի քաղաք ուրեք երթալ, այլ յանապատ տեղիս. և 'ի նաւ մտանէր, զի մի ոք թախանձիցէ ինչ երթալ զհետ նորա։ Այս դու միտ դիր, զիարդ և Յովհաննու աշակերտքն տակաւ ընտանեցան նմա. քանզի և զիրսն որ գործեցան՝ ինքեանք պատմեցին, և զամենեսեան թողին, և առնա դիմեցին. և այն 'ի վերստին և յառաջին պատասխանեացն յարդարէր։

Այս ընդէր ոչ նախ քան զպատմելն խոյս ետ 'ի տեղւոջէն, թէպէտ և զիտէր յառաջագոյն մինչև նոցա պատմեալ էր։ Այլ զի ամ իւիք զտնտեսուն ճշմարտութեան հաստատեսցէ, ոչ միայն երեսօք, այլ և արդեամբք կամէր հաւատարիմ զայն առնել։ Վասն զի գիտէր իսկ ճարտար զսատանայի մենքենայաւորութիւն, որ ամ հնարիւք հնարէր՝ զի զնորա կարծիսն 'ի միջոց բարձցէ։ Ինքն յայս միտս խոյս տայր, և ժողովուրդն և ոչ այնպէս կամէին փարատել 'ի նմանէ, այլ իբրև բևեռեալք ընդ նմա՝ չառնուին

յանձն թափիլ 'ի նմանէ։ Այլ և ոչ Յովհաննու ինչ գործքն երկեցուցանէին զնոսա. զի այնպիսի իսկ է գութն, նայնպիսի է խնամն և սէրն. ամի յաղթէ, և զամ դանդաղանս 'ի բաց փարատէ։ Ա՝ ամն որոյ և զհատուցումն անդէն վաղվաղակի առնուն։

«Այլ, ասէ, Յո՛ և ետես ժողովուրդ բազում, և զթացաւ 'ի նոսա և բժշկեաց զհիւանդս նոցա»։ Օ՛ի թէպէտ բազում էր փոյթն հանապազորդուն և հպատակութեն, այլ նորա երախտիքն անցանէին զամ. վասն որոյ և պատճառ այնպիսի բժշկութեան զողորմութեն դնէ։ Բ՝ժշկէր զբազումս, և հաւատս ինչ ոչ պահանջէր անդ. քանզի զհետ երթալն, և զքաղաքսն թողուլն, և յամէն առ նմա, և 'ի քաղցոյն նեղիլն, զհաւատս յայտ առնեն։ Կամէր և կերակրել զնոսա, և ոչ անձամբ ինչ առնէր, այլ անսայ աղաչելոյ։ Որպէս յառաջագոյն իսկ ասացի, ամ ուրեք այնմ ևեթ ուշ ունի, զի մի կարծիցի՝ թէ ընդառաջ ինչ երթիցէ սքանչելեօքն, այլ յորժամ կոչիցի։ Այլ ընդէր ոչ որ 'ի ժողովրդոցն մատեաւ և աղաչեաց։ Ա՝ ամն զի կարի իսկ ակնածէին 'ի նմանէ, և չէ ևս քաղցին զդային՝ առ գութ սպասաւորուն՝ յորում յամէին։ Այլ ոչ աշակերտքն ինչ մատուցեալ ասէին՝ թէ տուր ուտել ժողովրդոցդ, քանզի դեռ ևս թերակատարք էին. և արդ զինչ իցէ։

«Երբև երեկոյ եղև, ասէ, մատեան աշակերտքն, և ասեն ցնա. տեղիս անապատ է, և ժամն տարաժամ. արձակեա զժողովուրդս, զի երթիցեն գնեսցեն կերակուր»։ Զ՝անզի զառաջին նշանին մոռանային զսակառիսն, որպէս յետոյ զսփիւռիդոն, և կարծէին՝ թէ վասն հացի ինչ ասիցէ, յորժամ վասն խմորոյ վարդապետութե փարիսեցւոցն զգուշացուցանէր. որչափ ևս առաւել մինչև զայս նշանի հանդէս առեալ էր, ոչինչ իմանային։ Թ՝էպէտ և յառաջագոյն բազում հիւանդս բժշկեալ էր, այլ ոչ անտի իմանային ինչ՝ թէ հաց կարիցէ առնեցուցանել, և զժողովուրդսն կերակրել, քանզի դեռ թերակատարք էին։ Այլ դու միտ դիր իմաստութե վարդապետին, զի արդ յայտնի մեզադիր լինի, զի հաւատասցեն։ Զ՝անզի ոչ վաղվաղեաց ասել, թէ ես կե-

բակրեցիից զդոսա. զի և ոչ դիւրընկալ լինէր նոցա բանն. և զինչ ասիցէ,

«Իսկ ցնոսա Յն. չէ ինչ պիտոյ նոցա երթալ, դուք տուք նոցա ուտել»։ Այլ ոչ ասաց, թէ ես տամ, այլ թէ դուք տուք. քանզի դեռ ևս իբրև ընդ մարդ հայէին ընդ նա։ Այլ նոքա և ոչինչ այնու ընդոստեան, այլ տակաւին իբրև ընդ մարդոյ խօսէին։

«Ունիմք ինչ աստ, ասեն, բայց միայն հինգ նկաւնակ, և երկուս ձկունս»։ Ասն որոյ և Արկոս, ասէ, թէ չառին 'ի միտ զհացն, քանզի ասլշեալ էին սիրտք նոցա, զի դեռ ևս ընդ երկիր քարշէին։ Այս այնուհետև զիւր զօրութիւն յայտ արարեալ՝ ասէր, թէ բերէք այսր։ Թէպէտ և տեղիս անառատ իցէ, այլ որ զամ աշխարհ կերակէ՝ աստ է. թէպէտ և ժամն տարաժամ է, այլ չէ ինչ ընդ ժամաքն որ ընդ ձեզդ խօսի։ Իսկ Յովհաննէս և գարեղէն ասէ զնկաւնակսն. և ոչ դատարկ ինչ, այլ զյաձախութիւն բազում խորտկաց ուսուցանէ արհամարհել մեզ. այսպիսի ինչ և մարգարէիցն սեղանքն էին։

«Հրամայեաց, ասէ, զմարդիկն բազմեցուցանել 'ի վերայ խոտոյ։ Այս առեալ զհինգ նկաւնակն, և զերկուս ձկունսն, հայեցաւ յերկինս, օրհնեաց և ետ ցաշակերտսն. և նոքա առին և բաշխեցին ժողովրդոցն։ Կերան ամենեքեան և յագեցան, և բարձին զնշխարս կոտորոցն լի երկոտասան սակառի։ Այս էին որք կերանն արք իբրև հինգ հազարք, թող զկանայս և զմանկտի»։ Այս ընդէր հայեցաւ յերկինս, և ասա օրհնեաց։ Օ՛ի պարտ էր նմա հաւատարիմ լինել, եթէ 'ի հօրէ է, և զուգական նորին։ Այս այնպիսի իրքն կարծէին՝ թէ հակառակ ինչ են միմեանց։ Զուգականութիւն, զամ ինչ իշխանութիւն գործել՝ յայտ առնէր։ Իսկ եթէ 'ի հօրէ իցէ, այնմ ոչ այլ ազգ ինչ հաւանէին, թէ ոչ կարի իսկ խոնարհութիւն ցուցանիցէ, և 'ի նա զամ հանիցէ, և 'ի նշանագրծութիւնն զնա կոչիցէ։ Ասն այնորիկ ոչ զայնպիսին միայն առնէր, և ոչ՝ զայսպիսիսս, զի երկոքին կողմանքն հաստատիցին. մերթ իշխանութեամբ, և մերթ աղօթիւք առնէր զնշանսն։ Այս զի մի և կրուայ ինչ պատճառք կարծիցին գործքն, 'ի փոքունսն

ընդ երկինս հայի, և զմեծամեծսն իշխանութիւն առնէ։ Օ՛ի ուսանիցիս՝ թէ 'ի փոքունսն ոչ զօրութիւն ինչ յումեքէ առնու, այլ զի զծնօղն պատուիցէ, որպէս և որդւոյ պատշաճ իցէ պատուել։ Յորժամ զմեղսն եթող, և զդրախտն եբաց, և զաւազակն եմոյծ, և բազում յաճախութիւն զկին օրէնսն ելոյծ, և այնչափ մեռեալս յարոյց, և զծո�ն կարկեաց, և ըզծածուկս փարիսեցւոցն յայտնեաց, և զաչս կուրին ստեղծ, որ ՝այ միայն գործ էր, և ոչ այլ ումեք, ոչ երբեք երևի՝ թէ աղօթիւք ինչ առնէր։ Այլ յորժամ զնկանակսն աճեցուցանել կամէր, որ կարի փոքր էին քան զամ, և վասն այն ընդ երկինս հայէր, զի և զայն՝ զոր յառաջագոյն ասացի՝ յարդարէ, միսն դամայն և ուսուցանէ զմեզ՝ մի մատչել 'ի սեղան, եթէ ոչ նախ ընդ երկինս հայեցեալ՝ զնայ գոհանայցեմք, որ միշտ կերակրէ զմեզ հնորհելով։

Այս ընդէր ոչ յոչընչէ արար։ Օ՛ի զԱրկիոփի և զմանիսեցւոց բերանս կարկիցէ, որք օտար էին 'ի նմանէ զարարածս համարին։ Օ՛ի գործովք յայտ առնիցէ, թէ ամենայն երևելիք նորին արարածք և գործ են, և ինքն է՝ որ զպտուղս աճեցուցանէ, որ ասացն 'ի սկզբանէ, թէ «Ասուսուցէ երկիր զբանջար խոտոյ, և հանցեն ջուրք զեռուն կայտառ հնչոց կենդանեաց»։ Այս չէ ինչ այս քան զայն փոքր. զի թէպէտ և երկիր յոչընչէ իցէ, այլ բոյսն յերկրէ, և զեռուն կայտառք 'ի ջրոյ. և չէ ինչ ընդհատ՝ զբոյսն յերկրէ, և զզեռունն 'ի ջրոյ երևեցուցանել, յայտնմանէ՝ զի 'ի հինգ նկանակէ զբազում նկանակս աճեցոյց, և 'ի սակաւ ձկանց՝ ձկունս յոլովագոյնս. զի և այնուհետև նշանակիցէ, թէ և ծովու և ցամաքի նա է տէր։

Զանազի յաճատացեալսն ևեթ առնէր զաբանչելիսն, առնէր և համբրէն ինչ բարերարութիւն. զի մի տեսողք ևեթ բազումք այլոց դիպաց լինիցին, այլ և ինքեանք ևս վայելեսցեն 'ի պարգևսն։ Որ ինչ յանապատին զարմանալիք թուէին հրեիցն, և ասէին, «Որ՝ եթէ հաց կարիցէ տալ, կամ պատրաստել սեղան յանապատիս», զայն եկեալ ցուցանէ արդեամբք։ Զսան այնորիկ իսկ յանապատն հանէ, զի առանց կարծեաց լինիցի սքանչելիքն. և մի ոք համարիցի՝ թէ

'ի մեծաւոր ուստէք 'ի գիւղին բերին կարգեցին զայն համ 'ի սեղանն, վասն այնորիկ ոչ միայն զտեղին, այլ և զժամն նշանակէ։

Եւ այլ ինն զգաստուն զաշակերտացն ուսանիմք, թէ ոչ համբարեին այնուհետև զկերակուրս։ Երկուտասան այր յանապատի՝ հինգ և եօթն նկանակ ունէին, և երկուս ձկունս. և այնպէս չպէտս առնէին մարմնաւորացս, և միայն հոգևորացն ևեթ կային պատկառ։ Եւ զա և 'ի սակաւն չինայեցին, զի յորժամ խնդրեացն՝ վաղվաղակի բերին 'ի մէջ։ Լաստի և խրատիլ իսկ պարտ է, թէպէտ և սակաւ ինչ ունիցիմք՝ և զայն ևս բաշխեսցուք կարօտելոց։ Եւ իբրև հրամայեաց, վաղվաղակի 'ի մէջ բերին զհինգ նկանակն. և ոչ ասէին՝ թէ մեք զինչ ուտիցեմք կամ ի հարկանիցեմք զքաղցն, այլ վաղվաղակի ունկնդիր լինէին։

Հանդերձ ասացելովքս, որպէս ինձ թուի՝ զի այնու ևս յորդորիցէ զնոսա 'ի հաւատս. քանզի դեռ տկարագոյնք ևս էին. վասն որոյ և յերկկինս ևս նայէր։ Այլոց նշանացն ունէին բազում օրինակս, բայց զայսր հանդէս չև ևս էին առեալ։ Վասն այնորիկ յորժամ եհատ զնկանակսն, աշակերտացն ետ բաշխել, զի այնու ևս պատուեսցէ զնոսա։ Եւ ոչ միայն վասն պատուելոյն, այլ զի յորժամ նշանն լինիցի և անցանիցէ՝ մի մոռանայցեն, այլ վկայ զայն ունիցին, զի ընդ նոցա իսկ ձեռս բաշխեցան։ Վասն որոյ և ժողովրդոցն թոյլ ետ նախ քաղցնուլ, և նոցա մատչել և հարցանել. և բազմեցուցանել ևս նոցա ետ զմարդիկն, և նոցա բաշխել. զի ամենևին ամենեքեան վկայք լինիցին գործոցն։ Եւ մանաւանդ զի 'ի նոցանէ էառ զհացն, զի միշտ գրիչատակ իրացն ունիցին 'ի մտի։ Լոկ զայն ևս արար՝ և յետոյ մոռացան, թէ չէր արարեալ՝ զիարդ իսկ ոչ ախտանային։

Եւ հրամայէր 'ի խոտոցն վերայ բազմել. զի ցաւուքն ուսուցանիցէ ժողովրդեան. ոչ կամէր միայն կերակրել, այլ և զոգիսն խրատել և տեղեաւն, և զի ոչ ինչ աւելի քան զհացն և զձուկնն ետ, և զի ամենեցուն զնոցն ետ դնել առաջի, և ոչ այլում այլ ինչ, և միւսումն այլ, այլ ամենեցուն զնոցն առհասա-

բակ. զի խոնարհութիւն ևս էր ամենեցուն միմեանց նմանել, և զամ ինչ 'ի միջոյ համարել ուսուցանիցէ։

«Լբեկ և ետ ցաշակերտսն. և աշակերտքն արկին ժողովրդեանն»։ Օ հինգ նկանակսն եբեկ և ետ, և հինգն 'ի նոցա ձեռս բղխեին և աՃեին. և ոչ այն չափ միայն, այլ և յաւելուած ևս արար, ոչ ողջ նկանակացն, այլ կոտորոց, զի ցուցցէ՝ եթէ նորին հացի էր նշխարն։ Օ 'ի և հեռաւորքն ևս ուսանիցին զքանչելիսն՝ որ գործեցան. և քաղցնուլ ևս ետ ժողովրդոցն, զի մի կարծիք ինչ իբրն համարիցին. և երկոտասան սակառի յաւել զնշխարսն, զի և Յուդաս ընդ նոսա բառնայցէ։ Կարէր և առանց հացի անցուցանել զքաղցն, այլ ոչ իմանային աշակերտքն զզօրութիւն. քանզի և առ Լդիայիւ եղև այսպիսի գործ։ Լբ աստ այսպէս զարմանային հրեայքն, զի և Թագաւոր ևս կամէին առնել զնա. Թէպէտ և յայլ նշանսն ոչ եղին 'ի մոի այսպիսի ինչ։

Լբ արդ որով բանիւ ոք կարիցէ զհանգամանս է բացն ցուցանել, զիարդ աՃեր հացն, և բղխեր յայն չափ բազմութեանն յանապատին. կամ զիարդ կարէր լինել այնչափ մարդկանն բաւական. քանզի հինգ հազար այր էին, Թող զկանայս և զմանկտի. և մեծ դողութիւն ժողովրդոցն այն էր, զի կանամբք և մանկամբք երթեալ պարապէին առ նմա։ Լբ որչափ նշխարքն յաւելան. և այս քան զառաջինն չէ ինչ նուազագոյն. ըստ Թուոյ աշակերտացն՝ նոյնպէս և սակառիք նշխարացն յաւելուն. ոչ աւելի քան զայն, և ոչ սակաւ։ Լռեալ զնշխարս կոտորոցն՝ ոչ ժողովրդոցն ետ, այլ աշակերտացն. զի քան զաշակերտսն ժողովուրդքն Թերակատարք էին։

Լբ իբրև արար զնշանսն, «Ստիպեաց զաշակերտսն մտանել 'ի նաւ, և երթալ յառաջագոյն յայնկոյս ծովուն, մինչև ինքն զժողովուրդսն արձակիցէ»։ Օ 'ի Թէպէտ և անդէն մծտ՝ առ աչօք ինչ իբրն կարծէին և ոչ Ճշմարտութիւն, ոչ եթէ 'ի բացարձակ տեղիսն նոյնպիսի ինչ։ Վասն այնորիկ հաստատուն քննութիւն մնկեր 'ի միտս նոցա զյիշատակ իրացն գործելոց. վասն յայտ զնշանսն առնելոյ՝ հրամայէր նոցա յիւրմէ մեկնել։ Լբ այլ ազգ ևս. յորժամ մեծ

ինչ գործ գործէր, մեկուսի առնէ զանձն իւր 'ի ժողովրդոցն և յաշակերտացն. զի զմեզ ուսուցանիցէ՝ մի 'ի բազմաց ինչ փառս խնդրել անձանց, և մի զայնր զհետ ձգիլ երթալ։ Այլ ասելոյն՝ թէ ստիպեաց զաշակերտսն, զկարի հպատակութիւն աշակերտացն յայտ առնէ. զնոսա 'ի պատճառս ժողովրդոցն արձակեաց, բայց ինքն և 'ի լեառնն կամէր ելանել։ Օ 'ի այնու և խրատիցէ, մի միշտ ընդ ժողովուրդսն խօսել, և մի ցանգ 'ի բազմութենէ փախչել, այլ երկուքումքն 'ի դէպ վարիլ։

ՑՈՐԴՈՐԱԿ

ՈՒՍՑՈՒԴՐ այսուհետև և մեք միշտ պատկառել 'ի Քրիստոս. մի միայն վասն երևելի պարգևացս, զի մի և մեք նախատիցիմք իբրև զՀրեայսն, եթէ «Խնդրեցէք զիս, ոչ զի նշանս ինչ տեսէք, այլ զի հաց կերայք և յագեցարուք»։ Վասն այնորիկ ոչ ստէպ առնէր զայս նշան, այլ երկիցս և եթ. առ յուսուցանել՝ մի միայն որովայնի ծառայել, այլ միշտ հոգևորացն պատկառ կալ։ Այլ մեք նմին պատկառ կացցուք, և խնդրեսցուք զՀայրն երկնաւոր. և յորժամ առնուցումք, հանեալ մերժիցեմք զայմ հոգս աշխարհիս։ Օ 'ի թէ նոքա զտունս և զքաղաքս և զաղգականս և զայմ ինչ թողին, և ընդ անապատ տեղիս շրջէին, և քաղցիւ հարկանէին, և ոչ կամէին հեռանալ 'ի նմանէ, որչափ և առաւել մեզ՝ որ յայսչափ բարութիս և 'ի սեղանս վայելեմք, պարտ է ցածնուլ, և զհոգևորն օր ըստ օրէ խնդրել։ Արանզի և նոցա ոչ վասն այնորիկ սաստեաց, զի զՀայրն խնդրէին, այլ զի վասն այնորիկ խնդրէին զնա՝ և զայն լաւ համարէին։ Այթէ ոք մեծամեծաց պարգևացն չառնիցէ փոյթ, և զմանուանն և եթ խնդրիցէ, և յայնմանէ և անկանիցի զոր կամիցին։ Որպէս զի թէ այնմ ցանկանայցեմք, և զայս և առնուցումք. քանզի այս այնմ յաւելուած է. զի այնպէս նուազագոյն և փոքր է այս առ այնու, թէպէտ և կարի ինչ մեծ իցէ։

Այլ արդ մի յայս փութացուք, այլ անխտիր հա-

մարեսցուք զսոցա [1] և զստացուածս և զվրիպեալն. որ-
պէս և Յովբ ոչ զմնատաւորքս գայր կարի, և ոչ ըղ-
հեռաւորսն խնդրէր։ Ոչանգի և ինչք ոչ վասն այնո-
բիկ են՝ զի թաղեցեմք, այլ զի 'ի կիր արկանիցեմք։
Որպէս 'ի ձեռագիտացն իւրաքանչիւր ոք զիւր ա-
բուեստն գիտէ, նոյնպէս և մեծատունն չգիտէ դար-
բնել, և ոչ նաւ կազմել, և ոչ ոստայնանկել [2], և ոչ
շինուած շինել, և ոչ այլ ինչ 'ի սոյնպիսեացս. ուս-
ցի այսուհետև զմեծուին 'ի բարիս գործել և ողոր-
մել կարօտելոց, և քան զամենեսեան [3] զնոսա ձար-
տար արուեստագէտ իցէ։ Օ՛ի այս արուեստ քան
զնմա արուեստ լաւագոյն է. սորա արուեստանոցն
յերկինս շինեալ կայ. սորա ոչ յերկաթոյ և 'ի պղնձ-
ոյ են գործիք, այլ յառատութենէ և 'ի մտաց բա-
րեաց։ Այսր արուեստի Աստ է վարդապետ, և նո-
բին հայրն։ «Այդերուք, ասէ, գթածք, որպէս և
հայրն ձեր որ յերկինս է»։ Այս այն իսկ են զար-
մանք, այնպէս քան զայլսն ազնուագոյն է, զի ոչ աշ-
խատութեամբ և ժամանակի կարօտանայ առ յուղղու-
թիւն. կամելն միայն բաւական է, և ամ լինի։
Տեսցուք և զվախճան սորին՝ որպիսի ինչ իցէ։
Օ՛ինչ իցէ վախճան սորա։ Այրկինք և երկնից բա-
բուեալքն, փառքն անձառք, առաքաստն հոգևոր,
լապտերքն մեծապայծառք, ընդ փեսային բնակուին.
զոր ոչ բանքն և ոչ միտք կարեն յանդգիման կացու-
ցանել։ Որպէս և աստէն իսկ բազում առաւելութիւն
ունի քան զայլսն։ Օ՛ի յարուեստիցն բազում ինչ
յայս կեանս պիտանացու է մեզ. իսկ սա աստ և 'ի
հանդերձեալ կեանսն։ Այթէ քան զկարևոր արուեա-
տրն այնչափ առաւել է, զբժշկականէն և զշինողա-
կանէն ասեմ և զայլոց այսպիսեաց, ո՞րչափ ևս առա-
ւել քան զայլսն. զորս եթէ ստոյգ ոք քննիցէ՝ և ոչ
արուեստ ոք կոչէ. ուստի և ես իսկ զաւելորդսն և
արուեստ իսկ չասեմ։ Ոչանգի ուր մեզ խունաւագու-
թիւնն և խոհակերութիւնն պիտանացու է. և ոչ եր-
բէք. այլ առաւել անպիտան և վնասակար մարմնոյ

1 Յօրինակին զսոսա։
2 Յօրինակին ոստանանիէ։
3 'Ի լուս. զամենեսին։

և հոգւոյ, և մայր ամենայն ցաւոց և հաշմութեանց, և զբարեկեցութիւն բազում առաւելութիւն մուծանել։ Այլ ոչ զայնս միայն, այլ և ոչ զնկարչացն և ոչ ըզնկարագիրտացն ասեմ արուեստս. քանզի յաւելորդ ծախս միայն արկանեն։ Զի արուեստից կարևորաց՝ որ զմեր կեանս միախուռն պէնդ ունիցին, շահաւորս և կազմիչս պարտ է լինել։

Այս և զիմաստութիւնն վասն այնորիկ ետ ՅԱԾ, զի գտցուք հնարս՝ որով մարթասցուք ապրել։ Իսկ ՀԱՄՈՒԿՔՆ՝ որ գործիցին, կամ գազանակերպ ինչ պատկերք ՈՒՐ պիտանացու է։ Վասն այնորիկ և զկոշկակարացն, և զոստայնանկացն բազում ինչ չէ պարտ հաստատել յարուեստս, քանզի 'ի պՀՆԵԼՆ յաՀախ մեռիցեն զարուեստն. զկարևորսն եղծին, և զաւարուեստն ընդ արուեստն խառնեցին։ Զոր և շինողութիւն իսկ կրեաց. այլ զոր օրինակ զսա՝ յորժամ տուն շինիցէ և ոչ թատերս, զկարևորսն և ոչ զաւելորդսն գործիցէ՝ արուեստ կոչեմ, նոյնպէս և զոստայանկութիւն, մինչ զՀանդերձս վերարկուս առնիցէ, և ոչ մշանց և սարդիոստայնից նման, և բազում ծաղր զեղեալ հեղուցուն, և անչափ հպատանս, և զայն արուեստ անուանեմ։ Այլ զկոշկակարացն՝ եթէ ըզլոկ օգտն ոք գործիցէ, չզրկեմ յարուեստի անուանէ. ապա եթէ զարս 'ի կանանց կերպարանս փոխիցէ, և սիգալ և սամարել օգտով ոտիցն առնիցէ, ընդ աւելորդսն և ընդ ՀԱՍԱԿԱՐՍ կարգեացուք զնա, և չհամարեցուք զնա արուեստ։ Այլ գիտեմ թէ բազմաց ՀՂՀԻՄ կարծիմ՝ զայս ՅԱՄ մանր քննելով, սակայն ես ինչ ոչ խորշեցայց. զի պատՀառք ՅԱՄ չարեաց այն է, որ սակաւ մեղք կարծին, վասն որոյ և անփոյթ առնեն։

Այլ այն զի՞նչ իցէ, ասեն, թէ զարդարեալ ոք և պՀՆեալ կօշիկս ագանիցի, և եթէ ըստ ոտիցն պատշաՀութեամբ ոք օդ առնիցէ, և այն մեղս ինչ համարիցի։ Զամիք զի արՀակեցից զլեզու, և ցուցից թէ ՈՐՉԱՓ քարուականութիւն է. և չքարկանայցէք. մանաւանդ թէ բարկանայք ևս՝ ոչինչ կարի զմտաածից. զի դուք իսկ էք պատՀառք թշնամութեանն այնորիկ, որք և մեղս զերսն չհամարիք, և մեզ այնու

իսկ հարկ առնէք՝ 'ի բամբասանս անտառակութեանն մեր։

Այլ արդ օն առ 'ի մէջ, քննեսցուք և տեսցուք, որչափ չարիք իցեն։ Յորժամ զնիւթն մեռաքսեայս զոր և ոչ 'ի հանդերձն պարտ էր արկանել, 'ի կոշիկս կարեալ դրոշմէք, որչափ թշնամանաց, քանի՞ ծաղու իցէ այն արժանի։ Այլ եթէ զմեր վճիռս արհամարհէք, լուր Պաւղոսի բարբառոյն, որ բազում իսկ սասարիւ կսրձէ զայն, և ասա բուժիցիք 'ի ծաղոյ կալոյ։ Այլ զինչ ասիցէ։ «Որ 'ի հիւսակս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով»։ Այլ արդ որո՞ւմ նեբելոյ արժանի լիցուք, յորժամ զոր ամենասուրբ կանանցն չհրամայէ Պաւղոս պաձուձել և 'ի հանդերձսն ունել, դու և 'ի կօշիկսն ևս լիտուրգ գործ գործիցես, և բազում քարուկանս 'ի վերայ ծաղրալից թշնամանացն կազմիցես։ Օ՛ի և նաև ևս կազմի, և 'ի ծով մեր, և մի ըստ միոջէ անուանին առաջապահք, և ուղղիչք, և կայմն կանգնաւոր, և առագաստ պարզեալ, և ընդ համատարած ծովն նաւարկէ. զկին և զորդիս և զաշխարհ թողեալ, և զանձն ևս խուռն 'ի մէջ ալեացն տայ վաճառականն, և 'ի տարաշխարհիկ յաշխարհն բարբարոսաց երթայ, և ազգի ազգի ձգունս յանձն առնու վասն մեռաքսին նիւթոյ. և քո յետ այնր ամենայնի առեալ ընդ կօշիկսն կարես, և զմարթան այնու դրօշես. և զինչ քան զայն անհանձարութի՞ չար կայցէ։

Օ՛ առաջինն չէր ինչ այսպիսի, այլ որպէս արանց վայելէ՝ արք ագանէին։ Այլ ինձ այսպէս թուի՝ թէ ևս յառաջ մատչիցին ժամանակքս, թէ և կանանցն անգամ կօշկայ չակնածեն ունել կերպարանս այժմուերիտասարդքս, և չամաչիցէք։ Այլ անհնարին աղէտք այն են, զի հարքն՝ որ տեսանիցին զայն, չբարկանան, այլ անխտիր ինն զիրսն համարին։

Կամիք զի և զմիւսն ևս ասացից, որ ևս չար քան զսոյն է. զի և աղքատք ևս բազում են, և սակայն այն լինի։ Կամիք զի՞ 'ի մէջ ածից։ Օ՛չ՝ սովամահ և մերկ տեսանես և թափառական ընդ ՝ամ տեղիս, և կապեալ և կալանաւոր. և որչափ դսրովութեան չիցէք արժանի. զ՞չ՝ 'ի կարևոր կերակրոյն չքա-

ւորեալ տեսանէք, և անտես առնէք. և զմարթան այնչափ փութով ձեռիք զարդարել։ Եւ Պ՚ա յորժամ աշակերտացն օրէնս դնէր, և ոչ լոկ կօշիկս հրամայեաց ունել. իսկ մեք ոչ միայն բոկ չառնումք յանձն դնալ, այլ և ոչ ագանել զոդն՝ որպէս պարտ իցէ ագանել։ Եւ արդ զի՞նչ քան զայն անագորուն թեամբ կայցէ, որ ծաղր քան զայն ծաղր ձաղանաց։ Պ՚անզի անմտաց և իգացեալ ոգւոց են իրքն, և հպարտութեամբ և անագորոյն մտաց և յողալեաց, և զրաջանից, և անշահ իրաց են իրք։

Եւ արդ երբ կարիցէ այնպիսին կարևոր իրաց ինչ սկել, որ ևեթ աւելորդացն պարապէ և մնապարծուեր։ Եթէ ունիցի այնպիսի երիտասարդն յանձին ոգւոցն զարման տանել, կամ իմանալ՝ թէ բնաւ զուցէ իսկ ոգիք։ Պ՚անզի որ յայնպիսի իրս հարեալ իցէ, և ձղձիմ լինի և անագորոյն. որ վասն այնպիսի իրաց զկարօտելոցն անփոյթ առնէ, և յառաքինութենէ թափուր իցէ, և ամենևին զփոյթն յայն ծախիցէ։ Որ առաքինութի՛ զմետաքս մանեալ և զբանդոցն ծաղիկս համարիցի, և նշատերև քանդակս[1] 'ի նկար կօշկացն հանդերձեալ յողայցէ, երբ կարիցէ յերկինս հայել։ Եւ երբ ընդ այն գեղ զարմանայ, որ ցանգ 'ի գեղ մարթացն հարեալ է, և 'ի խառնարհ ևեթ հայիցի։

Զ՚ն երկինս ձգեաց, և արեգակն ծագեաց, զի զբո զաչդ 'ի վեր ձգիցէ։ Եւ դու 'ի խոնարհ ընդ երկիր իբրև զխոզ հայելի արարեալ՝ ընդ երկիր պրշնուս, և 'ի սատանայի պատիրս անկանիս։ Պ՚անզի չար դևն իսկ իմացաւ զայնպիսի նշաւակութիւն, զի յայմմ գեղոյ վրիպեցուսցէ զքեզ, վասն այնորիկ 'ի յայս ձգէ։ Զ՚ն զերկինս եցոյց, և դու 'ի մարթն հայիս՝ զոր սատանա եցոյց. մանաւանդ թէ և զմարթն ոչ սատանա, քանզի և այն ՝ից արարած է, այլ ըստ ձնութիւնն և զչար արուեստն, և որ ընդ գեղինն պշուցեալ նայիցիս։ Յորժամ վասն երկնից զգաստութեամբ ձառք անկանիցին, զվայրօք ածէ զմիտս երիտասարդն, և 'ի զարդն ևեթ կան աչքն, քան թէ

1 Յօրինակին քանդակս։

ինչ մի 'ի մեծամեծացն լուիցէ՝ և ուղղութիւն ինչ ցու-
ցանիցէ, 'ի հրապարակս ելեալ կամի ձեռել՝ և 'ի մա-
տունսն գնալ։ Այլ տրտմութիւն ելեալ և տխրութիւն
աւելորդս ծնանի անտի անձինն, 'ի ձմերանի՝ թէ ընդ
ցեղս գայցէ, և ամարանի՝ թէ գուցէ փոշւով ծածկեցի։

Օ ինչ գործեաս այր դու։ Օ ոգիսդ ամենևին 'ի
ցիս ընկեցեր վասն այդպիսի լինելութեան, ընդ գետինն
քարշիս, և անտես առնես. և վասն օդոյ ոտից այդ-
չափ սարսռես և դողաս։ 'Ի միտ առ զպէտս օդոյն
և պատկառեա, թէ որպիսի ինչ վնիռ այնմ բերի-
ցես։ Այս ուրեմն ընդ ցեխ՝ գալովն, և զտիղմն կո-
խելով, և ընդ գետինն շփելով՝ աղտեղանան կօշիկք։
Այլ եթէ ընկալաւ ինչ աղտ, առ և ընդ գլխոյդ կա-
պեա, և ընդ անձին արկ, և տես զիարդ լինիցիս ա-
մենևին ցիտատ։ Ոչ ուրեք ծիծաղիք, բայց լինձ արտա-
սուս դան ընդ մոլորութիւնդ և ընդ անշահ փոյթդ։
Վանզի կամի այնպիսին, թէ մարմինն ընդ ցիս գայր,
և ոչ մորթն։ Այնպիսիքն Ճ�ղՃիմք և կցիրք առնին.
և ընչասէրք դարձեալ այլ ազգ. զի որ յայն մոլեալ
և ՃեպՃեալ է՝ սովորեսցի և 'ի հանդերձս, և յայլ
ՃամՃնիւթս՝ բազում ծախուց կարօտանայ, և յա-
ՃախԹաշակաց։ Այնթէ հայրն եւս առատ իցէ, եւս
քան զեւս գերի վարեալ երԹայ, զի յաՃախէ յան-
պատեհ ցանկութիւնն։ Այլ եթէ Ճ�ղՃիմ և կցիր ոք
իցէ, հարկ է այլ ազգ ծանակիլ, ոսկի գողանալ և
մԹերել յայնպիսի ծախս։ Այլ անտի իսկ բազումք
յերիտասարդաց և զազատութիւնն վաՃառեցին, և
հացկատակք ընչաւէտից մնին, և ծառայաբար յան-
ձին կալան հարկանել հարկս, և վաՃառակուր զան-
ձինս արարին, զի զայն ցանկութի կատարեսցեն։ Այլ
զի ընչասէր և ՃղՃիմ լինի այնպիսին, և առ կա-
բևորս ծուլագոյն, և բազում ինչ և 'ի հարկէ մե-
ղանչէ, յայտ յիրացն իսկ է։ Այլ զի անՃնդոյ և ա-
նագորոյն, սակայն և ընդ այն ոք չՃակառակի. անա-
գորոյն՝ յորժամ զաղքատն տեսանիցէ, առ գութ
պաՃուՃանացն իբրև զչտեսեալ համարի. զոդն ոսկ-

1 'Ի ըստ. ՅԷԷ։

ւով զարդարէ, և զնա վտտեալ 'ի սովոյն անտես առ-
նէ։ Եւ անձնդով՝ յորժամ և զփոքունս և զանտես
առնէ, և կրթիցի զառ 'ի տեսողաց զփառս որսալ։
Լիուլի ինձ, թէ և ոչ զօրավարն յաղթութիւնքն այն-
պէս հպարտանայցէ, որպէս խակ երիտասարդն օ-
դոյն պաճուճանօքն, և հանդերձիւքն որ քարշիցին,
և վարսիցն ոլորկս փոքրելովն. թէպէտ և այն ամ
յայլոց արուեստականաց գործիցի։ Եւթէ այլոց ա-
բուեստիւ չդադարեն յանձնդովուէ, իւրեամբք ինչ
երբ դադարեն։

Բ. Սասցից և այլ ինչ ևս քան զսոյնս դժնդակագոյն.
այլ թերևս և զայն չհամարիցիք ինչ ձեզ պատշաճ։
Եւթէ այնպէս իցէ, հարկ է ասա հանգուցանել ըզ-
բանս։ Բանզի և զոր ասացի՝ վասն հակառակորդաց
ասացի, որք ոչինչ յոռութի զիրսն համարիցին։ Եւ
զիտեմ թէ բազումք յերիտասարդաց և լսել չկամին
զբանս, զի միանգամ իսկ արբեալ են յանզգայութե-
նէ ախտին։ Բայց ոչ եթէ վասն այնորիկ պարտ իցէ
լռել. զի որ միտս ունիցին հարք, և տակաւին առողջք
իցեն, և 'ի հարկէ իսկ ակամայ 'ի պարկեշտութիւն
կարեն ածել զնոսա։ Եւ արդ մի ասիցես, թէ չէ ինչ
ինաս կամ այս կամ այն, զի այն և նոյն իսկ կորոյս
զնամ։ Պարտ է զնոսա և այնու խրատել, և որով
փոքունք կարծին՝ պարկեշտ առնել և առատս, և
չհարկանել յինչս. և այնպէս և 'ի մեծամեծան գտա-
նիցեմք զնոսա ընտիրս։ Զ ինչ ինչ թեթև քան զալ-
փափետան ուսանել կայցէ. սակայն անտի բանիբունք
և խնստունք և փիլիսոփայք լինին. և եթէ զայն
չուսանիցին, և ոչ յայլսն հասանեն։

Եւ զայս ոչ միայն զերիտասարդաց ասեմ, այլ և
զկանանց և զաղջկանց։ Բանզի և նոքա ընդ այնպի-
սի մեղադրութիւն են. նա ևս աւելի, որչափ կուսից
ցածութի վայել իցէ։ Զ որ ինչ զնոցանէ ասացաք,
զնոյն և ձեզ 'ի դէպ է, զի մի դարձեալ զնոյն երկ-
ըորդիցեմ։ Զ 'ի ժամ է այսուհետև յաղօթս հան-
գուցանել զբանս, և ամենեքեան դուք ընդ մեզ ա-
ղաչեցէք արարչէ, զի մանաւանդ լինիցի երիտասար-
դացս եկեղեցւոյ ցածութիւն կեալ, և 'ի ծերութիւն
հասանել, որպէս նոցա իսկ վայելէ. և որք ոչ այն-

պէս կեցէն, նոցա չէ բարւոք 'ի ծերութիւն հասանել։ Եւ մանկութեան ծերացելոց աղօթս առնել, և 'ի բուն իսկ և 'ի խոր ալիս հասանել, և հարս որդւոց երկիւղածաց լինել, և զնոսին ուրախ առնել, և նախ քան զամենեսեան՝ զարարիչն իւրեանց ՅԱԾ. և յԱմ ցաւոց ապրել, և ոչ յօդ ոտից և 'ի հանդերձս միայն զգուշանալ, այլ և յԱմ իրս հաստոյժս լինել։ Զանգի իբրև զանդ արօսացեալ է մանկութիւն ընդ-վայրասուն, յԱմ կողմանց փշալից տատասկաբեր։ Եւ զոր բորբոքեսցուք զՀուր հոգւոյն, և այրեսցուք զչար ցանկուխն։ Հերկս հարցուք, և պատրաստեսցուք երկնային սերմանցն ընդունելութիւն. և զերիտասարդն իբրև յալւոյ ծերս զգաստագոյնս ցուցցուք։ Եւ այն իցէն զարմանալիք, յորժամ 'ի մանկութենն ցածութիւնն պայծառանայ։ Որպէս զի որ 'ի ծերութենն ցածնուցու՝ և ոչ վարձք այնպիսւոյն այնչափ են բազում, քանզի 'ի տիոցն ունի զգուշութիւն։ Եւ նոր և չքնաղ այն է՝ 'ի մէջ ալեացն 'ի հանդարտութիւն վայելել, և 'ի հնոցին չայրիլ, և 'ի մանկութեանն չկտնանալ։

Օ այս ՅԱՄ զմտաւ ածեալ՝ նախանձաւորք լիցուք գործոց բարութեց, և նմանեսցուք երանելւոյն Յովսեփայ, որ ամենեին իսկ այսու պայծառացաւ. զի և նորին պսակացն հասանիցեմք. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօքն ՅՈՒ մերոյ ՅՈՒ Զանի. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

«Այս իբրև արձակեաց զժողովուրդն, եկ 'ի լեառն առանձինն կալ յաղօթս. և իբրև երեկոյ եղև, ինքն միայն էր անդ, և նաւն 'ի մէջ ծովուն ծփէր յա-
լեացն»։

Զ ԱՍՆ էր ելանէր 'ի լեառնն։ Օ՛ի զմեզ ուսու-ցանիցէ, թէ բարւոք է անապատ և միայնուն, յոր-ժամ կամիցիմք առ Ա՛ծ պաղատանս մատուցանել։ Զ՚ան այնորիկ ստէպ յանապատն ելանէր, և անդ հանէր բազում գիշերս յաղօթս, առ 'ի զմեզ խրա-տելոյ՝ ժամանակաւ և տեղեաւ որսալ յաղօթս զան-խռովութիւն։ Զ՚անզի մայր հանդարտուն անապատն է, և խաղաղութիւն յաչեաց, և նաւահանգիստ զերծուցիչ յա՛մ ծփանաց։

Զ՚այս վասն այնպիսի իրս ուսուցանելոյ զմեզ եկ 'ի լեառնն. և աշակերտքն դարձեալ ծովածուփք ալեկոծք 'ի մէջ ծովուն լինէին՝ իբրև զառաջինն. այլ յայնժամ՝ մինչդեռ նա ընդ նոսա էր 'ի նաւին, վրշտանային. և այժմ ինքեանք միայն առանձինն։ Օ՛ի առ սակաւ սակաւ մեղմով 'ի մեծամեծն հանէր ըզնոսա, և կրթէր տակաւ՝ առաքինութիւն տանել նեղութեաց։ Զ՚ան այնորիկ զառաջինն՝ մինչ վշտանալոց էին, մա՛ն անդէն էր և առ նոսին ննջէր, անդէն պատրաստական տալ նոցա զմխիթարութիւն։ Զ՚ուստ աւասիկ 'ի մեծ համբերութիւն ածէ զնոսա. 'ի բաց գնաց, և նոցա 'ի մէջ ծովուն տայ կոծիլ։ Զ՚անզի ինքն իսկ հրաման ետ հողմոցն յուզել, զի մի ևս ուստեք ունիցին ակն յուսոյ փրկութեան. և զա՛մ գիշերն թոյլ տայր նոցա կոծիլ 'ի մրրկէն առ 'ի զարթուցանել զապշեալ միտս նոցա։

Զ՚այսպիսի իսկ է ահ ծովու խռովութիւն. զի յորժամ կարի տագնապիցին, առաւել կարօտանայցեն տեսլեան երեսաց նորա, և զերկիւղն միշտ 'ի մտի ունիցին։ Զ՚ան այնորիկ ոչ վաղվաղակի յայտնէր նոցա։

այլ «Ի չորրորդում պահու գիշերոյն, ասէ, եկն առ նոսա գնալով 'ի վերայ ջրոցն»։ Օ ի խրատեսցէ ըզնոսա, մի վաղվաղակի դիւրութեն խնդրել վշտացս. այլ յամել, և տանել առաքինութեամբ վշտացն։ Եւ յորժամ զերծանել ակն ունէին, յայնժամ և աւելի յաձախէ ահն։

«Տեսին զնա, ասէ, զի գնայր 'ի վերայ ջուրցն, և և խռովեցան, և համարեին թէ առ աչօք ինչ իցէ, և առ ահին զաղաղակ բարձին»։ Եւ և միշտ իսկ յորժամ զերծուցանել 'ի վշտացն կամիցի, և ահա գինս 'ի վերայ ածէ զփոթումս. որպէս և անդ իսկ, զի ընդ խռովութեամբ ծովուն՝ տեսին և ահ զարթ խռովեր զնոսա։ Ո՞ան այնորիկ նախ զխաւարն փարատեր, և զանձն ինչ ոչ վաղվաղակի յայտներ. զի և քան զեւ կրթիցէ զնոսա. որպէս ասացի իսկ, թէ յաձախութեամբ զարհուրանացն խրատեր լինել ժուժկալս։

Ո՞սոյն և առ Յովրաւ արար. յորժամ կամէր 'ի վշտացն ապրեցուցանել, մօտ 'ի վախճանն և մեծամեծս քան զառաջինն արկանէր 'ի վիշտս։ Ո՞որդւոյն կոտորածն, զկնոջն զանզգամութեամբ խրատն, զծառայիցն թշնամանսն, զբարեկամացն զրգռութիւնս։ Եւ զՅակովբ յորժամ կամէր 'ի վշտացն զերծուցանել, աներն և ս 'ի վերայ յառներ. և 'ի նմանէ ասէբեալ՝ յեղբօրէն ահաբեկեր։ Եւ քանզի ոչ 'ի բազում ժամանակաց են կրթութիւք արդարոյն նահատակութեց, այլ յորժամ 'ի գլուխ հանեալ իցէ զառաքինութիւն, յայնժամ աւելի իմն կրթիւն, զի առաւել շահս ժողովիցեն։ Որպէս և Աբրահամու առբար. վերջին նահատակութի զորդւոյն զպատարագելն դներ։ Ո՞ի այնպէս դժուարինքն դիւրինք լինիցին, յորժամ մօտ առ դուրս կայցէ օգնականութիւն։ Այնպէս և յայնժամ արար. նախ զանձն չյայտնեաց։ Ո՞ա, մինչև զաղաղակ բարձին. զի որչափ յաձախեր ահն, նոյնչափ և ցանկային գալստեան նորա։

Երբև զբոլոր բարձին, «Ո՞ աղվաղակի, ասէ, ցնոսա, քաջալերացարուք, ես եմ, մի երկնչիք»։ Եւ բանն անդէն փարատեաց զահն և քաջալերեաց. և քանզի յերեսաց չճանաչէցին, և ոչ 'ի նորանշան գնա-

ցիցն և 'ի ժամանակէն՝ քանզի զիշեր էր, բարբա-
ռո

առնուլ զնա 'ի նաւն, եհաս վաղվաղակի նաւն յերկիրն՝ յոր գնացեալ երթային։ Օ նոյն յայտ առնէ. յորժամ մտն էին 'ի ցամաքն ելանել, յայնժամ էջ 'ի նաւէն և երթայր առ նա։ Ո՛չ այնչափ ինչ խնդայր՝ զի 'ի ջուրցն վերայ գնայր, որչափ ինչ առնա կամէր գնալ. մեծին յայտնէր, և փոքուն դեռ ևս զեղծէր. 'ի հողմոյն սաստկութենէ ասեմ, և ոչ 'ի ծովէն։ Օ յ այնպիսի է մարդկեղէն բնութիւն. բազում անգամ 'ի մեծամեծն առաքինանայ, և 'ի փոքունն զեղծի։ Որպէս Լ՚ղնա Յեղաբելայ, և Ո՚ովսէս յեգիպտացւոյն, և Դաւիթ 'ի Ա՚ներսաբէէ։ Այնպէս և սա. մինչ ահն էր՝ խիզախեաց իջանել 'ի վերայ ջուրցն գնալ, և ընդ հողմոյն դէմ չկարաց ինչ զօրել. և այն զի մատ ևս էր Ա՚ստ։ Այնպէս չէ ինչ օգուտ մատ լինել 'ի Ա՚ստ, թէ հաւատովք որ չկայ մատ։

Բայց դարձեալ այնու իսկ ընտրեր 'ի մէջ վարդապետին և աշակերտին, և այլոց ևս աշակերտացն 'ի մխիթարութիւն լիներ։ Օ յ եթէ ընդ երկուցն ըմբռնացան, որչափ ևս առաւել անդ, զի չև ևս էին լեալ արժանաւորք հոգւոյն. ապա յետոյ ամ ուրեք նախ պատիւ Պետրոսի առնէին, և 'ի հրապարակախօսն լինել՝ զնա մղէին յառաջ, թէպէտ կարի շինաւկան քան զայլսն նա էր։

Լ՚ս ընդէր արդեաք հողմոյն չհրամայեաց դադարել, այլ ինքն ձեռն ձգեաց՝ և բռուն եհար զնմանէ։ Օ յ նորա հաւատոյ պէտք էին. և յորժամ մերն կասէցի, այն 'ի թիկունս հասեալ ցուցանի։ Ո՛չ հողմոյն ինչ բռնութիւն, այլ նորա թերահաւատութիւն առնէր զընկղմելն։ «Ընդէր, ասէ, երկմտեցեր թերահաւատ»։ Օ յ թէ 'ի հաւատոյն չէր տկարացեալ, և հողմոյն դիւրաւ ընդդէմ կարէր կալ։ Ա՚ն այս նորիկ թէպէտ բուռն եհար զնմանէ, հողմոյն տակաւին չնեալ տայր, զի յայտ արասցէ, թէ չկարէ ինչ հողմն վնասել, յորժամ հաւատքն հաստատուն իցեն։ Լ՚ս զոր օրինակ ձագ նորաթեռուր՝ թէ յառաջ քան զժամանակն 'ի բունոյն ելանիցէ, և մերձ առ սեթուր կոխելոյ լինիցի, մայրն թեւաք բարձեալ՝ 'ի բոյնն տանի, նոյնպէս և Ա՚ստ զնոսա 'ի կիրթ արկեալ փոխէր։

«Լ՚ս յորժամ եկ 'ի նաւն, ապա դադարեաց

հողմին»։ Յառաջնումն ասէին, թէ «Ո՞ՉԻ ԻՍԿ ՍԱ, ԶԻ ՀՈՂՄԸ ԵՒ ԾՈՎ ՀՆԱԳԱՆԴԻՆ ՍՄԱ». իսկ ասա՛ ոչ նոցա պիսի ինչ. այլ թէ «Լ.ՌԳԱՐԵ՛ ՅԻ ՈՐԴԻ ԵՍ ԴՈՒ»։

«Լ.Ս ՈՐ 'Ի ՆԱՒԼԻՆ ԷԻՆ, ասէ, ԵԿԵԱԼ ԵՐԿԻԼ ՊԱՂԱՆԷԻՆ ԵՒ ասէին, ԱՐԳԱՐԵ՛ ՈՐԴԻ ՅԻ ԵՍ ԴՈՒ»։ ՑԵՍԱՆԵՍ, ԶԻՍՐԴ ԱՌ ՍԱԿԱՒ ՍԱԿԱՒ 'Ի ԲԱՐՁՐԱԳՈՅՆՍՆ ՏԱՐԱՒ ԵՀԱՆ ԶՆՈՍԱ. Ե 'Ի ԳՆԱԼՈՅՆ 'Ի ՎԵՐԱՅ ԾՈՎՈՒՆ, ԵՒ ԱՅԼՈՒՄ ՀՐԱՄԱՅԵԱՑ ԶՆՈՅՆ ԱՌՆԵԼ, ԱՌ 'Ի ՁՈՒԱԳՆԱՊԵԱԼՆՍ ԱՊՐԵՑՈՒՑԱՆԵԼՈՅ. ՅԱՃԱԽԵԻՆ ԱՅՆՈՒՀԵՏԵՒ ՀԱՒԱՏՔՆ։ Լ.ՍԼ ԱՆԴ ՍԱՍՏԵՐ ԾՈՎՈՒՆ, Ե ԱՍԱ ՈՉԻՆՉ ՍԱՍՏԵՐ, ԱՅԼ ԱՅԼԱԶԳ ԵՒ ՅԱՃԱԽԱԳՈՅՆ ՑՈՒՑԱՆԵՐ ՁՁՕՐՈՒԹԻՆ։ Ա ԱՆ ՈՐՈՅ Ե ԱՍԷԻՆ ԻՍԿ, ԹԷ «Լ.Ը-ԴԱՐԵ՛ ՈՐԴԻ ՅԻ 'ԵՍ»։ Լ.Ս ԱՆԴ ՍԱՍՏԵԱՑ ԻՆՉ ՆՈՅՍ՝ ՈՐ ԶԱՅՆՊԻՍԻ ԲԱՆՍՆ ԽՈՍԵՑԱՆ։ 'Լ.Ա ԱՒԱՍԻԿ ԱՄԵՆԵՒԻՆ ՆՄԻՆ ՀԱԿԱՌԱԿ ՀԱՍՏԱՏԵՐ ԵՒ ԶԽՕՍՍՆ. ԶԻ ՄԵԾԱՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՆ ԲԺՇԿԵՐ ԶՄՏՈՒՑԵԱԼ ՀԻՒԱՆԴՆ, Ե ՈՉ ԻԲՐԵ ԶԱՌԱՋԻՆՆ ԿԱՂԸ 'Ի ԿԱՂԸ։

«Լ.Ս ԻԲՐԵ ԵԼԻՆ 'Ի ՅԱՄԱՔՆ, ԵԿԻՆ ՅԵՐԿԻՐՆ Պ.ԱՆԵԱՐԵԼԵԹ, Ե ԾԱՆԵԱՆ ԶՆԱ ՄԱՐԴԻԿ ՏԵՂՈՅՆ, Ե ԱՌԱՔԵՑԻՆ ԸՆԴ ՆՍՆ ՇՈՒՐՋ ԶՏԵՂԵՕՔՆ, Ե ԲԵՐԻՆ ԱՌ ՆԱ ՁԱՄ ԱԽՏԱՑԵԱԼՍՆ. Ե ԱՂԱՂԷԻՆ ԶԻ ՄԵՐՁԵՆԱՅՑԵՆ 'Ի ԴՐՕՇԱԿ ՀԱՆԴԵՐՁԻ ՆՈՐԱ, Ե ՈՐ ՄԻԱՆԳԱՄ ՄԵՐՁԵՆԱՅԻՆ՝ ՓՐԿԷԻՆ»։ Ո՛Չ ԻԲՐԵ ԶԱՌԱՋԻՆՆ ԴԱՅԻՆ, Ե 'Ի ՏՈՒՆ ՃԳԵԱԼ ՏԱՆԵԼ, Ե ՀՐԱՄԱՆ ԲԱՆԻՑՆ ԽՆԴՐԵԼ. ԱՅԼ ԿԱՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆՍ ԻՆՆ Ե ԶԳԱՍՏԱԳՈՅՆՍ, Ե ՄԵԾ ՀԱՒԱՏՈՎՔ ՅԱՓՇՏԱԿԷԻՆ ԶԸԺՇԿՈՒԹԻՆ։ 'Պ.ԱՆՂԻ ՏԵՌԱՏԵԱՆ ՈՒՍՈՅՑ ԶՄԵՆԵԱՍԻՆ ՅԱԾՆՈՒԼ Ե ԻՄԱՍՏԱՍՆԱԼ։ Լ.Ս ԿԱՄԻ ՅԱՅՏ ԱՌՆԵԼ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ, ԵԹԷ ՅԵՏ ԲԱԶՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՑ ԷԻՆ 'Ի ԿՈՂՄԱՆՍՆ ՅԱՅՏՍԻԿ, ասէ. Ե ՔԱՆՂԻ ԾԱՆԵԱՆ ՄԱՐԴԻԿ ՏԵՂՈՅՆ, Ե ԱՌԱՔԵՑԻՆ ՇՈՒՐՋ 'Ի ԳԵՕՂՆՆ, Ե ԲԵՐԻՆ ԶՀԻՒԱՆԴՆ։ Լ.ՍԼ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՈՉ ՄԻԱՅՆ ՉԸՐՔԵԱՑ ԶՀԱՒԱՏՍՆ, ԱՅԼ ԵՒ ՅԱՃԱԽԱԳՈՅՆՍ Ե ՆՈՐՈԳՍ Ե 'Ի ՀԱՍՏՍՔ ՊԱՀԵԱՑ։

ԳՈՐԴՈՐԱԿ

ԲՈՒՌՆ հարցուք այսուհետև և մեք զհանդերձիցն Աստի. մանաւանդ թէ ամենևին իսկ ունիցիմք զնա առ մեզ, զի մարմին նորա իսկ այժմ առաջի կայ մեր. ոչ միայն հանդերձ նորա, այլ և մարմին. ոչ միայն բուռն հարկանել, այլ և ուտել և զգենուլ։ Մա՛ տիցէ իւրաքանչիւր ոք՝ որ ունիցի ախտ 'ի յանձին։ Օ՛ի թէ որք զգրօշակէ հանդերձի նորա բուռն հարկանէին, այնչափ զօրութիւն կորզէին 'ի նմանէն, որչափ և առաւել մեք՝ որ ամենևին իսկ զնա ունիցիմք։ Օ՛ի մերձենալն հաւատովք՝ ոչ միայն առնուլն է, զոր խնդրիցեմք, այլ սրբութիւն մնօք մերձենալ, այնպէս պարտ է հաշուել՝ թէ 'ի Աստ իսկ գլխովին մերձենայցեմք։ Լուսկիտ և բարբառ ինչ ոչ լսիցես, այլ զնա իսկ տեսանես, զի կայ առաջի. մանաւանդ զի զբարբառն իսկ լուաք աւետարանչօքն։

Հաւատացէք և այժմ, թէ այն ընթրիք են՝ յորժամ ինքն իսկ բազմեցաւ Աստ. չէ ինչ այս ընդհատ 'ի յայնմանէ, զի ինքն է Ճշմարիտ Աստ. և ոչ եթէ զայս մարդ կազմիցէ, և զայն ինքն անձամբ, այլ և զայս և զայն՝ նոյն։ Յորժամ տեսանիցես զքահանայն զի բաշխիցէ զսուրբ մարմինն Աստի, մի քահանայն ինչ գործ համարիցիս, այլ Աստի ձեռինն։ Օ՛որ օրինակ և յորժամ միրտիցէ, ոչ նա է որ միրբէ, այլ ՆՏ, որ ծածուկ զօրութիւն ունի զգլխոյդ. քանզի ոչ հրեշտակ, և ոչ հրեշտակապետ, և ոչ այլ ոք իշխէ անդ հուպ լինել։ Այնպէս և այժմ. յորժամ ՆՏ ծնանիցի, նորա են պարգևքն։ Զտեսանիցե՞ս, որպէս և աստ իսկ, յորժամ ատեան[1] լինիցի, օրդեգիրքն և ոչ ծառայքն մատուցեալ տան դատին պատասխանի։ Այնպէս և ՆՏ՝ ոչ հրեշտակաց հրամայեաց բաշխել զպարգևսն, այլ ինքն մատուցեալ բաշխէ։ Լու պատուիրէ մի կոչել հայր 'ի յերկրի, ոչ զի զծնօղսն անարգիցես, այլ զի նախ քան զնոսա՝

1 Յօրինակին մոգեան։

զարարիչն պատուիցես, որ գրեաց զքեզ յորդեգիրս. զի որ զմեծն ետ՝ այս ինքն զանձն, որչափ ևս առաւել չդարձիցի տալ քեզ զմարմինն։

Լուիցուք զայս քահանայք և ժողովուրդք, թէ իմ իմիք եղեաք արժանի. լուիցուք և զահի հարցուք, որք 'ի մարմնոյ նորա վայելեմք. ետ մեզ զանձն զենեալ և առաջի եդեալ։ ԼՒ զինչ պատասխանի կարիցեմք տալ, որ զայնպիսի կերակուր ուտեմք, և այսչափ մեղանչեմք. յորժամ զգառնն ուտիցեմք, և գայլք լինիցիմք. յորժամ զոչխարն ուտիցեմք, և ևս չար քան զառաւեծ յափշտակեմք։ Օ՛ի խորհուրդն այն՝ ոչ 'ի յափշտակութիւն միայն, այլ և 'ի դոյզն մեղայ հրամայել սուրբ լինել միշտ։ Վասնզի խաղաղութիւն է խորհուրդն այն, և չառնու յանձն ումեք ընչիւք պատրիլ։ ԼԹէ նա ինքն յանձն իւր ոչ խնայեաց վասն մեր, մեք իմ իմիք արժանի լինիցիմք, թէ յինչս զընդայցեմք, և զոգիս անտես առնիցեմք, վասն որոյ նա յանձն իւր ոչ խնայեաց։ Հրեշտակն ամ յամէ յիշատակ իւրոց երախտեացն զտօնս կարգեաց ՅԾ, և քեզ հանապազօր զխորհուրդն եդ յիշատակ 'ի մտի։

Մի այսուհետև ամենի համարիցիս զնաչն, զի այն իսկ է պարկեշտութիւն մեր, նոյն և խորհուրդ, նովին պարգևօք զարդարեսցուք։ Զէպէտ և ասիցեմք, թէ զերկինս ձգեաց վասն մեր, և զծով և զցամաք տարածեաց առաջի, մարգարէս և հրեշտակս առաքեաց, այլ ոչինչ հանգոյն այնմ ասասցի. քանզի գլուխս ամ բարութեաց այն է, զի յորդին իւր ոչ խնայեաց, և նոսաւ զօտարացեալս յընտանութենէ ընտանեցոյց։

Մի՛ զբ այսուհետև Յուդաս իշխեսցէ մատչել յայս սեղան ահագին. մի՛ զբ Սիմոնն. քանզի երկոքեան սուքա վասն արծաթասիրութեանն կորեան։ Փախիցուք յայնպիսի խորխորատէ, և մի բաւական համարիցիմք 'ի փրկութիւն, յորժամ զորբս և զայրիս մերկանայցեմք, եթէ բաժակ ոսկի և ականակապ բերեալ դնիցեմք 'ի սեղանս։ ԼԹէ պատուել կամիցիս զսեղանս, պատարագ զմիտս սրբեա 'ի խղճէ և մատո, վասն որոյ և գառնն իսկ զենաւ. զնա արա ոսկի։ ԼՊա՛ և թէ կապար զնա առնիցես, և քան զկաւեղէն ևս

վատթարագոյն, և յոսկի բաժակէն զինչ ինչ օգուտ գործիցի քեզ։ Մի միայն յայն հայել՝ թէ ոսկի սպաս մատուցանեմք, այլ յայն հայեաց, թէ յարդարուն վաստակոց մատուցանեմք։ Օ՛ի այն իսկ է պատուական քան զոսկի, յորժամ ոչ յագահութենէ որ մատուցանիցէ։ Վասնզի ոչ եթէ ոսկեկուռք կամ արծաթահանք իցեն եկեղեցիս, այլ բանակետղ հրեշտակաց, և բնակութիւն։ Ա՛ման որոյ և ոգւոցն իսկ դարմանն տանել պարտ է, քանզի ոսկին և արծաթն վասն ոգւոցն մատուցանին, և վասն ոգւոցն և մարմնոց արար զայն ած։ Զգոյր անդ սեղան արծաթի՝ և ոչ բաժակ ոսկի, յորժամ ետ Տէր զարիւնն իւր ա՛շակերտացն. այլ պատուականք և ահագինք էին ամենեքեան։

Կամիս պատուել զմարմինն Տէրնի. մի անտես առներ յորժամ մերկ տեսանիցես զնա։ Մի ասա միայն կերպասիւք զգեցուցանիցես, և արտաքոյ 'ի ցրտոյ բրտացեալ տեսանիցես՝ և անտես առնիցես։ Որ ասաց՝ թէ այս է մարմին իմ, և բանիւքն զարգիւնն հաստատեաց, նոյն ասաց՝ թէ տեսէք զիս քաղցեալ՝ և ոչ կերակրեցէք. և որովհետև ոչ արարէք միում 'ի փոքրկանցս, և ոչ ինձ արարէք։ Օ՛ի սա չէ կարօտ վերարկուի, այլ [1] ոգւոց սրբոց. և նա բազում դարմանոց կարօտ է. ուստի՝ զ Տէր, որով ինքն կամի պատուիլ, և ոչ որով մեք կարծեմք։ Վասնզի և Պետրոս պատուել կարծէր զնա՝ արգելլոցն, զի մի լուանայցէ զոտսն, այլ պատիւն այն չէր պատիւ։ Նոյնպէս և դու ըստ նորա օրինացն պատուեսցես զնա՝ յաղքատսն ծախելով զինչսն։ Վասնզի ոչ եթէ ոսկի ինչ սպասք պիտոյ են ՚այ, այլ ոգիք ողկեղինք։

Օ՛ այս ասելով՝ ոչ եթէ զնուերս ինչ ՚այ արգելուլ կամիցիմ, այլ արժան է ընդ այնմ, և նախ քան զայն՝ ողորմութիւնն առնել. և ընդունի և զայս, այլ և առաւել զայն։ Ա՛ստ՝ որ մատուցանէն և եթէ՝ օգտի. իսկ անդ՝ նոյն է և որ առնուցուն։ Ա՛ստ՝ բազում անգամ և պարծանաց պատճառք լինին իրքն, իսկ

1 Յօրինակին «հայր»։

անդ՝ ողորմութեամբ և մարդասիրութեամբ։ Օ՜ինչ օգուտ իցէ՞ յորժամ սեղան նորա լի իցէ ոսկի բաժակօք, և ինքն արտաքոյ սովամահ լինիցին. նախ զնա քաղցեալ յագեցո՛, և ապա՛ սեղան արծաթեղէն մատուցանի՝ ջիր։ Բաժակ ոսկի կուտես, և բաժակ մի հով ջուր չկամիս տալ։ Օ՜ինչ օգուտ իցէ ոսկեկուռ սպասուք զարդարել զսեղանս, և նմա զկարևոր պէտսն, և վանկուսս անդամ չյօժարիս տալ. և զինչ օգուտ անտի իցեն։

Բայց աղէ՜ ասա՛ իսկ. եթէ տեսանէիր զոք 'ի կարևոր կերակրոցն չքաւորեալ, և ասէիր՝ թէ ցածո՛ զքաղցդ, և զսեղանն միայն արծաթով պատէիր, մի թէ հնարհ ինչ ունէր քեզ. ո՞չ առաւել 'ի ցասումն դրդէր և զայրանայր։ Այ՜ եթէ 'ի ցնցոտիս զոք տեսանէիր, և 'ի ցրտոյ բրտացեալ, և չտայիր նմա հանդերձս, այլ սիւնս ոսկիս 'ի նորա յանուն կանգնէիր, չհամարէր զքեզ արդեւք արհամարհոտ և խաբեբայ, և անհնարին թշնամանս զիրքն։ Այ՜ սպիսի ինչ և ըզ-Բնե՛ աճ զմտաւ. յորժամ մոլորեալ և օտար շրջի՝ ցի և կարօտ վանկաց, և քո թողեալ նմա վանս տալ, զատակն ախճապակեայ զարդարես, և որմն մարմարակուռս, սիւնս խաւեղագէս խոյակօք, և խարիսխս արծաթի պաղպաջունս, ջինջս և յօտակս, և նա 'ի բանտի, և տեսանել ևս չկամիցիս։ Օ՜այս ասեմ, ո՞չ զի արգելուցում ինչ յայսմ առատանալոյ, այլ զայս ընդ այնմ, մնանանդ թէ զայն նախ քան զայս խրատամ առնել։ Օ՜ի ընդ այսր չառնելոյ ո՞չ երբեք պատուհասեցաս ոք. բայց ընդ այնր չգործելոյ, գեհենն ևս սպառնացեալ է, և հուր անշէջ, և ընդ դևս տանջանք։

Մի՛ այսուհետև զտունս կազմել, և զնեղեալ եղբայրն անտես առնել. զի այն տաճա՛ր՝ քան զայս սերտագոյն է։ Օ՜այս սպաս և թագաւորք անհաւատք, և բռունք, և գողք կարեն առնուլ. այլ զոր ինչ յեղբայրն նեղեալ և 'ի քաղց և յօտար և 'ի մերկ ծախիցես, և սատանա անդամ չկարէ կողոպտել. այլ յանկողոպուտ գանձին պահիցի։ Այ՜ զինչ ասիցէ ինքն իսկ։ «Օ՜աղքատս, ասէ, յա՜մ ժամ ընդ ձեզ ունիք, բայց զիս ո՞չ յա՜մ ժամ ընդ ձեզ ունիք»։

Վասն այնորիկ իսկ պարտ է առաւել ողորմել, զի ոչ յամ ժամ զնա ունիմք քաղցեալ, այլ յայսմ աշխարհի միայն։ Այլ եթէ կամիցիս ամենևին իսկ ըզմիտս բանիս ուսանել, լուր, զի ոչ առ աշակերտսն ասաց զայն, թէպէտ և այսպէս կարծիցի, այլ առ կնոջն տկարութիւնն, զի դեռ ևս թերակատար էր. քանզի նոքա զնա 'ի տարակուսի կացուցանէին, խրատ խոյս տալով նմա ասէր զայս. և զի 'ի նորա միութիւնն ասաց, յարեաց 'ի նոյն, թէ «Օ՞ի աշխատ առնէք զկինդ»։ Այլ զի զնա ցանգ ընդ մեզ ունիցիմք, ասէ «Այ՞հաւասիկ ես ընդ ձեզ եմ զամ աւուրս մինչև 'ի վախճան աշխարհի»։ Այս ամենևին իսկ յայտ է՝ թէ ոչ վասն այլ իրիք ասաց զայս, այլ զի զՀաւատս կնոջն՝ որ այն ինչ փութեալ էին, մի խամրացուցեալ սասա աշակերտացն։

Այս արդ մի՛ ինչ զայն 'ի մէջ բերցուք՝ որ վասն իրիք տեսչութեան ասացաւ, այլ զօրէնսն ամ որ [1] 'ի նորումն և 'ի հնումն վասն ողորմութեան կարգեալ կան՝ ընթերցցուք, և բաղում փոյթ յանձին վասն իրացս այսոցիկ կալցուք։ Զանզի նոյն իսկ և զմեզս ջնջէ։ «Ցուք, ասէ, զողորմուն, և ամ ինչ ձեր սուրբ եղիցի»։ զի և քան զպատարագս մեծ է. «Ողորմութիւն կամիմ, և ոչ զպատարագս»։ Այս և զերկինս բանայ. «Զողթք քո և ողորմութիւք ելին յիշատակս առաջի այ»։ Այս քան զկուսութիւն կարևոր է. վասն սորա ելին կուսանքն յառագաստէն. սովաւ մոին իմաստունքն յառագաստն։ Այս ամ զմտաւ ածեալ՝ սերմանեսցուք յանխնայ, զի բաղում առատութիւք հնձեսցուք, և յաւիտենից բարութեանցն հաստցուք շնորհօքն և մարդասիրութիւք ամն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Յորինակին պակասէր «է»։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

«Յայնժամ մատեան առ Յն՝ որ յԵրուսաղեմացւոցն դպիրք և փարիսեցիք, և ասեն. ընդէր աշակերտքն քո անցանեն զաւանդութիւն ծերոցն, զի ոչ լուանան զձեռս՝ յորժամ ուտեն։ Եւ նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. և դուք ընդէր անցանէք զպատուիրանսն՝ այ վասն ձերոյ աւանդութեան։ Զի ասաց, պատուեա՛ զՀայր քո և զմայր. և որ բամբասէ զՀայր կամ զմայր, մահու մեռցի։ Եւ դուք ասէք, թէ պատարագ է՝ զոր յինէն օգտիցիս. և այնուհետև ոչ պատուէ զՀայր իւր և զմայր. և անարգէք զայ պատուիրանն վասն ձերոյ աւանդութեան»։

ՅաճնՃամ։ Լ՚ՐԲ։ Յորժամ բիւրուց բեւրս նշանս գործեաց, յորժամ զՀիւանդսն բժշկեաց մերձենալով միայն՝ ի քաղանցս հանդերձիցն։ Զանակէ աւետարանիչն զժամանակն, զի ցուցանիցէ զանչափ չարութիւնն նոցա։ Եւ զինչ, եթէ յԵրուսաղեմացւոցն դպիրք և փարիսեցիք։ Զանգի ընդ այմ ազգս ցանեալ էին, և յերկոտասան մասն բաժանեալ. այլ որ զմայր քաղաքացն ունէին, նոքա աւելի քան զայլսն դժնդակք էին. որչափ աւելի վայելէին՝ ի պատիւն, նոյնչափ աւելի ունէին զՀպարտութիւն։

Եւ դու տես, զիարդ՝ ի հարցուածոցն իսկ ըմբռնէին։ Զանգի ոչ ասացին, թէ զանցանեն զօրինօքն Մովսէսի, այլ թէ զտուչութիւն ծերոցն։ Յայտ իսկ է՝ թէ բազում ինչ նորամուտս նորոգէին քահանայքն. թէպէտ և Մովսէսի բազում ահիւ և սպառնալեօք պատուիրեալ էր՝ մի յաւելուլ ինչ, և մի հատանել։ «Մի՛ յաւելուր ինչ՝ ի բանս՝ զոր ես պատուիրեմ քեզ այսօր, և մի՛ հատանիցէք՝ ի նմանէ»։ Զայլ նոքա ոչ սակաւ ինչ նորս մուծանէին. այսպիսի ինչ, թէ չէ պարտ անլուայ ձեռօք հաց ուտել. և բաժակաց և պղնձեաց մկրտութիւն, և անձանց ևս։ Յորժամ ազատանալ պարտ էր՝ ի խարոյ, քանզի է-

կեալ հասեալ էր ժամանակն, յայնժամ առաւել կապէին զանձինս ընդ խտրութիւն։ Կասկածեալ՝ թէ գուցէ հանիցէ ոք զիշխանութիւնն, այնպիսի իմն կամէին ահագինք երևել, թէ ինքեանք իսկ իցեն օրինադիրք։

Եւ յայնչափ յանօրէնութիւն ելանէին իրքն, որպէս զի զիւրեանց պահել, և զայլ օրինաքն անցանել։ Եւ այնչափ տարածեցաւ կալաւ, զի և ամբաստանութեանն պատճառք լինէին իրքն, որոց ոչ այնպէս զնոցն պահիցեն. որ կրկին իսկ ամբաստանութիւն էր զնոցանէ. զի նորամուտ իսկ մուծանէին, և դարձեալ զի զիւրեանց վարդապետութենն արհամարհանացն վրէժս խնդրէին, և զայլ օրինացն անփոյթ առնէին։ Լսողեալ զայն ամ՝ ասել զստոմմանեաց և զպղնձեաց, քանզի ծաղու իսկ էին, որ քան զայն՝ աւելի՛ի դէպ թուէր՝ զայն՝ի մէջ բերէին. զի այնու աւելի իմն թուի ինձ թէ ցասուցանել կամէին։ Զ ան որոյ յիշեցուցանէին զծերոցն. զի թէ անգոսնեսցէ զնոսա, անձամբ զանձնէ տացէ պատճառս չարախօսութեան։

Զարդ պարտ է նախ զայն քննել, թէ ընդէր անլուսայ ձեռօք հաց ուտէին։ Զ՚չ եթէ առ հեստել ինչ ունիք, այլ զի անփոյթ առնէին այնուհետև զաւելորդացն, և կարևորացն ևեթ պատկառ կային։ Զի ոչ լուանալոյ և ոչ չլուանալոյ օրէնս անձանց դնէին, այլ որպէս դէպն պահանջէր՝ նոյնպէս զերկոսինն առնէին։ Զոք և զկարևորն իսկ զկերակուրն արհամարհէին, զիարդ զայլոց զաւելորդացն փութայլին զօրէնսն պահել։ Եւ այնպէս դէպ եղև բաղում անգամ զնոյն յանկարծադէպ իրաց առնել. որպէս յորժամ յանապատին կերան, և որպէս յորժամ զհասկն կորզէին. և զայն բամբասանաց պատճառառնէին՝ որ միշտ զմեծամեծօքն անցանէին, և վասն աւելորդացն կարի իմն պատուիրէին։

Եւ արդ զի՞նչ ասիցէ Տէր։ Զկայ լուռ, այլ անդէն՝ի նոսա դարձուցանէ զբամբասանսն, առ՝ի կասեցուցանել զանդէպ համարձակութենն, և ցուցանել՝

1 Ա. յժմու յոյնն ունի զայն։

թէ որ 'ի մեծամեծն մեղանչէ, չպարտի զմանուանն յայլոց պահանջել։ Զեզ պարտ է, ասէ, մեղադիր լինել, և սկսանի կշտամբել[1]։ ԼՀ դու միտ դիր. յորժամ կամի յօրինականացն[2] ինչ լուծանել, պատասխանւոյ պատճառանօք ընծայեցուցանել, որպէս և անդ իսկ արար. քանզի ոչ վաղվաղակի յայն գայ՝ թէ անցանելն ինչ լաւ իցէ, և ոչ ասէ՝ թէ չէն ինչ բանք. ապա և ոչինչ 'ի զայրացումն դրդռէ զնոսա. այլ նախ կակղէ զխստութիւն նոցա, և ապա յաճախէ զմեղադրութիւնն, և զնոքօք ածէ զբամբասանսն։ Զասէ յայտնի, թէ բարի իսկ առնեն՝ զի անցանեն զայնու, զի մի պատճառս ինչ տայցէ. և ոչ ասէ՝ թէ չար են իրքն, զի մի և ինքն ևս հաստատեսցէ զօրինսն. և ոչ զծերսն իբրև զանօրէնս և զպիղծս պարսաւէ. ապա թէ ոչ՝ իբրև 'ի հայհոյէ և 'ի թշնամանէ թիկունս դարձուցանէին. այլ զամ թողեալ՝ ընդ այլ ճանապարհս մնանէ։ ԼՀ թուի թէ նոցա ինչ միայն մեղադիր լինիցի՝ որք եկեալն էին, այլ նա և 'ի ծերսն իսկ յօրինողիրսն ձեռն 'ի գործ արկանէ. բայց սոցա մեղադրութիւն՝ և զնոսա ևս խոտէ։ ԼՀ ցուցանէ երկուս մեղս. նախ՝ զի այ չանսան. և ապա՝ զինչ առնեն, մարդկան վասն առնեն։ Որպէս զի ասիցէ, թէ այդ իսկ և դոյն կորուսանէ զձեզ, զի զամ ինչ զծերոցն խրատ առնէք։ ԼՀյլ յայտնի ինչ ոչ ասէ, բայց սակայն զնոյն ակնարկէ։

«ԼՀ պատասխանի արարեալ ասէ, թէ դուք ընդդէր անցանէք զպատուիրանաւն այ վասն ձերոյ տուչութեան։ Օի ած պատուիրեաց, պատուեա զհայր քո և զմայր. և որ չարախօսէ զհօրն կամ զմօրն, մահու մեռցի։ ԼՀ դուք ասէք, որ ասէ ցհայր իւր և ցմայր իւր, թէ պատարագ է՝ զոր յինէն օգտեսցիս. և այնուհետև ոչ պատուէ զհայրն և զմայրն. և անարգէք զպատուիրանն այ վասն ձերոյ աւանդութեանն»։ ԼՀ ոչ ասաց՝ թէ ծերոցն, այլ թէ ձերոյ. և դուք ասէք՝ ասէ, և չասէ՝ թէ ծերքն ասեն, զի անտաղտուկ առնիցէ զբանն։ Զանզի անօրէնս կամեցան ցուցանել զաշակերտսն, յայտ առնէ՝ թէ ին-

1 'Ի լուս. դատանէլ։ 2 Յօրինակին յօրինոյն։

քեանք են օրէնսդանդք, և սոքա ազատք 'ի բամբասանաց։ Քանզի ոչ օրէնք իսկ են՝ որ 'ի մարդկանէ կարգիցին, վասն որոյ տուչութիւնս կոչի, և այնպիսեաց մարդոց վարդապետութի՝ որ զօրինօքն իսկ անցեալ իցեն։ Եւ քանզի հրամայեալն լուանալ՝ ըզձեռս՝ չէն ինչ հակառակ օրինացն, այլ իմն անձնատուր վարդապետութիւնս 'ի մէջ բերէ, որ օրինացն կարի հակառակ էին։

Եւ զոր ասէն՝ այսպիսի ինչ է։ Աստուածպաշտութե պատճառօք ուսուցին որդւոց արհամարհել զհարս։ Եթէ ոք 'ի հարցն կամ 'ի մարցն ասիցէ ցորդին իւր, տուր ինձ ոչխարիկ մի կամ որթուկ մի կամ այլ ինչ նոյնպիսի, ասէին՝ պատարագ է այ զոր կամիսդ յինէն օգտել, և չէ հնար թէ առնուցուս։ Եւ կրկին չարիք լինէին այնուհետև անտի. զի այ ոչ մատուցանէին, և զծնօղն անուամբ պատարագին զորկէին. զհայրն և զմայրն վասն այ թշնամանէին, և զայծ վասն հարց և մարցն։

Եւ չէ և սս յայտնէ զայս. այլ նախ զօրէնսն ընթեռնու, զի անտի յայտ առնիցէ թէ կարի իսկ կամք են օրինացն պատուել զհայր կամ զմայր։ «Պատուեա զհայր քո և զմայր, և երկայնակեաց լիցիս 'ի վերայ երկրի»։ և դարձեալ՝ թէ «Որ չարախօսեսցէ զհօրէ կամ զմօրէ, մահու մեռցի»։ Այլ նորա թողեալ զպարգևսն պատուելեացն ըզհարս, զահագին պատիժս չպատուելեացն դնէ, զոր անարգողացն սպառնացեալ են ասեմ։ Զնոսա մերկացուցանել կամի, և զմատայիսն զիրև ածէ. քանզի ցուցանէ զնոսա մահապարտս։ Զոր որ բանիւք բամբասիցէ՝ պատժելոց իցէ, որչափ ևս առաւել, ասէ, դուք՝ որ արդեամբք թշնամանէք։ Զորս և 'ի կենդանիս իսկ չէ պարտ համարել, զիարդ իցէ զի և աշակերտացն մեղադիր լինիցիք։ Զինչ զարմանք իցեն, եթէ զնս՝ որ այժմ անծանօթս թուիմ ձեզ՝ թշնամանիցէք, յորժամ և 'ի հայր իսկ զայսպիսի մնասս երևիք առնել։ Եւ այ ուրեք ասէ և յայտ առնէ, թէ անտի իսկ արարին սկիզբն այնմ ամբարտաւանութեան։

1 'Ի լուս. լուանալ։

Բայց այլք և այլազգ ևս մեկնեն զպատարագն եթէ յինքն շահիցիս. այս ինքն եթէ չպարտիմ ինչ քեզ պատիւ. այլ թէ տայցեմ ինչ պատիւ, յինքն հնորհս առնեմ։ Բայլ ոչ եթէ Պա զայսպիսի ինչ թշնամանաց յիշեցուցանել։ Այս Մարկոս յայտնագոյն իսկ ասէ, թէ կորբան է՝ զոր յինքն օգտիցիս։ Ոչ առնէր իսկ յայտ, թէ ձրի ինչ կամ հնորհ իցէ, այլ ստոյգ զպատարագէն ասէ. քանզի կորբան զայ պատարագն կոչէ։

Այս իբրև եցոյց՝ թէ արժանի մեղադիր լինելոյ չէն աշակերտքն վասն անցանելոյ զվարդապետութեանն ճերոցն, որ զօրհնան իսկ խոտեին, ապա ցուցանէ զնոյն և 'ի մարգարէին։ Պանզի սաստկագոյն գրաւեաց զնոսա, ևս յառաջ մատուցեալ՝ զոր ամ ուրեք իսկ առնէ, զգիրս 'ի մէջ բերէ, և նոքօք ցուցանէ զանձն ամ։ Այս զինչ ասիցէ։

" Կեղծաւորք, ասէ, բարւոք մարգարէեցաւ 'ի վերայ ձեր Այսայի, թէ մերձ է ժողովուրդս այս առիս բերանով։ Ը ըթամբք իւրեանց պատուէն զիս, բայց սրտիւ իւրեանց կարի հեռի են յինէն. զուր պաշտեն զիս, ուսուցանեն վարդապետութիւնս զպատուէրս մարդկան "։ Տեսանես զմարգարէութիւն հաստատութեանն նոցին բանից միաբան, և անտուստ 'ի վերուստ բարբառեալ զչարութիւն նոցա։ Օ 'ի որում այժմ Պա մեղադիր լինի, զսոյն անտուստ 'ի վերուստ և մարգարէն Այսայի խոտեր, թէ զայն արհամարհեն, և զիւրեանցն հաստատեն։ " Օ ուր, ասէ, պաշտեն զիս, ուսուցանեն պատուէրս զմարդկան վարդապետութիւնս "։ Բպա ուրեմն յայն սակս չպահեն զնոսա, զի զիւրեանցն պահեն, և իմոյն չանսան։

Այս իբրև վերաւորեաց զնոսա հաստոյր հարուածովքն, յիրացն և յիւր վնիռն տալոյ, և 'ի մարգարէիցն ամբաստանութէ, ապա ընդ նոսա ինչ ոչ խօսի, քանզի չէին իսկ գալոց յուղղութիւն. 'ի ժողովուրդն այնուհետև շրջէ զբանն, զբարձրագոյնն և զմեծն և զլոյն ամ զդաստուութէ ընծայեցուցանիցէ կրօնս. որով մեծ պատճառս իսկ յօդեալ՝ և զկերակրոց խորութիւնն խոտիցէ։

Բայլ տես, երբ։ Յորժամ զբորոտն սրբեաց, և

զշաբաթան ելոյծ, և ծովու և ցամաքի զանձն եցոյց թագաւոր, յայնժամ եդ օրէնսն[1], յորժամ զմեղսն ելթող, և զմեռեալսն յարոյց, և բազում այլ ևս իւրօք[2] եցոյց զիւրոյ ՅԱՌՈՒԹԻՆ օրինակս, ապա և վասն կերակրոցն Ճառէ։ Այլ քանզի ՅԱՄ հրեութենն այնմ ևեթ պատկառ կայր, եթէ զայն խոտիցէ՝ ապա զՅԱՄ իսկ խոտէ։ Զոմանք և թլփատութենն պարտ էր խոտիլ, այլ ինքն ինչ յառաջագոյն չառնէ յայտ զայն. զի քան զայլ պատուիրանսն երիցագոյն էր, և բազում պատիւ ունէր, զայն աշակերտաքն յետոյ օրէնս դնէր։ Զ՚ինպիսի խնն մեծ թուէր, մինչ զի և աշակերտքն որ լուծանեն կամէին յետ բազում ժամանակաց՝ նախ վարեին իսկ նովաւ, և ապա լուծանէին իսկ։ Այլ դու տես, զիարդ ընծայեցուցանէ զօրէնսն։

«Կոչեաց, ասէ, առ ինքն զժողովուրդն, և ասէ ցնոսա. լուարուք և 'ի միտ առէք»։ Այլ ոչ վայրապար ինչ հրաման տայր, այլ նախ պատուովն և բժշկութիւնն դիւրընկալ առնէր զբանն։ Զանսղի և աւետարանիչն զնոյն յայտ առնէ ասելովն, թէ կոչեաց առ ինքն. նա և ժամանակաւն իսկ. զի յետ յանդիմանելոյն և յաղթելոյն, և 'ի մարգարէին ամբաստանութենէ բերելոյն, ապա դայ յօրէնսդրութիւն. յորժամ և դիւրաւ ընդունէին զասացեալսն։ Այլ ոչ վայրապար կոչէ զնոսա առ ինքն, այլ մտադիրս և ուշակալս առնէ. 'ի միտ առէք, ասէ. այս ինքն կարացէք խելամտել. զի այնպիսի է՝ որ զօրէնսն տալոց է։ Զոմանք նոցա՝ որ յանդէպն լուծին զօրէնսն, անձնատուր վարդապետութենն լսէիք, ապա ևս առաւել ինձ պարտիք լսել, որ 'ի դէպ ժամանակս բարձրագոյն առաքինութիւն խառնեմ։ Այլ ոչ ասաց, թէ չէն ինչ խորութիւք կերակրոց. և ոչ թէ չարահաւ գործեաց՝ զի պատուիրեաց զայն Մովսէս. և ոչ թէ զի՝ջանելոյ ինչ, այլ խրատու և միտս դնելոյ կարգի, յիրայն առեալ վկայութիւն՝ ասէ, թէ «Մի՛չ որ մտանէ ընդ բերանն, այն պղծէ զմարդն, այլ որ ինչ ելանէ 'ի բերանոյ մարդոյն՝ այն պղծէ զմարդն»։ 'Ի բուն իսկ իրայն ինչեալ դնէ օրէնս, և տայ վճիռ։

[1] Յօրինակին յայնժամ ընդ օրէնսն։ [2] Յօրինակին իւրոյ։

Այլ զայս լուեալ՝ ոչ ինչ ընդդէմ դառնային. և չասէին իսկ, եթէ զինչ խօսիս, ՈՏԾ այնչափ պատուիրէ վասն կերակրոցն խտրութեան, և դու այլ ինն օրէնս դնես։ Այլ քանզի կարի ինն պապանձեցոյց զփարիսեցիսն, ոչ միայն յանդիմանելովն, այլ և զնենգութիւնն նոցա 'ի մէջ բերելովն, և զգաղտնի խորհուրդս նոցա ճաղէր, և զծածուկս սրտիցն յայտ առնելով, զամենի հարեալ զնային այնուհետև։

Այլ դու միտ դիր, զիարդ չխիզախէ յայտնի ճառել զկերակրոցն. քանզի և չասաց իսկ՝ կերակուր, այլ թէ որ ինչ մտանէ՝ չպղծէ զմարդն. զոր վասն անլուայ ձեռաքն ուտելոյ 'ի դէպ էր նոցա կարծել։ Այլ նա վասն կերակրոցն ասէր, և նոքա յայն կարծէին։ Այնպէս ինն կարի զզոյշ կային կերակրոցն խտրութեամբ, մինչ զի և յետ յարութեանն ասէր Պետրոս ցՆա, թէ չէք երբէք կերեալ իմ ամենևին խառնակ ինչ և պիղծ. թէպէտ և վասն այլոց ասէր զայս, այլ թողոյ անձինն պատասխանատուութիւն ընդդէմ բամբասողացն, ցուցանել՝ թէ և ընդդէմ դարձաւ, և չտուաւ նմա թոյլ. բայց սակայն յայտ առնէ՝ թէ բազում կարծիք են իրացն։ Այսն այնորիկ և ինքն իսկ զառաջինն չասէ ինչ յայտնի վասն կերակրոցն, այլ թէ որ ինչ մտանէ ընդ բերանն։ Այլ դարձեալ իբրև կարծեցաւ՝ թէ յայտնի իսկ ասիցէ, ապա վախճանաւն ծածկէ. «Ընդլուայ ձեռաքս ուտել, ասէ, ոչ պղծէ զմարդ»։ Օ՛ի կարծեցուցանէ՝ թէ անտի ա բար սկիզբն, և վասն նորին խօսի դեռ։ Այսն այնորիկ ոչ ասաց, թէ զկերակուրն ուտել չպղծէ զմարդ, այլ զի թէ զնոցն խօսիցի, գուցէ դիմադարձութեան ինչ պատճառս գտանիցեն։ Այլ զայս իբրև լուան փարիսեցիքն գայթագղեցին, և ոչ թէ ժողովուրդն։

«Ատեան աշակերտքն, և ասեն ցնա. գիտես, զի փարիսեցիքն իբրև լուան զբանն, գայթագղեցին»։ Թէպէտ և չասաց ինչ առ նոսա Այն, և ոչինչ յարդարեաց զգայթագղութիւն, այլ և սաստեաց նոցա։ «Ամենայն տունկ, ասէ, զոր ոչ տնկեաց Հայրն իմ որ յերկինս է, խլեսցի»։ Անզի գիտէ և արհամարհել զգայթագղութիւնս և չարհամարհել. և այլ ուրեմն ասէ, զի մի ինչ գայթագղեցուցանեմք զնոսա,

ընկեալ զկարթն 'ի ծով. և ասա ասէ, « Լայլ տուք նոցա, առաջնորդք են կոյրք կուրաց. կոյր կուրի յորժամ առաջնորդէ, երկոքինն 'ի խորխորատ անկանին »։ Օ այս ասէին աշակերտքն, ոչ զի ընդ նոսա միայն տրտմէին, այլ զի և ինքեանք ևս փոքր մի խառն վէցան։ ԼՀ քանզի յիւրեանց դէմն ոչ կարէին ասել, այլոց բանիւ կամէին ուսանել։ ԼՀ զի այս այսպէս է, լուր զիարդ յետոյ ջերմ և ամ ուրեք կազմ և ժամանս Պետրոս՝ մատուցեալ ասէր, մեկնեա մեզ զառակն. յայտ արարեալ զմտացն խառնութիւն, և յայտնի ինչ չիշխէր ասել, թէ և ես դայթագղեցայ. արժան իսկ էր, զի մեկնութիւն փարատիցի երկեւանն 'ի մտացն։ Վասն որոյ և սաստէ իսկ նմա։ ԼՀ զինչ ասէ Տ։ « Լմենայն տունկ՝ զոր ոչ տընկեաց հայրն իմ որ յերկինս է, խլեսցի »։

Օ այս, ասեն, զօրինացն է ասացեալ, որք զմանեանեցուցն ախտանան. այլ ըմբերանեն զնոսա վերին բանքն։ Օ ի թէ զօրինացն ինչ ասէր, զնա՞ւրդ վերագոյն մարտնչէր վասն օրինացն։ « Լուք, ասէ, ընդէր անցանէք զպատուիրանաւն այ վասն ձերոյ տուչութեան »։ և զմարգարէն ևս վկայ ածէ, և զնոցա անձնատուր վարդապետութիւն խոտե այնու, զի ՀԱԾ ասաց պատուեա զՀայր քո և զմայր։ Օ իա՞րդ չիցէ յայ տունկ, որ յայ ասացաւ։ ԼՀ զիա՞րդ յաջորդօքն իսկ յայտ առնէ զայս, թէ վասն նոցա, և վասն անձնատուր վարդապետութեանն ասէ. յարէ 'ի նոյն, եթէ առաջնորդք են կոյր կուրաց. և զօրինացն ինչ ոչ ասէ։ Պարտ էր ասել, թէ առաջնորդ է կոյր կուրաց։ Լա աւանիկ ոչ այնպիսի ինչ, այլ թէ առաջնորդք են կոյր կուրաց. զնա ազատէ 'ի բամբասանաց, այս ինքն զօրէնսն, և 'ի նոսա շրջէ զբանն. և զժողովուրդն ՃԵՂՔԻՑԷ 'ի նոցանէ, զի մի ընդ նոսա 'ի խորխորատ անկանիցին։

« Կոյր կուրի յորժամ առաջնորդէ, երկոքինն 'ի խորխորատ անկանիցին »։ ԼՀնդհանարին աղէտք այն են, յորժամ ինքն կոյր իցէ, և առաջնորդ ևս կոյր ունիցի։ Կրկին և երեքկին փնաս։ Օ ի թէ առանց առաջնորդի փնաս իցէ կուրի շրջել, ևս առաւել այն՝ թէ առաջնորդն ևս կոյր իցէ։ ԼՀ արդ զինչ գոր-

ծիցէ Պետրոս։ Ասէ, թէ զինչ իցէ՝ զոր ասացերդ. այլ իբրև թէ մեկնութիւն պիտոյ իցէ՝ այնպէս հարցանէ։ Ասէ, թէ ընդէր արտաքոյ օրինացն խօսիս։ Երկնչեր՝ զի մի կարծիցի, թէ և նա ևս գայթագղեցաւ, այլ թէ անպայտ իցէ այն։ Եւ զի չէին իրքն անպայտութիւն, այլ գայթագղեալ էր, յայտ յայտնանէ էր՝ զի պատուհասէր զնոսա։

“Ցակաւին և դուք չիմանայք ասէ”։ Եւ ժողովուրդն թերևս բնաւ իսկ չիմացան զբանն. այլ և նոքա էին երկմտեալք. քանզի զառաջինն փարիսեցւոցն բանիւ հարցեալ՝ կամէին ուսանել. և յորժամ լուան զասստիկ զսպառնալսն, թէ “Ի մենայն տունկ՝ զոր ոչ տնկեաց Հայրն իմ որ յերկինս է, խլեսցի”, և “Ուռաջնորդք են կոյր կուրաց”, ապա ցաճնուին փոքր մի։ Իսկ որ ամ ուրեք ջերմաջերմ էր, և այնպէս ևս չանսայր լռել, այլ ասէ, մեկնեա մեզ զառակն զայն։ Եւ Վա՞ կարի ինն զայրագինս բարբառի։ “Ցակաւին, ասէ, և դուք անմիտք էք, և չե՛ ևս իմանայք”։ Օ՛ի սաստելովն՝ զկանխամուտ սովորութիւնն հատանիցէ. և յարէ՝ ի նոյն, թէ “Ի մենայն ինչ՝ որ մտանէ՝ ի բերան, յորովայն ժողովի, և արտաքս ելանէ. բայց որ ինչ՝ ի բերանոյն ելանէ, այն՝ ի սրտէն գայ. քանզի՝ ի սրտէն ելանեն խորհուրդք չարք, սպանութիւք, շնութիւք, պոռնկութիւք, գողութիւնք, սուտ վկայութիւք, չարակնութիւք. այս ամ է՝ որ պղծէ զմարդ”։ Ցեսանես, զիարդ սաստիկս ինն բարբառի. և յարդարէ զբանն՝ ի հասարակաց բնութիւ, զի նոքա բժշկիցին։ Յորժամ ասիցէ, թէ “Յորովայնն ժողովի և արտաքս ելանէ”, դեռ ևս տակաւին ըստ հրէական վատթարութիւնն տայ պատասխանի։ Ինայ, ասէ, “ի ներքս, այլ արտաքս ելանէ։ Ամենայն մեկնիչք ասեն զայս։ Ես ոչ ինչ պղծիր. այլ չե՛ ևս հանդարտեին լսել զայս։ Ա՛յս և օրէնսդիրն, ըստ ժամանակին մինչ դեռ՝ ի ներքս էր պիղծ կերակուրն, հրամայէր կալ ընդ պիղծսն. և յորժամ արտաքս ելանէր, ոչինչ էին բանք։ Օ՛ի ե՛ բիկունն՝ հրամայէր լուանալ և սուրբ լինել. ըստ

՝ Յօրինակին զի էլ-ոչ-ոնդ. երբեմն էլ-ոչ, համեմատ յունին։

չափոյ ժամանակին կերակրոցն հալելոյ՝ նոյնպէս և զվՃիռն տայր։

Այլ որ 'ի ներքուստ 'ի սրտէն ելանիցէ, և մինչ 'ի ներքսն կայ՝ պղծէ, և յորժամ արտաքս ելանէ՝ պղծէ։ Այս նախ զչար խորհուրդսն դնէ, յորս հրեայքն կարի հին միտէին. և չև ևս յիրացն յանդիմանէ, այլ յորովայնէ և 'ի սրտէ և 'ի միալոյ և 'ի չմնալոյ[1]։ Այս կէսքն արտաքուստ 'ի ներքս մտանէն, և դարձեալ արտաքս ելանեն. և այլքն 'ի ներքս ծնանէն, և արտաքս ելանեն, և յայնժամ աւելի պղծեն։ Այս քանզի չև ևս հանդարտեին, որպէս ասացի իսկ, լսել զայնպիսի զգաստական առաքինութենէ։ Այսց Մարկոս ասէ, և սրբէ յայգոյց[2] կերակրոց։ Սակայն ասաց, կերակուրս զինչ և ուտիցէ ոչ պղծէ ըզմարդն. և զի չև ևս հանդարտեին լսել զոր ինչ կամէրն, զի մի վնասիցին ինչ այնու, խաղաղէ, թէ անլուայ ձեռօք հաց ուտել ոչ պղծէ զմարդն։

ԳՈՐԴՈՐԱԿ

Ուսցուր այսուհետև և մեք, թէ զինչ իցէ որ պղծէ զմարդն. ուսցուք և 'ի բաց փախիցուք։ Զանազի և յեկեղեցւոջ այնպիսի սովորութիւն տեսանեմք 'ի բազումն. սուրբ հանդերձից, և զձեռս և զբերան լուանալոյ պատկառ էն[3]. և զոգիսն սրբել և կացուցանել յանդիման Ցայ՝ չունին ինչ փոյթ յանձին։ Օ այս ասեմ, ոչ զի զձեռս և զբերան արգելուցում 'ի լուանալոյ, այլ կամիմ, թէ որպէս պարտ իցէ լուանալ լուացէն, ոչ ջրով միայն, այլ ջրով և առաքինութիւ։ Այս զի աղտ բերանոյ չարախօսութիւնն է և հայհոյութիւնն և բամբասանքն և բանք կսկծելիք և ՃառՃ գարշելիք և խեղկատակութիւնք. և եթէ գիտիցես զանձին, եթէ ոչ երբէք այնպիսի բանս խօսեցար և ոչ աղտեղացար այնպիսի բանիւք[4], մատչիր

1 Յօրինակին պակասէր Ե 'ի լմնալոյ. եդաք ըստ լուս։
2 'Ի լուս. յայլոյ։
3 Փարիզեան օրինակն պարտ իսն։
4 Փար. օր. այնպիսի աղտուն։

ցիս համարձակ. իսկ եթէ բազում անգամ զնոյն գայր առեալ[1] յանձին, ընդէր զուր ջանաս ջրով ողողել զլեզուդ, և զապականիչ և զվնասակար աղտն առեալ կրես։ Լայց աղէ՝ իսկ ասա[2]. եթէ աղբով թաթախ և կամ տղմով ձեռքդ էին, իշխեիր արդեւք յաղօթս կալ. և ոչ ուրեք[3]։ Այլ աւանիկ այն չէ ինչ վնաս, և այս սատակումն է. և զիարդ յանխտիրն երկիւղած երևիք, և յարգելեալն՝ ծոյլս և յոյլս[4]։

Իսկ զիարդ, ասեն. չիցէ՞ պարտ յաղօթս կալ։ Պարտ է, այլ ոչ աղտով թաթաւել, և գայրս[5] հանդերձ։ Իսկ եթէ կանխեալ անկեալ իցես[6] 'ի յանցանս ինչ, սրբեա զանձն։ Օ՛իարդ և որով օրինակաւ։ Լայց, յոգւոյց հան, տուրս տուր, ողորմութիւն արա, պաղատեաց առաջի այնորիկ՝ զոր թշնամանեցեր, հաշտեաց ընդ նմա։ Այսպիսի իրաւք լուա զլեզուդ, զի մի և առաւել բարկացուցանես[7] զնա։ Եթէ գայրս ուրուք ձեռքն թաթախ էին, և գայր այնուհետև զբո ոտսդ ուներ, և պաղատանս պաղատեր, ոչ միայն չլսեիր, այլ և ոտամբք ևս առ աթոռ հարեալ մերժեիր. և արդ դու ընդէր ժտիցիս այդպէս առ նա մերձենալ։ Վանզի ձեռն իսկ է լեզու աղօթականաց, և նովաւ բուռն հարկանեմք զոտիցն նայ. մի իւիք ժանտացուցաներ զնա, զի մի և ասիցէ ցքեզ, «Եթէ յաձախեսցես յաղօթս քո, ոչ լուայց քեզ». զի 'ի ձեռն լեզուի են կեանք և մահ. «'Ի բանից քոց արդարասցիս, և 'ի բանից քոց պարտաւորեսցիս»։

Առաւել քան ասաց բբացդ՝ լեզուիդ զգուշանայցես։ Երիւար արքունի է լեզուդ. թէ սանձս դնիցես՝ և ուղիղ վարժիցես, հեծանի և հանդչի[8] թագաւորն. և եթէ ընդարձակերասնակ[9] թողուցուս օգտել և խայտալ, սատանայի և դիւաց հեծանելիք լինիցին[10]։ Ոչ յորժամ ընդ քում կինոջն

1 Փար. օր. առեր։
2 Փար. օր. Իսկ եթէ ասա։
3 Փար. օր. Ե ուր երթիս։
4 Փար. օր. երկիւղած իցես, և յարգելեալն ծոյլ և յոյլ։
5 Փար. օր. ուր աղբով թաթաւ և ոչ գայրս։
6 Փար. օր. անկեալ իցես, ասէ։
7 Փար. օր. բարկացուցանիցես։
8 Փար. օր. վարիցես, հեծանի և հանգչի։
9 Փար. օր. արձակերասնակ։
10 Փար. օր. հեծանելի լինի։

լեալ իցես, չիշխես յաղօթս կալ, թէպէտ և չիցէ այն մեղադրութիւն։ Յ բամբասանաց և 'ի թշնամանաց եկեալ՝ որ գեհենին առիթ լինին, մինչև բարուոք լուացեալ զձեռսդ յաղօթս տարածանես. և զիարդ չզարհուրիցիս, որպէս չերկնչիցիս։ Ունիցէ լուեալ 'ի Պաւղոսէ՝ որ ասէ, «Պատուական է ամուսնութիւն[1], և սուրբ են անկողինք»։ Այլ թէ 'ի սուրբ անկողնոյն յարուցեալ՝ չիշխես աղօթս մատուցանել, զիարդ 'ի սատանայական անկողնոյն յարուցեալ՝ իշխես զսոսկալի և զահաւոր անունն յիշել։ Այնպէս սատանայական իսկ անկողին է 'ի թշնամանս և 'ի բամբասանս ջերանիլ[2]։ Զի իբրև ժանտ ոք հնացող սասիկ ցանկութիւն խառնակի ընդ մեզ ցասումն, և զապականելի բանս հանէ մեզ[3], և զսատանայաւոր թշնամութիւն տայ մեզ ծնանել. և հակառակ ամուսնութեան գործէ զայն։ Այ մտանութիւն՝ երկուց մարմնոյն մի տայ լինել. և ցասումն զմիացեալսն 'ի բազում մասունս ձեղքէ, և զոգիսն իսկ բաժանէ և քակտէ։

Այլ արդ զի համարձակութիւն մերձենայցես առ ոտն, մի տար մուտ ցասմանն, յորժամ կամիցի ընդ քեզ ամուսնանալ, այլ իբրև զշուն կատաղի 'ի բաց հալածեա։ Այնպէս և Պաւղոս պատուիրեաց. «Այ մ բառնալ, ասէ, զսուրբ ձեռս 'ի վեր՝ առանց բարկութեան և երկմտութեան»։ Այ 'ի առնիցես ակնկոր զլեզուդ. ապա թէ ոչ՝ զիարդ պաղատիցի վասն քո, յորժամ ինքն զիւր համարձակութիւնն կորուսանէ։ Այլ զարդարեա զդա հեզութիւն և խոնարհութիւն. արժանաւորեա[4] այ զոր աղաչէն. լից զդա օրհնութեամբ, և բազում ողորմութիւն. քանզի մարթի և բանիւք գործել զողորմութիւն։ «Զի լաւ են բանք քան զտուրս»։ Պատասխանի տուր աղքատին հեզութիւն զխաղաղութիւն. և զայլ ամ ժամանակս ձառիւք ոտեղէն օրինացն զարդարեա։ «Ո՞առք քո, ասէ, յօրէնս բարձրելոյն»։

Այ այնպէս զանձինս զարդարեալ՝ մատիցուք առ

1 Փար. օր. հաբառնէ։
2 Փար. օր. լուանալ էլանէլ։
3 'Ի փար. օր. չիք հանէ մեզ։
իսկ յոյնն ցանէ զմեզ։
4 Փար. օր. արա արժանաւորս։

թագաւորն. անկցուք 'ի ծունկս. մի մարմնով միայն, այլ և մտօք։ 'Ի միտ առնուցուցմք, թէ առ ո՞ մերձենայցեմք, և վասն որոյ իրաց, և զինչ կամիցիմք վաստակել։ Զ՚ որ ՝ն մատչիմք, զոր սերովբէքն 'ի տեսանել՝ զերեսս դարձուցանեն և չհանդարտեն ՀառագայԹիցն. զոր երկիր տեսանէ՝ և դողայ։ Զ՚ որ ՝ն մերձենամք, առ 'ի լոյսն անմատոյց բնակեալ. և պաղատիմք վասն առ 'ի գեհենէն ազատելոյ, և վասն մեղացն ԹողուԹեան, և վասն դիւրուԹիւն յանհնարին պատժոցն լինելոյ[1], և վասն երկնից և նորին բարուԹեանն հասանելոյ։ Զ՚նկցուք այսուհետև առաջի մարմնով և մտօք. զի նա կանգնեսցէ զանկեալսն առաջի։ ՀեզուԹեամբ խօսեսցուք և ամենայն հանդարտուԹիւն։

Զ՚ոմ այնպէս հէք և Թշուառական իցէ, ասեն, որ մինչ 'ի յաղօԹսն իցէ՝ և չլինել հեզ։ Զոր անիծիւք հանդերձ կայցէ յաղօԹս, և ցասմամբ լցեալ զանձն, և վասն Թշնամեաց բողոք բառնայցէ։ Զ՚Թէ կամիս բամբասել, զանձն բամբասա։ Զ՚ Եթէ զլեզու սրել և Թեքել, առ քո մեղսն. և մի, Թէ ոք չար ինչ արար քեզ, զայն ասիցես, այլ զոր ինչ անձամբ անձին արարեր։ Զ՚այն իսկ է բուն չար. և ոչ Եթէ ընկերն ինչ կարիցէ քեզ միտս առնել, Եթէ դու քեզ միտս չառնիցես։ Զոպէս զի Թէ հակառակ միտսակարացն կամիցիս լինել, զանձնէ մատիր նախ բողոքեա, և չիք ոք որ արգելուցու։ Զոպէս զի Թէ զայլմէ մատուցեալ չարախօսեսցես, և մեծամեծ միտս առեալ գնայցես։

Զ՚ բնաւ զոր միտսակարուԹի ունիցիս ասել։ Զոհ այս անուն Թշնամանեաց, և յափշտակեաց, և վիշտս 'ի վերայ էած։ Զոհ ինչ այն միտս, Թէ արԹունք ի ցեմք կրել զայն. այլ և օգուտս մեծամեծս անտի գտանել։ 'Զա է միտսն՝ որ զայն արար, և ոչ դու՝ որ վշտացար։ Զ՚ այն իսկ է յոյժ ՝մ չարեաց պատճառք, զի չառնումք երբէք 'ի միտ, Թէ ով իցէ՝ որ միտսիցին, և ով այն՝ որ միտսն առնիցէ։ Զոպէս զի Թէ զայն բարուոք գիտէաք, ապա ոչ երբէք առնէաք անձանց միտսս, և ոչ էս հակառակ այլումն յաղօԹս

1 Փար. օր. Վասն դիւրուԹիւն... առնելոյ։

կայաք. յորժամ 'ի վերայ հասանեաք, եթէ յայլմէ չարչարանս կրել օգուտ է։ Զանազի ոչ եթէ յափշտակիցի ոք, այլ թէ յափշտակեսցէ ոք՝ այն է չար։ Որպէս զի թէ յափշտակեցեր, անձին դատապարտ լեր. եթէ յափշտակեցար, աղօթս եւս արա 'ի վերայ յափշտակողին[1], զի մեծամեծ շահս գործեաց քեզ։ Եւ գործելեացն այնպիսի կամք չլցեն, այլ դու մեծամեծ օգուտս օգտեցար, թէ ժուժկալութիւն տանիցիս։ Զանազի զնա մարդիկ եւ ՅԾեղէն օրէնք դարձվեն, եւ զքեզ որ զրկեցարդ՝ պսակէն եւ մեծաձայն յարգեալ գովեն։

Զայ եւ[2] Ջերմնոսն յափշտակեր յումեքէ զամսն ցուրտ ջրով, եւ յագենայր փնասակար ցանկութիւնն, զյափշտակեալն զրկեալ ինչ համարէաք. այլ զայն՝ որ յափշտակեացն. զի զՋերմնն ՅՁեցոյց, եւ զցաւսն սաստկացոյց։ Զոյնպէս եւ զընչիցն ՅԾ զմտաւ. քանզի եւ սա եւս սաստիկ 'ի Ջերմանն է քան զնա. եւ յափշտակութիւնն անձամբ անձինն բորբոքեաց[3]։ Զու շամբշեալ ոք եթէ սուսեր յումեքէ յափշտակեր եւ յանձին առնէր[4], ուստ լինէր փնաս. յափշտակելոյն, թէ յափշտակելեացն. կարի իսկ յայտ է թէ յափշտակելեացն։ Զթէ այնպէս իցէ, եւ յընչիցն յափշտակութիւն զնոյն վՅիւ տացուք։ Օ՛ի զոր ինչ սուրն շամբշելոյն գործէ, զնոյն եւ արծաթասիրին մեծութիւնն. մանաւանդ թէ եւս չար քան զնոյնս։ Օ՛ի շամբշելոյն սուր առեալ եւ յանձին արարեալ[5] 'ի շամբշանացն բուժի, եւ ոչ եւս կրկին վրէժս առնու. եւ արծաթասէրն եւս կրկին[6] քան զնորա վերան հանապազօր ընդունի, եւ ոչ զերծուցանէ զանձն 'ի դրսոյ ամանաց եւ 'ի մերոյ ինչէն, այլ եւս քան զեւս յաճախէ. եւ որչափ առնուցու ստէպ զվերան, նոյնչափ սաստիկ պատճառս այլոց վիրաց տայ։

Օ այս ՅՄ խմացեալ՝ փախիցուք 'ի սրոյն յայնմանէ, զերծցուք 'ի վիրացն[7]. զեթ անագան ուրեք ըզգաստացուք։ Օ՛ի եւ զայն առաքինութիւն՝ ցածու-

1 Փար. օր. յոքնչոնկնեանցն։
2 Փար. օր. Ն թէ։
3 Փար. օր. բորբոքեաց զբոցն։
4 Փար. օր. անձին առնէր։
5 Փար. օր. անձին արարեալ։
6 Փար. օր. Ն առաքին։
7 Փար. օր. 'ի մերոնքէ։

թիւն պարտ է կոչել, ոչինչ ընդհատ քան զայն՝ որ յամենեցունց կարծի։ Զի անդ ընդ միում բռնաւորը ցանկութեան է մարտ, և ասա բազում և պէսպէս ցանկութեց պարտ է գեր 'ի վերոյ լինել։ Զի չիք և չիք ինչ անիմաստագոյն քան զընչիցն ծառայ. Թուի թէ իշխեսցէ, և իշխան 'ի գլուխ ունի. Թուի թէ տէր իցէ, և ծառայութի հարկանէ. և կապանս վարակէ զանձամբ, և ուրախ է. գրգռէ զդազանն, և բերկրի. 'ի գերութէ վարեալ, ցնծայ և խայտայ։ Զ՚ուն կատաղի տեսանէ 'ի վերայ դիմեալ ոգւոցն, և յանհոգս է. զոր պարտ էր խառանել և սովամահ առնել, առատացեալ յանխնայ շանի առ կուրծսն կուտէ, զի և աս քան զաս 'ի վերայ խաղայցէ և ահագինս լինիցի։

Զայս ամ իմացեալ՝ լուծցուք զկապանսն, սպանցուք զդազանն, փարատեսցուք զախտն, մերժեսցուք 'ի բաց զմոլորութիւն։ Զի 'ի հանդարտութէ վայելեսցուք, և յստակ առողջութիւն և բազում բարութեամբ 'ի յանբծոյթ նաւահանգիստն նաւարկեսցուք. զի և յաւիտենից բարութեցն հասցուք. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօքն Տն մերոյ Յն Քն։ ընդ որում հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 փար. օր. հելլենութիւն։

ՃԱՌ ԲՍԱՆԵՐՈՐԴ ԵՒԹՆԵՐՈՐԴ

«Լ՝ իբրև եղ Յոհ անտի, գնաց 'ի կողմանս տիւրաց-
ւոց և սիդոնիացւոց. և ահաւասիկ կին մի քանանա-
ցի եկեալ 'ի սահմանաց նոցա, աղաղակեր և ասէր,
ողորմեաց ինձ որդի Դաւթի, զի դուստր իմ չարա-
չար այսահարի»։

Մարկոս ասէ, չկարաց ծածկել. մնեալ 'ի տունն՝ ոչ կամէր, թէ ոք ծանիցէ զնա։ Լ՝ եթէ այնպիսի ինչ 'ի դէպ էր, բնաւ զի երթայր 'ի կողմանն յայնոսիկ։ Յորժամ 'ի կերակրոցն խտրութենէն ազատեաց զնոսա, ապա և հեթանոսաց բանայր դուռն, ոտն ոտն յառաջ մատուցանելով։ Օ որ օրինակ և զՊետրոս յորժամ զօրինն առ հրաման լուծանել՝, նախ առ Կոռնելիոս առաքեր։

Լ՝թէ ոք զայն յառաջ բերիցէ, և զիարդ աշակերտացն պատուէր տայր՝ 'ի Ճանապարհս հեթանոսաց մի երթալ, նախ զայն իսկ ասիցեմք, թէ ոչ որպէս աշակերտացն պատուիրեաց՝ նոյնպէս և նա ինչ ընդ հարկաւ էր։ Լ՝պա՝ զի ոչ քարոզել ինչ չոգաւ ուստիք անդր. որպէս Մարկոս յայտ արարեալ ասէ, թէ թաքուցանել կամեցաւ զանձն, և ոչ կարաց ծածկել։ Վասնզի և անարժան իսկ համարէր զնոսա մարդասիրութեն, և թէպէտ և զհետ գային՝ փախչէր։ Լ՝ թէ զփախստականին զհետ պարտ էր երթալ և դարձուցանել, ապա ևս առաւել զնոսա՝ որ զհետն ընթացային՝ չէր պարտ անտես առնել։ Լ՝ տես, զիարդ ամենևին իսկ ՝ամ երախտեաց արժանի էր կինն. զի ոչ իշխեաց Յերուսաղէմ եկանել. քանզի կասկածէր, և չհամարէր զանձն արժանի. և եթէ ոչ այնպիսի միտս ունէր, ապա և անդր իսկ գնայր։ Լ՝ այս յիսկ և յիսկ փուլթոյ նորա, և զի 'ի սահմանսն տիւրացւոց էլ, յայտ է։

1 'Ի լուս. առ հրեայսն լուծանէր։

Բայց ոմանք և յայլասայիկ ինչ իրս շրջեն, եթէ յորժամ էլ 'ի հրեաստանէ ՀՅՈ, յայնժամ իշխեաց գալ մերձենալ առ նա եկեղեցի. քանզի և նա յիւրոց սահմանացն էլ. ըստ այնմ՝ եթէ «Որոյ զժողովուրդ քո և զտուն հօր քո». որպէս և ՏՅՈ յիւրոց սահմանացն էլ, և կինն յիւրոց սահմանացն, և ապա կարացին միմեանց հանդիպել։ «ԲՀաւասիկ, ասէ, կին մի քանանացի եկեալ 'ի սահմանացն իւրոց»։ Բմբաստան լինի զկնոջէն աւետարանիչն, զի աբանէ լինքն յայտնեսցին, և նա ևս առաւել բարձրագոյն քարոզեսցի։ Բյ յորժամ յիշեսցես զքանանացւոյն, յիշեսջիր և զազգ անօրինացն[1], որ զօրէնս բնութեան 'ի հիմանէ տապալեցին։ Բյ յորժամ զնոսա յիշեսցես, 'ի միտ առնուցուս զՏՅՈի գալստեանն զզօրութիւնն։ Օ՛ի որք ընկեցիկ եղէն յերկրէ, զի մի զհրեայսն խռտորեցուսցէն, նոքին այնչափ երևին զգաստացեալք քան զհրեայսն, մինչև 'ի սահմանացն համարձակ եղանել, և առ ՏՅՈ մերձենալ, և նորա գալստեանն առ նոսա արժանի լինել։

Բյ արդ եղեալ կնոջն 'ի սահմանացն՝ ոչ այլ ինչ ասէր, այլ թէ՝ ողորմեաց ինձ. և զբազումն աղաղակսն կուտէր 'ի տեսիլ։ Բյ անդ էր տեսանել ողորմելի զկինն. զի կարի ինն թախծեալ սրտիւ աղաղակ եդեալ՝ երթայր զկնի մայրն վասն դստերն, որ այնչափ յայնպիսի յանհնարին ցաւոց տանջէր։ Օ՛ի և ոչ իշխէ առաջի վարդապետին ածել զդիւահարն. այլ թողցեր անդրէն ընդոստ 'ի տանն անկեալ պարտասեալ, և զպաղատանս միայն առաջի դնէր, և զցաւոցն ևեթ յայտ արարեալ խանդաղատէր, և այլ ինչ ոչ յաւելցեր։ Բյ ոչ 'ի տունն թախանձեր տանել զբժիշկն, որպէս և արքունականն. քանզի նա ասէր, «Բ'կ դիր ձեռն, և փրկեցի՛ մինչև մեռեալ իցէ մանուկն». բայց սորա զվիշտն ևեթ պատմեալ, և զցաւն կարևորս, զութ արկեալ առաջի ՏՅՈ աղերսիւ և ողորմ բարբառով աղաղակէր, ոչ թէ ողորմեաց դստերն իմում, այլ ինձ։ Ցա անդգայեալ է 'ի ցաւոցն, և ՏՅՈ արկածք և վարանքն զինև են, որ ի-

[1] Յօրինակին օրէնսն։

մանամն, և ջար 'ի ցաւս եմ քան զանզգայն. զի յոր-
ժամ գնա այնպէս տեսանիցեմ, մոլիմ և յիմարիմ,
և ոգիքս պարտասին։

«Այլ նա չտայր պատասխանի ինչ նմա». զի նոր
լինն, և այլ ազգ միտս ցուցանէր։ Օ հրեայսն թէ-
պէտ և ասպախտաւորք լինէին, յորդորէր. և թէպէտ
հայհոյէին, աղաչէր. և թէպէտ խարդախութիւն նիւ-
թէին, սակայն ոչ թողոյր։ Այլ զնա՝ թէպէտ զՀետ
ընթանայր և խորովէր և ընդդէմանէր, չառնէր
փոյթ։ Որ ոչ զօրէնս ինչ գիտէր, և ոչ ընդ մարգա-
րէսն էր մեաալ, և այնպիսի երկիւղածութիւն ցուցա-
նէր, և նա պատասխանւոյ անգամ արժանի չառ-
նէր։ Ո՞վ ոք որ զայն տեսանէր և չգայթագղէր. զի
ոչ ըստ համբաւին նոյնպիսի ինչ զիրսն ցուցանէր։
Վանգի նոցա լուեալ էր, թէ ընդ գեօղս և ընդ քա-
ղաքս շրջի և բժշկէ. և զնա որ այնչափ աղաղակ ե-
դեալ զկնի երթայր՝ հալածէր։

Այլ զո՞ ոք ոչ խոնարհեցուցանէին վիշտք կնոջն, և
աղերսն և խորովանքն և պաղատանքն։ Օ ի վասն
միոյ դստեր միամօրոյ, հարեալոյն և խարշելոյն 'ի
ցաւս, աղաչէր։ Ո՛չ թէ իբրև արժանի զանձն համա-
ւրէր, և ոչ իբրև պարտ ինչ համարէր պահանջել,
այլ ողորմութիւն միայն ժտէր գտանել. և զվիշտս
տանն 'ի հրապարակ հանեալ ձաղէր, և պատասխան
ւոյ ևս արժանի չլինէր։ Ամենևս բազումք իսկ 'ի լսո-
ղացն գայթագղէին, բայց սակայն նա ոչինչ գայթագ-
ղէր։ Այլ զինչ ասեմ թէ 'ի լսողացն, այլ թերևս
և աշակերտքն ածէին ինչ այսպիսի զմտաւ։ Բայց
թէպէտ խռովեցան, չիշխեցին յայտ ասել, թէ արա
նմա զինդրուածսն, տուր նմա՝ զոր ինչ հայցէն. այլ
մնտեան և ասէն, «Արձակեա զկինն, զի այնչափ
աղաղակէ, և գայ զՀետ»։ Այս և մեք յորժամ կա-
միսիմք զոք 'ի հաւան ածել, այլ ընդ այլոց բազում
անգամ բանս խօսիմք։ Այնպէս և Վնա ասէ. «Ո՛չ
առաքեցայ առ ոք, թէ ոչ առ ոչխարս կորուսեալս
տանն Իսրայելի»։ Ընդ իբրև զայս լուաւ, զինչ գոր-
ծիցէ կինն։ Լռիցէ՞ ինչ, և կասիցէ՞ 'ի յօժարութե-
նէն։ Ո՛չ, այլ ևս քան զևս ժտէր։ Ո՛չ նոյնպիսի և
մեք. յորժամ վրիպիմք ինչ 'ի խնդրուածոյ, լքա-

նիմք, փախչիմք, 'ի բաց գնամք. որոց պարտ էր՝ վասն այնորիկ զի վրիպեցաքն, և կարևոր ժտել։ Եւ զոր ուրուք ջիլս չհարկանիցէ այնպիսի բանք։ Այս և լռէն իսկ միայն բաւական էր 'ի վճատութեան արկանել, թող թէ այնպիսի խիստ բանք, զնա և զբարեխօսսն, և յորժամ լսէրն՝ թէ չէ հնար այցելոյ. բայց սակայն չվճատէր կինն։ Յորժամ իմացաւ՝ թէ ոչինչ կարէն գամագիտ լինել բարեխօսքն, զամենթ 'ի յետ ընկեցեալ՝ լրբէր զբարուրք լրբութիւն։ Օ առաջինն՝ և առաջն չիշխէր գալ, բայց աղաղակէր միայն։ «Օ ի՛ աղաղակ եդեալ, ասէին, գայ զկնի մեր»։ Յորժամ 'ի դէպ էր նմա հեռանալ և 'ի բաց գնալ, քանզի և անյոյսն եղև, յայնժամ մօտէր և գայր հուպ։

«Եւ կիր պագանէր և ասէր, ՝՝որ օգնեա ինձ»։ Օ ինչ գործեա, ով կին դու. միթէ աւելի՞ ինչ համար ձակութեան քան զառաքելոցն ունիցիս և մեծ զօրութիւն։ Համարձակութեան ինչ և զօրութիւն չունիմ, այլ ամենեքեան ի՛ մեր. բայց սակայն զլրբութիւս փոխանակ խնդրուածոց առաջն եդից, զի թերևս խղնարհեսցի ինչ 'ի ժառութիւնս։ Եւ զինչ օգուտ իցէ. չլուա՞ր իսկ քեզէն զի ասէր, «Ոչ առաքեցայ՝ թէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայելի»։ Օ այս լուայ, ասէ, բայց նա՞որ է. վասն որոյ և չասացի իսկ՝ թէ աղաչեա և խնդրեա, այլ թէ օգնեա ինձ։ Բայց Տ՞ր և զայն բաւական չհամարեցաւ, այլ տակաւին 'ի ձիգ արկանէր զտարակուսանսն։

«Ոչ, ասէ, բարուրք՝ առնուլ զհաց մանկանց, և արկանել շանց»։ Եւ յորժամ արժանի արար զնա պատասխանուոյ, յայնժամ առաւել քան 'ի լռութեն կսկծեցոյց։ Եւ այնուհետև ոչ՝ այլ ինչ պատճառս գնէր, թէ չառաքեցայ ուրեք, այլ որչափ կինն զպաղատանսն յաճախէր, նոյնչափ և նա զհրաժարելն. և ոչ ևս ոչխար կոչէ զնոսա, այլ մանկունս, և զնա շուն։ Եւ կնոջն այժ գտեալ՝ 'ի նորին բանիցն իսկ յօգուտ զՔատագոլութեան։ Եթէ շուն իցեմ, ասէ, ապա չեմ օտար։

Հիրաւի ասէր՝ Տ՞ր վասն հրեիցն, եթէ 'ի դատառատան եկի յաշխարհս յայս։ Կինն զդաստատցեալ ի-

մասանացեալ՝ 'ի համբերութիւն յենոյր, և հաւատս ցուցաներ. և այն զի թշնամանեցաւ ևս. և նոքա բժշկեալք և պատուեալք 'ի նմանէ՝ անուղղայ փոխարէնս հատուցանէին։ Օ՛ի կարևոր պէտք են մանկանց կերակրոց, զայն և ես Ճարտար գիտեմ. բայց և ինձ շանս չէ ինչ արգել զփշրանսն քաղել. զի եթէ չիցէ արժան առնուլ, ապա և ոչ 'ի փշրանացն վայելել. իսկ եթէ գտնէ սակաւ միոյ ինչ պարտ իցէ հաղորդել, ապա և ինձ շանս չէ ինչ արգել. այլ այն իսկ արժանի առնէ զիս հաղորդութեան, զի շուն եմ։

Ա՛յս և Ա՛ն իսկ յայն սակս յապաղէր, զի նա զայն բանս ասիցէ։ Ա՛նզի յատաջագոյն գիտէր, և չառնոյր յանձն տալ, զի ցուցանիցէ զլաւութիւն նորա։ Օ՛ի թէ չկամէր տալ, ապա և յետոյ իսկ ոչ տայր, և ոչ կրկին պապանձեցուցանէր զնա։ Ա՛յլ որպէս հարիւրապետին ասէր, թէ ես եկիցս և բժշկեցիցս. զի ուսանիցիմք զլաւութիւն առնն, և լսիցեմք զոր ասացն, թէ չեմ արժանի՝ զի ընդ յարկաւ իմով մտանիցես. և որպէս առ տեառատեսիւն արար, զի ասէր՝ ես գիտեմ զի զօրութիւն ել յինէն, զի յայանիցէ զՀաւատսն։ և որպէս շամրտացւոյն, զի ցուցանիցէ, զի թէպետ և յանդիմանի, սակայն ոչ հեռանայ. նոյնպէս և աստ չկամէր՝ թէ ծածկիցի այնպիսի առաքինութեան կնոջն. զի ոչ եթէ թշնամանաց ինչ էին բանքն, այլ 'ի յայտ ածելոյ զծածուկ զգանձն։ Ա՛յլ դու հաւատոցն և խոնարհութեան կնոջն միտ դիր. զի նա մանկունս կոչեաց զՀրեայսն, և սա չհամարեր բաւական զայն, այլ և տեարս անուաներ. զի այնպէս իսկ չցաւէին նմա այլոց յարգանք և գրգանք։

" Ա՛նզի և շունք, ասէ, ուտեն 'ի փշրանաց, որ անկանիցին 'ի սեղանոյ տեառն իւրեանց "։ Ցեսանես զկնոջն զիմաստութիւն, զիարդ չիշխեաց դիմադարձել, և ոչ 'ի խոր խոցեցաւ այլոց գովութեն, և ոչ ցասեաւ ինչ ընդ թշնամանն։ Ցեսանես զժուժկալութի ժառանգութեանն։ Ա՛յս ասէ, չէ բարւոք. և սա ասէ, այո՝ Տէր։ Ա՛յս մանկունս կոչեաց, և սա տեարս։ Ա՛յս շունս անուանեաց, և սա զբարս շանց եդ առաջի։ Ցեսեր զսրբա խոնարհութիւնն. տես և զՀրէիցն մեծամտութիւնն։ Օ՛աւակ Ա՛բրահամու եմք, ասեն, և չիք մեր

երբէք ծառայեալ ումեք, և յոյ ծնեալ եմք։ Ո՛չ այսպիսի ինչ և սա. այլ շուն կուէ զանձն, և զնոսա տեարս. յայն սակս և վաղվաղակի լիներ որդի։ Եւ այնուհետև զինչ ասիցէ Տէր։

«Ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո»։ Ասն այնորիկ յերկարեաց, զի այնպիսի բանս խօսեսցի, և պսակեսցէ զնա։ «Եղիցի քեզ, ասէ, որպէս և կամիս»։ Հաւատքդ քո, ասէ, և այլ ևս մեծամեծ կարեն վնաբել, բայց «Եղիցի քեզ որպէս և կամիս»։ Բ.յս բարբառ այնր բարբառոյ զուգական է, որ ասաց, «Եղիցին երկինք, և եղեն»։

«Եւ բժշկեցաւ դուստր նորա անդէն առ ժամայն»։ Տեսանես՝ զի ոչ սակաւ նպաստ եղև և նա 'ի բժշկութիւն դստերն։ Եւ վասն այնորիկ ոչ ասաց Տէր, թէ բժշկեցի դուստրն քո. այլ թէ «Մեծ են հաւատք քո, եղիցի քեզ՝ որպէս և կամիս». զի ուսանիցիս, թէ ոչ վայրապար ինչ ողոքանաց բանք էին, այլ բազում հաւատոց զօրութիւն։ Եւ զհաւատս քննութեամբ իրացն՝ 'ի վախճանի գործոյն է ուսանել։ «Բժշկեցաւ դուստր նորա անդէն առ ժամայն վաղվաղակի»։

Եւ դու մի՛ դիր. թէպէտ և առաքեալքն չկարացին հնարս գտանել բարեխօսութեանն, նա հաւատովքն արար զՀնար իրացն։ Զի այնպէս իսկ զօրաւոր է աղօթից հպատակութիւն, զի և ընդ մեր մեղաւորացս՝ կամի զի և մեք պաղատիցիմք, քան եթէ այլք աղաչիցեն վասն մեր։ Ամենայն և կարի իսկ համարձակութիւն ունէին նոքա, այլ մեծ ժուժկալութիւն եցոյց կինն։ Ասն այնորիկ յետոյ աշակերտացն ցուցանէր զհանգամանս յերկարելոյն, թէ կարի յԼրաւի չարար երեսս նոցա բարեխօսանացն։

«Կնաց անտի Յն, և եկն 'ի Ծովեղէն գալիլեայ ցոց։ Եւ 'ի լեառն, և անդ նստէր։ Աստեան առ նա ժողովուրդք բազումք, որ ունէին ընդ իւրեանս կաղս, կոյրս, համրս, միակողմանիս. և այլս բազում. և ընկէցին զնոսա առ ոտսն Յն, և բժշկեաց զնոսա. մինչև զարմանալ ժողովրդոյն, թէ կոյրք տեսանեն, համրք խօսին, և միակողմանիք ողջանան, կաղք գնան. և փառաւոր առնէին զՅն Իսրայելի»։ Եր-

բեան ինքն շրջէր, և երբեմն ճանապարհ նստէր, և ակն ունէր հիւանդաց և կաղաց 'ի լերինն։ Այս այնուհետև 'ի հանդերձեանն չմերձենային, այլ 'ի բարձրագոյն եղեալ՝ բերէին առ ոտն ընկենուին։ Այս կրկին հաւատս ցուցանէին. զի կաղալով և սողալով ևս 'ի լեառնն ելանէին, և չլինէին իմիք կարօտ, բայց միայն առ ոտն անկանելոյ։ Այս անդ էր բազում զարմանս տեսանել. զի զորս բառնալոցն տանէին, իւրեանց ոտիւքն իջանէին. և կոյրք առանց առաջնորդաց գնային։ Այս բազում բժշկութիւք բժշկելոցն, և յանկարծակի առողջութիւնն՝ զամենեսեան հիացուցանէր։ Տեսանես՝ զի կնոջն յետ այնչափ պաղատելոյ, բայց զսոսա վաղվաղակի բժշկէր։ Ո՛չ զի սոքա ինչ լաւ էին քան զնա՝ վասն այնորիկ առնովաւ յապաղէր և յերկարէր, այլ զի զժուժկալութիւնն ցուցանիցէ։ Այս սոցա վաղվաղակի տայ զպարգևս, զի խնուցու զբերանս հրէիցն, և բառնայցէ 'ի բերանոյ նոցա ամենևին զպատասխանիս։

ՑՈՐԴՈՐԱԿ

Օ՛ի որչափ շատ ոք ինչ բարիս գտանիցէ, ըստ նմին պայմանի պարտաւոր է պատժոց՝ թէ ապախտաւոր լինիցի, զի և ոչ պատուոյն եղև պիտանի։ Ա՛ն այնորիկ մեծատունք քան զաղքատս սաստիկ տանջին, եթէ 'ի չարութիւս հատանիցին. զի և ոչ 'ի դիւրութենն եղեն հեզք։ Այս զայն մի ինչ ասիցես, թէ ողորմութիւն արարին։ Օ՛ի ոչ[1] ըստ արժանի մեծութեանն արարին, սակայն և այնպէս չապրիցին, զի ոչ ըստ չափոյ տրոցն քննի ողորմութիւն[2], այլ ըստ մտացն առատութեան։ Այ թէ նոքա վրէժս տայցեն, որչափ ևս առաւել նոքա՝ որ յաւելորդսն հարեալ իցեն։ Որ երեքձեղուանեայսն, և չորքձեղուանեայսն շինեն, և զքաղցեալս անտես առնեն։ Որք արծաթ-

1 Փարիզեան օրինակն ունի թէ ոչ։

2 Փար. օր. ասա և զինի սակայ ողորմութիւն։

սիրութեանն դարման տանին, և զողորմութենէ անփոյթ առնեն։ Եւ յլ քանզի վասն ողորմածութեան անկաւ Քառս, ծն առ զայն բան՝ որ յառաջ զերիս աւուրս վասն մարդասիրութեան խօսէի, և անկատար թողի, երկրորդեսցուք այսօր։

Յիշեցէք, զի եռանդ վասն օդոյ ոտից յուղանալոյ խօսէի, և վասն զրաջան աշխատութեան, և վասն երիտասարդացն իգութեան. և յողորմածութենն Քառից՝ յայնր մեղադրութիւն մխեցաք։ Եւ արդ զինչ իցէ, զոր յայնժամ խօսեցաք[1]։ Զի ողորմածութիւնն աբուեստ է, և յերկինս ունի զարուեստանոցն, և վարդապետ ոչ զմարդ՝ այլ զՅԱԾ։ Եւ արդ մինչդեռ խնդրէի, թէ զինչ արուեստն իցէ, և զինչ չար արուեստն, և 'ի զրարուեստութիւն և 'ի չարարուեստութիւնն անկաք, յորս և զկօշկակարաց արուեստն յիշատակեցաք։ Եւ յլ թերևս մոռացայք և կորուսէք։ Զն առեալ զնոյն բանս երկրորդեսցուք, թէ զիարդ աբուեստ, և որպէս քան զՅԱՄ արուեստս մեծ է ողորմածութիւն։

Զի թէ արուեստին սեպհական իցէ 'ի պէտս ինչ կատարել, ապա յայտ է թէ քան զողորմածութիւնն չիք ինչ պիտանացու։ Զի և արուեստ է, և քան զՅԱՄ արուեստս ազնուագոյն։ Զի ոչ օդ ոտից զործէ մեզ, և ոչ հանդերձս անկանէ, և ոչ տունս կաւէ զէնս շինէ, այլ զկեանսն յաւիտենից առթէ, և 'ի մահու ձեռաց յափշտակէ, և այլ կեանս[2] պայծառագոյնս ցուցանէ, և շինէ օթեվանս յերկինս, և զյաւիտենից յարկսն հաստատէ, և լապտերաց մերոց չտայ շինանել, և ոչ ազատեղի հանդերձիւք երևել 'ի հարսանիսն, այլ լուսնայ՝ և քան զձիւն սպիտակացուցանէ[3]։ «Եթէ իցէն, ասէ, մեղք ձեր կարմիր իբրև զյորդան, իբրև զձիւն սպիտակ արարից»։ Եւ չտայ մեզ անդր անկանել՝ ուր մեծատունն էր, և ոչ զնոյն ահագին բանս լսել, այլ 'ի դոգն Եբրահամու առաջնորդել։

Զա և յիւրաքանչիւր իսկ երկրաւոր արուեստսն՝

1 Փար. օր. զԻՆՉ ԷՐ ԶՈՐ ՅԱՅՆ ԺԱՄ ԽՕՍԷԱՔ։

2 Փար. օր. ՅԱՅԼՈՄ ԿԵԱՆՍ։

3 Փար. օր. ԱՂԻԿԱՑՈՒՑՈՒՑԱՆԷ։

ուղղութիւնք ինչ պիտոյից կան։ Եվ միակութեան կեր-
բակրելն, և յոստայնանկութեանն զգեցուցանելն։ Մա-
նաւանդ թէ և այն իսկ ոչ. քանզի չէ մեզ բաւական
այն՝ զոր յիւրմէ միայն նպաստ լինիցի։ Այլ թէ կա-
միք՝, նախ զմիակութեանն քննեսցուք։ Այլ թէ ոչ՝ի
դարբնութենէն ունիցի զբահն, և զերկմանին,
զխոփն, զգերանդի, և զմանկաղ, և զդակու, և զու-
բաղ, և զայլ ինչ բաղում փոխ առեալ՝ի նմանէ. և
՝ի հիւսնութենէ՝ արօր կազմել, և լուծս յօրինել, և
սայլս, և կամուրս, զօրանն կրել և կասուլ. և՝ի փա-
կահանութենէ [2] կարս հարկանել, և ձիդս հիւսուլ.
և՝ի շինողութենէ եզանցն որ վարիցեն՝ եզնանոցս [3]
շինել, և միակացն որ զսերմանսն հանիցեն՝ տուն. և
՝ի մայրևորութենէ փայտս հատանել. և՝ի հացարա-
բութենէ. եթէ ոչ յամենէ առեալ [4], առանձինն ոչ
կազմի։ Այսպէս և ոստայնանկութենն յորժամ գործ-
ել, բազում այլ արուեստս կոչէ ընդ իւր նպաստ լի-
նելոյ՝ի գործն՝ որ առաջի կայ. և եթէ ոչ գայցեն և
ձեռնտու լինիցին, և նա ըստ միւսումն կայ՝ի վարանս
և՝ի տարակոյս։ Այլ իւրաքանչիւր յարուեստիցն՝
այլոցն կարօտ է։ Իսկ յորժամ ողորմել պարտ է, և
ոչ իւիք կարօտի, քայց միայն կամաց։

Զպա թէ ասիցես՝ ընչից պէտք են, և տանց, և
օդոց, և ձորձոց, ընթերցիր զԱՀոի բանսն՝ զորս
զայրոյն խօսեցաւ, և դադարեսցես յայդպիսի հո-
գոց. և թէպէտ և կարի աղքատ իցես և՝ի մուրա-
ղաց, երկուս ընիոնս լումայից արկանիցես, և զնամ
կատարեցեր. և եթէ ձոյլ ոսկւոյ չունիցիս, եթէ
զայն ունիցիս՝՝ի գլուխ իսկ արուեստին հասեր։ Զյա-
պիսի հանձար կալցուք, և գործեսցուք ուղղութիւն.
զի լաւ է զայն արուեստ գիտել, քան արքայ լինել,
և թագ՝ի գլուխ առնուլ։ Այլ ոչ այն ինչ է նորա յո-
լովութիւն՝ զի այլովքն չէ կարօտ, այլ զի պէտսպէս ի-
րաց վճարիչ [5] է, և բազմաց և ազգի ազգի։ Վասանզի
և տունս յաւիտենականս շինէ. և ուսուցանէ զիւր
ուղղագործսն՝ թէ զիարդ փախչիցին յանմահ մա-

1 Փար. օր. եթէ ի-ի։
2 Փար. օր. Ի ի-ի-ի-ն-ն։
3 Փար. օր. եզն-ոց։
4 Փար. օր. յ-ն առ-ա։
5 Յօրինակին ի-ն։ եգոք ըստ փար. օր։

հուանէն. և զանձս անծախս պարգևէ, և յամ ինա-
սակարութենէ փախչել, և 'ի գողոց, և 'ի յորդանց,
և 'ի ցեցոյ, և 'ի ժամանակեայ եղծուածոյ։

Լեթէ որ 'ի յարդեանցն[1] պահպանութիւն հնարս
ինչ այնպիսի ուսուցանէր քեզ, զինչ ոչ տայիր, թէ
մարթ էր 'ի բազում ամաց[2] առանց վնասու պահել
զցորեան։ Իսկ նա աւանիկ զքեզ ոչ միայն ցորենոյն,
այլ և ամի խեղամուտ առնէ, թէ զիարդ և ինչքն,
և ոգիդ, և մարմինդ առանց վնասու մնայցեն՝ ցու-
ցանէ։ Լու զի պիտոյ իցէ մնար զամ ուղղութենին ա-
սել զարուեստին։ Օ ի նա[3] իսկ ուսուցանէ, թէ որ
պէս լինիցիս նմանողաց, որ ամ բարութեց գլուխ է։

Ցեսանես, զի ոչ մի միայն գործ է նորա, այլ բա-
զում. և չէ կարօտ այլում օգնականի[4]։ Ցունա շինէ,
հանդերձս անկանէ, զանձս անծախս կազմէ, մահու
գեր 'ի վերոյ առնէ, սատանայի տիրէ, այ նմանողս
գործէ[5]։ Օ ինչ ինչ այլ քան զայն արուեստ շահա-
ւոր կայցէ. զի այլ արուեստքն՝ հանդերձ ասացե-
լովքն՝ ընդ անցաւոր կենացս վախճանին. և 'ի խա-
թուութեան արուեստագործացն և ուրեք չերևին, և
զգործս իւրեանց չկարեն ունել հաստատուն, և աշ-
խատութեամբ կարօտ են, և բազում ժամանակաւ և
յաճախ այլովք իրօք։ Իսկ նա՝ յորժամ աշխարհս
անցանէ, յայնժամ առաւել երևի. և յորժամ մե-
ռանիցիմք, յայնժամ սաստիկ ծագէ, և զգործեալ
գործսն իւր միայն ցուցանէ։ Ոչ ժամանակաւ, և ոչ
աշխատութիւն, և ոչ այլ իւիք այնպիսեաք[6] կարօտ է,
այլ մինչ խոթ իցես՝ գործէ, և 'ի ծերութենն չդադա-
րէ, և 'ի հանդերձեալ կեանսն ընդ քեզ ուղեկից լի-
նի, և չթողու ուրեք զքեզ։

Ահա և քան զիմաստունսն և քան զբանիրունսն զօ-
բագոյն կազմէ զքեզ։ Օ ի որ յայլ արուեստս ընտրիլ
ցին, բազում նախանձաւորս ունիցին. և որք յայս
պայծառանայցեն, սաստիկ աղօթակիցս։ Ահաքա 'ի

1 Յօրինակին 'ի յորդանցն. փարիզեան օր. առ 'ի յորդէանցն, նման յունին։
2 Փար. օր. 'ի բազում ամս։
3 Յօրինակին զի նախ. եղաք գործ։ ըստ փար. օր. և ըստ յունին։
4 Փար. օր. այլում արուեստի։
5 Փար. օր. հանդերձէ։
6 Փար. օր. իւիւ նայնպիսի

մարդկան ատեանս կան, և ջատագով զրկելոցն լինին, բազում անգամ իսկ և զրկելեացն [1]. և սա առաջի ատենին Աստի ոչ միայն ջատագով լինի, այլ և զդատաւորն ևս 'ի հաւան ածէ լինելոյ ջատագով այնմ, որ դատիցին, և զերաւունս 'ի նա հանել, թէ պէտ և բազում մեղս մեղուցեալ իցէ, և պսակել և քարոզ կարդալ և յարգել։ « Աբարէք, ասէ, ողորմութիւն, և ամ ինչ ձեր սուրբ եղիցի »։

Այս զինչ ասիցեմ 'ի հանդերձեալ աշխարհին։ Զոր աստէն հարցանիցեմք զմարդիկ, թէ զինչ կամիցիք, իմանասնոս բազումդ լինել և բանիբունք [2], թէ ողորմածս և մարդասէրս, զերկրորդն լսեմք ամենեցուն ախորժել. և կարի իսկ յիրաւի։ Զարտաբախօսութիւն թէ բառնայցէ, չինասի ինչ աշխարհս. զի և յառաջ քան զայն, կայր հաստատուն բազում ժամանակս։ Իսկ եթէ զողորմելն բառնայցես, ամ վաստակքն կորնչին [3]։ Այս զոր օրինակ 'ի ծովու չէ հնար նաւարկել, թէ նաւահանգիստքն և մուտ և ելքն խնուցուն, նոյնպէս և ոչ կենաց աշխարհիս կալ, թէ զողորմութիւն և զարգահատել և զմարդասիրութիւն բառնայցես։

Վասն այնորիկ ոչ միայն 'ի միտն ապաստան արար զայն ած՝ այլ զմեծ մասն նորա և 'ի բնութեանն իսկ ընտաբոյս 'ի հարկէ սերմանեաց։ Օ՛ի այնպէս և հարք որդւոց ողորմին, և մարք ծննդոց. և ոչ միայն 'ի մարդիկ, այլ և յանասունս. և այնպէս եղբարք եղբարց, և ազգականք ազգականաց, և մարդ մարդոյ։ Զանազի ունիմք բնութիւն միտութիւն ինչ յողորմութիւն. յոր սակս և զրկողացն [4] ցանուումք. և կարօտեալ [5] տեսանեմք, և վշտանամք. և սգաւորս, և արտասուեմք։ Զանազի յոյժ [6] կամի Աստ գործել զայն ուղղութիւն, վասն այնորիկ բազում ինչ և բնութեանն հրամայեաց 'ի նոյն նպաստ լինել, յայտ առարեալ՝ թէ կարի փոյթ է նմա զնմանէ։

1 Փար. օր. զրկողացն։
2 Փար. օր. բազում լինել և բանիբոնս։
3 Փար. օր. ամ 'ի դէպս ելանու։
4 Փար. օր. վասն զրկելոց։
5 Փար. օր. խորհեալ ըստ յունին։
6 Փար. օր. զանազի յոյժամ։

Օ այս ամ իմացեալ, և զանձինս և զորդիս ածցուք յողորմածութեան վարդապետանոցն. և նախ քան զամ՝ զայն ուսանիցիմք[2]։ Արանցն և այնպիսին իսկ է մարդ։ «Ահեծ է, ասէ, մարդ, և պատուական այլ ողորմած»։ Որպէս զի որ զայն չունիցի, և մարդն լինելոյ իսկ չէ նման. և նա իսկ է գործ իմաստութեան[3]։ Այլ ընդ այն զի զարմանայցես, թէ նա է մարդ, զի նա ինքն է ահեծ իսկ։ «Աղերուք, ասէ, գթածք, որպէս և հայրն ձեր»։

Ուսցուք այսուհետև լինել ողորմածք վասն ամենեցուն, մանաւանդ զի և մեք իսկ բազում ողորմութեան կարօտ եմք. և մի՛ի կեանս համարեսցուք ըզ-ժամանակն՝ յորում ոչ ողորմիցիմք։ Ողորմածութիւն զայն ասեմ, որ յաղագս հուսութենէն սուրբ է։ Օ՛ի թէ որ իւրովք ընչիւքն շատանայ՝ և ումեք ինչ ոչ տայցէ, այնպիսին չէ ողորմած. յորժամ զայլոյ առնուցու՝ և այլում տայցէ, զիարդ ողորմած իցէ. այնպիսին թէպէտ և բազում ինչս տայցէ, չէ ողորմած։ Լաւ միայն[4] վայելել յինչսն մարդասիրութիւն չիցէ, որչափ և առաւել որք զրկիցեն տանջեսցին. զի թէ որ չետուն պատժին, որչափ և առաւել որ զայլոյ առնուցուն։

Այլ զայն մի՛ ինչ ասիցես, թէ ոմն զրկի և ոմն ողորմութիւն գտանէ։ Արանցն այն իսկ են չարիք. զի պարտ իսկ էր զրկելոյն ողորմութիւն գտանել, դու աւադիկ զայլս վիրաւորես, և զորս ոչն վիրաւորես բժշկես. պարտ էր զնոսա բժշկել՝ զոր վիրաւորեցերն. մանաւանդ թէ և վիրաւորել իսկ ոչ։ Օ՛ի մարդասէրն ոչ խոցէ և բժշկէ, այլ և զայլոյ խոցեալն ողջացուցանէ և բժշկէ։ Օ՛քո վերան բժշկեա, և մի՛ զայլոյ. մանաւանդ թէ մի՛ խոցեր իսկ, և մի՛ բժշկեր. զի այն ծաղր առնելոյ գործ է[5]. այլ կանգնեա զգլորեալսն։ Արանցն չէ և չէ իսկ հնար զնոյն չափ ողորմածութիւն

1 Փար. օր. Ն զբրէ՝ Ն ըն-բ-ոյրս՝ -ն-ոյ։

2 Փար. օր. ուսանիցի մարդ։

3 Փար. օր. Ի մարդն լինելոյ ունա. Ն նա իսկ գործեալ իմաստուն։

4 Յօրինակին թեւ վայելել։ Փարիզեան օր. թեւ գայն վայելել յինչսն գտանել իցէ. որչափ Ն առաւել զբիւրին հասնել։ թեւ որ զբիւրեցիսն գանցիցին, զի ել է գտան այլոց. որչափ Ն առաւել որ զայլոյն առնուցուն։

5 Փար. օր. ծաղր առնելոյ է։

բժշկել, որչափ ազահութիւն զոք վիրաւորեցեր։ Թէ միով դանդաւ զոք զրկեցեր, և ոչ միայն մի դանգի պէտք են յողորմածութիւն՝ զի ողջացուցանել կարիցես զազահութեն վերսն, այլ ողջոյն տաղանդն։

Վասն այնորիկ գող որ ըմբռնիցի, ընդ միոյն չորս տուժեսցի. և քան զգողն յափշտակօղն չար է. և եթէ գողն ընդ միոյն չորս պարտ իցէ տուժել, ապա յափշտակօղն ընդ միոյն տասն, նա ևս աւելի։ Լաւ երանի թէ այնու ևս կարէր զանօրէնութիւն քաւել. բայց ողորմածութիւն պտուղ և յայնժամ չառնուցու։ Վասն այնորիկ և Օ՛աբէ ասէր, թէ «Օ՛որ զրկեցին՝ չորեքպատիկ հատուցից, և զկէս ընչից իմոց տաց աղքատաց»։ Լաւ եթէ առ օրինաքն չորեքպատիկ պարտ էր տուժել, որչափ ևս առաւել առ շնորհօքս. և եթէ գողն, որչափ ևս առաւել յափշտակօղն. զի ընդ վնասուն և թշնամանս ևս բազում լինի անդ. որպէս զի թէ հարիւրապատիկ տայցես, ոչ բնաւ իսկ եւուր։ Ցեսանես՝ զի ոչ 'ի զուր ինչ ասէին[1], թէ դանդ մի յափշտակիցես՝ և ողջոյն իսկ զտաղանդն տուժեսցիս, և այնպէս հազիւ բժշկեսցիս։ Լաւ եթէ զայն առնելով՝ հազիւ բժշկեսցիս, իսկ յորժամ և զկարդն եղծանես, զողջոյն իսկ արարսն ցրուեցեր, և սակաւ ինչ տայցես, և զայն ոչ նոցա՝ զոր զրկեցերն, այլ այլոց փոխանակ նոցա, զինչ պատաս խանատուութիւն ունիցիս, զոր ներել Թողութիւն կամ յոյս փրկութիւն։

Կամիս ուսանել, թէ որչափ չարիս գործէ՝ որ այնպէսն ողորմեսցի։ Լսուր գրոյն՝ որ ասէ, թէ «Որպէս սպանանէ զոք զորդի առաջի հօր, այնպէս որ մատուցանէ յընչից աղքատացն պատարագ ՝ այ»։ Լաւ արդ զայն սպառնալիս գրեսցուք 'ի միտս և 'ի տունս[2] և 'ի յորմն և 'ի ձեռս և 'ի խորհրդոցն խիղճ, և ամ ուրեք զնոյնս։ Օ՛ի և ահն այն սաստկացեալ 'ի հոգիս մեր՝ արգելուցու 'ի հանապազորդ սպանութեանցն։ Օ՛ի և չար քան զսպանօղն է յափշտակօղն[3], որ առ սակաւ սակաւ ծախէ զաղքատն։

1 Փար. օր. ասէի։
2 Փար. օր. ԵՒ 'ի տուն երթալ։ է յանալոյ։
3 Փար. օր. քան զսպանողին։

Եւ արդ զի սրբեսցուք յամենայն[1] պղծութենէ, զմտաւ ածցուք զայս ամ, և առանձինն և առ միմեանս. զի և այնպէս յողորմածութի յօժարագոյնք լինիցիմք, և սուրբ վարձս առնուցուք ընդ նմին, և յաւիտենից բարութեցն հասցուք. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօքն և մարդասիրութենն մերոյ Յիսի Քրիստի. ընդ որում հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք յաւիտեանս. ամէն։

1 փոր. որ. «ՀԻՆԳԵՐԻՑ ԻՆՉ»։

ՃԱՌ ԲՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

«Կոչեաց Յն առ իւր զաշակերտսն, և ասէ ցնոսա. գթամ ես 'ի ժողովուրդդ, զի աւասիկ երեք աւուրք են՝ զի մնան առ իս, և չունին ինչ ուտել. և արձակել զնոսա նօթիս չկամիմ, գուցէ նքթիցեն 'ի ճանապարհի»։

Այս և վերագոյնն մինչդեռ զայս նշան առնելոց էր, նախ բժշկեաց զկուրութիւն մարմնոցն. նոյնպէս և աստ 'ի կաղաց և 'ի կուրաց բժշկութենէ եկն յայս։ Այլ զիարդ լցէ, զի անդ աշակերտքն ասացին արձակեա զժողովուրդս, և աստ չասացին. և մանաւանդ զի երեք աւուրք ևս անցեալ էին 'ի վերայ։ Կամ ինչ քեանք ևս այնուհետև աղնուագոյնք էին, կամ զնոսա տեսանէին ոչինչ կարի զգացեալ քաղցին. քանզի փառաւոր առնէին զնոսա 'ի վերայ իրացն գործելոց։

Այլ տես, զիարդ և աստ ոչ վայրապար գայ 'ի սքանչելին, այլ զնոսա յորդորէ յայն։ Ողովուրդքն, քանզի 'ի բժշկութիւն եկեալ էին, չիշխէին հաց խնդրել. բայց մարդասէրն և դարմանիչն՝ թէպէտ և չխնդրէին՝ տայր։ «Ասէ ցաշակերտսն, գթամ 'ի դոսա. և արձակել նօթիս չկամիմ»։ Օ՜ի մի ասիցեն, թէ պաշարաւ իսկ կազմ եկեալ էին, և ասէ, «Այս երեք աւուրք են զի աստ առ իս են»։ Որպէս զի ասիցէ. թէ ունէին ինչ՝ արդ ծախեալ էր։ Այ՜ն այնորիկ իսկ ինքն ոչ յառաջնու

և ոչ յերկրորդումն արար, այլ յորժամ զամենայն զոր ունէին ծախեցին. զի յորժամ նախ պէտքն պահանջիցին, կարի յօժարութիւ ընդունիցին զերախտիսն։ Այս և ասելն վասն այնորիկ էր թէ գուցէ նքթիցեն 'ի ճանապարհի, զի յայտ արասցէ՝ թէ 'ի բացարձակ վայրաց եկեալ էին առ նա, և չկայր ինչ այնուհետև՝ որով զպէտսն վճարէին։

Թէ չկամիս արձակել նօթիս, էր վասն չառնիցես զնշանսն։ Օ՜ի հարցմամբս այսուիկ և պատասխա-

նեաւս մոռադիր առնիցէ զաշակերտն . զի և զհաւատս իւրեանց ցուցանիցեն՝ մնասցել և ասել, արա՛ հաց, և տո՛ւր ուտել դոցա ։ Այլ ո՛չ այնպէս ինչ ուսանէին զհարցուածն ։ Զետոյ և ասէ իսկ ցնոսա, որպէս և Մարկոս պատմէ, թէ այդչափ կուրացեալ են միտք ձեր . աչս ունիք՝ և ոչ տեսանէք, ականջս ունիք՝ և ո՛չ լսէք ։ Զթէ ո՛չ այսպիսի պատճառաք 'ի միջի կային, էր վասն ասէր ցաշակերտն, թէ արժանի են ժողովուրդդ յերախտիս ինչ վայելել . և յայտ առնէր զդութն եւս զոր ունէր ընդ նոսա ։ Զա և Մատթէոս ասէ, թէ յետոյ և սաստեաց 'ի նոսա և ասէ, «Զուերահաւատք՝ և՛ եւ իմանայցէք, և ո՞չ յիշէք զհինգ նկանակն 'ի հինգ հազարսն, և որչափ սակառի բարձէք զկոտորոցն . և ո՞չ զեւթն նկանակն 'ի չորս հազարսն, և որչափ սփիւռիդս բարձէք» ։ Զ՚ս այսպէս միաբան միմեանց են աւետարանիչքն ։

Զ՚ս արդ զինչ գործիցեն աշակերտքն ։ Զ՚ռեռ եւս տակաւին ընդ երկիր քարշեին . թեպէտ և Զ՚ս բիւրապատիկ հնարէր՝ զի զառաջին աքանչելիսն յիշեսցեն, և հարցուածովն և պատասխանեաւն . և զի զնոսա իսկ արար սոյսաւորս, և զի նոցա իսկ բաշխեաց ետ զսակառիսն ։ Զ՚այց սակայն տակաւին թերակատարք եւս էին . քանզի և ասէին իսկ թէ ուստի՞ իցէ մեզ յանապատիս այնչափ հաց . և յառաջնումն և այժմ զանապատն իմն առնէին պատճառս ։ Զ՚ոքա տկարագոյն մտաք ասէին . բայց զնշանն այնուիկ առանց կարծեաց առնէր ։ Զ՚ի մի կարծիցէն՝ թէ յաբուարձական ինչ գիւղոցն իցէ հացն բերեալ, յայտ յանդիման տեղին աղաղակէր, զի հաւատարիմ լեցի նշանն . վասն այնորիկ զառաջինն և զերկրորդս յանապատի առնէ՝ կարի հեռի 'ի գիւղից ։ Զ՚ս զի ո՛չ ուստէք ձեռնտուութի տեսանէին աշակերտքն, վասն այնորիկ ասէին՝ թէ ուստի՞ իցէ մեզ յանապատի այսչափ հաց . քանզի կարի մանանագոյնս կարծէին՝ թէ նոցա ինչ հրամայիցէ կերակրել զնոսա ։ Զ՚ա և զառաջինն ասէր, թէ դո՛ւք տուք դոցա ուտել, զի պատճառս տացէ նոցա աղաչելոյ ։ Զ՚այց աստ չասէ, թէ տո՛ւք նոցա դուք ուտել . այլ թէ «Զ՚թամ ես 'ի ժողովուրդդ, և արձակել նօթիս չկամիմ» . զի

յորդորիցէ զնոսա 'ի նմանէ խնդրել։ Եւ և յայտնի իսկ էին բանքն այնու, զի ասէր, թէ չկամիմ նոքա թիս արձակել, և զիշխանութիւնն յայտ առնելոյ. և քանզի ընդ բազմութիւնսն նայեցան, և 'ի վարանս մտանէին՝ թէ ուստի կարիցեն յանապատին այնչափ ժողովուրդս յագեցուցանել, այնուհետև զիւրն իսկ 'ի մէջ բերէ։

«Հանի՞ նկանակ, ասէ, ունիք. և նոքա ասեն՝ Եւթն նկանակ և սակաւ ձկունս». ապա ոչ ասէին իբրև զառաջինն, թէ զինչ իցէ այն առ այդչափ մարդիկդ։ Թէպէտ և ամենայնի չհասանէին, բայց սակայն առ սակաւ սակաւ 'ի վեր ամբառնային։ Եւ նա իսկ նման առաջին հարցուածոյն հարցանէր, զի օրինակաւ հարցուածոյն յիշեցուցանէ նոցա զվաղուց գործոցն նշանն։ Այլ դու որպէս զթերակատար միտն նոցա իմացար, նոյնպէս և զիմաստասէր բարբարն 'ի միտ առնուցուս, և զարմանայցես ընդ ճշմարտասէր միտն. զի՞ արդ ինքեանք գրեն, և զիւրեանց թերութիւն ոչ թաքուցանեն։ Եւ այն զի մեծամեծ ևս թերութիւք էին, և ոչ սակաւ ինչ մեղադրութիւն. զի անդէն 'ի մօտոյ իրքն գործեցան, և նոցա այնչափ վաղ մոռացեալ էր. վասն այնորիկ իսկ և սաստէր 'ի նոսա։ Այլ ընդ այնմ և զմիւս զգաստութիւնն 'ի միտ առնուցուս, թէ որչափ 'ի վերոյ էին քան ըզպէտս որովայնի, և չառնէին ինչ բնաւ փոյթ զսեղանոյ։ Օ երիս աւուրս դեգերեալք յանապատին, Եւթն միայն նկանակս ունէին։ Եւ զայս ըստ այնմ նմանութեամբ առնէր, 'ի գետնոյ վերայ լոկոյ բազմեալ, և յաշակերտացն ձեռս զհացն ածեցուցանէր։

«Հրամայեաց, ասէ, ժողովրդեանն բազմել 'ի վերայ գետնոյ. և առեալ զեւթն նկանակսն և զերկուս ձկունսն, գոհացաւ, եբեկ, և եռ ցաշակերտսն, և բաշխեցին ժողովրդոցն»։ Զ.մէ զբան[1] ոչ հանգոյն առաջնոյն լինէր։ «Կերան, ասէ, ամենեքեան և յագեցան, և բարձին զնշխարս կոտորոցն Եւթն սփիւռիւդս լի. և որք կերան՝ էին չորք հազար այր, թող զկանայս և զմանկտի»։

Եւ ընդէր արդեաւք անդ 'ի հինգ հազարացն երկու

[1] 'Ի լուս. բնաւն։

տասան սակառի յաւելաւ, և ասա՛ի ջրոյց հաղա-
բացն եւթն սփիւրիդս. վասն էր, և զմէ սակաւ
նշխարս բարձաւ, թէպէտ և չէին այնչափ մարդիկն
որ կերանն։ Կամ թէ իցէ զայն իսկ ասել, մի թէ
սփիւրիդքն քան զսակառիսն մեծ էին։ Լաւ կամ թէ
մի յորժամ հասարակ նշանքն գործիցին, ՝ի մոռա-
ցօնս ինչ զերսն արկանիցեն. այլագունակ կերպարա-
նօքն զարթուցանիցէ յիշել նոցա և զայն և զայս։
Վասն այնորիկ իսկ անդ ըստ աշակերտացն կշռէ ըզ-
թիւ սակառեացն, և ասա ըստ նկանակացն զսփիւ-
րիդսն։ Օ՛ի և այսու ևս զանչափ զօրութիւն, և զդիւ-
բագործ իշխանութիւն յայտ առնիցէ, թէ կարօղ է
և այնպէս և այլազգ այսպիսի ինչ իրս առնել զար-
մանագործս։

Զանգի ոչ եթէ սակաւ ինչ զօրութիւ իցէ՝ զնոյն
թիւ կշիռ պահել, և յայնժամ մինչ հինգ հազարքն
էին, և այժմ մինչ ջորք հազարքս. և ոչ յայնժամ
զսակառիսն աւելի ածել, և ոչ այժմ զսփիւրիդսն
պակաս. թէպէտ և բազմութիւն ուտելեացն ոչ նոյն-
չափ էր, և վախճանն այլագունակ։ Լաւ յայնժամ
եթող զժողովուրդն և եմուտ ՝ի նաւ, և այժմ. քան-
զի Յովհաննէս զնոյն յայտ առնէ. զի ոչ այնչափ ինչ
ստիպէր զնոսա երթալ զհետ նորա, որպէս հայցն
նշանն։ Ոչ միայն զհետ երթալ, այլ և թագաւոր
ևս կամիին առնել զնա։ Օ՛ի մի ապստամբութեան
ինչ կարծիս տայցէ, յորժամ զնշանն հացին յաձա-
խիցէ, թողու զնոսա և ՝ի բաց գնայ. և չգնայր ուրեք
հետի՝, զի մի ՝ի խանաթ անկեալ՝ զհետ երթայցեն,
այլ ՝ի նաւ մտանէ։

«Լերև արձակեաց, ասէ, զժողովուրդն, եմուտ ՝ի
նաւ, և եկն ՝ի սահմանս Մ՝ակդալէայ։ Մ՝ատեան փա-
րիսեցիքն և սադուկեցիքն, փորձէին և նշան խնդ-
րէին ՝ի յերկնից։ Լաւ նա ասէ ցնոսա. յորժամ
երեկոյ լինի, ասէք՝ թէ ջեր լինելոց է, քանզի կար-
մրացան երկինք. և ընդ այգ՝ այսօր ձմեռն, քանզի
կարմրացան խոժոռեցան երկինք։ Օ՛երեսս երկնից
գիտէք քննել, և զնշանս ժամանակաց չկարիցէք.
ազգ չար և շնացօղ նշան խնդրէ, և նշան ոչ տայցի

1 Յօրինակին հե՝ի։

նմա, բայց նշանն Յովհաննու մարգարէի։ Լթող զնոսա և գնաց»։ Իսկ Մարկոս ասէ, թէ յորժամ մատեան որ իւրքն էին, յոգւոց էհան և ասէ. զի իցէ՝ զի նշան խնդրէ ազգս այս։ Թէպէտ և բարկութիւն և ցասման իսկ արժանի էր հայցուածն, բայց սակայն մարդասէրն և խնամանն չցանոյր ինչ, այլ ողորմէր, և եղուկ համարէր զաշխատեալսն, որ յետ այնչափ հանդիսի զորութեան նորա՝ տակաւին փորձէին և նշան խնդրէին ոչ առ 'ի հաւատալ ինչ, այլ բիծս արկանել։ Օ ի թէ վասն հաւատալոյ էին մատուցեալ և աղաչեցեալ, տայր զխնդրուածսն. որպէս կնոջն ասացեալ, թէ չէ բաւոր, և յետոյ կատարեաց զխնդրուածն. որչափ ևս առաւել նոցա պարգևէր։ Այլ քանզի ոչ առ 'ի հաւատալ ինչ խընդրէին, վասն այնորիկ և կեղծաւորս իսկ կոչէ զնոսա. զի զայլ ասէին և զայլ խորհէին։ Օ ի թէ հաւատացեալ էր, ապա և խնդրէին իսկ ոչ. և զի ոչ հաւատով խնդրէին՝ յայտնմանէ յայտ է, զի յետ սաստելոյն և յանդիմանելոյն ոչ կացին անդէն, և չասացին՝ թէ չեմք ինչ տեղեակք, և ուսանել կամիմք։ Այլ զինչ ինչ նշան խնդրէին, թէ ոչ կամ զարեգակն 'ի գնացից կացուցանել, կամ զլուսին պաշարել, կամ փայլատակունս յերկնից իջեցուցանել, կամ զօդս փոփոխել, կամ այլ ինչ նոյնպիսի. և առ այն զինչ տայցէ պատասխանի։

«Օ երեսս երկնից, ասէ, գիտէք փորձել, և ըզնշանս ժամանակաց, ասէ, չգիտիցէք»։ Տեսանեմ զՀեզութիւն և զխոնարհութիւն. զի ոչ իբրև զառաջինն չէառ միայն յանձն տալ, և ասէ՝ թէ ոչ տայցի նմա, այլ և զպատճառսն ևս՝ վասն էր չտայցէ՝ ասէ. թէպէտ և ոչ առ ուսանել ինչ հարցանէին։ Այլ արդ զինչ իցէն պատճառքն։ Օ որ օրինակ յերկինս այլ նշան ձմերայնւոյ է, և այլ ջերմոյ. և ոչ որ իցէ՝ որ տեսանիցէ զձմերայնւոյ նշանն՝ և ջերմոյ ակն ունիցի. և ոչ 'ի ջեր ժամանակի՝ ձմերայնւոյ, նոյնպէս, ասէ, պարտիք առ իս իմանալ, թէ այլ ժամանակ է արդի գալստեանս, և այլ հանդերձելոցն։ Այժմ երկրաւոր նշանաց պէտք են, և երկնաւորն այլում ժամանակի են պահեալ։ Այժմ իբրև զբժիշկ եկի, և ապա

իբրև զդատաւոր. այժմ 'ի խնդրել զմոլորեալսդ, և ապա իսկ վրէժս պահանջել։ Այսոսն այնորիկ այժմ լուելեայն եկի, և ապա բազում աշխարհատես յայտնութիւն։ Օ՛ի զերկինս գալարեմ, և զարեգակն կորուսանեմ, և լուսնի չտայցեմ ծագել. ապա զօրութիւնք երկնից շարժեսցին, և փայլակն յանկարծակի երևեսցի գալստեանն, և յայտնութիւնն լինիցի։ Այլ չեւ ևս է այնր ամի ժամանակ նշանաց. քանզի այժմ եկի մեռանել, և անհնարին չարչարանս կրել։ Զի՞ցէ լուեալ 'ի մարգարէէն՝ որ ասէ, թէ «Այլ հաւակաւեսցի, և ոչ աղաղակեսցէ, և ոչ լուիցի արտաքոյ բարբառ նորա». կամ միւսումն՝ որ ասէ, «Ոչիցէ որպէս անձրև 'ի վերայ գեղման»։

Այլ եթէ որպէս առ Փարաւոնին եղև՝ այնպիսի ինչ խնդրէին, գիտել պարտ էին՝ թէ յայնժամ մի 'ի թշնամւոյն զերծանելոյ յիրաւի լինէին այնպիսի նշանք. իսկ այժմ, զի առ բարեկամս եկեալ է, զի՞ պիտոյ են այնպիսի նշանք։ Օ՛իսոյդ, ասէ, զմեծամեծսն տայցեմ նոցա, որ փոքունսն չհաւատայցին. ոչ զի փոքունք ինչ էին, այլ քան զառաջինսն ևս մեծամեծք։ Այլ ո՞ր մեծ իցէ. որ յայնժամն եղեն, թէ զի զմեղս թողցէ, և զմեռեալսն յարուցանէր, և զդեւսն հալածէր, և զմարմինսն վերստին ստեղծանէր, և այլ ևս բազում ուղղութիւս ցուցանէր։

Այլ արդ դու հայեաց ընդ կուրուն սրտից նոցա. զիարդ յորժամ լուան՝ թէ ոչ տացի նոցա նշան, բայց նշանն Յովնանու մարգարէին, և ոչինչ հարցանէին, թէպէտ պարտ էր հարցանել. քանզի և զմարգարէն Ճարտար գիտէին, և զիրսն ամ։ Այլ դարձեալ մանաւանդ կրկին զնոյն լսէին, պարտ էր հարցանել և ուսանել՝ թէ զի՞նչ իցէ բանն, զոր ասաց։ Այլ որպէս վերագոյնն ասացի, ոչ եթէ առ ուսանելոյ ինչ ցանկութեամբ խնդրէին զայն. վասն այնորիկ նա թողցէ զնոսա և զնայր։

«Այլ՝ ասէ, աշակերտքն յայնկոյս ծովուն, և մոռացան առնուլ ընդ իւրեանս հաց։ Այլ Յի՞ ասէ ցնոսա. զգո՛ջ լերուք 'ի խմորոյ անտի փարիսեցւոց և սադուկեցւոց»։ Այլ էր ում ոչ ասաց, թէ զգոյշ լինիջիք 'ի վարդապետութենէն։ Այլ զի ևս քաջ ու-

նիցին զյիշատակ իրացն գործելոց՝ի մտի վասն ստէպ զմտաւ ածելոյ, և ասա՝ի վերայ հասանելոյ հաւաստեաւ։ Բ՝անզի գիտեր իսկ՝ թէ մոռացան, և վայրապար մեղադիր լինել չհամարէր՝ի դէպ։ այլ՝ի նոցանէ առնուլ պատճառս՝ և սաստել, զի ոչինչ ըմբռստանայցեն ընդ պատուհասն։

Լ՝ու էր աղագաւ չսաստեաց յայնժամ, մինչ ասէին, «Ողոստի՝ իցէ մեզ յանապատի աստ այսչափ հաց»։ քանզի՝ի դէպ իսկ էր զայն ասել։ Օ՝ի մի թուեսցի՝ թէ ընդառաջ ինչ բերիցէ զնշանսն, և ոչ կամէր առ ժողովրդովքն պատուհասել զնոսա։ և ոչ պարծանս անձին երևեցուցանել։ Բ՝այց աստ՝ի դէպ էր մեղա դրութիւնն, զի դարձեալ կրկին անգամ այն ինչ գործեցաւ, և չառնուին՝ի միտ։ Վ՝ասն որոյ նախ այլ ազգ իսկ նշանս արար, և ապա սաստէ։ զի զոր ինչ՝ի միտս խորհէին՝ զայն՝ի մէջ բերէր։ Լ՝ս զինչ խորհէին։ Հաց, ասէին, մոռացաք առնուլ ընդ մեզ։ քանզի «Խորհէին, ասէ, ընդ միտս, եթէ հաց ոչ բարձաք»։ Օ՝ի դեռ տակաւին հրէական սրբութեանցն խոկ կայր՝ի մտի, և կերակրոցն խտրութիւքն։ վասն այնր ամի կարի սաստիւ սաստէր։

«Օ՝ինչ խորհիք՝ի սիրտս ձեր, թերահաւատք, թէ հաց ոչ բարձաք։ Ո՞և և ես տակաւին իմանայք, և ոչ՝ի միտ առնոյք։ կուրացեալ են միտք ձեր։ աչս ունիք՝ և ոչ տեսանէք, ականջս ունիք՝ և ոչ լսէք։ և ոչ յիշէք զհինգ նկանակն՝ի հինգ հազարսն, և որչափ սակաւի բարձէք, և ոչ զեւթն նկանակսն՝ի չորս հազարսն, և որչափ սփիւրիդս բարձէք»։ Ցեսանեմ, զիարդ կարի իմն մեղադիր լինի։ և ոչ ուրեք երևի՝ թէ այնպէս ինչ սաստիցէ նոցա։ Լ՝ս էր վասն։ այլ զի զկերակրոց հոգսն՝ի բաց մերժիցէ, և առաւել և ս զխտրանացն միտս։ Վ՝ասն այնորիկ անդ զայն միայն ասէ, թէ չառնուք՝ի միտ։ և աստ կարի իմն սաստիւ, զի թերահաւատս իսկ կոչէ։ Բ՝անզի ոչ և թէ ամենայն ուրեք զգօնութիւն ինչ լաւ իցէ։ որպէս զհամարձակութիւն տայր նոցա, նոյնպէս և զսաստն յաճախեր։ զի պէսպէս դաշնակօք զփրկուն ոգւոցն յարգարիցէ։

Լ՝ս դու տես զսաստն սաստիկ, և զզգօնութիւն ընդ

նմին խառնէ. զի գրէ՝ թէ իրաւունս խսկ էր տալոց սաստիւն. «Ոչ, ասէ, առնուցուք 'ի միտ զՀինգ նկաւ նակն 'ի հինգ հազարսն, և քանի սակառի բարձէք. և զեւթն նկանակն 'ի չորս հազարսն, և քանի սփիւ ռիդս բարձէք»։ Օ՞ուտելեացն և զնչխարացն թիւ 'ի մէջ բերէ, զի և զանցեալսն կիրթ 'ի միտս ունի ցէն, և առ հանդերձեալսն ուշակալուք գտանիցին։ Այլ զի ուսանիցիս թէ որչափ ինչ օգուտ եղև նոցա սաստն, և զարթոյց զմիտս քնէածս, լուր. զի ոչ այլ ինչ ասէ աւետարանիչն զՅոհ՝ թէ ասաց, այլ թէ յետ սաստելոյն՝ զայն ևեթ յաւել, «Օ՞խարդ ոչ առնուք 'ի միտ, թէ ոչ վասն հացի ինչ ասացի ձեզ ըզգուշանալ 'ի խմորոյ փարիսեցւոց և սադուկեցւոցն»։ Յարէ 'ի նոյն, թէ «Յայնժամ 'ի միտ առին, զի ոչ ասաց զգուշանալ 'ի խմորոյ հացի, այլ 'ի վարդապետութէ փարիսեցւոցն և սադուկեցւոցն». թէպէտ և ինքն ինչ ոչ մեկնեսցէ զայս։

Ցե՛ս, որպիսի՛ ինչ բարութիւս գործեաց. և 'ի հրեական խտրութէն ազատեաց զնոսա, և զՀեղգան կարի մտադիրս յարդարեաց, և 'ի թերահաւատութէն ապրեցոյց, մի ինչ վհատել՝ յորժամ սակաւ հաց ունիցին ընդ իւրեանս, և մի վասն քաղցի հոգալ, այլ անփոյթ առնել զամենայնէ զայսմանէ։

ՑՈՐԴՈՐԱԿ

Ա՛ռ այսուհետև և մեք ողբիցեմք ամ ուամբ զայնոսիկ որ ընդ ձեռամբ մերով իցեն. և մի մեք յիշխանաց ողբիլ ևեթ փութայցեմք։ Զանգի երկուցունց դեղոցն կարօտ են ոգիք մարդկան, վասն այնորիկ ընդ ամ տիեզերս այսպէս մատակարարէ ած։ Այրբեանն զայս և երբեանն զայն առնէ. ոչ հեշտակաւնացն միայն, և ոչ տրտմականացն առանձինն թոյլ տայ լինել։ Օ՞ր օրինակ երբեանն գիշեր և երբեանն տիւ, երբեանն ամառն և երբեանն ձմեռն. նոյնպէս և 'ի մեզ՝ երբեանն տրտմութիւն և երբեանն ուրախութիւն, երբեանն հիւանդութիւն և երբեանն առողջութիւն։ Այս արդ մի ինչ զարմանայցէք, յորժամ խօթանամք. քանզի յորժամ ողջանայցեմք՝ զարմանալ պարտ է։

Լոյս մի խռովեսցուք յորժամ տրտմիցիմք. քանզի և յորժամ ուրախ լինիցիմք՝ խռովել 'ի դէպ է, զի ըստ կարգի և ըստ բնութեան լինի ամ։

Լոյս զի՞ զարմանայցես՝ թէ առ քեզ լինի այս ամ. քանզի և առ սրբովքն զնոյն դիպեալ ոք տեսանիցէ։ Լոյս զի ուսանիցիս զկենացն՝ զորոց կարծես, թէ ուրախութիւն ինչ լի իցէ, և յապահով յայնպիսի ինչ իրաց, զնոյն իսկ 'ի մէջ բերցուք։ Կամիս, զի զԱբրահամու իսկ զառաջին կեանսն քննեսցուք։ Լոյս նա զի՞նչ արդեաք լուաւ վաղվաղակի. «Լի՛ր յերկրէ քումմէ, և յազգէ քումմէ»։ Տեսեր զտրտմութեան իրացն առեալ հրամանն. տես և զհեշտականն՝ զիարդ արդէն իսկ և իսկ յաջորդէն։ «Լոյս եկ, ասէ յերկիրս՝ զոր ես ցուցից քեզ, և արարից զքեզ յազգ մեծ»։ Իսկ արդ զիա՞րդ. քանզի եկն յերկիրն, և եհա՞ս 'ի նուաստանգիստն։ Զ.ՍԼ դարձեալ քան զառաջինն և ս դժնդակ առնու մի ըստ միոջէ, սոքա, և 'ի տեղեաց տեղի փոփոխումնն, և կնոջն յափշտակութիւնն։ Լոյս յետ այնորիկ այլ հեշտականք առնուին զնա. Փարաւոնի հարցուածքն[1] և արձակելն և պաշտիւն և բազում պարգևքն և դարձեալ միւսանգամ անդրէն։ Լոյս և ս յառաջ ամ ինչ նոյնպիսի շար հիւսեալ տողեալ 'ի հեշտականաց և 'ի տրտմականաց։ Լոյս առ առաքելովքն նոյնպիսի ինչ դիպեր. վասն որոյ և Պաւղոս ասէր, թէ «Որ մխիթարէն զմեզ յամ նեղութիւն՝ առ 'ի բաւական լինել մեզ մխիթարել զայնոսիկ, որ 'ի նեղութիւս իցեն»։

Լոյս ինձ զի՞նչ օգուտ իցէ, ասէ, որ ցանգ 'ի տրտմութեան միջն եմ։ Զ'ի ապախտաւոր, և մի անչնորհակալ. քանզի անհնարին իսկ է ցանգ 'ի տրտմութիւն լինել, զի և բնութիւն իսկ այնու չէ բաւական. այլ քանզի միշտ յուրախութիւն կամիմք լինել, վասն այնորիկ թուի մեզ՝ թէ ցանգ 'ի տրտմութիւն կայցեմք։ Լոյս ո՛չ վասն այնորիկ միայն, այլ քանզի զդիւրութիւն և զբարիսն վաղվաղակի մոռանամք, և զտրտմութիւն հանապազ յիշեմք. վասն այնորիկ միշտ 'ի տրտմութիւն համարիմք լինել. զի չէ հնար մարդոյ ցանգ 'ի տրտմութիւն կալ։

1 Յոյնն ուրեմ հարցուածքն։

Կամիք, զի և զբարեկեցութիւն կենաց քննեսցուք, զփափկութիւն և զմեղկութեան, զծանր և զտաղտկալիցն, և զխրուին ցուցցուք. զի և 'ի յայն բազում տրտմութիւնք կան, և յայսմ տրտմութիւնք։ Լ.յլ մի ինչ խառվեջիք. եկեալ կայցէ 'ի միջի կալանաւոր ոք կապեալ. և միւս և՝ թագաւոր մանուկ և որբ ինացեալ, և բազում մեծութիւն զՀայրենի ժառանգեալ։ Այլ կեսցէ կայցէ 'ի միջի և վարձկան ոք, որ ցանգ աշխատութիւն խոնջեալ իցէ, և միւս բարեկեցիկ՝ որ հանապազ փափկանայցէ։ Կամիս, զի զբարեկեցին զտրտմութիւն նախ ասասցուք։ Տես, որչափ մրրիկ 'ի միտն յառնիցէն, յորժամ փառաց ինչ այնպիսեաց ցանկանայցէ՝ որոց չիցէ ձեռնհաս հասանել. յորժամ 'ի ծառայիցն արհամարհիցի, յորժամ 'ի վատթարաց թշնամանիցի, յորժամ բազում չարախօսս և ամբաստանս ունիցի իւրոյ պէսպէս բարութեանցն. և զայլն և՝ամ՝ որ 'ի մեծութիւն այսպիսի 'ի դէպ պատահէն, զոր և ասել չէմ բաւական. ըզթշնամութիւնս, և զչարախօսութիւնս և զինասն, և զնախանձաւորացն զնենգութիւն։ Յորժամ զմեծութիւն նորա յինքեանս հանել չկարիցէն, ձգձգէն, փետտէն յամենայն կողմանց զմանուկն. ազգի ազգի ձմերունս 'ի վերայ ածէն։

Կամիս զի և զվարձկանին զհեշտութիւն ասացից. յամէ յայնմանէ աղատ է. եթէ թշնամանիցէ ոք, չտրտմի, զի չհամարի զանձն քան զոք 'ի վեր. և ոչ վասն ընչից կասկածէ, հեշտութիւնք ուտէ զկոտորն, ուրախութիւնք 'ի քուն լինի։ Այլ այնպէս՝ որք զարքունի գինին ըմպէն, ուրախ լինին, որպէս նա յորժամ յաղբերսն երթայցէ, և յականցն ըմպիցէ. այլ միւսոյն չէն այս պիսիք։ Այլ եթէ չիցեն բաւական որ ասացանս, և՝ առաւել ցուցից զյաղթութիւնն։

Զն առ, զթագաւորն իսկ և զկալանաւորն ընդ միմեանս հարցուք. և տեսանիցես զսա բազում անգամ 'ի բանտին ուրախ, խաղալ և խնդալ, և նմա 'ի թագն և 'ի ծիրանին տրտմել, և ազգի ազգի հոգովք մաշեալ և մեռանել 'ի կասկածոյ։ Օ՛ի չիք և չիք իսկ զուրուք զկեանս առանց տրտմութիւն գտանել. այլ և՝ ոչ յուրախութենէ անմասն։ Այս և բաւական

իսկ չլինէր մեր բնութիւն, որպէս վերագոյնն իսկ ասացի։ Այլ թէ ոմն յոյժ ուրախ է, և ոմն կարի տրտում, այն անդստին իսկ տրտմելոյն դիպի յորժամ նեղասրտիցի, և ոչ յերացն բնութիւն։ Այլ եթէ կամիցիմք ցանգ ուրախ լինել, ունիմք պատճառս. եթէ զառաքինութենէ բուռն հարկանիցեմք, չհասանիցէ ինչ այնուհետև մեզ տրտմութիւնք։ Դանցի զայսն հեշտականացն դնէ առաջի իւրոց ստացողացն, և ՝այ հաճոյս առնէ, և ՝ի մարգկանէ բարեմիտս, և բազում ուրախութիւն ընու։ Օ՛ի թէ ջան ինչ և աշխատութիւն կայցէ յառաքինութիւնն, սակայն զմիտսն բազում խնդութիւն լի առնէ. և այնչափ բերկրութիւն ծնանի ՝ի ներքս, որչափ և յայտնել բանիւ չէ հնար։

Օ՛ինչ ինչ թուիցի քեզ յերկրաւորացս հեշտական. սեղան բազմախորտիկ, թէ մարմնոյ առողջութիւն, թէ փառք և մեծութիւն։ Այլ այս ամ հեշտակաք թուին. այլ թէ ընդ այնմ համեմատիցես, դառնագոյնք գտանիցին։ Զիք ինչ հեշտական քան զմտացն գիւրութիւն, և զայս բարեացն։ Այս եթէ կամիք զայս ստոյգ ուսանել, որ վախճանելոցն իցէ՝ ցնա հարցէք, կամ զծեր որ. և յիշեցուսցուք նմա զպէսպէս խորտկաց և զսեղանոց՝ յորս վայելեաց, և զփառաց և զպատուոյ. և զգործոց բարեաց՝ զոր գործեաց, և եթէ գործեալ ինչ երբէք իցէ. և հարցուք, թէ ընդ որ բերկրեսցի։ Ա՝նաւանդ զի և տեսանիցեմք իսկ, զի զայն ամօթ և պատկառանս համարի, և ընդ այս ցնծայ և բերկրի։

Այոյսպէս և Այգեկիա յորժամ խօթացաւն, ոչ զբազմապատիկ սեղանոց յիշեցուցանէր, ոչ զփառաց և ոչ զթագաւորութենէն, այլ զարդարութէ։ «Յիշեա՛, ասէ, որպէս գնացի առաջի քո ուղիղ ՝ձեռնասարՀաւ»։ Ցէս և զՊաւղոս նովին բերկրեալ. «Օ՝ պատերազմ, ասէ, պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զՀաւատսն պահեցի»։ Դա և զինչ իսկ գոյր ասէ։ Օ՝ մեծութէ և զպատուոյ որով ՝ի բազում մեծատանց պատուեցաւ, և զսպասաւորութէն յորում և վայելեաց, և զբազում դարմանոցն։ Թո՛ւ չլսիցես իսկ նմին՝ որ ասէ. «Լերբև զՀրեշտակս ՝այ ընկալարուք զիս, երբև զՀՆ՝ Աստ. և եթէ հնար

ինչ էր, զայս ձեր հանեալք և տայիք ինձ»։ Եւ նախ՝ և փոխանակ նորա անձին զպարանոցն մատուցանէին։ Բայց չբերեր ինչ անտի 'ի մէջ, այլ զաշխատութիւնն և զվիշտն և զվատն նոցին պսակն։

Եւ կարի իսկ մերաւի. զի այս [1] ամ ատ մնայ, և այն ընդ մեզ անդ ուղեկից լինի, և ընդ այսր և հանապազ տայցեմք, և ընդ այնց և վարձս պահանջիցեմք։ Զգիտիցէք, զիարդ յաւուրն վախճանին յեղյեղուն ոգիքն զմեղսն, որպէս 'ի ներքուստ սիրտն թնդէ՝ և խռովի։ Եւ յորժամ այն այնպէս լինի, բարեաց գործոցն յիշատակ հասեալ իբրև զբեր 'ի ձմերանի՝ և մխիթարէ զխռովեալ ոգին։ Եւ եթէ արթուն իցեմք՝ մինչ կենդանի իսկ եմք, միշտ մատէ ահն։ Բայց քանզի անզգայացեալ անկեալ կամք, յորժամ ելանելոց իցեմք ատի՝ յայնժամ 'ի վերայ հասանիցէ ահն։ Քանզի և բանտարգելն յայնժամ կարի տրտմի, յորժամ հանիցեն զնա, և յատեան տանիցին. յայնժամ առաւել գողայ, յորժամ 'ի բեմն երթիցէ, յորժամ պատուհասիցն պատասխանի տալոց իցէ։

Վասն այնորիկ և մեզ բազում ահագին պատուհաս հասանիցէ լսել, և երեսս ահաւորս, որոյ և տեսլեանն իսկ այնուհետև չհանդարտիցեմք տանել։ Վտացականին՝ նա և զմահինն իսկ բազում ատատկութիւն շարժիցեն, և ահաւոր կերպարանօք 'ի վերայ ոգւոցն հասեալ կայցեն։ Եւ հոգին անդրէն 'ի ներքս ջանայցէ խուսափել և զուղել դանդաղել առ 'ի մարմնոյն քակելոյ, և ընդ երեսս հրեշտակացն չիշխէ հայել։ Եւ եթէ զմարդս ահագինս յորժամ տեսանեմք՝ զահի հարկանիմք, որչափ և առաւել զհրեշտակսն սպառնալեօք, և զզօրսն անաչառս եկեալ հաւեալ տեսանիցեմք։ Օ ինչ գործիցեմք, յորժամ զոգին 'ի մարմնոյն ձգիցեն հանել. թէպէտ և բազում աշխարանօք աշխարիցեմք, զուր և ընդ վայր է այնուհետև։ Քանզի և մեծատունն յետ անդր երթալոյն ողբայր, և չօգտեցաւ ինչ։

Օ այս ամ ստեղծցուք 'ի միտս, և յեղյեղեսցուք.

1 Յորինակին այսմ։

զի մի և մեք զայն կրեսցուք. և զահն յայնպիսի բաւնից սաստկացեալ՝ պահեսցուք 'ի միտս զգուշութիւն։ Օ՛ի և արդեամբք ապրիցիմք 'ի տանջանացն, և 'ի յաւիտենից բարութիւն հասցուք. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօքն և մարդասիրութիւն մերոյ Յեսի Քրիստի. ընդ որում Հօր և սուրբ Հոգւոյն վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՎԱԽՃԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԳՐՈՑ

Tip. ed Edit. li PP. Arm. di S. Lazzaro in Venezia.